



ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՎԱՐԱԿԱՆ ԱԿADEMİA






ՄԵՆՔ ԶԵԶ ԽՈՍՏԱՆՈՒՄ ԵՆՔ,
ԹԱՆԳԱԳԻՆ ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆ,
ԱՊՐԵԼ ՅԵՎ ԱՃԵԼ ՄԻ ՄՏՔՈՎ.—
ՏԻՐԱՊԵՏԵԼ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ,
ՎՈՐՊԵՍՁԻ ԴԱՌՆԱՆՔ ՄԵՐ ՄՈՐ—
ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ (ԲՈԼՇԵՎԿԻԿՆԵՐԻ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՎ,
ԱՐԺԱՆԱՎՈՐ ՎՈՐԴԻՆԵՐ ՅԵՎ ԱՂՋԻԿՆԵՐ :


ՄԵՆՔ ԶԵԶ ԽՈՍՏԱՆՈՒՄ ԵՆՔ
ԿՈՓԵԼ ՄԵՐ ՈՒԺԵՐՆ ՈՒ ԿԱՄՔԸ,
ՎՈՐՊԵՍՁԻ ԻԲՐԵՎ ՍՏԱԼԻՆՑԱՆ
ԱՐԾԻՎՆԵՐԻ ԱՆԵՐԿՑՈՒՂ ՅԵՂ
ԱՌԱՋ ՄՊԵՆՔ ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ԳՈՐԾԸ,
ԱՄՐԱՊՆԴԵՆՔ ՔՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ
ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ՅԵՂԲԱՑՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ
ՊԱՇՏՊԱՆԵՆՔ ՄԵՐ ՅԵՐԿՐԻ ԱՄԵՆ ՄԻ ՎԵՐՇՈԿԸ :


ԻՍԿ ՅԵԹԵ ԹՇՆԱՄԻՆ ԽԱԽՏԻ
ՄԵՐ ԽԱՂԱՂ ԱՇԽԱՏԱՆՔԸ,
ՅԵԹԵ ՄԵՐ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ
ԲՈՆՎԱՆԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԲՈՑԸ —
ԱՄԲՈՂՋ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ
ՎՈՏՔԻ ԿԿԱՆԴԻՆԻ Ի ՊԱՇՏՊԱ—
ՆՈՒԹՅՈՒՆ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ,
Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԼԵՆԻՆ-ՍՏԱԼԻՆԻ
ԱՆՄԱՀ ԳՈՐԾԻ :

Համկենք X ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԿՈՂՄԻՑ
ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻՆ ՈՒՂՂՎԱՌ ՎՈՐՁՈՒՅՆԻՑ









83.
5
31.5

ՅԱՀԵՄԻ

ԱՅՈՒԹԵԱՆ Է 1981 թ.

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԼԵՆԻՆՑԱՆ ԿՈՍՏԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ Խ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ 86Վ. ԲԱՆԱՑԵՎՆԵՐ

11—21 ապրիլ 1986 թ.


ԿԱԶՄԵՑԻՆ 86Վ. ԽՄԲԱԴՐԵՑԻՆ
Ա ՇԱՂԲԱԹՑԱՆ 86Վ. Ա. ՄՈԿԱՑՅԱՆ




A п
8288

ДЕСЯТЫЙ СЪЕЗД
ВСЕСОЮЗНОГО ЛЕНИНСКОГО
КОММУНИСТИЧЕСКОГО СОЮЗА
МОЛОДЕЖИ

Армпартиздат, Ереван





Ա. Վ. ԿՈՍԱՐԵՎ

ՀԱՄԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԸՆԿԵՐ ԿՈՍԱՐԵՎԻ ՔԱՑՄԱՆ ՃԱՌԸ ՀԱՄԼԿՅԵՄ-Ի Խ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

1936 ԹՎԻ ԱՊՐԻԼԻ 11-ԻՆ

Ամբողջ համագումարը փոք-որկալից, յերկարատև ծափահարություններով և դիմավորում ամրինի վրա յերևացող՝ ժողովուրդների առաջնորդ ընկեր Ստալինին և ընկերներ Մոլոտովին, Կազամովիչին, Վորոշիլովին, Կոլիմինին, Անդրեյևին, Դիմիտրովին, Միկոյանին, Ժուրարին, Կոստրովին:

Ամբողջ դահլիճը կանգնած վոզգումում և ընկեր Ստալինին ջերմագին, յերկար չլռող ովացիայով և վոզգույնի բացականչություններով ԽՍՀՄ-ի ժողովուրդների լեզումներով: Ուժգին ծափահարություններն ու խանդավառ «ուռա» բացականչությունները դպրացնում են վողջ դահլիճն:

Ամեն կողմից լսվում են բացականչություններ՝
«Կեցցե՛ մեծ Ստալինը».

«Ծնկեր Ստալինին կոմյերիտական վողջույն».

«Շնորհակալություն ընկեր Ստալինին յերջանիկ, ուրախ կյանքի համար».

«Սիրելի, հարազատ Ստալինին կոմյերիտական վողջույն».

«Վողջույն Տաջիկաստանի աշխատավորներից ընկեր Ստալին».

„Хай живе великий Сталін!“

„Родному, любимому Сталину вид комсомольцев Украины палкий привет!“

«Ծնկեր Ստալինին կոմյերիտական ուռա».

«Կեցցե՛ համաշխարհային պրոլետարիատի առաջնորդ ընկեր Ստալինը».

„Комсомольское ура маршалу, вождю Червоной Армии Климу Ворошилову!“

(Բոլոր պատգամավորները վոստի կանգնած յերգում են «Խնտերթացիոնալ» ԽՍՀՄ-ի ժողովուրդների լեզուներով):

Կոսարել .—Ընկերնե՛ր, այսոր իրենց հերթական, Լենինյան կոմյերիտմիության X Համամիութենական համագումարի բացման են հավաքվել սոցիալիզմի համար, Լենինի-Ստալինի մեր մեծ կուսակցության գործի համար պայքարող յերիտասարդ մարտիկների լավագույն ներկայացուցիչները: (Բոլորը կանգնում են: Փոքրիկալից ծափահարություններ: Բացականչություններ՝ «Կեցցե՛ ընկեր Ստալինը», «Ուռա՛», «Վողջո՛ւյն ընկեր Ստալինին, յերիտասարդության սիրելի ուսուցչին»):

Դրա համար մեր համագումարը կարելի յե կոչել ստալինյան յերիտասարդության հավաք (աղմկալից ծափահարություններ, «Ուռա՛» բացականչություններ), վորին դաստիարակելե մեր բոլշևիկյան կուսակցությունը և մեր առաջնորդ ու ուսուցիչ ընկեր Ստալինը: (Փոքրիկալից, յերկար չլող ծափահարություններ, վորոնի փոխվում են ովացիայի: Բոլորը վոտի յեն կանգնում: Վողջույններ ու բացականչություններ դահլիճի բոլոր ծայրերից ԽՍՀՄ-ի ժողովուրդների լեզուներով՝ «Ուռա՛ ընկեր Ստալինին», «Կեցցե՛ ընկեր Ստալինը», «Կոմյերիտական վողջույն ընկեր Ստալինին», «Կեցցե՛ մեր սիրելի առաջնորդ ընկեր Ստալինը»):

Մենք, ընկերնե՛ր, մեր լայնածավալ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության միջիոնավոր յերիտասարդների անունից պետք ե հայտարարենք մեր բոլշևիկյան կուսակցության այստեղ ներկա յեղող լենինյան-ստալինյան կենտրոնական կոմիտեյի Քաղաքական Բուրոյին (Փոքրիկալից ծափահարություններ, «Ուռա՛» բացականչություններ). մենք պետք ե հայտարարենք այստեղ ներկա յեղող կառավարությանը, ընկեր Մոլոտովին և ընկեր Կալինինին (Փոքրիկալից ծափահարություններ. բոլորը վոտի յեն կանգնում: բացականչություններ՝ «Կեցցե՛ ընկեր Մոլոտովը», «Ուռա՛», «Կեցցե՛ Համամիութենական ազադ ընկեր Կալինինը», «Ուռա՛»), մեր մեծ Բանվորակյուղացիական կարմիր բանակի հրամանատար ընկեր Վորոշիլովին (ովացիայի վերածվող փոքրիկալից ծափահարություններ. ամբողջ դահլիճը վոտի յե կանգնում: բացականչություններ՝ «Կեցցե՛ ընկեր Վորշիլովը», «Խորհրդային Միության մեծ մարշալին Ուռա՛», «Կո-

сомольское ура маршалу, вождю Чёрвоної Армии Климу Ворошилову!»). Ընկեր Կաղանովիչին (փոքրիկալից, յերկարած ծափահարություններ. բոլորը վոտֆի յեն կանգնում. բացակա - չուրյուններ՝ «Կեցցե՛ տրանսպորտի մեր՝ յերկաթե ժողկումը», «Բնկեր Կաղանովիչին ուռա՛», ընկեր Անդրեյեվիչին (փոքրիկալից, յերկարած ծափահարություններ), մենք պետք ե հայտարարենք մեր բոլոր դեկավարներին, վոր բազմամիլիոն խորհրդային յերեւասարդության համար կյանքում ավելի թանգ բան չկա, քան մեր մեծ կոմունիստական բոլշևիկների կուսակցությունը, քան մեր թանգաղին, սիրելի Ստալինը (փոքրիկալից; յերկար շլոնդ ծափահարություններ: Ամբողջ դահլիճի ովացիա: Բոլորը վոտֆի յեն կանգնում: Բացականչություններ՝ «Բնկեր Ստալինին կոմյերի տական ուռա՛», «Կեցցե՛ մեր մեծ առաջնորդ ընկեր Ստալինը», «Ուռա՛», «Մեր հարազատ և սիրելի Ստալինին ուռա՛»):

Մեր յերիտասարդությունն ապրում ու աշխատում ե հանուն համաշխարհային պլոտետարքական հեղափոխության հաղթանակի, հանուն մեր բոլշևիկյան կուսակցության հաջողությունների, հանուն Լենինի-Ստալինի անմահ հանճարի: (Ամբողջ դահլիճնը վոտֆի. յե կանգնում: Փոքրիկալից, յերկարած ծափահարություններ):

Մեր յերկրի աշխատավորները, մեր կուսակցությունը միշտ, ամեն մի պարագայում, կրարող են հենվել մեր խորհրդային յերեւասարդության ուժերի ու ընդունակությունների վրա (փոքրիկալից, յերկարած ծափահարություններ):

Մենք անցել ենք փառավոր հնգամյա ուղի: Այդ ժամանակամիջոցում մենք ձեռք ենք բերել մեծ հաջողություններ: Սակայն յես, ընկերնե՛ր, ամբողջ Համագումարին կոչ եմ անում ավելի քիչ չափով ուշադրություն դարձնել մեր արդեն նվաճածի վրա:

Ծնկեր Ստալինն ու ամբողջ կուսակցությունը Լենինյան կոմյերիտամբության վրա հսկայական և դժվարին խնդիրներ են զնում, այն ե՝ ամբողջ Խորհրդային Միության յերիտասարդության և յերեխանների կոմունիստական դաստիարակության և ուսուցման խնդիրները: Ուստի յեկեք բոլշևիկյան ինքնաքննադատության յենթարկենք մեր աշխատանքը, հայտնաբերենք այդ աշխատանքի թերությունները և կուսակցության կենտրոնական կոմիտեյի զեկավարությամբ նշենք մեր աշխատանքի հերթական ծրագիրը:

Վոչ մի կասկած չկա, վոր մեր յերկրի յերիտասարդությունը

կեաբողանա առաջիկա աշխատամքի ընթացքում գլուխ հանել իր
առաջ դրված խողիրներից :

Կեցցե՛ մեր մեծ բոլեկիկյան կուսակցությունը :

Կեցցե՛ խորհրդային կառավարությունը :


Կեցցե՛ մեր մեծ առաջնորդ Ընկեր Ստալինը :

(Բոլորը վոստի յեն կանգնում : Փոքորկալից, յերկար չլազ ծա-
փահարություններ : Բացականչություններ՝ «Վողջույն ընկեր
Ստալինին», «Ուռա՛» բացականչություններ : «Ինուրմացիոնալի»
հուժկու յերգեցողություն) :

Ընկերնե՛ր, թույլ տվեք Լենինյան կոմյերիսմիության X հա-
մազումարը հայտարարել բացված : (Փոքորկալից, յերկարանկ-
ծափահարություններ) :

ԸՆԿ. ԿՈՍԱՐԵՎԻ
ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ
ՀԱՄԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

1936 թ. ԱՊՐԻԼԻ 11-ԻՆ



I. ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ԽԱՀՄ-ՌԻՄ՝ ՄՏԱԼԻՆՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿՆ Ե

Հինգ տարի յե անցել լենինյան կոմյերիսմիության Զ-րդ համազումարից : Այդ տարիները հազեցված են այնպիսի խոշոր անցքերով, վորոնց պարզ թվարկումն անհնարին և տեղավորել մի զեկուցման շրջանակներում :

Անցած ետապը մեր յերիտասարդության համար նախ և առաջ հանդիսացավ սոցիալիզմի համար մղվող պայքարի փայլուն բոլշևիկյան դպրոց :

Խորհրդային յերիտասարդությունն աննախընթաց բարձրության հասալ : Յերիտասարդության նախորդ սերունդներից վոչ մեկն այնպիսի հասրավորություններ չի ունեցել իր Փիզիկական ու հոգևոր ծաղկման համար, վոր ունի խորհրդային յերիտասարդությունը : Յերիտասարդությունը յերբեք չի ապրել և չեր կարող ապրել՝ շրջապատված պետության այնպիսի բացառիկ հոգատարությամբ, ուշադրությամբ ու սիրով, վորպիսին ամեն որ զգում ենք — խորհրդային յերիտասարդությունը :

Լենինյան կոմյերիտմիությունը, ինչպես և ամբողջ խորհրդային յերիտասարդությունը, բոլշևիկների մեծ կուսակցության ղեկավարությամբ, նրա անմիջական ողնությամբ, հանդիսանում ե նոր, անդասակարգ հասարակության կառուցման ամենաակտիվ մասնակիցը :

Բոլշևիկների Համամիութենական կոմունիստական կուսակցությունը դաստիարակում և մեր յերիտասարդությանը և հանդիսանում ե նրա ամբողջ կյանքի ու պայքարի ուսուցիչը :

Այս հինգ-վեց տարվա ընթացքում, առաջին հնգամյակի հաջող կատարման և յերկրորդ հնգամյակի առաջադրած խնդիրների լուծման հետևանքով՝ մեր յերկիրը դարձավ սոցիալիստական, մի յերկիր, վորտեղ վոչնչացված և մարդու շահագործումը մարդու կողմից :

Պրոլետարական մեծ հեղափոխությունն սկզբունքորեն տար-
բերվում ե մյուս բոլոր հեղափոխություններից :

«Նա իրեն նպատակ ե դնում վո՛չ թե շահագործման մի
ձևը շահագործման մի այլ ձևով, շահագործողների մի
խումբ շահագործողների մի այլ խմբով փոխարիմնելը, այլ
մարդու կողմից մարդու ամեն մի շահագործումը վաչչաց-
նելը, բռնը և ամեն սեսակի շահագործողական խմբերը վա-
չընչացնելը . . .» (Ստալին — «Հոկտեմբերյան հեղափոխու-
թյան միջազգային բնույթը» : «Լենինիոմի հարցերը», եջ 258,
հայերեն 2-րդ հրատարակություն),

Մեր յերկրում ընդմիշտ վոչնչացված ե այն կարգը, վոր
գերաւ իշխում ե ԽՍՀՄ-ի սահմաններից դուրս՝ կապիտալիստա-
կան ստրկության ու ճնշման կարգը :

Սոցիալիստական տնտեսաձևը դարձավ ամբողջ տնտեսության
մեջ միակ ու անբաժան իշխող ձևը : Մեզ մոտ չկան կալվածատե-
րեր, գործարանատերեր, Փարբիշանտներ, վաճառականներ և
կուլակներ, չկան ձրիակերներ և մակարույծներ :

Մեր պետության մեջ վոչնչացված ե մասնավոր սեփականու-
թյունը՝ կապիտալիստական հասարակության այդ հիմքը, կապի-
տալիստների հարստացման աղբյուրը և աշխատավոր մասսաների
ճնշման գործիքը : Սոցիալիստական կարգի հիմքը հանրային սե-
փականությունն ե : Իրականացված ե սոցիալիզմի կարևորագույն
սկզբունքը՝ չաշխատողը չի ուտի և վարձատրությունը տրվում և
ըստ աշխատանքի : Պատմության մեջ առաջին անգամ աշխատան-
քը դարձել է պատվի, արիության, փառքի ու հերոսության
գործ : Վերջնականապես արմատախիլ արվեց կապիտալիզմը գյու-
ղում : Կոլտնտեսությունները հաղթեցին անդառնալիորեն, դառ-
նալով այն ուժը, վորը վճռում ե ամբողջ գյուղատնտեսառության և
նրա բոլոր ճյուղերի ճակատաշիրը : Անհետացավ աղքատությունը
գյուղում և նրա հետ միասին անհետացավ գյուղի աշխատավո-
րության՝ անցյալում իրավազուրեք ու ճնշված խալը — չքավորու-
թյունը : Կոլտնտեսություններում աշխատավոր գյուղացիների
մասսաները հասան ապահոված մարդկանց վիճակին : Վոչըն-
չացվեց գյուղացիության տնտեսական քայլայման ու աղքատաց-
ման այն պրօցեսը, վորը տեղի յե ունենում կապիտալիստական
բոլոր յերկիրներում :

Խորհրդային Սիության մեջ չկան ճնշված և ճնշող ժողո-

վուրդներ : Խորհրդային Միության բոլոր ժողովուրդները , անկախ նրանց ազգությունից և կուլտուրայի մակարդակից , հանդիսանում են միասնական , համերաշխ , յեղայրական ընտանիք :

Մեր յերկրում վերացված ե գործազրկությունը՝ ամենասուկալի այն դժբախտություններից մեկը , վորին մշտապես դատապարառմ և աշխատավորներին կապիտալիստական հասարակությունը : Բուրժուական տնտեսագետ Հարրի Եդիանը հարկադրված և խոստովանել , վոր կապիտալիստական յերկիրներում «այժմ ավելի շատ գործազրկությունը և նրա ուղեկից սովոր կապված են վոչ թե պարենամթերքի պակասության , այլ ընդհակառակը , նրա առատության հետ : Մինչև 25 տարեկան յերկիտասարդների ամբողջ սերունդներ աշխատանք գնոնել չեն կարողանում :

Կապիտալիզմի կլասիկ յերկիրը՝ ԱՄՆ-ը 12 միլիոն գործազրկությունի , վորից 5 միլիոնը գործազրկությունը և նրա ուղեկից սովոր կապված են վոչ թե պարենամթերքի պակասության , այլ ընդհակառակը , նրա առատության հետ : Մինչև 25 տարեկան յերկիտասարդների ամբողջ սերունդներ աշխատանք գնոնել չեն կարողանում :

Վիճակագրությունը հաստատում է , վոր ճշնաժամի տարիներին ամբողջ կապիտալիստական աշխարհում սովոր մահացել ե յերկու միլիոն չորս հարյուր հազար հոգի : Նույն ժամանակամիջոցին կարիքից իրենց կյանքին վերջ են դրել 1·200 հազար հոգի :

Այսպես են , ընկերներ , գործազրկությունն ու նրա հետևանքները կապիտալիստական յերկիրներում :

Ընկեր Ստալինը 1931 թվականին տնտեսավարների խորհրդակցությանն իր արտասահման ճառում պատմական մեծագույն խընդիրներ դրեց մեր յերկրի առջև : Նա ասաց

«Առաջավոր յերկիրմերից մենք ենք մնացել 50—100 տարով : Այս տարածությունը մենք պետք ե կորենի անցնենք 10 տարում : Կամ մենք այս բանը կանենք , կամ մեզ կնպանեն :

Ահա թե ինչ են քելադրում մեզ մեր պարտավորությունները ԽՍՀՄ-ի բանվորների ու գյուղացիների հանդեպ։ (Ստալին, «Ճնշեսալարների խնդիրների մասին», «Լենինիդմի հարցերը», էջ 555, հայերեն 2-րդ հրատ.) :

Մենք վերացրինք մեր յերկրի հետամնացությունը։ Անցյալում հետամնաց, առավելապես գյուղացիական յերկրը մենք դարձրինք հզոր, ինդուստրիալ պետություն, մի յերկր, վորոնունի իունոր կոլեկտիվ հողագործություն։

Առաջին հնգամյակի իրագործման և յերկրորդ հնգամյակի պլանների կատարման շնորհիվ ԽՍՀՄ-ն արդյունաբերական արտադրանքի ծավալով հաստատակես առաջին տեղը գրավեց Յեղողայում, իսկ իր արդյունաբերության մի շարք ճյուղերում, վորոնց թվում նաև այն ճյուղերում, վորոնք ամբողջովին նոր են ստեղծվել այս տարիների ընթացքում, առաջին տեղն ե գրավում աշխարհում։

Մեր յերկրը վերացրեց սովոր տեխնիկայի ասպարեզում և բազա ստեղծեց ամբողջ ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման համար։

Անցյալում թույլ, պաշտպանության անպատճառ յերկրից Խորհրդային Միությունը դարձավ պաշտպանունակության իմաստով առաջավոր յերկիր, այնպիսի մի յերկիր, վորն ընդունակ և մեզ համար անհրաժեշտ, ուզած քանակությամբ, արտադրել պաշտպանության ժամանակակից գենքեր և մատակարարել դրանք բանակին՝ մեր վրա հարձակում տեղի ունենալու դեպքում։

Ստախանովյան շարժումը՝ հանդիսանալով ժողովրդական մրցության բարձրագույն ետապը, խոստանում և աշխատանքի արտադրողականության ամնախընթաց ծաղկում և ժողովրդական տնտեսության ավելի մեծ վերելք։

Սոցիալիզմի հաղթանակը ԽՍՀՄ-ում, վորի մեծագույն պատուղներն որեցոր ավելի ու ամենի յեն չոշափելի դառնում, արդյունք են լենինյան-ստալինյան քաղաքականության, արդյունք են բոլշևիկյան կուսակցության ստալինյան կենտրոնական կոմիտեյի դեկանակարության։

Ժողովրդակաների առաջնորդ ընկեր Ստալինը մշակեց և կենացագործում և մեր յերկրի վերակառուցման լենինյան պլանը։

Ընկեր Ստալինը վորոշեց մեր զարգացման գլխավոր գիծը՝ յերկրի ինդուստրացումը, — արտադրության միջոցների արտա-

դրումը, կապիտալիստական յերկիրներից անկախ լինելու և ԽՍՀ Միության պաշտպանումակությունն ամրապնդելու ուժին։ (Սափահարություններ)։

Ընկեր Ստալինի՝ պրոլետարական հեղափոխության և սոցիալիստական շինարարության այդ հանճարի մշակած պլանը միակ ճիշտ, խառնմականորեն ստուգված ու հաղթական պլանը հանդիպացալ։ (Ծափահարություններ)։

Այն ուղին, վորով տարել եւ և տանում եւ ԽՍՀՄ աշխատավորներին ժողովուրդների մեծ առաջնորդ Ընկեր Ստալինը, դա դժվարությունների հաղթահարման ուղին եւ, վորոնցից մասեցան, վորոնց առջև տեղի տվին զանազան ոպղոտումիստներ։ Նրանք՝ ոպղոտումիստները, փորձեցին լենինյան-ստալինյան ուղղուց չեղել բանվոր դասակարգին, հող պարարտացնել կապիտալիզմի վերականգնման համար, բաց անել դռներն ինտերվենտների առջև։

Ընկեր Ստալինի գլխավորած՝ բոլշևիկների կուսակցությունը բարձրացրեց բանվոր դասակարգի մարտական պատրաստությունը նրա բոլոր թշնամիների դեմ։ Նա պատմական խնդիրների ճիշտ ընդունումով զինոց մեր յերկրի յուրաքանչյուր պրոլետարի, յուրաքանչյուր աշխատավորի։ Կուսակցությունը ժողովրդին ցույց տվեց, թե ինչ են նշանակում ոպղոտումիստների փորձերը, փորձներ իրականուած դարձան բանվոր դասակարգի թշնամիները, և ջախջախեց հականեղակիսական տրոցիկովմը, աջ և «ձախ» ոպղոտումիստներին։

Մենք հաղթանակ տարանք այն պատճառով, վոր մեզ առաջնորդել եմ և մեծ Ստալինը։ (Ծափահարություններ)։ Ամեն անգամ, պայքարի դժվարին բովեներին, ընկեր Ստալինի ցուցումներն ու լողունզները բանվոր դասակարգին ու աշխատավորներին վստահություն են ներշնչել, ճշգրիտ կողմնորոշում են տվել։

Մեր յերկրի ժողովուրդը զիտե և ամենունորեն հավատում ե այն բանին, թե քանի վոր Ստալինն ասաց, նշանակում ե, այնպես ել կիմի (բուռն ծափահարություններ), նշանակում ե, կտարելով նրա ցուցումները, հաղթանակն ապահովված կիմի։ Ամեն անգամ ընկեր Ստալինը տվել ե զործողությունների կոնկրետ ծրագիր, իր իմաստության հզոր ճաճանչով լուսավորել և հաղթանակի ուղին։

Ընկեր Ստալինը խնդիր դրեց՝ ուղարակեած շինարարության



պաթոսին, և մեր յերկրի բազմամիլիոն աշխատավորներն առաջ—
նորդի լոգունդին պատասխանեցին հզոր սոցիալիստական մըցու—
թյամբ:

Ընկեր Ստալինը խնդիր դրեց՝ շինարարության պայմուսը Արա—
յնել յուրացման պաթոսով, և ի պատասխան դրան, սոցիալիզմի
միլիոնավոր կառուցողները նստեցին դրքի առջև, մտան տեխնի—
կական խմբակները, դպրոցները, դառնթացները, զանազան ու—
սումնական հաստատություններ, սկսեցին տիրապետել տեխニ—
նիկային:

Ընկեր Ստալինը խնդիր դրեց՝ արտադրական-տեխնիկական
ինստելիգենցիայի կազմեր ստեղծել մեր յերկրի բանվոր դասա—
կարգից դուրս յեկած մարդկանցից, և մեր յերկրի աշխատավոր—
ները, մեր յերիտասարդությունը լայն արշավով դիմեց դեպի դի—
տությունը, և ներկայումս մենք արդեն ունենք արտադրական—
տեխնիկական ինտելիգենցիայի մեր այդ կալերերը:

Ընկեր Ստալինի ղեկավարությամբ կատարված և դյուղատըն—
տեսության մեծագույն վերակերտումը, վերացված և կուլակու—
թյունը վորապես դասակարգէ, ստեղծված են և տնտեսապես ու
կազմակերպորեն ամբացված են կոլտնտեսությունները: Կոչ—
տնտեսային կյանքի ստալինյան կանոնադրությունը հիմք և հան—
դիսանում կոլտնտեսային դյուղացիության հետագա ունեոք ու
կուլտուրական աճման համար:

Ընկեր Ստալինն ամրող պայքարի ընթացքում իր իմաստուն—
դեկավարությամբ աճեցրեց ու աճեցնում և ամբացնում և մեր
մեծ, բոլլեկյան կուսակցությունը:

Համեկ(բ)կան հետևելով ընկեր Ստալինի ցուցումներին, դուրս
վոնդեց իր շարքերից անկայուն, մանր-բուրժուական և լենինիդ—
մին թշնամի տարրերին: Կուսակցությունը ջախջախեց սովորակ—
դպարդիական-զինովյանի կամենենիվյան խմբակը, վորն ընկ-
կիրովի ստոր սպանության կազմակերպիչն ու վոգեշնչողն եր:

Ընկեր Ստալինի կողմից առաջադրվել և հենց իր կողմից ել
մշակվել և կուսակցական տնտեսության մեջ բոլլեկյան կարդ
հաստատելու հարցը:

Այժմ մեր կուսակցությունն ավելի քան յերեսից դադավա—
րապես ամրակուռ և, կազմակերպորեն համախմբված, միաձույլ
ու միասնական: (Մափահարություններ):

Լենինյան կոմյերիտմիությունը, մեր ամրող խորհրդային

յերիտասարդությունը հպարտ ե, վոր մեղ զեկավարում և բոլշևի-
կյան մեծ կուսակցությունը: Մենք պարծենում ենք, վոր մեր յե-
րիտասարդությանն անեցնում, դժուտիարակում և սովորեցնում
և մեծ Ստալինը: (Ծափահարություններ): Մեր յերիտասարդու-
թյան մեջ ամենամասսայական լոգունդն և հենց իր՝ այդ յերիտա-
սարդության առաջարկած լոգունդը՝ «Հնորհակալություն ընկեր
Ստալինին՝ յերջանիկ կյանքի համար»: (Բուռն ծափահարու-
թյուններ):

Մեր յերկրում սոցիալիզմի հաղթանակը մարզսիստական-լե-
նինյան ուսմունքի հաղթանակն ե: Սոցիալիզմի հաղթանակը ԽՍՀ
Միությունում բոլշևիկների ստալինյան կենտրոնական կոմիտեյի
զեկավարության արդյունքն ե: Բոլշևիկների կուսակցությունը
սոցիալիստական հաղթանակների կազմակերպիչն ե, իսկ ընկեր
Ստալինը՝ այդ հաղթանակների վորենչողն ու հանճարեղ զեկա-
վարը: (Ծափահարություններ):

II. ԼԵՆԻՆՑԱՆ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵջ

Մեր յերկիրն արդեն խորհրդային իշխանության ժամանակ ծնված ու դաստիարակված յերիտասարդ՝ մարդկանց մի ամբողջ սերունդ ունի: Ժողովրդատնտեսական հաշվառման կենտրոնական վարչության տվյալներով մեր յերկրում Հոկտեմբերյան հողափոխությունից հետո ծնված մարդկանց թիվն առ 1-ի հունվարի 1936 թվի կաղմում ե ԽՍՀՄ բնակչության ամբողջ թվի 43 տոկոսը¹, յերկրի բնակչության համարյա կեսը: (Մականարաւրաբյուններ):

Սոցիալիստական շինարարության բոլոր քնարավառներում մեր մերիտասարդությունը, Լենինյան կոմյերիտմիությունը հանդիմացել են և հանդիմանում են ակտիվութեն գործող ուժ: Խորհրդային Միության մեջ չկա այնպիսի անկյուն, վորտեղ կոմյերիտականները վառարանված չլինեն իրենց աշխատանքային որից բազործություններով:

Այս ժամանակի ընթացքում Համեկօնը կենտկոմը մոտ 200·000 լավագույն կոմյերիտականներ և ուղարկել մեծ յերկրի ամենապատասխանառու շինարարությունները, չհաշված անդական կաղմակերպությունների (Ուգրական կազմակերպություն, Արևմտյան Սիբիր, Մուսկովա, Հյուսիսային յերկրամաս) կատարած բազմաթիվ մորիվիզացիաները:

1000 կոմյերիտական մենք մորիվիզացիայի յենթարկեցինք և

¹ Հաշվարկությունները կատարված են ԽՍՀՄ բնակչության տարիքային կողմի տվյալներից, 1926 թվի վիճակության հիման վրա, հաշվի տանելով հետագա տարիների ծնունդն ու մահացությունն ըստ տարիքի:

ուղարկեցինք Արևելյան Սիրիո՝ վոսկու արդյունաբերության մեջ աշխատելու համար :

1200 կոմյերիտական գնացին «Դալալըռմատրոյի» շինարարությունը :

1500 կոմյերիտական մորիլիդացիտի յենթարկվեցին Արկտիկան յուրացնելու համար :

Մեր ուղարկած 2000 կոմյերիտականները յուրացնում են Սալալինի հարստությունները :

Մեր ուղարկած 5000 կոմյերիտականները յուղիչներ դարձան յերկաթուղային արանսպարում :

Կոմյերիտմիության կենտրոնը 6000 կոմյերիտական մորիլիդացիտի յենթարկեց կազի որդանները ամրացնելու համար :

7000 կոմյերիտականներ կառուցում եյին Ստալինդրադիտականությամբ գործարանը :

20·000 կոմյերիտական մենք ուղարկեցինք անտառափայտի մթերման :

36·000 կոմյերիտական իջան Դոնբասի հանքահոլերը, վորությունի հանքերը գույք բերեն ճեղքվածքից :

Չվախենտրով գժվարություններից ու խոչընդուռներից, կոմյերիտականներն ամենայն վաղմուրությունը և համառությամբ հերոսարար աշխատել են, առաջարտար ուժ հանդիսանալով բարձաթիվ շինարարություններում :

Հիշենք, վոր Բոբրիկ՝ ընկեր Ստալինի անվան քիմիկուրինատի շինարարության մեջ կոմյերիտականները բանվորության ամբողջ թվի 65 տոկոսն եյին կառջմում, ընկ. Լ. Մ. Կազանովիչի անվան «Շարիլուսորդչիպնիկում»—70 տոկոս, «Լուղանստրոյում»—55 տոկոս, «Աղովստալում»—45 տոկոս :

Կոմյերիտականների ձեռքբերով կառուցված են խոշորագույն գործարաններ—մեր յերկրի պարծանքը : Դրանք արակատարային գործարաններն են, ոս ընկեր Ստալինովի անվան ավտոգործարանն ե, զգալի չափով Մալինիտական ու կուղնեցիք, Դնեպրոստրոյը, գորի կոմյերիտական կաղմակեղպությունը հարվածային աշխատանքի համար պարզմատրուլած ե Լենինի շքանշանով : Մետրոպոլիտենի շինարարությանը բացառիկ ծառայություններ մատուցելու համար մայրաքաղաքի կոմյերիտմիությունը, ընկեր Ստալինի առաջարկությամբ, նույնպես պարզեատրվեց լենինի շքանշանով : Կոմյերիտականների ուժերով բարձրացվեց «Ռուբալ-

մաշը»: Կոմյերիտականների ուժերով հեռավոր Ամուրի վրա աննախընթաց կարճ ժամկետում, չնայած տարդայի սարսափելի պարմաններին, կառուցվեց կոմսոմոլսկ քաղաքը, վորը կուսակցության և կառավարության կողմից այդ անունով կոչվեց իսպատիվ Լենինյան կոմյերիտմիության: (Բուռն ծափահարություններ):

Այդ ամբողջ մեծ աշխատանքի հաջողությունն ապահովվեց լենինյան մեծ մրցակցությամբ, վորի դրոշն առաջին անգամ կոմյերիտականները բարձրացրին:

Ներկայումս յերիտասարդության և կոմյերիտականների դերն եւ ավելի յև մեծացնել սոցիալիստական շինարարության մեջ: Անցյալ տարվա հուլիսի 1-ին մինչև 23 տարեկան հասակ ունեցող յերիտասարդությունը մեր յերկրի բանվորության ընդհանուր թվի 34 տոկոսն եր կազմում:

ԽՍՀՄ-ում՝ 7.000.000 յերիտասարդ բանվոր կա մինչև 23 տարեկան հասակի: Դրանցից 3.140.000 աշխատում են արդյունաբերության մեջ, 700.000 — յերկաթուղային տրանսպորտում և 700.000 — շինարարություններում:

Յերկրի առաջատար գործարաններում յերիտասարդության տոկոսը չափ նշանակելի յև: Որինակ,

| | |
|--|---------|
| Կագանավիչի անվան առանցքակալների առաջին գործարան | 42 տոկ. |
| Մազնիտոգրանի մետաղաձուլուական գործարան | 43 տոկ. |
| «Դինամո» գործարան Կիրովի անվան | 44 տոկ. |
| Դադոյանների գործարան Ռդջոնիկիձեյի անվան (Մոսկվա) | 46 տոկ. |
| Զելյաբինսկի տրակտորի գործարան | 47 տոկ. |
| Ստալինոգրանի Ստալինի անվան քիմկամբինատ | 60 տոկ. |

Յերկրի խոշորագույն նոր գործարանները լցված են յերիտասարդությամբ: Յելզ գործարաններն են յերիտասարդ, և բանվորները՝ յերիտասարդ:

Բանվորների այդ յերիտասարդ բանակի նշանակությունն եւ ավելի յև մեծանում, յեթե հաշվի առնենք, վոր բոլշևիկների կուսակցության և խորհրդային իշխանության հոգատար կերպով դաստիարակած յերիտասարդությունը տարեցտարի եւ ավելի դրագեատ և դառնում և ավելի ու ավելի հաջող և յուրացնում տեխնիկան:

Պետք եւ հիշել, վոր Լենինյան կոմյերիտմիությունը և բանվորական յերիտասարդությունը, ընկեր Ստալինի աջակցությամբ

և քաղալերումով, տեխնիկական-տեխնիկական քննությունների կազմակերպման նախաձեռնողները յեղան, քննություններ, վորոնք մեծ դեր խաղացին նոր տեխնիկայի յուրացման դորժում, և ստախանովյան շարժման նախերդանքը հանգիւացան:

Անինյան կոմյերիամբությունը, բանվորական յերիտասարդությունը առաջին նախաձեռնողները յեղան նաև՝ ստախանովյան շարժման մեջ: Աշխատանքի ավելի բարձր արտադրողականության համար մղված սոցիալիստական մըցակցության նոր ետապն սկսեց յերիտասարդ բանվոր Ստախանովյան, վորն իր առաջին ունկորդը նիմիրեց միջադաշին յերիտասարդական որվան: Տրանսպորտում ստախանովյան մեթոդների պիտոնները հանդիսացավ մեր համազարի նախադահության անդամ կոմյերիտական Կրիվոնսուը (ծափահարություններ), տեքստիլ արդյունաբերության մեջ՝ նույնակես մեր նախադահության անդամ կոմյերիտուհի Յեկղոկիա Վինոգրադովյան (ծափահարություններ), մեքենաշինության մեջ, Գորկու գարբին Բուտիգինից հետո՝ Փարզործուսի տասնյոթամյա սահն կոմյերիտական Կուրյանովյա:

Խնչակես և մեր յերիտասարդության արտադրական վորակավորումը: Վերցրեք ելեկարտուելինիկական արդյունաբերությունը: Մինչև 23 տարեկան հասակի յերիտասարդությունը փականադործների մեջ կազմում եւ 47 տոկոս, խառատների մեջ—49 տոկոս: Ավտոարակտորային արդյունաբերության մեջ աշխատող բոլոր ձևուղների 42 տոկոսը յերիտասարդություն եւ, փականադործների—49,5 տոկոսը, խառատների—54,5 տոկոսը, Փրեզերի վրա աշխատողների—54,4 տոկոսը: Տրանսպորտային մեքենաշինության մեջ խառատների 50 տոկոսը մինչև 23 տարեկան հասակ ունի, Փրեզերի աշխատողների—47 տոկոսը, նշագծողների—62 տոկոսը: Դրությունն այսպիս եւ նաև արտադրության մյուս ճյուղերում: Այս տարիների ընթացքում միայն Փարզործուսի դպրոցները յերիտասարդությունից 1.380.000 վորակյալ բանվորներ են պատրաստել: Մեր յերիտասարդությանը կարող եւ նախանձել ամբողջ աշխարհի աշխատավոր յերիտասարդությունը:

Իր գործի տեխնիկային աիրապետելը, վորակավորման բարձրացումը անդրադարձան նաև յերիտասարդության աշխատավարձի վրա: 1931 թվի հունվարից մինչև 1935 թվի գեկտեմբերը յերիտասարդության աշխատավարձը բարձրացավ 340 տոկոսով:

Աշխարհի և վոչ մի յերկրում չի կարելի տեսնել վորեւնման բան: Յեւ այդ ամենը մեղ տվեց սոցիալիզմի հաղթանակը, բուշկիկան կռւսակցությունը, այս ամենը մեղ տվեց Ստալինը: (Մաֆիահարություններ):

Գործազրկությունը, քաղցը և կարիքը չեն սպառնում մեր յերիտասարդությանը, մեղ մոտ չկա և չի կարող լինել հոգու ու որվա մասին:

Ֆաշիստական, կապիտալիստական յերկրներում յերիտասարդները—դրանք յերբորդ կարգի մարդիկ են:

Յեթե մեր յերիտասարդությունը անկախ տարիքից ու սեռից հավասար աշխատանքի համար հավասար աշխատավարձ և ստանում մեծահասակ բանվորների հետ, աղա բռւրժուական, ֆաշիստական յերկրներում յերիտասարդության աշխատավարձը, վորպես կանոն, միշտ ել անհամեմատ ցածր և մեծահասակ բանվորի աշխատավարձից:

Կապիտալիստական յերկրներում գործադրկության սովորանալիքը մահվան ողակի նման կախված և յերիտասարդության դլամավերեւ: Ֆաշիստական Գերմանիայում գործադրությունը 26 տոկոսը յերիտասարդ են, Ամերիկայում — 28 տոկոսը, Իտալիայում — 41 տոկոսը:

Ֆաշիզմը մի ժամանակ վայլուն ապագա յեր խոստանում յերիտասարդությանը, — աշխատանք, հաց, աղատություն և ուսում: Իրականության մեջ նա բերեց յերիտասարդության մասսայական արձակումներ ձեռնարկություններից, քաղց, այսպէս կոչված աշխատապարհակային ճամբարներ, վոչ-մարդկային անընդհատ զինվորական խստավարժություն:

Հիտլերն արգելեց յերիտասարդության աշխատել ձեռնարդություններում, ղարստավորեցնելով նրան վորոշ ժամանակ աշխատել աշխատանքային պարհակի ճամբարներում — այդ յուրահատուկ կաղեմատներում, վորտեղ Փաշիզմը նրանից գողանում և ուժն ու յերիտասարդությունը:

Գերմանիայում, Անդլիայում, Ամերիկայում և Ֆրանսիայում բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններն ավարտող յերիտասարդության կեսից ավելին, չկարողանալով իր եներդիայի ու դիտելիքների գործադրություն գտնել, լրացնում և գործազրուրկների բանակը:

Ֆրանսական գյուղի յերիտասարդ գյուղացի Լաղելես Ռի-

Վերը գրում ե . «Մեր պատանեկությունն անուրախ ե , մեր ամբողջ կյանքը ծանր , մաշիչ , անուրախ աշխատանք ե : Մենք նույնիսկ չենք կարող յերաղել , թե կտտեղծենք ընտանեկան ոջախ , աղքատությունը վտարում ե մերը» :

Յերիտասարդության աշխատանքի պաշտպանություն ամենին չկա վո՞չ միայն Փաշխատական Գնդրմանիայում , այլև կապիտալիստական բոլոր յերկիրներում , վորոտեղ վերջին տարիներս վոչնչացված են նույնիսկ պաշտպանության այն չնչին նորմաները , վորոնք յերբեքիցեւ ալաշտոնասինք գոյություն են ունեցել : Գնդրմանիայի արդյունաբերական տեսությունը հաղորդում են . «Դժբախտ դեպքերը յերիտասարդության մեջ առունելիութեան աճել են : 1932 թվի համեմատությամբ նրանք թյուրինդիայում աճել են 100 առկասով , իսկ Բաղենում՝ 300 տոկոսում» : Դրան ոժանդակում ե Փաշխանմբի՝ իշխանության գլուխ անցնելու կազմակցությամբ , աշխատանքային որվա յերկարացումը յերիտասարդության այն հատկածի համար , վորը դեռ աշխատում ե ձեռնարկություններում :

Ներքին գործերի մինիստրության տվյալներով առ 1-ն գեղարվարի 1935 թվի ձապոնիայում 331.000 յերիտասարդ կանայք , անկուր կարիքի ճնշման տակ , աղոռներությամբ են դրայվում :

Մեր յերիտասարդությանն անծանոթ են քաղցի ու կարիքի սարսափները , Ֆիղիկական և Հոգևոր տանջանքները , վորոնք , ինչպես մենք տեսնում ենք , յերիտասարդությունն աղբում և կազմալիստական յերկիրներում : Յերիտասարդության դաստիարակության բոլոր արմատական հարցերը , վորոնք աշխատալոր յերիտասարդության համար յերբեք չեն կարող լուծվել կազմալիստական հասարակության մեջ , մեղ մոտ ԽՍՀՄ-ում խորհրդային իշխանությունը լուծել և հոգուուր յերիտասարդության դրամականը :

Սոցիալիզմի հաղթանակը ԽՍՀՄ-ում արմատապես վոխեց վոչ միայն քաղաքային , այլև գյուղական յերիտասարդության դրամականը :

Համ . ԿԿԵՄ Խ համագումարից ի վեր կոլտնտեսական-կոմյերիտականների քանակը կրկնապատկվեց և հասալ 1.200.000 հոգու : Գյուղի կոմյերիտականների 87,8 տոկոսը անմիջականորեն աշխատում ե կոլտնտեսային արտադրության մեջ :

Հողագործական բոլոր բրիգադների ողակալարների մեջ մինչև 26 տարեկան հասակ ունեցող յերիտասարդությունը կազմում

և 31 տոկոս։ Նույնիսկ այնպիսի պատասխանառու աշխատանքում, վրալիսին տրակտորային բրիգադների զեկավարումն եւ, յերետասարդությունը խոչը զեր ե խաղում, — տրակտորային բրիգադիների և նրանց ողնականների 30 տոկոսը յերիտասարդություն եւ 12 տոկոսը՝ կոմյերիտականներ։ Բավական եւ առել, վոր մեր յերկրի յուրաքանչյուր յոթերորդ տրակտորիստը կոմյերիտական եւ, յուրաքանչյուր վեցերորդ կոմյերիտական եւ։

Կոմյերիտականների զերը գյուղատնտեսության մեջ առանձնապես ցայտուն կերպով յերևում ե Մոսկվայի մարզի որինակով։ այստեղ յերիտասարդությունը կոլտնտեսականների նախագահների ընդհանուր թվի 19 առկոսն ե կազմում, իսկ բրիգադիների թվի 39 տոկոսը։ Մոսկվայի մարզը բացառություն չե։ Գյուղատնտեսության առաջավորների խորհրդակցությունները մեր կուսակցության և կառավարության ղեկավարների հետ՝ ակներորեն և համոզիչ կերպով ցույց տվին այդ անհերքելի փաստը։

Կոլտնտեսային կարգը գյուղացիական յերիտասարդության համար ստեղծեց աշխատանքի, կըթության և դաստիարակության այնպիսի լայն հնարավորություններ, վորապիսիք նրանից առաջ ուներ քաղաքային յերիտասարդությունը։ Աճում և գյուղացու նոր տիպը — գյուղատնտեսական խոչը արտադրության կուլտուրական աշխատողի տիպը, վորը լավ տիրապետում է մեքենային տեխնիկային, վոր ապրում եւ ունեոր և կուլտուրական կյանքով։

Գյուղացիական յերիտասարդությունը արդեն իր միջից առաջ է քաշել իր լավագույն ներկայացուցիչների, սոցիալիստական շինարարության հերոսների ամբողջ համաստեղություն, վորոնց ձանաչում և ամբողջ յերկիրը։

Բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև ոռուների, գեղջկուհիները մինչև Հռիտեմքերյան մեծ հեղափոխությունն իրենց իսկական հերոսուհիները չունեյին։ Ռուս գեղջկուհին միայն տանջանքի, կարիքի և զրկանքի հերոսուհի յեր, վորին մի ժամանակ այդ իմաստով յերգում եր պանտ նեմկրասովը։ Միայն մեր հեղափոխությունը, միայն կոլտնտեսային կարգը դաստիարակեցին գեղջկուհիներին, իսկական հերոսուհիներին, վորոնք ընդունակ են ստեղծադրժական աշխատանքի հրաշքներ գործել։ Յեվ այդպիսի

Հերոսուհիներից առաջինները հանդիսանում են կոմյերիտուհի Մարիա Դմեչնիկոն և նրա ընկերուհիները: (Մափահարություններ):

Համամիութենական հոչակ ձեռք բերին կոլտնտեսային կոմյերիտության լավագույն սաները, վառապահն զբանշանակիրներ — կին տրակատորիստ Պաշա Անդելինան իր բրիգադի հետ (ծափահարություններ), յերիտասարդ բրիգադի Մելիխոս Յորայելը, կոմյերիտական Խվան Սոլովյովը, 19-ամյա կոմյերիտուհի-կթվոր Տայիսա Պրոկոպյեվան, յերիտասարդ բրիգադի Պողոսիկովը, կոլտնտեսության նախադահ կոմյերիտական Սերգեյ Կորոտկովը, կթվոր Պերսիանցելան, կոմյերիտուհի-կթվոր Մարիա Եպիմետ, կոմյերիտական - կոմբայնավարներ Խվան Զուբովկինը, Խվան Զարբանենկոն, Կ. Բորինը, Դ. Կորգարը, Ա. Ռույանկինը, Լ. Կողեսովը, Ռույանա Կիրիչենկոն, Ա. Զերնովան, տրակատորիստներ Խվան Ռոստովյանը, Պ. Գուտսենվը, կոլտնտեսուհի ողակավար Բիլիսա Միսոստիլայլան, կոմյերիտուհի-աղքանում Նատաշա Պոպրոցկայան, յերիտասարդ բրիգադի Յելլամպի Բիչկալովը, բամբակ հալաքող Թաջիխոն Թուրայելան, Ղազախստանի անվանի ճիարաժացնող Մազգում Արբաթովը և բազմաթիվ ուրիշներ, վարոնք ստացան կառավարության բարձրագույն պարզմաւ:

Աճում և ազգային հանրապետությունների, յերկրամասերի և մարզերի յերիտասարդության ակտիվությունը: Այդ յերիտասարդությունը հաստատուն կերպով առաջնային տեղ և նվաճել սոցիալիստական շինարարության մեջ, և առաջին հերթին կոլտնտեսային արտադրության մեջ: Հիշեցնեք թեկուզ Հյուսիսային կոլկասի յերիտասարդ բրիգադի ընկերի մրցությունը կամ թե Միջին Ասիայի յերիտասարդության, կոմյերիտականների հերոսական աշխատանքը բամբակ հայտքելու գործում:

Կոլտնտեսային յերիտասարդությունն ազնիվ աշխատանքով ապահով, կուլտուրական կյանք և նվաճում իր համար:

Ստոլբչչենկի ՄՏկայանի (Թաթարիա) տրակտորային բրիգադի կոմյերիտական բրիգադի ընկե. Պ. Գուտսենվը պատմում եր.

«Յետ, ընկերներ, նախկին չքավորս, առաջ ճի չունեմի, իսկ այժմ ունեմ սեփական մարդատար ավտո: Յետ 1935 թվին վաստակեցի ավելի քան 3000 ուրուի փողով, 45 ցենտներ հաց և 18 տոնն դանաղան տեսակի բանջարեղեն: Դա այնքան եւ, վորքան

իմ ծնողներն ամբողջ ընտանիքով չեյին կարող վաստակել շատ տարիների ընթացքում» :

Մոլդավական հանրապետության Զերժինսկու անվան կոլտընտեսությունից կոմյերիտական ընկեր Շմոյիսը 1935 թվի դեկտեմբերի 31-ին դրում է հետևյալը .

«Ընկեր՝ կուսարենվ՝ Յես մոռացա ասելու, թե ինչողևս եմ ապրում, և կոլտնտեսությունից առաջ յես յերբեք այդպես չեյի ապրում. այժմ յես 10 վոչխար ունեմ, 2 արու խող, կես հեկտար խաղողի տեղ և քառորդ հեկտար այդի, 1935 թվին աշխորերիս համար ստացա 180 փութ հացահատիկ, մի տակառ դինի. լավ վոտնաման ու զգեստներ ունեմ» և այլն :

Այդպիսի փառատեր կարելի յե շատ բերել:

Այն ժամանակ, յերբ կոլտնտեսային յերխասարդությունը ամբողջ կոլոնտեսային դյուլացիության հետ հաստատ հանգնել և ուներ և կուրտուրական կյանքի ուղղու վրա, աշխատավոր դյուլացիության կյանքը կապիտալիստական յերկիրներում հասել և աղքատիկ մակարդակի:

Ֆոշվուտական Գերմանիայում առանձին թերթեր, չնայած անլուր գրագնության, վորոշ պատկերացում են տալիս դյուլացիների սարսափելի դրության մասին, մասնավորապես Արևելյան Բալքարիայում : «Բնոլիներ Բյորդեն Յայտունդ» թերթի հատուկ թղթակիցը գրում է. «Յեթե առում են, վոր շրջանն աղքատ և սուր կարելքի մեջ և, դա դեռ լրիվ պատկերացում չի տալիս իրականության մասին : Գյուղացիների կյանքի մակարդակը ցույց և տալիս այն հանգամանքը, վոր զինապարտների 70 տոկոսը քըննությունից հետո անգետք և ճանաչվում թերաօնման պատճռում» :

Իտալիայում տասնյակ հազարավոր մանր հողմագործներ, գոտնվելով ծայրահեղ քայլայման պայմաններում, թողնում են իրենց վորքը տնտեսությունները, հեռանում են իրենց տներից :

Ամենից ամելի շամեցուցիչ և Ահաստանի դյուլացիների աղքատությունը : «Վիդվոլենիե» թերթը հրապարակել և դյուլացի խօսիքոր Գալինի նամակը, վորի մեջ նա դրում է. «Մեր մեծամասնությունն ապրում են նույնիսկ ավելի վատ պայմաններում, քան աՓրիկյան նեղբերը : Մեր ընտանիքները այլասերվում են ու հիվանդանում քաղցից, բնակելի շենքերի և հիգիենայի տարրական պայմանների բացակայությունից» :

Կապիտալիստական յերկիրներում չքավորագույն գյուղացիության համար հացը դառնում է ճոխության առարկա: Ոճառը, լուցկին, նամիթը — որանք այսպիսի տպանելներ են, վորոնք անմատչելի յեն լեհական չքավորագույն գյուղացիության մեծամասնության համար: Ինչու զրում եւ մի լեհական թերթ, «կարիքը գերազանցում եւ ամենավառ ֆանտազիան»:

Կապիտալիստական յերկիրների գյուղացիության դրությունն այսպես տարբերվում է մեր գյուղացիության հարածուն բարեկեցությունից:

Կյանքի սոցիալական և տնտեսական պայմանների վուփոխության, ինչպես գյուղի, այսպես և քաղաքի աշխատավորության նյութական դրության անընդհատ բարելավման աղջեցության տակ մեր յերկտասարդությունն աճում է ուժեղ, Գիշիկապես ավելի ամուր, քան յերբեկցե յեղել ե:

Ամենքին հայտնի յե, վոր առաջներում հատկապես բանվորական յերկտասարդությունն ամենից ավելի վատ առողջություն ունեք: Սակայն այժմ մեր յերկտասարդ բանվորների թոքերն առաջ են, մերաններն ու ներվերն ամուր, սիրու լավ աշխատող: Ահա թե ինչ և ասում զորակոչային հանձնաժողովների վիճակագրությունը.

1928 թե 1933 թ. թ. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿ ԿԱՆՉՎԱՄ ԽՍՀՄ ԲԱՆԿՈՒ
ՅԵՐԻՑԱՄԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆՆ (ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ)

| Տերկտառիան | Տարիները | Զորակոչիկների յուրաքանչ հազարդակին | | | | |
|--------------------|----------|------------------------------------|------------------|------------------|------------------|------------------|
| | | Համակառնությունը | Համակառնությունը | Համակառնությունը | Համակառնությունը | Համակառնությունը |
| Մոսկվա | 1928 | 38,0 | 20,2 | 78,4 | 25,7 | |
| Մոսկվա | 1933 | 5,7 | 3,9 | 18,6 | 4,4 | |
| Անգ. Սև | 1928 | 34,6 | 9,3 | 73,5 | 35,9 | |
| Անգ. Սև | 1933 | 6,8 | 2,8 | 5,1 | 4,9 | |
| Բաշկիր. ԻՍԽԱ . . . | 1928 | 51,0 | 7,0 | 107,1 | 19,1 | |
| Բաշկիր. ԻՍԽԱ . . . | 1933 | 8,9 | 1,8 | 21,3 | 7,1 | |

Մեր յերկտասարդությունն ավելի վայելչակազմ է դառնում: Յերկտասարդներն ավելի բարձրահասակ են դառնում, մեծանում

Ե նրանց կրծքի լայնությունը և քաշը : Պրոֆեսիոնալ հիվանդությունների Որոշման հիմատուտի մեջ հաղորդած թվերը ցույց են տալիս .

ՍՈՍԿՎԱՅԻ ՄԱՐԶԻ ԴԵՌԱԶԱՍԱԿ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ
1923—1934 ԹՎԵՐԻՆ

| 18 տարեկան հասակի միջին չուցանիշները | Տ ա մ մ ա բ դ ի կ | | Կ ա ն ա յ ք | |
|---|-------------------|---------|-------------|---------|
| | 1923 թ. | 1934 թ. | 1923 թ. | 1934 թ. |
| Հասակը (սանտիմետրով) | 159,7 | 162,4 | 152,8 | 154,4 |
| Քաշը (կիլոգրամներով) | 51,9 | 54,3 | 49,4 | 53,1 |
| Կրծքի շրջապիծք (սանտիմետրով) | 79,7 | 81,9 | 76,4 | 80,5 |

Մեր յերիտասարդությունն ստեղծում է ամուռ, առողջ ընտանիք : Յարական Ռուսաստանում շատ մեծ եր վաղ ամուռնությունների թվիը : 1910 թվին քաղաքներում բոլոր ամուռնությունների 14 տոկոսը աղջամարդիկ կատարում ելին մինչև 20 տարեկան հասակը : Գյուղակամ կանանց կեսից ավելին—58 տոկոսը—մարդու յեր դնում մինչև 20 տարեկան հասակը : Մեր որերում տղամարդկանց և կանանց մեծ մասն ամուռնանում և 20—24 տարեկան հասակաւմ :

Խորհրդային իշխանությունը մեծ հոգատարություն և ցույց տալիս յերիտասարդ մայրերին և յերեխանների առողջությանը : Դրա մասին ե խոսում մասնավորապես մանկապարտեղների թվի ավելացումը, —1930—31 թ.թ. մանկապարտեղներն սղամարկում ելին 370.000 յերեխայի : 1934—35 թ.թ. մանկապարտեղներում արդեն 1.181.000 յերեխա : Լար : Բացի զրանից, ավելի քան 4 միլիոն յերեխաներ են ընդդրկված ամառային մանկաբարակներում :

Խորհրդարդների յերկրում աճում է Փիղիկասկա ամբակազմ և բարոյապես կայուն մարդկանց առողջ, հզոր, ուժեղ սերունդ :

Առողջ, կննառերախ յերիտասարդությունը դիտությունների նկատմամբ բազմակողմանի մեծ և վիթխարի անհաղություն և համարես բերում :

Ժողովրդի ամենախոր շերտերից, կոլտնտեսային գյուղերից :

գործարանային ցեխներից, հեռավոր աղջային ծայրերկիրներից տասնյակ և հարյուր հաղարավոր յերիտասարդներ դիտության և դիտելիքների արշավի յեն դուրս յեկել: Նրանց առաջ բաց էն բոլոր ուսումնական հաստատությունների, բոլոր ինստիտուտների, բոլոր համալսարանների դռները:

Նրանց առաջ լայն ճանապարհ կա դեպի ամեն մի ամենապատասխանատու աշխատանք: Դրա համար պահանջվում և միայն մի բան, —սովորել և սովորել: Յեզ մեր յերիտասարդությունը համառորեն սովորում է:

Ժողովրդատնտեսական հաշվառման կննարունական վարչության տեղեկություններով առաջին հնդամյակի ընթացքում և յերկրորդ հնդամյակի տարիներին տիեզությունը կոմյերիտականներից պատրաստել և 301.000 վորանիալ մասնաշետներ, այդ թվում 35.000 ինժեներ, 83.000 տեխնիկ, 59.000 աղբոնոմ, դուռտեխնիկ, անտանաբույժ: և դյուրատանտեսության մեխանիկ, 92.000 ուսուցիչ՝ բարձրագույն և միջնակարդ կրթությամբ և այլն: Բացի դրանց անմիջականների աշխատանքի յեղարկեած կոմիտեն 50.000 կոմյերիտականների աշխատանքի յեղարկել վարչության տարրական դպրոցի ուսուցիչներ:

Այս տարիների ընթացքում միթխարի չափով աճել և բարձրացույն ուսումնական հաստատությունների ցանցը, ըստ վորում այժմ տեղի յեւ ունենուած ուսանողության յուրահաստուկ «յերիտասարդացման» առանձնապես հետաքրքրություն պրացիս:

ԽՍՀՄ ԲՈՒՆԵՐԻ ՑԵՎ ՏԵԽՆԻԿՈՒՄՆԵՐԻ ՍՈՎոՐՈՒՆԵՐԸ *

| Ուսումնական հաստատությունների աճելը | Առանողների թիվը | | Հաջութակացման աճելը | | 1935 թ. ընկույժածների կազմը ըստ ապրիլի, տակուներով | |
|-------------------------------------|-----------------|----------------|---------------------|-----------------|--|-----------------------|
| | 1/1 1930 թ. | 1/X 1935 թ. | Պատմական աճելը | Առաջնային աճելը | 18 տարվական միջին ցանցը | 18-ամ մասնակիությունը |
| 1. Բուներ և բառեր | 191,1 | 522,4 | 19,2 | 33,5** | 10,4 | 58,1 |
| 2. Տեխնիկուներ • • • | 327,1 | 705,2 | — | 31,2** | 70,5 | 24,4 |
| | | | | | | 0,9 |
| | | | | | 30 տարվական մասնակիությունը | |

* Ժողովրդ, անտեսության հաշվառման կենտր. վարչության տվյալներով:

** Առանց միաժամանակ կուսակցության անդամ և թեկնածու հանդիսացող կոմյերիտականների:

Գիտելիքներ ձեռք բերելու բացառիկ ձգտումն , այնուամենայ-
նիվ , առանձնապես մեծ և մեր ազգային հանրապետություններում :
Ահա հետաքրքիր աղյուսակ .

**ԲՈՒՆԵՐԻ ՈՒՍՏՈՂՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՑԻՆ ԿԱԶՄԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԱԶԳՈՒԹՅԱՆ
10 ՀԱԶԱՐ ԲՆԱԿԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՍՏՈՒԹՅԱՆՄ**

| ԺՈՂՈՎՈՐԴ- ՆԵՐ . . . | ԲՈՒՆԵՐՈՒՄ Առվի- բողների քանակն առ ավագալ ժողովրդի 10.000 բնակչու- թյանը | | ԺՈՂՈՎՈՐԴ- ՆԵՐՈՒՄ Առվի- բողների քանակն առ ավագալ ժողովրդի 10.000 բնակչու- թյանը | ԲՈՒՆԵՐՈՒՄ Առվի- բողների քանակն առ ավագալ ժողովրդի 10.000 բնակչու- թյանը | |
|------------------------|---|---------|---|---|---------|
| | 1931 թ. | 1935 թ. | | 1931 թ. | 1935 թ. |
| Բունեներ . . . | 16,8 | 28,7 | Զուկաշներ | 8,3 | 17,4 |
| Բնելուռաներ . | 18,6 | 26,2 | Բյուրեբեր | 19,5 | 30,2 |
| Բաթարներ . | 7,5 | 18,1 | Հայեր | 36,6 | 58,4 |
| Գերմանացիներ | 12,5 | 24,4 | Վրացիներ | 60,1 | 31,5 |

Սոցիալիստական շինարարության ճակատում իրենց կատարած
հերոսական սխրացործություններով , ստեղծագործական , ստեղ-
ծարար աշխատանքում իրենց ամստիվ մասնակցությամբ յերիտա-
սարդությունն ու կոմյերիտմիությունը . վիթխարի . հեղինակու-
թյուն են ձեռք բերել մեր բնակչության ամենալայն շերտերում :
Կոմյերիտականներն ու յերիտասարդությունը պատվով են կատա-
րում կուսակցության և կառավարության ամեն մի , թեև կուզ և
ամենաբարդ առաջարկանքը : Յեկանությունը իրավացիորեն
վստահում ե մեր յերիտասարդությանը ակտիվորեն մասնակցել
յերկրի կառավարմանը :

Մանոթացեք այս աղյուսակին .

ՏԵՐԻՏԱՏԱՐԴՈՒՅՑՈՒՆԸ ԽՈՀՍ-Ի ԽՈՐՉՈՒՐԴՆԵՐՈՒՄ (18—29 ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍԱԿԻ)

| Ցերիտասարդություն բացարձակ թիվը | Ցերիտասարդություն առկաների թվաքանակը | | Ցերիտասարդություն առկաների թվաքանակը | | Ցերիտասարդություն առկաների թվաքանակը | |
|--|---|---------|---|---------|---|---------|
| | 1931 թ. | 1934 թ. | 1931 թ. | 1934 թ. | 1931 թ. | 1934 թ. |
| Դյուզենուրէնուրէների նախագահներ . . . | 6.515 | 9.524 | 9,5 | 14,7 | 5,4 | 7,9 |
| Դյուզենուրէնուրէների անդամներ . . . | 231.209 | 350.760 | 15,4 | 26,4 | 6,4 | 11,3 |
| Բաղադրանուրդների անդամներ . . . | անդամներ | 35.808 | 12,8 | 17,7 | 7,0 | 10,6 |
| Երջաբած կոմիների անդամներ . . . | չկան | 12.286 | 9,0 | 12,9 | 5,1 | 6,3 |

Այս տոկոսն ավելի բարձր ե աղջային հանրապետություն-ների գյուղխորհուրդների անդամների մեջ։ Այսպես, Թուրքմե-նիայի գյուղխորհուրդների կազմում 30,5 տոկոսը յերիտասար-դություն ե և 14,9 տոկոսը կոմյերիտականներ են։

Այսպիսով մենք տեսնում ենք, թե յերիտասարդության վրա ինչպես բարեհաջող են անդրադառնում սոցիալիստական կարգի առաջելությունները։

Մենք տեսնում ենք, թե սոցիալիստական շինարարության մեջ ինչպես ե աճում մեր յերիտասարդության տեսակարար կայ-ուը, թե ինչպես մեր յերիտասարդությունը վորակավորում ե ձեռք բերում և դիրքեր ե գրավում արտադրական առաջատար ճակատամասերում։

Մենք տեսնում ենք, թե մեր յերիտասարդությունն ինչպես համառորեն սովորում ե, աշխատում ե դրքի վրա, նվաճում և տեխնիկայի և կուլտուրայի բարձունքները։

Մենք տեսնում ենք, թե ինչպես կոմյերիտմիության դաստի-արակած մեր յերիտասարդությունը անցնում ե պետական բազ-մակողմանի գործունեյության դպրոցը և ընտրողների վստահությամբ ուժոված, կանդնում ե պետական կառավարման դեկի-մու։

Խորհրդային յերիտասարդությունը—դա աշխարհում յերի-տասարդության առաջին մերումն ե, վորն ազատագրված ե սո-ցիալական ննջումից և անիրավահականացրությունից։ Խորհրդա-յին յերիտասարդության բալոտը անբաժան ե մեր հեղափոխու-թյան բախտից։

Ֆիզիկական ստրկացումից աղատադրված խորհրդային յերի-տասարդությանն անծանոթ ե նաև հոգեոր ստրկությունը։

Նա ամեն որ սպառազինվում ե մարդքիստական լենինյան ուսմունքով։ Խորհրդային իրականությունը նրան թելադրում ե հասարակական վարքագծի նորմերը։

Խորհրդային իշխանության դաստիարակած մեր յերիտասար-դությունն աղատադրվում ե բուրժուական հասարակության սո-ցիալական արատներից։

Խորհրդային յերիտասարդությանը յուրահատուկ չեն հարը-տանալու ծարավը, քաղքենական սահմանափակվածությունը, ստոր եգոիզմը։ Կապիտալիզմի մարդկային փոխհարաբերություն-ների ճախճախուսում ծրած այդ բոլոր թունավոր ծաղկինների փոխարեն մեզ մոտ հզորապես զարդանում են մարդկային բնու-

թյան բոլոր լավագույն հատկությունները։ Բուրդուառիան դրանք դռեհկացնում եւ Մենք դրանք մշակում ենք։

Խորհրդային յերիտասարդությանն անձանոթ և հոգեկան դատարկությունը, վոր կա բուրժուական հասարակության յերիտասարդության մեջ, վորովհետեւ այն, ինչը կատարվում եւ մեր յերկրում, չի կարող յերիտասարդության սրտերը չտողորել ուրախությամբ և կյանքի ծարավով, չի կարող նրան չվողենչել նորանոր մեծ սիրազործությունների։

Բոլշևիկների կուսակցությունը յերիտասարդությանը ուայքարից հեռու չի պահում, այլ, ընդհակառակը, նրան կոչում ե պայքարում, նրան լայն հնարավորություններ տալով մասնակցելու հասարակական-քաղաքական կյանքին։ Այդ բանի բերումով մեր յերկրում յուրաքանչյուր քաղաքացի պատճական հասակից սովորում ե կյանքի վրա նայել պետական մարդու աչքերով։

Այդ բանն ամենեկին չի կարելի ասել, որինակի համար, Գերմանիայի, Շատրնիայի, Լեհաստանի յերիտասարդության համար։ Այստեղ միակ ասպարեզը, վորտեղ աշխատավոր յերիտասարդությունը կարող է առաջ շարժվել, այն ել վորոշ չափով, դա զինվորականությունն եւ։ Բայց չե վոր վո՛չ բոլոր յերիտասարդներն են ցանկանում դառնալ մեծ ճանապարհների՝ դինվորական համազգեստ հաղած ավարտի հարստությունները։

Դժվար ե ասել, թե ի՞նչն ե անհնարին մեր յերիտասարդության համար, ինչն ե նրան անմատչելի։ Լենինյան կուսակցությունը, խորհրդային իշխանությունը յերիտասարդության սեփականությունն են դարձրել գիտության, տեխնիկայի, կուլտուրայի և արվեստի բոլոր հարստությունները։

Փառքի և պատվի հասնելու հասկացողությունը մեղ մոտ այլ ե, քան բուրժուական հասարակության մեջ։ Բաղզակի «Մարդկային կատակերգության» հերոս Լյուտյեն Ռյուբամպլըն իր քույր Յելզային գրում ե. «Ինձ ճանապարհ հարթելով յես հարուստ կղառնամ»։ Վորքան ծիծաղելի և չնչին ե թվում մեղ Լյուտյենների և Ռաստինյաների այդ իդեալը։ Մեղ մոտ մարդիկ փառքի ու պատվի արժանանում են հոյակապ աշխատանքի համար, սոցիալիզմի համար մղվող պայքարի ֆրոնտում, ժողովրդի յերշանկության համար մղվող պայքարի ֆրոնտում սիրազործություն և գերազանց զործ կատարելու համար։

Եերիտասարդ բուրժուա Լյուտյեններն ու Ռաստինյակները

փառքի ու պատվի հասնելու համար պետք ե իրենց համար կատաղորեն ճամբար բաց անելին շրջապատզների գլուխների վրայով, արմունկով հրեյին բոլորին, ատամներով կրծոտեյին մերձավորներին, վորովհետև «մերձավորներն» ամենից առաջ իրենց նման դազանացած կոնկուրենտներ եյին, և անդթորեն կործանելով թույլերին, վոսկու հետեւից պիտի վաղեյին, վոչ մի հանցագործության և ստորոտության առաջ կանդ չառնելով։ Այդ խառնակույտում, վոր կոչվում ե «Հասարակություն», փառքի հասնում եր վոչ թե ամենաարժանավորը, այլ ամենից ավելի գիշատիչը և բարոյապես ամենից ավելի քիչ մաքուրը։ Բուրժուազիայի փառաբանված բարոյական կանոնները, տիրահռչոչակ «լսիդճը» խաղալիք եյին հարստության անհաջ, ցինիկ, վոչնչից չխորշող ասպետների ձեռքին։ «Խիդճը, — զրում եր Բալզակը «Կորած իլյուդիաների» մեջ, — դա մի փայտ ե, վորը յուրաքանչյուր վոք բըռնում է իր մերձավորի գլխին խփելու համար և վորը վոչ վոք չե ովտագործում իր համար»։

Հասարակության մեջ փառքի ու պատվի հասնելու ուղին միանդամայն այլ՝ և մեր յերիտասարդության համար։ Մեզ մոտ պատիվն ըստ աշխատանքի յե հատուցվում, և փառքի արժանանում են միայն Փիղիկական և մտավոր աշխատանքի սոցիալիստական բանակի ամենաարժանավոր հերոսները։ Ստախանովի փառքը—դա այնպիսի փառք ե, վորը հնարավոր և միայն մեզ մոտ, սոցիալիստական հասարակության մեջ։

Լենինյան կոմյերիտմիությունը և նրա ղեկավարած յերիտասարդությունն այժմ արդեն Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության վո՛չ միայն ռեզերվն են, այլև նրա ակտիվ մարտական ուժը, վորը Լենինի-Ստալինի մեծ կուսակցության ղեկավարությամբ մասնակցում և սոցիալիզմի համար մղվող մարտերին և լիակատար կոմունիզմին անցնելու պայմանների նախապատրաստմանը։

III. ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՍՊՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՈԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Վերջին տարիները սուր կերպով դրել են նոր իմպերիալիստական պատերազմի հարցը։ Այժմ արդեն պետք է խոսենք վո՞չ թե միայն ռազմական վտանգի մասին, այլ իսկական պատերազմի մասին, վորն այժմ իսկ տեղի յե ունենում մեր աչքերի առջև։ Հարեշտանի դաշտերում արյունալի գոտեմարտերում հարեշները իրենց անկախությունն են պաշտպանում իտալական ֆաշիզմից։ Զինական ժողովուրդը դառն տանջանքներով պայքարում ե իր ինքնուրույնության համար՝ ճապոնական իմպերիալիզմի լծի դեմ, վորն ստրկացրել ե Մանջուրիան և ձգտում ե ստրկացնել ամբողջ Չինաստանը։

Գերմանական ֆաշիզմն իշխանության գլուխ անցնելու առաջինին իսկ որվանից անպատկառորեն խախտում ե պետությունների միջև սահմանված գոյություն ունեցող պայմանագրերը, կատաղի շովինիզմ ե հրահրում, ամեն որ նախապատրաստվում ե պատերազմի և ամեն կերպ պատերազմ ե ուղում բռնկեցնել։

Նոր պատերազմի տեսդադին նախապատրաստումը և արդեն մղվող պատերազմները շատ մոտեկից են շոշափում յերիտասարդության շահերը։ Մեր նպատակը չղնելով տալ տարբեր պետությունների փոխհարաբերությունների մանրամասն տեսությունը, մենք այնուամենայնիվ պետք ե խոսենք միջազգային իրադրությունից բղխող մեր խնդիրների մասին։

Ֆաշիստական, կապիտալիստական պետություններն ուժուութեն միլիտարիզացիայի յեն յենթարկում յերիտասարդությունը։ Ֆաշիստական յերկիրներում — Գերմանիայում, Լեհաստանում, իտալիայում, Ճապոնիայում, — վերջին յերկու-յերեք տարիներում յերիտասարդությունը համարյա ամբողջությամբ ընդդրուկ-

ված և զինվորական նախապատրաստությամբ։ Յերիտասարդության ռազմականացման համար ոգտադորձվում են բոլոր ուժերն ու միջոցները, — ռազմական ուսուցում և մացված զպրոցներում, ստեղծված են յերիտասարդության հատուկ ռազմական և կիսառազմական կազմակերպություններ։ «Հիտլեր Յուզենդլը» (Հիտլերյան յերիտասարդությունը) դա կիսառազմական կազմակերպությունից դենք և անցնում։ Նրա գլուխ են կանգնած համապատասխան ռազմական շտաբներ և շտաբների պետեր։ Այդ կազմակերպությունն անց և կացնում դաշտային պարապմունքներ, սովորեցնում և կրակել, նոնակ նետել, տոպոգրաֆիա։ Հիտլերի ստեղծած այդ կազմակերպությունն իր շարքերում ունի ավելիքան 4·500·000 յերիտասարդություն։

Գերմանիայի Փաշխոտներից հետ չի մնում Փաշխոտական Լեհաստանը։ Լեհական Փաշխոտները կատաղի շովինիզմ են պատվաստում յերիտասարդությանը, դազանային ատելություն դեպի Խորհրդային Միությունը։ Լեհաստանում Փաշխոտական և կիսաՓաշխոտական մոտ 50 զանազան յերիտասարդական միություններ կան, վորոնց մեծ՝ մասը զուտ ռազմական կազմակերպություններ են, իսկ դրանցից մի քանիսը, ինչանք, որինակ, «Հրաձգային միությունը», իր կառուցվածքով կադրային բանակի ճգդրիտ պատճեններ ե։ Այդ կազմակերպություններում զանովող յերիտասարդությանը Փաշխոտներն ամենից առաջ նախապատրաստում են, Խորհրդային Միության դեմ դուրս գալու։ Այդ կազմակերպություններում բացահայտորեն քարոզում են «արշավանք կիեվի վրա» և խոսում են «Բալթիկան լեհական» դարձնելու անհրաժեշտության մասին։

Յերիտասարդության միլիտարիզացիան ե'լ ավելի նշանակելի և լայնածավալ կերպով անց և կացվում ձապօնիայում։ Ձապօնական Փաշխոտները յերիտասարդությունից պահանջում են գիտակցել իրենց կենդանական վարպետության մասին միտիան Արևելքում և դնում են Խորհրդային Միության վրա հարձակում նախապատրաստելու խնդիրները։

Պատերազմները կավիտալիստական հասարակության համար անխուսափելի յեն։ Նրանք բղխում են կապիտալիստական հասարակության բնությունից և բնույթից։ Ժամանակակից կապիտալիստական հասարակության մեջ յեղած խաղաղությունը յերկու պատերազմների միջի պառզա յե, յերբ իմպերիալիստաներն, ավարտելով մի պատերազմը, պատրաստվում են նորի։

Այժմ մի քանի կապիտալիստական յերկիրներ պատերազմ են պատրաստում ամենից առաջ ԽՍՀՄ-ի դեմ:

«Պատերազմը, — ինչպես ասում ե ընկեր Ստալինը, — կարող ե ծագել հանկարծակի... Կան, — ասում ե ընկեր Ստալինը, — ըստ իս պատերազմի վտանգի յերկու ոջախ: Առաջին ոջախը գտնվում է Հեռավոր արևելքում, ծագոնիայի գոտում: Յես նկատի ունեմ ճապոնական դինվրականների բազմիցս արած հայտարարությունները՝ մյուս պետությունների հաօցելին ուղղված սպառնալիքներով: Յերկրորդ ոջախը գտնվում է Գերմանիայի գոտում: Դժվար ե ասել, թե վոր ոջախն ավելի սպառնալից ե, բայց դրանք յերկուան ել գոյություն ունեն և գործում են»: (Ընկ. Ստալինի զբույցը պ. Ռոյ Հոուարդի հետ, 1936թ. մարտի 1-ին):

Պատերազմը, կրկնում ենք, առաջին հերթին պատրաստվում է Խորհրդային Միության դեմ: Ճապոնական ականավոր դեներակ Սայիտոն այսպես ել հայտարարում ե. «Ճապոնիայի մերձավոր ապագան Մանջուրիայի, Մոնղոլիայի և Սիբիրի դաշտերում ե»:

Ամենքին հայտնի յե գերմանական աշխատավոր ժողովրդի դահիճների—ֆաշիստների բացահայտ արրողազանդան մեր Խորհրդային Ռւկրախնայի վերաբերմբ: Նույնիսկ Լեհաստանը, վոր ֆաշիստ Ռուգենբերդի արտահայտությամբ «Հիստերիկ կին ե, վորի դլախն պետք ե խփել նրան ջրից դուրս քաշելուց առաջ», բացահայտ կերպով պահանջանք ե ներկայացնում Խորհրդային Ռւկրախնայի նկատմամբ: Ամենքին հայտնի յե ոսղմական գաղտնի դաշնազրի դոյտությունը ճապոնիայի և Գերմանիայի միջև, վորն ուղղված ե ԽՍՀՄ-ի դեմ, և ֆաշիստական Լեհաստանի շատ մոտիկություն այդ պայմանագրին:

Խորհրդային Միությունը գտնվում ե կապիտալիստական շրջապատճեմի մեջ: Պատերազմի վտանգը յուրաքանչյուր քայլափոխին սպառնում ե մեզ: Վերջին յերեք տարիների ընթացքում ճապոնական իմպերիալիստները բազմիցս պատերազմական ընդհարումներ են առաջ բերել մեր արևելյան ուսհմանների վրա, փորձել են սմինուվ չափել մեր ուժը, բայց, ինչպես հայտնի յե, դրանից նրանց համար վոչ մի լաով բան չի ստացվել: (Մաֆահարություններ):

Մեր խորհրդային կառավարությունը խաղաղության քաղաքականություն ե վարում և այդ քաղաքականությունն ակտիվ

Հավանություն ե գտնում բոլոր պետությունների աշխատավորների կողմէց։ Մենք խաղաղության այդ քաղաքականությունը վարում ենք, ինչպես այդ գիտեն նաև մեր թշնամիները, վոչ թե թուլությունից, այլ յենելով բոլոր ազգերի, ժողովուրդների և ցեղերի աշխատավոր մարդկության վիճակի մասին հող տանելուց։ Յեթև մինչև այժմ համաշխարհային պատերազմ չի բռնկել, ապա նշանակելի չափով դրա պատճառը Խորհրդային Միության խաղաղության քաղաքականությունն ե։ Յեթև իմպերիալիստները հարկադրված չլինելին հաշվի նստել Խորհրդային Միության հարածուն հղորության հետ և չլախենային բոլոր յերկիրների աշխատավորների միջազգային համերաշխությունից, ապա նրանք վաղուց ելին արշավանք կազմակերպել սոցիալիստական պետության գեձ։

Լինինյան կոմյերիսմիությունը, Խորհրդային Միության ամրող յերիտասարդությունը վողջունում են իրենց կառավարության վորոշումը բանվորա-ղյուղացիական կարմիր բանակի թիվը մինչև 1.300.000 հոգի հասցնելու մասին։ (Բուռն ծափակարություններ)։

Լինինյան կոմյերիսմիությունը և Խորհրդային Միության ամրող յերիտասարդությունը իրենց կառավարությանը, բոլեղիկների մեծ կոմունիստական կուսակցությանը, մեր առաջնորդ ընկեր Ստալինին հայուրարում են իրենց պատրաստ լինելու մասին՝ կամավոր կերպով մտնելու մեր փառապանծ կարմիր բանակի շարքերը։ (Բուռն ովացիա, բոլորը վատի յևն կանգնում։ Վողջույնի բացականչություններ ընկեր Վորշիլովի և Կարմիր բանակի հասցեյին)։

Սոցիալիստական պետության դաստիարակած, մեծ Ստալինի գուրզուրած յերիտասարդ բանվորները, յերիտասարդ դյուցացիները, յերիտասարդ ծառայողները և յերիտասարդ ինտելիգենցիան, Խորհրդային Միության մարշալ Կլիմ Վորոշիլովի առաջնորդությամբ։ (Բուռն ովացիա) ջարդուժուր կանեն ու փոշի կդարձնեն բոլոր նրանց, ովքեր կփորձեն հարձակվել մեղ վրա։ (Յերկարատև ծափակարություններ)։ Յեվ իսկապես, թշնամիները պետք ե մեծ համարձակություն ունենան, վորտեսղի զոհաբերն իրենց գլուխը։

Վ'չ սամուրայի արիտությունը, վ'չ դարչնապույն ավա-

¹ Զենվորական կաստա հին ձապոնիայում։ (Սանօք. քարգմ.)

տիկավոր¹ համազգեստ հազած ռազմաշունչ բանդիտի ուժը փորձանքից չեն ազատի նրանց, ովքեր կիորձեն հարձակվել մեջ վրա : (Բուռն ծափահարություններ) : Նրանք բոլորն եւ գործ կունենան յերիտասարդության ստալինյան սերունդի հետ, վորք համոզված եւ Մարքսի-Ենդելսի-Լենինի-Ստալինի մեծ գաղափարների անպարտելի ճշմարտության մեջ (բուռն ծափահարություններ), վորի ուժի առջև վորպես փոշի հոգա կցնդի իմպերիալիստական բանակի ժամանակակից վարժույթը : (Ծափահարություններ) :

Մեղ վրա հարձակում գործելու դեպքում մեր խորհրդային ինքնաթիւններն ու տանկերը, գոմարած ճապոնական, գերմանական և լեհական աշխատավորության միջամտությունը, կալարտեն իրենց հաղթական գործը : (Բուռն ծափահարություններ) :

«Բանվորները հայրենիք չունեն : Նրանցից չի կարելի խլել այն, ինչը նրանք չունեն»—գրել են կոմոնիդմի հիմնադիրները, մեծ Մարքսն ու Ենդելսը «կոմոնիստական կուսակցության մանիքի իստում» (տես Կ. Մարքսի ընտիր յերկերի յերկատորյակը, հ. 1, էջ 168) :

Բուրժուական պետությունները միլիոնավոր աշխատավորներ համար ատելի բանա են յեղել և են :

1917 թվի հոկտեմբերին մեր յերկրի աշխատավորները, մեր մեծ բազմազգ ժողովուրդը հայրենիք ունեցավ : Խորհրդային ժողովրդի յերիտասարդ սերունդն առաջին անգամ հայրենիք ստացավ, վորն արժե սիրել և արժե պաշտպանել :

Մեր հերոսական ժողովուրդը, Լենինի-Ստալինի կուսակցությունը ստեղծեցին աշխարհում առաջին սոցիալիստական պետությունը, վորք Հոգոր Ժայռի նման վեր ե բարձրացած կազմական ճգնաժամերի ու ցնցումների մրգկահույզ ծովից :

Մենք, յերիտասարդությունս—խորհրդային հայրենիքի հայրենասերներ ենք, մենք մեր պատմական բախտի տերն ենք :

Մեր հայրենասիրությունը վոչ մի ընդհանուր բան չունի անցյալի թթու և սկարյուրյակային «ոռուսական» հայրենասիրության հետ :

Մենք սիրում ենք մեր հայրենիքը և պատրաստ ենք այն պաշտպանել, վորովհետեւ նա առաջին սոցիալիստական պետությունն ե, վորտեղ չկա մարդու շահագործումը մարդու կողմից, վորտեղ մարդկային կյանքը և մարդկային արժանապատվություն-

¹ Ֆաշիստական նշան :

նը վաճառքի առարկա չեն, վորտեղ ծաղկում ե տալրեր ազգությունների միջինավոր աշխատավորների մեծ բարեկամությունը:

Մենք սիրում ենք մեր հայրենիքը և պատրաստ ենք այն պաշտպանել, վորովհետեւ նա լիառատ ե և հարուստ իր գործարաններով, Փարբեկաններով, յերկաթուղիններով, իր տեխնիկայով, վորովհետեւ նրա հողերն արգավանդ են, նրա ընդերքի հանածողանձերն անհամար, դետերը, լճերը և ծովերը հզոր ու ջրառաս, —ե այդ բոլորը պատկանում ե մեզ: (Յերկարածել ծափահարություններ)

Մենք հայրենասերներ ենք նրա համար, վորովհետեւ սոցիալիստական հայրենիքի պաշտպանությունը, նրա հղորության և փառքի ամրացումը—յուրաքանչյուր կոմյերիտականի, մեր Խորհրդային յերկրի յուրաքանչյուր յերիտասարդի ազգային և դրա հետ միասին ինտերնացիոնալիստական սրբազան պարտականությունն ե:

Մենք պատրաստ ենք պաշտպանել մեր հայրենիքը նրա համար, վորովհետեւ մեր յերկրի հաղթանակի, նրա վիառքի, հարըստության և բարեկեցության ծաղկման մեջ ե վոչ միայն մեր, այլև մարդկության դալիք սերունդների յերջանկությունն ու կյանքը:

Մենք հանդիս կդանք մեր հայրենիքի պաշտպանության համար այնպես, ինչպես քաղաքացիական կոլիզների տարիներին հանդես յեկան Դունեցի ածխահատները և Սալսկի պարտիզանները, վորոնք «Կարմիր Վերդեն» ստեղծեցին Ցարիցինի տափաստաններում, կտրեցին սպիտակ-գլաւրդիական հրոսախմբերի ճանապարհը, ինչպես հանդես յեկան Սև ծովի հեղափոխական նավաստիները, վորոնք ծովերի լայնությունը փոխեցին ինքնադրոծ դրահագործացքների հարթակներով, վորոնք արտասահմանյան տեխնիկային հակադրեցին իրենց սվինների յեռակողմ սուրը և սեփական արիությունը: Մեզ՝ մեր նպատակների և հզոր տեխնիկայի անխորտակելիության գիտակցությամբ սրբառադինված՝ կառաջնորդի բանվոր դասակարգի անհաղթ մարշալ Կլիմ Վորոշիլովը: (Բուռն ովացիա):

Թշնամիները պետք ե դիտենան՝ վորպեսզի կարողանան մեր յերկրը հաղթել, նրանց հարկավոր կլինի վոչնչացնել նրա ամբողջ յերիտասարդությունը. իսկ դա լինելու բան չէ՛, յերթք:

Մեր յերկրի շատ յերիտասարդներ վոչ միշտ են լրջորեն մտածում այն մասին, թե ինչին ե կոչում մեզ պատմությունը: Թշնա-

մին յերկրի ներսում ջախջախված ե , կյանքն ավելի լավ և դարձել , կյանքն ավելի ուրախ և դարձել : Ահա և քայլում և մեր յերիտասարդությունը Փեյանքի մեջ յերգով» : Այդ վատ չե : Քայլեցեք , ընկերներ , «կյանքի մեջ յերգով» , սակայն մի մոռանաք անհրաժեշտության դեպքում վերցնել և հրացան , իսկ գլխավորը—սովորել անթերի տիրապետել նրան :

Առանց ոազմական գիտության , առանց հաղթելու ունակության մենք գլուխ չենք համի , յեթ մենք լրջորեն ցանկանում ենք պայքարել կոմունիզմի հարաբերականության մեջ :

Լենինի Ստալինի կուսակցությունը , գլխավորելով մեր յերկրի աշխատավորությանը , անդառնալիորեն հոգուտ սոցիալիզմի լուծել և ուզ ումի» հարցը ԽՍՀՄ-ում : Խորհրդային յերիտասարդության պատմական կոչումն և համառորեն , հաստատամտորեն նախքարել կոմունիզմի հետագա հաղթանակների համար : Մեղ սպասում ե՝ կոմինտերնի դեկավարության տակ , ընկեր Ստալինի հանճարեղ առաջնորդությամբ , ամբողջ աշխարհի , բոլոր ազգերի աշխատավոր յերիտասարդության հետ միասին «ով ումի» հարցը հաղթականորեն լուծել միջազգային մասշտաբով : (Մափահարություններ) : Պայքար կոմունիզմի համար համայն աշխարհում—ահա թե ինչ և մեղ սպասում , ընկերներ :

Մեր յերիտասարդությունն իր վողջ անձնական բախտն ամբողջությամբ կապում և պրոլետարական մեծ գործի բախտի հետ : Մեր ամբողջ կյանքի նոպատակը մենք դնում ենք ինտերնացիոնալ պատրաստի կատարումը , վորին մենք պետք ե , ինչպես առվորեցնուած և մեղ ընկեր Ստալինը , հավատարիմ մնանք մինչև վերջին ջանքը , մինչև վերջին չունչը , մինչև արյան վերջին կաթիլը :

Լենինյան կոմյերիտմիության շարքերում մենք պետք և պատրաստենք համարձակ , անվախ , անձնութաց և տոկուն մարդիկ , վորոնց համար ավելի պատվավոր խնդիր չի լինի , քան սոցիալիստական հայրենիքի պաշտպանությունը ամենավտանգավոր և առաջավոր դիրքերում : (Մափահարություններ) :

ՀամեկթեՄ պետք և գառնա Կարմիր բանակի հզոր ուժերիք , վորն այնպիսի կազերեր պատրաստի , վորոնք ընդունակ լինեն դառնալու աշխատարական դիկտատուրայի զինված ուժերի սիրտն ու հոգին :

Մարտիկներ պատրաստել—այդ նշանակում և յուրաքանչյուր յերիտասարդի մեջ դաստիարակել հեղափոխականների ազնիվ հաստկություններ , — ամիրվածություն կուսակցության գործին , կամ-

քի ուժ, արհամարհանք վախկոտության նկատմամբ, անձնական անվախություն և տոկումություն:

Ամենորյա, առողջա աշխատանքում մենք պետք են կովենք մեր տոկումությունը, մեր կամքի ուժը: Թող յարաքանչյուր կոմյերիտականի համար ուղեցույց որինակ հանդիսանա ընկեր Ստալինի մեծ և պայծառ պատկերը, վոր ժանդարմների շարքի միջով անցնում եր հարվածների տակ, դլուխը բարձր պահած և թշնամու առաջ թուլության ամենափոքր նշան անգամ ցույց չեր տալիս:

Դալիք մարտերում մեր խնդիրն եւ—հաղթանակել: Ժողովրդի դավակ կոմյերիտականը գերի չի ընկնում, վորովհետեւ գերությունը նրա համար անզատվություն ե, անջնջելի նախատինք: Մեր յերիտասարդության մեջ դասավաք չի կարող լինել: Ստոնությունը, հայրենիքին դավաճանելը — ամենաարդահատելի և ծանր հանցաղությունն ե, ամենաստոր չարագութությունը հեղափոխական ժողովրդի հանդեպ:

Մենք, խորհրդային յերիտասարդներս, չենք վախենում մահից՝ կոմի դաշտում և գլուխներս չենք կորցնի թշնամու կրակի տակ: Մեր ձեռքը չի դողա և աչքը չի դավաճանի գալիք գոտեմարտերում: Մենք կկովենք վողեռությամբ, աննկունորեն, անհակընթաց հերոսությամբ: Մեր դաստիարակության, վարքադի սրբազն նպատակն ու մեր ամբողջ կյանքի խնդիրը մենք համարում ենք արժանի լինել բոլչեիկյան կուսակցության ավագներին, վորոնց մասին մեծ Ստալինը մայիսեկյան չքերթի մասնակիցներին ընդունելիս ասել ե.

«Ի՞նչ վերաբերում ե մեզ, կենտկոմի անդամներիս, կառավարության անդամներիս, ապա մենք այլ կյանքով չենք ապրում, քան մեր մեծ գործին ծառայելու կյանքով, քան ժողովրդի ընդհանուր բարեկեցության համար, բոլոր աշխատավորներին, միլիոնավոր մասսաներին ուրախություն բերելու կյանքով» («Խղիեստիա», 1935 թվի մայիսի 4):

Գործնականորեն մենք ի՞նչ ենք արել մարտիկ դաստիարակելու համար, մեր սոցիալիտական հայրենիքի պաշտպանունակությունն ամրացնելու համար:

Կոմյերիտմիության կենտրոնական կոմիտեն շատ և զբաղվել կոմյերիտականների և յերիտասարդության ուսումնական պատրաստության հարցերով:

Ամենքին հայտնի յեւ, վոր մենք դարձել ենք ՊԱԶԸ—Ապիա-քիմի սիրտն ու հոգին, վոր հասարակական պաշտպանության աշ-խատանքում բոլոր նոր ձեռնարկումները կապված են Լենինյան կոմյերիտմիության անվան հետ։ (Մահակարություններ)։

Կոմյերիտմիության նախաճեռությամբ ստեղծվեց պարա-շյուտային մասսայական սպորտը։ Այդ գեղեցիկ, աղջիվ, գրավիչ սպորտի ժողովրդականությունը մեր յերկրի սահմաններից այն կողմն և անցել։ Սակայն աշխարհում և վո՛չ մի յերկիր իվիճակից չեն թեկուց և վորոշ չափով նմանվել մեզ այդ բանում։ Մենք գործի մեջ ներդրավել ենք կոնստրուկտորների, դրազվել ենք պա-րաշյուտային աշխարհակների գծադրումներով և շինարարու-թյամբ։ Այժմ յերկրում 400 աշխարհակ կա, և ամենատւրախալինը այն ե, վոր զնալով ավելի շատ պարաշյուտային աշխարհակներ են բարձրանում ազգային մարզերում և հանրապետություննե-րում։ Մեզ մոտ պարաշյուտային աշխարհակներից 1·120·000 թոփչք և կատարված։ (Մահակարություններ)։ Վերջին յերկու տարում ինքնաթիւններից 21·000 թոփչք և կատարված։ Միայն վերջին տարվա ընթացքում մենք պատրաստել ենք պարաշյու-տային միզորամի հազար կոմյերիտական-հրահանդիչներ։ Նրանցից յուրաքանչյուրն արդեն վոյ պակաս քան 5 թոփչք և կատարել։ Պարաշյուտային սպորտը—Լենինյան կոմյերիտմիության դա-լակն ե։ Պարաշյուտիստները—մեր հերոսական յերիտասարդու-թյան լավագույն մասն են։ Մենք հետազարում ևս բոլոր ուժե-րով կզարդացնենք այդ սպորտը, վորովհետեւ պարաշյուտիզմը մեծ գործնական-պաշտպանողական նշանակություն ունի. նա-դաստիարակում և ամուգ, տոկում, անվախ, յերկաթյա ջղեր և սուզատյա կամք ունեցող մարդիկ։

Սակայն մեր յերիտասարդությունը չի կարող և չպետք և սահմանափակվի ինքնաթիւններից կատարված թոփչքներով։ Պետք է տիրապետել ինքնաթիւ կառավարելու արվեստը։ ՊԱԶԸ—Ապիա-քիմի հետ միասին մենք ստեղծեցինք հասարակական մասսայա-կան պաշտպանության ավիացիա։ 1935 թվին, 122 աերոակումբ-ներում, առանց արտադրությունից կտրելու, պատրաստվել ե ա-վելի քան 3500 ողաչու։ Նրանք ստացել են զինվորական պահես-տի պիլոտի կոչում։ Նրանց մոտ 80 տոկոսը կոմյերիտականներ են։ Այդ պիլոտներից շատերը միության ակտիվ դեկավար աշխա-տողներ են։ Համեկենաց կենտրոմի աշխատողներից պիլոտներ դարձան Գորշենինը, Խարչենկոն, Մուսկինը, Պրախովիլը, Մանա-

յելը, տեղական կազմակերպությունների քարտուղարներից՝ Վայովյան, Լիստովսկին, Մարտյանովը, Շումակոն, Վեհկտորովը, Սարիգինը, Գեյրոն, Պենկինը, Բյումկինը: Մենք ընկեր Վորոշլովին խոսք ենք տալիս, վոր պիլոտ դարձած կոմյերիտական դեկավար աշխատողների այդ շրջանը անընդհատ կամճի, վոր բոլոր քարտուղարները պիլոտ կղառնան: (Բուռն ծափահարություններ): Կարիք կա՞ ապացուցելու, թե ինչպիսի խոշոր նշանակություն ունի առանց արտադրությունից կտրելու ողաջուներ պատրաստելը:

Նա, ով ուժեղ ե ողում, անպարտելի յէ ապագա պատերազմում, և մեզ հարկավոր ե, համենայն դեպս մոտակա մեկ-յերկու տարրում, հինգ անգամ ավելի շատ ողաջուններ պատրաստել առանց արտադրությունից կտրելու: Մենք մեր առաջ խնդիր ենք դնում—1936 թվին ընկեր Եյղեմանի (ՊԱԶԼ-Ավիաքիմ) հետ միասին պատրաստել վոչ պակաս քան 8000 ողաջուն: (Բուռն ծափահարություններ):

Վաս ե այն պարաշյուտիստը, վորը չի ձգտում ողաջուն դառնալ: Վաս ե այն կազմակերպությունը, վորը չի ձգտում առանց արտադրությունից կտրելու ողաջուններ պատրաստել:

Հարկավոր ե ավիացիոն կուլտուրան ավելի խորը շարժել յերիտասարդության մասսաներում, միլիոնավոր յերիտասարդների պատվաստել անվախություն, մեր դեպի տարածություններն ու բարձունքները: Յուրաքանչյուր գործարան, յուրաքանչյուր կուտնահսություն, յուրաքանչյուր Փարբիկա պետք ե մեկ-մեկութեան տարրում թենկուզ և մեկ լավ, կուլտուրական, անձնվեր յերիտասարդի ողաջուն պատրաստի առանց արտադրությունից կտրելու, վորը պատրաստ լինի մեր հզորագույն ողաջորմի շարքերը մըսնելու:

Մենք պետք ե դառնանք թևավոր մարդկանց սերունդ: Այն ամենն, ինչ ամենաառաջավորն ե համաշխարհային ավիացիոն տեխնիկայում, պետք ե մերը դառնա: Համաշխարհային ավիացիոն տեխնիկայի նվաճած բոլոր սահմաններն ու նորմանները մեղ համար որենք չեն: Մենք պետք ե դրանք գերազանցենք: Ավիացիայում բոլոր համաշխարհային սեկորդները մերը պետք ե լինեն: Աշխարհում ամենքից ավելի հեռու, ավելի բարձր և ավելի արագ թռչել—ահա խնդիրը, վորը պետք ե վոգեշնչի մեր ինժեներներին և կոնստրուկտորներին, բանվարներին և դիրեկտորներին, ողաջուններին և տեխնիկներին:

Ողի մեջ և յերկրի վրա, ինքնաթիւոից և տանկից, պլաներից և ռազմասայլից պետք է կարողանալ կրակել: Մեր մարտիկները պետք է կրակելու վարպետներ լինեն: Այդ հատկությունը անգրաժեշտ է յուրաքանչյուր կոմյերիտականի և Խորհրդային յերկրի առաջավոր յերիտասարդի: Յերկու տարվա ընթացքում մենք ՊԱՀԸ-ԱՄԻՒաքիմում, կոմյերիտմիության ռազմա-տեխնիկական քննություն կատարելով, պատրաստեցինք 990·000 առաջին աստիճանի վորոշիլովյան հրածիզներ, մոտ 1000 սնայպերներ, սնայպինդի 125 հրահանդիչներ, հրածային սպորտի ավելի քան 2000 վարպետներ: Նրանց մեծ մասը յերիտասարդներ են:

Սա այնքան ել քիչ չե, բայց այնուամենայնին անբավարար է: Հարկավոր և ալելի շատերի սովորեցնել, իսկ գլխավորը — վորակով ավելի բարձր:

Իսկ մեզ մոտ հաճախ ի՞նչ և ստացվում: Յերիտասարդը կրակի յերեք վարժություն կատարում է, կախում և կրծքանշանը և որանոսվ բավարարություն ե,— յես, դե, տիրապետել եմ հրածային կուլտուրային:

Գետք և կոմյերիտմիության մեջ և յերկրում բարձրացնել հրածային կուլտուրան, կրակելու վարպետներ պատրաստելու, սնայպերներ պատրաստելու խիկական շարժում ստեղծել:

Ռազմա-տեխնիկական քննությունը կոմյերիտմիությանը և ՊԱՀԸ-ԱՄԻՒաքիմին վոչ միայն հրածիզներ տվեց: Հակառակ այլ քիմիական պաշտպանության նորմաները հանձնեցին 1·000·000 հոգի, տապուբաֆիայի նորմաները — 1·000·000 հոգի, ձի խնամքելու և պահելու նորմաները — 1·500·000 հոգի, այլիումուսորի նորմաները — 2·000 հոգի, պլաներային չորս վարժությունների — 52·000 հոգի, պլաներային գործի դիտության քննությունը լրիվ ավել են 3·000 հոգի (մեզ մոտ 241 պլաներային դպրոց կա), ժամանակակիցման նորմաները — 1·600·000 հոգի, սահմանադրական պաշտպանության նորմաները — 1·000·000 հոգի: Մենք պատրաստել ենք 25·000 հրահանդիչ-քիմիկոսներ, 10·000 հեծելակ-սպորտումեններ, 35·000 սիրող-շոփերներ:

Կոմյերիտմիության ռազմա-տեխնիկական քննությունը, վորպես յերիտասարդության ռազմական գիտելիքների մակարդակի ընդհանուր բարձրացման միջոց, խաղաց իր մեծ դերը: Սակայն այժմ, ինչպես յերեք, սուր խնդիր և դրված — մարտական պատրաստության այս կամ այն ճյուղում վարպետներ, մասնադիմ-

ներ, զինվորական մասնադիտներ—ողաջուներ, սուլանավորդներ, տանկիստներ, քիմիկոսներ, կտորի աշխատողներ և այլն պատրաստել:

Բանվորա-գյուղացիական կարմիր բանակում մտցված են, ինչպես դիտեք, պետկաղմի անձերի զինվորական կոչումներ:

Զինվորական պրոֆեսիան գառնում ե ցմահ:

Պաշտպանության ժողկոմ՝ Խորհրդային Միության մայշալ ընկեր Վորոշիլովը 1935 թվի նոյեմբեր ամսին շրջանավարտ քաղաքույն յերիտասարդ լեյտենանտների ընդունելության առաջ.

«Ձեզ անպայման հայտնի յե այն արտահայտությունը, թե «յուրաքանչյուր զինվոր իր պայուսակում կրում ե մաքշալի դավաղանց»: Մենք դավաղաններ չունենք—դրանք մեղ պետք չեն: Սակայն Խորհրդային Միության մարշալներ մենք կունենանք: Յեզ ձեզանից յուրաքանչյուրը պոտենցիայի մեջ Խորհրդային Միության մարշալ ե, ձեր՝ ձեր վրա կատարած աշխատանքից, ուրիշներին սովորեցնելու ձեր աշխատանքից կախված կլինեն նաև ձեր հետադարձական մասնակությունները: Յեթե վոչ բոլորդ մարշալ դառնաք, ապա հույս ունեմ, վոր վորոշ ժամանակից հետո կդառնաք դիմիդիայի հրամանատարներ, կորսուսի հրամանատարներ, բանակի հրամանատարներ...» (Կ. Վորոշիլով, Մ. Ֆրունզե, «Յերիտասարդության մասին», եջ 103, Համել(բ)կ կենտրոնի կուռհրատ, 1936 թ.):

Մեր խնդիրն ե—յերիտասարդության մեջ ել ավելի մեծ ձգութում զարթեցնել ուազմական զիստելիքներ ստանալու նկատմամբ, նրան նախապատրաստել ուազմական դպրոցները մտնելու, նրա առաջ բաց անել զինվորական պրոֆեսիայի հեռանկարը:

Մանրամասն չեմ խոսի ծովային և ողային տորմիդի չեֆության մասին: Այդ ճակատամասին կոմյերիտմիության ցուցարերած ուշադրությունը պետք ե մշտառու լինի և յերբեք չթուլացվի:

Մենք պարծենում ենք մեր յենթաւեֆերով, մենք պարծենում ենք նրանով, վոր մեր կուսակցությունը, մեր կառավարությունը մոտերս Խորհրդային Միության շքանշաններով պարզեատրեցին Լենինյան կոմյերիտմիության յենթաշեֆ ծովային և ողային տորմիդների արժանավոր ներկայացուցիչներին: (Բուռն ծափակարություններ):

Գլխավորն ե — հոգ տանել տորմիղներն ինչպես շարքային, այնպես ել հրամանատարական կազմերով, կոմյերիտմիտթյան պատրաստած, անձնվեր, խիզախ զավակներով համալրելու մասին (բռւն ծափակարություններ) և ամեն կերպ ողնել բանակային կազմակերպություններին յերկաթյա կարգապահության, բարձր կուլտուրականության և ռազմական տեխնիկան գերազանց տիրապետելու համար մզվող պայքարում:

Յերկրի զինված ուժերի մասին մեր հոգացողության մեջ առանձնահատուկ տեղ պետք է գրավեն սահմանապահները: Նըրանց վրա չեֆություն վերցրել են միայն կոմյերիտմիության սահմանամերձ կազմակերպությունները: Այդ, իհարկե, չի նշանակում, վոր նրանց չի հիշում ամբողջ Միությունը: Սահմանապահներին նվերներ և նամակներ ուղարկելու շարժումը, վորը ծավալվեց համազումարի նախորյակին, պետք է պաշտպանել, հոգ տանելով այն մասին, վոր սահմանապահներին ցույց տրվող ուշադրությունը լինի մշտական:

Մեր հաջողությունները պաշտպանության աշխատանքում փոքր չեն: Խորհրդային յերկրի յերիտասարդությունը գալիք մարտերին պատրաստ ե: Սակայն նրա պատրաստությունը հետագայում չբարձրացնելը, ձեռք բերվածի վրա հանդստանալը, հաջողություններով տարվելը և դրանք գերազնահատելը — սխալ ե:

IV. ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆ ՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԼԿՅԵՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ Ե

Ի՞նչը կարող ե արգելք հանդիսանալ մեր յերիտասարդության հետազա զարգացմանը:

Գիտելիքների, կուլտուրականության և կրթության պակասը: Գիտությունն ու կուլտուրան կանգնած չեն մնում նույն կետում, այլ արագորեն առաջ են շարժվում. այն, ինչը յերեկ առաջավոր եր թվում, այսոր կարող ե դառնալ և դառնում ե հետամնաց: Գիտությունն ու տեխնիկան առաջ շարժելու պատրաստակամության ու ցանկության պակաս չենք զգում, մեր յերիտասարդությունը դրանք ունի, սակայն միայն պատրաստակամությունը, միմիայն ցանկությունները դրա համար դեռ քիչ են:

Ընկեր Ստալինը կոմյերիտմիության VIII համագումարում մեղ ասել ե.

«Կառուցելու և շինարարությունը ղեկավարելու սիրահարներ մեղանում ինչքան ուղես կան ինչպես գյուղատնտեսության բնագավառում, նույնպես և արդյունաբերության բնագավառում: Իսկ կառուցել և ղեկավարել կարողացող մարդիկ մեղանում խայտառակ չափով քիչ ունենք» («Լենինն ու Ստալինը յերիտասարդության մասին» ժողովածու, եջ 202, Համկ(բ)կ կենտկոմի կումհրատ, 1935թ.):

Կկարողանանք մենք այժմ, նոր պայմաններում, նոր բարձրության հասցնել մեր ամբողջ յերիտասարդության կուլտուրական մակարդակը: Կկարողանանք մենք մոտակա ժամանակում գիտություն, տեխնիկա և կուլտուրա ձեռք բերելու ու այն տերապետելու բնագավառում հսկայական քայլ կատարել, վորն իր մասշտարով անհամեմատելի լինի մեր մինչև այժմ արածի հետ:

Դա ունայն հարց չե, այլ վճռողական։ Իս այն հարցն ե, թե Խորհրդային յերկրի միջինավոր յերիտասարդները կոմունիստական շինարարության «սիրահարներ» կլինին միայն, թե այնպիսի մարդիկ, վորոնք կկարողանան կառուցել այն և ավարտել ավագ սերունդների գործը։

Կոմիյերիտմիության կենտրոնական խնդիրն ե այժմ՝ դաստիարակել կադրեր, վորոնք վոչ միայն նվիրված լինեն խորիրդային իշխանությանը, այլև լինեն գրագետ, կրթված, տեխնիկապես պարագանակած, իրենց գործի մասնագետներ, վորոնք կարողանան հեղափոխական բափը գուգակցել բաշկրիկյան գործարարության հետ։

Ընկեր Ստալինն ասել ե.

«Զի վարելի սոցիալիստական հասարակության կառուցումը զեկավարել, չտիրապետելով գիտությունները» (Ընկեր Ստալինի նամակից՝ պրոլետարական ուսանողության համամիտութենական առաջին կոնֆերենցիային, 1925 թվի ապրիլ, տես «Հենինն ու Ստալինը յերիտասարդության մասին» ժողովածուն, № 176, Համ Կ(բ)Կ կենտրոնի կուսհրատի հրատարակություն)։

Իսկ մեր կազմակերպությունները, յերիտասարդության ուսումը կազմակերպելու փոխարեն, միշտ ուղղում են զեկավարել և կառավարել։ Մեր աշխատանքին արմատական թերությունը դայե։ Մենք չպետք ե գելավարենք ու կառավարենք, —դրա համար կան ուրիշ կազմակերպություններ—կուսակցություն, խորհուրդներ։

Մեզ հարկավոր ե, ՀամԿ(բ)Կ դեկավարությամբ, առանց սնապարծության, առանց գոռոգության համառորեն ուսումնասիրել գիտությունները, տիրապետել գիտելիքները, կրթություն և կուլտուրականություն ձեռք բերել, փորձ կուտակել և կոմունիստորեն դաստիարակել մեզ ու մեր ամբողջ յերիտասարդությամբ։

Կոմիյերիտմիության աշխատանքում այդ ե այժմ ամենակարեւմորը։ Այլ ավելի կարևոր խնդիրներ մենք չունենք։

Ենդեւսը 1893 թվին վողջունելով սոցիալիստ ուսանողների ժընկի միջազգային կոնգրեսը, գորում եր։

«Անցյալի բուրժուական հեղափոխությունները համալսարաններից միայն փաստաբաններ եյին պահանջում, վորակե-

լավագույն մասերիալ, վորից դուրս եյին զալիս նրանց քաղաքական գործիչները՝ բանվոր դասակարգի աղատագործությունը կարիք ունի, բացի դրանից, բժիշկների, ինժեներների, քիմիկոսների, աղբունումների և այլ մասնագետների, վորովհետև բանը վերաբերում ե վոչ միայն քաղաքական մեքենայի կառավարումն իրենց ձեռքը վերցնելուն, այլև ամբողջ հասարակական արտադրությունը, և այստեղ հնչուն Փրազ-ների փոխարեն լուրջ գիտելիքների կարիք ե զգացվում» (Ֆ. Ենդելսի նամակներից, «Պրավդա» 1933 թ. հոկտեմբերի 29):

1920 թվին, կոմյերիտմիության III համագումարում՝ Լենինը Խորհրդային յերկրի յերիտասարդության առաջ դրեց ուսման, անցյալի կուլտուրական ժառանգությունը յուրացնելու խնդիրը:

«Զեր առաջ դրված ե շինարարության խնդիրը, —առում եր նա, —և դուք կարող եք այն լուծել միայն տիրապետելով ժամանակակից ամբողջ գիտությանը» (Լենին, Յերկ. ժող. հ. XXV, եջ 390, 3-րդ հրատարակություն):

Ընկեր Ստալինը ՀամլեթեՄ VIII համագումարում 1928 թվին, առաջին հնդամյակի շեմքին, այդ հարցերն առաջադրեց վորակես կոմյերիտմիության աշխատանքի գործնական ծրագիր.

«Տիրապետել գիտությանը, բոլշևիկ-մասնագետների նորանոր կադրեր կոփել գիտության բոլոր նյութերում, սովորել, սովորել, ավորել ամենահամառ կերպով, —այս ե այժմ խնդիրը։ Հեղափոխական յերիտասարդության արշավանքը գիտության վրա—ահա թե ինչ է մեզ այժմ հարցավոր, ընկերներ։» («Լենինը և Ստալինը յերիտմասին», եջ 203, Համ. կ(բ)կ կենտկոմի կուռհրատ, 1936 թ.):

Կոմյերիտական ղեկավարության մեջ, սկսած սկզբնական կազմակերպությունից և վերջացրած կենտկոմով, կան վորոշիմաստուններ, վորոնք կեղծ խորիմաստությամբ տանջում են իրենց այսպիսի հարցերով, թե վո՞րն ե կոմյերիտմիության խընդեմը, ինչի՞ վրա աշխատել։

Ասածից պարզ ե դառնում, —մեր խնդիրն այն ե, ինչ առել ե ընկեր Լենինը—սովորել, սովորել, սովորել։ Մեր խնդիրն այն ե, ինչը բազմիցս մեզ ասում ե ընկեր Ստալինը—սովորել, սովորել, սովորել ամենահամառ կերպով։ արշավել գիտության վրա։

Այդ խնդիրը մեզ համար վճռողական ե։

«Յերիտասարդության միությունը, —ինչպես ընկեր Ստալինն ասում եր «Լենինիզմի հարցերի շուրջը» աշխատության մեջ, —առանձնահատուկ նշանակություն ստացավ պրոլետարիատի դիկտատուրայի ամբացումից հետո, պրոլետարիատի կուլտուրական և դաստիարակչական լայն աշխատանքի շրջանում» (Ստալին, «Լենինիզմի հարցերը», 10-րդ հրատ., էջ 115):

Մենք պետք են դադարենք մեր խնդիրների մասին «փիլիտովիայելուց», վերջ տանք արդֆինալանի, տնտհաշվարկի, ինքնարժեքի իջեցման, ցանքի և պետական ուրիշ կարևորագույն խնդիրների մասին շաղակրատելուն, իրը թե մենք ենք դրանք լուծում:

Արջորեն զրադիել յերիտասարդության կրթությամբ, նրա դաստիարակությամբ, պայքարել յուրաքանչյուր պատահու և աղջկա գրադիտության, կուլտուրականության և ինտելիգենտության համար—ահա թե ինչ ե պահանջվում մեզանից, ընկերներ:

Կուլտուրականությունը և կրթվածությունը մեր որերում դառնում են մեր յերկրի յերիտասարդների ամենազլիւալիոր հատկությունները:

Լենինը կոմյերիտմիության III համադումարում ասում եր.

«Ահա խնդիրը, վորը կանգնած ե յուրաքանչյուր գիտակից կոմունիստի առաջ, յուրաքանչյուր յերիտասարդի առաջ, վորն իրեն կոմունիստ և համարում և իրեն պարզ հաշվով ե տալիս, վոր ինքը, մտնելով յերիտասարդության կոմունիտական միությունը, հանձն և առել կուսակցությանն ոգնել կոմունիզմ կառուցելու և ամբողջ յերիտասարդ սերնդին ողնել կոմունիստական հասարակություն ստեղծելու: Նա պետք ե հասկանա, վոր միայն ժամանակակից կրթության հիման վրա նա կարող ե այդ ստեղծել և յեթե նա չտիրապետի այդ կրթությանը, կոմունիզմը միայն ցանկություն կընա» (Լենին, Յերկեր. 4. XXV, էջ 389, 3-րդ հրատ.):

Հարցի ամբողջ եյությունն ու սրությունը Լենինի հենց այդ ցուցումի և նախազգուշացման մեջ ե: Յեթե յերիտասարդությունը չտիրապետի ժամանակակից կրթությանը, կոմունիզմը միայն ցանկություն կընա:

ՊԱՅՔԱՐ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՑԵՎԸ ՈՒՍՄԱՆ ՀԱՄԱՐ

Մեր առաջ բացվում ե աշխատանքի լոյն ասպարեղ, սկսած
տարրական անդրագիտության վերացումից, դպրոցի աշխատան-
քում Լուսնողկոմատի որդաններին անհրաժեշտ ողնությունը
ցույց տալուց, վերջացրած ոտար լիզուներ սովորելով և առանց
արտադրությունից կտրվելու տեխնիկական տևույցում կազմակեր-
պելով։

Այն հանդամանքը, վոր համագումարում հասուլ զնիւցում
պիտի արվի կոմյերիտմիության աշխատանքի մասին դպրոցում,
ինձ թույլ և տալիս այդ հարցում սահմանափակվել հետեւյալ դի-
տողություններով։

Երիտասարդության գրադիտության և կուլտուրականության
համար մզվող պայքարն սկսվում է տարրական դպրոցից։ Մեր
դպրոցներում սովորում են 26 միլիոն յերեխաներ և զետահասակ-
ներ։ Պարզ չե՞ն միթե, վոր նրանց հետ աշխատելը կոմյերիտ-
միության դործունեցության կարևորագույն ճակատամասն ե։
Իսկ մեր շատ կազմակերպություններ արհամարհանքով են վե-
րաբերվում դպրոցում աշխատելուն, պիտոներական կազմակերպու-
թյան աշխատանքին։ Պետք ե մեկ անգամ ընդմիշտ վերջ զնել
այդ աղայական արհամարհանքին։ Յեկ վորքան շուտ, այնքան
լավ։ Մինչև վոր մենք, ինչպես հաբեն ե, մեր ձեռքը չվերցնենք
աշխատանքը դորոշում և մեր պիտոներական կազմակերպություն-
ների աշխատանքը, հնարաւոր չե լրջորեն պայքարել մեր յերի-
տասարդության գիտելիքների և կուլտուրականության համար։

Երիտասարդության կրթության համար մզվող պայքարը,
պետք է սկսել այբուբենից, այսինքն անդրագիտության և կիրա-
դրագիտության վերացումից։ Ի՞նչպես կարելի յե կուլտուրական
մակարդակը բարձրացնել, չիմանալով ուղղագրության հիմունք-
ները։ Իսկ մեզ մոտ չե՞ն վոր միայն կիրագրադեմոնները չեն, վոր
վաստ են գրում, և ինչ մեղքը թաքցնենք, յերեմն
այդ պակասությունն ունեն և՛ ուսանողները, և՛ յերիտասարդ մատ-
նադեսները, պատահում ե նույնիսկ, վոր այդ պակասությունն
ունեն յերիտասարդ գիտնականի կոչման ձգտող վորոշ մարդիկ։
Ուրիշներն ել նույնիսկ պարծենում են իրենց կիրագրագիտու-
թյամբ, գտնելով, վոր պրոլետարի համար պարտադիր չե քերա-
կանություն գիտենալ։

Այն մարդը, վորը չի կարող գրագետ դրել ու կարդալ, չի կարող հաշվել, անարժան ե առաջավոր յերիտասարդի կոչմանը:

«Յուրաքանչյուր կոմյերիտականին—միջնակարգ կրթություն» խնդիրը մենք դրել ենք զեռևս Համկեցի Համամիութենական VII կոնֆերենցիայում։ Այն լուծելով մենք արդեն լուրջ հաջողությունների յենք հասել։ Միջնակարգ կրթության դպրոցներում առանց արտադրությունից կտրվելու սովորում են 350.000 կոմյերիտականներ, յերիտասարդ բանվորներ։ Մենք միջնակարգ կրթության դպրոցը վերակառուցում ենք միջնակարգ—տեխնիկական կրթության դպրոցի, նրա ծրագրի մեջ մի ամբողջ շարք մասնագիտական առարկաներ մտցնելով, վորոնց ուսումնասիրումը մեր յերիտասարդությանը կողնի իր մակարդակը բարձրացնելների խնդեններ—տեխնիկական աշխատողների մակարդակին։ Այդ դպրոցներում սովորողների թիվը հասցվում է մինչև 600.000 հոգու։

Մենք պետք ե մեծ ուշադրություն դարձնենք ուսանող յերիտասարդության մեջ կատարվող աշխատանքին, ողնելով նրան ուսման մեջ և նրանից ամենից առաջ պահանջելով հաջող յուրացնել գիտությունները։

Մեզ անհրաժեշտ ե վճռաբար բարելավել և բարձրացնել տեխնիկամների նշանակությունը, այլ խոսքով՝ այն դպրոցների, վորոնք կոչված են միջնակարգ—տեխնիկական կրթություն ունեցող մարդիկ պատրաստել։

Թող ների ինձ ընկեր Բուրնովը, յեթե յետ ասեմ, վոր Լուսածողոկոմատի վորոշ աշխատողների, ճիշտ և, նախկին կազմի «Ճախույնի հիվանդությամբ» տառապող աշխատողների, քմահաճանույքով մեղ մոտ խիստ շատ կեղծ տեխնիկումներ են յերևան յեկել, — կան և՛ պարի, և՛ յերաժշտական, և՛ մանկավարժական։ Անոյի ճեղի յե, վոր մեզ պետք են նրանց պատրաստած կադրերը, բայց թույլ ավելք հարցնելու, թե ինչու այդ դպրոցները կոչվում են տեխնիկումներ։ Տեխնիկումը պետք ե տեխնիկում ել լինի, այսինքն միջնակարգ—տեխնիկական մակարդակի գիտելիքներ ունեցող աշխատողներ պատրաստող։

Վային—Ճիշտ ե։

Կոսարեվ — ինչ վերաբերում ե այն ուսումնական հաստատություններին, վորոնք իրենց նպատակը չեն դնում տեխնիկական կրթություն տալը, ապա դրանք պետք ե վերածել համապատաս-

խան մասնագիտությունների դպրոցների—պարի, յերաժշտական, նկարչական և այլն:

Այդ դպրոցները վորեւ կերպ արդյունաբերական դպրոցներին նմանեցնելու հետևից ընկնելով՝ դրանք կոչել են տեխնիկումներ: Իսկ նրանց մեջ ի՞նչ կա տեխնիկական: Բացարձակապես վոշինչ:

Վոլին—Բացարձակապես ճիշտ ե:

Կոսարել—Առանձին ուշադրություն պետք են նվիրել կոլտնտեսային յերիտասարդության հանրակրթական մակարդակը բարձրացնելուն: Այստեղ մեր առաջ նույնպես աշխատանքի լայն ասպարեղ կա—սկսած անդրագիտության վերացման դպրոցներից և վերջացրած միջնակարգ կրթության դպրոցներով և բուհերի համար վերապատրաստման դրանիցներով: Կոլտնտեսային յերիտասարդության կուլտուրականության համար մզկող պայքարում հսկայական անելիք ունեն գյուղական դրատարանները, վորոնք առայժմ կոմյերիտական կազմակերպությունների ուշադրությունից դուրս են մնացել և շատ հաճախ վողբալի վիճակում են դանվում:

Զի կարելի կուլտուրական մարդ լինել, չուսումնասիրելով մարդկության պատմության, մասնավորապես ԽՍՀՄ ժողովուրդների պատմության թևելուց և հիմնական մոմենտները:

Համեկ(բ)կ-ն, նրա կենտրոնական կոմիտեն և անձամբ ընկեր Ստալինը բացառիկ ուշադրություն են նվիրում պատմական դիտությունների ուսումնասիրության դրվագքին:

Զի կարելի սեփական հայրենիքի հայրենասերը լինել չիմանալով նրա ժողովուրդների զարգացման պատմական ուղիները: Պատմության ուսումնասիրման դործը պետք են լինի մեր յերկրի ամբողջ յերիտասարդության դործը:

Այն յերիտասարդը, վորը ցանկանում եւ տիրապետել մարդկատական—լինինյան աշխարհայացքին, պետք եւ ուսումնասիրի պատմություն, աշխարհագրություն, բնագիտություն, պետք եւ դիտենա ճշգրիտ գիտությունները: Մարքսիզմի հիմնադիրների ամբողջ կյանքը, մեր կուսակցության հիմնադիրներ լինինի և Ստալինի ամբողջ կյանքը մեզ, յերիտասարդությանո, այդ գիտություններն ուսումնասիրելու բացառիկ համառության ամենապայծառ որինակ ետալի:

Իր ճակատագրի տերը դառնալ—նշանակում ե, ամենից առաջ, սպառազինվել մարդկային գիտությունների հիմնական

ճյուղերի ըմբռնմամբ, չլախենալ այն դժվարություններից և խո-
չընդունենք, վորոնք ստասում են յուրաքանչյուրին, ով ցանկա-
նում և կուլտուրական և կրթված դառնալ:

Մեր խնդիրն եւ յերիտասարդության մեջ ե'լ ավելի ծարավ
զարթեցնել գեղի գիտությունները և յերիտասարդությանը ճիշտ
կազմակերպել գիտություններն ուսումնասիրելու համար:

Մենք պետք եւ մերկացնենք նրանց, ովքեր պարծենում են
իրենց անկուտուրականությամբ կամ թե իրենց կուտուրական են
համարում նրա համար, վոր ամեն բանից մի քիչ գիտեն: Մեղ
մոտ մարդիկ են լույս աշխարհ ընկել, վորոնք զանազան քաղքե-
նիական ատրիբուտներն ունենոր և կուլտուրական կյանք են համա-
րում: Նրանց միտքն ու ուշքը արտասահմանյան ձևի կոստյումից,
պատեփոնից և «Ակադեմիայի» հրատարակած գրքերից դենը չեն
անցնում: Թութակի նման նրանք փայլում են իրենց գույնզղույն
վետուրեներով, վորոնց տակ թաքնված եւ տղետի վորորմելի յերւ-
թյունը: Մենք դեմ ենք նրանց, ովքեր գիտությունների և կուլ-
տուրայի համար մզվող պայքարը սահմանափակում են վկուլ-
տուրայի մինիմումով: Մեղ մոտ շատ մարդիկ են լույս ընկել,
վորոնք կարծում են, վոր յեթե իրենք «Ճերկած խո-
պանը» կամ թե «Ծնչպես եր կոփուամ պողպատը», ապա նրանք
իրավունք ունեն կուլտուրականության պատճեն ստանալու:

Կուլտուրայի համար, մեր յերիտասարդության կրթվածու-
թյան և ինտելիգենտության համար մզվող պայքարում մեր յերի-
տասարդությունը պետք է ավելի հաճախակի դիմի կոմյերիու-
միության կենտրոնին հասցեյագրված՝ ակադեմիկոս Պավլովի
մահից առաջ գրած նամակին: Այդ ուսում մեծ դիտնականը յերի-
տասարդությանը դրում եր.

«Զեր աշխատանքի հենց սկզբից ձեղ վարժեցրեք խիստ
հետևողականության՝ գիտելիքներ կուտակելու դործում:

Ուսումնասիրեցեք նախ գիտության այրութեանը, ապա
փորձեցեք դրավել նրա բարձունքները: Յերբեք ձեռնամուխ
մի լինեք հաջորդին, դեռ նախորդը չյուրացրած: Յերբեք մի
փորձեք ձեր գիտելիքների պահասը քողարկել թեկուզ և ամեն-
նահամարձակ յենթարություններով և հիպոթեզներով: Այդ
սապանի պղպղակն ինչքան ել իր փայլիլոցով չոյք աեր հա-
յացքը—նա անխուսափելիութեն կողայթի և կոնֆուզից բացի
վոչինչ չի մնա ձեղ մոտ: Զեղ վարժեցրեք զսպվածության և

Համբերության : Սովորեցեք ու աշխատանք կատարել գիտության մեջ : Ուսումնասիրեցեք, զուգադրեցեք, կուտակեցեք փաստերը :

... Յերկրորդը — դա համեստությունն է : Յերրեք մի մտածեք, վոր դուք արդեն ամեն բան դիտեք : Յել ինչքան ել բարձր զնակատեն ձեղ, միշտ արիություն ունեցեք ասելու ինքնիրեն—յես տգես ևմ» : («Տեխնիկան—յերիտասարդությանը» ժուռնալը՝ նվիրված ՀամԱԿՑԵՄ Խ համագումարին, եղ 79, 1936թ.) :

ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՄԸ
ՅԵՎ ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ժառանգմել կուլտուրայի լավագույնը—այդ չի նշանակում «մշակել» 2—3 դրքույի կամ թե դրքերի սեփական դրադարան ունենալ, վորը բնակարանը զարդարելու ժառայի :

Ժառանգակեց յերիտասարդը պետք է վոչ միայն լավ աշխատի արտադրության մեջ, կոլտնտեսությունում, հիմնարկում, այլև ուսումնասիրի տեխնիկան, դիտությունը, կլասիկներ կարդա :

Մի քանի տարի առաջ Շեքսպիրը, Բալլակը, Գյոթեն, Պուշկինը, Գորկին, Ռոմեն Ռուզանը և համաշխարհային գրականության շատ ուրիշ կլասիկներ ծանոթ ելին միայն մեր ակտիվի նեղ շրջանակին : Կոմյերիտական ոլունուների ժողովրդականությունը հաճախ այլելի մեծ եր, քան, ասենք՝ նրանց հանճարեղ նախորդների և ժամանակակիցների անկատականելի ժողովրդամկանությունը : Ճիշտ ե, այդ դրությանը նպաստում եք պրոլետկուլյան լայն տարածված վնասակար թեորիան, թե պրոլետարական դրականության ակունքներն առաջին բանվոր գրողների ստեղծագործություններն են և վոչ թե համաշխարհային կլասիկ գրականության բարձրությունները :

Այժմ դրությունն արմատագես փոխվել է : Աճել է յերիտասարդության դեղարվեստական ճաշակը, աճել և այնքան, վոր շատ յերկեր, վորոնք դեռ մոտերս նրան բավարարում ելին, անուն ունելին նրա շրջանում, այժմ կորցրել են իրենց նախկին դինը, նրանք չդիմացան ժամանակի փորձին :

Դժբախտաբար, այդ չեն ուզում համականալ մեր վորոշ ըն-

կեր-դրողները, վորոնց յերկերում, ինչպես զրել ե ռուս մեծ
քննադատ Բելինսկին,

«...չկա մտքի խորություն, զգացմունքի կրամի, չկա լի-
րիզմ, իսկ յեթե այդ բոլորից մի քիչ կա, ապա լարված և
բռնի չափաղանցված ե, ինչն ապացուցվում ե նույնիսկ հատ-
կապես խիստ գունեղ Փրազեռոգիայով, վորը յերբեք խոր,
կրամորական և բուռն զգացմունքի հետևանք. չի լինում»:

Որերս հրապարակվեցին Ա. Մ. Գորկու հոդվածը «Ֆորմա-
լիզմի մասին» և նրա վողջույնը մեր համադումարին: Բաժանե-
լով Ա. Մ. Գորկու տեսակետը, վոր շարադրված և նրա հոդվա-
ծում, յես կարծում եմ, վոր համազումարի կարծիքն արտահայ-
տած կլինեմ, յեթե ասեմ, վոր Լենինյան եցոմյերխումիությունը
ակտիվորեն կողմի մեր խորհրդային գրականությանը՝ նրա բարդ
և պատասխանատու խնդիրները լուծելու գործում»:

Մեր գրողների շատ յերկերին վերաբերում են Բելինսկու
նշանակալից խոսքերը, թե նրանց մեջ (յերկերում)

«...չկա խոկական կյանք, իրականությունն այնպես չե,
ինչպես նաև ե, վորովհետև ամեն բան մտածված ե, ամեն
բան նկատի յե առնված հավանականության հաշվարկումնե-
րով, ինչպես այդ լինում և մեքենաներ պատրաստելու կամ
հնարելիս, վորովհետև նրանց մեջ յերեսում են այն թելերը,
վորոնցով շուշալված և նրանց գործողությունը, յերեսում են
բլոկներն ու պարանները, վորոնցով շարժման մեջ և գրվում
այդ գործողության ընթացքը. մի խոսքով, դա թատրոնի
ներս ե, վորի մեջ արհեստական լուսավորությունը պայքա-
րում ե ցերեկված լույսի հետ և պարտվում ե նրանից» («Ռու-
սական վիպակների և պ. Գորովի վիպակների մասին» հոդ-
վածից):

Ժամանակակից վորոշ գրողներ և պոետներ վոչ մի կերպ
չեն ուղղում հասկանալ այն պարզ ճշմարտությունը, վոր մենք
չենք կարող համաձայնվել այն բանի հետ, վոր մեր մեծ խոր-
հըրդային գրականությունը պակաս նշանակություն ունենաւ, քան
այն, վորն ստեղծված ե մարդկության ամբողջ նախորդ պատ-
մությամբ: Մեր ներկան այնքան դեղեցիկ ե, մեր ապաղան այն-
քան փառահեղ, վոր մենք, անկասկած, բոլոր հիմքերն ունենք
այնպիսի գրականություն ստեղծելու, վորպիսին մարդկությունը

գեռման յերբեք չի ունեցել: (Զայներ—Ճիշտ ե: Սափահարություններ):

Վորոշ գրողներ և պոետներ կարծում են, վոր մեր խորհրդագային գրականության զարդացումը պետք է ընթանա ինչ-որ միջայուղյա ճանապարհներով, և վոչ թե համաշխարհային գրականության գաղաթնային լայն ճանապարհով: Նրանք կարծում են, վոր մենք ստեղծում ենք գրականություն մեկ որվա համար, և վոչ թե մեր զավակների և թոռների համար:

Մի շարք ընկեր-գրողների և պոետների՝ ժամանակի պահանջներից հետ մնալը (թող ինձ ներեն, յեթե դա հաճելի չենրանց լսել, սակայն դա կիրակ անկեղծ) բացատրվում է նրանով, վոր նրանք այլնելի շատ ճշտում են վագել շատ փողի հետևեց և քիչ են աշխատում իրենց յերկերի վորակի վրա: (Զայներ—Ճիշտ ե: Սափահարություններ): Նրանք տրամադիր են հաճախ վերաբարակել իրենց յերկերը, քան թե նորերն ստեղծել: Ամենքն հայտնի յե, վոր արտասահմանում համաշխարհային անուն ունեցող խոչորակույն գրողները նյութական նվազ լավ սրաբաններում են գտնվում, քան այսպես կոչված սկսնակ գրողները մեղանում: (Զայներ—Ճիշտ ե):

Մի շարք գրողների և պոետների հետ մնալու պատճառը նրանց ճարպակալումն ե (ծիծառ, ծափահարություններ), պայքարից կտրվելը: (Յերկարածու ծափահարություններ):

Այն բարձր պահանջները, վոր մեր յերիտասարդությունը ներկայացնում և խորհրդային գրողներին, միամնամայն որինական են: Այդ սղահանջները մենք պետք են մ' լ այլնելի բարձրացնենք այն մարդկանց աշխատանքի նկատմամբ, վորոնց մեր յերկը պարզեատրել են այնողիսի պատվալոր կոչումով, վորպիսին գմարդկային հոգիների ճարտարապետներն ե:

ՏԻՐԱՊԵՏԵԼ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՑԻՒ

Բանվորների մակարդակը մինչև ինժեներ-տեխնիկական աշխատանքի մակարդակի բարձրացնելու խնդիրը, վոր ընկեր Ստալինն առաջ քաշեց ստախանովականների խորհրդակցությանն արտասահմած ճառում, ծրագրային ե մեր յերիտասարդության համար:

Մենք պետք ե ճարտարելապես տերապետենք ինդուստրիալ-տեխնիկական վուլուտուրալին:

Մեզ մեծ աշխատանք եւ սպասում իբազործելու համար Համար կ (թ)կ կենտկոմի դեկտեմբերյան պլենումի վորոշումները տեխնիկական միջնումումի ցանցն ընդարձակելու մասին, ստախանովյան դասընթացները ծավալելու և սոցիալիստական աշխատանքի վարպետների դասընթացների կազմակերպելու մասին։ Մենք պետք եւ տնտեսական մարմիններին ողնունք ուսման՝ ստախանովյան մեթոդներին համապատասխան նոր ծրագրեր մշակելու դորձում, լավագույն մասնագետներից դաստումներ պատրաստելու դորձում, սովորողների կոնախնդեսությունների վերաբերյալ պատրաստելու դորձում, սովորողների կոնախնդեսություններին ջոկելիս։

Առանձնահատուկ ուշադրություն պետք եւ դարձիր ֆարերծարանային աշակերտության դաշտումներին։ Այժմ մենք դնում ենք այդ դաշտումները տեխնիկական դաշտումների վերածելու հարցը, այսպես, վոր նրանք իրենց գործը լավ իմացող բանկորներ պատրաստեն, վորոնք աշխատանքի ստախանովյան մեթոդների իսկական գիտակներ լինեն։

Վերջապես, մենք պետք եւ ամենաբարձրագայան տեխնիկական խմբակներ կազմակերպենք, և առաջին հերթին մոտորների, ներքին այրման շարժիչների խմբակներ, քիմիայի, ֆիզիկայի ուսումնակրաման խմբակներ, ուսումնատեխնիկայի և այլն խմբակներ։ Անհրաժեշտ եւ բազմապատիկ անդամ ավելացնել հանրաժառչությունը, տեխնիկական գրականության, դաստարակումը, գիտական առաջնահատությունը, վարդմակերպել բարձրագույն դաստախոսություններ գիտության և աերոնիկայի հարցերի վերաբերյալ, կոնսուլտացիաներ՝ ինքնակրթությամբ դրազվող յերիտասարդության համար։

Ֆիզիկական աշխատանքի աշխատողներին ինժեներաբանական կական աշխատանքների մակարդակին բարձրացնելու խնդրի լուծման կապակցությամբ այլելի շատ հարցեր են ծառանում մեր առաջդյուրում։ Աղբուսեխնիկական ուսուցման յողած սիստեմը (այսպես կոչված աղբուսինիմումը) վաղուց հասցել ենաւ մեծ չափով մշակվել եր այն ժամանակները, յերբ կոլտնատեսությունները դեռ նոր եյին կազմակերպվում, յերբ նրանք դեռ այնպես հաղեցված չեյին առաջապես տեխնիկայով, ինչպես այժմ, յերբ դեռ գոյւթյուն չունեյին խճիթ-լաբորատորիաներ, յերբ յերկիրը դեռ չեր իմանում Մարիա Դեմչնիկոյի, Պաշա Անգելինայի և գյուղատընտեխնիկական արտադրության մյուս հեղափոխականների անունները։

Մենք պետք եւ ժողկումատներին ողնունք աղբողողութեխնիկական

ուսուցման նոր ծրագրեր մշակելու, ծրագրեր, վորոնք հիմնվեն դյուլատնեսության առաջավոր ստախանովականների լավագույն նվաճումների վրա, խմբակների ղեկավարների կաղըեր պատրաստել, ծավալել ուսուցման ցանցը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԹԵՂԻԱՆ

Առանց հեղափոխական թեղիան ուսումնասիրելու անհնարին և դասախարակել յերիտասարդությունը:

Կուսակցության կենտրոնական կոմիտեն և անձամբ՝ ընկեր Ստալինը մեր առաջ բազմից դրել են կոմյերիտմիության մեջ քաղաքական կրթության դրվածքը բարելավելու խնդիրը:

1935 թվին, ի աարեերություն անցյալ անարիների, մենք ավելի լավ արդյունքների հասանք կոմյերիտականների քաղաքական կրթության դրվածքի մեջ: Միության միայն 11 խոշորագույն կազմակերպություններում գործող քաղղաքություններում և խմբակներում սովորում ե մեկ միլիոն յերեք հարյուր հաղար հոգի, կամ այդ կազմակերպությունների բոլոր կոմյերիտականների 74 տոկոսը: Զգալի չափով ավելացել ե կուսակցության պատմության և լնինիութիւն հարցերն ուսումնասիրող կոմյերիտականների թիվը: Կոմյերիտմիության մեջ աշխատում ե մոտ 100 հաղար պրոպագանդիստ: Միայն 1935 թվին կուսակցական կարգակերպությունները (Ռազմական, Լենինգրադ, Արևմտյան Սիրիո, Ստալինգրադի յերկրամասը, Իշանովսկի մարզը) 18 հաղար պրոպագանդիստ են առանձնացրել կոմյերիտմիությանն ողնելու համար:

Չնայած այդ նշանակալից թվերին, պետք ե ասել, վոր քաղաքական կրթությունը կոմյերիտմիության մեջ դեռևս անըավարար ե դրված:

Կոմյերիտմիության կենտրոնական կոմիտեն վորոշում հանեց քաղաքական կրթության դրության մասին՝ Դնեպրոպետրովսկի և Որենբուրգի մարզային վրազմակերպություններում: Այդ վորոշումներն ուսանելի յեն ամբողջ կոմյերիտմիության համար:

Ի՞նչպիսի բնորոշ սխալներ մերկացվեցին կոմյերիտմիության Դնեպրոպետրովսկի և Որենբուրգի կազմակերպություններում:

Փոխանակ յուրաքանչյուր կոմյերիտականին անհատապես մոռենալու, փոխանակ ոգնելու նրան իր գիտելիքներին համապատասխան ուսման ձեւ զնարելու, կոմյերիտմիության կոմիտենե-

ըը կոմյերիստականներին հեռակա կարգով «զրում եյին» ըստ խըմ-բակների ու դպրոցների։ Ընդմլորում կողմնորոշվում եյին, դլա-վորապես, քաղուսուցման մեջ «ընդդրկման» թվերով և չեյին խո-րանում նրա բովանդակության մեջ, չեյին հետաքրքրվում այն բանով՝ լավ թե վատ ե դրված ուսուցումը։ Դա բացահայտորեն ձևական, բյուրոկրատական մոտեցում ե քաղաքական ուսուցման կաղմակերպմանը կոմյերիստմիության մեջ։ Նա կործանում է հե-ղափոխական թեորիայի ուսումնասիրման դործը կոմյերիստմիու-թյան մեջ։

Քաղաքական կրթության հաջողությունը վորոշում են պրո-պագանդիստների լավ ընտրված կադրերը։ ՀամեմկթեՄ կենտրո-նական կոմիտեն առաջարկեց ուշադիր կերպով ընտրել պրոպա-գանդիստներին և նրանցից յուրաքանչյուրին անձնապես հաստա-տել։ Մեր շատ կոմիտեներ, առանձնապես Ուկրաինայի ԼԿԵՄ Դնեպրոպետրովմկի մարզկոմը, ձևականորեն կատարեցին այդ դիրեկտիվը։ Նրանք վոչ միայն հեռակա կերպով կոմպլեկտավո-րում եյին խմբավճերը, այլև պրոպագանդիստներին հաստատում-եյին հեռակա, ցուցակով։

Պարզվեց, վո՛ր պրոպագանդիստների մեջ բացահայտորեն ան-պատրաստ շատ ընկերներ կան, իսկ վորոշ տեղերում, որինակ, Լենինգրադի կազմակերպության մեջ, վոչ միայն անզատրաստ-մարդիկ հայտաբերվեցին, այլև թշնամիներ — տրոցկիստներ, դինովյականներ և այլն։

Դնեպրոպետրովմկում և Որենբուրգում, ինչպես, իմիջի այ-լոց, միության շատ կազմակերպություններում, դպրոցների և խմբավճերի աշխատանքի ստուգումն անհրաժեշտ բարձրության-վրա չեր դրված։ Կոմյերիստմիության զեկավարները վերածվել եյին վատ ստատիստիկների։ Նրանք զբաղվում եյին միայն խմբավճերի թվի, նրանց մեջ սովորող մարդկանց թվի «հաշվա-ռումով», «հաշվառում եյին», համբիչների վրա թվական «գու-մարներ» եյին կատարում և չեյին ստուգում քաղղաքոցների ու խմբավճերի աշխատանքը։ Հաշվառումն անհրաժեշտ ու լավ գործ է։ Սակայն յերբ նա ձևականորեն է կատարվում, յերբ մարդիկ դրադվում են «թվերով» և չեն խմանում իրերի իրական դրությու-նը — ուս ինքնախարեյություն ե։

Շատ խմբակներում և քաղղաքոցներում պարագմունքները

ձանձրալիր յեն և անհետաքը քիր, չոր ու ցամաք են անցնում և պատասխան չեն տալիս հատապ հարցերին:

Կոմյերիտականները վիթխարի ձգտում ունեն դեպի քաղաքական ուսումը և մեր շատ կոմիտեները չեն կարողանում ճիշտ կազմակերպել քաղաքական մրցության գործը: Ինչո՞վ բացատրել այդ տարրորինակ, առաջին հայացքից, անհամապատասխանությունը:

Այդ բացատրվում ե նրանով, վոր դեկապար ընկերներն իրենք չեյին դեկապարում խմբակներն ու դպրոցները, մի կողմէ եյին քաշվում անմիջական պրոպագանդիստական աշխատանքից: Նրանք դրա համար ել չեյին իմանում այդ աշխատանքի առանձնահատկությունները, չեյին իմանում պրոպագանդիստների կարիքներն ու պահանջները: Ճիշտ ե, այժմ դրությունը, վորոշ չափով, միքիչ բարելավվել ե:

Ամենքին հայոնի յե, թե ինչպես մեր կուսակցությունը և ընկեր Ստալինը առւր են դնում հեղափոխական թեորիան ուսումնասիրելու, բոլշևիզմի պատմությունն ուսումնասիրելու հարցերը: Դա առանձնահատուկ նշանակություն ունի յերիտասարդության համար: Մեր յերիտասարդությունն անցյալը հետ չծանոթացնելով մենք չենք կարողանա նրան սովորեցնել բոլշևիկորեն սիրել մեր ներկան: Մենք պետք ե յերիտասարդությանը զինենք լենինիզմի թշնամիների դեմ, տարբեր գույնի ոպորտունիստների դեմ, նարողնիկների, մենշևիկների, տրոցկիստների, զինովյանիականների, աջերի, «ձախլիկների» դեմ մեր կուսակցության մղած պայքարի ամենահարուստ փորձով: Գետք և գլաւալորել յերիտասարդության հեղափոխական թեորիան սկզբնաղբյուրներով ուսումնասիրելու ձգտումը:

Այժմ չի կարելի ճշտորեն դեկապարել դաստիարակչական աշխատանքի դրամածքը, չզբաղվելով կոմյերիտումիության մեջ հեղափոխական թեորիայի ուսումնասիրումը կաղմակերպելով, չզբաղվելով մարքսիզմի-լենինիզմի հիմնական դադափարների, ընկեր Ստալինի աշխատությունների ուսումնասիրությամբ: Կոմյերիտմիության յուրաքանչյուր կոմիտե և յուրաքանչյուր ակտիվիստ պետք ե այնպես բաշխեն իրենց ուժերը, վորապեսզի իրենց ուշադրության մեծ մասը նվիրեն քաղղաքուցների, լենինիզմի խմբակների, մեր կուսակցության պատմության ուսումնասիրության խմբակների աշխատանքի կաղմակերպմանը: Դրա համար ել պետք

Ե փոխվի կոմյերիտական ակտիվի տիպի մասին յեղած պատկերացումը։ Ակտիվ աշխատողը նա յե, ով պրոպագանդիստական աշխատանքը զուգորդում ե կազմակերպականի հետ, և վոչ թե նա, ով միայն զբաղվում է կազմակերպական աշխատանքով և հրացանային կրակի հեռակորության չափ հեռու յե գտնվում պրոպագանդիստական աշխատանքից։

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ ՑԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ
ԴԱՍՏԱՐԱԿԵԼՈՒ ՎԱՐԵՎՈՐԱԳՈՒՑՆ ՈՂԱԿՆ Ե

Հինգ տարի առաջ կոմյերիտամիությունն առաջադրեց «Պատրաստ աշխատանքի և պաշտպանության» նորմաների կոմպլեքսը։ Այդ կոմպլեքսը հաստատ արմատ գցեց մեր յերկրում, և ՊԱՊ-ի կրծքանշանի նորմաներն արդեն մոտ չորս միլիոն հոգի հանձնել են մեր յերկրում։

Դա, անկասկած, մեծ հաղթանակ ե, սակայն Խորհրդային յերկրի պարմաններում, նկատի առնելով այն հսկայական հոգատարությունը, վորը կուսակցությունն ու անձամբ ընկեր Ստալինը ցուցաբերում են աշխատավորության Փիզիկական դարդացմանը, մենք կարող ենք և պարտավոր ենք շատ ավելին անել։

Վորո՞նը են մեր Փիզիկական կուլտուրայի թերությունները։

Այն, վոր նա դեռևս մասսայական բնույթ չի կրում, թեև բոլոր բուժութեամիան յերկիրները զարմանում են ԽՍՀՄ Փիդ-կուլտուրնիկների քանակով։ Մենք բավարար չափով չենք ուղագործում մեր հարստագույն հնարակորությունները, առև բողջ յերիտասարդությանը Փիզիկուլտուրային շարժման մեջ ներդրավելու համար։ Ֆիզիկական կուլտուրայի զարգացման հետ դորժումնեցող շատ աշխատողներ և հիմնարկություններ շատ ավելի մեծ ուշադրություն են դարձնում առանձին սպորտամեններին, քան ամբողջ կազմակերպություններին և հաղարավոր Փիզիկուլտուրնիկներին։ (Ձայներ—ձիշտ ե, ճիշտ ե)։

Մեր Փիզիկուլտուրայի թերություններն արտահայտվում են նաև այն բանում, վոր առանձին հիմնարկություններ ու ընկերներ յերբեմն բացառիկ ուշադրություն են նվիրում վորեւ մեկ սպորտի զարգացմանը։ Պրոֆմիհությունների մի շարք կենտրոններ դպիսավորապես զարգացնում են սպորտի այն տեսակը, վորը սիրում ե ինքը կենտրոնի նախադահը։

Մեղ մոտ դեռ անբավարար և Փիզկուլտուրնիկների մէջ կտուարվող քաղաքական-դաստիարակչական աշխատանքը։ Այդ բացատրվում և նրանով, վոր Փիզկուլտուրայի պոորին կուեկտիվը կազմակերպութեն թույլ և, վոր Փիզկուլտուրնիկների ինքնագործունեյությունը ճնշվում և ուռեցրած վճարովի ապարատով։

Դեպքեր են լինում, յերբ հայտնի Փիզկուլտուրնիկները, նույնիսկ սպորտի վարպետները, հեռանում են սոցիալիստական շինարարությանն ակտիվուրեն մասնակցելուց, դառնում են ապուլիստիկ մարդկի և զբաղվում են սպորտով հանուն սպորտի։ Այս բանում մեղավոր են վոչ միայն ողբովմիությունները, այլև մեր կոմյներիստական կազմակերպությունները։

Մեր նպատակն և քաղաքի և գյուղի ամբողջ յերիտասարդությանը, առաջին հերթին կոմյներիստականներին ներզրակել ՊԱՊ-ի կրծքանշանի նորմաները հանձնելու։

1937 թվին գպրոց ավարտող աշակերտները պետք և անօղայման առաջին աստիճանի ՊԱՊ-ի կրծքանշանակիրներ լինեն, իսկ 1937 թվին բուհերն, ու յառահերն այլարտողները պետք և, վորպես կանոն, լիովին հանձնեն ՊԱՊ-ի յերկրորդ աստիճանի նորմաները, կամ թե, այնուամենայնիվ, ձեռնարկեն այդ նորմաները հանձնելում։

Խնդնագործունեյության հիման վրա կարուցված կամավոր սպորտային ընկերությունները կամրացնեն Փիզկուլտուրային կազմակերպությունները, կուժեղացնեն Փիզկուլտուրնիկների մեջ կատարվող զատարարակչական աշխատանքը։ Յեթե իրենք Փիզկուլտուրնիկները զինեն իրենց կազմակերպությունների իսկական տեսքը, յեթե նրանց շրջանում զարգացած լինի դեմուլրատիվան, ինքնաքննադատությունը, ընկերությունները կաշխատեն այնպես, ինչպես այդ պահանջում են և սպասում են կուսակցությունը, կոմյերիստմիությունը և ամբողջ խորհրդային հասարակայնությունը։

Գեաք և նշեմ, վոր վորոշ ընկերություններ, դեռ աշխատանք չսկսած, այնպիսի ապարատ են ստեղծել, վորոնք իրենց թվով մեծ են այդ ընկերությունների անդամների թվից։

Գամարնիկ—Թերեւս կթվե՞ս։

Կոսարենկ—Առանձնապես չեմ քննադատի, թող աշխատեն, կողմնենք։

Մեր սպորտամենները հպարտանում են, վոր նրանք յուրա-

քանչյուր նոր հանդիպման ժամանակ տասնյակ համամիութենական ռեկորդներ են սահմանում: Սակայն այդ առթիվ նրանք մոռանում են, վոր անցյալի մեր բոլոր համամիութենական ռեկորդները հետամնաց յերկրի, նրա սպորտի հետամնաց կուլտուրայի և տեխնիկայի ռեկորդներ են: Այժմ, յերբ մենք հզորագույն սոցիալիստական յերկիր ենք, մենք չենք կարող կողմնորոշվել հինգ ռեկորդներով: Խորհրդային կարգը բացառիկ լավ պայմաններ և ստեղծում սպորտսմենների աճման ու կատարելագործման համար: Յեզ դրա համար եւ, յեթե մենք ցանկանում ենք սպորտի տեսակետից լրջորեն «հասնել և անցնել» առաջավոր կապիտալիստական յերկիրներից, մեր սպորտսմենները պարտավոր են սովորել սոցիալիստական արդյունաբերության ստախանովականներից, թե ինչպես պետք է տիրապետել առաջավոր տեխնիկային և գերազանցել համաշխարհային ռեկորդները: Խորհրդային սպորտսմենների խնդիրն ե—սովորելով յուրացնել սպորտի բարձր տեխնիկան, տիրապետել հաղթելու տեխնիկային: Այս անհնարինե առանց պայքար մղելու խորհրդային սպորտսմենի բարձր կարգապահության, կուլտուրականության և քաղաքական դրագիտության համար:

ՑԵՐԵՔ ՍՍՍՆԱԿԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առանձնահատուկ ուշադրության են արժանի կենցաղում յերիտասարդության վարքի, փոխադարձ վերաբերմունքի վերաբերյալ. Հարցերը: Մենք բավարար չափով չենք պայքարում այնպիսի յերկույթների գեմ, ինչպիսին խուլիզանությունն ե յերիտասարդության մեջ: Մենք դեռ պսակագերծ չենք արել այսպես կոչված «խուլիզանական ռոմանտիկան», իսկ նա, «այդ ռոմանտիկան» գերում ե մեր յերիտասարդության վորոշ մասին և յերբեմն նրա մեջ հակաժողովրդական արարքներ ե առաջացնում: «Ըստ լիդանական ռոմանտիկայի» հիմքում դրված ե հեռացումը հասարակական կյանքից, հակաժողովրդական տարրերի աղղեցությունը, վախկոտություն պայքարի դժվարությունների հանդեպ: Յեզ իսկապես, մեծ համարձակություն պետք չե ինո՞ վիրավորելու կամ դանակով անպաշտանին ծակելու համար:

Այլ յերիտասարդներ հասակավորների նկատմամբ անպատճառ, կոպիտ վերաբերմունքը խայտառակություն չեն համարում

իրենց համար։ Հասակավորների հետ խոսելիս նրանք ամենայն հեշտությամբ «դու» յեն ասում նրանց և դա մինչև իսկ լավ վարմունքի հատկանիշ են համարում։ Մեր կոմյերիտական կոմիտեներում առանձնապես լայն տարածված ե մտերմական հարաբերությունը, հենց ենակես ուսին խփելը և «դու»-ով խոսելը։

Վորոշ յերիտասարդներ, այդ թվում և կոմյերիտականներ, միշտ չե, վոր իրենց լավ են պահում աղջիկների վերաբերմամբ։ Վոմանց մոտ ստվորություն ե դառնում ցինիկ յերևալ աղջիկների հետ խոսելիս և զանազան անպարկեշտ բաներ անել։ Այդ նույնպես վոչ այլ ինչ ե, յեթե վոչ հնի, բուրժուականի մնացուկ կանանց համար։ Պետք ե ուժեղացնել դռեհկության դեմ մղվող պայքարը, մեր աղջիկներին ել ավելի մեծ հոգատարությամբ և ուշադրությամբ ըրջապատել։

Վ. ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՅԵՎ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՄԱՆ
ՄԵԹՈԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ընկեր Ստալինի ցուցումների կապակցությամբ, վորոնց ժամանքն ՀամլիցեՄ կենտկոմը զեկուցեց իր XI պլենումում, արմատապես փոխվում ե դեկավարման բնույթը կոմյերիտմիության մեջ։

Կոմյերիտմիության դեկավարությունը պետք է ապահովի գիտելիքների, գիտության, կուլտուրայի տիրապետման համար յերիտասարդության մզած պայքարի հաջողությունը։ Ղեկավարությունը պետք է լիովին յենքարկի յերիտասարդության ու յերեխաների ուսման ու դաստիարակման խմբիրներին։

Լենինյան կոմյերիտմիությունը ներկայումս դառնում է խորհրդային յերիտասարդության ավելի լայն կազմակերպություն ի տարբերություն բանվորա-ըյուղացիական յերիտասարդության կազմակերպությունից, վորաչինն հիմնականում եր իր կազմով անցյալում։ ՀամլիցեՄ-ը մասսայական անկուռամկցական կազմակերպություն ե, վորը հարում ե Համեկ(բ)կ-ին, համակրում ե նրա ծրագրին, հանդիսանում ե նրա ռեզերվը և հավատարիմ ոգնականը, իր շարքերում համախմբում ե քաղաքի և գյուղի առաջավոր, քաղաքականագեն գրադետ աշխատավոր յերիտասարդություն լայն շերտերը։

Մեզ մոտ գնալով ավելի ու ավելի յե ջնջվում բանվորների, կորտնտեսականների և ինտելեկտուալիստների միջև յեղած սոցիալիստական սահմանը։ Թե՛ մեկը և թե՛ մյուսը վերածվում են սոցիալիստական հասարակության աշխատավորների։ Անհետանում են «բանվորական յերիտասարդություն», «գյուղացիական յերիտասարդություն», «ծառայող յերիտասարդություն» հասկացողու-

Թյումները : Այդ բոլոր հասկացողությունների տեղ գոյացվում և ժեկը—խորհրդային յերիտասարդություն :

Խորհրդային յերիտասարդությունը, վորը մասնակցում և սոցիալիզմի շինարարությանը և դաստիարակվում և Համեկ(բ)կ զեկավարությամբ, իրարից տարրերին յէ միայն իր գրադամունքի տեսակով, —ըստմանը աշխատում են գործարաններում, մյուսներն աշխատում են կոլտնտեսություններում, յերրորդներն աշխատում են խորհրդային ապարատում, չորրորդներն աշխատում են գիտության, արվեստի ճակատում, գրականության մեջ :

Հետեաբար, անհրաժեշտ ե փոխել վերաբերմունքը յերիտասարդության նկատմամբ, մասնավորապես ծառայող յերիտասարդության, յերիտասարդությունն իլ ակտիվորեն մասնակցում և սոցիալիտական շինարարությանը և ամենքին հավասար իրավունքներ և վայելում յերկրի հասարակական-քաղաքական, տնտեսական և կուլտուրական կյանքում : Դրանով և բացարկվում, վոր Համ. ԼԿՑԵՄ նոր կանոնադրությունը վերացնում և կոմյերիտմիության մեջ այդ յերիտասարդության ընդունվելու առաջներում յեղած սահմանափակումները : Այդ յերիտասարդությունն այժմ կոմյերիտության մեջ կընդունվի հավասար իրավունքներով բանվորական և կոլտնտեսային յերիտասարդության հետ : Պետք ե ասեմ, վոր այս սկզբունքային դիտողությունը մեր ծրագրում՝ ընկեր Սաալինի կողմէից մարդած ուղղում ե : (Բուռն ծափակարությունները) :

Մենք պետք ե փոխենք և իր դարն ապրած մոտեցումը խորի դասակարգերից յելած յերիտասարդության նկատմամբ :

Կոմբայնավարների խորհրդակցությանն ընկեր Ստալինի՝ «վորդին հոր համար պատասխանատու չե» ուսուլիկան, կառավարության վորոշումը բուհերն առանց սոցիալական սահմանափակումների ընդունելու մասին՝ նոր ձևով են լուսաբանում մեր աշխատանքը խորի դասակարգերից յելած յերիտասարդության հետ :

Կոմյերիտությունը, զեկավարվելով Լենինի ու Ստալինի ուսմունքով, պետք ե հասնի այն բանին, վոր խորի դասակարգերից յելած յերիտասարդները, վորոնք պատրաստավամությունն հայտնում մասնակցելու սոցիալիտական շինարարությանը, վուլին անցնեն կոմունիզմի կողմը : Նրանցից լավագույններին,

ստուգվածներին, խորհրդային էշխանությանը նովիրվածներին յուրաքանչյուր զեղքում առանձին մոտեցումով պետք եւ ընդունել կոմյերիտմիության մեջ:

Մեր կազմակերպություններն առավել ևս պետք եւ արժատապես փոխեն իրենց վերաբերմունքը դեպի դասակարգայնորեն խորի տարրերի յերեխաները: Յերեխաների մեջ վո'չ մի սոցիալական աստիճանավորում, վո'չ մի սոցիալական բաժանում: Այդ յերեխաներին մենք պետք եւ բոլոր յերեխաներին համահավաքը ընդունենք պիոներական կազմակերպությունները և նրանցից հավասարապես կոմունիստական հասարակության ակտիվ կառուցադներ դաստիարակենք:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կազմակերպական աշխատանքն այժմ կոմյերիտմիության մեջ բացառիկ նշանակություն եւ ձեռք բերում:

«Անհրաժեշտ եւ յուրացնել, վոր այժմ մեր վորոշումները պղբակատիկորեն իրազործելու համար վճռողական աշխատանքը վերից-վար կազմակերպելու կարողությունն ե» (Լ.Մ. Կազմակալիշ—Զեկուցում ՀամԼԿՑԵՄ IX համազումարում):

Գործի կազմակերպումից եւ կախված նրա կատարման արդյունքը: Իսկ մեղ մոտ քիչ ուշադրություն եւ դարձվում կազմակերպական աշխատանքի հարցերին: Դրա համար ել մի շաբաթ կազմակերպություններում լուրջ ճեղքվածքներ են առաջ դալիս: Դուք դիտեք, վոր ՀամԼԿՑԵՄ կենտկոմը հարկադրված յեղավ զեկավարությունն ամբացնել այնպիսի կազմակերպություններում, ինչպիսին Ուրալինն եր անցյալում, կենտրոնական Սևահողի մարդում, վորտեղ մենք փոխեցինք զեկավարությունը, կուրսկի մարդում, Ստալինդրադի յերկրամասում, Արևմտյան մարզում:

Կազմակերպական աշխատանքի թերապահահատումը հանգեցրեց այն բանին, վոր շատ կոմյերիտական ակտիվիտաներ նույնիսկ մոռացել են կոմյերիտական ժողովներ անցկացնելը: Թվում ե, թե դժվար չե հայտարարություն գրել, այն կախել աչքի ընկնող տեղում, կոմյերիտականներին տեղեկացնել ժողովի ժամանակը, հոգ տանել շենքի մասին, մուտքի մոտ ցուցակագրուում կազմակերպել: Սակայն շատ քարտուղարներ այս բոլորի մասին մոռանում են, իսկ հետ տույժի յեն յենթարկում. կոմյերիտականնե-

թին, վոր նրանք ժողով չեն դալիս, վորի հրավիրման մասին նրանք հաճախ նույնիսկ անտեղյակ են:

Նիստեր գումարելու վարակը թափանցել ե նաև սկզբնական կազմակերպությունները: Կոմիտեյի նիստ և գումարվում կոմիտեյիտական ժողով անցկացնելու առթիվ, վորտեղ մոտավորապես այսպիսի վորոշում են կայացնում: «Հրավիրել խմբակային կազմակերպիչներին՝ կոմիտեյիտականներին ժողովի մասին տեղեկացնելու համար»:

Ժողովի որակարգերը յերթեմն չեն արտացոլում կոմիտեյիտականների շահերը, վորովհետեւ հրամցվում են վերևից՝ բոլոր կազմակերպությունների համար միանման: Սկզբնական կազմակերպությունների նկատմամբ յեղած խնամակալությունը հասնում և այն աստիճանին, վոր, որինակի, Մոսկվայում, «Կրասնի Բոգատիրում» չեր կարելի կոմիտեյիտական ժողով գումարել տուանց Սոկոլնիկին ռայոնական կոմիտեյի գիտության:

Հարկավոր ե, վերջապես, վերջ տալ ժողովներում յեղած քմշակումներից անդուսալ ալիքին: Ինձ հայտնի յե, վոր Մոսկվայի շար սկզբնական կազմակերպություններ չեն կարող քննարկել ու լուծել իրենց գործերը, վորովհետեւ որակարգից չեն սպառվում ռայոնական կոմիտեյի հերթական վորոշումների մշակումները: Ժամանակն ե հասկանալ, վոր մեկ, լավ նախապատրաստված ժողովը մի դյուժին դատարկ և հապճեալ կազմակերպված ժողովներից ավելի վարելոր ե:

Կազմակերպական աշխատանքին նվիրված թույլ ռաշադրությունն անդրադարձավ նաև կոմիտեյիտամիության աճման հարցերի վրա, «կոմիտեյիտական տնտեսության» դրության վրա և ակտիվի կաղըբերի ամրապնդման վրա:

Երիտասարդ տղայի և աղջկա կյանքում ամենակարևոր քաղաքական ակտը—կոմիտեյիտամիության մեջ մտնելը—ֆորմալիստները և ջինունիկները վոչնչի յեն վերածում: Մի շարք ռայոնական կոմիտեներ կոմիտեյիտամիության մեջ ընդունում են վոչ թե մարդկանց, այլ ազգանունների ցուցակ: Նույնիսկ Մոսկվայի և Լենինգրադի ռայոններում կոմիտեյիտամիության մեջ հաճախ ընդունում եյին վոչ թե ընդունող հանձնաժողովները, այլ ռայոնական կոմիտեյից նշանակված առանձին անձերը, վորոնք ընդունին յերբեմն պատահաբար եյին ընտրվում:

Կոմիտեյիտական տնտեսության մեջ, չնայած կուսակցական

փաստաթղթերի ստուգմամբ մեզ մատուցված առարկայական դասին, մինչև այժմ խառնաշլություն եւ տիրում:

Կոմյերիտական տոմսերում կամ ջնջումներ, ուղղումներ և տարբեր նշումներ, որինակ, նույնիսկ ծաղկի պատվաստման մասին և անձնադիր տալու մասին:

Մեր մի քանի քարտուղարներ խիստ առհմանափակ հետաքրքրություն են ցույց տալիս կոմյերիտմիության մեջ ընդունելու, կաղղերի հոսունության, կոմյերիտական փաստաթղթերը պահելու և դուրս տալու, հաշվառման հարցերին: Շատ ակտիվիտաներ չեն ներթափանցում դործի կաղմակերպման տեխնիկայի մեջ, չեն զբաղվում սև աշխատանքով: Նրանք կամ չեն կարող, կամ չեն ցանկանում հասկանալ, վոր կաղմակերպական սև աշխատանքից, դործի կաղմակերպման տեխնիկայից եւ կախված քաղաքական խնդիրների հաջող լուծումը:

Մարզկոմների և յերկրկոմների մի շարք քարտուղարներ թերագնահատում են կաղղերի նշանակությունը մեր ամբողջ աշխատանքում: Մինչև այժմ չի վերացված սկզբնական կաղմակերպությունների քարտուղարների մեծ հոսունությունը: Չնայած այն բանին, վոր շրջանային կոմիսերի յուրաքանչյուր քարտուղարին հաստատում և Համկանությունների վարչությունը կաղմակերպություններ, վորոնք փորձում են այդ հարցում անտես առնել կենտրոնական կոմիտեն:

Շրջկոմի քարտուղարի աշխատանքը ղեկավարելու վորակը ցածր մակարդակի վրա յե գտնվում: Իվանովսկի մարզի Ալեքսանդրյան ուսումնում վայել Սիլաչենկ մոտ յերկու տարի շրջկոմի քարտուղար եր: Այդ ժամանակի ընթացքում կարողացել եր միայն յերկու-յերեք կոլտնտեսային կաղմակերպություններում լինել, իսկ շրջկոմը մի ամբողջ տարվա ընթացքում շրջանի գյուղական կաղմակերպություններին վերաբերող վոչ մի հարց չեր քննել: Իսկ չե վոր նման դեմքերը յեղակի չեն: Մոտավորապես այսպիսի բան կար և կոստրոմայում և Յարոսլավլում:

Միայն ղեկավարման հարցերի նկատմամբ յեղած դայրացուցիչ արհամարհական վերաբերությունքով, միայն ինքնահոսով կարելի յե բացառություն այս աղաղակիտող աղանդակությունը:

Համկանություններ կենտրոն ստացավ կուրսկի մարզի Մեղեղենսկու շրջկոմի նախկին քարտուղարի նամակը: Նա հարցնում է՝

ի՞նչ անել, մարդկոմը նրան աշխատանքից հանել ե, սակայն փոխարենը վոչ վոքի չի ուղարկել: «Այժմ յես հարկադրված եմ, — դրում ե նա, — կազմակերպությունը ղեկավարել այն ժամանակ, յերբ յես հանված եմ: Իմ հեղինակությունը խախտված ե: Հանված լինելով՝ ահա արդեն յերկու ամիս ե, վոր շարունակում եմ քարտուղարություն անել: Մարդ չկա, վորին հանձնեմ գործերը, իսկ մարդկոմը վոչինչ չի անում»:

Մոտերս մենք նամակը ստացանք Հյուսիսային յերկրամասից, ընկեր Որլովից: Ահա թե ինչ ե զրում նա: «Արդյոք հայոնի՞ յե ձեղ, վոր Հյուսիսային յերկրամասի Տարնովի կազմակերպությունը յերեք ամիս ե, ինչ առանց ղեկավարության ե մնացել: Յերեք ամիս շրջանային կոմիտեն վասկ եր: Յերկրկոմը մինչև այժմ վոչ վոքի չի գործուղել վորպես շրջանային կոմիտեյի քարտուղար աշխատելու, փետրվարի 8-ին գումարվում ե շրջանային կոնֆերենցիան, իսկ յերկրկոմը շարունակում ե լուել: Այժմ շրջկոմում միայն յես եմ—քարտուղան բաժնի վարիչս, վոր հենց նոր եմ յեկել այդ աշխատանքին»:

Տեսեք Սարասովի կազմբյուրոյի ղեկավարման պրակտիկան: Վերջին կես տարվա ընթացքում յերկրամասում 83 շրջանային կոմիտեների քարտուղարներից 22-ը փոխվել են: Այդ թվին ավելացրեք շրջկոմների 17 քարտուղարներ, վորոնք չեն ընտրվել շրջանային կոնֆերենցիաներում:

Այսպիսի փաստեր, ընկերներ, դժբախտաբար կան յուրաքանչյուր մարդում: Ժամանակը չե՞ միթե վերջ տալու ղեկավարակտիվի ընտրության և ամրացման այս խաղին:

Երջկոմների, մարդկոմների, յերկրկոմների և յերբեմն ել կենտկոմի աշխատողները շատ են շրջադայում զանազան կազմակերպությունները: Սակայն շրջադայում են գլխավորապես ին-ֆորմացիա հավաքելու համար, տեղեկությունների համար: Կոմյերի համար աշխատանքին այդ շրջադայությունները վոչ մի ողուտ չեն բերում:

Պետք ե արգելել տեղեկությունների համար կազմակերպությունները շրջադայիլը, իսկ սկզբնական կազմակերպություններին իրավունք տալ ճամբու ղեկություններին: (Ծափակարություններ):

Ցուրաքանչյուր կոմյերի համար աշխատող միայն մեկ նախատիկի համար կարող է դնալ սկզբնական կազմակերպությունը—

Հրահանգներ տալու նրա ղեկավարներին, ոգնելու կոմյերիտականներին:

Մենք պետք եւ կազմակերպորեն ամրապնդենք կոմյերիտմիությունը, վրովհետև թուլացած կազմակերպության մեջ չի կարելի ճիշտ դնել ուսման ու դաստիարակության գործը: Թուլացած կազմակերպության մեջ չեն կարող բոլցեկիներ դաստիարակվել:

Համեկ(բ)կ որինակով լենինյան կոմյերիտմիությունը պետք եւ բոլցեկիցան կարող մտցնի իր կազմակերպության տնտեսության մեջ, իր տան մեջ: Մենք յենթաղբում ենք 1936 թվի վերջին ձեռնամուկս լինել կոմյերիտական փաստաթղթերի ստուգմանը, կոմյերիտական տնտեսության վերանայմանը: X համագումարից անմիջապես հետո բոլոր կազմակերպությունները պետք եւ նախապատրաստական աշխատանք սկսեն այդ ուղղությամբ:

ՀամԼԿՑԵՄ կենտրոնը զբաղվեց ֆաբրիկա-գործարանային կոմիտեների աշխատանքի հատուկ ստուգմամբ: Մենք գտանք, վոր վորոշ կոմիտեներ ամբողջությամբ ընդորինակում են մեր դեկավար կոմիտեների աշխատանքի վատ կողմերը: Պարզվեց, վոր շատ ֆաբրիկա-գործարանային կոմիտեներ ընդհանուր դիրեկտիվներ են մշակում ցեխային կազմակերպությունների համար, նույնիսկ ստուգումներ ու հետազոտություններ են անցկացնում ցեխերում՝ դրա համար հատուկ համաժողովներ ստեղծելով, մինչդեռ ցեխերը նրանց քթի տակ են: Ստուգատեսներ, արշավներ, կոնկորդներ են միազմակերպում, իսկ յերիտասարդության հրատապ, կենսական հարցերը չեն տեսնում, նրանց կողքով են անցնում: Զելյարինսկի տրակտորային գործարանի գործարանային կոմիտեն ստուգում եր աճումը, իսկ հենց այդ նույն ժամանակ կոմիտեյում չքննված մնացել եր 102 դիմում՝ կոմյերիտամիության մեջ ընդունվելու մտային: Լենինդրադում «Կրասնի տրեսուլունիկ» գործարանի կոմյերիտմիության կոմիտեն մասաւայական և քաղաքական աշխատանքի լավագույն դրվածքի համագործարանային կոնկորդ անցկացրեց: Այդ նույն ժամանակ 400 կոմյերիտականներ քաղաքական կը թությամբ չեյին պարապում, միջնակարգ կը թության դարսոց ընդունված 400 կոմյերիտականներից 200-ը «մազվել» եյին:

Խ՞նչ են ասում այս բոլորը: Այն, վոր կոմյերիտական կոմիտեների աշխատանքում դեռևս շատ անհեթեթություն կա, կան և բյուրոկրատիզմի տարրեր:

իսկ ահա ճիշտ աշխատանքի նմուշ—հետևելու արժանի որի-նակ: Իմ առաջն և Ստալինգրադի յերկրամասի «Պրոդեկտոր» կող-տնտեսության կից կոմյերխական կոմիտեյի նիստի №23 արձա-նազրությունը:

«Լաեցին.—Կոմյերխական Ոլեյնիկովի առաջարկը յերիտա-սարդ մայրերի ժողով հրավիրելու մասին՝ յերեխաների դաստիա-րակության հարցերի վերաբերյալ զբուցելու համար:

Վորոշեցին.—Ժողովը կազմակերպել հոկտեմբերի 21-ին, յերեկոյան ժամի 6-ին: Յերիտասարդ մայրերի հաշվառումը և նրանց հրավիրումը հանձնարարել Մարուսիա Սամսոնովային և Ոլեյնիկովին: Ժողովի համար շնչք պատրաստելը, այդ թվում նաև մանուկների համար ժամանակավորապես մանկամասուրի շնչք պատրաստելը հանձնարարել Զինա Գետրյակովային, Մարուսիա Չուրլովային և Աննա Շիրիկինային: Կոլտնտեսության վարչությունից խնդրել անհրաժեշտ մթերքները՝ ժողովի ժամանակ յե-րեխաներին հյուրասիրելու համար: Շրջանային կոմիտեյից խընդ-քել պարմանավորվել շրջառաժնի հետ՝ այդ ժողովին բժիշկ ու-ղարկելու համար»:

Կամ թե այնուհետև.

«Լաեցին.—Տբակտորիստ Կատյա Կալմիկովայի հայութա-քությունը, թե արակտորիստների դասընթացներն ավարտած յե-րեք աղջիկ, վորոնք յերկրորդ կատեղորիսյի տրակտորիստի կոչ-ման քննություն են տվել, չեն աշխատում ըստ իրենց մասնագե-տության: Բրիգադիրը նրանց մեքենան չի տալիս, վորովհետեւ չի վստահանում աղջիկներին: Մեքենատրակտորային կայանի դե-րևիստորը գանդատաների առթիվ վոչ մի միջոց ձեռք չի առել:

Վորոշեցին.—ՀամեկենՄ շրջկոմից խնդրել այդ հարցը քննարկել շրջկոմի բյուրոյում, կանչելով մեքենատրակտորային կայանի դիրեկտորին, բրիգադիրին և աղջիկ-տրակտորիստներին: Պնդել, վոր աղջիկ-տրակտորիստներն աշխատեն ըստ մասնագե-տության»:

Սա կոլտնտեսային բջիջ ե, և նա հարցերը լուծում ու իր վորոշումները կատարամ ե ավելի լավ, քան մեր շատ ուսունա-կան կոմիտեներ:

Մեր վորոշ աշխատողներ մտածում են իրենց շաղակրատությամբ ժողովրդականություն ձեռք բերել յերիտասարդության մեջ:

Մեզ մոտ ակտիվիտատի տիպ կա, վորն առատորեն ճառեր և արտասանում, և վոր գլամավորն ե, ինչի մասին վոր խելքը փշի: Բնությունը նրան խիստ արագաշարժ լեզու յե չնորհել, և նա յերախտադիտորեն ողտավում ե նրա պարզեմից: Այդպիսի, թող ներվի ասել, ակտիվիտատը խոսում ե ամենաբարդմաղան առարկաների մասին, վորոնց մասին ինքը շատ մշուշոտ պատկերացում ունի: Նա դործ ե ածում յերեք իրեն չհուզող բառեր ու մտքեր, կամ թե, սեփական մտքեր չունենալու համար, նա դրանք փոխ և առնում ամեն անսակլի աղբյուրներից: Այսպիսի ակտիվիտատը խիստ շատ և սիրում իր ճառերը տպագրել՝ լինի այդ ռայոնական, լինի այդ մարդային թերթում: Նրա ճառերը լսելն ու կարդալը խիստ դժվարին, լարված և վերին աստիճանի անպտուղ գործ ե: Դա պարզապես չդիտակեցված ու տհաս մտքի յերջանիկ զուգորդում ե զատարկախոսության հետ, յերեմն ել կիսադրագիտության հետ: Նա անպայման բոլորի վրա փնչացնում և և ամենքից ինչ-վոր բան և պահանջում: Բոլորը նրան պարտ են, բոլորը նրան պարտական են և բոլորը պատժի յենթակա: Նա չի զանում խոսել և ու աշխատանքի կոչել, իսկ ինքն ամեն կերպ խուսափում և ու աշխատանքից, ինչպես սատանան խունկից:

Նա, այդ գատարկապորտ ամիսիվիսարը, կարծում ե, վոր իր ամեն մի ժեստ խորիմաստ յեղբահանգում և կամ թե ղեկավարցուցումի նման բան: (Ծիծաղ): Նա սիրում ե, վոր կոմյերիտականները պարեն նրա նախադույլ: Նա համոզված է, վոր կազմակերպության մեջ ամենայն ինչ, վոր լավ է, լուսավառություն և նրա պայծառ մտքից կամ թե անպայման նրա քամուր ղեկավարության» արդյունքն ե: Նա բանաձեւով և մտածում և բանաձեւով և խոսում:

Զի կարբելի կարծել, վոր այսպիսի, թող ներվի ասել, ակտիվ աշխատողներն առանձնապես վտանդավոր են մեզ համար, սակայն նրանք ել, այնուամենամիվ, ընդունակ են վորոշ բան փշացնել և տեղ-տեղ աղտոտել: Ահա թե ինչու յես կարծում եմ, վոր այդպիսի մարդկանցից մեզ պետք ե հեռու պահենք և վոր-

քան կարելի յե շուտ մեկուսացնենք նրանց մեր կաղմակերպություններից :

Ժողովրդականություն և հեղինակություն կարելի յե վաստակել միայն ռեփական մեջքով, աշխատասիրությամբ, տշխատանքով : Յեթե շատ աշխատես և ճիշտ աշխատես—յերիտասարդությունը կակսի քեզ հարդել :

Սխալվում ե նա, ով կարծում ե, թե լոկ տօնինաններ ու մանղատներ ունենալով կարելի յե ղեկավար դառնալ :

Լինել յերիտասարդության կաղմակերպիչն ու դաստիարակիչը—նշանակում և ալելի շատ դիտենալ, ալելի լավ աշխատել, լինել զդայուն մարդ, ուշադիր հետեւել յերիտասարդության պահանջներին ու կարիքներին :

Հեշեցեք ստալինյան չնորհակալությունը ստախանովականների համամիութենական խորհրդավելցությանը . «Այսպես, ահա, չնորհակալություն, ընկերներ, ուսուցման համար, մեծ չնորհակալություն» : Այս բանը հայտարարեց մեծ Ստալինը :

Իսկ մեզ մոտ բալոր ակտիվիտեններն ել առիթ են վորոնում սովորեցնելու յերիտասարդությանը, սակավ են յերիտասարդությունից սովորել ցանկացողները : Ահա յերիտասարդությունից այս սովորել չցանկանալու դուռը դուռը տեսականություն և, նրանք բացարձակապես անհանդուրժելի յեն :

Յերբեմն գոյություն ունեյին լավ վարվեցողության կանոններ, վորոնք վորոշում եյլն մարդկանց վարքը զաշտոնական միջավայրում և հասարակության մեջ : Այլպես, ահա, տեղ-տեղ մեր մոտ ել յերեան են յեկել նման կանոններ : Յերիտասարդությանները հավաքվում են ինչ-վոր դաստարկ հարցի քննարկման համար և անպայման ճգնաժամ են այդ քննարկումը բոլորել ինչ-վոր խորիմաստ բանաձեւով : Իսկ յեթե մոռանան կամ չկարողանան բանաձեւ դրել ապադա սերուղների համար, ապա անպայման նորից կհավաքվեն, նորից կսկսեն քրտնախաչ և խոպատելու չափ քննարկել, վորպեսզի վերջինինը, այնուամենայնիվ, բանաձեւը դրեն : Գլուխը կորցնելու չափ սիրում են ինչ-վոր մի բան արձանադրել, իսկ արձանադրելու համար հաճախ բան չի լինում :

«Ավ վարվեցողությունը» յերեան և գալիս նաև այլ դեպքերում . առենք, յերբ խոսքը վերաբերում և նախադահությունը ընտրելուն : Սկսում են յերիբար ցուցակներ կազմել և մարդիկ, կարծելով, վոր բարդ ու ոգտակար աշխատանք են կատարում,

Հոգ են տանում, վոր չլինի թե վիրավորնեն ինչպոք գիղանտի
ներկայացուցչի կամ թե ռայոնական աշխատողի. վո՞նց թե, հան-
կարծ նա իմանա կամ տեսնի, վոր նախազահության մեջ չեն
մտցրել իրեն: Այս ժամանակ հոնքերը կկիտի և բազմանշանակա-
լից կերպով կհարցնի. «Ի՞նչպես թե այդպես: Համարձակվել են
զանց առնել ինձ»:

Վարքի կանոնների չդրված որենքներում մենք գտնում ենք և
խանդավառ ծափահարություններ, վորոնք վերածվում են ովա-
ցիայի: Ակտիվիստ ել կա, վորն ընդամենը յերկու տասնյակի
տարեկան և, ամբիոն և բարձրանում և առանց քաշվելու սպասում
և, թե յերք իրեն կծափահարեն: Նա, դիտեք, այդ բանում՝ տես-
նում և կազմակերպության վստահությունը և դրա համար ել ա-
մեն կերպ ձգտում և ընկղմվել այդպիսի փառքի դու, ախորժելի
ջրերում:

ԱԿՏԻՎԻՍՏԸ ԹԵՏՔ Ե ՏԻՐԱՊԵՏԻ ՂԵԿԱՎԱՐԵԼՈՒ ԱՐՎԵՍՏԻՆ

Այս առարիների ընթացքում Լենինյան վոմյերիստմիության
ակտիվ աշխատողները գործնական աշխատանքի ու պայքարի մեծ
դպրոց անցան: Մեր միության ակտիվիստների շարքերն անհա-
մեմտելիորեն աճեցին:

Մեր ակտիվն, իր մեծ մասով, խորհրդային յերիտասարդու-
թյան իրոք առաջավոր մասն և, նա բաղկացած և հիանալի մարդ-
կանցից, բոլցնիկյան կուսակցությանն անհույսորեն նվիրված
մարդկանցից, վորոնք կարող են նրա խնդիրներն ու լողունզներն
արագությամբ հասցնել յերիտասարդության մասսաների դիտակ-
ցությանը:

Սոցիալիզմի համար մղվող դասակարգային մարտերի բովում
տեղի յեր ունենում ակտիվի գաղափարական-քաղաքական աճու-
մը, այդ մարտերում նա առնանում եր ու կոփիվում:

Փոխվել ե նաև մեր ակտիվի կուլտուրական կերպարանքը:
Միության ակտիվիստը, անընդհատ բարձրացնելով իր դաշտակա-
րական-քաղաքական և կուլտուրական մակարդակը, դնալով
ավելի ու ավելի յե տիրապետում կազմակերպական կուլտուրա-
յին-ղեկավարման կուլտուրային:

Ղեկավարումը—դա բարդ արվեստ է: Ընկեր Ստալինն ա-
ռում եր —

«Շարժումից հետ մնալ չեւ կարելի, վորովհետև հետ մնալ—նշանակում եւ կտրվել մասսամներից։ Բայց առաջ վաղ զել եւ չի կարելի, վորովհետև առաջ վաղել—նշանակում եւ կորցնել կապը մասսամների հետ» (Ստալին, «Դլասապույտ»՝ հաջողություններից», «Լենինիզմի հարցերը», «Հայերեն Արքատ., եջ 410)։

Ստալինյան այս ցուցումով մենք պետք եւ առաջնորդվենք մեր ամբողջ աշխատանքում։ Ղեկավարման ոպերատիվությունը ստուգվում եւ վոչ թե խոսքով ու բանաձեւերով, այլ պայքարով։ Պետք եւ նկատի ունենալ, վոր բանաձեւը նշանակում եւ հաղթելու շանկություն, բայց վոչ բուն հաղթանակը, բայց ահա մեր ակտիվի վորոշ մասը չինովնիկական հավատք ունի դեպի թուղթը, ամենազոր բանաձեւը։ Գրեց—նշանակում եւ արեց։ Կյանքում այդ ամեննեին այդպես չեւ։ Կարելի յեւ ահազին թուղթ սկացնել, փչացնել և դրա հետ միասին վոչինչ չանել։

Անարդարացի կլիներ չեննադատել նաև Համլեթը կենտրոնական կոմիտեյի աշխատանքը։ Կոմիերիտմիության կենտրոնը կարող եր ավելի լավ աշխատել, քան աշխատում։ Ե։ Այդ բանում մեղավոր ենք մենք։ Ի՞նչ եւ պակասում կենտրոնին ավելի լավ աշխատելու համար։ Ամենից առաջ տեղական առանձին կազմակերպությունների իրերի դրության մասին ժամանակին իրազեկ լինելը։ Այդ պատճառով մենք յերբեմն վոչ թե սխալներ ենք ուղղում աշխատելու ժամանակ, այլ արձանադրում ենք, վոր սխալներ են կատարվել։ Բայց չե՞ վոր դրանից քիչ ոգուս կա։

Վոչ ամեն դեպքում ենք լավ ճանաչում մարդկանց, վորի պատճառով ել տեղական կազմակերպության լավ աշխատողին, վորին լավ չենք ճանաչում, վաս աշխատող ենք համարում և ընդհակառակը, վաստ աշխատողին, ինչպես այդ պատահեց ընկեր Դունի հետ, առաջ ենք քաշում կուրսկի մարդկոմի քարտուղար։ Դրանից կազմակերպությունը ոգուս չի ստանում։ Կենտրոնում ել ավելորդ գրելացավություն կա, կենտրոնում ել վոմանք կարծում են, վոր յեթե գրեցիր, ուրեմն հարցը վճռեցիր։ Թղթին հավատալը, կուլտուրայի պակասը, յերբեմն գործը կազմակերպել չկարողանալը—այս բոլորը, դժբախտաբար, կա և կոմիերիտմիության կենտրոնում։

Դաստիարակել յերիտասարդությունը—այդ նշանակում եւ մանել յերիտասարդության հոծ շարքերի մեջ, պարզել նրա կա-

կածները, բացատրել նրան կուսակցության գիծը, քարողել լենի-նյան ուսմունքը, ողնել յերիտասարդությանը նրա գաղափարական դաստիարակության, կըթության մեջ, տեխնիկային տիրապետելու մեջ, հին աշխարհի մնացուկների հաղթահարման մեջ, պայքարել յուրաքանչյուր յերիտասարդի համար: Դաստիարակչական աշխատանքը ընդհանրություն չի հանդուրժում: Դաստիարակել—նշանակում ե մարդու հոգեբանությունը վերակառուցել ամենայն մանրամասնությամբ, և վոչ թե «հիմնականում» ողնել նրա կոմունիստական աշխարհայացքի ուժնաշմանը:

Վո՛չ թե ընդհանրապես, վո՛չ թե «հիմնականում» կազմակերպել կոմյերիտականների ուսումը, այլ կարդավորել յուրաքանչյուրի ուսումը,— ահա թե վորն և խնդիրը: Կոմյերիտմիության սկզբնական կազմակերպությունը—դա դաստիարակման շուար և, դա յերիտասարդության ռւսման կազմակերպիչն և, աշխատանքի ու պայքարի կազմակերպիչը: Կեկավարման խնդիրն և վորոնել և դաստիարակել յերիտասարդության խկական բոլշևիկյան կադրեր:

Հիշեցեք, թե ինչ եր ասում էենինը.

«Մենք կզնանք մեր ճանապարհով, աշխատելով վորքան կարելի յե ավելի դդուշ և համբերատար կերպով փորձել ու ճանաչել խօկական կազմակերպիչներին, դդաստ միտք և դրծնական ուշիմություն ունեցող մարդկանց, վորոնք սոցիալիզմի հանդեպ ունեցած անձնի յերությունը միացնում են մեծ քանակությամբ մարդկանց սերտ ու համերաշխ համատեղ աշխատանքը խորհրդային կազմակերպման շրջանակներում առանց աղմուկի (և հակառակի իրարանցման ու աղմուկի) կարդավորելու ընդունակության հետ» (Խնդիր, Յերկեր, III հրատ. հջ 457, «Խորհրդային իշխանության հերթական խնդիրները»):

Հետևարար խնդիրը կոմյերիտմիության կազմակերպական աշխատանքը յերիտասարդության կրթության և դաստիարակության խնդիրների մակարդակին բարձրացնելն և, բոլշևիկյան կարդ մտցնել մեր կոմյերիտական սեփական տան մեջ, համառորեն աճեցնել ու ամրացնել ակտուիլի կազմերը, դառնալ յերիտասարդության ուսուցման կազմակերպիչները, սովորել և գլխավորել յերիտասարդության շարժումը գեպի գիտությունը, կուլտուրան,

տեխնիկան : Այլելի չատ սովորել յերիտասարդության մասսաներից : Զգուռողանալ : Զամբարտավանանալ : Մեր վորոշումներն ստուգել աշխատանքի փորձով և վոչ թե լրացուցիչ բանաձևերով : Ամբոխիլի և զեկավարության մատել դատել վոչ թե բանաձևերով, այլ նրա գործերով և գործողություններով : Ծավալել ինքնաբնադատությունը, այսինքն սովորել սեփական սխալներից :

Ինքնաքննադատության մասին խոսելով չի կարելի լուրջամբ անցնել այս դրական խոշոր աշխատանքի վրայով, վորը կատարել և «Կոմսոմոլսկայա Պրավդան» :

«Կոմսոմոլսկայա Պրավդան» կոմյերիտմիության կենտրոնական կոմիտեին ակտիով ողնել և մերկացնելու մեր կազմակերպությունների աշխատանքը թերությունները, վերակառուցելու նրա կոմիտեների աշխատանքը, կոմյերիտմիությանը չըֆել դեպի յերիտասարդության դաստիարակման խորիրները :

Յեզլ յես պետք եւ ասեմ, վոր «Կոմսոմոլսկայա Պրավդան» դարձել և մեր յերիտասարդության մեջ ժողովրդականություն վայելող ու նրա սիրելի թերթը :

ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՄԱՆ

ՄԻ ՔԱՆԻ ՍԵՐՈԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մենք նշանակելի չափով պրոպագանդիտական կազմակերպություն ենք, մի կազմակերպություն, վորը յերիտասարդությանը բացատրում ե կյանքի փաստերը, դեպքերը, յերկույթները, յերիտասարդությանը պատրաստում ե ինքնուրույնաբար կողմնորոշվելու կյանքում, մի կազմակերպություն, վորը պրոպագանդ և անում կուտակցության քաղաքականությունն ու վորոշումները, յերիտասարդությանը համախմբում և դրանք կինսագործելու համար : Յեզլ այդ տեսակեալից մենք վորոշում ենք յերիտասարդության համար :

Լենինյան կոմյերիտմիությանը, վորակես յերիտասարդության և յերեխաների կոմունիստական դաստիարակման կազմակերպության, ամենից առաջ պետք ե յուրահատուկ լինի այնպիսի աշխատանք, վորը կատարվում ե ինց իր՝ յերիտասարդության մասնակցությամբ, ինց իր՝ յերիտասարդության ուժերով, վոչ թե նրա փոխարեն, այլ նրա հետ, նրա վրա հենվելով, նրան գլխավորելով :

Մենք պետք եւ կոմյերիտմիության մեջ ամուր, դիտակցական կարգապահություն ունենանք, իսկ զըան կարելի յէ հասնել միայն հենց իր՝ յերիտասարդության նախաձեռնությունը զարգացնելու հիման վրա: Մենք ավելի, քան վորուե ուրիշը, պետք եւ հաշվի առնենք մարդկանց առանձնահատկությունները, ունկնդրենք նրանց կարծիքին, հետամնացներին առաջ քաշենք առաջավորների մակարդակին, պատիվներին՝ ակտիվների մակարդակին, անկարդապահներին՝ կարդապահականը մակարդակին, վորակավորում չունեցողներին՝ վորակավորվածների մակարդակին:

Մեր դաստիարակության որյեկտը մարդն ե, և վոչ թե կոմիտեն, ինչպես շատերը կարծում են մեղ մոտ, —այն եւ յերիտասարդը մարդը, պատանին, աղջիկը, դեռահասակը, վորոնք դեռևս չեն հանդիսանում սոցիալիզմի լիովին պատրաստված կառուցողներ և կյանքի նկատմամբ մշակված համոզմունքներ ու հայցքներ ունեցողներ :

Մեր յերկրի բաղմահաղար յերիտասարդները բանվոր գտառակարդի մեծադույն նվաճումները համարում են ինքնըստինքյան համականալի ու լինելի մի բան: Նրանք հաճախ իրենց կյանքի ու զարգացման այնպիսի պայմաններ են պահանջում, վորոնք, նույնիսկ մեր այս հիանալի իրականության համեմատությամբ, իդեալական են :

Մեր յերկրի վոչ բոլոր յերիտասարդները կարող են դնահատել մեր ներկայի այս ամբողջ վեհությունը, հասկանալ մեր նվաճումների իսկական արժեքը, վորովհետեւ նրանք չդիտեն նախահեղափոխական մուայլ անցյալը, անծանոթ են ինտերվենցիայի սարսափներին և քաղաքացիական պատերազմի հրե որերին: Յեկատար ներկայիս յերիտասարդության ամենաբնորոշ գծերից մեկն ե: Իսկ կոմյերիտական կազմակերպությունների շատ զեկավար աշխատողներ չեն հասկանում, չեն աեսնում այդ նորը մեր յերիտասարդության մեջ:

Կյանքի ըմբռնումը, համոզվածությունն ու անձնվիրությունը դաստիարակվում են յուրաքանչյուրի հետ կատարված համառ, համբերատար, ուշադիր և դդայուն աշխատանքով: Հրամանով բղավելով կամ վարչարարությամբ չի կարելի համոզված և անձնվեր մարդիկ դաստիարակել:

Այնպիսի դաստիարակչական կազմակերպությունում, վորպիսին կոմյերիտմիությունն ե, վարչարարությունը կարող

միայն խոր վնաս հասցնել, դրա համար ել նա պետք եւ ջախջախովի և արմատախիլ արլիկ մինչև վերջը:

Շատ վոչ-բարով քարտովաղարներ յենթաղբում են, վոր կոմյերիտականները միայն պարտականություններ ունեն, իսկ իրավունքներ ամեննեին չունեն: Մեղ մոտ կոմյերիտմիության մեջ զեկավարների այնպիսի տիպ եւ լույս ընկել, վորոնց մասին Սալտիկով-Շեղբինն իր ժամանակին ասել ե, վոր նրանք «բասով մտածող մարդիկ են»: Իրենց կառկածելի առաջինությունը դարձնելով կոմյերիտականների, յերիտասարդության հետ խոսելիս իշխանակալորական տոն դորձածելը, նրանք կաղմակերպության սաղամին տառնյակ գործեր են հանձնարարում, նկատի չառնելով նրա ընդունակություններն ու ցանկությունները, իսկ հետո, վարչարարական ինքնազմայլանքով համակված, նրա վրա յեն կուտրում տույժելիք ճիշդոտները:

«Ճույժի յենթարկելու մարմաջում» բանիան, նրանք չեն ուղում հասկանալ, վոր կոմյերիտականից հանձնարարությունների կատարումը պահանջելուց առաջ պետք եւ վերահսկել այդ մատարումը, իսկ վերահսկել—նշանակում եւ խելացի բացարձել, և վոր դիմավորն եւ—ողներ:

Կոմյերիտմիության մեջ դեկավարներ ել կամ, վորոնք մինչև այժմ իրենց «վոյելողներ» (կուտականներ) են յերևակայում: Այդպիսի «վոյելողներ» նստել եւ անդուսպ կերպով վարչարարություն եւ անում, կոմյերիտականների հետ վարվում եւ ինչպես խաղալիքի հետ:

Քիչ են արդյոք այն դեպքերը, յերբ կոմյերիտականի բացակայության դեպքում—թիկումքի հետևից—տույժի յեն յենթարկում: Մի ժամանակ մի շարք կաղմակերպություններում տարածվեց «վարչարարական դրիպի» համաճարակը, յերբ բացահայտուրեն բարձր ջերմաստիճան ունեցող վորոշ քարտուղարներ ինքնակամ կերպով կոմյերիտականներից կազոցներով վերցնում եյին անդամատումսերը:

Մեր ակտիվիստներին այդպիսի բյուրոկրատական կրակից պահանել կարող ե միայն ծավալուն քննազմառությունը, միայն այնպիսի կարգը, յերբ կաղմակերպությունն ինքն ե ընտրում իր դեկավարներին, ոգնում ու քննադատում եւ նրանց, վորակազի նրանք լավ աշխատեն ու չգործադանան:

Կոմյերիտական մասսաները—դրանք «ցածր պաշտոնյաններ»

շեն, վորոնց կարելի յե չարչարել վոնց վոր ուղենաս, — նբանք իրենց կաղմակերպության իսկական տերերն են, մեր բաղմակողմանի աշխատանքի առեղծարարները, մեր բոլոր պրակտիկ դորձերի նախաձեռնելուն ու կատարողները:

Շատ ընկերներ չեն հասկանում, վոր մենք իմբնադասիարակման կաղմակերպություն ենք, իսկ դա նշանակում ե, վոր նրա անդամները դաստիարակվում են և՝ հարցերի քննարկման պրոցեսում, և՝ հարցերի լուծման պրոցեսում, և՝ այդ վորոշումների կատարման պրոցեսում:

Մեր հիանալի յերիտասարդության ղեկավարը լինել — սա բարձր պատիլ ե: Մի քանի կաղմակերպություններում կոմիտեի քարտուղարը վոչ այնքան բարձր ե գնահատում հաղարավոր անդամ ունեցող կաղմակերպության մեջ պատիվ ու հեղինակություն ունենալը, վորքան մի ուայոնական կամ մարզային աշխատողի իր մասին ունեցած կարծիքը:

Ամեն մի կաղմակերպության ուժը վոչ միայն իր անդամների թվի մեջ ե, այլ առանձնապես նրա ակտիվ կառլրերի մեջ, այն բանի մեջ, վոր նա այդպիսի հարյուրավոր, հաղարավոր վորձված կաղմակերպիչներ ունի, վորոնք ընդունակ են դաստիարակելու և իրենց հետեւից տանելու մնացած մասսան: Այսպես կոչված պատիվ կոմյերիտականները մեր աշխատանքի թերությունների վկայականն են: Նրանք առաջանում են նրա համար, վոր մենք վարչարարության մեթոդներով, յերբեմն ել մեր կոմիտեյական իրարանցումով ճնշում ենք նրանց հաստիական-բաղաքական ակտիվությունը:

Կոմյերիտականներին ամեն առթիվ և անառիթ անհեթեթ պահանջներ ներկայացնելով, մենք կորցնում ենք հնարավորությունների չափանիչը, դադարում ենք միջոցները նպատակի հետ չաղկատել, և հետո այնպես ե լինում, վոր և նահանջում ենք առաջին պրակտիկ դժվարությունից:

Վարչարարության հետ սերտ կապի մեջ են դանովում նիստ գումարելու իրարանցումն ու դիրեկտիվային անհեթեթությունը: Դրանք յերկվորյակներ են, վորոնց դոյցությունը համաստարչափ գնաս և հասցնում յերկատասարդության մասսաների մեջ կատարվող մեր աշխատանքին:

Անհամար նիստերի ծխախոտածիկ ծածկույթի տակ վորոշ

կոմիտեներ չեն տեսնում և չեն նկատում, թե ինչն եւ հետաքրքր-քըրում ու հույսում մեր յերիտասարդությանը :

Արտասովորի հետեւից ընկնելով՝ անխմառա ժողովների և ան-պառակ զիբեկովների մեր մի քանի ասովեաները ճամբորդություն են կատարում առողջ մտքի սահմաններից այն կողմը : Նրանք չեն ուղղում հասկանալ, վոր նրանց նիստերն ու զիբեկալիները վոչ վոքի պետք չեն : Նրանք իրենց զոռ չեն տալիս մտածելու, վոր իրենց գործերը, վորոնք հանդիսավոր կերպով կոչվում են կոմի-տեյի նախաձեռնություն, վոչ այլ ինչ են, յնթե վոչ սովորական գրասեննեկային դորձեր :

Այլպիսի մարդիկ յերիտասարդության հետ շփվում են միայն համագահության սեղանի մոտ : Իսկ յեթե բարեհաճում են շփվել յերիտասարդության հետ, ապա այդ լինում եւ պատահաբար, կարճատես, զիբեկալիային հանդիսավոր տեսքով, նմանվելով հարաբա, բայց հիմար հնդկահավերի : Նրանք քարողչի կեղծ սրբու-թյան տեսք են ընդունում և զդիտես ինչու, կաշուց դուրս են գա-լիս, վորպետազի յերիտասարդությանը յերեան ուսուցչի գերում, չհասկանալով, վոր ամենից առաջ հենց իրենց եւ պետք համբերա-տար կերպով և համառորեն սովորել յերիտասարդությունից :

Մեզ մոտ բնոդունված եւ այն կարծիքը, թե կոմյերիտմիտեթյան մեջ յեղած «մեռյալ հոգիները» մասսայական աճման շրջանի ժա-ռանգությունն են : Սա սխալ ե : Իրականության մեջ «մեռյալ հո-ղիմերն» իրենց դարն ապրած աշխատանքի մեթոդների, վաշ-չարաբության և հրամանատվության հետեւանք են : Ով ցանկանում ե ընդմիշտ վերջ դնել այն յերեռութին, վորպիսին գմեռյալ հո-ղիմերն ենք, նա պետք ե ընդմիշտ վերջ տա վարչարարությանը, բղավելուն, —կոմյերիտմիտեթյանը, վորպետ դաստիարակիչ կադ-մակերպության այս թշնամական մեթոդներին :

Ավելի քիչ պետք ե ընդորինակել հասարակական-քաղաքա-կան ուրիշ կաղմակերպությունների և նույնիսկ կուսակցական կո-միտեների աշխատանքը : Մենչեւ այժմ միության շատ ակաիվ աշ-խատաղներ կոմյերիտմիությունը նույնացնում են կուսակցության հետ և կարծում են, վոր իրը կուսակցությունը մեծահասակների համար ե, իսկ կոմյերիտմիությունը յերիտասարդների կուսակ-ցություն ե : Դա արմատապես սխալ կարծիք ե :

Կոմյերիտմիությունը կուսակցություն չե, նա կուսակցու-թյուն չի յեղել, նա կուսակցություն չի ել լինի : Մեղ մոտ միայն

մեր կուսակցությունը կա— Համեկ(բ)Կ-ն : Կոմյերիտամիությունն այլ ֆունկցիաներ ունի, քան Համեկ(բ)Կ-ն, և չպետք ե դրանք մոռանալ :

Զի կարելի մոռանալ, վոր յերիտասարդությունը գտնվում է իր քաղաքական և ընդհանուր—կուլտուրալիան ձևավորման շրջանում : Նա պատասխաններ ե վիճուպում շատ հարցերի, նրա մոտ զանազան տարակուսանքներ են առաջանում, վորոնք մեզանից մտածված, համբերատար բացարություն են պահանջում :

Զի կարելի բանն այնպես պատկերացնել, վոր յեթե յերիտասարդ տղան կամ աղջիկը քաղաքական սուրբ հարցերի պատասխան են վորոնում, պարզ չեն սրատկերացնում այս կամ այն դեպքը կամ յերեսույթը, ապա դրանով նրանք վորոնք թեքման մեջ են ընկնում :

Զախիջախնել նրանց, ովքեր իրենց թերի պատրաստության կամ անդրադիտության պատճառով յերբեմն սխալ են ձեւակերպում իրենց մտքերը, այդ նշանակում և չհասկանալ զատուիարակության խոնդիրները : Մենք պետք ե անհաջոտ լինենք դասակարգային թըշնամյիների, նրանց գործակալության և բոլոր նրանց հանդեպ, ովքեր կորցրել են հեղափոխական դղոնությունը, սակայն հենց հեղափոխական դղոնությունը պահանջում ե, վոր մենք անմտորեն պիտակներ (յառլիկ) ու պիտակիկներ չկացնենք, դատուիարակությունը չփոխարինենք բղավլոցով :

Բայց հենց այդ բղավլոցը յերբեմն թշնամյիներ ե առաջացնում : Շատ որինակներ կարելի յե բերել, յերբ կոմյերիտականը, դեռևս բավարար չափով գրագետ չլինելով, վորոշ բաներում սխալվում ե, իսկ չափեց դուրս յեռանդում «ղեկատվարները» փոխանակ պարզելու, թե ինչումն ե սխալվել և ինչ պատճառով, փոխանակ նրան իր սխալները բացարելու, սկսում են նրան օմշակելը : Այն ել ի՞նչպես : Կրակոտ կերպով, կրքով, աշառու կերպով : Մարդուն վիրավորում են, մարդուն զասում են մեր թշնամյիների շարքը, դաղավեցնում են նրան և դեն են վանում իրենցից :

Բղավլոց հեշտ գործ ե . ուղեղը քիչ ե մասնակցում նրան, ավելի շատ մասնակցում են ձայնի որդանները : Դուք գիտեք, վոր շնորհինյան շատ հերոսներ, դանդի մեջ մեծ պարունակություն չունենալով, վորպես կանոն, «խիզախ» աղմինխատրատորներ են : Միթե չշեղինյան հերոսների դափնեապակները հանդիսաւ չեն սալիս կոմյերիտմիության վորոշ ակտիվիտների :

Սակայն յերբ մենք մեր ակտիվ աշխատողներից ուշադիր,

գրայուն և հոգատար վերաբերմունք Անք պահանջում դեսլի մեր յերիտասարդությունը, մենք նկատի չունենք այնպիսի, թող ներ-
վի ասել, «Հոգատարություն», վորից ողուտ չունեն վոչ «ինամա-
կալը» և վոչ ել «Փանամակալվողը»։ Մեր հոգատարությունը խնա-
մակալություն չե, մեր զղայնությունը վոչ մի ընդհանուր բան
չունի յերիտասարդությանը մեղքահոս լեզվով շոյելու հետ, մեր
ուշադրությունը չողոքորթություն չե։

Գանվեցին այնպիսի չափից դուրս և անխոհեմության աստի-
ճանի յեռանդուն ընկերներ, վորոնք ուշադրություն և հոգատա-
րություն ցույց տալու պահանջը քաղքենիական՝ գոեհկության,
յերեմն ել Թարդու նկատմամբ ծաղրի վերածեցին։ Լույս ընկան-
այնովիսի դաստիարակիչներ, վորոնք ցանկանալով ցույց տալ, թե
վորքան արագ են նրանք վերակառուցվել, ոկսեցին փչացնել մեր
յերիտասարդությանը։

Մեզ մոտ հաճախ այսպես ել լինում, —մարդն իր համար ապ-
րում ե, վոչ վոք նրան չի նկատում։ Հետո այդ մարդը դառնում
և լավ ըրխազիր, ասենք՝ բրիդազիր Վելիչկո։ Նրա մասին սկսում
են ըստ արժանույն գրել թերթերում, նրա մասին արդեն խոսում
են ժողովներում, և հենց այսուղե և, վոր բոլորն, ում ալարը չի
դալիս, սկսում են պատիվ ցույց տալ նրան։ Միության բոլոր ծայ-
րից չնորհամորանքներ են տեղում Վելիչկոյի վրա, ամեն կող-
մից սկսում են պարզեատրել Վելիչկոյին։ Պարզեատրում են բո-
լորը, —և նրանք, ովքեր պարտավոր եյին այդ անել, և նրանք,
ովքեր չպետք ե վոչ մի գործ ունենային այդ բանին։ Արդյունքն
այն և լինում, վոր Վելիչկոյին նվիրում են պատեփոններ, հրա-
ցաններ, կոստյումներ, պիանինո, հեծանիվներ—նրան միայն մեկն
և հարկավոր, իսկ նրան անորայման միանդամից յերեք հատ են
զուռով տալիս։ Յեվ ահա Վելիչկոն ունի այն ամենն, ինչ հնարա-
վոր և ունենալ։ Իսկ նա յերիտասարդ ե։ Հարց ե առաջ ըալիս—
ինչի պիտի ձգտի նա։

Մեծ կամք պետք ե ունենալ, այդ խիստ խանդավառ ուշա-
դրության, պարզեների, անզուսալ շողոքորթության պայմաննե-
րում մարտիկի հեղափոխական դգացմունքը չկորցնելու համար։
Իսկ յերբ փորձեցին միջամտել և վերջ տալ առանձնապես Վելիչ-
կոյի հարսանիքի շուրջը յեղած այդ վնասակար միութեանդու-
թյանը, ամենքն ել միանդամից յերես դարձրին նրանից։ Յեվ
այժմ Վելիչկոն մոռացված ե, նրա մասին ել չեն խոսում, ինքն

իրեն համար թողնելով նրան։ Այսպես և այդ վատառողջ ուշադրության հակառակ կողմը։ Իսկ վոր գլխավորն է, Վելիչկոն ինքը մեղավոր չե այդ բանում։ մեղավոր են ցավ ու փորձանք դաստիարակները, վորոնք այժմ պատրաստ են արդեն մեղալընելու Վելիչկոյին, իսկ իրենք նոր «զոհ» են փնտռում իրենց բազմաշան Հոգատարության» համար։

Կամ թե մի այլ, ամենքի համար անմոռանալի որինակ ։ Ասլրում երջեր ապրում և այժմ ել ծաղկում և պիոներուհի Մամլաքաթը։ Վոչ վոք վոչինչ չգիտեր այդ տառներկուամյա աղջկա մասին։ Սակայն բարձական եր, վոր նա ներկա դանիչեր կառավարության անդամների ընդունելությանը, շքանշան ստանար իր արժանիքների համար, — և մի քանի չափից գուրս խանդավառ դաստիարակներ այնքան զգայունացան, վոր փորձեցին ամենքի աչքերի առջև վիշացնել յերեխային։ Մեծահասակ մարդիկ սկսեցին դպրոցականների և պիոներների սկատվերակություններ կազմակերպել այդ փոքրիկ աղջկա մոտ զնալու համար, Մամլաքաթին հրամիրել զեկուցումներ կարդալու, յելույթներ ունենալու և այլն։ Խեղճ Մամլաքաթը յերբեք չեր պատկերացնում, վոր հայրենիքում հանդիսավոր դիմավորում են պատրաստում նրան, վոր արվեստագետները պատրաստում են նկարել նրան, արձան քանդակել, վոր ինչ-վոր կազմակերպություններ վորոշում են նույնիուշ հատուկ տուն կառուցել նրա համար։

Բուրժուական յերկիրներում, յերբ վորևե ականավորություն մոդա յե դառնում, դանաշան Փիրմաններ սկսում են կոչիկներ, հաղուստ, վարդաշեր և այլն ուղարկել նրան, հասարակ, բացահայտ ուեկամի նպատակով։ Սակայն կապիտալիստական գործարաններն այդպիսով իրենց ապրանքների ուեկլամն են անում միայն, իսկ զոհեկիկ զործարարները, վորոնք մոլեգնապար են սարքում մեր համեստ հերոսների շուրջը, ցանկանում են իրենց անհրեշ դլխացավանքով ուեկլամել իրենք իրենց։ Հեռուն քեզել այդ գորենակացնողներին մեր յերիտասարդությունից։ (Յերկարասուհծափականություններ)։

Դուք յերեակայել չեք կարող, թե նրանք ինչ են կարողացել անել մեր մի քանի անվանի ստախանուվականների հետ։ Բյանակիկ փորձարանում մի ժամանակ աշխատում եր անյանի կոմյերիստախանովական Գեորգի Լիխորադովը, պարզեատորված լենինշքանշանով։ Յես ասում եմ աշխատում եր, վորովհետեւ իր պար-

գեատրման որովանից մինչեւ վերջին որեւս նա համարյա վոչ մի որ չի կանդնել իր դապրյահի զլիին, վորի վրա նա հասել եր այնպիսի փայլուն հաջողությունների : Նրան սպառպաղես հնաբավորություն չեն տալիս աշխատելու :

Նրան անընդհատ, որը-որին քաշում են հանդիսավոր նիստերի, յաղուճների, յելույթների, զեկուցումների, հանդիպումների՝ արտիստների, արվեստադետների, պրոֆեսորների և ել ում հետ վոր ուղում եք : Նրան հրավիրում են այլ դործարաններ, ուրիշ քաղաքներ, և իիխորադույին դարձնում են ըրջագայող գաստրուլոր : Զեխովը դրել ե, վոր քաղքենիները գեներալ եյին վարձում հարսանիքին հանդիսավորություն տայլու համար : Յեկ ահա դռեհիները ցանկանում են մեր անվանի մարդկանց դարձնել չեխովյան հարսանիքային ըններակներ : Չի՞ հաջողի, ընկերնե՛ր : Թույլ չենք տա : Չենք թողնի : (Յերկարած ծափահարությունները) :

Մի կարծեք, վոր նման դռեհիկները վոչ մի կապ չունեն կոմյերիտմիության հետ : Մոսկվայի մարդի և ապկովի ՄՏկայանում կա հիանալի տրակտորիստ, Ռիբկին աղղանուով : Այդ Ռիբկինը վերջերս պարզեատրվեց Աշխատանքի կարմիր դրոշի շքանշանով : Վերջերս նա մտավ կոմյերիտմիություն : Բայց ի՞նչպես ընդունեցին նրան կոմյերիտական դաստիարակները : Նա դեռ կոմյերիտական տօմս չատացած, նրան արդեն կոմյերիտմիության շրջանային կոնֆերենցիայի առաջին պատուամավոր են ընտրում : Իսկ այդ կոնֆերենցիայում նրան ընտրում են ուսյոնական կոմիտեյի առաջնորդ : Կոմյերիտմիության մեջ ել նա ինչի՞ պիտի ձգտի, յեթե նա առանց վորեւե աշխատանքի և, ինչպես ինքն անձամբ հասկանում ե, առանց վաստակի, դռեհկացնողների փութեռանդության շնորհիվ միայն, չատ բանի հասավ կոմյերիտմիության մեջ :

Այս բոլոր այլանդակությունները թեթև և թեթևամիտ վերաբերմունք են դաստիարակում թե իր նկատմամբ և թե կյանքի նկատմամբ :

Դուրս ե դալիս, վոր բարխական ե մարդը մեկ ասպարեզում իրեն յերեան բերի այնպես, ինչպես վայել ե մեր յերկրի առաջավոր քաղաքացում, վոր արդեն բոլոր մյուս ասպարեզներում նրա առաջ քաղաքաստ լինի տունն ու սեղանը : Հասան այն բանին, վոր սկսեցին մի քանի ստախանովականների պրոֆեսորներ

ամբացնել՝ տանը պարագելու համար։ Սակայն կուլտուրան, ինչ-ուն հայտնի յե, պատրաստի չի դալիս տուն։ Գիտելիքներ ձեռք բերելու համար պետք ե պայքարել, զիտելիքները պետք ե կըռվով, համառությամբ և աշխատանքով հաղթահարել։

Մեր ստախանովականները ցանկանում են և կարող են համառությամբ սովորել, նրանց գումարնորներ (տնային դատավարակ) հարկավոր չեն։ Պետք ե նրանց այլ յեղանակներով ողնել սովորելու, առանց գումարնորական խնամակալության, առավել ես, վոր այդ յեղանակով կարելի յե սովորեցնել միքանի տասնյակ մարդկանց, իսկ մեր յերկրում հաղարակոր ստախանովականներ կան և որ-ավուր նրանց թիվը գնալով շատանում ե։

Մարդու նկատմամբ հոգածար և ուշադիր լինելն ամենենին այն չե, վոր նրան ամեն բան պատրաստի տանք, կուշտ բարեկեցության զղացմունք դարդացնենք նրա մեջ, վորին միշտ հաջորդում և հաղեցումը։ Հոգածարությունը և ուշադիր լինելն ամենին այն չեն, վոր շողոքորթենք և շոյենք յերիտասարդին, նրա մեջ փոքր, քաղըննիական ինքնազոհություն դարդացնենք և դրանով նրա միջից դուրս վռնդենք մեր վեհ համեստության դդացմունքը։

Մեր հերոսներն արհամարհում են այլ շողոքորթությունը։ Մեզ հետ միասին նրանք վրդովվում են տեսնելով մի շարք յերիտասարդների այլանդակելու, հաշմանդամ դարձնելու, այլասերելու փաստերը։ Մենք պետք ե նրանց, այդ մարդկանց, այժմ առենք անողոք ճշմարտությունը, ինչպես այդ մեդ սովորեցնում և կուսակցությունը, ինչպես մեզ սովորեցնում ե ընկեր Ստալինը։

Յերեք մեր Ստալինը չի շողոքորթում յերիտասարդությանը։ Սակայն նրանից ո՞վ ե ավելի շատ սիրում ու հոգ տանում նրա մասին։ Շիտակ, անկեղծ, հաճախ անողոք ու դաւան ձշմարտության խոսքեր ե ասում նա մեղ, յերիտասարդությանո, խոսքեր, վորոնք լի յեն խորին ուշադրությամբ և հայրական սիրով։ (Յերկարաւոկ ծափահարություններ)։

Խորհրդային իշխանությունը յերիտասարդության առաջ բաց ե արել բոլոր դռները, բոլոր ճանապարհները—վորն ռւզում ևս ընտրի և նրանով ընթացիր։ Սակայն հաստատ քայլիր, համարձակ, համառությամբ, հաստատամտությամբ, խիզախիր, ձեռք բեր, նվաճիր աղնիվ աշխատանքով, ուսմամբ, հմտությամբ։ Ահա այդ բանում մենք պետք ե ողնենք յերիտասարդությանը, այդ

բանում հոդատարություն և ուշադրություն ցուցաբերենք և հաստապես արդար դաստիարակենք մեր յերկը յերկութառորդ սերունդը :

* * *

Մենք վերջացնում ենք մեր հաշվետու զեկոցումը համագումարին : Մեր սոցիալիստական հայրենիքի ժողովուրդն իր մեծ սիրով սիրում և Լենինյան կոմյերիտմիությանը : Մեր յերիտասարդությունը, կոմյերիտականներն ու կոմյերիտուհինները, ամբողջ յերկը հետ միասին, մեր ժողովրդի հետ միասին շատ են անել այս հինգ տարվա ընթացքում : Անել են վորովես կազմակերպիչներ, վորապես սոցիալիստական հասարակություն կառուցողներ, վորապես սոցիալիզմի անձնագուհ մարտիկներ :

Մեզանից յուրաքանչյուրին դաստիարակել ու աճեցրել եւ բոլշևիկների Մեծ կոմունիստական կուսակցությունը : Մենք հաջարտ ենք նրանով, վոր մեր անցած այս փառապահնծ ուղին մենք անցել ենք ընկեր Ստալինի աչքի տուած, նրա ուշադիր դեկավարությամբ : (Բուռն ծափահարություններ) :

Մեծ Ստալինը մեր յերիտասարդությանը բարձրացրեց Խորհրդային պետության առաջավոր մարդկանց մակարդակին : Մենք, Խորհրդային Միության յերիտասարդությունս, ստալինյան կովման յերիտասարդ հեղափոխականների—բոլշևիկների սերունդն ենք : (Բուռն ովացիա : Բոլորը վոտքի յեն կանգնում : Ազգային հանրապետությունների աղջիկների պատվիրակությունը նախագահություն և բարձրանում և ծափահարությունների վորոտի տակ ծաղկեփունք և նվիրում ընկեր Ստալինին) :

Մենք կոմունիզմի համար պայքարող յերիտասարդ մարտիկների ստալինյան սերունդն ենք : Մենք հպարտ ենք այդ պատվի համար և այն չենք արատավորի :

Մեր սերունդը կոմունիզմի նախաղուններին եւ գտնվում : Մենք անպարտելի յենք : Մենք ունենք նողատակի պարզություն : Մենք ունենք հաղթանակելու ստալինյան կամք : Մենք զինված ենք Լենինի-Ստալինի ուսմունքով : Մեղ զեկավարում և Լենինի-Ստալինի կուսակցությունը : (Բուռն ծափահարություններ) :

Մենք համարձակ նայում ենք ապագային : Մենք մեր ամբողջ կյանքը նվիրում ենք համայն աշխարհում կոմունիզմի հաղթանակի համար պայքարելուն : (Բուռն ծափահարություններ) :

Կեցցե յերիտասաբդության մեր ստալինյան վառառպանծ սե-
րունդը :

Կեցցե բոլշևիկների լենինյան անպարտելի կուսակցությունը :
Կեցցե նա, ով աճեցրել է մեղ, ով մեղ դաստիարակում է, ով
մեղ կոփել է, ով մեղ պատրաստում է դալիք մարտերին—մեծ
Ստալինը :

(Բուռն ծափահարություններ, վորոնի փոխվում են ովացիա-
յի : Բոլորը վուտքի յեն կանգնում : Բոլոր պատվիրակություններից
լսվում են վողջույնի բացականչություններ . «Կեցցե ընկեր Ստա-
լինը», «Ուռա», «Ուռա ընկեր Ստալինին») :

ՀԱՍՏԿՅԵՄ Խ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՌԻԹՅԱՆ
ԿԵՆՏԿՈՄԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ
ԸՆԿԵՐ ԿՈՍԱՐԵՎԿ ԱՐՏԱՍԱՆԱԾ ՅԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔԸ

Ընկերներ, մենք համաձայն ևնք կոմյերիտմիության կենտրոնական կոմյիտեյի աշխատանքի քաղաքատության հետ։ Այդքննադատությունը անհրաժեշտ եր և կարելի յեր ուժեղացնել։

Շատ ընկերներ ավելի փանգ առան ձեռք բերված հաջողությունների վրա և ավելի քիչ չափով՝ յեղած թերությունների վրա։ Առանձին ընկերների մոտ բացահայտորեն պակասում եր համեստությունը, յերբ խոսքը վերաբերում եր մեր նվաճումների դնահատմանը։ Նվաճումների մասին խոսելը հաճելի յէ, սակայն ավելորդ և նրանց մասին խոսելը, առավել ևս դրանք դերադնահատելը խիստ լինակար բան է։

Վորոշ ընկերներ համաձայնվեցին կենտկոմի դեկուցման հետ, բայց թէ ինչ-ինչ պատճառով անհրաժեշտ չամարեցին դործնականորեն քննարկել նրա կարևորագույն դրույթները։

Վերցնենք, որինակ, հարցերը, —ի՞նչպես հետազայտմ կազմակերպել յերիտասարդության ուսումը, յենելով տեղական պայմաններից, ի՞նչպես ավելի լավ դասավորել յեղած ուժերը և նորերը ներդրավել, ի՞նչպես բարձրացնել ակտիվի մակարդակը՝ յերիտասարդության մասսաների ուսման, կրթության ու դատիքարակության խնդիրները լուծելու համար—այս բոլոր հարցերը բավարար չափով չքննարկվեցին յելույթ ունեցող վորոշ ընկերների կողմէց։

Զեկուցման մեջ առաջադրվեց կոմյերիտմիության դեկավարումը յերիտասարդության կրթության և պատիարակության խնդիրների մակարդակին բարձրացնելու անհրաժեշտության դրույթը։ Այս դրույթը, ամբողջ կոմյերիտմիության հետազա

վերակառուցման մեջ հիմնականներից մեկը հանդիսանալով, ինչպես պետքն եւ չլարդացվեց վիճարանության ժամանակ յելույթ ունեցող առանձին ընկերների կողմից :

Մենք կհանդիպենք առանձին ընկերների բացահայտ չկամեց-մանը՝ կատարելու համարումարի վորոշումները յերիտասարդության դաստիարակման ու կրթության մասին։ Մեր կարծիքով այդ չկամենալու հիմքը վորոշ ընկերների այն վնասակար մոլորությունն եւ, վորոնք համոլված են, թե տնտեսական աշխատանքով զբաղվելով, նրանք անպայման կիրախուսումնեն։ Կոկսես, մասածում են նրանք, զբաղվել միջնակարգ դպրոցով, վո՞չ վոք ել քեզ չի նկատի, վո՞չ վոք ել չի խրախուսի այդ։

Բացարձակապես սխալ տեսակետ :

Յերիտասարդության կուլտուրայի բարձրացման համար, նրան կրթության ու դաստիարակության համար կատարված լավ ու ողտակար աշխատանքն ամենաջերմ աջակցություն կրտսնի մեր կուսակցության կողմից։

Մենք կհանդիպենք վորոշ կաղմակերպությունների չկամեց-մանը՝ զբաղվելու յերիտասարդության կրթությամբ և դաստիարակությամբ և այն պատճառով, վոր մենք տնտեսական աշխատանքի մասնակցելու ավելի շատ փորձ ունենք, քան կուլտուրական, կրթական աշխատանքի փորձ։ Յեզ դրա համար ել վոմանք կկանգնեն ամենաթույլ դիմադրության ճանապարհի վրա, կթարփառեն հին, ծանոթ, հայտնի ճանապարհով, կանեն այն, ինչին արդեն սովոր են։

Մենք պետք եւ ամենայն անողոքությամբ հաղթահարենք այդպիսի փորձերը, և մեր բոլոր կաղմակերպությունները, մեր ամրող ակտիվը վճռաբար ուղղենք մեր յերիտասարդության ուսումն ու դաստիարակումը կաղմակերպելու ճանապարհը։

ՀամԼԿՑԵՄ կենակոմի զեկուցման մեջ շատ ուշադրություն է դարձված յերիտասարդությանը դաստիարակելու մեթոդներին, իսկ վոմանք, մեզ թվում եւ, չեն ուղղում մտածել մեր յերկրի յերիտասարդի գաղափարական-քաղաքական և կուլտուրական ձևավորման այդ վճռական հարցի վրա։

Ակտիվի անձնական որինակի ուժը վճռում եւ յերիտասարդության կրթության և դաստիարակության գործը։ Վորքան ել այդ տիսուք լինի, բայց մեզ մտություն յերբեմն այնպես և ստացվում, վոր վորքան մեր կաղմակերպությունների մեջ առանձին ընկերներ ա-

վելի մեծ ղեկավար դիրք են դրավում, մենք նրանց մեջ այնքան ավելի հաճախ ենք նկատում անկազմակերպվածություն, շատախոռություն, անկարգապահություն, իսկ յերբեմն ել նաև անդրադիմություն :

Յերիտասարդության դաստիարակման մեջ մանրութենքը չեն լինում: Յերիտասարդությանը դաստիարակելը—այդ «ընդհանրապես և ամբողջությամբ վերցրած, հիմնականում ճիշտ» ճառեր արտասանել չեն:

Մենք ոլետք և մեր ակտիվից պահանջենք, վոր նա ճիշտ վարդի, կարգապահության և կազմակերպվածության անձնական որինակի ույժ ցույց տա: Յեթի վորոշ ընկերներ այդ չանեն, ասք անկախ մեր միության մեջ նրանց դրաված դիրքեց, կենտրոնական կոմիտեն հարկադրված կլինի շատ խիստ միջոցի դիմել—փոխել այդ ընկերներին, վորովես նոր պայմաններում աշխատելու համար անողետք ու անընդունակների: (Մաֆահարությունները):

Մեղ մոտ մարդիկ կան, վորոնք թեթևամտությամբ են հիվանդ և չեն ցանկանում լուրջ մտածել աշխատանքի վրա: Նրանց համար վորեւեն «պատասխանառու» վորոշման նախադիծ կազմելը առնենահարմար դործն ե: Նասում են սեղանի առաջ, հինգ բոսեյում դրում են վորոշման նախադիծը և կարծում են, վոր դա քըննադառառության յենթակա չեն և ոլետք և ընդունակի վոչ միայն հիմնականում, այլև ամբողջությամբ և լուսին: (Միծաղ):

Յես ցավում եմ, վոր մարզկոմների մի շարք քարտուղարներ չմասնակցեցին նոր ծրագրի նախազծի մշակման աշխատանքներին, նրանք կոսվորեյին, թե ինչպես պետք ե աշխատել փաստաթղթերի վրա: (Միծաղ: Մաֆահարություններ):

Վտանդ վա, վոր կոմյերիտմիության վերակառուցման գործնական աշխատանքը վորոշ ընկերներ կաշխատեն թաղել ծափահարությունների, ուղացիաների, վողջույնների և լրացուցիչ բանաձեւի տակ: Յես համագումարի հատուկ ուշադրությունն եմ հրամիրում այդ պարագայի վրա:

Կոմյերիտմիության կենտրոնական կոմիտեն ձեզանից վոչ վոքեց վոչ մի լրացուցիչ բանաձև չի պահանջում համադրումարի վորոշումների առթիվ: Վոչ միայն չի պահանջում, այլ արդելում ե դրանք գրել և ընդունել: (Մաֆահարություններ): Դրա համար ել մենք նախորոք ազատում ենք ձեզ այդ աշխատանքից: (Մաֆա-

հարություններ) : Սակայն մենք ձեղ պարտավորեցնում ենք զբաղվել սկզբնական կաղմակերպությամբ, նրա ամբողջ աշխատանքը վերակառուցել մեր համագումարի վորոշումների վորով:

Մենք մտածում ենք համադումարի աշխատանքը վերջանալուց հետո կենտրոնական կոմիտեյի բոլոր ղեկավար աշխատողներին ուղարկել տեղերը, վորագեղի ձեղ ողնեն կաղմակերպելու համապումարի վորոշումների կատարումը: Ակտիվի ժողով կաղմակերպելը ծանր ուղիւար բան չեւ: Դրա համար չենք ուղարկելու ընկերներին: Մենք ուղարկում ենք տեղերում գործնական աշխատանք կաղմակերպելու՝ համագումարի վորոշումները կատարելու համար: (Մավահարություններ):

Մենք պետք եւ վերանայենք մեր ամբողջ գործունեյությունը, փոխենք սկզբնական կաղմակերպությունների ու մեր ակտիվի աշխատանքը՝ յելնելով յերիտասարդության կրթության ու դաստիարակման խնդիրներից: Յեթե մենք այդ չանենք, նշանակում եւ մենք վոչինչ չենք անի:

Մենք պետք եւ վերջ տանք ալելույականության առանձին տարրերին, վորոնք, դժբախտաբար, մեղ մոտ տեղտեղ կան: Վոչ վոք ձեզանից չի պահանջում, վոր դուք և՛ տեղին, և՛ անտեղի յերդվեք յեղած և ասպալա վորոշումներով: Ո՞ւմ ե պետք այդ: Վո՞չ վոքի պետք չի այդ:

Փորձը ցույց եւ տալիս, վոր յերբեմն վորոշումներով յերդում են, վորագեղի դրանք չկատարեն:

Յուրահատուկ ալելույականության տարրերը մեղ մոտ կան: Յուրաքանչյուր տեղական կաղմակերպության մեջ կդտնվեն այնպիսի պատրաստակամ հուետորներ, վորոնք գործը, աշխատանքը, անհրաժեշտ քննադատությունը ճգնում են նենազավորինել իրենց կոմիտերի կատարական ղեկավարների յերբեմն անտեղի մեծարմանը, նրանց քաղադությունների և ծառայությունների միաւարանմամբ:

Յեթե արմատախիլ չանենք մեր մի չարք կաղմակերպություններում սահմանվող այդ մողան, ապա այդ կաղմակերպություններին կսպառնա անլրդով ինքնասիրահարկածության վտանգը, վորի ժամանակ չի կարող լինել բոլէկեկյան աշխատանք, բոլէկեկյան ինքնաքնաղադատություն:

Եւ ի՞նչ քննադատություն կարող եւ լինել, յերբ համարյայուրաքանչյուր հուետոր իր պարտքն եւ համարում հայտարարել. «Մեր մարտական քարտուղարի ղեկավարությամբ», «Նրա անձ-

նական անմիջական ոգնությամբ», «նրա անձնական միջամտության շնորհիվ» և այլն, և այլն:

Սա մի բանի նման չե: Դա դործնականորեն չի հնչում: (Մափահարություններ):

Չի կարելի ասել, թե մեր մեջ չկան այնպիսի մարդիկ, վորոնք նման բանալոր վարժությունների հետևից ընկերով մոռանում են դվասալորը—աշխատանքը: (Մափահարություններ):

Թերեւս սա արվում ե նրա համար, վորպեսզի պաշտպանեն իրենց զեկատվարությունը: Շնորհակալություն, ընկերներ, այսպիսի բարը դիտաւլորության համար: (Միծաղ: Մափահարություններ):

Չեր զեկավարությանը պաշտպանեցեք այնպես, ինչպես մենք ենք ձեզ պաշտպանում (ծիծաղ, ծափահարություններ), այսինքն բոլշևիկյան սուր քննադատությամբ:

Զայներ—Շիշու ե:

Եերը դուք դամիս եք կենտրոմ, այստեղ ձեղ շողոքորթ խոսքեր չեն ասում: Խնդրեմ, դուք ել մեղ այդպիսի բառեր մի ասեք: Յուլի ուղում եք մեղ ոլաշտպանել—որյելտիվ յեղեք մեր վերաբերմամբ: Լալի համար խրախուսեցեք, վատի համար—քննադատեցեք:

Ո՞ւմն ենք մենք պարտավիան մեր հաջողությունները:

Բոլշևիկյան կուսակցության կենտրոնական կոմիտեյի զեկավարությանը:

Աշխատանքի հաջողությունները միայն ձեր անձնական հատկություններին մի վերադրեք: Դեկավարի անձնական հատկությունները—դա հաղթանակի պայմաններից մեկն ե, սակայն հաղթանակը վերջնականապես վճռում ե զեկավար կոլեկտիվի հատկությունները և այդ կոլեկտիվին ճիշտ զեկավարումը:

Կուսակցական դեկավարությունն անմիջելի պայմանն ե, առանց վորի մենք չենք կարող հաջողությամբ առաջ շարժվել: (Բուռն ծափահարություններ):

Մեղ համար ամենալավագարը, ընկերներ, դա ինքնասիրահարությունն ե, մեր կողմից մեղ վերադնահաստելու: Կոմիտեիտմիության հաջողություններն արդյունք են մեր ակտիվի ստացած կուսակցական դաստիարակության, արդյունք են ամբողջ կոլեկտիվի աշխատանքի:


Եւս համագումարին, Լենինյան կոմիտեիտմիության ամբողջ

ակտիվին կոչ եմ անում՝ ճանապարհի վրայից սրբել ամենույնին, վոր նեխված ե, մտացածին, անբնական մեր աշխատանքում։ Յես կոչ եմ անում կոմյերիտական ակտիվի բոլոր ողակների շարքերում մարտականորեն բոլշևիկյան կազմակերպվածություն մտցնել, բոլշևիկորեն նետվել նոր խնդիրների կատարմանը։ Մենք դրանք, ընկերներ, կկատարենք, վորովհետեւ այդ մեղանից պահանջում ե Համկ(բ)կ Կենտկոմը, այդ մեղանից սպասում ե ընկեր Ստալինը։ (Բուռն, յերկար ժամանակ չդադարող ծափակարգ ծափակարգ ծափակարգ յուներ։ Բոլորը վատի յեն կանգնում։ Դաելինի բոլոր ծայրերից տարբեր լեզուներով վորդույնի բացականչություններ են լսվում ընկեր Ստալինի պատվին, Համկ(բ)կ Կենտկոմի պատվին)։


ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՅԵԿ
ԿՈՄՅԵՐԻՏԱՄԻՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀԱՅԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԸՆԿ. Ա. Ա. ԱՆԴՐԵՅԵՎԻ ՃԱՌԸ
ՊԱՍՏԿՑԵՄ X ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ
1986 թ. ԱՊՐԻԼԻ 16-ԻՆ

11. DECIMI. Tunc. C. L. S. I. P. D. C.
12. DECIMI. Tunc. C. L. S. I. P. D. C.
13. DECIMI. Tunc. C. L. S. I. P. D. C.



Ա. Ա. Անդրեասյան



Ընկերներ, ՀամեԿ(բ)կ կենտրոնական կոմիտեյի հանձնարարությամբ թույլ տվեց բոլշևիկյան ջերմագին վողջույն հաղորդել Անինյան կոմյերիստիության Խ համագումարին։ (Թուան յերկարաժամկեր ծախահարություններ։ Բացականչություններ։ «Կեցցե՛ ընկեր Ստալինը», «Ուռա՛»)։

ԽՍՀՄ-Ն ՀԱՆՐԵԱՆԱԿԱԾ ՍՈՅԻԱԼԻԶՄԻ ՅԵՐԿԻՐՆ Ե

Ընկերներ, Անինյան կոմյերիտմիության Խ համագումարը գումարվեց այն հակայտական աշխատանքից հետո, վոր խորհրդային իշխանությունը և մեր յերկրի աշխատավորությունը ՀամեԿ(բ)կ-ի ղեկավարությամբ կատարել են սոցիալիստական շինարարության բազմազան առաջարեղեջրում։ Անինյան կոմյերիտմիությունն ամենաակտիվ մասնակցությունն ե ունեցել այդ ամբողջ աշխատանքում։

Ընկեր կոսարենիլ զեկուցման մեջ բազմակողմանի կերպով ծավալվեցին Անինյան կոմյերիտմիության անցած ճանապարհի հանրադումարները և նրա առաջիկա աշխատանքի խնդիրները։

Յերկրի ընդհանուր գրությունը վերջին տարիներս այնքան շատ և փոխակեր, վոր հնարավոր չե վորմեն համառոտ ընդհանրացումով արտահայտել այդ բոլոր փափոխությունները։

Սակայն, կարելի յե առել մի բան՝ այն, վոր 1922 թվականին մեծ Անինի տված այն օրանողամբը, վոր մեր յերկրի նեղական յերկրից դարձնենք սոցիալիստական յերկրը, կատարված ե։ (Ծափահարություններ)։

Արդարեւ, ընկերներ, յեթե վերցնենք սոցիալիզմի առանձին հասկանիները, ապա ինչո՞վ պետք ե տարբերվի նոր հասարակակարգը, սոցիալիզմի հասարակակարդը, կապիտալիստական հասարակակարդից։ Յեթե վերցնենք այն հիմնական սկզբունքները, վոր ձևակերպել են դիտական սոցիալիզմի ու կոմունիզմի հիմնադիրը-

ները՝ Մարքսը, Ենգելսը և մեր հեղափոխության նախապատրաստման ու իրականացման ընթացքում զարգացրել են Լենինն ու Ստալինը, և մեր յերկրի ներկա դրության վրա հայացք զցենք այդ սկզբունքների իրականացման տեսակետից, ապա զործը հետևյալ պատկերը կունենա. բացի պրոլետարիատի դիկտուտուրայից, վորն, իհարկե, հանդիսանում ե սոցիալիզմի հիմնական պայմանը և վորը, ինչպես դուք գիտեք, մեզ մոտ լրիվ իրականացված ե Հանձին խորհրդային իշխանության, —ապա սոցիալիզմի առաջին հատկանիշն այն ե, վոր բանվոր դասակարգն իր ձեռքում իր սեփական սոցիալիստական խոշոր արդյունաբերությունն ունի: Առանց այդ կարևորագույն պայմանի սոցիալիզմ չե կարող լինել: Միմիշայն մանր-բուրժուական դասակարգերի ներկայացուցիչները, այդ թվում նաև նարողնիմիներն անցյալում, յերազում ելին այնպիսի սոցիալիզմի մասին, վորը կարող եր լինել նաև առանց խոշոր արդյունաբերության: Բայց դրանք միայն վնասակար, մանր-բուրժուական յերազներ են: Իրականության մեջ առանց խոշոր արդյունաբերության վոչ մի սոցիալիզմ չե կարող լինել:

Մենք ցարիզմից, կալվածատմբերից ու կապիտալիստներից ստացանք, կամ՝ ավելի ճիշտ՝ խլեցինք աղքատ, աղքադային մի յերկիր, թույլ և կիսակլործան արդյունաբերությամբ:

Այժմ, ընկերներ, մենք կարող ենք ասել, վոր ունենք խոշոր առաջնակարգ սոցիալիստական արդյունաբերություն, վորն արտադրության մեջ իր ունեցած տեսակարար վեցուկ, արժեքային արտահայտությամբ, կազմում ե մեր յերկրի ամերող արտադրանքի յերեք քառորդ մասը, այսինքն՝ գերակշռող, հրամանառարական դրագում: Դեռ 1927 թվականին մեր արդյունաբերությունը տալիս եր 13,3 միլիարդ ռուբլու արտադրանք, իսկ 1935 թվականին մեր արդյունաբերությունն արդեն տվեց 65,9 միլիարդ ռուբլու արտադրանք:

Այժմ մենք մեր յերկրում ունենք արտադրության ամենաբարձ-մապիսի ճյուղեր, վորոնք առաջ չեային մեզ մոտ ե վորոնց նկատմամբ մենք ուղղամկի կախում ունեցինք կապվածալիտական յերկրներից: Այժմ մենք ունենք արտադրության այդ ճյուղերը, սակայն չափազանց կարևոր և նաև այն, վոր արդյունաբերության հետ միասին մենք ունենք նաև լավ աշխատող սոցիալիստական արտանսպարտ: Այդպիսով սոցիալիզմի առաջին և հիմնական պայ-

ժանը լրիվ ու ամբողջովին կատարված ե մեղ մոտ: (Բուռն ծափակարգություններ):

Սոցիալիզմի յերկրորդ պարմանը, ընկերնե՛ր, հանրայնացված դրաշտանակառության առկայությունն ե: Դեռ քիչ ե ունենալ միայն խոչըս արդյունաբերություն: Պետք ե ունենալ նաև սոցիալիստական գյուղատնտեսություն: Մեղ մոտ սոցիալիզմ չեր կարող լինել, յեթե մենք չկարողանայինք հսկայական քանակությամբ անհատական գյուղացիական տնտեսությունները սոցիալիստական ռելիսերի վրա վորխաղբել կոլեկտիվացման միջոցով:

Այժմ մենք դիտենք, վոր մեր գյուղատնտեսությունը վերածվել և խոչըս հանրային տնտեսության հանձին խորհանակառությունների ու կոլտնտեսությունների, վորոնք զինված են հարյուր հաղարավոր տրամադրություն, տասնյակ հաղարավոր կոմբայններով ու հարյուր հաղարավոր ամեն տեսակ բարդ գյուղատնտեսական մեքնանաներով:

Գյուղատնտեսական արտադրության մեջ կոլտնտեսությունների ու խորհանակառությունների տեսակարար կշիռը 1935 թվականին արդեն կազմում եր 93,6 տոկոս: Այդ վկայում ե, վոր մենք, բացի մնացած վորքաթիվ անհատական տնտեսություններից, արդեն լիովին ավարտել ենք մեր գյուղատնտեսության փոխադրումը սոցիալիստական ռելիսերի վրա: Այսպիսով սոցիալիզմի յերկրորդ, գժվարագույն և կարենորագույն պարմանն ես մենք կարող ենք մեր բոլցելիքան կուսակցության կողմից լիովին կատարված համարել: (Բուռն, յերկարանկ ծափակարգություններ):

Այդ կապակցությամբ, ընկերնե՛ր, նաև այն սահմանը, վորն առաջ բաժանում եր քաղաքք գյուղից, գյուղատնտեսությունը՝ արդյունաբերությունից, այն հակասությունները, վորոնք առաջ ուղյություն ունեյին այդ յերկու բևեռների միջև, այժմ ջնջվում են բալոր տեսակետներից, և՝ արտադրության պարմանների տեսակետից, և՝ կուլտուրական ու նյութական կյանքի տեսակետից:

Մեր յերկրում սոցիալիստական արտադրության տեսակարար կշիռը 1936 թվականին պետք ե կազմի 98,5 տոկոս, այսինքն՝ ինչ-վոր չնշին մեկ ու կես տոկոսը դեռ վերաբերում ե վոչ-սոցիալիստական հատվածին:

Այսպիսով մենք կարող ենք ասել, վոր այն հինգ տնտեսաձևերի փոխարեն, վորոնց մասին լենինն ասել և 1921 թվականին, — նաև ապեստական, մանրապրանքային, մասնավոր տնտեսատիրական

կասպիտալիդմի, պետական կապիտալիդմի ու սոցիալիդմի աշխատաձևերի փոխարեն, —մենք հասանք, ինչպես առել ե ընկեր Ստալինը դեռ Համեմ (թ)Կ XVII համազումարում, սոցիալիստական տնտեսաձևելի անխախտելի տիրապետությանը:

Սոցիալիդմի յերրորդ կարևոր հատկանիշն ե զասակարգային հասարակության վերացումը: Ինչպես դիմեք, ընկերներ, բանվոր դասակարդն ու կոլտնտեսային դյուլացիությունը մեր բուշկելյան կուսակցության ղեկավարությամբ, կոմյերի հության ամենաակտիվ մասնակցությամբ, հաջողությամբ մերացությին շահագործող բոլոր դասակարդերը մեր յերկրում: Այդ աշխատանքը կարելի յե հիմնականում ալյարտված համարել, չնայած այդ վոչնչացված դասակարդերի առանձին բնկորները փորձեր են անում դդալ տալ իրենց լինասարարության ու անուրի դանազան գործողություններով, իրենց բուրժուական կուլտուրան, խուլիդանությունը և այլն յերիտասարդության առանձին խռովերի մեջ խցկելով: Այդ դասակարդերը մեղ մոտ ընդմիշտ դուրս են յեկել թատերաբեմից և այլևս չեն վերադառնա: (Ծափահարություններ):

Բայց կարևոր ե, ընկերներ, մատնանշել նաև մի այլ բան, այն, վոր հասարակության վերակառուցման պրոցեսում, շահագործող դասակարդերի վերացման պրոցեսում, փոխվեց նաև հենց պրոլետարների դասակարդի հին եյությունը: Մի՞թե կարելի յե, որինակ, այսորված բանվորին համեմատել նախկին բանվորի հետ, մի՞թե կարելի յե մեր բանվորին իր եյությամբ համեմատել կապիտալիստական յերկերների պրոլետարի հետ, վորը դուրի եւ արտադրության բոլոր միջոցներից, բացի իր աշխատանքային ուժից, վորն իրեւ ապրանք վաճառում և կաղիտալիստին: Մեր բանվոր դասակարդը կանչնած ե իշխանության գլուխ, մեր բանվոր դասակարդը արտադրության հանրայնացված միջոցների սեփականատերն ե: Դրանով իսկ մեր պրոլետարիատը, վերակառուցելով դասակարդակային հասարակությունը, վոչնչացնելով շահագործող դասակարդերին, փոխեց նաև իր նախկին եյությունը: Նույնը կարելի յե ասել նաև դյուլացու վերաբերմանը:

Մի՞թե ներկայիս դյուլացի-կոլտնտեսականը վորեւ չախով նման ե անցյալի դյուլացուն: Վոչ, ընկերներ: Առաջ դյուլացին, ունենալով մի թիզ հողամաս, ըստ եյության աշխատում եր կուլակի համար, կալվածատիրոջ համար, մշտապես նրա ճորտը

լինելով։ Այժմ կոլտնտեսականը խոշոր հանրային տնտեսության տերն և կոլտնտեսականի կյանքն ու նյութական ոլոյմանները բնագ նման չեն նախկին գյուղացու կյանքին և նյութական պայմաններին։ Ահա տեսնում եք, թե ինչպիսի խոշոր փոփոխություններ են կատարվել նաև այդ դասակարգերի՝ պրոլետարների դասակարգի և դյուլացինների դասակարգի եյության մեջ։ Ասենք, դնալու ավելի յե նշանում նաև բանվորների և կոլտնտեսային դյուլացիության նախկին տարրելությունը։ Այս բոլորը մեղ կակապար իրավունք և տալիս ասելու, վոր սոցիալիզմի յերրորդ կարևորագույն պայմաններ՝ դասակարգային հասարակության վերացումը, հաջողությամբ կենսագործում և մեր բուհեկելցան կուսակցությունը։ (Մափահարություններ)։

Սոցիալիզմի չորրորդ, շատ կարևոր պայմանն այն և, վոր սոցիալիզմ չի կարող լինել, յեթե մարդիկ մարդիքի մեջ են և աշխատանք չեն կարողանում դանել, յեթե արմատախիլ չի արված վործադրկությունը։ ԽՍՀՄ-ում խոշոր արդյունաբերություն ստեղծվելու և նրա աճման ու կոլտնտեսությունների կաղմակերպման հետ միասին ընդունված անհետանում և աշխատավորության ամենալատթար պատուհասը՝ գործադրվելությունը։ Մեղ մոտ գործադրկություն չկա, չի լինի և չի կարող լինել։ (Մափահարություններ)։

Մեր յերկրում, ընկերներ, գերբնակչության վտանդ չկա։ Զիա նուև արդրանքի դերարտադրության վտանդը։ Վորքան շատ մարդ լինի, այնքան լավ մեղ համար, վորքան շատ արդանք լինի, այնքան լավ։ Թոփչչներով ու խոչընդուներով դարձացող կառիտավիստական արտադրությունը մշտապես կանոնած և դերբնամբ չության, ապրանքների դերարտադրության հարցերի առջև, ձգնաժամերի առջև, արտադրության վորոշ սահմանների առջև։ Այնուղ մարդիկ մի կողմից մեռնում են սովոր, իսկ մյուս կողմից արդանքներին տեղ չկա, և արտադրությունը կրճատվում է։ Այդ և կապիտալիստական արտադրության հակասությունը, մի արտադրություն, վորը հիմնված և հալնելաւ արժեքի արտադրման վրա, բանվորների շահագործման վրա, մենք կործանեցինք այդ հիմքը։ Մեղ մոտ արտադրությունը կառուցված և այլ հիմքի վրա՝ բավարարել սպառումը, բարելավել աշխատավոր մասսաների կյանքը և ե'լ ավելի ընդարձակել սոցիալիստական արտադրությունը՝ աշխատավորների նյութական կյանքը բարելավելու հա-

մար, այս պատճառով մեզ մոտ չի սահմանափակված մթերքների արտադրությունը և սպասումը: Նրանց մոտ կան տասնյակ միլիոնավոր գործազուրկներ, իսկ մեզ մոտ գործազուրկ չկա: Զնայած մեզ մոտ ապրանքի արտադրությունն ավելացել ե, որինակ՝ ընթացիկ տարվա առաջին յեռամյակում արդյունաբերական առանձնաբերությունն ավելացել ե 31,1 տոկոսով՝ համեմատած անցյալ տարվա առաջին յեռամյակի հետ, այնուամենայնիվ մենք վոչ միայն աշխատանքային ուժի ավելցուկ չենք նկատում մեր ձեռնարկություններում, այլև, ընդհակառակը, մեր արդյունաբերության միջանի ճյուղեր այժմ ել աշխատանքային ուժի պահպառություն են դուռը:

Ահա սոցիալիզմի չորրորդ պայմանը, վորը լրիվ կատարված ե մեզ մոտ բանվորների նյութական որայմանների արմատական բարելայիման հետ միասին: Վերցնենք, որինակ, աշխատավարձը, վորը համեմատած 1928 թվականի հետ բարձրացել ե ավելի քան 3 անգամ: Բանվորի տարեկան միջին աշխատավարձն այն ժամանակ կազմում եր 730 ռուբլի, իսկ այժմ, 1936 թվականին, կազմելու յի 2465 ռուբլի: (Մաֆահարություններ):

Ընկերներ, պետք ե ասել, վոր դրա հետ միասին արմատապես փոխվել ե նաև մեր խորհրդային յերիտասարդության դրությունը: Կապիտալիզմի պայմաններում յերիտասարդությունը յենթակա յե ամենատմարդի շահագործման ու նախ և առաջ գործադրկության և կապիտալիզմի մյուս «հրաշալիքներին»: Կապիտալիստական արտադրության մեջ յերիտասարդության աշխատանքն ամենաեժան աշխատանքն է: Իսկ մեր խորհրդային յերիտասարդությունը նյութական պայմանների տեսակետից վոչ մի այն չի տարբերվում արտադրության մեջ բանվորների ու կոլտնտեսականների մյուս մասսայից, այլև դեռ ավելին՝ հաճախ ամենապատվալոր տեղերն ե գրավում և պատասխանատու պօստերը, ամենքից ավելի մեծ նախաձեռնություն հանդես քերելով մեր սոցիալիստական շինարարության բոլոր ճակատամասերում:

Կատարված ե նաև սոցիալիզմի մի շատ կարևոր պայմանն ել: Մեզ մոտ ամեն ինչ արված ե կնոցն առաջադրելու և նրան մեր ամբողջ սոցիալիստական շինարարության իսկական ու իրավահավատը մասնակիցը դարձնելու համար: Մեզ մոտ չկան աշխատանքի ու դիտության այնպիսի ճյուղեր, վորտեղ վիճն ամենալցություն չցուցաբերի:

Մեր բոլշևիկյան կուսակցությունը հաջողությամբ լուծեց նաև ազգային հարցը: Խորհրդային Միության բոլոր ժողովառողջության իրավահամարատար են և հավասարաշատի մասնակցում են նոր կյանքի շինարարությանը: Խորհրդային Միության յուրաքանչյուր, թեկուղ ամենափոքր աղջության լեզուն, կուլտուրան նպաստավոր պայմանների մեջ են դրված իրենց զարգացման համար: Մեղ մոռ չկան ճնշվողներ և ճնշողներ: Այսպիսով սոցիալգործիքների այդ պայմանն եւ լրիվ ու ամբողջովին իրագործված է: (Մականաբարություններ):

Այս ամբողջ վիթխարի աշխատանքն ամենավերջին ըրջանում պակվում է արդյունաբերության և դյուլատնտեսության մեջ տարածվող ստախանության շարժման հղոր թափով, վորը նոր սահման և անցկացնում մեր խորհրդային հասարակակարգի և բռնը յուրական հասարակակարգի մեջն՝ աշխատանքի ավելի բարձր արտադրողականությամբ, քան այդ կա կատարալիստների մոտ, մեր յերկրի այդ նոր, ավելի վարթամ ծաղկման հիմքով: Ստախանությանները, տեխնիկային տիրապետած, առհմաններ չճանաչող, այդ սահմանները խսրահկող ժարդիկ ճանապարհ են հարթում սոցիալիստական հասարակության ավելի բարձր առտիճանին անցնելու համար: Յել այդ եւ, ընդերնե՛ր, այն մեծադրույն նշանակությունը, վոր ունի ստախանության շարժումը:

Ահա այն արմատական փոփոխությունները, վոր կատարվել են մեր մեծ յերկրում:

Այսպիսով, հեղափոխության հանդեպ նվազողների, ապա նաև նրա ուղղակի թշնամինների՝ Տրոցիկու, Զինովյանի, Կառմենելի ու մյամաների այն բոլոր պնդումները, թե մի յերկրում չի կարելի սոցիալիզմ կառուցել—մնացին իրեւ մի խղճուկ վնդստոց: (Մականաբարություններ): ԽՍՀՄ-ում սոցիալիստական հասարակակարգը ստեղծված է: Խորհրդային Միությանն առ բարիուու եւ, ուժեղ, նրա սահմանները պաշտպանում են մեր քաջարի կարմիր բանակը: (Մականաբարություն): ԽՍՀՄ-ն սիրելի հայրենիք և դարձել վոչ միայն իր ժողովրդի համար, այլև դարձել և այնպիսի յերկիր, վորը սիրում են համայն աշխարհի աշխատավորները: (Մականաբարություններ):

Այս բոլորին մենք հասանք մեր բոլշևիկյան կուսակցության և նրա կենարունական կոմիտեյի լենինյան ճիշտ քաղաքականության շնորհիվ և մեր հարազար ու մեծ Ստալինի հանճարեղ

դեկավարությամբ։ (Բուռն ծափակարությաւմներ։ Պատգամավար-
մերը վասի յեն կանգնում։ Բացականչություններ՝ «Կեցցե՛ ընկեր
Ստալինը», «Ընկեր Ստալինին ուռա՛», «Խայ ժիվե վելիկի Ստա-
լին, ուռա՛»)։

Այսպես, ուրեմն, ընկերնե՛ր, մեղ մոտ ստեղծված են բոլոր
անհրաժեշտ պայմանները սոցիալիստական արտադրության նոր
վերելքի և հաղթանակների համար։ Մենք ունենք խոշոր արդյու-
նաբերություն, այժմ մենք ունենք խոշոր սոցիալիստական դյու-
ղատնտեսություն։ մենք ունենք հսկայական քանակությամբ ամեն-
տեսակ առաջնակարգ մեջնամներ, վորոնց թիվը տարեցտարի զնա-
լով ավելանալու յե մեր գործարաններում և կոլտնտեսային դաշ-
տերում։

Մեր մեծ յերկիրն ունի հսկայական քանակությունը ամեն տե-
սակ բնական հարստություններ, վորոնց շնորհիվ նա անկախ ե-
կառանում մյուս յերկիրներից։ Մենք ցանկություն ունենք առաջ
գնալու, մարտնչելու նոր հաղթանակների համար, հավասար մանենք
այդ հաղթանակների նկատմամբ։ Յեկ վերջապես այժմ մենք ու-
նենք նոր, հիանալի մարդիկ սոցիալիստական շինարարության բո-
լոր ասպարեզներում։

ԿՈՄՅԵՐԻՏՍԻՌՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՐԻՏՍԱՄԱՐԴՈՒԹՅԱՆ

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՅԵՎ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆ Ե

Ի՞նչ ե պետք մեղ այժմ։ Մեղ հարկավոր են, ընկերնե՛ր,
ուսում, դիտություն, վորովիճետե միայն դիտությունն և վորովի-
ւու գործը բոլոր ասապարհներում։ Յևս արդեն ասացի, վոր մեղ
մոռ՝ ԽՍՀՄ-ում արտադրական ուժերը վոչնչով չեն սահմանա-
փակված։ Արտադրության բոլոր կյապանքները վերացված են։
Միմիայն դիտելիքների որակառությունը, կիսազրադիտությունը
և ճաշճացումը կարող են խոչընդուռ հանդիսանալ մեր գործին։
Անգրադիտությունն և կիսազրադիտության վերացումը, ավելի լավ
ուսուցումը դպրոցներում, բանվորների ու կոլտնտեսականների
տեխնիկական կրթության բարձրացումը կվոչնչացնեն այդ վեր-
ջին խոչընդուռը, վորպեսզի ավելի վիթխարի հաղթանակներ ձեռք
բերվեն կոմունիստական հասարակության կառուցման գործում։
Ահա, ընկերնե՛ր, թե վորտեղից ե բջիռում այն հատուկ ուշադրու-

թյանը, վոր նվիրում և կըթության հարցերին մեր բոլէկիկան կուռակցության կենտրոնը և անձամբ ընկեր Ստալինը: (Մականուրաքյուններ): Ահա! թե ինչու ուսումը դառնում և կենինյան կոճյերի խության կենտրոնական խնդիրը: Կոմյերի խությունն ամբողջ խորհրդային յերիտասարդության ուսուցման կաղմակերպիչն ե: Ի՞նչպիսի ուսումն մասին և խոռքը: Այդ հարցին մենք միայն այսպիս պատասխանենք. այժմ մեզ համար կարեւոր և ամեն տեսակ ուսում գիտությունների լույր նյուղերում, ոկտած անշրջադիառության ու կիսադրագիտության մերացումից մինչև դիտահետազոտական ուսումը:

Ինչպես դուք վկանք, խորհրդային իշխանությունը և մեր կուռակցությունն արդեն քիչ բան չեն արել մեր յերկրում կուշտուրայի և կըթության դարձացման ասպարեզներում: Կարելի յերբեւ որինակ վերցնել մի քանի թիվ, համեմատալու համար, թե կուտուրական ինչպիսի հսկայական աշխատանք և կառտարկել ԽՍՀՄ-ում, անցած ժամանակիշրջանում: Տարբական և միջնարկարդ գրպացների աշակերտների թիվը հեղափոխությունից առաջ՝ 1914 թվականին, կազմում եր 7.800.000 հոգի, իսկ 1936 թվականին տարբական ու միջնարդ գոլրոցների աշակերտների թիվը կազմելու յե 27.935.900 հոգի (ծափահարություններ), այսինքն՝ համարյա չորս անգամ ավելի: Այդ նշանակում եւ, վոր մենք հասանք յերեխանների գլխովին ընդդրկմանը մեր գոլրոցներում: Բացի դրանից տեսնիվումների աշակերտների թիվը համապատասխանորեն կազմում եր մոտ 48 հազար հոգի, իսկ այժմ՝ 740 հազար հոգի: Տեսնիվական և ընդհանուր բարձրագույն ուսումնական համարտություններում կար 124 հազար հոգի, այժմ՝ 509 հազար հոգի: Դրանով բնալ չեն սպասմում ուսուցման այն բոլոր տեսակները, վոր ունենք մենք մեր յերկրում: Մեծ թվով մարդկի ոռյորում են նաև ֆարմործուսներում, հասակավորների գործարանային դպրոցներում, կորոնատեսային դպրոցներում, դյուղատներության համար դանարան կաղըեր պատրաստող դասընթացներում և այլն:

Անգրադիտության վերացման ասպարեզում մենք մեծ հաջողություններ ունենք: Հեղափոխությունից առաջ մեզ մոտ 8-ից մինչև 50 տարեկան բնակիչների 70 տոկոսն անդրագետ եր, իսկ այժմ այդ հասակն ունեցող անդրագետների թիվը կազմում և մոտ 8—10 տոկոս: Կատարված ամբողջ կուրսուրական աշխատան-

քի շնորհիվ յերկիրը դուրս հանվեց տղիտության ու խավարի ծովից, սակայն այդ դեռ քիչ է: Այժմ մեղ քիչ և հետաքրքրում ուսումնական հաստատությունների թիվը, բացի տարրական ու միջնակարգ դպրոցներից, վորոնք մենք շարունակելու յենք կառուցել ուժեղ թափով: Խոկ տեխնիկումների և բարձրադրույն ուսումնական հաստատությունների ու այլ դպրոցների թիվը մեղ մոտ արդեն քիչ չե: Այժմ մեղ հետաքրքրում և դլխավորապես ուսուցյան վիճակը, նրա կաղմակերպումն ու վորակը: Պետք և խոսքովանենք, զոր չնայած ձեռք առնված միջոցներին ու այն մեծ աշխատանքին, զոր կատարվեց դպրոցում զործի դրվածքը բարելավելու համար, սկսած տարրականից մինչև բարձրադրույն դպրոցը, մեր դպրոցի բոլոր ողակներումն ել դրությունը դեռ անբավարար և, մանավանդ այնպիսի կարևոր առարկաների նկատմամբ, ինչպիսիք են մայրենի լեզուն, պատմությունը և աշխարհադրությունը: Կարիք չկա բաղմաթիվ որինակներ բերելու ձեղ այդ պարեղից, յերբ դպրոցն ավարտող յերեխաները և բարձրադրույն ուսումնական հաստատությունն ավարտող ուսանողները լավ չգիտեն պատմությունը, չեն կարողանում դրադեռ զրել, չեն կարողանում հաշիվներ անել՝ չտիրապետելով մաթեմատիկական անհրաժեշտ զիտելիքներին:

Վո՞րեղից են առաջ դալիս այս թերությունները: Անշուշտ, մինչև այժմ ել դեռ վաս դասավանդումից, դասադրքերի վաս վորակից և նրանից, զոր դպրոցների ուսուցիչների դդալի մասը դեռ ինքն ել բավականաչափ դրադեռ չե: Միայն մի քանի թիվ կրերեմ մեր ուսուցիչների անբավարար գրադիտությունը և նրանց կրթության ցածր մակարդակը ցույց տալու: համար:

ԻՄՅՈՒՀ տարրական դպրոցներում 1935 թվականին ուսուցիչների 34,8 տոկոսը տարրական կրթություն ուներ, 63,7 տոկոսը՝ միջնակարգ կրթություն և միայն 1,5 տոկոսը՝ բարձրադրույն մանկավարժական կրթություն: Թերի միջնակարգ և միջնակարգ դպրոցներում ուսուցիչների 9 տոկոսն ուներ տարրական կրթություն, 66 տոկոսը՝ միջնակարգ կրթություն, և միայն 24 տոկոսը՝ բարձրադրույն կրթություն: Ահա թե ինչու ուսուցիչների կրթության անբավարար մակարդակը դպրոցի ամենաթույլ հակառամասն և կազմում:

Պետք և, ընկերներ, խոստովանել, վոր դպրոցի դրությունն առայժմ դեռ բացահայտորեն անբավարար մակարդակը դպրոցի ամենաթույլ հակառամասն և կազմում:

մը և մանալանդ անձամբ ընկեր Ստալինը յեռանդուն լծվել են աշխատանքի այդ ճակատամասին։ Պարզ է, վոր մենք ոնսպայման կողղենք այն։ Բայց դրա համար հարկավոր և շատ լրջորեն աշխատուել։

Այդ ասպարեզում կոմյերիտմիության դերը հսկայական կլինի, բայց առայժմ պետք ե բացելիքաց առել, վոր կոմյերիտական կազմակերպությունները ինչպես հարկն և չեն լծվել այդ դործին և գեռես պառայտ են դալիս դպրոցի շուրջը։

Ուսուցչության նկատմամբ պարզորոշ կերպով լուրջ հոգածարությունն արտահայտվեց կենտկոմի և ժողկոմիուրիչի մերժին վորշումներում։ Մենք պետք ե մկնենք յուրաքանչյուր առանձին ուսուցչեց, ողնենք նրան բարձրանալու կուլտուրականության ու դրադիտության ավելի բարձր մակարդակին, ողնենք նրան ավելի բարձր վորակ ստանալու, վորապեսի նա կարողանա իրոք քայլ ուսուցիչ դառնալ։

Պետք ե նկատի ունենալ, վոր մեղ մոտ ուսուցիչների կեսը կոմյերիտական հասակը ունի, ուստի և կոմյերիտմիությունը կարող և հսկայական աշխատանք կատարել։ Խորքը միայն տարրական ու միջնակարգ դպրոցներին չի վերաբերում։ Հարկավոր և լրջորեն լծվել գործի բարելավման աշխատանքին նաև մեր բարձրադրադույն դպրոցներում, մանավանդ մանկավարժական դպրոցներում, վորոնք ուսուցիչների կազմեր են պատրաստում մեղ համար, բայց վորոնք մինչև այժմ ել դեռ շատ վատ հիմքի վրային դրված։ Հարկավոր ե, վոր կոմյերիտմիությունը լրջորեն դրադիվի մանկավարժական ինստիտուտներն ու տեխնիկումներն առաջաւոր կոմյերիտականներով ու կոմյերիտուհիներով հայտնի լրելու դործով, ինչպես անում ե այդ մի քանի մյուս ուսումնական հաստատությունների նկատմամբ։

Պետք ե շատ լուրջ դործ համարել նաև անդրադիտության ու կիսադրադիտության վերացումը մեր յերկրում։ Դա մի ծանր քար ե, վոր խանդարում ե մեղ ուժեղ թափով առաջ գնալու։ Մենք դեռ մի քանի միլիոն անդրադեստ ունենք։

ԽՍՀՄ ժողկոմիուրիչի և Համեկ(ր)կ կենտկոմի վորոշմամբ մենք պետք ե յերկու տարում վերացնենք մեր մինչև 50 տարեկան աղդաբանակության անդրադիտությունը։ Բայց դեռ քիչ և վերացնել անդրադիտությունը, մեղ հարկավոր ե վերացնել նաև կիսադրադիտությունը, պետք ե նկատի ունենալ, վոր կիսադրա-

գիտությունը գոյություն ունի վոչ միայն մեծերի, հասակավոր
մարդկանց մեջ, այլև յերիտասարդության մեջ:

Յես կարող եյի բնիք միայն մի որինակ: Կոմյերիտմիության
Սոսկվայի կոնֆերենցիայում Ռյաժմուկի շրջանից հանդես յեկալ
մի ընկեր և հայտարարեց հետեւյալը.

«Յես պետք եւ ասեմ, վոր մեղ մոտ, յերիտասարդության մեջ
կա 8,5 տոկոս անդրագետ և 32 տոկոս կիսագրադետ: Դա տղա-
ների մեջ, իսկ աղջմեների մեջ տոկոսն ավելի բարձր և: Վերցըք
մեր կորոնտեսությունները. «Նովոյ Վոլգդայելո» և «Կրասնի
Ռիայրը» խոչոր կոլտնտեսություններում 700 յերիտասարդից
314 հողին կիսագրադետ և և 115 հողին անդրագետ»:

Այդունք եւ դրությունը Մոսկվայի դյուզական շրջաններից
մեկում, բայց արդյո՞ք Ռյաժմուկի շրջանը բացառություն և կադ-
մում: Բնավ վո՞չ, ընկերնե՞ր: Ըստ յերեսութին վորոշ տեղերում
նույնիսկ ավելի վատ և, այնինչ, կոմյերիտական աշխատազնների մեջ
վորոշ տրամադրություններ կան անդրագիտության և կիսագրա-
դետության վրայից թուիչք դործելու, այն փաստարկումով, թե՝
ի՞նչ կարիք կա զլուխ տալացնել յերիտասարդության անդրագի-
տության և կիսագրագիտության վրա, յեկեք միջնակարդ և
բարձրագույն վրթությամբ դրազվենք:

Վո՞չ, ընկերնե՞ր, դա ճիշտ դիրք չե: Մենք անպայման պետք
եւ վերացնենք անվրագիտությունը և կիսագրագիտությունը՝ տըլի-
տության և անկուլտուրականության այդ հիմքը, և այն ժամանակի
մեջ շատ ավելի արագորեն առաջ կընթանանք:

Յես արդեն խոսեցի զպրոցական ուսուցման մասին, բայց մեղ,
ընկերնե՞ր, կարենոր եւ վոչ միայն տարրական, միջնակարդ ու
բարձրագույն զպրոցների ուսուցումը, այլև արտազպրոցական
ուսուցումը: Ուսուցումն ավելի լայն համեմատողություն եւ, իսկ
մեզ մոտ ամբողջ ուսուցումը կոմունիտական ուսուցում և, վո-
րավշետև առանց զրա չի կարելի կոմունիզմ կառուցել:

Հայտնի յե, վոր բոլորը չեն կարող դիտություն ստանալ
զպրոցի միջոցով, մասնավանդ գյուղում: Ընդհանուր և տեխնիկա-
կան կրթության լուրջ միջոց կարող եւ ծառայել նաև հեռակա-
ռությունը, վորը բավականաչափ չի ծավալվել մեղ մոտ, բայց
վորը պետք եւ հսկայական թափ տանա, վորպեսզի ողնենք մարդ-
կանց գիտելիքներ ստանալու առանց արտազքությունից կարվե-
լու: Այդ դործում կոմյերիտմիությունը պետք եւ հանդես դա

վսրպես ակտիվ կրաղմակերպիչ, աշխատելով հանդերձ դպրոցներում ու խմբակներում, դորժարաններում ու կոլտնտեսություններում, առանց արտազգությունից կտրվելու՝ ուսուցումը ընդարձակելու և բարելավելու համար։ Զի կարելի ճիշտ համարել յերիտասարդության վորոշ մասի մեջ դոյցություն ունեցող և յերեխաների մեջ լայնորեն տարածված՝ անվայման ինժեներ կամ ուղաջու դառնալու տրամադրությունը։ Կոմյերիտմիությունը յերեխաների ու յերիտասարդների դիտակցության մեջ պետք և արմատացնի, վոր մեր հասարակակարգում հայլասարապես կարևոր են բոլոր մասնագիտությունները՝ ուսուցչի, փականազործի, խառատի, մեքենավարի, տրակատրիստի, անասնաբաւծի և այլ մասնագիտությունները։ Յուրաքանչյուր պատանի ու աղջիկ պետք և ձգուի կատարելապես տիբապետելու վորեւ մամնագիտության։

Մի քանի խոսք քաղաքական դաստիարակության մասին։ Աշխատանքի վերակառուցմանը վերաբերող՝ ընկեր Ստալինի հայտնի ցուցումներից հետո կոմյերիտմիությունը քիչ աշխատանք չի կատարել այս ասպարեզում։ Սակայն պետք և խոստովանել, վոր գետ գոյություն ունեն շատ լուրջ թերություններ, վորոնք խանդարում են յերիտասարդության կոմունիստական դաստիարակություն դործին։ Կոմյերիտմիությունը տրվող լենինյան դաստիարակությունը սրբազն և պատրաստի խոկական բոլշևիկներ, կոմյերիտականների մեջ դաստիարակի բարձր դաշտակարականություն։

Այդ դաստիարակությունն անհրաժեշտ և յուրաքանչյուր կոմյերիտականի, վորպեսզի նա ավելի խիզախորեն ու վստահ կերպով առաջ դնա և ըմբռնի շրջապատող իրազբությունը, լինի դատնասություն, թե իդեոլոգիա։ Ճիշտ և, վոր մեղ մոտ շահակործող դասակարգերը վոչնչացված են, սակայն այդ դասակարգերի մնացորդները դեռ կան։ Նրանք յերբեմն թափանցում են մեր խորհրդային որդանիզմի ամենալավատասխանատու և զգայուն անդեր՝ կատարելով իրենց վնասարար աշխատանքը։ Այդ տեղի յետնենում նրանից, վոր չկա քաղաքական բավականաչափ սրություն և զգաստություն ընդդեմ դասակարգային թշնամիների ժամկանցման՝ մեր կաղղմակերպությունների մեջ։ Այդ թույլ չտալու համար պետք և քաղաքականապես դրագետ լինել։

Ահա թե ինչու մեր յերիտասարդությանն անհրաժեշտ և լենինյան-մտավլինյան կովկածություն տալ, լավ կաղմակերպելով քաղաքական դաստիարակությունը։

Քաղաքական դաստիարակության ասպարեզում կոմյերէիտամիության կատարած աշխատանքի թերությունների մասին քանիցս խոսվել ե: Հիմնականում գրանք հանդում են այն բանին, վոր քաղուառոցումը և կուտակցության պատմության ուսումնասիրումը հաճախ մակերեսորեն և դրվում, ողբուազանդիստներն ընտրվում են անուշաղիր կերպով, իսկ վոր դլիսավորն ե՝ կոմյերիստական կազմակերպությունները պրոպագանդիստների հետ չեն տշնատում: Դպրոցների ու խմբակների հաճախումն անբավարար ե, դպրոցներում ու խմբակներում պարապմունքները հաճախ հետաքրքիր չեն ընթանում, չեն դրավում յերիտասարդությանը: Մինչդեռ պետք ե ասել, վոր կուտակցության պատմության ուսումնասիրումը հաճախ կերտականներին ուղղակի խորթացնում և քաղաքական-դաստիարակչական աշխատանքից:

Սակայն դպրոցներում ու խմբակներում դասավանդման աշխատանքը հաճախ այնքան անհետաքրքիր ե կատարվում, վոր կոմյերիտականներին ուղղակի խորթացնում և քաղաքական-դաստիարակչական աշխատանքից:

Այդ տեղի յե ունենում այն պատճառով, վոր այլ աշխատանքում պատշաճ ղեկավարություն չի ապահովված: Այժմ բանն աշխատանքը գործնականորեն կազմակերպելն ե, վոչ թե բանաձեռն ու վորոշումները, այլ դպրոցների ու խմբակների ծրագրերը և այն, վոր տանք լավ դասագրքեր, ընտրենք լավ պրոպագանդիստներ, վոր կոմյերիտմիության ղեկավար աշխատողներն անձամբ օտուգեն դպրոցների ու խմբակների աշխատանքը և անձամբ աշխատանք կատարեն այդ դպրոցներում ու խմբակներում, վորպեսզի նյութ հավաքեն դոյություն ունեցող թերություններն ուղղելու համար:

Ենուամուխ յեղեք, ընկերնե՛ր, այդ գործին, ինչպես հարկն ե, պատշաճ բարձրության վրա դրեք քաղաքական-դաստիարակչական աշխատանքը կոմյերիտմիության մեջ:

Լենինը և ընկեր Ստալինը քանիցս կրոյերիտմիության առջև են դրել դաստիարակչական աշխատանքի հարցերը: Մի տարի առաջ ընկեր Ստալինն առանձնահատուկ լրջությամբ դրեց լենինյան կոմյերիտմիության ամբողջ աշխատանքն այդ տեսանկյունով վերակառուցելու հարցը: Սակայն պետք ե ասել, վոր կոմյերիտական կազմակերպությունների ապարատը դեռ հեռու յե այդ ուղ-

դությամբ վերակառուցված լինելուց : Ուսման և դաստիարակության հարցերը դեռ կենտրոնական հարցեր չեն դարձել կոմյերի տական կազմակերպությունների աշխատանքում : Շատ կոմյերի տական աշխատողներ, դեռ անտեսելով այդ հիմնական խնդիրը, ցրվում են անտեսական ու խորհրդային աշխատանքի զանազան հակատամասերում :

Եերբ կոմյերի տամիության համագումարից առաջ քննարկվում էր, թե ինչպիսի հարցեր պետք են դնել համագումարում և ինչ անսանկյունով անցկացնել համագումարի աշխատանքը, ընկեր Ստալինն ուղղակի ասաց, վոր նրա կարծիքով կոմյերի տամիության համագումարը պետք են անցնի ուսման ու դաստիարակության կազմակերպման նշանաբանով : (Բուռն, յերկար ժամանակ չորս ծափակարություններ) : Այդպես ել, ընկերներ, պետք են անել, ինչպես խորհուրդ տվեց ընկեր Ստալինը : (Բուռն ծափակարություններ) : Կոմյերի տական աշխատանքի ամբողջ պաթուը և մեր կենինյան կոմյերի տամիության վողջ հերոիկան այժմ պետք են փախադրել ուսման վրա : Այդ և դվարավորը : (Բուռն ծափակարություններ) :

ՍՏԱԽԱՆՈՎՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՅԵՎ

ԿՈՄՅԵՐԻ ՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Ուղղակի ուսուցման հետ և կապված նաև ստախանովյան շարժման հետազա ծավալումը :

Ի՞նչ ունենք մենք այժմ ստախանովյան շարժման զարդարման, առաջարեղում : Այստեղ, կրեմլում տեղի ունեցած ստախանովյանների հայտնի խորհրդակցությունից հետո, ընկեր Ստալինի ճառից հետո և կենտրոնի պլենումի վորոշումներից հետո ստախանովյան շարժումն ավելի առաջ գնաց : 1936 թվականի առաջին յնուամսյակում արդյունաբերությունը կատարեց իր պլանը, իսկ յերկաթուղային տրանսպորտի գծով պլանը նույնիսկ գերակառարվեց :

Սա, ընկերներ, ստախանովյան շարժման լուրջ հաղթանակն է, քանի վոր, ինչպես դուք դիտեք, մեր այս տարվա առաջին յեռամսյակի պլանը նշանակալից չափով բարձր եր անցյալ տարվա առաջին յեռամսյակի համեմատությամբ : Պահնը կատարվեց միայն շնորհիվ այն բանի, վոր ստախանովյան շարժումը մեղ մոտ առաջ զնաց :

Սակայն ստախանովյան շարժումը ծավալվում է խայտարղետ կերպով։ Արդյունաբերության մի շարք ճյուղեր շարունակում են հետ մնալ։ Հետ են մնում այնպիսի կարևոր ճյուղեր, ինչպես անտառային արդյունաբերությունը, շինանյութերի արտադրությունը, ինչպես պղնձի արդյունաբերությունը և այլն։ Յեթև արդյունաբերության այդ ճյուղերը հետ չմնային, մենք ամենայն հավանականությամբ կը երակատարելինք առաջին յեռամսյակի պլանը։ Բայց նույնիսկ առջևից ընթացող ձեռնարկություններում ու արդյունաբերության ճյուղերումն ել ստախանովյականների թիվը հիմնական ցեխներում բոլոր աշխատողների մեկ յերրորդ մասն և կազմում, իսկ ոժանդակ ցեխներում՝ նույնիսկ ե'լ այլելի պակաս։

Նոր նորմաների կիրառման և աշխատավարձի վերակառուցման այսատանքն արդյունաբերության մի շարք ճյուղերում չափից դուրս ձգձգվեց։ Այսպիսով կարելի յէ ասել, վոր ստախանովյան շարժումը դեռ միայն իր սկզբամն ե գտնվում։ Մենք ստախանովյան շարժման ծավալման դործում ինքնահօսի անթույլատրելի և վնասակար տրամադրություններ ունենք անտեսավարների, և վոչ միայն տնտեսավարների, այլև կուտակցական, կոմյերիտական և պրոֆմիութենական կազմակերպությունների աշխատողների վրոշ մասի մեջ, և միայն դրանով մշակելի յէ բացատրել այն, վոր մեր տնտեսության մի ամբողջ շարք ձեռնարկություններում ու ճյուղերում այժմ ստախանովյան շարժումն աղելլի վատ վիճակում ե դոնվում, քան 1935 թվի վեկտեմբեր տամբն։

Ստախանովյան շարժումը պահանջում է արտադրության կառույթարման ամբողջ մեխանիզմի աշխատանքի նորոգում։ Նա չի հանդուրժում վոչ մի ճահճացում, բյուրոկրատիզմ ու անշարժություն, ուստի և այդ շարժումը սարստածի յին յենթարկում, նրան դժմադրություն են ցույց տալիս մեր անտեսության կառավարման սիստեմում յեղած այն մարդկի, ովքեր այդ թերությաւնների կրողներն են հանդիսանում։ Կոմյերիտմիությունը պետք է ամեն կերպ ողնի կուտակցությանը՝ ջախջախելու արդ սարստածն ու ընդդիմադրությունը և ե'լ այլելի ծավալելու ստախանովյան շարժումը։ Շատ տնտեսավարներ դանում են, վոր առաջտղբաժած ծրագրի կատարումն ստախանովյան աշխատանքի սահմանն է։ Ցերպե՛ք։ Ստախանովյան շարժման ծավալումը պետք է առաջանցնի նշված արտադրական ծրագրից։ Այս ե խնդիրը։

Բայց առանձնապես պետք եւ ընդգծել տեխնիկական ուսուց-
ման նշանակությունն ստախանովյան շարժման հաջող ծավալման
համար : Բանովորների հսկայական մեծամասնությունը մեղ մոտ
այժմ ստախանովական դառնալու ցանկություն ունի : Ստախանո-
վական դառնալու ճանապարհը ցույց են տվել մեր լավագույն
ստախանովականները : Բանն այժմ այն է, վոր լայնորեն ծավալվի
տեխնիկական ուսուցումը, վորը մեղ մոտ՝ ձեռնարկություններում
զետ անընդուարար հիմքերի վրա յե դրված և հաճախ կաղմակերպ-
ված և ձեւականորեն : Կոմյերիտմիությունը պետք եւ լծվի այդ
դործին ինչպես հարկն է և իր յեռանդը յերեան բերի այդ ուղղու-
թյամբ :

Բայց կոմյերիտմիությունն առանձնապես վճռական դեր
պետք եւ խաղա ստախանովյան շարժումը գյուղատնտեսության
մեջ ծավալելու դործում : Ընկեր Ստալինը կրւակցության և ամ-
րող յերկրի առաջ խնդիր դրեց՝ մոտակա Յ—Ա տարվա ընթաց-
քում հացահատիկի արտադրությունը հասցնել մինչեւ Շ—Ց մի-
լիարդ միթի : Այդ խնդիրը մենք կկատարենք, յեթե մեր գյուղա-
տնտեսության մեջ, ինչպես հարկն է, ծավալենք ստախանովյան
շարժումը : Խոկ պետք եւ խոստովանել, վոր ստախանովյան շար-
ժումը կոլտնտեսություններում մեղ մոտ զետ միայն նոր և սկզբա-
վում, բայց նա արագորեն ու լայնորեն ծավալվելու բոլոր հիմքերն
ունի : Մեքենաներ մենք ունենք, դրանց թիվը տարեցտարի տվե-
լի ու տվելի կշառանա, պարաբռանյութերի քանակությունը կա-
վելանա, կոլտնտեսությունները վերջնականապես ձեւալորել են :
Կոլտնտեսային ստալինյան կանոնադրությամբ գտնվեց սկսու-
թյան և առանձին կոլտնտեսականի շահերը գուղակցելու լավա-
գույն ձեւը : Մշակվեցին մարզկանց նոր կազրեր ի գեմօ կոմբայ-
նավարեների, տրակտորիստների, անասնաբույծների և այլն : Գյու-
ղատնտեսության մեջ յեղած ներկայիս ստախանովականները—
դրանք, իհարկե, առայժմ միայն հետախույզներ են, վորոնք հիա-
նալի կատարեցին իրենց խնդիրը և ցույց տվին ճանապարհը :
Ստախանովյան շարժման արդյունքները գյուղատնտեսության
մեջ, ընկերներ, հակայական կլինին : Դժվար են նույնիսկ պատկե-
րացնել, թե ինչպիսի թուիչք կկատարենք մենք այն հետամնացու-
թյունից, վոր գոյություն ունի գյուղատնտեսության մեջ, յեթե
դործնականում իրականացնենք այն, ինչ տալիս են իրենց աշխա-
տանքի արդյունքով գյուղատնտեսության այնպիսի առաջավոր

մարդիկ, ինչպես Անդելինան, Դեմչենկոն և մի շաբք ուրիշները :
(Մափահարություններ) :

Բայց ստախանովյան շարժումը գյուղատնտեսության մեջ ինքնահոսով չի ընթանա : Դրա համար պահանջվում է հակաբական կազմակերպչական աշխատանք և այդ գործում առանձին դեր ոլիտի խաղաղ կոմյերիստմիությունը, քանի վոր յերիտառարդության դերը գյուղատնտեսության մեջ ե'լ ավելի նշանակալից ե, քան արդյանաբերության մեջ, վորովհետև առավել առաջարկմանը, վորը կաշկանդված չե անհատական տնտեսության տրադիցիաներով, առավել համարձակներու ու գրագետը գյուղատնտեսության մեջ կորոնտեսային յերիտառարդությունն ե, և պետք ե յենթադրել, վոր կոմյերիտմիությունը պատվով կատարի իր խնդիրն ու անձնվիրաբար կմարտնչի հանուն ընկեր Ստալինի առաջադրանքի կատարման՝ հացահատիկի արտադրությունը մինչև 7—8 միլիարդ գրթի հասցնելու, հանուն անասնաբուծության արագ վերելքի, հանուն բամբակի, վուշի, բրդի և արդյունաբերության համար անհրաժեշտ այլ հումքի քանակի ավելացման : (Մափահարություններ) :

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Թույլ տվեք ինձ այժմ մի փոքր կանգ առնել կոմյերիտմիության կազմակերպական հարցերի վրա : Յեթե ճշշտն առենք, ընկերներ՝ կոմյերիտմիության կազմակերպական աշխատանքը լրջորեն հետ և մնում մեր սոցիալիտատական շինարարության բռնոր ժամանականերում կոմյերիտմիության ունեցած խնդիրների ու դերի մակարդակից, իսկ կազմակերպական աշխատանքում այդպիսի հետամնացություն չպետք ել լինի : Բայն այն ե, վոր վերացնենք կազմակերպական աշխատամնքի այդ հետամնացությունն այն խընդիրների մակարդակից, վոր ունի կոմյերիտմիությունը :

Ինչի՞ յե հանդում կոմյերիտմիության կազմակերպական աշխատանքի վերամկառուցումն ու բարելավումը : Նախ՝ այն բանին, վոր կոմյերիտմիության ամբողջ կազմակերպական աշխատանքը յենթարկվի հիմնական խնդրին, այն ե՝ դառնալ ամբողջ խորհրդային յերիտառարդության ուսուցման ու կոմունիտատական դաստիարակության խմբագեռ լայն կազմակերպություն : Այդ կոզմը

ողեաք և շրջնել, ընկերնե՛ր, ամբողջ կոմյերիտական առարատը, և շրջնել ինչպես հարկն ե:

Յերկրորդ՝ կազմակերպական աշխատանքի բարելավումն ու վերակառուցումը հանգում և այն բանին, վոր գործնականում իրականացվի կոմյերիտմիության նոր ծրագիրն ու նոր կանոնադրությունը, վորը դուք կընդունեք համագումարում:

Ընկեր Ստալինը, վորի զեկավարությամբ մշակվեցին կոմյերիտմիության նոր ծրագրին ու կանոնադրությունը, չափազանց լուրջ ուղղումներ մտցրեց թե՛ ծրագրի և թե՛ կանոնադրության սկզբնական նախադեերի մեջ: Բայց, ընկերնե՛ր, պետք ե ասեմ, վոր այլ ուղղումները պարզապես ուղղումներ չեն ծրագրի ու կանոնադրության նախադեերի մեջ, այլ լուրջ ուղղումներ կոմյերիտմիության նախընթաց ու գոյություն ունեցող վողջ կազմամակերպական աշխատանքում: Ի՞նչ ուղղումներ են դրանք: Այդ ուղղումները չափազանց շատ են: Յես կարծում եմ, վոր այն զեկուցողները, վորոնք զեկուցելու յեն համագումարին ծրագրի ու կանոնադրության մասին, կատամեն այդ: Յես կանոն կտոնեմ միայն յերկու ուղղման վրա:

Կանոնադրության հին տեքստի յերրորդ պարբերության սկզբանմաժ՝ «ՀամԼԿՑԵՄ»-ն իր եյությամբ մասսայական-պրոյեկտարական կազմակերպություն ե, վորն իր շարքերում համայնքում և առաջավոր, դասակարգայնորեն գիտակից, քաղաքականագետ յըրադեմ յերիտասարդության լայն խավերին» փոխարեն ընկ. Ստալինն առաջարկեց այլ տեքստ. «ՀամԼԿՑԵՄ»-ը մասսայական անկուսակցական կազմակերպություն ե, վորն իր շարքերում համախմբում և քաղաքի և դյուդի առաջամարտ, քաղաքականագետ դըրադեմ աշխատավոր յերիտասարդության լայն խավերին»: Այդ նույն պարբերության յերկրորդ մասում, «Համկ(բ)կ» և ՀամԼԿՑԵՄ ծրագրից կատարվող ամեն մի շեղում անհամառեղելի յե կոմյերիտմիության մեջ մնալու հետո Փրաղից ննջված են «Համկ(բ)կ» բառերը: Յերրորդ կետում հին տեքստի փոխարեն, վորոնեղ խոսվում եր ՀամԼԿՑԵՄ անդամ ընդունելու ժամանակը ըստ սոցիալական հատկանիշի խմբերի բաժանելու մասին, ընկեր Ստալինն առաջարկեց այլ տեքստ. «Կոմյերիտմիության անդամ ընդունվում և առաջավոր, ստուգված, խորհրդային իշխանությունը նվիրված յերիտասարդությունը՝ բանվորների, գյուղացիների և ծառայողների միջից»:

ինչի՞ մասին են խոսում այս ուղղումները : Սրանք խոսում են
այն մասին, վոր կոմյերիտմիությունը պետք ե վերջ զնի իրեն
կուսակցական կաղմակերպություններին լիովին համազատասիան
ձևով կառուցելուն և իր ամբողջ աշխատանքում կուսակցական
կոմիտեներին նմանվելուն : Մենք ունենք մեկ բոլշևիկյան կուսակ-
ցություն : Կոմյերիտմիությունը Համկ(բ)կ-ին հարող առաջակըռ
յերիտասարդության անկուսակցական կաղմակերպություն և
Այդ նշանակում ե, վոր կոմյերիտմիությունը պետք ե գառնա ա-
վելի լայն կաղմակերպություն, քան նա հանդիսանում և այժմ՝
կարիք չկա հորինելու ՀամկօթեՄ անդամ ընդունելու այնպիսի
սահմանափակումներ, վորոնք նման լինեն կուսակցության մեջ
ընդունելու սահմանափակումներին : Նոր ծրագրի ու կանոնադրու-
թյան հետևանքով կոմյերիտական կաղմակերպությունը պետք է
աճի, և դրա մեջ սարսափելի վոչինչ չկա : Այդ չի նշանակում լայն
բաց անել դռները և ընդունել ում վոր պատահի : Դրա համար կա
սահմանափակում, այսինքն՝ վորոշ քաղաքական պատրաստակա-
նություն և յուրաքանչյուրի ստուգումը՝ կոմյերիտմիության մեջ
ընդունելուց առաջ : Այս յերաշխիքները պետք ե խստորեն կատար-
վեն, բայց կարիք չկա կուսակցական կաղմակերպություններին
հատուկ սահմանափակումներ հորինել :

Ուղղումներն այնուհետև ցույց են տալիս, վոր կոմյերիտմի-
ության մեջ պետք ե վերացվի սոցիալական կաղմի այսպես կոչ-
ված կարգավորման սլրակտիկան : Պետք ե վերացվեն դոյություն
ունեցող բաժանումները : Մինչև այժմ կոմյերիտմիությունն իրեն
համարում եր գերազանցապես սլրուետարական կաղմակերպու-
թյուն, այժմ նա դառնում է ավելի լայն կաղմակերպություն,
խորհրդային ամբողջ առաջավոր յերիտասարդության—բանկոր-
ների, կողմանտեսականների, ծառայողների և սովորողների կաղ-
մակերպություն :

Ահա թե, ընկերներ, ինչ են բղխում ընկեր Սամալինի արած
միայն այն յերկու ուղղումներից, վոր յես մեջ բերի այստեղ :

Յերբորդ՝ կոմյերիտմիության կաղմակերպական աշխատանքի
բարելավման խնդիրներն այն են, վոր վերացվեն դոյություն
ունեցող թերությունները և ուժեղացվեն կոմյերիտական աշխատանքի
այն բնադրավառները, վորոնք այսոր դեռ թույլ բնադրավառներ են
հանդիսանում : Ի՞նչ թերություններ են դրանք : Առաջին լուրջ թե-
րությունը, վորի մասին խոսում ելին կոմյերիտմիության՝ հա-

մաղումարից առաջ անցկացված բազմաթիվ կոնֆերենցիաներում, այդ այն թերությունն ե, վորը հանդում և կաղմակերպարկան ղեկավարության թուլությանը՝ վերևից մինչև ներքեւ, վորն արտահայտվում և այն բանում, վոր կաղմակերպարկան ղեկավարության մեջ կոնկրետության փոխարեն հաճախ գերակշռում և դիրքնկտիվ-ներով, քաղաքական դրույթներով և ընդհանուր առմամբ թերություններն ու այն բանը մասնացույց անելով ղեկավարելը, թե այդ թերությունները պետք ե ուղղել: Այսպիսի ղեկավարությունը, բնիկներներ, այժմ չի կարող բավարարել մեզ: Նա պետք ե լինի ավելի կոնկրետ, ավելի վորոշակի և նա պետք ե հետապնդի կոմյերիտական կրթերի՝ վերևից մինչև ներքեւ դատուիարակության խնդիրները:

Դաստիարակման տարրերը կաղմակերպարկան աշխատանքում, համոզելը և սովորեցնելը ձեզ մոտ պետք ե շատ ավելի ուժեղ լինեն, քան կուսակցական կաղմակերպություններում, վորովհետեւ կուսակցության մեջ մենք ընդունում ենք ավելի հասունացած ու քաղաքական տեսակետից ավելի սկասրասոված մարդկանց, մինչդեռ կոմյերիտամյության մեջ մենք դեռ հակայական դաստիարակչական աշխատանք ենք յննմասն յուրաքանչյուր կոմյերիտականի նկատմամբ: Ահա թե ինչու կաղմակերպարկան աշխատանքի մեջ դաստիարակման և ուսուցման տարրերը ձեզ մոտ պետք ե ավելի տարածված լինեն: Ձեզ մոտ պայքարը տույժերի առատության, կաղմակերպարկան աշխատանքի մեջ յեղած Փորմալիզմի, զանազան հարցերն այսպէս կոչված հարցման կարդով լուծելու և վարչարարության դեմ պետք ե լինի ավելի սուր, քան այժմ:

Այժմ արդեն քիչ ե այն, վոր դու վորանս ղեկավար իւամ հրահանգիչ մասնացույց ես անում թերությունները և դրանց ուղղման անհրաժեշտառթյունը: Վո՞չ, դու դրա հետ միասին պարտավոր ես նաև սովորեցնել, թե ինչպես ուղղել այդ թերությունները: Անկանոնությունները յերեան բերելը—դա դեռ քիչ և ղեկավարի համար: Լավ ե, վոր գու դում ես թերությունները, բայց դու պարտավոր ես նաև սովորեցնել, թե ինչպես ուղղել այդ թերությունները:

Ցեմ վորքա՞ն բողոքներ կան ձեզ մոտ հրահանգիչների դեմ, առանձին ղեկավար աշխատողների շրջադայությունների դեմ, ստորին կաղմակերպությունների ու շարքային կոմյերիտամիանների կողմից: Կա, առում են, մի մարդ, կհայհոյի, կքննադատի, ճա-

ուեր կասի, Հավաքի ամեն տեսակի վիճակագրական տվյալներ ու կվերադառնա. իսկ ողնել գործին, սովորեցնել, թե ի՞նչպես կարով յէ ավելի լավ կազմակերպել աշխատանքը—այդ բանը չկա:

Կա՞ արդյոք, ընկերնե՞ր, կոմյերիտական կազմակերպությունների մեջ այսպիսի պրակտիկա:

Զայներ. —Կա, կա:

Անդրեյեվ. —Ինչի՞ մասին են խոսում այս թերությունները: Դրանք մի կողմից խոսում են այն մասին, վոր դեկավար ու խոսողների կողմից մակերեսային մոտեցում գորություն ունի դեպի կազմակերպական հարցերը, իսկ մյուս կողմից՝ այն, վոր այս կամ այն դեկավարն ինքն ել ուրախ կլինի սովորեցնելու, թե ինչպես կարելի յէ ավելի լավ կազմակերպել գործը, բայց չդիտե, թէ ինչպես անել այդ: Այդ պատճառով ել հաճախ աշխատանքը բարելավելու ձեւը չիմանալը քողարկվում ե ընդհանուր խոսակցություններով, դիրքեկտիվներով: Սա ցույց ե տալիս, վոր դեկավար կոմյերիտական կազմերի վորոշ մասը հետ ե մնում կոմյերիտական հարաբենուն աշխատանքի էներական պահանջներից ու կարիքներից:

Կոմյերիտական դեկավարությունը՝ ներքեմից մինչև վերև, չպետք ե հետ մնա յերիտասարության քաղաքական, կուլտուրական ու կազմակերպական անումից: Խնդիրն այն է, վոր ել առելիք համարձակութեն կոմյերիտական աշխատանքի ներդրավվեն նոր մարդիկ, և ամբողջ դեկավար ակտին ավելի լրջորեն սովորի, վարությունի լինի քաղաքականարքես գրադեստ, կուլտուրական դեկավար: Ավելիք քիչ նիստեր գումարեցնեք: Շատ բողոքներ կան բաղմանթիվ ու յերկարատես նիստերի վերաբերյալ: Շատ կոմյերիտական աշխատանքներ ասում են—այնքան շատ նիստեր ենք ունենում, վոր ժամանակ չի լինում աշխատելու և սովորելու: Ուրեմն, ընկերներ, ավելիք քիչ նիստեր գումարել, ավելիք քիչ ամեն տեսակի հանդիսավորություն, ավելիք քիչ աղբուկ ու ճոճուան խոսքեր: Ավելիք շատ համեստություն ու լրջություն ձեր ամբողջ աշխատանքում ու վարքի մեջ: Ավելիք քիչ բանաձեւեր ու ընդհանուր դիրեկտիվներ գրեցնեք: Ավելիք յեռանդուն պայքարեցնեք տղիտության դեմ, պարծենակտության ու մեծամտության դեմ: Ավելիք շատ սովորեցնեք ու աշխատեցնեք ձեզ վրա, այն ժամանակ կազմակերպական աշխատանքը ձեղ մոտ կհանի հարկ յիշած բարձրության:

Կոմյերիտական թույլ ճակատամառը նրա կութանառային

կապօմակերպություններն են։ Մեր յերկրում մենք ունենք 250 հազար կոլտնանսություն, իսկ կոլտնանսային կոմյերիտական կազմութեարագություններ՝ 102 հազար։ Նշանակում ե՝ կոլտնանսառությունների կեսից ավելին չունի կոմյերիտական կազմակերպությունները։ Կոմյերիտականները կոլտնանսություններում։ միայն 7 տակոս են կաղմում ամբողջ կոլտնանսային յերիտասարդության համեմատությամբ։ Սա քիչ ե, ընկերներ։ Սա ցույց և տալիս, վոր կոմյերիտությունը իր աղջեցությունը դեռ բավարար չափով չի տարածել կոլտնանսություններում։ Իսկ յեթե դժուն ավելացնենք, վոր կոմյերիտական կազմակերպությունների աշխատանքը կոլտնանսություններում, իրեւ կանոն, ազելի թույլ ե, քան քաղաքում և արդյունաբերական ձեռնարկություններում, ապա կոմյերիտական աշխատանքի այդ ընդդեմանը պետք և համարել թույլ բնադրավառ։

Պետք և զործն այնպես առաջ տանել, վոր կոմյերիտական կապօմակերպություններ լինեն մեր կոլտնանսությունների համեմատյն դեպք մեծ մասում և կոլտնանսային յերիտասարդության մեջ տճի կոմյերիտական յերիտասարդության շերտը։

Մոտակա 3—4 տարում 7—8 միլիարդ փութ հացահատիկ տպացաւ, ոնաև արդի մասության վերելքն արագացնելու խնդիրը որպէս անջնջում ե, վոր կոտակեցության ու կոմյերիտության աշխատանքն զվարցվի։ յուրաքանչյուր կոլտնանսությունում։

Քաղաքի և գյուղի միջև յեղած տարբերության վերացումը համբայական կուլտուրական աշխատանք և պահանջում։ Կոլտնանսառության ուժմմ ցանկանում և քաղաքացուն նման ապրել ամեն տեսկեալից։ նաև ցանկանում և ունենալ կինո, ռադիո, յերաժշտություն, դրեեր, թերթեր և այլն։ Կոլտնանսականները ցանկանում են սովորել, մի խոսքով՝ այժմ նրանք չեն ցանկանում հետ մնալ քաղաքից ու քաղաքի կյանքից։

Այդ առաջ եր, վոր կիսաքաղց ապրող, կազմածատիրոջ ու կուրակի կողմից ճնշվող գյուղացին ողիով եր մոտացության տալիս իր վիշտը։ Այժմ վիշտ չկա և կյանքը դարձել և ավելի ուգախ, ավելի հրճվալից, ունեոր կյանքը վրաստ և դարձել և ողու սպառումը։ մեր յերկրում տարեցտարի պակասում ե։ Այժմ սպիրտն ավելի ու ավելի մեծ քանակությամբ ծախսվում և զանազան տեսակի տեխնիկական կարիքների համար։

Կոմյերիտության առաջ կանգնած և կոլտնանսային յերիտա-

սարդության հսկայական մասսաների կոմունիստական ղաստիարակության խնդիրը, 15—26 տարեկան հասակի յերիտասարդության, վորք համոնում ե, վոչ ավելի, վոչ պահածա, քան 28 միլիոն հոգու: Նրան հարկավոր ե վերադաստիարակել:

Առ բայց, ընկերնե՞ր, ամուր ձեռնամուլիս յեղեք կոմյերիտական աշխատանքի այդ հետ մնացող բնադրակառին և լրջորեն ուղղեցեք այն:

Կոմյերիտական աշխատանքի մյուլ թույլ ողակը կոմյերիտակության աշխատանքն ե այն յերիտասարդության մեջ, վորդեռու չի մտել կոմյերիտամիություն, իսկ այդ յերիտասարդությունը հսկայական մեծամասնություն ե կազմում: Եեթե կոմյերիտամիությունն առ 1-ն հռնվարի 1936 թվականի իր շարքերում ուներ 3 միլ. 623 հազար հոգի, ապա կոմյերիտական հասակի ամբողջ յերիտասարդության թիվը քաղաքում ե դյուդում հանում ե Յիլ. 500 հազար հոգու, մինչդեռ կոմյերիտական կազմակերպությունների զգալի մասում զոյսեթյուն ունի վորոշ պարփակվածություն և ձգտում՝ մեկուսանալու այսպես կոչված անկադրակերպ յերիտասարդության մնացած ամրող մասսայից:

Սա սխալ ե, ընկերնե՞ր: Զգետք ե թույլ տալ, վոր ջնջի ամեն մի սահման կոմյերիտականների ու մնացած յերիտասարդության միջև, չպետք ե կորցնել յերիտասարդության ավանդությի դեմքը, բայց միաժամանակ չպետք ե նաև պարփակվել և կարվել մնացած մասսայից: Այս իմաստով ել հենց պետք ե վերակտուցվի կոմյերիտմիության և առանձնապես նրա սկզբանական կազմակերպությունների կազմակերպական աշխատանքը: Դրա համար պետք ե ողտագործվեն յերիտասարդությանը կոմյերիտական աշխատանքի հետ կապվելու և նրան այդ աշխատանքի մեջ ներդրավելու բոլոր հնարավոր ձևերը:

Կոմյերիտմիության շարքերից դուքս գտնվող յերիտասարդության մեջ կատարվելիք աշխատանքը չի կարող համարեցվել միայն նրան նիստերին ու ժողովներին, խորակների մեջ ներդրավելուն, արտադրության միջ, կոլտնտեսային դաշտերում, բրեդագներում և այլ աշխատանքի դրավելուն: Մակայն կոմյերիտմիությունը, դրա հետ միասին, լայն աշխատանք պետք ե ծավալի խորհրդային յերիտասարդության ուրախ կյանքի կազմակերպման ուղղությամբ: Այս բնագավառում կոմյերիտմիության դործունեցությունը դեռ անբավարար ե:

Ընկեր Ստալինն այն խոսքերով, թե կյանքն ավելի ուրախ և դարձել, հիմնալի կերպով արտացոլեց մեր մեծ Խորհրդային յերկը ժողովրդի տրամադրությունը: Պետք ե ամեն կերպ ոզնել ամբողջ յերիտասարդությանն ապրելու կուլտուրական և ուրախ կյանքով, ճանապարհ ցույց տալ նրան այդ ուղղությամբ:

Ի՞նչ եւ նշանակում այս: Այս նշանակում եւ, վոր ե'լ ավելի ռքմեղ ու ավելի լայն պետք եւ ծավալել Փիղկուլտ աշխատանքը, առանձնապես կոլանտեսություններում: Այս նշանակում եւ—ավելի յայնորեն արմատացնել լավ պարերը և վոչ թե միայն Փակսորոտները, վորոնք, իւղեալ, պետք եւ ասել, մեղ մոտ մացված են տարր բանակից: այդ նշանակում եւ ավելի լայնորեն տարածել լավ յերդերը: (Ծափահարություններ):

Կոմյերիտմիությունը պետք եւ յերիտասարդությանն ողնի ուղարկելու յերաժշտական լավագույն յերկիրից, այդ բնագավառուից դուքս մղելով ամեն տեսակի խալուուրա: (Ծափահարություններ):

Դուք պետք եւ ավելի շատ զբաղվեք ամեն տեսակ յերաժշտական գործիքները մեր խորհրդային յերիտասարդությանը, առանձնապես դյուցական՝ յերիտասարդությանը մոտեցնելու ուղղությամբ: Ճիշտ եւ, այդպիսի գործիքներ մենք դեռ քիչ ունենք և վորակով եւ նրանք դեռ հետ միասին թամբում ենք արդյունաբերությամբ՝ յերաժշտական գործիքներ արտադրող ճյուղերը, վորակեալ մենք ավելի շատ և ավելի լավ վորակի յերաժշտական գործիքներ ունենանք:

Այդպիսով կոմյերիտական կազմակերպություններն ե'լ ավելի սերտորեն կերպվեն մնացած ամբողջ յերիտասարդության հետ: Հարկավոր եւ միայն մի բան նկատի ունենալ—չափից դուրս մի «կազմակերպեք» այդ գործը (ծափահարություններ), վորովհետեւ մեղ մոտ յերեմն այնպես են «կազմակերպում» ամեն տեսակի ժամանցները, վոր մեր խորհրդային յերիտասարդությունը փախչում եւ այդ վկազմակերպված» ուրախ կյանքից: (Միծաղ): Ավելի շատ խակական ուրախություն, ավելի շատ նախաճեռնություն, բազմազնություն մտցրեք այդ աշխատանքի մեջ, ավելի քիչ չարլոն ու տրաֆարետ, և այն ժամանակ հաջողությունն ապահովված կլինի:

Անկասկած, շարունակվում եւ կոմյերիտական աշխատանքի թույլ բնագավառը մնալ կին յերիտասարդության ներգրավումը

կոմյերիտմիության մեջ։ Արա մասին բազմիցս խոսվել է։ Սակայն մենք ստիպված ենք այդ մասին մեկ անդամ ևս հիշեցնել կոմյերիտմիության տասերորդ համագումարում, քանի վոր չնայած վորոշ բարելավմանը, աշխատանքն այդ բնադրավառում այնուամենայնիվ անբավարար ե:

Մի՞թե կարելի յե բավարար համարել այնպիսի դրությունը, յերբ կին յերիտասարդությունը կոմյերիտմիության մեջ մեկ յեշ-բորդից ել պակաս ե, յերբ կին յերիտասարդության մասնակցությունն առանձին ազդային մարդերում ու հանրապետություններում իշխում ե մինչև կոմյերիտական յերիտասարդության ընդհանուր թվի 10—15 տոկոսը, իսկ կոլտնտեսություններում 100-ից միայն յերեք աղջիկ են կոմյերիտմիության անդամ և մնացած 97-ը մնում են կոմյերիտմիության շարքերից դուրս :

Զի կարելի բավարար համարել նաև կոմյերիտուհիներին կոմյերիտական կազմակերպություններում ղեկավար աշխատանքը՝ ներդրավելու ուղղությամբ կատարվող աշխատանքը։

Հարկավոր ե կին յերիտասարդությանն ավելի լայնորեն ներդրավել կոմյերիտմիության մեջ, կոմյերիտուհիներին ավելի համարձակորեն ներդրավել կոմյերիտական ակտիվի մեջ ու նրանց մասնակից դարձնել ղեկավարությանը, այն ժամանակ կոմյերիտմիությունը կլինի ել ավելի ուժեղ, ել ավելի աղջիկ։ Սա առանձնապես վերաբերում ե այնպիսի ազգային կազմակերպություններին, ինչպես Ուղբեկստանը, Տաջիկաստանը, Թուրքմենստանը և այլն, վորտեղ կոմյերիտմիության կենտրոնի նախաձեռնությամբ լավ անցկացվեցին կին յերիտասարդության կոնֆերենցիաները։ Բայց դրանով չի կարելի տահաճակալվել։ Այնտեղ կան անցյալի, հնի ու կնոջ նկատմամբ ճորտառիրական վերաբերմունքի շատ մնացումներ։ Դրանք յերեան են դալիս նույնիների ակտիվ կոմյերիտականների վորոշ մասի մեջ։ Այդ մնացումների դեմ պետք ե սիստեմատիկաբար պարբարել՝ մեր վողջ հասրակական աշխատանքի մեջ կին յերիտասարդությանն ել ավելի ներդրավելու համար։

Եեվ վերջապես վերջին հարցը—յերեխաների մասին։ Այս թեագովառը ղեռ շարունակում ե նույնական մնալ կոմյերիտական աշխատանքի թույլ տեղը։ Դպրոցական հասակի յերեխաների կաղմակերպությը չափազանց կարելոր գործ ե առանձնապես այն պատճառով, վոր դա ուղղակի կերպով կապված ե դպրոցական ուսուց-

ման հետ : Յերեխաների կաղմակերպումն զգալի չափով հանձնարարված և կոմյերիտմիությանը : Արդյոք այստեղ ամեն ինչ բարեւաջող է : Վ.Ռ.՝ Դուք ինքներդ գիտեք պիտոներական աշխատանքում յեղած մի ամբողջ շարք խեղաթյուրումների մասին : Հանախ յերեխաներին չափից դուրս ծանրաբնում են հասարակական աշխատանքով, վորն անդրադառնում և նրանց ուսման վրա : Յերբեմն պիտոներական հավաքույթները վեր են ածվում տաղտկալի պարագմունքների, վորի հետևանքով յերեխաները փախչում են այդ հավաքույթներից և խորշում նրանցից : Պիտոներական հավաքույթները հաճախ անցնում են առանց կոմյերիտմիության բավարար դեկավարության, յերբեմն դալրոցից դուրս : Հաճախ չարաշահռաւմ են հողնեցուցիչ եքսկուրսիաների, արտելքների (ԵՎԼԱՅՔ) և այլնի կաղմակերպումը : Յեզ վերջապես, դեռ չկա մանկական լուրջ դրսմանություն : Յերեխայի համար դեռ ստեղծված չե լավ դիմք : Ինչպես տեսնում եք, այս բնագավառում թերություններ դեռ չափաղանց շատ կան : Վ.Ռ. բաղադրից են ծագում այս թերությունները : Դրանք ծագում են այդ գործի նկատմամբ ունեցած անուշտուգիր զեկավարությամբ : Ապացույց ե հանդիսանում այն փաստը, վոր մեծ թվով պիտոներական ջոկատներ դեռ չունեն ջոկվարներ : Պիտոներական ջոկատների ջոկվարների զգալի մասը չի համապատասխանում իր կոչմանը : Շատ հաճախ լինում են այնպիսի գեղքեր, յերբ կոմյերիտական կաղմակերպությունները վորպես պետութական ջոկվար առաջ են քաշում հեղինակություն չունեցող մարդկանց : Պետք ե լրջորեն զրադվել յերեխաների կաղմակերպությունը բարեւավելու գործով :

Մի՛ կարծեք, թե ամբողջ գործը սահմանափակվում է միտք պիտոներական պալատներ ստեղծելով : Դա լավ բան է : Պալատներ մենք կստեղծենք և ունենք այդ հնարավորությունը, բայց, ընկերներ, բանը միայն այդ չե : Այժմ, յերբ մանկական հրատարակչությունը կոմյերիտմիությանն է հանձնված, դուք պետք ե ավելի մեծ քանակությամբ լավ դրքեր ստեղծեք : Բանն այն է, վոր դուք վերացնեք բոլոր այն թերություններն ու խեղաթյուրումները, վոր կան պիտոներական աշխատանքի պրակտիկայում :

Անհրաժեշտ է, վոր ջոկվարների ուշադիր ընտրությանը դուք ընթաց, կոմյերիտական կոմիտեների քարտուղարներն ու անդամներն իրենք հենց ավելի հաճախակի լինեն դպրոցներում ու հավաքույթներում, տեղում և լուրջ թերությունները և փորձ ձեռք

բերեն մանուկների մեջ կատարվող աշխատանքը եւ ավելի բարե-
լավելու համար : (Ծափահարություններ) :

Ահա, ընկերներ, կազմակերպական աշխատանքի վոր կողմե-
րի վրա յես կցանկանայի հրավիրել համագումարի ուշադրու-
թյունը: Մի մուանաք, վոր կազմակերպական աշխատանքը միև-
նույն ժամանակ նաև դաստիարակչական աշխատանք է: Ուստի
և, ընկերներ, մի արհամարհեք կազմակերպական աշխատան-
քը: Դուք գիտեք, թե ինչպես մեր կուսակցությունը և նրա ա-
ռաջնորդները—Լենինն ու Ստալինը—միշտ բարձր են դասել
ու դասում են կազմակերպական հարցերը՝ առանձնահատուկ
ուշագրություն նվիրելով կազմակերպիչների կաշընքի պատ-
րաստմանը, մարդկանց ընտրությանը, ձիւտ զեկավարությանը՝
ներքեկց մինչև վերև, աշխատանքի մեջ ճշգրտություն արմատաց-
նելուն, իրենց յուրաքանչյուր վորոշման կատարումը մշտագիտ
ստուգելուն և վերջապես ինքնազննադասության ծավալմանը:
Այդ հիման վրա յեն, ընկերներ, մեր բոլցելիյան կուսակցու-
թյան մեջ կերպվել կազմակերպակիների գորեղ կադրեր, վորոնք
հաղթանակում են յուրաքանչյուր քայլափոխում:

Կոմյերիսմիության դերը մեր յերկրում մեծ և բոլոր բնակա-
վառներում: Այդ դերն եւ ավելի յե բարձրանում յերիտասար-
դության կոմունիստական դաստիարակության և ուսուցման առ-
արարեղում՝ յեղած հսկայական խնդիրների կազմակցությամբ: Մեր
կոմյերիսմիությունն իսկապես Լենինյան կոմյերիսմիություն և
և զեկավարվում և մեր բոլցելիյան կուսակցության կողմից: Նա
համախմբում և աշխատավոր յերիտասարդության ամենահամար-
ձակ ու ամենայնուանդուն մասը, վորը կապված չեն հին արագի-
ցիաների հետ և հսկայական ուժ և տալիս կոմյերիսմիությանը:


Կուսակցությունը բավականաշախ գնահատում է մեր Լենի-
նյան կոմյերիսմիության այդ դերը, ուժն ու հաջողություննե-
րը և տարակույս չկա, վոր կազմակերպական աշխատանքը բարձ-
րացնելով այն հսկայական խնդիրների մակարդակին, վորոնք
գրված են կոմյերիսմիության առաջ, կոմյերիսմիությունը կո-
մունիզմի կառուցման վործում կդառնա եւ ավելի ակտիվ մի
ուժ և եւ ավելի արագորեն առաջ կընթանա դեպի նոր հաջո-
ղություններ, դեպի նոր հաղթանակներ:

Կեցցե՛ Լենինյան կոմյերիսմիությունը:

Կեցցե՛ բոլոր աշխատավորների առաջնորդ և ուսուցիչ, իսր-

Հըրդային յերիտասարդության լավագույն բարեկամ ընկեր Ստա-
լինը :

(Համագումարը բուռն ովացիա յե սարբում ըմկեր Անդրեյե-
վին : Լավում են վոդքույնի բացականչություններ—«Կեցցե՛ ընկեր
Ստալինը, ուռա՛» : «Խայ ժիվե վելիկիյ Ստալին, ուռա՛» : «Կեց-
ցե՛ Համկ(բ)կ կենտկոմը, ուռա՛» : «Կեցցե՛ն կենտկոմն ու Ստա-
լինը, ուռա՛» : Ցերկար ժամանակ չլոռզ ուռաններն ու ծափահա-
րությունները բռնկվում են ավելի ու ավելի նոր ուժով) :




ԸՆԿ. Վ. ԶԵՄՈԴԱՆՈՎԻ ՀԱՇՎԵՏՈՒԻ
ԶԵԿՈՒՑՈՒՄԸ ՅԵՐԻՏԿՈՄԻՆՏԵՐՆԻ ԳՈՐԾԿՈՄԻ
ՀԱՄԼԿՅԵՄ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

THE UNIVERSITY LIBRARIES
UNIVERSITY OF TORONTO LIBRARY
UNIVERSITY OF TORONTO LIBRARY



Վ . 8 . ԶԵՄՈՒԱՆՈՒՎ



Ընկերներ : Մեղ մոտ , հաղթանակած սոցիալիզմի յերկրում
վոչ կապիտալիստներ կան , վոչ շահագործողներ , վոչ ել ճընշ-
ված դառակարդեր . և ժողովուրդներ : Քաղաքի և գյուղի ազատ
աշխատողները , բանվորները , գյուղացիները , ինտելիգենցիան—
իրենք , միասին , առանց ազգերի խարության , անորինում են ի-
րենց , հետևապն և իրենց յերիտասարդ սերնդի բախտը :

Այս մասին , Լենինի-Ստալինի փառապանծ բոլշևիկյան կու-
սակցության և խորհրդային կառավարության մեծագույն հոգա-
տարության մասին , այն բացառիկ սիրո մասին , վորով շրջա-
պատված և մեղ մոտ յերիտասարդ սերնդի կյանքը , խոսում եր
ընկ . Կոսարեվին իր նշանավոր դեկուցման մեջ , վորը մեր համա-
դումարի միահամուռ հավանական ստացալ :

ԿԱՐԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿԻՐՆԵՐԻ ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԵՐՆԴԻ ՎՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

Այնտեղ , կապիտալիստական աշխարհում , իշխող և մնշող
դասսկարդը—բուրժուազիան—աշխատավորների յերիտասարդ սե-
րնդի տերն ու տնօրենն ե : Այդ այն հիմնականն ե , վոր տարրե-
րում և կապիտալիստական յերկիրների յերիտասարդության
կյանքն ու կենցաղը Խորհրդային յերկը յերիտասարդ սերնդի
կյանքից :

Բուրժուազիան յերիտասարդությանը դաստիարակում և ստըր-
կական գաղափարախոսության վողով : Բուրժուազիան այդ դա-
ղափարախոսության ի սպաս և դրել ամեն ինչ—ընտանիքը , կրո-
նը , դպրոցը , պետական ապարատը , մամուլը , արվեստը , ռա-
դիոն , կինոն և այլն : Յերիտասարդության գիտակցության մեջ
դեռ յերեխա ժամանակվանից շատ հմտորեն և համառ կերպով
արմատացվում են այնպիսի բուրժուազիան «ճշմարտություններ» ,

վլորոնք յուրացնելով, աշխատավոր յերիտասարդությունն իր դասակարգային թշնամու գաղափարախոսական դերին և դառնում:

Բուրժուազիան, աշխատավոր յերիտասարդությանը սոսկալի նյութական դրության դատապարտելով, ուժոնորեն և բոլոր միջոցներով նրան պատվաստում եւ իդեալիստական աշխարհայեցողություն:

Այս գործում կարևորագույն, յեթե վոչ ամենազմակոք դեր, ինչպես հայոնի յեւ, խաղում եր և շարումակում և խաղալ կրոնը: Կրոնը և նրա հետ միասին նաև դպրոցը բուրժուազիային ողնում են յերեխայի, պատանու և աղջկա դիտակցության մեջ արմատացնելու տեր աստծու կողմից «ստեղծված» աշխարհիս, ուրեմն և այս կարգերի «անսասանությունը», վոր այս աշխարհում իշխում են:

Կրոնը յերիտասարդությանը՝ քաստծու յերկյուղը և ներշնչում իշխանության տեր շահագործողների տռաջ և ստրկական հնադանդություն, հեղություն և հլություն՝ իբրև մարդուս բարձրագույն առաջինություն:

Կրոնն իր կազմուն գրկումն եւ պահում միլիոնավոր մնչված մարդիկ, նրանց ներշնչելով, վոր ճնշողի վրա ճնոք բարձրացնելը մեծագույն մեղքն եւ: Այդ հենց այս կրոնն եւ, վոր 1914 թվին տասնյակ միլիոնավոր աշխատավորներ որհնեց հանուն կապիտալի շահերի իրար սպաննելու համար:

Բուրժուազիան գաղափարախոսները չափազանց խելք կերպով լրացնում են կրոնը մասսաներին թմրեցնելու արվեստում: Նրանք այդ արվեստը ողտագործում են չափազանց մեծ ճկումությամբ, վարպետորքեն հարմարեցնելով այս բուրժուազիայի ննդիրներին ու մասսաների տրամադրություններին:

Կապիտալիստական աշխարհի գայլի որենքները ծածկվում են փքուն Փրաղներով քանհատական» աղատության և բուրժուազիան զեմուկրատիայի մասին:

Բուրժուազիան գրականության մեջ մեծ տեղ և տրվում բարոյականությանը: Սակայն այստեղ ես, ինչպես և ունակցիոն հոգևորականության ուսմունքի մեջ, գլխավորն այն եւ, վորպեսողի մասսաներին և ամենից առաջ յերիտասարդությանը ներշնչվեն բարձր հասկացողություններ պարտականությունների, անձնազնության, պարտքի մասին՝ դարձյալ հանուն կապիտալի շահերի:

Կինը, վորը կապիտալիստական կարգերի կողմից իր գարզաց-

Հան մեջ շատ տասնյակ տարիներով հետ եւ չպրոտված, կեղծաղուարար յերգլում և իբրև կյանքի զարդարանք:

Ծնոտանիքը, վորը անխողնորեն քայքայլում և կապիտալիզմի կողմից, հռչակլում և պետության և յերիտասարդ սերնդի դաստիարակության հենարան:

Ենրիտասարդությանն ստրկական վորով դաստիարակելու դործում վերջին դերը չնն խաղացել և շարունակում են խաղալ սոցիալ-դամոկրատական կումակցությունները:

Ենրիկար տարիներ սոցիալ-դեմոկրատիայի ռեակցիոն առաջնորդները, բուրժուազիայի հետ համադրժակցելով, ներշնչել և ներշնչում են յերիտասարդությանը, վոր կապիտալիզմից սոցիալիզմին անցնելը հնարակոր և խաղաղ ճանապարհով և վոչ թե աղայքարի և բուրժուազիայի տիրապետությունը բռնի կերպով տառապելու միջոցով:

Բայց, ընկներն ը, բուրժուազիայի աղջեցության ուժը յերիտասարդության վրա չափում եւ վոչ միայն նրա գաղափարախոսական աղջեցությամբ: Բուրժուազիան շատ լավ և հասկանում կաղմակերպվածության ուժը: Յել չափաղանցություն չի լինի առել, վոր շատ յերկիրներում բուրժուազիային հաջողվել և իր կազմակերպություններով ընդդրկել յերիտասարդության մեծամասնությունը, ինչանակի՝ յերիտասարդության տասնյակը միլիոններ: Բուրժուազիան, ձգտուելով յերիտասարդությանը յենթարկելու իր դադարիցությամբ և կազմակերպական աղջեցությանը, հաշվի յի առնում յերիտասարդության զարգացման առանձնահատկությունները, նրա պահանջները, ձգտումներն ու տրամադրությունները:

Վերցնենք, որինակ, յերիտասարդության կողմից միանդամայն բնական և առողջ կերպով սպորտով հրապուրվելը: Վորաբեսի ճարպմբությամբ և հմտության բուրժուազիան ողտադրժում և յերիտասարդության այդ առողջ ձգտումը իր՝ բուրժուազիայի նորատակների և ամենից առաջ ուղարկան նպատակների համար:

Բուրժուազիան ստեղծել և ամենաստարբեր տեսակի սպորտակերպություններ և ակումբներ, կառուցել և հաղարավոր ստարչիոններ ու սպորտ-հրապարակներ: Միլիոնավոր յերիտասարդներ են յեկել այդ կազմակերպությունները, ստարչիոններն ու ակումբները: Յել այստեղ յերիտասարդությունը գերի յի դարձել բուրժուազիան ռեկորդամենությանը, բուրժուազիան գաղափարախոսությանն ու միլիոնարկովին:

Զկա աշխարհումս մի յերկիր, վորտեղ դոյություն չունենան յերիտասարդության ամենատարբեր կրօնական մասսայական կաղմակերպություններ : Այդ կազմակերպությունների մեջ կարելի յեղատահել յերիտասարդության քրիստոնեական միություններ, յերիտասարդ կանանց, տղաների, աղջկների քրիստոնեական միություններ, յերիտասարդության ավետարանական ընկերություններ և այլն և այլն :

Սխալ կլիներ պատկերացնել, թե այդ կազմակերպությունները իրենց շարքերն են գրավում յերիտասարդությանը միայն առաքինի կյանքի մասին քարոզելով : Վոչ, այդ կազմակերպությունները հարմարեցված են յերիտասարդության պահանջներին : Այստեղ կարելի յե սովորել պարեր, յերգեցողություն, ձեռագործ, պարապել սպորտով, տուրիզմով, ուսումնառությունը ուազմական արկեստը և այլն :

Միլոնավոր յերիտասարդներ ընդուրված են ամենատարբեր քաղաքական, միլիտարիստական, ազգայնական և այլ կազմակերպություններով : Այս բոլորը բուրժուազիային ոգնում ե յերիտասարդությանն իր գաղափարական յենթարկելու:

Սակայն աշխատավոր յերիտասարդության իրական կյանքը միանգամայն հակասում ե բուրժուազիան գաղափարականությանը : Ինչպես հայտնի յե, կապիտալիզմի անխուսափելի ուղեկիցն և գործազրկությունը : Գործազրկությունը կապիտալիստական յերկիրներում դաժան մտրակ և հանդիսանում աշխատավորների յերիտասարդ սերնդի համար : Աշխատանքի Միջազդային բյուրոյի տվյալներով կապիտալիստական յերկիրներում գործազրկությունը հերիտասարդության թիվը հաշվվում է 6—7 միլիոն : Բայց այս թիվը, ընկերներ, իրականությունից շատ հեռու յե, վորովհետեւ հաշվվում միայն ցուցակագրված գործադուրկ յերիտասարդությանը : Խակ վորքան միլիոն դեռ ցուցակագրված գործազրկությունը յերիտասարդություն կա՛ : Վորքան միլիոն այնպիսի յերիտասարդություն կա, վորք յերբեք և վոչ մի տեղ չի աշխատել և չի կարողանում իր համար աշխատանք գտնել : Այս մասին բուրժուազիան վիճակադրությունը լուր չի կարող, վորովհետեւ քաղցը նրան ստիպում և ոգնություն աղաղակել :

Այդպիսի ահավոր ոգնության աղաղակ հանդիսացակ այն «Հուշագիրը յերիտասարդ գործազրուրկների դրության ու պա-

Հանջների մասին», վորը անցյալ տարի ներկայացվեց Աշխատանքից Միջազգային բյուրոյին դործազուրկ յերիտասարդության կողմից։ Յես մի քանի քաղվածքներ կրերեմ այդ հուշադրից։ Ահա, որինակ, մի յերիտասարդ բանվորի նամակ Մելենից, վորի մեջ նա դրում ե.

«Տնտեսական ծաղկման ժամանակ յես աշխատում եյլ Ֆոնտեներլոյի շրջակայքի դարաժում։ Աշխատանք խիստ շատ կար... Յերբ ոկավեց դործազրկությունը, յես առաջիններից մեկը դործազուրկ դարձա։ Իմ փոքրիկ խնայողություններս արագուրեն հալվեցին։ Յես ոկանցի իրեր ծախել անուելու համար և մի դեղեցիկ որ մնացի առանց փողի և առանց իրերի։ Յես ստիպված եյի ծղոտի վրա քննել։

Ինձ թափառաշրջիկության համար ձերբակալեցին, վորովհետեւ առլաստարան չունեյի։ Բանտից գուրս դալով, յես աշխատանք դատա գյուղում ամբողջ ամառավա համար, բայց յերբ ձմեռն յեկավ, յես դարձյալ մնացի առանց հացի, լողանալու հնարավորություն չունեյի և վոր գլխավորն ե՝ այդ սոսկայի միջամները... Սարսակելի յե և ստորացուցիչ քանատարեկան հասակում... աշխատելու հնարավորություն չունեալ, պատառությած լինել, ծղոտի վրա քննել, ամեն տեղից շան նման հալածվել։

Յես սովոր եմ... ոկետք և համեմալ, թե ինչ և նշանակում քաղցած լինել և ստամոքսում դատարկություն զգալ։ Այդ տանջալից ու սոսկալի զգացում ե։ Թվում ե, թե կենսական բոլոր հյութերը դանդաղորեն չողիանում են ու արյան շրջանառությունը դանդաղում ե։ Բերանդ ու կոկորդդ չորանում ե, այրոց ես զգում ե գլուխդ ցավում ե։ Յես սովածեմ»։

Ինչպիսի՞ցինիկ ծաղը և հնչում քարոզն այն մասին, թե այս յերիտասարդը յերկնքում դրախտ կդտնի, իսկ յերկրիս յերեսին պետք և համբերի։

Ի՞նչ և նշանակում սրա համար և միլիոնավոր սովահար յերիտասարդ դործազրուրկների համար քանհատական ազատությունը։ Ազատորեն քաղցից մահանալ—ահա այն իրավունքը, վոր բուրժուազիան «լեմոկրատարար» վերապահում և բոլոր դործազրուրկներին։

Այդ նույն հուշադրի մեջ մի յերիտասարդ դրում ե.

«...Այն յերկու տարում, վոր անցել ե իմ դպրոցն ավարտելուց վեր, յես վոչ մի արհեստ չկարողացա սովորել: Իմ ծնողները գործազուրկ են, այժմ սովորելու ժամանակ չե: Ուստի յես ստիպված յնդա ամեն տեսակ աշխատանք կատարել: Յես ուզում եյի մեխանիկ լինել, իսկ յես աշխատում եյի վորակե ցրիչ հացավաճառի մոտ, ստանում եյի ամսական 250 Փրանիկ և մի փոր հաց:

Այժմ յես զործադուրկ եմ, բայց վորովհետեւ յես որենքով նախատեսված տարիքին դեռ չեմ հասել, ուստի վոչ մի նպաստ չեմ ստանում»:

Ավարտել, ընկերնե՞ր, դպրոցը և ընկնել սովորակ զործադուրկ-ների բանակը, առանց աշխատանք ստանալու հեռանկարի—միթե այդ վողերգություն չեմ յերիտասարդ սերնդի համար:

Այդ աշխատանքը չեն կարողանում ստանալ նաև նրանք, ովքեր կըթություն ունեն: Այդ մասին նույն հուշադրի մեջ դրում եր մի յերիտասարդ ճարտարապետ.

«... Յես քսան տարեկան եմ, յես ավարտել եմ տեխնիկական դպրոցը: Հայրս, մի համեստ ծառայող, վերջին ուժերն եր զործադրում, վորակեսդի ինձ ճարտարապետ դարձնի: Ցեվ ի՞նչ: Անցյալ տարի ինձ հաջողվեց քարհանքում սեագործ բանվոր դառնալ: Այժմ յես զործադուրկ եմ»:

Սրա նմաները հազարներով են, և արանից հետո ի՞նչ ե մնում պրոգրեսն ու բուրժուական կուլտուրան յերգելուց, յերբ արդեն առաջ ե յեկել անեխնիկական և առավել ևս հումանիտար ինսելլիունցիայի «դերարտուտդրության» դեմ պայքարելու պրոցեսը:

Բուրժուազիան յերգում ե սեր, սմուննություն և ընտանիք: Բայց ի՞նչպիսի տեսք ունի այդ իրական կյանքում:

Նույն փառաթղթում մի յերիտասարդ դեղջկուհի դրում ե.

«...Կարելի յե ասել, թե ճգնաժամը սեւերի միջն պատնեշներ քաշել: Եերիտասարդությունը չի կարող մտածել այն մասին, վորակեսդի ընտանիք կաղմի, վորովհետեւ այստեղ աղքատությունը վոնդում ե սերը: Այսպես ե անցնում մեր յերի-

տառարդությունը անընդհատ վշտի մեջ, առանց վորևե ու-
րախության և հույսի»:

Մի այլ գործադուրկ յերիտասարդ աղջիկ գրում ե.

«...Գործարանում, արհեստանոցում, խանութում աշ-
խառող մեր յերիտասարդ աղջիկներն ավելի ևս վատ են շա-
հագործվում, քան յերիտասարդ տղաները—մենք խիստ շատ
ենք: Գործատերերն այլևս չեն նայում մեր պլոտիկոնալ
ընդունակություններին, նրանք նայում են մեր գեղեցկու-
թյանը և ուզովում են նրանով, վորովհետև նրանք դիտեն,
վոր աշխատանք դանելը քանի գնում այնքան ավելի դժվար
է դառնում: Մեզ վողոց են շպրառում ամեն մի չնչին առիթով:
Յես ընկերուհիներ ունեցի, վորոնք վոչ թե փչացած լինելուց,
այլ ծայրահեղ կարիքից դրդված քմտերմացան» առաջին պա-
տահած մարդու հետ»:

Իսկ այդ աղջիկների նմանները միլիոններ են: Դրանց հաշվին
և առաջին հերթին լրացվում և աճում պլոտիտառուցիայի սարսա-
փելի բանակը: Վոչ թե կյանքը «զարդարել», այլ պարզապես
ապրել—կատիտարիտական յերկիրների միլիոնայի որ յերիտասարդ
կանաց համար նշանակում և ծախել իրենց մարմինն ու առողջու-
թյունը:

Փոքր ինչ լավ պայմանների մեջ և դժոնվում այն յերիտասար-
դությունը, վորը բախտ ունի աշխատելու, բայց նա ել ապրում և
աշխատանքից վտարվելու մշտական սուպանալիքի տակ: Զեռնար-
կատերերը՝ համոզված լինելով, վոր աշխատանքի շուկայում բան-
վորական ուժի աղելցուկ էա, անողոքաբար շահազործում են բան-
վորներին և յերիտասարդությանը, հետապնդում են տուրանքներով
և գաֆան կերպով դատաստան են տեսնում անհնաղանդների հետ:
Ավելի ևս սարսափելի պայմաններում ե գտնվում գաղութային և
կիսազարդութային յերկիրների աշխատավոր յերիտասարդությունը:

Գործազրկությունը, քաղցն ու կարիքը, շահագործումը, կըր-
թություն ստանալու հնարավորությունից զբկված լինելը—յերի-
տասարդության ծանր կյանքն ինքն արդեն արթնացնում ե նրա
դասակարգային դիտակցությունը: Խորը տնտեսական ճնշաժամը
չեր կարող անհետ անցնել կապիտալիտական յերկիրների յերի-
տասարդության դասակարգային դիտակցության համար: Առավել

ևս այդ անհետ անցնել չի կարող, յերբ նա գիտե, վոր այնտեղ, յերկրագնդիս մեկ վեցերորդ մասում կա մի այլ աշխարհ, վորտեղ յերիտասարդությունը չգիտե գործադրկության, շահագործման և կարիքի սարսափիները:

Այն, ինչ յերիտասարդությանը մի ժամանակ անսասան երթվում, այն, ինչ վոր նրա գիտակցության մեջ արմատացնում ելին բուրժուական գաղափարախոսները, նրա մեջ այժմ կասկածներ ե առաջ բերում: Այդ կասկածները առանձնապես վառ արտահայտություն են ստանում այն ժամանակ, յերբ բանվոր դասակարգն իր իրավունքների և շահերի համար մղած պայքարում դիմում ե փորձված զենքին—գործադրուլին, յերբ գործադրուրկները «սովարշավ» են կազմակերպում, յերբ գյուղացիներն ապստամբության դրու են պարզում ուժից վեր տուրքերի և վաշխառուների կողոպուտի դեմ: Այն ժամանակ յերիտասարդությունը, անկախ նրա աշխարհայացքից, այս կամ այն բուրժուական կազմակերպության պատկանելուց, կանգնում ե անարդարության զեմ պայքարողների առաջին շաբաթում:

Պայքարում տարած հաղթությունն ու կրած պարառությունը ստիպում են յերիտասարդությանը ավելի լուրջ և խորը կերպով վերագնահատել բուրժուական գաղափարախոսության և բարոյականության արժեքները: Իսկ այդ վերագնահատումը փաստուրեն նշանակում ե, վոր հին բուրժուական կուսակցությունները մկնում են հետզհետե ավելի ու ավելի կորցնել իրենց հեղինակությունն ու աղջեցությունը յերիտասարդության մասսաների վրա: Բուրժուական գաղափարախոսության և բարոյականության նշմարտությունները յերիտասարդ սերնդի գիտակցության մեջ խարխլվել են: Այդ չի վրիպում բուրժուազիայի ուշադրությունից: Բուրժուազիան լավ գիտե, վոր յերիտասարդությունն ում կողմը վոր լինի, նրա կողմն ել ապագան կլինի: Ավելի ևս լավ ե նա հասկանում յերիտասարդության հսկայական դերը պատերազմում: Տեսնելով յերիտասարդության աճող դժոհությունը իր տնտեսական, կուլտուրամիան և քաղաքական դրությունից, նրա ակտիվության աճումը իր իրավունքների և շահերի համար մղած պայքարում, բուրժուազիան վերակառուցվում ե յերիտասարդության համար մղած պայքարում և փորձում ե նրա ակտիվությունը ուղղել դեպի ռեակցիայի կողմը:

ՖԱՇԻԶՄԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԱՄԵՆԱՎՈԽԵՐԻՄ ԹՇՆԱՄԻՆ Ե,
ԻԱԼԱՄՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՎՈԽԵՐԻՄ ԹՇՆԱՄԻՆ Ե,
ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՈՒ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԹՇՆԱՄԻՆ Ե

Ինչպես հայոնի յև, իշխող բուրժուազիան փրկություն ե վո-
րոնում Փաշիզմի մեջ, վորը, ինչպես ասում եր ընկեր Դիմիտրովը
Դոմինտերնի VII կոնդրեսում, վոչ այլ ինչ ե, քան

«...Փինանսական կապիտալի ամենանեղակցիան, ամենից
ավելի շովինիստական, ամենից ավելի իմացերիալիստական
տարրերի բացահայտ տեռորիստական դիկտուարան»:

Թաշիզմի ոգնությամբ բուրժուազիան փորձում ե նմանապես
իր աղջեցության տակ պահել նաև յերիտասարդությանը, փորձում
և հետազում ևս արդ յերիտասարդությանը դաստիարակել հու-
հաղանդ ստրուկների վոզով, իսկ վոր գլխավորն ե՝ նրանից
կադրեր պատրաստել իմացերիալիստական պատերազմի համար:

Ի՞նչպիսի ձևով ե հաջողվոամ յերբեմն Փաշիզմին իր հետևից
տանել յերիտասարդության վորոչ խապեր, ինչպես այլ տեղի
ունեցավ Գերմանիայում:

Ընկեր Դիմիտրովը Կոմինտերնի VII կոնդրեսում մատնանշում
եր, վոր

«Ֆաշիզմը հաշվի առավ յերիտասարդության մարտական
ակտավության առանձնապես սուր պահանջը և նրա մի զգալի
մասը ներգրավեց իր մարտական զոկատների մեջ: Տղամարդ-
կանց և կանանց նոր սերունդը չի անցել պատերազմի սար-
սպիները: Այլ սերունդը իր ուսերի վրա յե կրում տնտեսա-
կան ճղնաժամի, գրքագրկության և բուրժուական դեմո-
կրատիայի քայլայրման ամբողջ ծանրությունը: Ապագայի հե-
ռանկարներ չտեսնելով, յերիտասարդության զգալի խաղներ
առանձնապես զգայուն դրւրս յեկան դեպի Փաշիստական դե-
մագողիան, վորը նրանց գրավիչ ապագա յեր պատկերում
Փաշիզմի հաղթանակի զեպքում»:

Յերիտասարդությանը համոզել հրապուրիչ ապագայրի Փա-
շիստներին յերբեմն հաջողվում ե մեծագույն խարեյության, յե-
րիտասարդությանը թմբեցնելու և նրա թույլ զարգացած դասա-
կարգային դիտակցությունը ոգտագործելու միջոցով:

Որինակ, Փաշխստական դեմագոգները յերբեք յերիտասարդության առաջ հանդես չեն դալիս իին կապիտալիստական աշխարհի պաշտպանների դերում։ Նրանք լավ են հասկանում, վորայն քարոզը, վոր իրը կապիտալիզմը յերիտասարդության համար ինեւալական կյանք և ապահովում, սուլոցի կհանդիպի և արձագանդ չի դտնի։ Նրանք հաշվի յեն առնում նաև այն, վոր կը մի ուրիշ նոր աշխարհ, սոցիալիզմի և աղատության աշխարհ, Առուժությային Միություն և վոր կապիտալիստական յերկիրների յերիտասարդությունը հետզհետե ավելի ու ավելի յե սկսում տեսնել այդ աշխարհում իր ժանկությունների և ճշտումների կենսագործումը։

Սոցիալիզմի հաղթանակը մեր յերկրում սոցիալիզմ բառը դարձել ե մի հզոր ճղողական ուժ։

Ֆաշիզմը, վորի գլխավոր նալատավին և ապահովել իշխող բուրժուատիայի դիկտատուրան, մասսաների և մանավանդ յերիտասարդության առաջ հանդես ե դալիս իրեւ իին աշխարհի հակառակորդ, նոր աշխարհի համար պայքար մղողի գիմակով։

Ինչ արժեն, որինակ, գերմանական Փաշխստների հետեւյալ հայտարարությունները մինչև իշխանության գլուխ անցնելը՝ «Մենք հակակապիտալիստական յերեւույթ ենք, կապիտալիզմը ընտրյալ փոքրամասնության շահագործման իրավունքն և, քարեկեցության իրավունքն և, այն ժամանակ, յերբ հաղարավորներ քաղցած են»։ Կամ նրանց մի այլ հայտարարությունը։ «Բուրժուական աշխարհի տեսակետից նացիոնալ-սոցիալիզմի ամենաանխսորժ գծերից մեկն և նրա մկրունքորեն սոցիալիստական դիրքը»¹։

Ավելի ևս անամոթարար են նրանք մշակում յերիտասարդությանը, յերբ նրան ներշնչում են, թե «նացիոնալ-սոցիալիզմը ինքնըստինքյան նշանակում և յերիտասարդություն»։

Իսկ ի՞նչ և իրենից ներկայացնում Փաշխստական «սոցիալիզմը»։

Զինորձեք Փաշխստական դաղափարախոսների և առաջնորդների մոտ այսպես կոչված գերմանական նացիոնալ-սոցիալիզմի դիտական, թեորիական հիմնավորում վորոնել։ Ֆաշիզմն այդ ի վիճակի չե անելու, քանի, ինչպես ընկեր Ստալինը մատնանշեց, Փաշիզմը՝

¹ «Wille und Macht» («Կամք և հզորություն»), 1934 1/Vl.

«... զուչ ճիշտ կերպով և նացիոնալ-սոցիալիզմ կոչվում պրոլետական յիթե ամենամանրազնին կերպով իսկ դիտելու լինենք, նրա մեջ անհնար և հայտաբերել սոցիալիզմի նույնիսկ մի տոռմա : (Համեր) կենսումի աշխատանքի մասին կուսակցության XVII համադումարում տված հաշվետու ղեկուցում :»

«Ի՞նչ և նշանակում սոցիալիզմը, սոցիալական մարդու դաղափարը—ինքն իրեն հարց և տալիս հանրածանոթ տիրապելչակ դոկտոր լեյլ և պատասխանում եւ—Վոչ այլ ինչ, քան բարեկամ լինելու գաղափարը, այդ նշանակում և հավատարիմ լինելու : Ո՞ւմը հավատարիմ լինել չքավորներին, թե՞ հարուստներին : Յեթե յերկասարդ բանվորը նման հարց տա, ապա անմիջապես կոնցենտրացիոն ճամբարում կդանուի : Ինչո՞ւ : Վորովհետեւ ինքը Փյուրերը, այսինքն՝ Հիտլերը, իշխանության գլուխ անցնելոց հետո Նյուրենբերգի համադումարում յերիտասարդությանը «բացատրեց» . «Դուք չպետք ե ձեր յերիտասարդ որտերում ինքնահավանություն թույլ տաք, ինքնարավականություն, դասակարգային հասկացողություններ, չքավորների ու հարուստների միջև յեղած տարրերության մասին մտքեր» : Համեմատեցնեք այդ «բացատրությունը» այն բանի հետ, ինչի մասին ֆախտաներն աղաղակում եյին մինչև իշխանության գլուխ անցնելը :

Ինչպես հայտնի յեւ, սոցիալիզմի պարտադրական հառկանչ-ներից մեկն ե իշխանության անցումը բանվոր գամակարգի ձեռքը՝ արտադրության և գործիքների, հողի մասնավոր սեփականության վերացումը, գործարանների, բանկերի, հողի անցնելը վորակեան սեփականություն՝ պրոլետարական պետության ձեռքը :

Ֆաշիստական դեմադոկներին այդ ել չի չփոթեցնում : Նրանք ևս հայտարարում են, թե նացիոնալ-սոցիալիզմի ժամանակ բանվորին մյուսների հետ «միացնում և վոչ միայն սեփականության ընդհանուր բացակայությունը, այլև ընդհանուր սեփականությունը» : Ի՞նչ սեփականություն : Անմիջապես հետևում ե պատասխանը . «Այդ սեփականությունն անպայման նյութական չպետք ե լինի : Բավական ե ընդհանուր հպարտությունը, կարճ առած, ինչ վոր մեծ բան, վորն ընդունակ ե մարդուս վերադարձնելու հավատը դեպի սեփական անձը» («Նացիոնալ-սոցիալիստական տեղեկագիր» № 35) :

Ինչպես հայտնի յեւ, Գերմանիայում նացիոնալ-սոցիալիզմի

որով գործարանները, հողը—ամեն ինչ, ինչպես նաև իշխանությունը մնացել ե մի բուռզ շահագործողների ձեռքիմ, իսկ բանվոր դասակարգն ստացել ե «ընդհանուր» սեփականություն, վորի անունն ե «հպարտություն», ընդհանուր կոնցենտրացիոն ճամրաներ, «վորոնք ընդունակ են մարդու վերադարձնելու հավատ դեպի ինքը»։ Կազիտալիզմի և սոցիալիզմի մասին, դասակարգերի բացակայության և ընդհանուր սեփականության մասին յեղած այդ Փաշխատական դեմագոդիայի թագն ու պատկն ե հանդիսանում ուստայկան «թեորիան», վորը, ինչպես ընկեր Ստալինն ասաց կուսակցության 17-րդ համագումարում, «նույնքան հեռու յե գիտությունից, վորքան յերկինքը յերկրից»։

«Բարձր ուստայի» մասին յեղած քարոզը յերկարամյա և այն ել շատ տիսուր անցյալ ունի իր քարոզիչների համար։ Սակայն Փաշխիզը այդ հրամցնում ե իրեն «նորագույն» և իր «մեծագույն» թեորիան։ Հիսութերն իր «Իմ. պայքարը» գրքում դրում եր. «Դաստիարակության մեր դրվածքի թագն ու պատկը պետք ե լինի այն, վորպեսզի ամբողջ յերիտասարդության առաջ ամենայն հստակությամբ դնենք առաջին հերթին ուստայի պրոբեմը։ Թե՛ մտքով և թե՛ զգացմունքով մեր յերիտասարդությունը պետք ե հասկանա, վոր այդ պրոբլեմների գլխավորներից գլխավորը և կենտրոնականներից կենտրոնականն ե»։

Թվուամ ե, թե այդ բարձր ե հնչում և կարծես թե հեղինակավոր։ Բայց ի՞նչ իսկական և յերիտասարդության մասսաներից թաղնված միտք և պարունակում այդ «գլխավորներից գլխավոր և կենտրոնականներից կենտրոնական պրոբլեմը»։

Ամենից առաջ այն, վոր ուստայի՝ իրը միասնական ամբողջական հասարակության մասին յեղած քարոզը նշանակում է ծածկել այն, վոր կապիտալիտական հասարակությունը դասակարգերի յե բաժանվում՝ շահագործողների ու շահագործվողների։ Այն քարոզը, վոր գերմանական ազգը «բարձրագույն ուստան» և և վոր մերժագույն միստիան, ե՞ս փրկել մարդկային կուլտուրան, ինչպես և աշխարհը մարքուլզմից, այսինքն՝ սոցիալիզմից, կոչված և մասսաներից ծածկելու գերմանական բուրժուազիայի իմպերիալիստական, նվաճողական նպատակները։

Թաշխտմները յերիտասարդության գիտակցության մեջ են մեխում սուրը ձեռքին մյուս յերկիրները, կուլտուրա փոխադրելու գմեծ միստիան»։

Դեպի ո՞ւր, վո՞ր յերկիրները։ Այդ մասին շատ անկեղծորեն ասված և Հիուլերի «Իմ պայքարը» դրքում։ «Նա այդտեղ գրում է. «Յերբ մենք խոսում ենք Յելրոպայում նոր յերկիրներ նվաճելու մասին, մենք, իհարկե, առաջին հերթին կարող ենք նկատի ունենալ Ռուսաստանը և այն ծայրերկային պետությունները, վորոնք նրան յենթակա յեն»։

Այդ մասին ավելի ևս անկեղծորեն ասված և «Գերմանիան և Արևելք» դրքում, վորի հեղինակն և պրոֆեսոր Ֆրիդրիխ Լեզլիուսը։ Այդ դրքում նա գրում եր. «Գերմանիան այն ժամանակ կատարի իր նախատակին, յերբ նրան հաջողվի սուտներին Բալթիկ ծովից հետ մդել և ոռու-դերմանական սահմանը հասցնել Դնեպրին»։

Դրան ավելացրեք նաև Ալֆրեդ Ռողենբերգի ցինիկ հայտարարությունն այն մասին, թե «անթույլատրելի յե հաշվի նստել լիհերի, չեխերի և այլ նման ազգությունների հետ, վորոնք նույնքան իմպետանոտ (անդոր) և չնշին ազդեր են, վորքան և պահանջվուա ու աներեա» (Ա. Ռողենբերգ, «XX դարի առասպել»)։

Ընդըստինքյան հասկանալի յե, վոր այդ բոլորը ամբապընդում և այնպիսի դեմագոգիայով, թե Արևելքում ոասայական տեսակետից լիարժեք մարդիկ չկան և վոր նրանց պետք և սրով նվաճել կուլտուրային հաղորդակից դարձնելու համար։ Ճիշտ և, այդ չի խանդարում միաժամանակ, ինչպես հաղորդում են անդիքական լրտգրերը, վոր նացիոնալ-սոցիստները գաղտնի ռազմական պայմանագրեր կնքեն Լեհաստանի և դեղին ռասա-ճապոնիայի հետ։

Ազգեմուտաքում «Ֆրանսիան մեր ամենասարսափելի թշնամին ե», վորովհետև «Ֆրանսիան ամենամեծ սպառնալիքն և սպիտակ ոստայի հետագա գոյության համար Յելրոպայում», դրում եր Հիուլերը սրանից մի քանի տարի առաջ։

Այս առնչությամբ վորքան ապշեցուցիչ են հնչում հանճարեղ բանաստեղծ Հայնրիխ Հայնեյի խոսքերը, վորը դեռ 1885 թվին գրում եր։

«Յես խոսում եմ Գերմանիայի ազգության այսպես կոչված ներկայացուցիչների կուսակցության մասին, այդ կեղծ հայրենասերների մասին, վորոնց հայրենասիրությունը կայտում և միայն իդիտական չարակամության մեջ դեպի ոտար-

աղդիները և հարևան ժողովուրդները և վորոնք ամեն որ
մաղձ են թափում դերազանցապես ֆրանսիայի վրա»¹:

Ֆաշիստները շատ վարպետորեն ողտարկործեցին այն հանգա-
մանքը, վոր Գերմանիան իմպերիալիստական սլատերազմի հե-
տևանքով պարտված յերկիր դուրս յեկավ: Մոդովրդի, հետևա-
բար և յերիտասարդության բնական դժողովությունը նրանք ող-
տագործեցին մասսաների մեջ ամենասոտոր շովինիստական և նա-
ցիոնալիստական դրաշմունքներ գրգռելու և նոր պատերազմ քա-
րողելու համար:

Հիտլերն, որինակ, Հռենոսյան արշավանքից դեռ շատ առաջ
իր «Իմ պայքարը» գրքում զբում եր. «Յես անձնապես դեկավար-
վում եմ միայն այն զգաստ մտքով, վոր խլված մարզերը սրառ-
լամենտական շաղակրատների ոգնությամբ հետ չես դարձնի, այլ
վերադարձնել այդ մարզերը կարելի յե միայն լավ սրած սուսերի
ոգնությամբ, այսինքն արյունահեղ պատերազմի միջոցով»: Բայց
պատերազմը պահանջում է լավ պատրաստված կադրեր: Այն, վոր-
յերիտասարդության դիտակցությունը թունավորվում և շունչնից
մի և նացիոնալիզմի թույնով և վոր նա դասակարակվում և դեպի
այլ ժողովուրդները թշնամություն տածելու վողով—այդ արդեն
իդեոլոգիական մշակումն ե և կադրերի նախալաւրաստում իմպե-
րիալիստական պատերազմի համար: Բայց դրանով դեռ խնդիրը
չի սպառվում:

Սարկորեն հնաղանդ և Փիդիկապես մարդկամատ զինվորը Փա-
շիստական գաղափարախոսների կողմից փառարանվում ե իրու-
յերիտասարդ գերմանացու խղեալ: Այս մասին շատ ցայտուն
արտահայտվեց Հիտլերը Փաշիստական կուսակցության համա-
գումարում. «Մեր հայացքով, գերմանական պատանին պետք ե
կայուն լինի, վայելչակազմ և աշխույժ, ինչպես վորսկան շուն,
կաշու նման կոչտ և կրուպպի պողպատի նման ամուր»:

«Վորսկան շուն» արտահայտությունը պատահական չե, վո-
րովհետև Փաշիզմը, քարոզելով ռասայական թեորիան, փորձում
ե կենդանական աշխարհի որենքները, վոր հայտաբերել ե Դար-
վինը, փոխադրել մարդկանց փոխհարաբերությունների վրա:

«Աղվեսը միշտ աղվես և մնում, սագ՝ սադ, վադր՝ վադր
և այլն: Տարբերությունն այստեղ կարող ե լինել միայն քիչ թե-

¹ Генрих Гейне, т. II, изд. А. Ф. Маркса, 1904 г., «Лютерия».

շատ դիմացկունության, քիչ թե շատ խելքի, հասկանալու կարողության մեջ և այլն» (Հիտլեր, «Իմ պայքարը»):

«Ավելի ուժեղը պետք է իշխի ավելի թույլի վրա և վոչ թե զուգակցվի ավելի թույլի հետք: Այդ գայլի որենքը, վորը պետական որենք և դարձել, Գերմանիայում արդեն հազարավոր մարդկանց դրկել և յերեխաներ ունենալու հնարավորությունից և նրանց դարձել և հաշմանդամ:

Այնտեղ, ուր իշխում են գայլի որենքները, տեղ չե կարող լինել կուլտուրայի և հավասարության համար:

Կնոջը «գերմանական սոցիալիզմի մեջ» իրավունք է վերապահված լինել խոհանոցում և յեկեղեցում: Նրա գլխավոր, առաջին և վերջին պարտականությունն ե լինել արիացիների գոտարյուն արտադրողը:

Հստ Փաշիստական հասկացողությունների՝ կրթությունը սասայի թշնամին ե:

Շտուտգարտի «Լիտերատուր» ժուռնալում, որինակ, հոդված եր զետեղված այսպիսի վերնադրով. «Մտքեր դեպի կրթուրյունը յեղած ատելության պրօբլեմի մասին»:

Այդ հոդվածում ասվում եր. «Կարելի յե լիակատար վատահությամբ ասել, վոր աճում ե մի սերունդ, վորը կրթության և ուսումնականության մասին ավելի քիչ պետք ե մտածի, քան նախորդ սերունդները... Մեր դարաշրջանը մարդուս հրամայում ե ավելի շատ հույս դնել սրի վրա, քան դրչի: Առողջ մարմինը պահանջվում ե ավելի մեծ չափով մեր առջև դրված խնդիրները լուծելու համար, քան դիտելիքներով լցված դլուխը»:

Բոլոր ասածներից դժվար չե հասկանալ, թե ինչ վողքերդություն ե ապրում այժմ Գերմանիայի յերիտասարդությունը: Ֆաշիզմը յերիտասարդությանը սոցիալիզմ եր խոստացել: Նա նրան զորանոց տվեց: Նա յերիտասարդությանը շղթայել ե միջնադարյան ստրկության շղթաներով: Ինչպիսի անհավատալի ցինիզմի հոռ ե փչում դոկտոր Լեյի յելույթներից մեկից:

«Մենք ոկում ենք,—ասում ե նա դասային շինարարության մարդային ռեֆերենտներին,—դեռ յերեքամյա յերեխաններից. Հենց վոր յերեխան սկսում ե մտածել, նրա ձեռքը դրոշակ են տալիս: Ապա դալիս ե դպրոցը, հիտլերյան յերիտասարդությունը, գրոհային ջոկատը, ռազմական ծառայությունը: Մենք մարդկանց բաց չենք թողնում նաև այն ժամանակ, յերբ այս ամենը վեր-

ջացած ե : Փոխարինելու յե գալիս «Աշխատանքային Փրոնտը», նա մարդկանց իր շարքերն ե ընդունում և մինչև դերեղման նրանց բաց չի թողնում , թեկուղ և նրանք դրա գեմ բողոքեն» :

Դոկտոր Լեյի հիշատակությունը բողոքի մասին պատահական չեն , վորովհետև շովինիստական և նացիոնալիստական թույնի ալիքը անվերջ չի կարող ծածկել Փաշիզմի խսկական դասակարդային բնությունը :

Եերիտասարդությանը մինչև 25 տարեկան հասակը որևէնքով արտադրությունից հեռացնելը , ընդհանուր միլիտարիզացիան , մուշտրան և քաղցը պարտադիր աշխատանքի լադերներում , քաղաքային յերիտասարդությանը վորակն անվճար բատրակներ գյուղական կուլտների մոտ ուղարկելը , կանանց բոլոր իրավունքներից զրկելը , մահապատիժներն ու գաղանային տեսորը չեն կարող հիմնաթափություն առաջ քերել յերիտասարդության ըրջանում նացիոնալսոցիալիզմի վերաբերմամբ : Առավել վտանգավոր են դառնում Փաշիստական դիկաստուրայի համար նրանք , ովքեր իրենց կյանքը զոհում են հանուն աշխատավոր ժողովրդի շահերի , հանուն սոցիալիզմի , հանուն Մարքսի—Ենգելսի—Լենինի—Ստալինի գործի :

Հայտնի յե , վոր Փաշիստական դիկտատուրան բուրժուազիայի միայն ուժի նշանը չեն , այլև նրա թուլության ցուցանիշն ե :

Թող Փաշիզմին հայտնի դառնան . նաև հայնրիս հայնեյի մարդարեյական խոսքերը , վոր նա դրել և անցյալ դարում (1855 թվին) Գերմանիայի աղքության այսօնս կոչված ներկայացուցիչների կուսակցության մասին . ՅՅես միլիթարված և այն համոզումով , վոր կոմունիզմը , վորի ճանապարհին նրանք առաջնը կհանդիպեն , նրանց վերջին հարվածը կհասցնի և , իհարկե , այդ հական վոչ թե գավազանով վերջ կտա դրանց , այլ վոտքով կտրորի , վորպես սողունների :

Բայց , ընկերներ , դժվարությունները , և առավել ևս մասսաների դժգոհությունը , վորոնց կհանդիպի Փաշիզմը իր յերկրի ներսում , նրա ավանդութիզմն ազատ կարձակեն միջաղղային ասպարեզում :

Ֆաշիզմը , վորը իր յերկրի ներսում բանության և տեսորի միջոցով , պատերազմի միջոցով մասսաներին այսոր հնագամելության մեջ և պահում , արդեն գերանել և պատերազմի ուղղակի

սպառնալիքի աշխարհի բոլոր ժողովուրդների համար : Այդ սպառնալիքը վտանգավոր սպառնալիք է :

Պատերազմմ, թե խաղաղություն : Այդ հարցն այսոր հույսում և բոլոր յերկիրների ժողովուրդներին, վորովհետեւ դոյցություն ունեն, ինչպես դիտեք, վտանգի յերկու ոջախ :

«Առաջին ոջախը Հեռավոր Արևելքումն եւ գտնվում, ձապոնիայի գոտում... Յերկրորդ ոջախը գտնվում և Գերմանիայի գոտում : Դժվար եւ ասել, թե վոր ոջախն եւ ամենից շատ սպառնալի, բայց յերկուն ել գոյություն ունեն և գործում են» (Ստալին) :

Այստեղ, կտպիտալիստական յերկիրներում, Արևելքում և Արևմուտքում մենք ունենք սպատերազմի ոջախներ : Այստեղ, մեղմութ, հաղթանակած սոցիալիզմի յերկրում մենք ունենք խաղաղուրյան ոջախ, վորին ձգտում են այն բոլորը, ումը թանգ և կուլտուրան, մարդկության առաջադիմությունն ու ազատությունը :

Ենք մենք, ընկերնե՛ր, պետք եւ ասենք. փառք մեր քոլշեկիլյան կուսակցուրյանն ու խորհրդային կառավարուրյանը, փառք ժողովուրդների մեծ տապահորդ Ստալինին յերջանիկ ազատ կյանքի համար, խաղաղուրյան իմաստում Կաղաքականուրյան համար, մեր յերիտասարդ մերաւնդը ազատուրյան, տաղադիմուրյան և կուլտուրյայի վոգով, մեծ յեղայրուրյան և ժողովուրդների հավասարուրյան վոգով դաստիարակելու համար : (Մաֆահարուրյուններ) :

ՅԵՐԻՏԿՈՄԻՆՏԵՐՆԸ ԱՇԽԱՏԱՎՈՐ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՇԱՀԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՆԱԾ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Ընկերնե՛ր, միջադդային կոմունիստական յերիտասարդական շարժումը կապիտալիստական յերկիրներում, ինչպես հայտնի յէ, այլ պարմաններում և զարդանում, քան լենինյան կոմյերիտմիությունը Խորհրդային յերկրում : Կոմունիստական յերիտասարդական կաղմակերպությունները բուրժուազիայի տիրապետության սարյաններում կոչված են կաղմակերպելու ու դաստիարակելու, ինչպես և սպաշտանելու աշխատավոր յերիտասարդության իրավունքներն ու շահերը : Այդ խնդիրների բարդությունը կրկնա-

պատկվում ե նրանով, վոր աճում ե Փաշիդմի ու խմպերիալիս-
տական պատերազմի վտանգը, իսկ սրա հետ միասին ուժեղանում
ևն տեռորն ու հալածանքները:

Մեր Միությունը միշտ ուշադրությամբ հետևել ե և խորը
կերպով հետաքրքրվել ե նրանով, թե կապիտալիստական պայ-
մաններում ինչպես ե պայքարում և զարգանում յերիտասարդա-
կան հեղափոխական շարժումը: Այդ հետաքրքրությունը և ուշա-
դրությունը նրանով ե պայմանավորվում, վոր «ինտերնացիոնա-
լիզմն այն հիմնական գաղղափարն ե, վոր թափանցում ե կոմյե-
րիտմիության աշխատանքը» (Ստալին):

Եերիտասարդության կոմունիստական ինտերնացիոնալը, վո-
րը կազմակերպվել ե մեծագույն ջանճար Լենինի մոտիկ մաս-
նակցությամբ ու աջակցությամբ, դաժան դասակարգային պայ-
քարում ձևավորվել ե իրեւ հեղափոխական յերիտասարդու-
թյան անխօրտակելի ինտերնացիոնալ միություն:

Եերիտկոմինտերնի առանձին մարտական ջոկատները Գեր-
մանիայում, Չինաստանում, Խոտալիայում, Ճապոնիայում, Հե-
հաստանում, Հարավսլավիայում, Բուլղարիայում և այլ յերկիր-
ներում—մի անգամ չե, վոր ամենաշաժաժան հալածանքների յեն
յենթարկվել ե գաղանացած ռեակցիայի տեսողիստական դրոհնե-
րին են դիմացել:

Եերիտկոմինտերնի ջոկատներում իմայի նույնակես մի անդամ
չե, վոր զանազան տիպի և յերանգի ոպորտունիստներ (Վույովիչ,
Շացկին, Բարբե, Նեյման և այլն) փորձել են կոմյերիտմիությու-
նը դեղորիենտացիայի յենթարկել դասակարգային պայքարում
և քաշել ոպորտունիստական ճաշինը:

Ոպորտունիստական փորձերն անխուսակելիորեն պարտաւ-
թյամբ են վերջացել, վորովհետեւ Եերիտկոմինտերնը անշեղորեն
դեկավարվել ե Մարքս—Ենգելս—Լենին—Ստալինի մեծ ուսմունքով
և ամուր կերպով կանգնած ե յեղել անհաշտ դասակարգային
պայքարի դիրքերում: Հենց այդ պատճառով ել Եերիտկոմին-
տերնը այսոր հեղափոխական յերիտասարդության աշխարհիս
միակ գաղղափարախոսականորեն և կազմակերպորեն համախմբաց-
միջազգային կազմակերպությունն ե: (Մակահարություններ):

Բայց, ընկերներ, չնայած դրան, յերիտասարդության կո-
մունիստական միությունները չեն յեղել և մինչեւ այսոր ել դեռ

շատ յերկիրներում չեն հանդիսանում մասսայական յերիտասարդական կազմակերպություններ :

Իսկ ի՞նչն և կոմյերիտմիությունը կապիտալիստական յերկիրներում յերիտասարդության մասսայական կազմակերպություններ դարձնելու դվյավոր խոչընդուռը :

Գլմավոր խոչընդուռն և յեղել ձախլիկ կամ, ինչպես Յերիտակոմինտերնում սովորաբար ասում են, սեկտորնուական վերաբերմունքը գեղի յերիտասարդության ամենորյա շահերն ու պահանջները և նրա կուլտուրական ու քաղաքական դարդացման առանձնահատկությունների անտեսումը :

Կոմունիստական յերիտասարդության միջավայրում անցյալում լայն կերպով տարածված և յեղել քաղաքականապես սխալ պատկերացում կոմյերիտմիության մասին և հետեւապես նրա խնդիրների մտական իրքեւ «յերիտասարդության» կոմունիստական «կուսակցության» մասին :

Պրակտիկայում այդ արտահայտվել և նրանով, վոր կոմյերիտական կազմակերպությունները փորձել են սեկտորնուն ընդուրիմակել և նույնիսկ իրենցով փոխարինել կոմկուսակցությունները : Կոմյերիտմիության մեջ մտած յերիտասարդությանը նույնպիսի պահանջներ եյին առաջադրում, իսկ առանձին դեպքերում նույնիսկ այլելի մեծ պահանջներ, քան կուսակցության մեջ մըտնողներին : Իրենք կոմյերիտական կազմակերպությունները դրադվում և ապրում եյին միայն վերացական քաղաքականապես, անտեսելով յերիտասարդության տնտեսական, կուլտուրական և այլ առողջ պահանջները :

Յերկար ժամանակ Յերիտակոմինտերնում միևնույն վերաբերմունքը կար ինչպես գեղի սոցիուլ-դեմոկրատիայի և պրոֆմիությունների ռեակցիոն առաջնորդները, վորոնք բուրժուազիայի հետ են համագործակցում, այնպես և դեպի յերիտասարդության շային մասսաները, վորոնք այդ առաջնորդներին հավատում եյին և նրանց հետեւից դնում :

Յերկար ժամանակ յերիտասարդության կոմունիստական կազմակերպությունները դիտում եյին բուրժուազիայի ստեղծած մասսայական կազմակերպություններում գտնվող յերիտասարդությունը՝ իրքեւ «հակառակորդ» : Մի ժամանակ Յերիտակոմինտերնում շատ ընդունված եր այսպես կոչված հակառակորդի «կազմակերպության» տակտիկան : Այդ ի՞նչ եր նշանակում դործնականում :

Խարված յերիտասարդությանը դլխովին «Հակառակորդների» շարքը դասելը նշանակում եր կամուլին մեկուսացնել իրեն յերիտասարդության մասսաներից : Այդ տակադիկան կոմյերիտմիությունը վերածում եր «Ընտրյալ» մարդկանց մի սահմանափակ աղանդի, վորը հրաժարվել է յերիտասարդության լայն մասսաները կազմակերպելու և դաստիարակելու համար ու համբերատար աշխատանքից :

Միջազգային յերիտասարդական հեղափոխական շարժման հենց այդ հիմնական թերությունները և սխալներն եյին, վորմինչև վերջը հայտնաբերվեցին ընկ . Դիմիտրովիլի բոլցեկիյան քննադատությամբ կոմինտերնի VII Համաշխարհային կոնքրետում :

Յերիտկոմինտերնի VII կոնդրեսն ընկեր Դիմիտրովիլի անմիջական դեկանվարությամբ նոր ձևով վորոշեց միջազգային յերիտասարդական հեղափոխական շարժման խնդիրներն ու բնույթը Վա՞րն եր հիմնականը Յերիտկոմինտերնի VII կոնդրեսի վորոշումների մեջ :

Յերիտկոմինտերնի կոնդրեսը կոչ արեց կապիտալիստական յերկիրների յերիտասարդության կոմունիտական միություններն դործնականում ամենավճռական և համառ որայքար սկսել ինքնարավական սեկտանուության դեմ, վորն այդ միություններին մեկուսացնում ե յերիտասարդության լայն մասսաներից :

Այդ հանդամանքը կոնդրեսից պահանջեց առաջադրել «կոմյերիտմիությունն արմատապես վերակառուցելու և կուսակցությունն ամեն տեսակի սեկտանուտական ձևերով ընդորինակելուց լիովին հրաժարվելու» խնդիրը (Յերիտկոմինտերնի VII կոնդրեսի բանաձեկից՝ «Յերիտասարդության միասնական ճակատի խնդիրների մասին») : Այդ վերակառուցումը պետք ե նշանակի կոմյերիտմիության բնույթի փոփոխություն և կոմյերիտմիության վերածումը կապիտալիստական յերկիրներում դասակարգային հիման վրա կազմակերպված մասսայական անկուսակցական յերիտասարդական կազմակերպությունների, վորոնք բավարարում են յերիտասարդության բոլոր առողջ պահանջները, պաշտպանում են յերիտասարդության շահերն ու իրավունքները և իրենց անդամներին դաստիարակում են մարքսիզմ-լենինիզմի վոգով :

Բայց, ընկերներ, կոմյերիտմիության բնույթի փոփոխությունը կապիտալիստական յերկիրներում ամենասերտ կերպով

կապված և պառակտումը հաղթահարելու և բանվոր յերիտասարդությանը միացնելու համար մզգող պայքարի հետ։ Յերիտկումինտերնի ՎI կոնգրեսը վոդեորությամբ և խանդավառությամբ սպաշտանեց ընկեր Դիմիտրովի կոչը «Համարձակութեան միասնական ճակատի ուղիղով դնալու» մասին, բանվոր յերիտասարդությանը միացնելու մասին։

Յերիտկումինտերնի կոնդրեսի վորոշումների մեջ ամենայն վճռականությամբ ասված եւ, վոր Յերիտկումինտերնը՝ հանունաշխատավոր յերիտասարդության շահերի, հանուն նրա իրավունքների ու շահերի համար մզգող պայքարի իր դվիսավոր խնդիրնե համարում պայքարել բանվոր յերիտասարդության միասնալու Քյան համար, ընդհուպ մինչև միանալը և առանձին յերկիրներում յերիտասարդության միասնական հեղափոխական միություններ և միասնական յերիտասարդական ինտերնացիոնալ ստեղծելը։

Կոնդրեսը նույնպես ամբողջ հստակությամբ և պարզությամբ ասաց, վոր Յերիտկումինտերնը ամբողջ ուժով կձգուի դեպի վոչփաշխական յերիտասարդության բոլոր ուժերի կազմակերպումն ու միավորումը մինչև զանազան միատեղ կազմակերպությունների ստեղծումը յերիտասարդ սերնդի կենսական շահերի համար պայքարելու նպատակով։

Պահանջելով այդպիսի վճռական շրջադարձ դեպի յերիտասարդության մասսաները և դեպի մասսայական աշխատանքը, Յերիտկումինտերնի կոնդրեսը նաև մատնանշում եր, վոր Փաշխատական յերկիրներում կոմյերիտության խնդիրն և աշխատել ամեն տեղ, ուր կա յերիտասարդություն, համարձակութեանցելով մասսայական յերիտասարդական Փաշխատական կազմակերպությունները։

Այդ վորոշումները միջադային յերիտասարդական հեղափոխական շարժման համար զարգացման նոր հեռանկարներ բացին Այդ վորոշումները ամբողջությամբ համապատասխանում են Փաշիզմի դեմ մզգող պայքարի այն ծրագրին, բանվոր դասակարգի պատագրման այն ծրագրին, վորը ծավալվեց ընկեր Դիմիտրովի կողմից կոմինտերնի VII կոնդրեսում։ Այդ վորոշումները թելադրված եին կապիտալիստական յերկիրների աշխատավոր յերիտասարդության իսկ շահերով և այն փորձով, վոր կուտակել եր միջադային յերիտասարդական կոմունիստական շարժումը և առաջին հերթին Ֆրանսիայի, Ամերիկայի և Իսպանիայի կոմյերիտությունը։

իսկ ի՞նչ արձագանդ դուան այդ վորոշումները կապիտալիստական յերկիրներում։ Արձագանդը հսկայական եր։ Այդ վորոշումներն ամենից առաջ գրոհի յենթարկվեցին ֆաշիստական մասմուլիկողմից։ Ճիշտ ե, այդ գրոհներն ու հարձակումներն առանձին սրամտությամբ չելին աչքի ընկնում։ Դուք բոլորդ զիտեք և հիշում եք Ուրուղայի «պանրի ասպետների» անհարմար պատմություն։ Ուստի հետությամբ կարող եք պատկերացնել բուրժուական, մանավանդ ամենից ավելի ուեակցիոն ֆաշիստական մամուլի հարձակումների բնույթը։ Այդ մեզ համար առանձին հետաքրքրություն ել չի ներկայացնում, քանի վոր «հեղափոխությունը արտահանելու» չուրջը յեղած՝ սպեկուլացիան համրածանոթ ե և անհեթեթություն ե ներկայացնում իրենից։

Հսկայական հետաքրքրություն են ներկայացնում հենց յերիտասարդության արձագանգները։ Պետք ե նշել, վոր Յերիտակոմինտերնի VΙ կոնդրեսսի վորոշումները հրապարակելուց հետո տառացիորեն աշխարհիս բոլոր յերկիրներում մասսայական վոչկոմունիտական յերիտասարդական կազմակերպություններում դիսկուսիա ծավալվեց դեպի այդ վորոշումներն ունեցած վերաբերմունքի առթիվ։ Այդ դիսկուսիաներն առանձնապես սուր բնույթ են կրում յերիտասարդության սոցիալիստական կազմակերպությունների մեջ։ Բայց ի՞նչն ե հետաքրքիր։ Հետաքրքիրն այն ե, վոր սոցիալիստական յերիտասարդության դեկալարները գրում են, վոր ՚իբր Յերիտակոմինտերնը չըջաղարձ ե կատարում դեպի ռեֆորմիզմը» և քիչ ե մնացել, վոր վորոշի ինքն իրեն վերացնել։ Յերիտակոմինտերնի VI կոնդրեսսի վորոշումների նման մեկնաբանությունը վոչ այլ ինչ ե, քան այդ վորոշումների սկզբունքային բնույթը և նշանակությունը չհասկանալը։

Եեկ ձեր թույլտվությամբ յես կտամ վորոշ բացատրություն, Յերիտակոմինտերնի այն վորոշումների մասին, վորոնք վերաբերում են կապիտալիստական յերկիրների կոմյերիտմիության բնույթի վերակառուցմանը և փոփոխությանը։

Յերիտակոմինտերնի կոնդրեսսի վորոշումների մեջ ասվում ե, վոր յերիտասարդության կոմունիստական միությունները պեսք ե իրենց աշխատանքը կառուցեն իրեւ անկուսակցական յերիտասարդական կազմակերպություններ։

Արդյոք այդ նշանակո՞ւմ ե զասակարգային պայքարի դիրքերից դրորվել և ապովածիկ յերիտասարդական կազմակերպություններ։

թյուններ ստեղծել։ Վոչ, այդ ամենից առաջ նշանակում ե հրա-
յարվել կոմկուսակցությունների աշխատանքը սեկտանտորեն
ընդուրինակելուց, վոր նեղացնում ե յերիտասարդական կազմա-
կերպությունների գործունեյության շընանակները։ Զի կարող
յերկրում յերկու կոմկուսակցություն լինել՝ մեկը բանվորների
կոմկուսակցություն, իսկ մյուսը՝ «յերիտասարդության կոմկու-
սակցություն»։ Պրակտիկան ցույց տվեց, վոր այնտեղ, ուր կոմ-
կուսակցության և կոմյերիտմիության միջև յեղած սահմանները
չնշվում են, այնտեղ կոմյերիտմիությունը վերածվում ե ինքնա-
պարփակվ մի տղանդի, վորը հետու յե կանգնած յերիտասարդա-
կան ամենորյա պահանջներից ու շահերից։ Կոմկուսակցությունը
բանվոր դասակարդի հեղափոխական ավանդարդն ե, նրա առաջա-
վոր և դեկալար կազմակերպությունը։ Նա կազմակերպում ե,
համախմբում և իր հետեւից ե տանում բանվորներին շահագործող-
ների ու ճնշողների գեմ մղած պայքարուա:

Ի՞նչ հիման վրա պետք ե կառուցվի յերիտասարդության
դասակարգակությունը և յերիտասարդական կազմակերպության
ամբողջ աշխատանքը իրավիտական յերկիրներում։ Անշուշտ
դասակարդային հիման վրա, կապիտալիզմի դեմ պայքարելու
հիման վրա։

Այս մասին շատ պարզ կերպով ասված ե Յերիտկոմինտերնի
VI կոնդրեսի վորոշումների մեջ, ուր խոսվում ե այն մասին, վոր
յերիտասարդական կազմակերպություններն «իրենց անդամներին
դասուիարամկում են դասակարդային պայքարի, պրոլետարական
ինտերնացիոնալիզմի վորով, մարքսիզմ-լենինիզմի վորով»։

Յերիտկոմինտերնի կոնդրեսի վորոշումների մեջ ասված ե,
վոր կոմյերիտմիության արմատական վերամիանուցումը յենթա-
դրում ե մասսայական յերիտասարդական իմադմակերպությունների
ստեղծում։ Արդյոք այդ նշանակո՞ւմ ե, վոր դրամով իսկ կոնդ-
րեսը կոմյերիտմիությունը մասսաների մեջ լուծելու միջացով
ինքնալիկվիդացիայի յենթարկելու դրույթը տվեց։ Իհարկե, վոչ։
Ի՞նչը պետք է վորոշի յերիտասարդական կազմակերպությունների
բովանդակությունն ու կյանքը։ Իհարկե, վոչ վերացական քաղա-
քականությունը, վոչ թե պատրաստի կոմունիստական բանաձմեր
ու լողունշներ անդիր անելը, այլ յերիտասարդության բռնը
կենսական շահերը, ամենասարեր առողջ պահանջները և ամե-
նորյա հոգատարությունը աշխատավոր յերիտասարդության

տնտեսական, քաղաքական և կուլտուրական շահերի մասին։ Հենց
այս ե, վոր վորոշում և կոմյերիտմիության վերակառուցման
բնույթը և մասսայական յերիտասարդական կազմակերպության
նոր տիպի ստեղծումը։ Յեթե ճիշտ յուրացնենք Յերիտկոմինտեր-
նի կոնգրեսի այս չափաղանց կարևոր ցուցումը, ապա միանգա-
մայն հասկանալի կդառնանան այդ կոնգրեսի ցուցումներն այն պա-
հանջների մասին, վոր կարելի յե ներկայացնել կոմյերիտմիու-
թյան մեջ մտնող յերիտասարդությանը և յերիտասարդության
միությունների կազմակերպական ձևերի մասին։ Թող համաձայն-
վեն մեղ հետ նրանք, ովքեր քննադատում են կոնգրեսի վորոշում-
ները «ձախից», վոր անկուսակցական յերիտասարդական կազմա-
կերպության մեջ նոր մտնողից պահանջնել կոմկուսակցության,
կոմինտերնի և Յերիտակոմինտերնի ծրագիրն ու կանոնադրությու-
նը դիտենալին ու ընդունելը, պահանջնել, վորակեսղի նա մարքսիս-
տորեն պատրաստված լինի—առնվազն ծիծաղելի յե։ Ի դեպ ա-
սենք, վոր մենք չենք ել լսել, վորակեսղի ձախ սոցիալիստական
յերիտասարդական կազմակերպությունների մեջ առանձնապես
սկզբունքային լինեն այսպիսի պահանջների տեսակետից։ Ընդհա-
կառակը, նրանց շարքերում գերակշռությունը դժբախտաբար դեռ
նրանց կողմը չե, ովքեր միասնական Փրոնտի կողմնակից են, այլ
նրանց կողմն ե, ովքեր վիժեցնում են միասնական Փրոնտի դորձը։

Կոնգրեսն իրավացի յեր, յերբ մատնանշում եր, թե յերիտա-
սարդական կազմակերպությունների դռները

«...պետք ե բաց լինեն բանվոր դասակարդի ամբողջ յե-
րիտասարդության համար, ինչպես և գյուղացի, սուլորող
և այլ յերիտասարդության, վորը անկեղծորեն և լոյակ կեր-
պով կամենում ե մասնակցել այդ կազմակերպությունների
աշխատանքին և զարգացմանը»։

Կոնգրեսն իրավացի յեր, յերբ մատնանշում եր, թե

«յերիտասարդության միությունների կազմակերպական
ձևերը չեն կարող միասնակ լինել բայց յերկիրների, բայց
մարգերի և ֆազաֆների համար, այլ պետք ե համապատա-
խանեն յերիտասարդական շարժման կոնկրետ պայմաններին և
առանձնահատուկ խնդիրներին»։

Իսկ ո՞վ ե կոչված յերիտասարդությանը դաստիարակելու
մարքսիզմ-լենինիզմի վորով։ Ամենից առաջ յերիտասարդական

կազմակերպությունն իմքը և, իհարկե, այն մարդիկ, վորոնք իրենք մարքսիզմ-լենինիզմի կոկական հետևորդներն են—կոմունիստները։ Կոմունիստներն այդ չեն թագցրել և չեն թագցնում։ Իսկ ի՞նչ մեթոդներով են նրանք յերիտասարդությանը դաստիարակում։ Համոզման և անձնական որինակի մեթոդներով։

Յես յենթադրում եմ, վոր այստեղ «ձախ» քննադատները նոր հայտարարությամբ հանդես կդան այն մասին, վոր մեր ալնդումը յերիտասարդության միությունների ինքնուրույնության վերաբերյալ, վորի մասին Յերիտակոմինտերնը իբր թե «տեղի-անտեղի» կրկնում և, մանյուլը և հանդիսանում։

Վոչ, այդ մանյուլը չե։ Պարզության համար կարելի յե բերել հանճարեղ ուսուցիչ Լենինի այն ուշագրավ խոսքերը, վոր հիշեցրեց Յերիտակոմինտերնի կոնդրեսին ընկեր Դիմիտրովը։

«Հաճախ և պատահում, վոր հասակն առածների և ծերերի սերնդի ներկայացուցիչները չեն կարողանում ինչպես հարկն և մոտենալ յերիտասարդությանը, վորը ըստ անհրաժեշտության ստիպված և սոցիալիզմին մոտենալ այլ ձևով, վոչ այնպես, վոչ այն ձևով, վոչ այն հանդամանքներում, ինչ վոր նրա հայրերը։ Այդ պատճառով ել, ի միջի այլոց, մենք պետք և անպայման կողմնակից լինենք յերիտասարդության կազմակերպական ինքնուրույնությանը և վոչ միայն այն պատճառով, վոր այդ ինքնուրույնությունից վախենում են ուղղութեանիստները, այլ և ըստ գործի եյության։ Վորովհետեւ առանց լիակատար ինքնուրույնության յերիտասարդությունը չի կարողանա վոչ իրենից լավ սոցիալիստներ մշակել, վոչ ել պատճառատվել սոցիալիզմը առաջ տանելու համար» (Լենին, հատ. XIX, եջ 295)։

Կարելի յե հիշեցնել նաև ընկեր Դիմիտրովի կողմեց Յերիտակոմինտերնի VI կոնդրեսում ասած խոսքերը։ Նա ասում եր.

«Կոմունիստական ինտերնացիոնալի Գործադիր կոմիտեյի անունից հայտարարում եմ, վոր Յերիտասարդության կոմունիստական ինտերնացիոնալի շարքերում միացած յերիտասարդությունը ունի և կորունական կատարյալ հնարավորություններ իր հեղափոխական շարժումը և լուծելու այդ շարժման հարցերը» (ընկ. Դիմիտրովի ճառը

Յերիտասարդության կոմունիստական ինտերնացիոնալի ՎI
կոնգրեսի բացմանը, 1935 թվի սեպտեմբերի 25-ին) :

Մենք մեր հերթին անկեղծորեն խորհուրդ կտանք մեր «ձախ»
քննադատներին լրջորեն մտածելու այս խոսքերի վրա և քննադա-
տորեն վերաբերվելու սոցիալ-դեմոկրատական կուսակցություն-
ների խնամակալությանը :

Հայտարարությունն այն մասին, վոր կոմյերիտմիությունն
անկուսակցական յերիտասարդական կազմակերպություն ե, վորն
իր անդամներին դատարակում ե կամակիտալիումի դեմ մղած-
պայքարում, վոր միության ամեն մի անդամ ինքն ե վորշում
իր կուսակցական պատկանելիության հարցը, ճշմարտություն և
ամբողջությամբ համապատասխանում ե իրերի խսկական դրու-
թյանը :

Անհրաժեշտ ե հասկանալ, վոր խոսքը կոմյերիտմիությունը
իրոք վոր աշխատավոր յերիտասարդության մասսայական անկու-
սակցական, բայց իր բնույթով հակակապիտալիստական կազմա-
կերպության վերածելու մասին ե: Յերիտկոմինտերնի կոնգրեսը
միավորման հիման վրա այդպիսի կազմակերպություն ստեղծելու
կոչ եր անում նաև սոցիալիստական յերիտասարդական կազմա-
կերպություններին: Այդպիսի յերիտասարդական կազմակերպու-
թյան ստեղծում հրամայողաբար պահանջում են հենց աշխատավոր
յերիտասարդության գործն ու շահերը: Այդ հաստատում ե հենց
ինքը կյանքը: Զափաղանցություն չի մնի, յեթե ասենք, վոր
Յերիտկոմինտերնի վորոշումները տառացիորեն նոր կյանք ներ-
շնչեցին կապիտալիստական յերկիրների յերիտասարդության
կոմունիստական միությունների մեջ: Ճիշտ ե, այդ դեռ չի կա-
րելի ասել դժբախտաբար բոլոր և մասնավորապես յերիտասար-
դության սկանդինավյան միությունների նկատմամբ: Բայց, որի-
նակ, յեթե վերցնենք յերիտասարդության մյուս միությունները,
կարելի յէ ուղղակի ասել, վոր կյանքն աղբյուրի նման հօրդել
ե այնտեղ, ուր յերբեմն իշխում եր ձանձրույթը և դոյություն-
ուներ ինքնամփոփ աղանդ:

Շատ կոմյերիտական կազմակերպություններ արտասահմա-
նում, ակսելով գործնականում կիրառել Յերիտկոմինտերնի ՎI
կոնգրեսի վորոշումները, «Հայտնաբերեցին», վոր յերիտասարդու-
թյունը հետաքրքրվում է վոչ միայն քաղաքականությամբ: «Դուրս

յեկալվ», վոր յերիտասարդությունը հետաքրքրվում է սպորտով՝ յերգեցողությամբ, պարերով, ինքնաթիռությունությամբ, շնթերցանությամբ, տուրիզմով և այլն։ Դուրս յեկալվ, վոր յերիտասարդությունը սիրում է կոլեկտիվ ժամանց, զրոսանք դեպի անտառը, դեպի լճերը և լեռները։ Ցեղ ահա, յերբ յերիտասարդության առանձին կոմունիտական միություններ յերիտասարդության այդ առողջ պահանջների բավարարման ուղիով գնացին, իրենց աշխատանքի կազմակերպական ձևերն արդ պահանջներին հարմարեցնելու ուղիով, տասնյակ հազար յերիտասարդներ սկսեցին ակտիվ կերպով աշակցել կոմյերիտմիության միջոցառումներին։ Ցերիտակոմինտերնի ՎI կոնդրեսից հետո կապիտալիստական յերկիրների յերիտասարդության առանձին միություններում բուռն ան սկսվեց։

Բայց հենց այստեղ ել սկսվեցին մասսայական աշխատանքի խնկական դժվարությունները։

Դեռ չի կարելի ասել, թե յերիտասարդության ամենորյա պահանջների նկատմամբ յեղած ձախվիկ վերաբերմունքը վերջնականապես հաղթահարված է։ Զի կարելի նաև ասել, վոր վերակառուցման իմաստը ամեն տեղ ճիշտ են հասկացել։ Տեղ-տեղ կոմյերիտական կազմակերպությունները՝ ստեղծելով յերիտասարդության մասսայական կազմակերպության նոր տիպ, որինակ, ակումբ, վորոշել են պահպանել իրենց հին սեկտանտական ձևը՝ փողոցային բջիջը՝ վորապես առանձին «Փրակցիա»։ Առանձին յերկիրներում տեղ-տեղ վորոշել են, թե ավելի շատ ե անցնել կուսակցության մեջ, քան համառ կերպով աշխատել յերիտասարդության կազմակերպման և դաստիարակության վրա, իսկ տեղ-տեղ ել վերակառուցումն իրեւ ինքնանպատակ են հասկացել, սկսելով պարզապես հարմարվել յերիտասարդության ամենալայն մասսաներին և այնպես վերակառուցվել, վոր տառացիորեն կորցրել են ամեն մի քաղաքական կողմնորոշում։

Բայց դլամավոր դժվարությունները դրանում չեն, այլ նրանում, վոր նոր ձևով են ծառանում այնպիսի հարցեր, ինչորիսին և դաստիարակությունը, ինչպիսին են դեկավորությունը և կադրերը։

Դործը շատ ավելի հեշտ եր, յերբ միության մեջ մի քանի հազար, իսկ յերբեմն մի քանի հարյուր անդամ կար և յերբ միությունն ապրում եր վերացական քաղաքականությամբ։ Այժմ

ալելի բարդ և ճիշտ կերպով դնել մասսայական կազմակերպության հեղափոխական դատարկարակության գործը և ապահովել կաղըրի պատրաստումը և ղեկավարությունը:

Դժվարությունն, ընկերներ, նաև այն և, վոր դեռ չատ կոմիտասկցություններ արտասահմանում չեն համեցել ընկեր Դիմիտրովի ցուցումն այն մասին, վոր «Երիտասարդության պրոբլեմը միայն կոմիտեի համար պրոբլեմ չե: Այդ պրոբլեմը ամբողջ կոմիտեի համար շարժման պարզեցն ե»:

Սակայն այս բոլոր դժվարությունները հաղթահարելի յեն: Հարկավոր և միայն ցանկություն, համառություն և տոկունություն ցուցաբերել դրված նորատակին հասնելու և յերիտասարդությանը կազմակերպելու ասպարեզում առաջացած արգելքները հաղթահարելու գործում: Իսկ յերիտասարդության կոմունիտատական միություններն այդ ունեն:

Ընկերներ, յերիտասարդության կոմունիտական միությունների բնույթի փոփոխությունը կապված է առաջնային յերկիրներում, պազությային և կիսապաղությային յերկիրներում մասսայական անկուսակցական՝ իրենց բնույթով ազգային-հեղափոխական և համաշխաղերիալիստական յերիտասարդական կազմակերպությունների առաջ դալը կնշանակի ամբողջ Յերիտասարդական կոմունիտական բնույթի փոփոխությունը: Խնչպես հայտնի յէ, Յերիտակոմինտերնի կոնդրեսն անհրաժեշտ դուավ, վոր ընդլայնվեն:

«...Յերիտակոմինտերնի մեջ ընդունելու պայմանները այն խնասով, վոր նրան կարողանան հարել վոչ միայն կոմունիտական, այլ և ուրիշ հակաֆաշիստական, ազգային-պատագրական, ազգային-հեղափոխական յերիտասարդական կազմակերպություններ, վորոնք պատրաստ են միջաղղային համագործակցությանը մասնակցելու»:

Հարց և ծագում, թե մեր միությունն ինչպես պետք և վերաբերվի Յերիտակոմինտերնի VI կոնդրեսի այդ շատ կարևոր վորոշմանը Յերիտակոմինտերնի բնույթը փոխելու մասին: Պատասխանն, ընկերներ, պարզ է: Այդ պատասխանն արդեն տրված և մեր միության ծրագրի ու կանոնադրության նախազծում:

Մենք հաստատ կերպով դիմենք, վոր բանվոր դասակարգի և ամբողջ աշխատավոր յերիտասարդության ուժը միասնության

մեջ եւ Մենք հաստատ գիտենք, վեր Յերիտկոմինտերնը, իր աշխատանքի և կյանքի բնույթը վերակառուցելով, կվերածվի յերիտասարդության խօսկական մասսայական միջազգային միավորման և միլիոնավոր յերիտասարդությանը կղաստիարակի Մարքս—Ենդելս—Լենին—Ստալինի մեծ ուսմունքի վոգով։

ԲԱՆՎՈՐ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՃԱԿԱՏԸ

Վողջ բանվոր յերիտասարդությունն անմիջապես շահագրգըռված ե իր ուժերի միավորման և կազմակերպման մեջ։

«Ամբողջ փորձը ցույց ե տալիս, վոր յերիտասարդությունը չի կարող հաջողությամբ պաշտպանել իր շահերը առանց իր ուժերը համախմբելու բանվոր դասակարգի և ամրադր աշխատավոր ժողովրդի կողմը ընդհանուր թշնամու դեմ, ֆւչիդմի և իմանալիիզմի դեմ մղած պայքարում» (Յերիտկոմինտերնի VI կոնգրեսի բանաձեռից)։ Ամեն մի յերիտասարդական և առավել ևս կոմունիստական կամ սոցիալիստական կաղմակերպության դասակարգայինն եյությունը, քաղաքական գիծը և դեմքը ստուգվում ե խոհական և վոչ թե խոսքով ցույց տված վերաբերմունքով դեպի բանվոր յերիտասարդության միասնական ֆրանլի ստեղծումը և նրա միավորումը։

Յերիտկոմինտերնի Գործկոմը, ինչպես և նրա սեկցիաները համառ կերպով ճգոտում են դեպի յերիտասարդության միացյալ Փրոնտի ստեղծումը և սոցիալիստական կուսակցությունների հետ միանալը։

Յերիտկոմինտերնի Գործկոմը բազմիցս առաջարկել և Յերիտասոցինտերնի Գործկոմին միասնական Փրոնտ ստեղծել և ընդհանուր թշնամու դեմ միատեղ պայքար սկսել համար աշխատավոր յերիտասարդության շահերի։

1933 թվին, յերբ Գերմանիայում Փաշիստներն իշխանության գլուխ անցան, Յերիտկոմինտերնի Գործկոմն առաջարկեց Յերիտասոցինտերնի Գործկոմին միատեղ պայքար սկսել Գերմանիայի աշխատավոր յերիտասարդության պաշտպանության համար։ Յերիտկոմինտերնի Գործկոմի այս առաջարկությունն անպատճախան մնաց։

1934 թվին Յերիտկոմինտերնի Գործկոմն առաջարկեց Յերիտ-

սոցինտերնի Գործկոմին միատեղ գործողություններ սկսել խափանական պրոլետարիատին և գյուղացիությանը, ուրեմն և յերիտասարդությանը նրանց հեղափոխական պայքարում պաշտպանելու համար:

Յերիտսոցինաւերնի քարտուղար Ուենդառւերը այն ժամանակ հետեւյալ կերպ պատասխանեց Ընկեր Ռայմոնդ Գյուլյոյին.

«Ցերիտասարդական սոցիալիստական ինտերնացիոնալի մեջ կազմակերպված սոցիալիստական յերիտասարդությունը աշխուժողեն հետաքրքրվում է բանվոր դասակարգի պայքարով իսպանիայում... Սակայն ներկայում մենք չենք կարող ընդունել ձեր առաջարկը յերկու ինտերնացիոնալների միատեղ դորդողությունների առթիվ բանակցելու մասին»:

Մի՛ մոռանաք, ընկերնե՛ր, վոր այս դրվում եր այն ժամանակ, յերբ Աստուրիայում ունակցիան ապստամբած Հանքավորների, նրանց վորդիների և աղջիկների դատաստանն եր տեսնում անխնա կերպով, յերբ տեսողը Խոպանիայում իր խրախճանքն եր սարգում:

1935 թվի ապրիլին Յերիտկոմինտերնի Գործկոմը դարձյալ առաջարկեց Յերիսսոգինտերնին միացյալ յեղբայրական միասնական Փրոնստ կազմակերպել յերիտասարդության փաշխատական միլիտարիզացիայի դեմ պայքարելու համար։ Յերիտկոմինտերնի այս առաջարկությունն աջակցություն չգտավ Յերիտոցինտերնի Գործկոմի կողմէից։

Վերջապես Յերիտակոմինտերնի VI կոնդրեսը 1935 թվի հոկտեմբերին, Հարեցատանում սկսված պատերազմի և խաղաղությանն սպառնացող հսկայական վտանգի առնչությամբ, առաջարկեց Յերիտակոմինտերնի Գործկոմին անմիջապես անցնել «անհրաժեշտ միջոցառումներ մշակելու, վորապեսի յերիտասարդության դասակարգային սրայքարի միջոցով միջազգային պրոլետարիատի հետ միասին պատերազմը դաշտարեցվի» Հարեցատանում և խաղաղություն ապահովվի հետամնաց յերկիրներում»:

Ուենդառւերը Յերիտամամրդական սոցիալիստական ինտեր-
նացիոնալի անունից պատրասխանեց .

«*У*пгжиаулииотаакиаң բանվորական ինտերնացիոնալի Գործկոմը, ինչպես ձեզ պիտի վոր հայտնի լինի, հոկտեմբերի 12-ին վորոշեց մերժել Կոմունիստական ինտերնացիոնալի ա-

ռաջարկը՝ զբույց անցկացնելու յերկու ինտերնացիոնալի միատեղ յելույթ ունենալու առթիվ ընդում պատերազմի Հարեւստանում։ Սոցիալիստական բանվորական ինտերնացիոնալի Գործկոմի այս վորոշումից հետո մենք ի վիճակի չենք ընդունելու ձեր առաջարկությունը մեր յերկու ինտերնացիոնալների բանակցության մասին այդ նույն հարցի առթիվ։

Ի միջի այլոց հայտնի յեր, վոր Կոմինտերնի առաջարկը Ա ինտերնացիոնալի Գործկոմում քննելիս մեծամասնությունը տրամադրված եր հոգուտ Կոմինտերնի առաջարկությունն ընդունելու։ Բայց հինգ կուսակցությունների (Անգլիայի բանվորական կուսակցության, Հոլլանդիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության, Շվեդիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության, Դանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության, Չեխովակիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության) կատաղորիկ պահանջով Կոմինտերնի առաջարկությունը մերժվեց։ Այն ժամանակ Կոմինտերնի Գործկոմը բոլշևիկորեն պատասխանեց։

«Այդ մարդիկ Սոցիալիստական բանվորական ինտերնացիոնալի Գործկոմի նիստում կատարեցին այն, ինչ պահանջում եւ ուսակցիոն բուրժուազիան սոցիալ-դեմոկրատական լիդերներից, վորոնք մինիստրական պոստերի յեն ձգտում։ Բուրժուազիայի վստահությունը պահպանելու նպատակով նրանք զոհաբերեցին բանվոր դասակարգի շահերը և խաղաղության համար մզվող պայքարի շահերը (Կոմունիստական ինտերնացիոնալի Գործկոմի հայտարարությունը, «Կոմмуնիստիկ Հայրապետություն» №31—32, 1935 թվի նոյեմբերի 10)։

Հարց եւ առաջ դալիս։ Հանուն ո՞ւմ շահերի Յերիտսոցինտերնի Գործկոմի ղեկավարությունը, մասնավորապես Ոլենդաուերը, համառորեն վիճեցնում եր Յերիտսկոմինտերնի՝ միջազգային մասշտաբով բանվորական յերիտասարդության միասնական ճակատ ստեղծելու բոլոր փորձերը։

Փաստերն ու փաստաթղթերը համառ բաներ են։ Մենք արձանագրում ենք միայն փաստերը։ պարզ ե, վոր յեթե չիներ Յերիտսոցինտերնի Գործկոմի դիմադրությունը, բանվոր յերիտասարդության միասնական ֆրոնտը միջազգային մասշտաբով վաղուց պետք ե վոր ստեղծված լիներ։ Պարզ ե, վոր Յերիտսոցինտերնի ղեկավարությունն ուղղակի կախման մեջ ե սոցիալ-դեմո-

Արատիայի ռեակցիոն առաջնորդներից : Այս պատճառով Յերիտ-
առցինտերնի ղեկավարությունը բանվոր յերիտասարդության մի-
ասնական ճակատի շարժման պոչում գտնվեց :

Յերիտասոցինտերնի Գործկոմը ի վիճակի յեր կատեցնելու մի-
ասնական ճակատի հաստատումը միջազգային մասշտաբով, բայց
նա անզոր գտնվեց անմիջապես առանձին յերկիրներում աճող մի-
ասնական ճակատի շարժման առաջ : Անկախ նրա կամքից ու ցան-
կությունից Ֆրանսիայի, Ավստրիայի, Խոստանիայի, Լատվիայի,
Շվեյցարիայի, Արգենտինայի, Մեքսիկայի և մի քանի այլ յեր-
կիրների կոմունիստական և սոցալիստական միություններ միաս-
նական ճակատ հաստատեցին :

Վո՞րն եր բանվոր յերիտասարդության միասնական ճակատ
հաստատելու հիմքը : Ամենից առաջ հենց յերիտասարդության
իրեն ամրական շահերը, պայքարն ընդդեմ Փաշիզմի և իմպե-
րիալիստական պատերազմի վտանգի:

Ես կարող եմ տասնյակ փաստաթղթեր ու փաստեր բերել,
վորոնք ցույց են տրամադրելու ամող միասնական ճակատի բովանդակու-
թյունն ու իմաստը : Ես միայն առանձին քաղաքածքներ կբերեմ դոր-
ծողությունների միասնության այն պակտից (պայմանագրից),
վոր կնքել են իրար հետ Փրանսական կոմյերիտմիությունն և
սոցյերիտմիության աղդային խառն կոմիտեն :

Այդ պակտում (պայմանագրում) ասված ե.

«Մենք, սոցյերիտականներս և կոմյերիտականներս ան-
հրաժեշտ ենք համարում .

1. Միատեղ մորիկիզացիայի յենթարկել Ֆրանսիայի աշ-
խատավոր յերիտասարդությունը միտինգների, թերթիկների,
լրագրերի, թուուցիկների միջոցով :

2. Յերիտասարդությանը կոչ անել ակտիվորեն և մասսա-
յարար մասնակցելու այն բոլոր ցույցերին, վոր կաղմակեր-
պում են կոմունիստական ու սոցիալիստական կուսակցու-
թյունները :

3. Յերիտասարդությանը կոչ անել մտնելու պրոֆմիու-
թյունների մեջ և մերկացնել այն բոլոր կառավարություն-
ներն ու արատակարգ որենքները, վորոնք վատթարացնում են
աշխատավորների կենսական պայմանները և նպաստում են
յերիտասարդության միջև գործադրկությունն ավելանալուն :

4. Նվաճել բանակում յեղած ժողովրդական խավերը հա-

կաֆաշիղմի գործի համար, արագացնելով առաջները կնքված համաձայնությունների կենսադործումը, այն հաշվով, վորպեսզի ճեռք բերվի նորակոչիկների ու զինվորների իրավունքների ու պահանջների հաղթանակը. ստեղծել «նորակոչիկներին ճանապարհ դնող» կոմիտեներ, ինչպես և զինվորական կոպեկների դանձարկղներ ամբողջ աշխատավոր ազգաբնակության մասնակցությամբ:

5. Նվաճել հակաֆաշիղմի գործի համար զործադուրկ յերիտասարդությունը, վոր Փաշիստաները փորձում են դրավել ճարպիկ դիմադողիայի միջոցով:

Մեր ճեռքը վերցնել գործադուրկ յերիտասարդության պահանջների պաշտպանությունը, մասնավորապես զործադուրկ կության Փոնդերի մեջ ներդրավելը և նպաստները մեծացնելը, ինչպես և գործադուրկ յերիտասարդության համար պրոֆեսիոնալ դպրոցներ ու ուղախներ բաց անելը:

6. Կամպանիա ծավալել Թելմանի, Կարլ Զեյցի, Խոպանական Հեղափոխականների, բուլղարական զինվորների և բանտերում կալանավորված բոլոր հակաֆաշիստների աղատության համար, ուժեղացնելով միասնության ցույցերը հոգուտ սրանց, շեֆության կոմիտեներ ստեղծելով Գերմանիայի, Ավստրիայի, Իսպանիայի գործարանների ու քաղաքների հակաֆաշիստական յերիտասարդության վրա և պատրաստելով ազգային-յերիտասարդական հակապատերագմական և հակաֆաշիստական կոմիտեյի կողմից հատուկ հանձնաժողովի առաջումը Բեռլին և Իսպանիա:

Ամսուհետեւ այդ պակտում առված ե.

«7. Կրկնապատճել ջանքերը ԽՍՀՄ-ը պաշտպանելու նպատակով, վորին սպառնում են խմբերիալիստական Ճապոնիան և Փաշիստական Գերմանիան: Այդ կամպանիայի ընթացքում հենցի խորհուրդների այն հետևանքների ու ջանքերի վրա, վրորնք ուղղված են հոգուտ բանվորաց-դյուդացիական և ինտելիգենտական յերիտասարդության :

Մերկացնել ուղմանյութերի արտադրությունն ու փոխադրումը գեպի Հեռավոր Արևելք, կազմակերպելով այդ արտադրության և տրանսպորտի բոյկոտ:

8. Ֆաշիստական պրովոկացիաների հանդեպ ուժեղացնել

բանվորական ազատությունների գործունեյությունն ու
պաշտպանությունը՝ Փաշտական միությունները զինաթա-
փելու ու նրանց առաջնորդներին բանտարկելու նպատակով»:

Համեմատեցե՞ք, ընկերնե՞ր, իր բովանդակությամբ այս խո-
րապես հեղափոխական փաստաթուղթը, վորը գրված և Ֆրան-
սիայի կոմունիստական և սոցիալիստական յերիտասարդության
կողմից, Յերիտոսոցինստերնի Գործկոմի պատասխանի հետ:

Բայց գործը միայն փաստաթղթերի մեջ չեւ Գլխավորն այն
ե, վոր կոմունիստական և սոցիալիստական յերիտասարդությունն
ինքը պայքարի ընթացքում հասկանում և գործողությունների
միասնության ուժը:

Միատեղ պայքարում յերիտասարդությունը քանի դնում
այնքան ավելի յեւ մեսում գիտակցել, վոր իր ուժերը միացնելու
համար անհաղթահարելի խոչնիդուններ չկան:

Ընկեր Դիմիտրովը Կոմինտերնի VII կոնգրեսում կոչ եր ա-
նում բանվոր յերիտասարդությանը միանալու և միասնական կազ-
մակերպություններ ստեղծելու: Այդ իր պարզ և հստակ արտա-
հայտությունը գտավ Յերիտուրմինտերնի VII կոնգրեսի վորոշում-
ների մեջ:

Այդ կոչը խորը արձականդ գտավ հեղափոխական յերիտա-
սարդության մոտ: Յերիտակոմինտերնի VI կոնցընսում ներկա յեր
իտպանական հեղափոխական կոմունիստական ու սոցիալիստական
յերիտասարդության պատվիրակությունը: Սոցիալիստական պատ-
վիրակությունը կոնգրեսին հայտարարեց, վոր նաև համամիտ և
Յերիտակոմինտերնի կոնգրեսի վորոշումներին և իր վրա պարտա-
կանություն և վերցնում հարվածային բրիգադ լինել բանվոր յե-
րիտասարդության միասնության համար մղած պայքարում:

Մենք կարող ենք լենինյան կոմյերիտմիության համադրումտ-
րին զեկուցել, վոր խապանական հեղափոխական կոմունիստական
և սոցիալիստական յերիտասարդությունն այս պարտավորությու-
նը պատվով կատարեց: (Նախահարություններ):

Խապանիայի կամյերիտմիությունն ու սոցյերիտմիությունը
լիովին համաձայնության են յեկել և իրենց ուժերը միացնում
են մի կազմակերպության մեջ: (Նախահարություններ):

Վերջերս «Մունդո Ոբբերո» լրագրում հրատարակվեց յերի-
տասարդության կոմունիստական միության բյուրոյի և յերի-

տասարդության սոցիալիստական միության Գործադիր հանձնաժողովի կոչը :

Կոչի մեջ առկում ե.

«Մենք կամենում ենք ստեղծել նոր տիպի մի կաղմակերպություն, վորն ընդունակ լինի յերիտասարդ սերունդը առաջնորդել և դաստիարակել մարքսիզմ՝ լենինիզմի սկզբունքների վոկով։ Յերիտկոմինտերնի ՎԻ կոնգրեսի վորոշմանը հիման վրա մենք կկառուցնք բանվորա-գյուղացիական յերիտասարդության մի կազմակերպություն, վորն ամենորյա պարարությաք և պաշտպանի յերիտասարդության տնտեսական, քաղաքական և կրտսերական շահերը ընդդեմ ամրող կապետավական ռեժիմի, հանուն աղասության և հանուն սոցիալիզմի հաղթանակի։ Այդ կազմակերպության դռները լայն կերպով բացված կլինեն յերիտասարդ բանվորների, դրազացիների, ռւսանողների առաջ, աղջիկների առաջ—մի խոսքով՝ վողջ յերիտասարդ սերնդի առաջ, վորն ընդունում է նրա սկզբունքները և հակած աշխատելու այդ սկզբունքների կենսադրման համար»։

Ուրիշաղանց կարեոր փաստաթղթի մեջ այնուհետև առկում ե.

«Միացյալ կազմակերպությունը հարում ե պլրոլետարական իմտերնացիսնալիզմի սկզբունքին և միանում ե համակերպող կազմակերպության իրավունքով Յերիտասարդության կոմունիստական ինտերնացիոնալին։ Այդ կազմակերպությունը միջադրային մասսաբով կը որինակով կգործի յերիտասարդության միասնական ինտերնացիոնալ ստեղծելու ուղարկին, ուրատակից և բարեկամական հարաբերություններ պահպանելով Յերիտասոցիստերնի ճախ սեկցիաների ու տարրերի հետ և նրանց հետ գործակցելով...»։

Նույն տեղում իբրև յեղակացություն ասված ե.

«Մենք յերիտասարդության համար առողջ, յերջանիկ կյանք կնվաճենք, մի կյանք, վորով ապրում ե յերիտասարդությունը Խորհրդային Միության մեջ, այն յերկրում, վորին իսպանիայի ամրող աշխատավոր յերիտասարդությունը կազմաշտանի խմբերիալիզմի ու Փաշիզմի հարձակումից»։

Իսպանական հեղափոխական յերիտասարդության միացյալ կազմակերպությունը վողջույն և ուղարկել Լենինյան կոմյերիտմիության X համամիութենական համագումարին։ (Ծափահարություններ)։

Լենինյան կոմյերիտմիության անունից մեր իսպանական բարեկամներին ցանկանանք բեղմնավոր աշխատանք և ավելի ևս մեծ հաջողություններ միասնական հեղափոխական կուսակցություն ստեղծելու և բանվոր գասակարգի միացման համար մղվող նրանց պայքարում։ (Ծափահարություններ)։

Ընկերներ, իսպանական հեղափոխական յերիտասարդության արդարիստ հաջող միավորումից հետո ֆրանսիայի, Բուլղարիայի, Ալբանիայի, Լատվիայի, Շվեյցարիայի, Արգենտինայի և Մեքսիկայի հեղափոխական յերիտասարդությունն ևս մոտիկ և իր ուժերը մի միամնական կազմակերպության մեջ միացնելուն։ Այդ յերկիրների, մանավանդ ֆրանսիայի և Բուլղարիայի յերիտասարդության կոմունիստական միությունները գործնականում որինակ են ցույց տալիս, թե ինչպես պետք ե պայքարել յերիտասարդության միացման համար Յերիտակոմիստերնի VI կոնֆերենսի վորոշումների հիման վրա։

Բայց, ընկերներ, վորքան ավելի մոտ ե յերիտասարդությունն իր ուժերի միավորմանը, այնքան ավելի ուժեղ և լինտերնացիոնալի առանձին կուսակցությունների, Յերիտասարդների սեկցիաների ռեակցիոն առաջնորդների դիմադրությունը։ Հայտնի յեն այնպիսի փաստեր, յերբ առանձին յերկիրներում սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները յերիտասարդության ղեկավարությունից դուրս են վտարել հեղափոխական տարրերը, կամ, վոր ամենից հաճախ ե պատահում, այնպիսի խնամակալություն են ունեցել յերիտասարդական կազմակերպությունների վրա, վոր արգելք են հանդիսացել վորմեծ հարց ինքնուրույն կերպով լուծելուն։

Յերիտասարդական սոցիալիստական ինտերնացիոնալն այժմ դաժան կերպով տուժում է իր ղեկավարության ուղործումնիստական քաղաքականության պատճառով և այդ ղեկավարության՝ ռեակցիոն լիդերներից ունեցած կախման պատճառով։

Յերիտասարդական սոցիալիստական ինտերնացիոնալը առըրում է խորը գաղափարախոսական և կազմակերպարկան նզնածամ։

Յերիտասարդական սոցիալիստական ինտերնացիոնալի մեջ յերկու թե են գոյացել՝ աջ և ձախ։ Բելգիայի, Ֆրանսիայի,

իտալիայի յերիտասարդության ձախ միությունները իսպանական հեղափոխական յերիտասարդության հետ միասին վաստորեն անցել են Յերիտասարդական սոցիալիստական ինտերնացիոնալի հասուլ «քաղաքական սեկտոր» ստեղծելու ուղին:

Ես արդեն ասացի այն միակ ճիշտ ուղու մասին, վորն ընտրել ե իսպանական հեղափոխական յերիտասարդությունը: Կահակածի յենթակա չե, վոր միասնության արդ ուղին կթևակոխի ամբողջ հեղափոխական յերիտասարդությունը: (Մաֆահարություններ):

Իսպանական հեղափոխական յերիտասարդության որինակը համոզիչ է երազով ցույց ե տալիս, վոր Յերիտակոմինտերի ՎI կոնդրեսի վորոշումները հիմք են ստեղծել վոչ միայն միասնական Փրոնտ հաստատելու, այլև յերիտասարդական կազմակերպությունները միացնելու համար: Ենվ վորքան ավելի շատ հասկանա այդ խմելես ձախ, միասնական ճակատի պաշտպան սոցիալիտատական յերիտասարդությունը, այնքան ավելի հաջող կլինի բանվոր յերիտասարդության պայքարը իր իրավունքների և շահերի համար, ընդդեմ Փաշիզմի:

Յերիտասարդական կոմունիստական ինտերնացիոնալը պատրաստ ե բանակցություններ սկսել և գործակցել բոլոր սոցիալիտատական յերիտասարդական կազմակերպությունների հետ, իրուուժեան բանվոր յերիտասարդությունը իր իրավունքների համար մղած պայքարում պետք ե միասնական լինի:

Յերիտակոմինտերնը բարևկամության ձեռք ե մեկնում դատակարդային յեղբայրներին և զինակիցներին և նրանց վոչ ե անում անմիջապես ուժեքը միացնել ընդհանուր թշնամու դեմ պայքարելու համար:

ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԵՐՆԴԻ ՃԱԿԱՏԸ

Ընկերներ՝ կապիտալիտական յերկիրմներում թշվառ դրություն ե ապրում վոչ միայն բանվոր յերիտասարդությունը: Գյուղացիների, ծառայողների, ինտելիգենցիայի, ազգաբնակության այսպես կոչված միջն խավերի յերիտասարդ սերնդի ճշշող մեծամասնությունը տառապում ե գործազրկությունից, կրթություն ստանալու և իր ուժերը արտադրողաբար կիրառելու հնարա-

վորության բացակայությունից, տառապում և կապիտալիստական աշխարհի բոլոր դժվարություններից :

Ֆաշիզմը, իշխանության գլուխ անցնելով, զլխովին միլիոնարդացիայի յեւ յնթարկում յերիտասարդությանը, նրան ստրկության և անկուլտուրականության դատապարտելով։ Ֆաշիզմը հրեշավոր մարդկային սպանդանոց և պատրաստում, ուր իշխող բուրժուազիային զոհ են բերվելու առաջին հերթին միլիոնավոր պատանի և առողջ կյանքեր :

Յես արդեն իմ զեկուցման սկզբում մատոնանչեցի, վոր հենց կյանքի աղջեցության տակ իսկ բուրժուական իդեոլոգիայի և բարոյականության հիմունքները յերիտասարդության լայն մասսաների աչքում խարխված են։ Յերիտասարդությունը փորձում ե, թեկուղ և դեռ վոչ բավական ակտիվորեն, պաշտպանել իր իրավունքներն ու շահերը։

Կապիտալիստական յերկիրների յերիտասարդության համար աննիւտելի չանցան ֆաշիստական դիկտատուրայի յերեք տարին Գերմանիայում, վորը յերկիրը վերածեց ամբողջապես ռազմական և կոնցենտրացիոն ճամբարի։ Ֆաշիստական դեմադոկների բարձրածայն և գրավիչ խոստումների ու լողունակների հետեւ յերիտասարդությունը քանի զնում այնքան ավելի յեւ նշանառում աշխատավորների և խաղաղության ամենավոխերիմ թշնամուն։

Ինքը կյանքը յերիտասարդությանը հրում և ուղիներ վորունելու ֆաշիզմի ու պատերազմի վտանգը կանխելու համար։

Վո՞րը պետք ե լինի յերիտասարդ սենողի պայքարի ուղին հանուն խաղաղության, ընդդեմ ֆաշիզմի ու իմարդիխալիստական պատերազմի, իր սեփական իրավունքների և շահերի համար։

Այդ ուղին ցույց ե տրված կոմիտենի պանծալի զեկավարընկ. Դիմիտրովի կողմից, այդ վոչ-ֆաշիստական յերիտասարդության բոլոր ուժերի միացման ուղին ե։ Յերիտասարդական կոմունիստական ինտերնացիոնալը իր VI կոնդրեսում հայտարարեց, վոր վոչ-ֆաշիստական յերիտասարդության ուժերի միավորմանը կնվիրի իր ամբողջ պայքարը, յեռանդն ու նախաձեռնությունը։ Յեկ մենք, ընկերներ, տեսնում ենք, թե ինչպես հզոր ու լայն կերպով և զարգանում յերիտասարդության սերնդի ճակատը կապիտալիստական յերկիրներում։ Յերիտասարդության շարժումը առանձնապես հզոր թափ ե ընդունել վերջին տարիներս ֆրանսիայում, ԱՄՆ-ում, ԽՍՀԱՆԻԿԱՅՈՒՄ և վերջին ժամանակաշրջանում

Զինաստանում, Արգենտինայում, Անդլիայում և մի շաբք այլ յելլոպական յերկիրներում:

Իսկ ի՞նչ հիման վրա յե սկսում միատեղ աշխատել ամենատարրեր համոզմանքի ու հավատի տեր մասայական յերիտասարդական կարգակերպությունների յերիտասարդությունը: Ի՞նչ և ուղում յերիտասարդությունը և հանուն ինչի՞ յե նա սկսում աշխատակցել:

Ինձ թվում ե, վոր այդ հաջողվել և շատ վառ պատկերավորել ֆրանսիայի կոմյերիտմիության կենտրոնին իր թոռուցիկներից մեկում: Այնտեղ ասվում ե.

«Մենք յերիտասարդությունն ենք:

Մենք ուղում ենք ապրել:

Մենք ուղում ենք հաց, զրադմունք և աշխատանք:

Մենք պահանջում ենք կուլտուրայի իրավունք:

Մենք ուղում ենք մեր ընտանիքն ստեղծել:

Մենք բուռն կերպով խաղաղություն ենք ցանկանում:

Մենք ուղում ենք դնալ աղասության և առաջադիմության ուղիով»:

Յերիտասարդության ինչողիսի՞ ծանր կյանք և թագնված այս բնական և առողջ ցանկությունների հետեւ:

Յեկ մենք տեսնում ենք, թե ինչպես ֆրանսիայում հարյուր հաղարակոր յերիտասարդներ—կոմունիստական, սոցիալիստական, արմատական, պարզիոֆիլիտական և այլ—այլնելի ու ալելի սերտ կերպով միանում են յերիտասարդ սերնդի ճակատում հանուն իրենց այլ ցանկությունների իրավունքման, հանուն ֆաշիզմի դեմ մղան պայքարի: Յերիտասարդ սերնդի ճակատը ֆրանսիայում սերտ կերպով հարում և ժողովրդական ճակատին, վորի ուժն ու հղորությունը շատ անդամներ արդեն իրենց վրա փորձել են ժողովրդի թշնամիները—Փաշիստները:

Վորպեսպի պարզ լինի, թե ինչ հիման վրա յե համախմբում վոչ—Փաշիստական յերիտասարդությունը կապիտալիստական յերկիրներում, կարելի յե քաղվածքներ բերել «Ամերիկյան յերիտասարդության իրավունքների դեկլարացիայից»:

Այնտեղ ասված ե.

«Մենք հայտարարում ենք, վոր մեր սերունդը ողտակար և ստեղծագործ աշխատանքով լի յերջանիկ կյանքի որինա-

կան իրավունք ունի: Դրա համար անհրաժեշտ նախադրյալը՝ ներն են կրթություն ստանալու հնարավորություն ընձեռելը, մշտական աշխատանքը և բավականաչափ աշխատավարձը, ապահովումը կարիքի դեպքում, քաղաքացիական իրավունք ներ ընձեռելը և խաղաղության պահպանումը:

Ենիւ ապա դեկլարացիայում ասվում ե.

«Մենք ունենք կյանքի իրավունք»...

«Մենք ունենք ազատության իրավունք»...

«Մենք ունենք յերջանկության իրավունք»...

«Մենք չենք ուզում կործանլած սերունդ լինել»...

Այդ հայտարարում եւ հսկայական քանակությամբ յերիտասարդական կազմակերպությունների յերիտասարդությունը, կադմակերպությունների, վորոնք միանում են մի մասսայական շարժման մեջ, վորը Ամերիկայում հայտնի յե «Յերիտասարդության կոնդրեսի» շարժում անունով:

Ամեն մի յերկրում յերիտասարդության մասսայական շարժումն իր աղջային առանձնահատկություններն ու գեերն ունի:

Ֆրանսիայում յերիտասարդության մասսայական յերիտասարդական շարժումը զարգանում է իրեւ «Յերիտասարդության կոնդրեսի» ֆրոնտու:

Ամերիկայում՝ իրեւ «Յերիտասարդության կոնդրեսի» շարժում:

Անդիմայում՝ իրեւ «Խաղաղության համար մղվող պայքարի» շարժում:

Իսպանիայում յերիտասարդության շարժումը սերա միերակու կառված և բանվորա-պյուղացիական ալյանսի հետ, ուսակցիայի դեմ հաջողությամբ պայքարող ժողովրդական ճամկատի հետ:

Զինաստանում՝ իրեւ մասսայական և ամենից առաջ տևանող դական շարժում ընդդեմ ճապոնական իմպերիալիզմի, հանուն հայրենիքի վրկության:

Վոչ Փաշիստական յերիտասարդության այդ համախմբումը նկատելի յե նաև Շվեյցարիայում, Զեխուսլովակիայում, Բելգիայում, Հունաստանում և շատ այլ յերկիրներում:

Բայց ի՞նչն ե ընդհանուրը, միջազգայինը յերիտասարդության աղջային այլ շարժումների մեջ:

Ընդհանուրը, ընկերներ, պայքարն և ընդդեմ կարիքի, սո-

վի, յերիտասարդության իրավագուբեք դրության, պայքարը խողության համար, ֆաշիզմի և պատերազմի վտանգի դեմ:

Այդ պատճառով պատահական չե, ընկերներ, վոր յերիտասարդությունը ձղտում և դեպի ինտերնացիոնալ համագործակցության: Զափաղանց դրական ե այն, վոր այդ ինտերնացիոնալ համագործակցությունը ավելի ու ավելի ընդլայնվում, ավելի ու ավելի ամրանում ե:

Այդ հաստատում և ֆաշիզմի և պատերազմի դեմ պայքարի 1 Միջազգային յերիտասարդական կոնֆերանս, վորը տեղի ունեցավ 1933 թվին Փարիզում: Այնուհետև խաղաղության, ազատության և պրոգրեսի Միջազգային յերիտասարդական կոնֆերենցիան, վորը տեղի ունեցավ 1935 թվին Փարիզում: Յեզ վերջապես խաղաղության համար պայքարող Միջազգային յերիտասարդական կոնֆերենցիան, վորը տեղի ունեցավ 1936 թվին Բրյուսելում: Այս վերջին, Բրյուսելի կոնֆերենցիայում ներկայացված եյին 389 միջազգային և ազգային յերիտասարդական ամենատարեր ուղղությունների կաղմակերպություններ, վորոնք միացնում են, ընդհանուր հաշվով, 12 միլիոն մարդ:

Ի՞նչ հիման վրա յե ձեռք բերմել իր բնույթով տարբեր այդ կազմակերպությունների միջև կնքված համաձայնությունը և ի՞նչ հիման վրա այդ կազմակերպությունները հետազում պետք է միասին համագործակցեն: Պատասխան տալիս ե Բրյուսելի կոնֆերենցիայի միաձայն ընդունված բանաձեւը:

Յես ձեր ուշադրությանն եմ հանձնում այդ բանաձեւը.

«12 միլիոն մարդ 23 յերկրից, վորոնք ներկայացված են խաղաղության յերիտասարդական միջազգային կոնֆերենցիայում, վորը տեղի ունեցավ 1936 թվի փետրվարի 29-ին և մարտի 1-ին Ակադեմիայի պալատում Բրյուսելում: —

1) դաստակարտում են իտալական կառավարության հարձակումը Հարեւստանի վրա և պահանջում են լրիվ կերպով կիրառել տնտեսական սանկցիաներ, մանավանդ ինչ շափով վոր այդ սանկցիաները վերաբերում են պատերազմի համար անհրաժեշտ նյութերին, հավաստիացնում են ճնշված հարեւստական ժողովրդին իրենց խորին նվիրվածությունը.

2) հայտարարում են իրենց հաստատ համոզումը, վոր բավական չե հարձակվողի դեմ սանկցիաներ կիրառելը, այլ

վոր սկետք և հարձակման յենթարկվածներին բարոյական և
նյութական աջակցություն ցույց տալ.

3) գտնում են, վոր բավական չե սանկցիաների կիրա-
ռումը վերապահել միայն կառավարություններին. կոչ են
անում բոլոր յերկրների յերիտասարդությանը, ժողովուրդ-
ներին և կազմակերպություններին հակել այդ տնտեսական
սանկցիաների կիրառմանը և թույլ չտալ, վորակեսղի այդ
սանկցիաները վորևե իմալերիալիտական իմաստով ողտա-
գործվեն.

4) նրանք հայտարարում են Հեռավոր Արևելքում և ամե-
նից առաջ Զինաստանում, Մանչուրիայում, Մոնղոլիայում և
Խորհրդային Միության սահմաններին տեղի ունեցող դեպ-
քերի հանդեպ, վոր ճապոնական իմալերիալիզմի դործելակեր-
պը նույն վորով դատապարտելի յե, ինչ և խոալական կառա-
վարության հարձակումը. ուստի նրանք կոչ են անում բոլոր
կազմակերպություններին և մանավանդ յերիտասարդության
կազմակերպություններին, այլև Ազգերի լիդային և կառա-
վարություններին կիրառել ընդդեմ ճապոնական միլիտարիզ-
մի նվազողական քաղաքականության նույն սանկցիաները,
ինչ վոր ֆաշիստական իտալիայի դեմ.

5) վորոշում են պատվիրակություն ուղարկել Ազգերի լի-
դա նրան տվյալ բանաձեռ հանձնելու համար, վորոշում են
նաև դիմել յերիտասարդության բոլոր կադմակերպություն-
ներին և բոլոր ժողովուրդներին.

6) բոլոր յերկիրների յերիտասարդությանը կոչ են անում
համախմբվել այդ վորոշումների պլակտիվ կիրառումն իրենց
յերկիրներում քննության առնելու համար»:

Միլիոնավոր յերիտասարդներ մոտենում են ինտերնացիոնալ
համադաշակցության իրական կենսագործմանը հանուն խաղա-
ղության և պատերազմի հրձիդների դեմ մղվող պայքարի: Ցեղ
մենք կարող ենք պարծանքով ամել, վոր յերիտասարդական կո-
մունիտական միությունները վոչ-ֆաշիստական յերիտասարդու-
թյան համախմբման գործում ցուցաբերած իրենց նախաձեռնու-
թյամբ, յեռանդով և համառությամբ պատվալոր տեղ են նվա-
ճել հղոր կերպով դարձացող մասսայական միջազգային յերիտա-
սարդական շարժման մեջ: Մենք այդ ծածկելու կարիք չունենք.
մենք դրանով պարծենում ենք, ինչպես և նրանով, վոր վոչ մի

աղնիսլ մարդ չի կշտամբի, յենթադրենք, Ֆրանսիայի կամ Ամերիկայի, Իսպանիայի կամ Չեխոսլովակիայի կոմյերիտմիությանը, վոր նրանք դործում են վորպես դավադիրներ, վոր նրանք դործում են ի վնաս իրենց ժողովրդի կամ մի վորեւ այլ յերկրի ժողովրդի:

Ենինյան կոմյերիտմիությունը մի կողմ չի յեղել կանգնած խաղաղության, աղատության և պրոդրեսի համար մզվող պայքարի միջազգային յերիտասարդական շարժման դարձումից: Ֆաշիզմի և պատերազմի դեմ պայքարելու 1 Միջազգային յերիտասարդական կոնդրեսում ներկա յեր խորհրդային յերիտասարդության պատվիրակությունը ընկեր Կոսարեսի գլխավորությամբ: (Մաֆահարություններ):

Մեր միությունը, ինչպես և ամբողջ խորհրդային յերիտասարդությունը, ուշադրությամբ հետեւում եր և իր պատվիրակների միջոցով խորը կերպով հետաքրքրվում եր յերիտասարդության թե՛ Փարիզի և թե՛ Բրյուսելի կոնֆերենցիայի աշխատանքով:

Մենք կարող ենք ուղղակի առել, վոր Ենինյան կոմյերիտմիությունը, ինչպես և ամբողջ խորհրդային յերիտասարդությունը, իր համերաշխությունն արտահայտելով ամբողջ աշխարհի հակաֆաշիտական յերիտասարդությանը, պատրաստ և հետակայում մասնակցել, իր պատվիրակություններն ուղարկելու միջոցով, ինտերնացիոնալ յերիտասարդական կոնդրեսներին ու կոնֆերենցիաներին, վորոնք հրավիրվում են խաղաղությունն ամբաղնդեկու համար, աշխատավորների յերիտասարդ սերնդի շահերի համար:

Ֆաշիզմի և իմակերիալիտական պատերազմի վտանգը պահանջում ե ժողովրդական մասսաների հոգոր ճակատի ստեղծում:

Այդ դժբախտաբար մինչև այժմ զեր չեն հասկանում յերիտասարդության շատ սոցիալիտական կազմակերպություններ:

Զեղ, դուցե, այդ շատ դարձացնի, բայց փաստ ե, վոր Շվեյցիայի, Դանիայի, Նորվեգիայի, Հոլլանդիայի սոցյերիտները մինչև այժմ մի կողմ են կանգնած և անդիտանում են յերիտասարդության մասսայական միջազգային շարժումը: Մի ժամանակ Փաշիզմի ու պատերազմի դեմ ուղղված յերիտասարդության շարժմանը մասնակցել չցանկանալը նրանք ծածկում եյին ճիշերով այն մասին, վոր այդ շարժումը վկոմունիտական խանությ» ե:

Այնուհետև այդ շարժման աճման և զարգացման կապակցությամբ
այդ անհեթեթ փաստարկը ընկալ :

Ինքներդ համաձայնեցեք, վոր 12 միլիոն մարդ միացնող մոտ
400 յերիտասարդական կազմակերպություն, վորոնք իրենց ներ-
կայացուցիչներն եյին ուղարկել ԲՐՅՈՒՆԵԼԻ կոնֆերենցիան, «կո-
մունիստական խանություն» անվանել և դրանով իրենց պասսիվու-
թյունն արդարացնել շատ և շատ դժվար ե :

Այժմ նրանցից մի քանիսը «Հեղափոխականների» դիրք են
ընդունել: Նրանք հայտարարում են, թե մենք, տեսեք, սկզբուն-
քային սոցիալիստներ ենք, ուստի և վոչ մի «կոմպրոմիսի» այլ
կազմակերպություններում գտնվող յերիտասարդության հետ չենք
համաձայնի :

Հասկանալի չե միայն, թե նրանք ինչն են կոմպրոմիս ան-
վանում. Փաշիզմի դեմ մղված միատեղ պայքա՞րը, խաղաղու-
թյան համար, ընդդեմ իմադերիալիստական պատերազմի վտանգի
մղված պայքա՞րը, թե յերիտասարդության պայքա՞րը իր իրա-
վունքների ու շահերի համար: Մեր տեսակետից դրանք վոչ թե
կոմպրոմիսներ են, այլ այն են, ինչն այսոր պետք ե վորոշի յերի-
տասարդության՝ իրեն վոչ-Փաշիստական հաշվող ամեն մի կազ-
մակերպության՝ կյանքի բովանդակությունը:

Նրանցից մի քանիսը բարձրաձայն հայտարարում են, թե մենք
սոցիալիստներ ենք և ընդհանուր վոչինչ չունենք կաթոլիկ, քրիս-
տոնեական և առհասարակ կրոնական յերիտասարդության հետ:
«Կրոնասեր յերիտասարդությունը ունակցիոն ե»: Այդ ճիշտ չե:
Զի կարելի կրոնի, հոգևորականության ունակցիոն դերը և խար-
ված մասսաները, վորոնց միջև հսկայական քանակությամբ աշ-
խատավոր և գործազուրկ յերիտասարդություն կա, խառնել և մի
կույտ դարձնել: Յեկ առհասարակ շատ տարորինակ տեսք կունե-
նար այն «Հեղափոխականը», վորը կհրաժարվեր ունակցիայի աղ-
դեցության տակից յերիտասարդության լայն մասսաները նվաճե-
լու համար պայքարելուց: Այդ գիրքը խորապես սխալ և լնասա-
կար ե: Իմադերիալիստական պատերազմի, ինչպես և Փաշիզմի
վտանգը կարելի յե կանխել միայն ամենալայն ժողովրդական
մասսաները միացնելու և մորիլիզացիայի յենթարկելու պայմա-
նով:

Բայց գործն, ընկերներ, վոչ միայն սոցիալիստական յերի-
տասարդական կազմակերպությունների մեջ ե: Յերիտասարդու-

թյան մասսայական շարժումը դեռ նոր միայն սկսում և ծավալ-
վել: Այդ շարժումը դեռ անհրաժեշտ փորձ չի կուտակել և կաղ-
մակերպորդն դեռ չի ամրապնդված: Դեռ առանձին միություննե-
րի մեջ իրեն զգալ և տալիս ճախ ընդդիմաղբությունը մասսայա-
կան աշխատանքին, իսկ տեղ-տեղ ել արդեն յերևան և դալիս վոչ
պահան վտանգավոր գլխապտույտ սկզբնական հաջողություննե-
րից, վորը կապված և մասսաների համար մղվող պայքարի դըժ-
վարությունները չհասկանալու հետ:

Բուրժուազիան, պատրաստվելով իմպերիալիստական պատե-
րազմի, փորձում և ամեն կերպ վիճեցնել այդ շարժումը: Կապի-
ուալիստական յերկիրների յերիտասարդությանը պետք և լինում
հսկայական դժվարություններ հաղթահարել իր պայքարի ընթաց-
քում: Այնքան ել հեշտ չե բուրժուազիան դադարախոսության
գերությունից աղատվելը: Բայց կապանքները քանդված են և վո-
չինչ չի կարող կասեցնել աշխատավորների յերիտասարդ սերնդի
հակատի աճման դարպացումը:

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ

ՅԵՐՈՍԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ

Բնակերնե՛ր, մենք, խորհրդային յերիտասարդությունս, շրջա-
պատված մեր մեծ ուսուցիչ և բարեկամ Ստալինի, մեր բոլշևի-
կյան կուսակցության և կառավարության հոգատարությամբ, դեռ
մեղ չենք պատկերացնում կապիտալիստական յերկիրների յերի-
տասարդության կյանքի և պայքարի բոլոր պայմանները:

Հեղափոխական յերիտասարդությունը կապիտալիստական
յերկիրներում զոհում և իր կյանքը, իր առողջությունը, իր ըն-
տանիքը հանուն այն բերկըալից կյանքի, վորով այժմ ապրում և
խորհրդային յերիտասարդությունը:

Աղատության համար, սոցիալիզմի համար մղվող պայքարը
հերոսներ և ծնում: Բուրժուազիայի բանակում չե, վոր զարգա-
նում են արիտաթյան, պարտքի, նմիրվածության, ինքնազոհության
աղնիվ նմուշները: Մարդու այդ ամենաազնիվ և ամենաարժե-
քավոր հատկությունները իրենց արտահայտությունը կարող են
դանել միայն Մարքս-Ենդելս-Լենին-Ստալինի հանճարեղ ուս-
մունքի վոզով դաստիարակված մեծ հեղափոխական բանակի մեջ:

Ժողովուրդների մեծ առաջնորդ Ստալինը ի պատասխան այն

բոլոր կազմակերպություններին ու ընկերներին, վորոնք վողջույն-ներ ելին ուղարկել նրա փառապահն հիսնամյա հոբելյանի որվա-առթիվ, գրում ե.

«Կարող եք չկասկածել, ընկերներ, վոր յես պատրաստ եմ առաջիկայում ևս բանվոր դասակարգի դործին, պրոլետա-րական հեղափոխության և համաշխարհային կոմունիզմի դոր-ծին նվիրել իմ բոլոր ուժերս, իմ բոլոր ընդունակություն-ներս և, յեթե պետք յեղավ, իմ ամբողջ արյունը, կաթիլ առ կաթիլ» (Сталин, Сборник статей к пятидесятилетию со дня рождения):

Առաջնորդի այդ խոսքերը խորը թափանցել են բոլոր յերկեր-ների հեղափոխական յերիտասարդության սրտերը:

Կապիտալիստական յերկերների հեղափոխական յերիտասար-դությունը ցույց եւ տալիս արիտության և անձնադոհության մե-ծագույն որինակներ :

Գերմանիայի կոմյերիտմիությունը Փաշխտական ընդհատակի պայմաններում նվաճել և Յերիտկոմինտերնի հերոսական ջոկատի կոչում, ջոկատ, վորն անսահմանորեն նվիրված և կոմունիստա-կան կուսակցությանը: (Մաֆահարություններ):

Բանվոր դասակարգի դործին անսահման նվիրված հերոսնե-րի անուն են վաստակել իրենց կյանքի գնով հաղարծալոր յերիտա-սարդ մարտիկներ :

Բուլղարական ժողովրդի զավակ ընկեր Վոյկովը, մի ժողո-վուրդ, վորը միջաղղային պրոլետարիատին տվել և կոմինտերնի փառապահն զեկավար ընկեր Դիմիտրովին (ծափահարություն-ներ), մահապատժի յենթարկվածների կամերայից մահապատժ-նախորյակին դրում եր .

«Մենք, կոմյերիտականներս, արհամարհում ենք ներումն չնորհելու ամեն մի աղջազանք: Մենք բոլենիկներ ենք և մենք ունենք միայն մի ճանապարհ—պայքարի ճանապարհ:»

Ծնկերներ, ի՞նչպիսի անսահման հավատով են հնչում բան-վոր դասակարգի հաղթանակի նկատմամբ ընկեր Լյուտիբրոդսկու խոսքերը, վորը կախվեց դահճների կողմից: Մահապատժի նա-խորյակին նա գրում եր իր ընկերներին.

«Գլուխներդ բարձր, հայր, իմ թանգաղին կինս, իմ

փոքրիկս, իմ վորդիս, ընկերնե՛ր, հառա՞ջ: Նույնիսկ ծանր զոհերի զնով, բայց հաղթանակը մերը կլինի: Ով զոհաբերության պատրաստ ե, հաղթանակ ձեռք կբերի: Ֆիդիկապես ժեռած մարտիկները կշարունակեն իրենց դոյտվյունը հաղթական պրոլետարիատի հիշողության մեջ: Ենչ յերեխաները կքաղեն այն պրոլետները, վորի համար նրանց հայրերը պայքարել են: Դու ևս, իմ փոքր իլլիչ, վորին յես չեմ կարող համբուրել վերջին անգամ...»

Ինչպիսի՝ արիությամբ են հնչում ընկեր Տիմետառ Գոլինդոյի խոսքերը, վորը դատապարտված լինելով 24 տարվա դժոխային բանտարյին կյանքի, արտակարդ դատարանում հայտարարեց.

«Յես բան չունեմ ասելու հոգուտ իմ պաշտպանության, վորովհետև յես ինձ մեղավոր չեմ զգում: Այն, ինչ մեջ վոր դուք ինձ մեղավորում եք, վոչ թե հանցագործություն ե, այլ մի դործ, վորով յես պարծենում եմ: Ի՞նչն ե ձեր կարծիքով իմ հանցագործությունը: Այն, վոր յես մի շաբաթարիներ պայքարել եմ յերետասարդ բանվորների շահերը պաշտպանելու համար, այն դատակարդի պաշտպանության համար, վորին յես պատկանում եմ: Այսոր ձեր առաջ հայտարարում եմ այդ դործունեցության մասին և իմ վրա յեմ վերցնում ամբողջ պատասխանառվությունն այն պայքարի համար, վորը մենք, յերիտասարդ իտալացի բանվորներս ֆաշիզմի դեմ մղում ենք...»:

Խոպանական ընկերները Յերիտակոմինտերնի VI կոնդրեսում պատոմեցին մի հեղափոխական համարձակության մասին, վորը խոնարհում և հիացմունք և առաջ բերում: Նրանք պատմում եյին.

«Ուիմեռո մայրաքաղաքը համարյա ամբողջությամբ դրաված եր ոտարերկրյա լեզեռների և կտանոնավոր զորքերի ուժերով: Նրանք զրոհ սկսեցին շողեքարշային դեպոյի կայարանի դեմ, ուր զտնվում եյին հեղափոխական ուժերը: Լեզեռնի մի գումարտակը միաժամանակ զրոհ սկսեց Սան-Պետրոյի վրա: Մեզ մոտ մարդ և ռազմամթերք քիչ եր: Աննաման արիությամբ մեր կոմյերիտմիության պարձանք Ամերիկա Լյապոենտեն իր գնդացիրը դրկեց և բացականչեց. «Ընկերնե՛ր, կրա'կ այդ սրիկաների դեմ, հառա՞ջ

Հանուն հեղափոխությանց : Դնդացիրն ուժգին ձարձատեց : Լեզեռներները բաղմաթիվ կորուստներ ունեցան, բայց այդուամենայնիվ այդ բերդը դրավեցին և Ալուա Լյատոննան ձերբակալվեց : Զոկատի հրամանատարը նրան հարցրեց .

— Անունո՞ւ ի՞նչ ե՞:

Նա պատասխանեց .

— Յես կոմյերիտուհի յեմ:

— Համազգեստող դեն շպրտիր—պոռաց ոտարերկրյա լեռնի սպան :

— Նախքան այդ, յես կյանքից մեռք կը աւաշեմ — պատռութանեց Արդան:

Նա հագել եր մեր հակաֆաշիստական միլիցիայի համազգեստը։ Դրանից հետո նրան կապկապեցին, և նրա առջև շարվեց զինվորների մի դասակ, վորը նրան գնդակահարեց։ Ալիքա Լյապունովտեն բոլշևիկյան արիությամբ մեռավ։ Մահից առաջ նրա վերջին խոսքերն եյին։ «Կեցցե՛ խորհրդային հեղափոխությունը։ Կեցցե՛ կոմունիստական ինտերնացիոնալը»։ (Մահակարգություններ)։

Ընկերներ՝, հերոսության, արիության և ինքնազգության հաղարավոր որինակներ կարելի յե բերել չնական, գերմանական, լեհական և հարավ-ալավական հեղափոխական յերիտասարդության պայքարից:

Այստեղ, կապիտալիստական աշխարհում, դաժան դաստիարակությունը պատճեռազմ է: Ֆաշիզմը գաղանային կերպով փորձում է խեղղել հեղափոխական շարժումը: Ֆաշիզմը պատճեռազմ է: Ֆաշիզմը պատրաստվում է հակահեղափոխական հարված ինցիդենտում մեր սոցիալիստական հայրենիքի դիմում, վորը հանդիսանաւմ եամբողջ աշխարհի աշխատավորների ու ճնշածների հայրենիքը:


Ապա ուրեմն ավելի ևս համառ կերպով, ավելի ևս հաստատուն կերպով և ավելի ևս յեռանդուն կերպով ժողովուրդների մեծ առաջնորդ Ստալինի և մեր կառապահն բոլցելիքան կուտակցության ղեկավարությամբ ամրապնդենք ժողովուրդների մեծ քարեկամությունն ու յեղբայրությունը: (Մագիստրատություններ):

Ապա ուրեմն ավելի մեծ յեռանդով պաշտպանենք խաղաղության մեծ գործը:


Ապա ուրեմն պատրաստ լինենք կոմունիստական խնտերնացիոնութեան վառապահանծ շարքերում միջազգային պրոլետարիատի և

բոլոր յերկերների աշխատավորների յերեսասարդ սերնդէ հետ
միտուղ ջախջախիչ հարված տալ Փաշիզմին — սոցիալիզմի և խա-
ղաղության ամենավոխերիմ թշնամուն, աշխատավորների ու յե-
րիտասարդության ամենավոխերիմ թշնամուն :

Կեցցե՛ Մարքս-Ենգելս-Լենին-Ստալինի անհաղթելի դրո-
ւը : (Բաւռն, յերկարատև ծափահարություններ) :




ԸՆԿ. ՖԱՅՆԲԵՐԳԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ
ՀԱՄԼԿՅԵՄ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ





ՅԱ - Լ. ՖԱՑՆԻՔԵՐԴ



Է՞նկերնե՛ր :

Էնինյան կոմյերիտմիության նոր ծրագրի քննարկումն ու ընդունումը մեծ դեպք և մեր միության կյանքում։ Առանց չափաղանցելու կարելի յեւ ասել, վոր ՀամլեթեՄ նոր ծրագրի անհրաժեշտությունը վաղուց և արդեն հասունացել։

ԻՆՉՈՒ ՅԵ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԱՄԼԿՅԵՄ ՆՈՐ ԾՐԱԳԻՐԸ

Կոմյերիտմիությունն իր դոյության առաջին իսկ որերից իր ամբողջ գործունեյության հիմքում՝ դրեց կոմունիստական սկզբունքներ, վորոնք վորոշեցին նրա բնույթն իրեւ յերիտասարդության կոմունիստական կրազմակերպության։ Այս հանդամանքն իր արտահայտությունը դառալ ՌԿԵԵՄ ծրագրի հիմնական թերիսներում, վորոնք ընդունվեցին կոմյերիտմիության Համառուսասանյան [համադրումարտում, 1918թ.։

Այս թեզիսներում ասված ե.

«Միությունը համերաշխ և Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության հետ։ Միությունը նպատակ ե դնում իրեն տարածել կոմունիզմի գաղափարները և բանվոր ու դյուղացի յերիտասարդությանը ներդրավել Խորհրդային Ռուսաստանի ակտիվ շինարարության մեջ»։

Կոմյերիտմիության մեջ յերբեք հարց չի բարձրացվել վորոշիսկու մեր միության դործունեյության բովանդակությունը վորոշող այս հիմնական սկզբունքը։ Փոփոխվել են և վորոշիսկում են կոմյերիտմիության աշխատանքի ձևերն ու մեթոդները։ Սոցիալիստական շինարարության ամեն մի նոտարում կոմյերիտմիության առջև հարուցվել են նոր խնդիրներ։ Բայց միության հիմնական խնդիրը—անձնելեր պայքար կոմունիզմի դործի համար է

աճող սերնդի դաստիարակություն այս վոդով—յերբեք չի փռիւցիլ:

Կոմյերիտմիության իբրև կոմունիստական կազմակերպության քնույթի հարցը լուծվել և դեռևս միության կազմակերպման սկզբում, և այս մտքով մեր ծրագրի հիմնական սկզբումքները մնում եյին և մնում են անփոփոխ:

Կոմյերիտմիության հիմն ծրագրի փոփոխության անհրաժեշտությունն ամենի պարզ պատկերացնելու համար հարկավոր և դիմել այս դրությանը, վորի մեջ ընդունվել և ծրագրիրը:

Մեր հին ծրագիրն ընդունված և ՌԿԾԵՄ Համառուսաստանյան IV համագումարում, 1921 թ. հոկտեմբերին: Սա այն ժամանակ եր, յերբ նոր անտեսական քաղաքականությունն ընդունվելը կես տարվա դոյություն ուներ: Յերկրի ժողովրդական անտեսությունը դեռևս չեր կաղղուրդել իմայերիալիստական և քաղաքացիական պատերազմների տարիներին առաջացած քայլքայման հետևանքներից: Յերկրի անտեսակարգը բնորոշվում եր մեծ խայտարգնությամբ: Սոցիալիստական ձեռնարկությունները շրջապատճակած եյին դյուլացիական մաներ անհատական անտեսությունների մի ամբողջ ծովով: Գոյությունն ունելին և, առևտրի աշխատացման հետևանքով, վորոշ չափով աճում եյին մասնակիր կապիտալիստական տարրերը. կուլտակները դյուլում, մասնավոր ձեռնարկությունները քաղաքում:

Լենինյան «ո՞վ ում» հարցը, վոր կատարյալ վճռականությամբ դրված եր զարգացման ամբողջ լինթացքով, մի հարց եր այն մասին, թե ո՞վ կհաղթի—ժողովրդական անտեսության սոցիալիստական տարրերը, թե՝ կապիտալիստական:

Նոր անտեսական քաղաքականությունը հնարավորության ավեց կուսակցությանն ու խորհրդային իշխանությանը ձեռնարկելու ժողովրդական անտեսության բարձրացմանը, ամբողացնելու բանվոր դասակարգի և աշխատավոր դյուլացիության դաշինքը և հետագայում հարճակում ծալվաբերու կապիտալիստական տարրերի վրա:

Ների առաջին տարիները մեծ դժվարությունների տարիներ եյին: Զնայած խորհրդային կառավարության և իսմունիստական կուսակցության բոլոր ջանքերին, այն ժամանակ բանվոր յերիտասարդության, ինչպես և բոլոր աշխատավորների անտեսական դրությունը դժվարին եր պատերազմի պատճառած մեծ ավերումների հետևանքով: Ուստի այն ժամանակ այնպիսի հարցեր, ինչ-

ողես բանվոր յերիտասարդության տնտեսական շահերի պաշտպանությունը, ինչպես անչափահասների աշխատանքի սոցիալիստական կազմակերպման համար պայքարելը, ամենից կենսական և հրատապ հարցերն եյին: Այս դրությունը, այն ժամանակվա պայմաններն անդրադարձան IV համագումարում ընդունված՝ կոմիտեի համար յանձնական ծրագրում: Այն ժամանակից միության ծրագիրը չի փոխվել, թեև 15 տարի յե անցել արդեն և այդպիսի պահանջը վաղուց հասունացել է:

Այժմ մենք ապրում ենք այնպիսի եպօխայում, յերբ տնտեսական ձևերի նախկին խարսարդետությունը չկա այլևս, յերբ ռոսիայի համար անբաժան անբաժան կերպով տիրող և միակ հրամայող ուժն և ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ: (Ստալին, Համեկ(ը)կ կենտկոմի աշխատանքի մասին կուռակցության XVII համագումարին արված զեկուցումը, Լենինիոմի հարցերը, Էջ 555, X հրատարակություն):

Մեր յերկիրը դարձել է հզոր, ծաղկող պետություն՝ առաջինը ինդուստրիալայություն և խոշոր կուռական դյուդատնամատթյամբ: Իրականացված և մեծ լենինի պատգամը՝ «նեպական Ռուսաստանը կդառնա սոցիալիստական Ռուսատան»:

Սոցիալիստը մեր յերկում հաղթել է վերջնականապես և անդառնալիութեն: Նեպական Ռուսաստանը դարձել է սոցիալիստական Ռուսաստան: ԽՍՀՄ ամբողջ ժողովրդական տնտեսությունը դարձել է սոցիալիստական: Հաջողությամբ և լուծված յերկրորդ հնդկամբակի հիմնակարուն խնդիրը՝ կապիտալիստական տարրերի և առհասարակ գաղաքարդերի վերացումը: Մենք ապրում և աշխատում ենք սոցիալիստական անդառակարգ հասարակության կառուցման պայմաններում, և արդեն պայմանները նախառարարատվում են անդառակարգ հասարակության առաջնա աստիճանից՝ սոցիալիզմից միակամար կոմունիզմին անցնելու համար:

Գետք և ուղղակի ասել, վոր լենինյան կոմյերիտմիությունը վաղուց արգեն չի ապրում իր հին ծրագրով, վորովհետև կյանքը շատ առաջ և զնացել ծրագրից և նա խիստ հնացել է:

Ենո ինձ թույլ կտամ մեջ բնիկնու մի քանի որինակ, վորոնք ցույց են տալիս, թե վորքան հնացել և ՌԿԾԵՄ IV համագումարում ընդունված՝ միության ծրագիրը: 1921 թ. ընդունված՝ միության նախկին ծրագրում ասված եր.

«Ծուսաստանի խորհրդային եշխանության հիմնական խնդիրն ե Խորհրդային հանրապետության պետական ասպարատի կառուցումը, ամրացումն ու կատարելագործումը և սոցիալիստական տնտեսության կառուցումը։ Ծուսաստանի պրոլետարիատը, վորոշակի շրջանակներում թույլ տալով մասնավոր կազիտալիստական տնտեսությունների զարդացումը, պետք ե առաջին հերթին ասլահովի խոչոր արդյունաբերության հաջող շնարարությունը, կարգի դնի հաշվառումն ու վերահսկողությունը մասնավոր ձեռնարկությունների նկատմամբ և բոլոր ուժերով աֆակցի դյուղատնտեսության բարձրացմանն ու բարելավմանը»։

Այս խնդիրները լրիվ և ամրողությամբ վերաբերում են անցյալին։ Սոցիալիստական տնտեսությունը մեր յերկրում արգեն կառուցված ե ։ Կազիտալիստական տարրերն ամրողապիճն վերացված են։ Բանվոր դասակարգը կոմունիստական կուսակցության վեհակավարությամբ ստեղծել ե սոցիալիստական խոչոր արդյունաբերություն։ Յերկրի ինդուստրացման հաջող իրականացումը հնարավորություն տվեց վոչ միայն բարձրացնելու և բարելավելու դյուղատնտեսությունը, ինչպիս դրված եր հին ծրագրում, այլև արմատապես վերակառուցելու այն, դյուղացիական տնտեսությունների մասսան փոխադրելու սոցիալիստական ուղղու վրա։

Յեզ կամ, որինակ, կոմյերիտմիության նախկին ծրագրում ասված եր։

«Մինչև այս ժամանակ, քանի դեռ Ծուսաստանի ժողովրդական տնտեսության մեջ ուժեղ կլինեն մասնավոր կազիտալիստական տարրերը, ՌԿԵՆՄ առջև ինդիք դրված կլինի պայքարել մասնավոր կազիտալի և մանր տնտեսատերերի, արհեստավորների ու տնայինագործների դեմ՝ պաշտպանելու և հսկելու համար անշաբահամների աշխատանքը»։

Պարզ ե, վոր այժմ ծրագրի այս կետն ել կարելի յէ համարել մոռացության տրված, քանի վոր կազիտալիստական տաթիրը վերացված են և այլևս չկա մեկը, վորի հանդեպ պաշտպանելուն աշխատավոր յերիտասարդության շահերը։

Պետական շնարարության մեջ յերիտասարդության մասնակցելու մասին նախկին ծրագրում ասված եր։

«Բնարական տարիքային ցենզն իջևանելով մինչև 18 տարեկան հասակը, խորհրդային Սահմանադրությունը, ինչպես վոչ մի բուրժուական դեմոկրատական սահմանադրություն աշխարհում, վկովին ապահովում ե յերիտասարդ բանվորների ու գյուղացիների բոլոր քաղաքացիական իրավունքները, նրանց դարձնում է պլրուետարական պետության իրավագործարդագիրները : Պրոլետարական յերիտասարդության և նրա կազմակերպության՝ ՌԿԾԵՄ-ի խնդիրը հանդիսանում ե բոլոր յերիտասարդ բանվորների ու գյուղացիների կողմից իրենց իրավունքների լիակատար ոգտագործման իրականացումը...» :

Նախկին ծրագրի այս կետն ել խիստ հնացել ե, քանի վոր խորհրդային սիստեմի՝ յերիտասարդությանը տրամադրած ընտրական իրավունքները նա վկովին ողտագործում ե: Սա յերեսում և թեկուզ խորհուրդների վերջին ընտրությունների տվյալներից, վորոնք վկայում են կոմյերիտականների և ամբողջ աշխատավոր յերիտասարդության ակտով մասնակցության մասին Խորհրդային պետության կառավարման դորժում :

Այս որինակները բավական պարզորոշ վկայում են, վոր ՌԿԾԵՄ IV համագումարի ընդունած՝ միության ծրագիրը խիստ հնացել ե:

Բացի սրանից, կոմյերիտամիության հին ծրագիրը պարունակում ե խորապես սխալ, հակալենինյան այն պնդումը, թե Ռուսաստանը Փկարող և հասնել սոցիալիզմին միայն համաշխարհային պրոլետարական հեղափոխության միջոցովլ :

Ծրագրի այս կետը արմատապես սխալ ե: Նրանում արտահայտություն են գտնել տրոցիկիտական հայացքները և կոմյերիտմիության ծրագրի այն ժամանակվա կազմողները Շացկինի և ուրիշ անձների տրամադրությունները, վորոնք հետագայում ոսկողիցիայի մեջ եյին կուսակցության հանդեպ և նրանցից միքանիսը վկովին անցան կուսակցությունն թշնամիների բանակը: Այս մարզիկ փորձում եյին սխալ կողմնորոշել մեր յերիտասարդությանը, բայց, ինչպես ձեզ հայտնի յե, նրանք պարտություն կրեցին: Թեև նրանց հաջողվել ե այս նորկայի տեսությունը ներս խցկել կոմյերիտմիության ծրագրի մեջ, բայց հայտնի յե բոլորին, վոր իրենց պրակտիկ աշխատանքում և համահեղափոխական տրոցկիզմի գեմ հետազայում մզած գաղափարային պայքարում մեր բան-

վորա-դյուսղացիական յերիտասարդությունն ու Լենինյան կոմյե-
րիտմիությունն իր ամբողջությամբ ցույց տվին իրենց նվիրվա-
ծությունը մի յերկրում սոցիալիզմի հաղթանակի հնարավորու-
թյան լենինյան-ստալինյան ուժամունքին:

Ահա թե ինչու յե մեղ հարկավոր Համկար ԵՄ ներկա համա-
գումարում քննարկել և ընդունել միության նոր ծրագիրը:

Մեր նոր ծրագիրը վոչ միայն ըստ եյության, այլև իր կա-
ռուցվածքով արմատապես տարբերվում է Յերիտասարդության
կոմունիստական ինտերնացիոնալի մյուս սեկցիաների ծրագրե-
րից: Նրանք, այս սեկցիաները, մշտական պայքարի մեջ դժոնվե-
լով բուրժուազիան կառավարությունների դեմ, պրոլետարական
հեղափոխության հաղթության համար պետք ե իրենց ծրագրե-
րում շարադրեն այս պայքարի տակտիկան և քաղաքական ու
տնտեսական վրոշակի պահանջները առաջարկեն աշխատավոր-
յերիտասարդության անունից, յերիտասարդությանը համախմբե-
լով այս պահանջների շուրջը և նրան մորկվեղացիայի լենինարկե-
րով բուրժուազիայի դեմ պայքարելու համար:

Ուրիշ բան ե մեր ծրագիրը: Զարգացնելով իր դրույթները
միության խնդիրների մասին, նա յենում և ԽՍՀՄ-ում առցիա-
վիզմի հաղթանակից; այն բանից, վոր խորհրդային իշխանությու-
նը ներկայացնում է աշխատավոր ժողովրդի ամենալայն մասսա-
ների շահերը: Խորհրդային իշխանությունն զդայում ու հոգա-
տար վերաբերմունք և ցույց տալիս յերիտասարդ սերնդին, պաշտ-
պանում և նրա աշխատանքն ու առողջությունը: Մեր յերկրում
չկան միմյանց հակադիր դասակարգեր, այնպես, ինչպես չկա-
շահագործում, վորից պետք եր պաշտպանել աշխատավոր յերի-
տասարդությանը: Ուստի մենք ամենենին հարկ չենք զգում պայք-
ար մղելու յերիտասարդության շահերի պաշտպանության հա-
մար և մեր ծրագրում վորմե պահանջ առաջարկելու նրա իրա-
վունքների ու շահերի պաշտպանության վերաբերյալ:

Այս պատճառով մեր ծրագիրը միանդամայն ուրիշ բնույթ և
կրում: Նա պետք է նշի կրոմյերիտականների ու յերիտասարդու-
թյան պարտավորությունները Խորհրդային պետության ամրաց-
ման գործում: Նա պետք է լայնորեն ծավալի յերիտասարդության
կրթության, ուսման ու դաստիարակության խնդիրը՝ լենինիզմի
վողով:

Մենք կարիք չենք զգում բառիս տառացի խմաստով ինքներու

կատղմելու մեր ծրագիրը։ Լենինյան կոմյերիտմիությունը հարկ չէ զի զգում ինքը վորոնելու իր զարդացման ուղիները։ Մեր ծրագիրը լրիվ ու ամբողջությամբ հիմնված է յերիտասարդության կոմունիստական դաստիարակության Լենինի—Ստալինի ուսմունքի վրա։ Լենինն ու Ստալինը մեղ նշել են այն ուղիները, վորոնցով պետք և ընթանա կոմյերիտմիությունը։

Լենինի ճառը կոմյերիտմիության III համագումարում, վորոնա արտասահմել եւ սրանից ամելի քան 15 տարի առաջ, ըստ եյության կոմյերիտմիության ծրագիրն եւ, վորով կոմյերիտմիությունը դեկավարվում և մինչեւ այս որերս և պիտի դեկավարվի հետադայում։

Ընկեր Ստալինի ցուցումները, նրա ճառերը կոմյերիտմիության Համամիութենական V կոնֆերենցիայում, Համամիութենական VIII համագումարում, նրա բնորոշումը կոմյերիտմիության դերի վերաբերյալ պրոլետարիատի դիկտատուրայի սխոտեմում, վոր նա տվել եւ «Լենինիզմի հարցերը» աշխատության մեջ, նրա պատասխանները «Կոմսոմոլսկայ Պրաձայի խմբագրության 1925 թ. տված հարցերին», նրա վողջույնները կոմյերիտմիությանը՝ վերջինիս 10—ամյա և 15—ամյա հոբելյանների առնչությամբ, վերջապես, նրա վերջին ցուցումները կոմյերիտմիության աշխատանքի վերակառուցման մասին, նրա դիտողությունները կոմյերիտմիության ծրագիրն ու կանոնադրությունը կադրմելու առնչությամբ տալիս են Լենինյան կոմյերիտմիության գործունեյության խվական ծրագիրը։

Մեր ինձիրը դիմավորապես այն եր, վորապեսդի կարողանայինք այս բոլորից, յերիտասարդության կոմունիստական դաստիարակության Լենինի—Ստալինի ամբողջ ուսմունքից ճիշտ յերակացություններ անել և նշել պրակտիկ խնդիրներ մեր ամբողջ աշխատանքի համար։

ՀԱՄԼԿԵՄ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԴԵՐՆ ՈՒ ԲՆՈՒՅԹԸ

Ընկերներ, ի՞նչպես և դնում մեր նոր ծրագիրը կոմյերիտմիության դերի, նշանակության ու բնույթի հարցը։ Սա մեկն եւ այն առավել կարեոր հարցերից, վոր հարկավոր և պարզաբանել յերիտասարդությանը նոր ծրագիրն ընդունելու առնչությամբ։ Հայտնի յեւ, վոր մեր միության կազմակերպիչը յեղել և կոմու-

նիստական կուսակցությունը։ Կուսակցությունն ե կոմյերիտմիություն ստեղծողը, քանի վոր կուսակցությունը դանում եր, վոր ամբողջ յերիտասարդությանը հանուն սոցիալիզմի հաղթանակի պայքարելու գործին ներդրամիլու համար անհրաժեշտ և ունենալ յերիտասարդական մասսայական կազմակերպություն՝ կառուցված լինքնագործունեյության հիման վրա, ամուր շաղկապլած կուսակցության հետ, ընդունակ ոգնելու կուսակցությանը՝ յերիտասարդությանը դաստիարակելու կոմունիզմի վողով։

Կուսակցության VIII համադումարը, վոր տեղի ունեցավ 1919 թ., քննեց կոմունիստական յերիտասարդական միության հարցը և վորոշում ընդունեց, վորի մեջ ասված։

«Յերիտասարդության մեջ կոմունիստական աշխատանքը հաջող կարող ե ընթանալ միայն ինքնուրույն կազմակերպությունների միջոցով, վորոնց ընթանում են կոմունիզմի դրոշի տուակ, վորոնց մեջ յերիտասարդությունը կարսղանար ցուցաբերել առավելագույն ինքնագործունեյություն, վորն անպայման անհրաժեշտ ե նրա կոմունիստական դաստիարակության համար։ Այսպիսի կազմակերպություն ե հանդիսանում Ռուսաստանի կոմունիստական յերիտասարդական միությունը, վոր հսկայական աշխատանք ե կատարում յերիտասարդության կազմակերպման ու կոմունիստական դաստիարակության գործում, վորը կոչ ե անում պրոլետարական յերիտասարդությանը դեպի կոմունիստական հաստիակության անմիջական կառուցում և դեպի Խորհրդային հանրապետության պաշտպանություն» : («ВКП(б) в резолюциях»: ч. I, стр. 319—320, Партизат, 1936 г.):

Հետևաբար, կոմունիստական յերիտասարդական միությունը, վորի մեջ մենք աշխատում ենք ձեզ հետ միասին, ստեղծվել և կուսակցության կորմից իրեն բանվորագյուղացիական յերիտասարդության մասսայական կազմակերպություն, իրեն մի կազմակերպություն, վոր մը չվաճած ե կուսակցության համար թեթևացնելու յերիտասարդության կոմունիստական դաստիարակությունը և ուղերմիներ պատրաստելու կուսակցության համար և բանվոր դասակարգի բոլոր մասսայակիցն կազմակերպությունների համար։ Կուսակցությունը յերմեք չի փոխել այս հիմնական հայացքը կոմյերիտմիության վերաբերմամբ՝ իրեն յերիտասարդության մաս-

սայական անկուսակցական կաղմակերպության, վոր հարում և Համեկ(բ)կին, աշխատում և ինքնադործունեյության հիման վրա և նպատակ ունի յերիտասարդությանը դաստիարակել կոմունիզմի վողով:

Այս առնչությամբ կոմյերիտմիության կենտրոնական կոմիտեն ընկեր Ստալինի առաջարկությամբ ծրագրի նոր նախագծում տվեց Լենինյան կոմյերիտմիության դերի ու բնույթի հետեւյալ բնորոշումը.

«Համամիութենական Լենինյան կոմունիստական յերիտասարդական միությունը հանդիսանում և Համեկ(բ)կին հարող մասսայական անկուսակցավաճան կաղմակերպություն, իր շարքերում միացնում և քաղաքի ու դյուզի առաջավոր, քաղաքականապես դրադես աշխատավոր յերիտասարդության լայն խավերին: ՀամլկթեՄ-ի խնդիրն եռոգնել կոմունիստական (բոլշևիկների) կուսակցությանը՝ յերիտասարդությանն ու յերեխաներին կոմունիզմի վողով դաստիարակելու դործում: ՀամլկթեՄ, համակրելով Համեկ(բ)կ ծրագրին, ոգնում և բոլշևիկների կուսակցությանն ու խորհրդային կառավարությանը կատարելու պատմական մեծ խնդիրը—կոմունիստական հասարակության կառուցումը:

ՀամլկթեՄ հանդիսանում և Համեկ(բ)կ ոգնականն ու նրա ոեղերվը»:

Այս հարցադրումը, վոր բղխում և կուսակցության բոլոր վորոշումներից յերիտասարդական միության բնույթի հարցի վերաբերյալ, Լենինի և Ստալինի ցուցումներից, բացարձակապես պարզ պիտի լինի:

Բայց և այնպես պետք է խոստովանել, վոր կոմյերիտականների և նույնիսկ կոմյերիտմիության ղեկավար աշխատողների մեջ դեռևս հանդիպում և միության դերի ու նշանակության չըմբռնում:

Հենց կոմյերիտմիության ծրագրի նախագծի քննարկումը, վոր տեղի ունեցավ Համագումարի նախորյանկին, վորոշ ընկերների մեջ ի հայտ բերեց այնպիսի տրամադրություններ, վորոնք վկայում են յերիտասարդական միության դերն ու խնդիրները չըմբռնելու մասին, և այս առնչությամբ ցույց տվեց, վոր անհրաժեշտ և խնամքով պարզաբանել նոր ծրագրի գլխավոր կետերը:

Ահավասիկ, որինակ, Խարկովից մի կոմյերիտական իր նամակում ծրագրի նախադիմ առթիվ գրում ե հետևյալը.

«Միության ծրագրի նախադում առված ե, վոր Համ-
ԼԿՅԵՄ համակրում ե կուսակցության ծրագրին։ Յես ար-
մատապես սխալ եմ համարում այսպիսի ձևակերպումը։ Զե՞
վոր կոմյերիտությունը վոչ միայն համակրում ե Համ։
Կ(բ)կ-ին, այլև նրա ղեկավարությամբ պայքարում ե նոր, սո-
ցիալիստական հասարակության համար, ակտիվ կերպով ուժ-
նում ե կուսակցությանն իրականացնելու նրա գլխավոր
դիմը։

Ըստիս պետք ե ասել. «Կոմյերիտությունը համամիտ
ե կուսակցության ծրագրին, ընդունում ե այն, պայքարում
ե նրա իրականացման համար»։

Կամ թե չե, այնուհետև, այս նույն առիթով մի խումբ կոմ-
յերիտական աշխատողներ նովոսիրիբուկից գրում են.

«Ի՞նչ ե կոմյերիտությունը։ Մեղ թվում ե, վոր այս
հարցին ծրագրում հարկավոր ե պատասխանել այսպես։ «Հա-
մամիութենական Լենինյան յերիտասարդական միությունը
մասսայական հասարակական-քաղաքական, վոչ-կուսակցական
կազմակերպություն ե, վոր անմիջականորեն հարում ե Համ,
Կ(բ)կ-ին»։

Ծրագրի նախադում առված ե. «Համակրելով ՀամԿ(բ)կ
ծրագրին, ՀամԼԿՅԵՄ ողջում ե բոլշևիկների կուսակցու-
թյանն ու խորհրդային կառավարությանը»։ Զավիազանց պատ-
սիվ չե՝ արդյոք այս ձևակերպումը։ Մենք առաջարկում ենք
գրել այսպես. «Բնդումնելով ՀամԿ(բ)կ ծրագրը, ՀամԼԿՅԵՄ,
Հանդիսանում ե կուսակցության և խորհրդային կառավարու-
թյան առաջավոր ողջականը»։

Այս որինակները վկայում են, վոր վորոշ ընկերներ փորձում
են ըստ եյության կոմյերիտությունը նույնացնել կուսակցու-
թյան հետ, չըմբռնելով այն եյական տարբերությունը, վոր կա-
միկ կողմից կուսակցության միջև, վորը ղեկավար ուժ ե, պրոլետ-
արիատի ավանդաբույրը, և մյուս կողմից կոմյերիտության,
վորը հանդիսանում ե կուսակցության ղեկավարությամբ աշխա-
տաղ մասսայական կազմակերպություններից մեկը։

Ընկեր Ստալինն իր «Լենինիզմի հարցերի շուրջը» աշխատության մեջ կուսակցության մասին դրում և հետեւյալը.

«Կուսակցության ուժն այն ե, վոր նա իր մեջն ե առնում պղողնատարիատի բոլոր լավագույն մարդկանց՝ նրա բոլոր մասսայական կազմակերպություններից։ Նրա դերն այն ե, վոր միավորի պղողետարիատի առանց բացառության բոլոր մասսայական կազմակերպությունների աշխատանքը և ուզգի նրանց գործողությունները դեպի մի նպատակ, դեպի պղողետարիատի աղատադրման նպատակը...»

Կուսակցությունը հիմնական զեկավար ուժն ե պղողետարիատի դիկտատուրայի սխատեմում։

«Կուսակցությունը պղողետարիատի դասակարգային միավորման բարձրագույն ձևն ե» (Լենին)» (Ստալին, «Լենինիզմի հարցերը», հայ. եջ 150—151)։

Իսկ ի՞նչ ե յերիտասարդական միությունը։

Ընկեր Ստալինն այս հարցին պատասխանում և միտնդամայն պարզ և վորոշակի, տաելով, վոր յերիտասարդական միությունը

«Դա բանվորական և գյուղացիական յերիտասարդության մասսայական կազմակերպությունն ե, վոչ—կուսակցական, բայց կուսակցությանը հարող կազմակերպություն։ Նրա խնդիրն ե՝ ողնել կուսակցությանը յերիտասարդ սերունդը սոցիալիզմի վորով դաստիարակելու գործում։ Նա յերիտասարդ սեղերվներ և տալիս պղողետարիատի մնացած բոլոր մասսայական կազմակերպություններին՝ կառավարման բոլոր ճյուղերի համար։ Յերիտասարդության միությունն առանձին նշանակություն ճեռք բերեց պղողետարիատի դիկտատուրան ամբազնդվելուց հետո, պղողետարիատի լայն կուլտուրական ու դաստիարակչական աշխատանքի ժամանակաշրջանում» (Ստալին, «Լենինիզմի հարցերը», հայ. եջ 150)։

Կարծեմ պարզ ե, ընկերներ։ Կուսակցության և կոմյերիտամիության միջև տարբերությունը շատ եյական ե, և այն չնկատելը շատ դժվար է։ Այն չնկատել կարող են միայն մարդկեկ, վորոնք չեն ըմբռնում կուսակցության և կոմյերիտամիության կառուցման բուն հիմքերը։ Յեկ հենց այն պատճառով, վոր մի քանի ընկերներ սխալ են պատկերացնում

Յերիտասարդական միության խնդիրները, կոմյերիտմիությունը նը նույնացնելով կուսակցության հետ, — նրանք հանդում են սխալ յեղակացությունների և առաջարկում են խոսել վոչ թե այն մասին, վոր ՀամԼԿՑԵՄ համակրում և Համկ(բ)կ ծրագրին, այլ այն մասին, վոր նա ընդունում և կուսակցության ծրագիրը: Հենց այս պատճառով ել նրանք ամեն կերպ ջանում են ՀՀՌ-ջանցել կոմյերիտմիության, իրեւ անկուսակցական կազմակերպության, բնորոշումը, սխալ կերպով կարծելով, թե այդ նվաստացնում և կոմյերիտմիության դերը:

Իրականում այս բոլորն անխտիր անհեթեթություն ե: Համականել Համկ(բ)կ ծրագրին, չի նշանակում պասսիվ վերաբերմունք ցույց տալ նրան: Սա նշանակում ե ոգմել կուսակցությանն իրականացնելու նրա ծրագիրը: Կոմյերիտմիությունն այս տարիներին հսկայական աշխատանք ե կատարել, ոգնելով կուսակցությանը սոցիալիզմ կառուցելու. նա մասնակցել ե նոր Փարրիկաների ու գործարանների, խորհունտեսությունների ու կոլտնտեսությունների շինարարությանն ու յուրացմանը: Սա ակտիվ պայքար և յեղել սոցիալիզմի համար, վորը ծառայել ե իրեն լուրջ դպրոց կազմակերպիչների, մասնագետների ու աշխատողների բաղմաթիվ կաղըեր պատրաստելու համար ԽՍՀՄ տնտեսական և կուլտուրա-կան շինարարության բոլոր ճյուղերում:

Իսկ վո՞րտեղից են վերցրել իմ մեջբերած նամակի հեղինակները, վոր ոգնել բոլշևիկների կուսակցությանն ու խորհրդային կառավարությանը կոմունիզմ կառուցելու, նշանակում ե պասսիվ վերաբերմունք ցույց տալ կուսակցության ծրագրին:

Նման տրամադրությունները վկայում են «ամեն ինչով կուսակցությանը նման լինելու» կեղծ ձգտման մասին, և այս առընչությամբ այն բանը չըմբռնելու մասին, վոր կոմյերիտմիության գոյության իմաստն ե ոգնել կուսակցության՝ աշխատավոր յերիտասարդության ամենաշային խավերին դաստիարակելու կոմունիզմի վոդով:

Ընկեր Կոսարեվն իր զեկուցման մեջ միանդամայն իբրավացիորեն ասաց, վոր մեղ վոչ մի յերկրորդ կուսակցություն պետք չե: Մեզ մոտ կա մի կուսակցություն՝ լենինյան բոլշևիկյան կուսակցությունը, վորի ղեկավարությամբ մենք աշխատում ենք և վորը բանվոր դասակարգի պայքարի միակ ղեկավարն ե մեր յերկրում: Իսկ նման տրամադրությունները վկայում են այս հարցին սխալ

մոտեցում ունենալու մասին։ Զե՞ վոր ժամանակին վոչ այլ վոք, քան Տրոգիկին եր, վոր դեմազոգիկ կերպով ջանում եր յերիտասարդության մեջ արմատացնել յերկրորդ կուսակցություն ստեղծելու անհրաժեշտության հակալենինյան, հակարուշելիյան միտքը, այն միտքը, վոր մեր յերիտասարդությունն աւավանդաբար դեր կատարելու բանիվորական շարժման մեջ։

Գործնականում կուսակցության և կոմյերիտմիության տարբերության չլարունումը հանդում եր այն բանին, վոր յերբեմն կոմյերիտմիության մեջ մտնողներին առաջադրվում եյին նույնողիսի պահանջներ, ինչ առաջադրվում են Համեկ(բ)կ շարքերն ընդունվողներին, իսկ այդ հանդամանքը հանդում եր կոմյերիտմիության՝ իրեւ մասսայական դաստիարակչական կազմակերպության դերի թուլացման։ Մարդիկ դատում եյին այսպես։ «Բանի վոր մենք կոմյերիտականներին առաջադրում ենք այնպիսի պահանջներ, ինչ և կուսակցության անդամներին, ապա մենք ինչո՞ւ քարշդանք և աշխատենք նրանց դաստիարակման վրա, ովլ դեռևս չի համապատասխանում այս պահանջներին։ Նրանց պարզապես չպետք և ընդունել միության մեջ։»

Եես պետք ե ձեղ ասեմ, վոր մեր ծրագրի սկզբնական նախադասում կային մի շաբաթ կետեր, վորոնք բազմաթիվ պահանջներ եյին պարունակում կոմյերիտականներին։

Ընկեր Ստալինը միանդամայն իրավացիորեն ասաց մեղ, վոր այս սխալ է։ Նա մեղ ասաց. յերբ նայում ես ձեր ծրագրին և այն բոլորին, ինչ դուք պահանջում եք կոմյերիտմիության շարքերը մտնող յերիտասարդությունից, առա տարակուսում ես, թե վորն ե կոմյերիտմիության մեջ մտնողներին առաջադրվող պահանջների տարբերությունն այն պահանջներից, վոր առաջադրվում են կուսակցության մեջ մտնողներին։ Զե՞ վոր դուք կոչված եք դաստիարակելու մեր աշխատավոր յերիտասարդությանը։

Եել այստեղ ընկեր Ստալինը հիմնավորապես ուղղեց մեղ, պարզաբանեց, վոր վորմյերիտմիության խնդիրը պետք ե լինի դաստիարակել մարդկանց, համբերատար կերպով, մանրամասն, հիմնավորապես պարզաբանել յերիտասարդությանն այն ամենը, ինչ նա չի ըմբռնում։ Նա ուղղակի այսպես ել նշեց, վոր կոմյերիտմիությունը պրապադանդիստական կազմակերպություն ե, մի կազմակերպություն, վորն իր ամբողջ աշխատանքով մարքսիստա-

կան-լենինյան ուսմունքի պրոպագանդ և մղում, վորը պարզաբանում, և յերիտասարդությանը նրա համար մութ հարցերը, ողնում և նրան դաստիարակվելու կոմունիզմի վոգով: Ե'լ ավելի համբեռատար, ե'լ ավելի համառ աշխատանք ամեն մի յերիտասարդի դաստիարակման վրա, —ահա թե ինչ և պահանջում մեղնից ընկեր Ստալինը:

Ահա թե ինչու մենք հարկ զգացինք մեր ծրագրից հանել բոլոր այն կետերը, վորոնք բարձր պահանջներ եյլն պարունակում կում կոմյերիտականներին: Այդ բոլորի փոխարեն մենք նշնչինք, թե ինչ վոգով պետք և աշխատանք կատարել կոմյերիտմիության մեջ, վորպեսզի կոմյերիտականներին ու կոմյերիտուհիններին դաստիարակենք կոմունիզմի վոգով:

Այս առնչությամբ կոմյերիտմիության ծրագիրը նոր ձևով և դնում կոմյերիտմիության կազմի և յերիտասարդության դանաղան խավերին վերաբերվելու հարցը:

Եթե կուտակցության և կոմյերիտմիության փոխարարերությունների հարցի մեջ ծրագրի տված ձևակերպումը ակնըստարեն վոչ մի նոր բան չի մտցնում, այլ միայն, հետեւելով ընկեր Ստալինի ցուցումներին, զարգացնում և այն դրույթները, վոր ընդունել և կուտակցությունը դեռևս շատ տարիներ առաջ, ապա յերիտասարդության դանաղան խավերին վերաբերվելու հարցը ծրագիրն այլ կերպ և դնում:

Հին ծրագրում կոմյերիտմիության սոցիալական կաղմի հարցը բնորոշված եր այսպես:

«Համապրոլետարական շարժման մի մասը լինելով, ՌԿՅԵՄ իր առաջադրություններով ու աշխատանքով դասակարգային, պրոլետարական կազմակերպությունն ե: Նրա հիմնական և զեկավար կորիզը բանվոր յերիտասարդությունն ե:

ՌԿՅԵՄ իր շարքերն և ներդրավում բանվոր յերիտասարդության լայն մասաներին և ընդունում և քաղաքային մանր բուրժուազիայի միջավայրից յելած առաձին անձերի, վորոնք ապացուցել են իրենց նվիրվածությունը պրոլետարիատին: Գյուղում ՌԿՅԵՄ հենվում և գյուղացիական ամենաչքավոր և բատրակի յերիտասարդության վրա, իր շարքերն ընդունելով նաև միջակ յերիտասարդության՝ կոմունիզմի կողմն անցնող լավագույն տարրերին:

իր ժամանակի համար այս ձեւակերպումը ճիշտ եր:

Բանվոր յերիտասարդությունն անցյալում իր ղըռության պատճառով, իհարկե, յերիտասարդության միակ խումբն եր, վոր կարող եր ապահովել պրոլետարական ղեկավարությունը կոմյերիտմիության մեջ: Այս խմաստով մեր յերկրի բանվոր յերիտասարդությունը հիրավի պատմական դեր խաղաց: Բանվոր յերիտասարդության ներկայացուցիչները, ղեկավար դիրքեր դրավելով կոմյերիտմիության մեջ, հիմնական ղեկավար կորիզ կազմելով միության մեջ, կուսակցության ղեկավարությամբ նրա համար ապահովեցին ճիշտ զարգացում և աճում: Զեա մեր յերկրում մի վորեւ բնադավառ, վորտեղ չաշխատելին, կատարելով կոմունիստական կուսակցության ամենասպատասխանատու առաջարկությունները, Լենինդրազի, Ռուբախնայի, Մոսկվայի, Ռուբալի և պրոլետարական այլ կենտրոնների բանվոր յերիտասարդության ներկայացուցիչները: Զապահովելով բանվոր յերիտասարդության ղեկավար ազդեցությունը, մենք վոչինչ չեյինք կարող անել թե՛ դյուլացիական յերիտասարդության դաստիարակման և թե՛ աշխատավոր յերիտասարդության այլ խավերի դաստիարակման բնադավառում:

Դյուլում կոմյերիտմիությունը պետք է հենվեր ամենաչքավոր դյուլացիության և բատրակ յերիտասարդության վրա և իր շարքերն ընդուներ միայն զավադույն միջակ յերիտասարդությանը, քանի վոր մեր շինարարությունն ընթանում եր կուլտակության հետ ամենակատաղի բազխուաների պայմաններում, քանի վոր բատրակ և ամենաչքավոր դյուլացիական յերիտասարդությունը միայն կարող եր կոմյերիտմիության համար ծառայել իրեւ ամուր հենարան:

Իտկ այժմ շատ բան և փոխվել: Սոցիալիզմի հաղթանակն այս բոլոր հարցերը նոր ձեռվ և դնում:

Ամենից առաջ չկա և գոյություն չունի վոչ մի ամենաչքավոր դյուլացիական յերիտասարդություն, չկան նաև միջակներ, — սրա փոխարեն մենք ունենք կոլտնտեսական դյուլացիական յերիտասարդություն՝ համախմբված կոլտնտեսություններում սոցիալիտական արտադրությամբ, և դյուլատեստեսական յերիտասարդ բանվորներ, վորոնք աշխատում են խորհուտեսություններում:

Փոփոխվել են նաև ծառայող յերիտասարդության դեմքը: Նրա

Հիմնական կաղըերը ներկայումս գլխավորապես կաղմված են բանվորների, գյուղացիների, մասնագետների, կարմիր բանակի հրամանատարների զավակներից։ Փոփոխվել են նաև յերիտասարդ ինտելիգենցիայի կազմը։ ինժեներները, տեխնիկները, բժիշկները, մանկավարժները, գյուղատնտեսները—այս բոլորն իրենց զգալի մասով սերվում են պրոլետարական միջավայրից, աշխատավոր գյուղացիության միջավայրից, մարդիկ, վորոնք իրենց ամբողջ կյանքով անխղելի կապված են սոցիալիստական չինարարության հետ, մարդիկ, վորոնց աճեցրել են կոմյերիտմիությունն ու խորհրդային իշխանությունը։ Մենք կարո՞ղ ենք արդյոք պահպանել մեր հին վերաբերմունքը դեպի աշխատավոր գյուղացիության տարրեր խավերը։ Իհարկե, վոչ։ Փոփոխված պայմանները պահանջում են այլ մոտեցում դեպի գործը, այլ վերաբերմունք դեպի յերիտասարդության տարրեր խավերը։

Մենք այժմ լիակատար իրավունքով գործ ենք ածում «խորհրդային ժողովուրդ» արտահայտությունը, վորովհետև դաստիարակային սահմաններն ու տարրերությունները վերանում են մեր յերկրում և մեր հասարակությունը կազմված ե քաղաքի ու գյուղի ազատ աշխատավորներից։ Այս առթիվ Ռոյ Հոուարդի հետ ունեցած հայտնի զրույցի մեջ ընկեր Ստալինն ասաց հետեւյալը։

«Մեզ մոտ չկան միմյանց հակաղըրվող կուտակցություններ, ճիշտ այնպես, ինչպես մեզ մոտ չկան միմյանց հակաղիր կապիտալիստների դասակարգ և կապիտալիստներից շահագործվող բանվորների դասակարգ։ Մեր հասարակությունը բացառապես կազմված ե քաղաքի ու գյուղի ազատ աշխատավորներից՝ բանվորներից, գյուղացիներից, ինտելիգենցիայից։»

Առաջ կոմյերիտմիությունն իր կազմով բանվորագյուղացիական կազմակերպություններ։ Նրա շարքերում միավորված եր առաջավոր յերիտասարդությունը, վոր պատկանում եր յերկու տարրեր դասակարգերի՝ պրոլետարիատի դասակարգին և ուրիշի աշխատանքը շահագործող աշխատավոր գյուղացիների դասակարգին։ Հենց այս ե պատճառը, վոր Միության մեջ այնպիսի սրությամբ եր դրված պրոլետարական կորիզի և պրոլետարական դեկալարության հարցը։

Այժմ կոմյերիտմիության մեջ միավորվում ե խոյերդային ժողովրդի յերիտասարդ սերնդի առաջավոր մասը։

Ահա թե ինչու մենք ծրագրում գրում ենք, ինչպես մեղ սովորեցնում ե ընկեր Ստալինը, զոր կոմյերիտմիությունը քաղաքի և գյուղի խորհրդային առաջավոր յերիտասարդության կազմակերպությունն ե, զոր կոմյերիտմիության խնդիրների մեջ ե մտնում բանվոր, գյուղացի, ծառայող յերիտասարդության և յերիտասարդ ինսելիունցիայի քաղաքական դաստիարակության աշխատանքը :

Խորհրդային իշխանության և բոլշևիկների կոմունիստական կուսակցության համար այս պայմաններում հավասարավես կարեոր և կոմունիզմի վողով դաստիարակել թե՛ յերիտասարդ բանվորներին, թե՛ յերիտասարդ կոլտնտեսականին, թե՛ յերիտասարդ ծառայողին և թե՛ յերիտասարդ ինտելիցիանին։ Յերիտասարդության այս բոլոր յենթախավերը սոցիալիստական հասարակության կաղըերն են, վորոնք մասնակցում են կոմունիստական հասարակության ստեղծման մեծագույն գործին։

Կոմյերիտմիությունն անկուտակցական կազմակերպություն ե մասսայական, դաստիարակչական կաղմակերպություն, վոր միավորում և քաղաքի և գյուղի աշխատավոր յերիտասարդությանը, բայց կոմյերիտմիությունը սրա հետ միասին կոմունիստական կաղմակերպություն ե, քանի վոր նրա նպատակն ե յերիտասարդությանը դաստիարակել կոմունիզմի վողով, քանի վոր նա համակրում ե կոմունիստական կուսակցությանը, ողնում և խորհրդային կառավարությանն ու կոմունիստական կուսակցությանը կոմունիստական հասարակություն կառուցելու։ Կոմունիստական յերիտասարդական միությունն իր ամբողջ աշխատանքը կատարում է կուսակցության ղեկավարությամբ։

Ընկեր Ստալինը «Կոմյերիտմիության խնդիրների մասին» հոդվածում ասել ե.

«Ապահովել յերիտասարդության վստահությունը դեպի մեր կուսակցությունը, ապահովել մեր կուսակցության ղեկավարությունը կոմյերիտմիության մեջ—այս ե խնդիրը։ Կոմյերիտականը պետք է հիշի, վոր կուսակցության ղեկավարության ապահովումն ամենագլխավորն ու ամենակարևորն ե կոմյերիտմիության ամբողջ աշխատանքում։ Կոմյերիտականը պետք է հիշի, վոր առօնց այսպիսի ղեկավարության կոմյերիտմիությունը չի կարող կատարել իր հիմնական խնդիրը—բանվորագյուղացիական յերիտասարդության դաս-

տիարակումը պրոլետարիատի դիկտատորայի և կոմունիզմի վոգով» (Տես «Հենինը և Ստալինը յերիտասարդության մասին», եջ 179, 1936թ.):

Կոմյերիտմիությունը յերբեք չի ունեցել կուսակցության գծից տարբերվող իր հատուկ քաղաքական գիծը և չի կարող ունենալ: Միայն լենինիզմի թշնամիները՝ տրոցկիստները, զինովյեավականներն եյին ջանում իրենց նպատակների համար կոմյերիտմիությունը հակադրել կուսակցությանը, մի ամբողջ շարք կոմյերիտական աշխատողներին այն միտքը պատվաստել, թե իրը կոմյերիտմիության մեջ կարող ե թույլատրելի լինել իր հատուկ վորևե քաղաքական գիծը:

Կոմունիստական յերիտասարդական միությունը միշտ ել վճռական պայքար ե մղել կուսակցության թշնամիների, լենինիզմի թշնամիների դեմ: Ու այսուհետև ել կոմյերիտմիությունն իր պարտականությունն ե համարում ամենավճռական ու համառ պայքար մղել լենինիզմի թշնամիների, կոմունիստական կուսակցության թշնամիների փորձերի գեմ՝ ներս խցկելու իրենց հայացքները, ապականելու մեր գործը: Լենինիզմից ամեն մի շեղում կոմյերիտմիության մեջ կհանդիպի ամենապահան հակահարվածի:

Լենինյան կոմյերիտմիության՝ իրեւ մասսայական կաղմակերպության խնդիրն ե աշխատավոր յերիտասարդությանն ու յերեխաներին համախմբել կոմունիստական կուսակցության շուրջը, յերիտասարդությանը սովորեցնել ամենախոր հարզանք ունենալ դեպի խորհրդային իշխանությունը, պարզաբանել յերիտասարդությանը, վոր այն ամենը, վորից նա այժմ ողոտվում է կյանքում, արդյունք ե Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության, արդյունք ե խորհրդային իշխանության կատարած ամենահսկայական աշխատանքի:

Կոմյերիտմիությունն աշխատավոր յերիտասարդությանը համախմբում ե խորհրդային իշխանության չուրջը, ողնում և կուսակցությանը կոմունիստական հասարակություն կառուցելու: Խորհրդային մեծ Մեռության մեր յերիտասարդությունն իր ամբողջ բախտը լիովին ու ամբողջությամբ կապում ե պրոլետարական մեծ գործի բախտին, կոմունիստական կուսակցության բախտին, կոմունիզմի կառուցման գործի համար մղվող ամբողջ պայքարին: Այս բանում յերիտասարդությունը հետևում է լենինի

մեծ պատղամներին։ Լենինը՝ հանդես գալով ՌԿԾԵՄ Համառուսականյան III համազումարում, ասաց։

«Այն սերունդը, վորի ներկայացուցիչներն այժմ մոտ 50 տարեկան են, չի կարող հույս ունենալ, վոր կտեսնի կոմունիստական հասարակությունը։ Մինչև այդ ժամանակ այս սերունդը կմահանա։»

Իսկ այն սերունդը, վորն այժմ 15 տարեկան է, նա թե՛ կտեսնի կոմունիստական հասարակությունը և թե՛ ինքը կկառուցի այս հասարակությունը։

Եւդ նա պետք է իմանա, վոր իր կյանքի ամբողջ խնդիրն և այս հասարակության կառուցումը» (Լենին, XXX հ., էջ 416—417)։

Բնիկերներ, յետ պետք է ասեմ, վոր կոմյերիտմիության ծրագրի վլխավոր իմաստը, այն ծրագրի, վոր մենք պետք ե ընդունենք, կարենի յեր մի քանի խոսքով ձևակերպել այսպես։ խորհրդային ժողովրդի յերկուասարդ սերնդի՝ լենինյան կոմյերիտմիության դեկավարությամբ միավորված յերկուասարդ ամբողջ յերկուասարդության ամբողջ կյանքի խնդիրն և՝ պայքարել կոմունիստական հասարակության կառուցման համար։

ՀամլեթեՄ ծրագրի ու կանոնադրության նախադերի առթիվ ընկեր Ստալինի արած ուղղումներն ու դիտողությունները հանդիսանում են նրա այն ցուցումների դարձացումը միության աշխատանքի վերակառուցման մասին, վոր նա արել ե ընկեր Կոռուպենի և կոմյերիտմիության ուրիշ աշխատողների հետ ունեցած հայտնի զրուցում մի տարի առաջ։

Այս ուղղումներն ու դիտողությունները փոփոխում են կոմյերիտմիության աշխատանքի ամբողջ բովանդակությունը նոր պայմանների համեմատ։ Մրազը նախազիճը, վոր մենք առաջարկում ենք X համազումարին, ամենից առաջ զարգացնում և լենինի ու Ստալինի այն ցուցումները, վոր յերիտասարդության դիմավոր խնդիրն և՝ սովորել։ Մեր ծրագիրը յերիտասարդության կոմունիստական համակաղմանի դաստիարակության կազմակերպման ծրագիր է։ Ահա թե ինչու ծրագիրը հատուկ բաժիններ ունի յերիտասարդության քաղաքական դաստիարակության վերաբերյալ, կոմյերիտմիության խնդիրների վերաբերյալ դպրոցում և յերեխաների մեջ աշխատելու ասպարեզում, յերիտասարդության կըր-

թության, գիտությանը տիրապետելու ասպարեզում, յերիտասարդության Փիղիկական զարդացման ասպարեզում։ Կոմյերիտմիության գործողությունների այս ամբողջ պլրակտիկ ծրագիրն ուղղված է դեպի կենտրոնական, գլխավոր լողունդի իրականացումը, վոր տվել և լենինը և գարդացրել և Ստալինը, այն եւ առվորել, սպառել և սպառել։

Մեզ մոտ վորոշ ընկերներ յերբեմն կարծում են, թե քանի վոր կոմյերիտմիությունը մենք բնորոշում ենք իրեւ անկուսակցական դաստիարակչական կաղմակերպություն, ապա սրանով մենք մի տեսակ նվազեցնում ենք կոմյերիտմիության դերն ու նշանակությունը։ Այսպես մտածողները խորապես սխալվում են։ Բնդհակառակը՝ խոսքը վերաբերում է յերկրում կոմյերիտմիության դերի հսկայական չափով անելուն։ Ինքներդ դատեցնեք. յեթե առաջ կոմյերիտմիությունն աշխատանք եր կատարում դերազանցապես բանվոր յերիտասարդության մեջ քաղաքում և դյուլացիական յերիտասարդության մի մասի մեջ՝ գյուղում, ապա այժմ մենք պետք ե քաղաքական-դաստիարակչական աշխատանք կատարենք քաղաքի և գյուղի ամբողջ աշխատավոր յերիտասարդության մեջ։ Յեթե առաջ մենք քիչ ուշադրություն ենինք դարձնում տարրական, միջնակարգ և բարձրագույն դպրոցի աշխատանքի վրա, ապա այժմ մեր առջև հսկայական խնդիրներ են դրված այս բնագալառում, վորտեղ պատրաստվում են սոցիալիտատական շինարարության կաղըբեր։ Կուսակցությունը կոմյերիտմիության վրա ամենալուրջ խնդիրներ ե զնում յերեսաների մեջ աշխատելու ասպարեզում։ Յետ ձեզ կհիշեցնեմ դեմք միայն մի այնպիսի փառություն, ինչպիսին Մանկական հրատարակչության հանձնումն ե Համլեկօնը։

Կուսակցությունը մեզ դրել է այն ճակատամասի վրա, վորտեղ լուծվում է ամբողջ խորհրդային ժողովրդի ապագան ներկայացնել յերիտասարդ սերմնի դաստիարակության նախատագիրը։ Առա թե ինչու այս ծրագիրը, վոր մենք առաջարկում ենք համագումարի ուշադրությանը, վկայում ե կոմյերիտմիության հարամաւմ դերի ու նշանակության մասին։

ԱՇԽԱՏԱՎՈՐ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅՅՈՒՆԸ
ԽՈՀՄ-ՈՒՄ, ՆՐԱ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՍՏՐԱԿՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՆՐԱ ՄԻՋԻՑ ԿՐԹՎԱԾ
ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

ՅԵՐԻՏԱՍԱՎՈՐԻ ՍԵԽԱՏԱՆՔԻ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՀԱՐԹԵՐԸ

ԽՍՀՄ-ում յերիտասարդության աշխատանքի ու կրթության բոլոր արժատական հարցերը, վորոնք կապիտալիստական հասարակակարգի պայմաններում յերբեք չեն կարող լուծվել աշխատավոր յերիտասարդության համար, լիովին լուծված են հոգուտ յերիտասարդության :

Այս հարցերն, իհարկե, կարող ելին լուծվել միայն խորհրդային կարգերի պայմաններում, ամեն մի շահագործման վոչնչացումից հետո :

Յերիտասարդության աշխատանքի ու կրթության արժատական հարցերը մշտապես հանդել են հետևյալին .

1. Յերիտասարդության, ինչպես և ամբողջ բանվոր դասակարգի համար տնտեսական դրության տեսակետից ամենաարժատական հարցը մշտապես յեղել և զործազրկության վերացման հարցը : Գործազրկությունը բանվորների ամենազմնդակ պատուհանն է : Մեկ մոտ զործազրկությունը վերացված ել լրիվ և ամբողջությամբ : Այժմ արդեն վերանում ե գործազրկության բուն իսկ հասկացողությունը, իսկ նոր հասունացող սերնդի համար այն ուղղակի անհասկանալի յե, մինչդեռ բանվոր դասակարգի նախընթաց սերնդի համար զործազրկությունն ամենադաժան աղետների ու գժրախտությունների աղբյուրն եր :

2. Աշխատանիքային որվա տևողության հարցը : Անցյայում բանվոր յերիտասարդության կյանքի արժատական հարցերից մեկն եր պայքարը հանուն 8-ժամյա աշխատանքային որվա բոլոր բանվորների համար, հանուն կրծատ աշխատանքային որվա՝ յերիտասարդության ու անչափահասների համար :

Հայոնի յե, վոր մեղ մոտ այս հարցերը լուծված են նախ մտցնելով 8-ժամյա, իսկ ապա 7-ժամյա աշխատանքային որվ բոլոր բանվորների համար և սահմանելով 6-ժամյա աշխատանքային որ 16—18 տարեկան յերիտասարդության համար :

3. Յերեխաների ու անչափահասների աշխատանիքի պաշտպանության հարցը : Մանկական աշխատանքի շահագործման դեմ

պայքարելը հանդիսանում եր բանվոր դշասակարգի պայքարի ար-
մատական կարևորագույն հարցերից մեկը։ Հայտնի յե, վոր կա-
պիտալիզմի ժամանակ յերեխաների աշխատանքն ամենաեժան աշ-
խատանքն ե և յենթարկվում ե անողոք շահագործման։ Կապի-
տալիզմը յերեխաներին շահագործում ե ամենավաղ հասակից,
հաճախ 6—7 տարեկանից։

Մեզ մոտ այս բանը չկա։ Մինչև 16 տարեկան անշահահաս-
ների աշխատանք չի կիրառվում ձեռնարկություններում։ Մինչև
18 տարեկան յերիտասարդության աշխատանքը արդելված ե կի-
րառել ստորերկրյա և առողջության համար առանձնապես լինասա-
կար աշխատանքներում։

4. Յերիտասարդության համար ամենաարժատական հարցը
մշտապես յեղել ե արտադրողական աշխատանքը անշափական մերի
ուսուցման հետ միացնելու հարցը, վոր կազմում ե յերիտասար-
դության աշխատանքի սոցիալիտական վերակազմության եյու-
թյունը։ Արտադրողական աշխատանքն ուսուցման հետ զուգորդե-
լու խնդիրը դրել ե տակալին Մարքսը։ այս խնդրի իրականաց-
ման մեջ նա տեսնում եր միակ ուղին կոմունիտական հասարա-
կության բազմակողմանի զարգացած մարդիկ դաստիարակելու
համար։

Մեզ մոտ այս խնդիրն ամբողջությամբ լուծված է։ Այն լուծ-
ված ե ամենից առաջ Փարբիկա-դործարանային աշակերտության
դպրոցներ ստեղծելով և ընդհանուր ու արտադրական ուսուցումը
կազմակերպելով։

5. Կապիտալիտական հասարակակարգի համար բնորոշ ե
քանվոր և զյուղացի յերիտասարդության աշխատանքի և, գլխա-
վորապես, նրանց կրթության պայմանների խիստ հակադրությունը։

Այժմ ԽՍՀՄ-ում սոցիալիզմի հաղթելու հետևանքով զյու-
ղում արմատապես փոփոխվում են զյուղացի յերիտասարդության
կյանքի պայմանները։

Բանվոր և զյուղացի յերիտասարդության միջև նրանց աշ-
խատանքի ու կրթության պայմաններում դոյցությունը ունեցող
հակադրությունն այժմ վերանում է։

Գյուղի կողեկտիվացումը, մեծ քանակությամբ մեքենաների
մուծումը գյուղատնտեսության մեջ, նոր տեխնիկայի մուծումը
տանում են դեպի գյուղատնտեսական աշխատանքի վերածումը
ինդուստրիալ աշխատանքի մի տարածումակի։ Կոլտնտեսական
գյուղացիությունը հաջողությամբ տիրապետում ե տեխնիկային։

Գյուղական յերիտասարդությունն ունի կրթություն ստանալու բոլոր հնարավորությունները:

Ե. Ենվ, վերջապես, յուրաքանչյուր յերիտասարդի համար արմատական հարց եր կրթության հարցը, պրոֆեսիա ընտրելու հարցը, նրա ամբողջ հետազա բախտի հարցը:

Առաջ յերիտասարդները սովորաբար հետևում եյին իրենց ընտանիքի տրաղիցիաններին. հաճախ սերնդեսերունդ անցնում եր միևնույն պրոֆեսիան:

Այժմ յերիտասարդությունը հնարավորություն ունի ստանալու վոչ միայն միշնակարդ, այլև բարձրագույն կրթություն, հնարավորություն ունի ընտրելու ուղած պրոֆեսիան, քանի վորբուր պրոֆեսիանները մեր յերկրում հավասարապես հարդաքունեն: Խորհրդային յերկրի յերիտասարդն աղատորեն ընտրում ե պրոֆեսիա, բոլոր հնարավորություններն ունի հողեկան ու ֆիզիկական բաղմակողմանի զարգացման համար:

Այս բոլոր հարցերն ել հենց կազմում են յերիտասարդության աշխատանքի ու կրթության այսպես կոչված արմատական հարցերը, և մեղ մոտ նրանք լրիվ չափով լուծված են:

Մեր յերիտասարդությանն իր կյանքի ներկայիս պայմանները թվում են սովորական ամենուրյա յերկույթ. ուրիշ պայմաններ մեր յերիտասարդության մեծ մասը չի իմացել, չի տեսել: Իսկ մինչդեռ կապիտալիստական յերկիրների բանվոր և աշխատավոր յերիտասարդության համար այս բոլոր հարցերն ամենից հրատապ, կենսական հարցեր են, վորոնց շուրջը կատաղի պայքար և մղվում:

Ինչո՞ւ մենք մեր ծրագրի մեջ վոչ մի առաջարկ չենք մտցնում յերիտասարդության աշխատանքի մասին: Ինչո՞ւ նոր ծրագրում բացակայում ե յերիտասարդության աշխատանքի բաժինը, ի տարրերություն անցյալ ծրագրից, վորտեղ նա համարյա թե կենտրոնական տեղ եր բռնում: Վորովհետեւ մեղ համար այս բոլոր հարցերն արդեն լուծված են, վորովհետեւ մենք կարիք չենք զգում վորեւ պահանջ առաջարկելու յերիտասարդության աշխատանքի հարցերի վերաբերմաբ:

Կոմյյերիտմիության նախկին միքանի՛ Շացկինի տիպի՛ զեկավար աշխատողներ, յերիտասարդությունը տրոցկիստորեն հակադրելով Խորհրդային պետությանը, ժամանակին հակամետ եյին կոմյյերիտմիությանը մեծ յերախտիքներ վերաբերելու յերիտասար-

դության աշխատանքի պայմանները բարելավելու ասպարեզում, աչքաթող անելով այն հանդամանքը, վոր ամենից առաջ կոմունիստական կուսակցության ղեկավարած Խորհրդային պետությունն ինքն և հոգ տանում յերիտասարդության մասին, անելով ամեն անհրաժեշտ բան՝ բարելավելու համար նրա նյութական ապահովությունն ու նրա կրթության պայմանները:

Երիտասարդության, նրա աշխատանքի ու կրթության պայմանները բարելավելու հոգաւը, յերեխաների հոգաւը սոցիալիստական պետության բնորոշ առանձնահատկությունն եւ: Աշխատավոր յերիտասարդությունը գիտե, վոր խորհրդային իշխանության առաջին իսկ քայլերը կապված ելին բանվոր յերիտասարդության աշխատանքի պայմանների բարելավման հետ, վոր յերիտասարդության աշխատանքի պայմանների բարելավման խնդիրները լրիվ արտացըլված են կոմունիստական (բոլեկիկների) կուսակցության ծրագրում:

Ես այստեղ պետք եւ հիշեցնեմ գեթ այսպիսի պատմական չափազանց կարևոր փաստ: 1917 թ. հոկտեմբերի 29-ին, այսինքն իշխանությունը բանվորների և գյուղացիների ձեռքը վերցնելուց ուղիղ յերեք որ հետո, Ժողովրդական կոմիսարների խորհուրդը հրատարակում եւ մի դեկրետ, վորով սահմանում եւ Տժամյա աշխատանքային որ ձեռնարկությունների բանվորների համար: արդեմում եւ գիշերն ոգտվել մինչև 16 տարեկան արական և իդական սեռի անչափահասների աշխատանքից, արդելվում եւ վարձու աշխատանքը մինչև 14 տարեկան դեռահասների համար: մինչև 18 տարեկան անչափահասների աշխատանքային որը սահմանափակվում եւ ժամով:

Ահա տեսնում եք, թե ինչպես իշխանությունը վերցնելուց բառացի միքանի որ հետո, այն մոմենտին, յերբ ամենակատաղի կոիվ եր մղվում իշխանությունն ամրացնելու համար, բանվորացուղացիներին կառավարությունն իր առաջին դեկրետներից մեկը նվիրում եւ բանվոր յերիտասարդության աշխատանքի պայմանների բարելավմանը:

Հարկավոր եւ խմանալ և խորապես գնահատել Խորհրդային պետության ամբողջ հոգատարությունը յերիտասարդության համար, մի հոգատարություն, վորն այնպես ցայտուն արտահայտվել եւ նույնիսկ արդեն այս առաջին, կարևորագույն դեկրե-

ար մեջ, վորը հսկայական նշանակություն ունի մեր կյանքի համար:

Ենդ կամ այսուհետեւ, ընկերներ, նոր տնտեսական քաղաքականությունը կիրառելիս, յերբ սպառնալիք կար, վոր շտատների կրծատման հետևանքով ձեռնարկություններում առաջին հերթին կարող են կրծատվել անչափահասներն ու յերիտասարդությունը, խորհրդավին կառավարությունը 1922 թ. հունիսին հրատարակում և մեր հասուլ դեկրետ անչափահասների այսպես կոչված բրոնյայի մասին, վորի վերաբերյալ շատ յերիտասարդ կոմյերիտականներներ նույնիսկ զաղափար չունեն: Բայց հին կոմյերիտականներն այս պետք եւ հիշեն: (Զայնը տեղերից «Հիշում ենք, հիշում ենք, ինքներս ենք յեղել բրոնյայի մեջ»): Այս դեկրետը սահմանում էր, վոր արդյունաբերության բոլոր ձեռնարկություններում պետք եւ վիճի անչափահասների պարտադիր նվազագույն տոկոս բանվորների ընդհանուր թվի հանդես: Հայտնի յեւ, վոր բրոնյայի որենքի կենսագործումը բավականաչափ լավացրեց բանվոր յերիտասարդության դրությունը:

Անող սերնդի առողջությունը պաշտպանելու նպատակով խորհրդային կառավարությունը 1922 թ. հոկտեմբերին սահմանեց այնպիսի կարող, յերբ մինչև 18:տարեկան բոլոր անչափահաս բանվորներին թույլ տրուից աշխատել միայն քժշկական քննության յենթարկվելուց հետո: Կառավարությունը սահմանեց անչափահաս բանվորների ամենամյա բժշկական քննություն:

Նմանապես հայտնի յեն խորհրդային իշխանության միջոցառումները քաղաքացիական պատերազմի տարիներին յերեխաների դրությունը բարեկավելու համար: Խորհրդային կառավարությունը սովոր այն ծանր տարիներին, լարելով բոլոր ջանքերը, յերեխաների համար առարկություն եր հաց և կաթնամթերք, հագուստ և կոշկնդեն:

Ըստ ել չեմ խոսում կուսակցության ու կառավարության բոլոր միջոցառումների մասին ընդհանուր պարտադիր ուսումնացնելու ասպարեզում, վորոնց նպատակն եւ մեր յերիտասարդ սերումը գարձնել սերումդ:

Այս բոլոր փաստերը ցույց են տալիս, վոր խորհրդային իշխանությանը հատուկ եւ անդադրում հոգատարությունը յերիտասարդության մասին:

Եթե կապիտալիստական հարարակության մեջ աշխատավոր

յերիտասարդությունն այդ հասարակության ամենաիրավազուրկ մասն ե, ապա մեզ մոտ յերեխաներն ու յերիտասարդությունն ամբողջ սոցիալիստական հասարակության առավելագույն ուշադրության, ոիրու և հոգածարդության առարկան են:

ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐԸ ՍՈՎՈՐԵԼՆ Ե

Մրագիրն ամբողջ լայնությամբ դնում ե յերիտասարդության կրթության, նրա քաղաքական և կուլտուրական դաստիարակության հարցերը, վորոնք, ի տարրերություն անցյալ ծրագրից, ներկայումս կենտրոնական տեղ են գրավում նրա մեջ: Մեր ծրագիրը լրիվ և ամբողջությամբ յելնում ե Լենինի ցուցումներից, վորը մեզ սովորեցնում եր, վոր

«Յերիտասարդության խնդիրներն առհասարակ և կոմունիստական յերիտասարդության միությունների ու ամեն մի այլ կազմակերպությունների խնդիրները մասնավորապես կարելի կլիներ արտահայտել մի խոռոքով. խնդիրն այն և, վորպեսզի սովորեն... յերիտասարդության միությունը և ամբողջ յերիտասարդությունն առհասարակ, վորն ուղում ե անցնել կոմունիզմին, պետք և սովորի կոմունիզմը» (Լենին, XXX հ., եջ 403—404):

Զի յեղել Լենինի մի յելույթ, ընկեր Ստալինի մի յելույթ յերիտասարդության մասին, վորտեղ այս խնդիրը չդրվի իրուղյան վրա, վճռական խնդիր յերիտասարդության կոմունիստական միության համար:

Կոմյերիտմիության VIII համագումարում ընկեր Ստալինը միության խնդիրների մասին ասաց.

«Տիրապետել գիտությամբ, կոփել բոլշևիկ-մասնագետների նոր կադրեր գիտելիքների բոլոր նյուզերի ասպարեզում, սովորել, սովորել և ամենահամառ կերպով սովորել— այս և խնդիրն այժմ: Հեղափոխական յերիտասարդության արշալ գետի գիտություն—ահա թե ինչ և պետք մեզ այժմ, ընկերներ»: (Տես «Լենինը և Ստալինը յերիտասարդության մասին» ժող., ոռու. եջ 203, 1936 թ.):

Իսկ այժմ այս խնդիրը դրված եւ եւ ավելի սուր կերպով: Զի՞ վոր մենք թեակոխել ենք մեր յերկրի զարգացման այնպիսի գրանց, յերբ հետագա առաջընթացը վճռված է նոր տեխնիկային տիրապետած կադրերի պատրաստումով, յերբ մեր յերկրում

սկավում ե կուլտուր-տեխնիկական մի հզոր վերելք, վորը վերջին հաշվով կհանդի մտավոր և Փիղիկական աշխատանքի սահմանի վերացմանը:

Իսկ ի՞նչ պետք ե սովորենք մենք և սովորեցնենք յերիտասարդությանը:

Ամենից առաջ անհրաժեշտ ե սովորել լենինիզմը, վորովհետեւ սա Հիմնականն ե յերիտասարդության կոմունիստական դաստիարակության մեջ:

Կադրերը վճռում են ամեն ինչ և պետք ե վճռեն ինչպես շինարարության, այնպես ել յերկրի պաշտպանության գործում, այս պատճառով ել միության կարեռագույն խնդիրն ե գաղափարապես զինուարի այս կազմերը, սովորեցնել նրանց ըմբռնելու իրենց նպատակները, նրանց մեջ դաստիարակել մեր մեծ գործի հմարության մեջ խորապես համոզված լինելու զգացմունքը:

Ի՞նչն առահովեց մեր բանակի հաղթանակը ինտերվենտների, սպառակի զվարդիականների և պրոլետարական դիկտուտուրայի այլ թշնամիների դեմ մզկող պայքարի տարիներին: Կումակցության ճիշտ զինաշարությունը, ինչպես և, վոր առանձնապես կարեռ և, բոլոր մարտիկների կողմից իրենց դերի ըմբռնումը, խոր հայտն իրենց գործի նկատմամբ:

Ահա թե ինչու թշնամիները հաճախ զարմանում ենին, յեր կարմիր բանակի կիսամերկ, քաղցած մարտիկները ջարդությունը և յին անում շատ ավելի լավ զինված ու ավելի մեծաքանակ թշնամունքները:

Գաղափարայնությունը, իրենց նպատակները հաստատվես իմանալը հիմք ե տալիս իսկական արիության ու հերոսության համար, վորոնք սահման չեն ճանաչում:

Հենց այս հիման վրա յե, վոր մեր յերկրի առաջավոր մարդկան և մասնավորապես յերիտասարդությունը ցույց են տալիս քաջության, խիզախության, աննվունության, տուկունության հըաշքներ:

Ահա թե ինչու ծրագիրն այնպիսի օրությամբ դնում ե քաղաքական դաստիարակության, հեղափոխական թեսրիան սւսումնասիրելու հարցը:

Յես պետք ե հաղորդեմ, վոր յերիտասարդության քաղաքական դաստիարակության հարցում մենք սատցել ենք ընկեր Ստալինի շափառանց եյական ցուցամները:

Մրադրի սկզբնական նախագծում առված եր, վոր կոմյերիտ-միությունը կազմակերպում և կուսակցության պատմության ուսումնասիրությունը և Մարքսի, Ենդելսի, Լենինի ու Ստալինի աշխատությունների ուսումնասիրությունը:

Ընկեր Ստալինն ուղղեց մեզ և մտցրեց հետևյալ ձեռկերպումը, վոր լրիվ ու ամբողջությամբ մտցված և ծրադրի հրապարակված նախագծի մեջ.

«ՀամԼԿՑԵՄ ստեղծում և դպրոցներ, խմբակներ և իրականացնում ե այլ ձեռնարկումներ, վորպեսզի յերիտասարդությունը յուրացնի քաղաքական գրադիտություն, ուսումնասիրի ընդհանրապես պատմության և մանավանդ ԽՍՀՄ և Համամիութենական կոմունիստական կուսակցության պատմության հիմնական մոմենտները, կազմակերպում և Մարքսի—Ենդելսի—Լենինի—Ստալինի հիմնական դադարիարների ուսումնասիրումը յերիտասարդության կողմից»:

Դուք տեսնում եք, վոր այս ուղղումը շատ ելական է: Ձեր վորք կըթված և կուլտուրական մարդ լինելու համար հարկավոր և ուսումնասիրնել վոչ միայն Համեկ(ը)ի պատմությունը դասագրքով, այլև հարկավոր ե իմանալ առհասարակ պատմության և մասնավորապես ԽՍՀՄ սկատմության հիմնական մոմենտները: Այս ել հենց մտցված և ծրադրի վերը մեջնորդված կետի մեջ: Այս կետի վերջում առաջ ընդհանուր ձևակերպում կար Մարքսի, Ենդելսի, Լենինի և Ստալինի բոլոր աշխատություններն ուսումնասիրներն վերաբերյալ, վորն այժմ փոխարինված և ընկեր Ստալինի այն կոնկրետ ցուցումով, վոր ՀամԼԿՑԵՄ կազմակերպում և յերիտասարդության կողմից Մարքսի—Ենդելսի—Լենինի—Ստալինի հիմնական գաղափարների ուսումնասիրությունը:

Մեր կազմակերպության մեջ գտնվող յերիտասարդությունը պետք և ստանա կոմունիստական ճիշտ դաստիարակություն, պետք և իր մեջ մշակի մարքսիստական—լենինյան աշխարհայացք: Այս պատճառով ել մեր ծրադրում ասված ե, վոր յուրաքանչյուր կոմյերիտական պարտավոր և քաղաքական կըթություն տուանալ: Բայց յես կուղեյի ընկերներին նախազգուշացնել այս կետի հնարակոր սխալ մեկնաբանությունից: Մենք կոմյերիտական քիչ աշխատողներ չունենք՝ վորոշ բյուրոկրատական շորչոփով: Նրանք կարող են ասել. «Մենք վաղուց ենք առաջարկել գրանցել մի

կետ, վոր քաղաքական կրթությունը պարտադիր և կոմյերե-
տականների համար։ Այ հիմա մենք արդեն պահանջկոտ
կլինենք կոմյերիտականների նկատմամբ։ Նրանց, ովքեր չեն կա-
տարի կոմյերիտական ծրագրի այս կետը, «ձեռաց» դուրս
կը ենք կաղմակերպությունից։ Ընկերներ, հարկավոր և հաշվի
առնել, վոր յեթե մենք քաղաքական կրթությունը համարում ենք
պարտադիր, ապա այս չի նշանակում, թե այս խնդիրը մենք կա-
րող ենք լուծել վարչական միջոցներով։ Հարկավոր և, վոր կոմ-
յերիտականներն ամենից առաջ ըմբռնեն քաղաքական կրթության
անհրաժեշտությունը։ Հարկավոր և ճիշտ կաղմակերպել քաղա-
քական կրթությունը, այն ժամանակ մենք հաջողություն ձեռք
կրենք։

Մեր յերիտասարդությունը յերջանիկ կյանք և վայելում։ Նա
հնձում և այն պտուղները, վոր ճեռք են բերված Պրոլետարական
մեծ հեղափոխություն կատարած պրոլետարիատի ավագ սերունդ-
ների ճեռքով։ Նրա համար յերջանիկություն և այն հանդամանքը,
վոր նա չի տեսնել կապիտալիստական անցյալի սարսափները և
դաստիարակիվում և մեր սոցիալիստական պայմաններում։ Բայց
սրա հետ միասին այս հանդամանքը նրա թուլությունն և։ Իրենց
վրա կրած չլինելով կապիտալիզմի բոլոր սարսափները և պայքա-
րի ամբողջ ծանրությունը, յերիտասարդության առանձին խմբեր
դուրս են դաշին անբավարար կոփիլած և յերեմն հայտաբերում
են անկայունություն։ Ահա յերիտասարդության այս առանձին
անկայուն խմբերը կարող են հող հանդիսանալ թշնամական ազ-
դեցությունների և արամազդրությունների համար։

Մենք չպետք են մոռանանք, թե վորպիսի դժվարություններով
և բանվոր դաստիարակը հայթանակ ճեռք բերել։ Ահա թե ինչու
ՀամԼԿՑԵՄ ծրագիրը հարց և զնում մեր յերկրի անցյալն ուսում-
նասիրելու մասին, բանվորների և դյուլացիների անցյալն ու-
սումնասիրելու մասին, հեղափոխական պայքարի, քաղաքացիա-
կան պատմագրմի պատմության ուսումնասիրության մասին։
ԱԿՑԵՄ III համազումարում լենինն առել եւ.

«Յերբ մարդիկ տեսնում են, թե ինչպես իրենց հայրեն
ու մայրեն ապրում են կալվածատերների ու կապիտալիստ-
ների ճնշման տակ, յերբ նրանք իրենք են մասնակցում այն
տանջանքներին, վոր թափվում են նրանց վրա, ովքեր սկսում
են պայքարել շահագործողների դեմ, յերբ նրանք տեսնում

են, թե ինչ զոհեր ե նստում այս պայքարի շարունակում՝ նվաճվածը պաշտպանելու համար, ինչ կատաղի թշնամիներ են կալվածատերերն ու կապիտալիստները, —այն ժամանակ այդ մարդիկ այս միջավայրում դաստիարակվում են իբրև կոմունիստներ» (Լեմին, XXX Հ., էջ 413):

Մեր յերիտասարդությունն իր ճնշող մեծամասնությամբ չի տեսել և չի կրել այս բոլորը: Ճենց այս պատճառով ել առանձնապես կարևոր ե նրա համար ինչպես հարկն ե ուսումնասիրել մեր յերկրի բանվոր դաստիարագի և աշխատավոր գյուղացիության հերօսական պայքարի պատմությունը:

Մենք պետք եմեր յերիտասարդությանը դաստիարակենք պրոլետարական ինտերնացիոնալիդմի վողով, վորագեղի «ինտերնացիոնալիդմի վողին մշտապես սավառնի կոմյերիտմիության վրա» (Ստալին): Կոմյերիտմիությունը, վոր համախմբում ե դանագան աղղությունների յերիտասարդությանը, մի բան, վոր առանձնապես ցայտում ե յերեսում այս համադրումարում, ինտերնացիոնալ կազմակերպության տիպարն ե:

Ամբողջ հարցն այն ե, վոր համառ դաստիարակչական աշխատանք կատարենք, արմատախիլ անելով անցյալի անիծյալ մնացորդների բոլոր արտահայտությունները:

ՀԱՐԿԱՎՈՐ ԵՆ ԲՈԼԵԵՎԻԿ-ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԿԱԴՐԵՐ

Ընմեր Ստալինը բազմիցս նախազգուշացրել ե յերիտասարդությանն ամենագիտությունից ու դիլետանտությունից, նշելով, վոր անհրաժեշտ ե կատարմալությամբ տիրապետել մի վորեմ մասնագիտության: Մեզնից վորանք այժմ ել կարծում են, վոր կարելի յե ասզրել այն յերիտասարդների սկզբունքով, վորոնց մասին դեռևս Պուշկինն ե ասել. «Մենք բոլորս սովորել ենք կամաց-կամաց, մի վորեմ բան ե մի վորեմ կերպ»:

Ամենադիմությունը, մի պրոֆեսիալից մյուսին թուշկունելը, մակերեսային ծանոթությունը դիտության հետ՝ սա մեր ամենակատաղի թշնամին ե: Իսկական կոմունիստ կարելի յե դառնալ միայն յուրացնելով մարդկության կուտակած ամբողջ կուլտուրական հարստությունները: Ահա թե ինչու ծրագրի մեջ մի հատուկ կետ ե մտցվում ամենագիտության և դիլետանտության գեմ պայքարելու վերաբերյալ:

Ահա թե ինչու մենք կոմյերիտմիության ուշադրությունը

կենտրոնացնում ենք դպրոցների ամբացման ու դարձացման աշխատանքի վրա, ամբողջ լայնությամբ հարց ենք դնում պայքարելու ամբողջ յերիտասարդության համար միջնակարգ կրթություն ձևոք բերելու, կոմյերիտականների կողմից մաթեմատիկան, ֆիզիկան, քիմիան, տեխնիկան, պատմությունը, աշխարհագրությունը, ուսար լեզուներն ուսումնասիրելու մասին:

Կոմյերիտամիության ծրագրում մի հատուկ կետ կա անդրադիտության վերացման մասին: Մեզ կարող են հարց տալ, թե արդյոք իսկապէս այս խնդիրն այդքան սուր և ակտուալ վորովեսպի կոմյերիտամիության ծրագրի մեջ հատուկ կետ մտցվի անդրադիտության և կիսադրագիտության վերացման մասին: Թույլ տվեք, ընկերներ, մեջ բերել թվեր, վորոնք ամենից ցայտուն կերպով ցույց կտան այս խնդրի կարևորությունը:

1936 թ. արդյունաբերության չորս ճյուղերում (մեքենաշինություն, ուեմետաղների մետալուրգիա, քարածխի և տեքստիլ) կար 1% անդրագիտ յերիտասարդություն (ամբողջ յերիտասարդության հանդիպ), 20,7% կիսագրագիտաներ, վորոնք չեն ավարտել տարրական. դպրոցը, 41,4% տարրական կրթությամբ, 34,6% թերի միջնակարգ կրթությամբ, 2,3% միջնակարգ կրթությամբ:

Մեր առջև խնդիր և դրված բանվոր յերիտասարդության դիմուլիֆների մակարդակը բարձրացնելու հասցնել մինչև ճարտարապետական-սեփականիկական աշխատողների մակարդակին: Սրա միակ ճանապարհն և յերիտասարդ սերնդին տալ ընդհանուր միջնակարգ և սեփականիկական կրթություն:

Հիշատակված թվերը ցույց են տալիս, թե մենք դեռ վորքան պետք և աշխատենք, վորագնդի կատարենք այս խնդիրը: Ինյոյ այս խնդիրն անհետաձգելի յն: Յեկ մենք պետք և կատարենք այն: Մենք չենք կարող հանդուրժել, վոր խորհրդային յերիտասարդության մեջ լինեն անգրագիտ և կիսագրագիտ մարդիկ:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՍՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆԸ

Զեզ առաջարկված ծրագրի նախագծում առված ե.

«Համ. ԼԿՑԵՄ ոգնում և բոլցեիկների կուտակցությանն ու խորհրդային կառավարությանն իրավանացնելու պատմական մեծ խնդիրը՝ կոմունիտական հասարակության կառուցումը»:

Այս նշանակում եր, վոր կոմյերիտմիության և ԽՍՀՄ ամբողջ
աշխատավոր յերիտասարդության կարևորագույն խնդիրն եւ գործ-
նական մասնակցություն ցույց տալ կոմունիստական հասարա-
կության տեղինման պայքարին:

II Ինտերնացիոնալի ոպորտունիստական կուսակցությունները
ժշտակես ձգտել են յերիտասարդության ակտիվությունն ու նրա
հեղափոխական ձգտումները ներփակել կրթական աշխատանքի և
այսպես կոչված «մաքուր կուլտուրայի» նեղ շրջանակների մեջ,
բանվոր յերիտասարդությանը հետ պահելով քաղաքական կյան-
քին մասնակցելուց: Նրանց նպատակն եր յերիտասարդության
ուշադրությունը հետ պահել դասակարգային պայքարից, յերի-
տասարդությանը լրիվ ու ամբողջությամբ յենթարկելով իրենց
շահերին:

Լենինը և Ստալինը մշտակես սովորեցրել են մեղ, վոր յերի-
տասարդության կոմունիստական դաստիարակությունն անկարելի
յե առանց նրան գործնական պայքարի մեջ ներդրալունը:

Լենինն ասում եր, վոր յերիտասարդությունն իր ուսման,
դաստիարակության, կրթության ամեն մի քայլը ոկտոք և միացնի
շահագործողների դեմ բոլոր աշխատավորների ընդհանուր պայ-
քարին մասնակցելու հետ:

Լենինյան կոմյերիտմիության ամբողջ աշխատանքը հաստա-
տեց այս դրույթի ճշաությունը: Մասնակցելով քաղաքացիական
պատերազմին, ողնելով կուսակցությանն ու խորհրդային իշխա-
նությանը բարձրացնելու իմպերիալիստական պատերազմից քայ-
քայլած տնտեսությունը, մասնակցելով կոլտնտեսությունների,
գործարանների, Փաքրիկանների, յերկաթուղինների շինարարու-
թյանը, ամենուրեք ցուցաբերելով իր նախաձեռնությունն ու
ձեռներեցությունը, կազմակերպելով սոցիալիստական մրցու-
թյուն, ամենուրեք պայքար մղելով դաստիարակային թշնամու-
դեմ, այսպիսով իր ուսուցուամը շաղկատելով աշխատավորների
ընդհանուր պայքարին մասնակցելու հետ, Համլիթներ բարձրաց-
րեց իր դերն իրու յերիտասարդության կոմունիստական դաստ-
իարակության կազմակերպություն:

Յերիտասարդությունը պետք եւ հաստատապես իմանա այն
բոլոր խնդիրները, վոր նրա առջև դնում են խորհրդային կառա-
գարությունն ու Համկ(բ)կ՝ կոմունիստական հասարակակարգը
կառուցելիս և Խորհրդային յերիտասարդության դաստիարակու-
թյան տեսակետից սխալ կլիներ, յեթե նրա մեջ այժմ տեղի
216

այն պատկերացումը, թե վաղուց արդեն անցել ենք բոլոր գժվարություններն ու վտանգները և վոր մեր առջև ընկած ե ուշիւր դեպի կոմունիզմ տանող հարթ ու խաղաղ ճանապարհ :

Իհարկե, սոցիալիզմի կառուցման բոլոր արմատական հարցերը մոտ լուծված են: Բայց առ ամեններն չի նշանակում, թե բոլոր վտանգներն արդեն անցել են, ուստի և, ինչպես պատկերավոր կերպով արտահայտվեց ընկեր Ստալինը կուսակցության XVII համադրումարում, «կարելի յե զենքը վայր դնել և պառկել կողքին՝ քնել՝ սպասելով անդասակարդ հատարակության գալուստներ»:

Մենք ասլրում և աշխատում ենք կամիստալիստական ողակման պայմաններում: Կամիստալիզմի մնացորդները դեռևս շատ կենսունակ են և մեր զործունեյության ամեն մի քայլափոխուսում իրենց դժուար են տալիս: Սրա հետ միասին հարկավոր ե նկատի ունենալ կամիստալիզմի մնացորդների առանձին կենսունակությունը մարդկանց զիստակցության մեջ, վրորդինետն հայտնի յե, վոր մարդկանց զիստակցությունն իր զարգացման մեջ առայժմ հետ և մնում նրանց անանավիշն գրությունից:

Մրադիրն առանձին ուժով ընդդեռում և կոմյերիտմիության խնդիրները սոցիալիստական սեփականությունն ամրացնելու, աշխատանքի հանդեպ սոցիալիստական վերաբերմունք զարդացնելու, կուսակցությանն ու խորհրդային կառավարությանն ողնելու հոգասարության այն զործում, վոր նրանք ցուցաբերում են աշխատավորների՝ կանանց ու յերեխանների նկատմամբ:

Մրադիրն ուշադրությունը իննարունացնում է այս բոլոր հարցերի վրա, վորովհետու նրանք վճռական հարցեր են սոցիալիզմի միակառար. հաղթանակի համար և վորովհետու այստեղ կասիտավիզմի մնացորդները մարդկանց զիստակցության մեջ ավելի յեն դդաւ տալիս իրենց մասին, քան մեր կյանքի վորեւե այլ ասպարեզում:

ՍՊԵՌԱԼԻՍՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՅՈՒՄԸ

Բուրժուատղիայի քարոզի ամենահիմնական կետն եր պարագաներ մասնավոր սեփականության պաշտպանությունը: Բուրժուատղիան վախ եր զաստիարակում կամիստալիզմի այս սրբության հանդեպ: Իսկ հառարակական սեփականությանը բուրժուատղիան մեջ ավելի յեն դդաւ տալիս իրենց մասին, քան մեր կյանքի վորեւե այլ ասպարեզում՝ առ «կազյոննի» յե—կնշանակի սա վոչվոքի յե,

սա կարելի յէ անպատիժ կերպով քարչ տալ կամ փչացնել: «Կազմուննի» դույքը համանիշ եր անտեր դույքին: Շահագործողական աշխարհը ծնում եր այնպիսի մարդիկ, վորոնք ընդունակ եյին «անտեղի», ինչպես Պոմյալովմկու սեմինարիստները, փչացնելու հասարակական դույքը:

ԽՍՀՄ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը վերացրեց մասնավոր սեփականությունը և ստեղծեց սոցիալիստական հանրային սեփականություն, վորը դարձավ խորհրդային հասարակակարդի հիմքը: Բայց կապիտալիզմի մասորդները դեռ հաղվաղեալ չեն իրենց զդալ տալիս: Թշնամին ձըդտում և խախտել խորհրդային հասարակակարդի հիմքը, հափշտակելով ու փչացնելով սոցիալիստական դույքը:

Հանրային դույքի հանդեալ ճիշտ վերաբերմունք դաստիարակելու միջոցով ստեղծվում և անցյալի մնացորդներից ազատ մարդու խկական նոր բնավորությունը:

ԱՇԽԱՏԱՆՔՅԱԻՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԴԱՍԻԱՐԱԿՈՒՄԸ

Աղնիվ աշխատանք, աշխատանքի բարձր արագությունականություն—ահա թե վերջին հաշվում ինչը պետք ե մեղ տա սոցիալիզմի կատարյալ հաղթանակ և այն, ինչ անհրաժեշտ ե կրթունիստական հասարակության անցնելու համար: Այնինչ կապիտալիզմի մնացորդները դեռևս բավական հաճախ իրենց զդալ են տալիս նաև աշխատանքին վերաբերվելու մեջ:

Պարագիտիզմն ու պնակացնությունը բուրժուազիան բարձրացրել և դասել և մարդկային առաքինությունների շարքը: Այս, իհարկե, բացահայտութեն չելին խոստուվանում, բայց փաստուքն այս այսպիս եր: Խղուր չեն գոյություն ունեցել այնպիսի առածներ, ինչպես, որ, «Աշխատանքը հիմարներին և սիրում», «Աշխատանքը բայց չե—անտառ չի փափչի»: Մրանում արտահայտվում եր մեծամիտ արհամարհական վերաբերմունք դեպի աշխատանքը: Անբանների ու պարագիտների ամբողջ սերունդներ ե դաստիարակել բուրժուազիան դարձնար:

Աշխատանքը մեր հասարակության բարեկեցության հիմքն եւ Աշխատանքն ստեղծում և արժեքներ, վորոնք պատկանում են այս հասարակության բոլոր աշխատավորներին: Սոցիալիստական աղատ աշխատանքը դաստիարակում և մարդկանց: Մեր հասարակության մեջ աշխատանքը վերադաստիարակում և նույնիսկ այնպիսի մարդկանց, վորոնք առաջ յեղել են վոճարելուներ: Աղ-

նիվ, բարեկարդն աշխատանքը հաղթանակած սոցիալիզմի յերկրում մի ճանապարհ եւ դեպի ամբողջ ժողովրդի ապահովումը կենսական բոլոր բարիքներով:

Ստախանովյան շարժումը, վոր անորինակ բարձրության և հասցնում աշխատանքի արտադրողականությունը, մարդկանց դեպի աշխատանքը նոր սոցիալիստական ձևով վերաբերվելու ամենացայտում՝ արտահայտությունն եւ:

Աշխատանքի նկատմամբ սոցիալիստական վերաբերմունք դաստիարակելը կոմյերիտմիության կարևորագույն խնդիրն եւ:

«Հարկավոր եւ,—ոռվորեցնում եր մեզ Լենինը,—վոր Կոմյունիստական յերիտասարդական միությունը բոլորովին մատադ հասակից, տասներկու տարեկանից, դաստիարակվի դետակցական և կարդապահ աշխատանքի վոգով» (Լենին, XXX հ., էջ 417):

Սրանից եւ յենում մեր ծրագիրը, առաջարկելով լայնարեն գարդացնել սոցիալիստական մրցությունն ու հարվածայնությունը, ամբողջ ըայնությամբ դնելով աշխատանքի նկատմամբ սոցիալիստական վերաբերմունք դաստիարակելու հարցը:

Ենթա մենք խոսում ենք այն մասին, թե ինչորին պիտի լինի կոմյերիտականը, մենք ամենից առաջ ուշադիմ ենք, վոր Յալինի իր բնագավառում որինակելի աշխատալ մարդ: Կոմյերիտականներն ու կոմյերիտունիները, վորոնք աշխատում են ֆարբիկայում, ինմենարկում, մեր յերկրի վորուել կազմակերպության մեջ, միշտ և ամենուրեք պետք եւ հանդիսանան աշխատանքին բարեկարդն վերաբերմունք ցույց տվողի որինակ, պայքարեն իրենց աշխատանքի բարձր վորակի համար:

Կոմյերիտմիության անդամը հարդում եւ իր և ուրիշների աշխատանքը, կոմյերիտմիության անդամը պետք եւ դաստիարակվի ատելության ու արհամարհանքի վոգով դեպի պարագետիզմը, ատելության վոգով դեպի ծուլությունն ու պարապությունը՝ աշխատանքին կապիտալիստական վերաբերմունք ցույց տալու այս բոլոր մնացորդները: Իրենց բոլոր ուժերն ու գիտելիքները նվիրելով կոմունիստական հասարակության համար պայքարելու ընդհանուր գործին, կոմյերիտականները դաստիարակվում են դետակցական, սոցիալիստական կարդապահ ամենքով:

Կոմյերիտմիության անդամն իր վարքով աշխատանքային

կարգապահության որինակ պիտի ցույց տա աշխատանքի մեջ, մարտական կարգապահության որինակ՝ չարքի մեջ, կաղմակերպվածության ու կարգապահության որինակ՝ կոմյերիսմիության մեջ և կենցաղում :

Այս առնչությամբ յես ձեր հատուկ ուշադրությունն եւ հրամիրում ծրագրի հետեւյալ կետի վրա .

«Առհրդային իշխանությունն արմատացնում եւ կարգապահություն, հարգանք դեպի սոցիալիստական որենքներն ու համակեցության կանոնները, բոլոր աշխատավորների մեջ գաստիարակում եւ ազնիվ վերաբերմունք դեպի աշխատանքն ու հասարակական պարտքը, առանց վորի չի կարող իրականանալ սոցիալիզմի լիակատար հաղթանակը» :

Հետեւաբար, մեր խնդիրն եւ ամբողջ յերկտասարդության մեջ դաստիարակել ազնիվ վերաբերմունք դեպի աշխատանքն ու հասարակական պարտքը, հարգանք դեպի սոցիալիստական որենքներն ու համակեցության կանոնները : Սա չափաղանց մեծ նշանակություն ունեցող խնդիր եւ :

Հայտնի յե, վոր Լենինը սոցիալիզմից կոմունիզմին անցնելը կաղում եր վոչ միայն արտադրողական ուժերի դարձացման, այլև այն բանի հետ, վոր մարդիկ աստիճանաբար կուլորեն պահպանել համակեցության հիմնական կանոններն առանց պետական հարկադրանքի :

«Սոցիալիզմը վվերանի կոմունիզմի... վորովհետեւ մարդկիկ կոուլորեն պահպանել հասարակայնության տարրական պայմաններն առանց բռնության և առանց հարկադրանքի» (Լենին, ԽII հ., ռուս. եջ 527) :

«...աղատագրված կասմիտավիստական ստրկություննից, կախուալիստական շահագործման անհամար տարրանիներից, վայրենություններից, անհեթեթություններից, գարշելիություններից, մարդիկ աստիճանաբար կվարծվեն պահպանել համակեցության դարերով հայտնի, բոլոր որենսպրքերում հաղարամյակներով կրկնվող, տարրական կանոնները, պահպանել առանց բռնության, առանց հարկադրանքի, առանց յենթարկման...» (Լենին, ԽII հ., եջ 431) :

Սոցիալիզմից կոմունիզմին անցնելը, ինչպես մեզ սովորեց-

նում են Անին ու Ստալինը, կարող ե իրականացվել միայն այն ժամանակ, յերբ վիթխարի չափերով կաճի աշխատանքի արտադրողականությունը, յերբ բոլոր աշխատողների կուլտուրականությունիկական մակարդակը կը բարձրանա մինչև ճարտարապետական-ութեականիկական աշխատողների մակարդակը, յերբ բարեխիղն վերաբերմունքը դեպի աշխատանքը, դեպի իր հասարակական պարտքը մարդկանց մեջ սովորություն կդառնա, կմտնի նրանց մսի ու արյան մեջ:

Կապիտալիզմի ժամանակը աղնվության, բարեխղճության վերաբերյալ բոլոր խոսակցությունները միջոց եյին մասսաներին հիմարացնելու համար: Նա յեր բարձրանում բարեկեցության դադարը, ով չեր կաշկանդվում միջոցների ընտրությամբ և առաջնորդվում եր հարստացման անգուստ ծարավով միայն: Ժողովրդական տասնդու իզուր չեր ասում՝ «Հալալ աշխատանքով պատճի չի չինվե»:

Սոցիալիստական հասարակության մեջ հարգանք ու պատիվ և վայելում միայն նա, ով այդ վաստակել և աղնիվ վերաբերմունքով դեպի աշխատանքը և հասարամական պարտքը: Այսուել տուաշին անդամն ե, վոր աղնվությունը, բարեխղճությունը, զայտափարայնությունը դասնում են աշխատավորների միլիոնավոր մասնաների հատկանիշները: Ազնվորին աշխատել, խնայի համրային բարիքը, իր անձնական շահերը բարձր չդասել հասարակության շահերից—ահավասիկ մարդկային համակեցության տարրական կանոնները, վորոնց պահպանումը սովորություն կդառնա սոցիալիստական հասարակության բոլոր մարդկանց մեջ:

Ահա ինչու կոմյերխոմիությունը իր ծրագրում այնպես լայն կերպով և դնում հակածողվրդական աղղեցությունների դիմ պայքարելու խնդիրները: Յերբ մենք խոսում ենք հակաժողովրդական աղղեցությունների մասին, մենք նկատի ունենք այն ամենը, ինչ համառակ և դնում մեր՝ համակեցության կանոններին, այն ամենը, ինչ խանդարում ե մարդկային համակեցության՝ սոցիալիզմի համար անհրաժեշտ կանոններն ստեղծելուն:

ԱԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ԴԵՊԻ ԿԻՆԸ ՑԵՎ ՑԵՐԵԽԱՆԵՐԸ

Բուրժուական բարոյականության նողկալիությունն ու կեղծությունն ամենից ավելի արտահայտվել են դեպի կինն ունեցած վերաբերմունքի մեջ: Այս բանը նույնիսկ արտահայտված և ժողովրդական մի ամբողջ շարք առացվածքների մեջ: «Կնոջդ ծե-

ծեռա—ճաշու ել համով կլինի», «կնոջը ծեծիր մինչ յերեխա
ունենալը, իսկ յերեխաներին՝ մինչև մարդ դառնալը», «կնոջը
ծեծիր ճաշին, իսկ ընթրիքին կրկին, առանց ծեծելու սեղան մի
նստիր»։ Այսպես եր հնչում հին կարվաճատիրական-բուրժուա-
կան Ռուսաստանի գերիմասությունը։

Վոչ վոք հոգ չեր տանում կանանց կրթության մասին։ Իդուր
չեր հին ժամանակների վաճառականն ասում։ «Աղջիկներին ինչ։
Աղջիկներին կարելի յե փակել, և նրանց զլիացագանքն ել քիչ
ե—վոչ սովորեցնել, վոչ բան»։

Զի կարելի ասել, վոր այս բոլորը վերաբերվեր միայն հե-
ռավոր անցյալին։ Հայտնի յե, վոր այժմ ել կապիտալիստական
յերկիրներում Փաշիզը կնոջ հանդեպ արձատացնում և այնպիսի
վերաբերմունք, ինչպես սորոկուհու հանդեպ, պնդում ե, վոր
կնոջ բաժինն են հանդիսանում յերեխաները, ամուսինն ու յեկե-
ղեցին։

Ամբողջ աշխարհին հայտնի յեն խորհրդային իշխանության
և կոմոնիկատական կուսակցության միջոցառումները, վորոնք ա-
ղատազրել են աշխատավոր կանանց, վոչնչացրել են կանանց
սորոկական կախումը, սահմանել են կնոջ և տղամարդու վտառա-
կան հավատարություն վոչ միայն քաղաքում, այլև դյուլում։

Մենք հիմնահատակ կործանել ենք բուրժուական հին ընտա-
նիքը՝ հիմնված կապիտալի, մասնավոր շահի վրա։ Մեր յերիտա-
սարդությունը նույնիսկ գաղափար չունի ամուսնության հին,
մինչեղափօխական ձևերի—«հաշվով» ամուսնության մասին իր
անխուսափելի ուղեկիցներով հանդերձ հարսնախոսներով, ա-
մուսնական հայտարարություններով լրագրերում և ամուսնալու-
նության վայրագ պլրոցեսներով։

Բայց բուրժուական բարոյականության մնացորդները դեռևս
դրյություն ունեն նաև այս բնագավառում։ Քիչ փաստեր չեն
հայտնի դեպի կինը, ընտանիքը, յերեխաների դաստիարակու-
թյունը սխալ, թեթևամիտ վերաբերմունք ցույց տալու մասին։

Այդ պատճառով ել ծրագիրը պահանջում ե կոմյերիստիու-
թյունից ամեն կերպ ոգնել կուսակցությանն ու կառավարությանը
աշխատավոր կանանց և յերեխաների գաստիարակության վերա-
բերյալ նրանց հոգատարության մեջ։

Բուրժուական գաղափարախոսության մնացորդներն իրենց արտահայտությունն են գտնում նաև կրոնական սնութիւնապաշտությունների ու նախապաշտությունների մեջ:

Իհարկե, մեր յերկրում հիմնավորապես կտրված են կրոնի արմատները, և մեր յերիտասարդության, մեր յերեխանների ճնշող մասն աճում ե ամեն մի կրոնական ազլեցությունից զերծ:

Բայց սխալ կլիներ կարծել, թե պայքարը կրոնական նախապաշտությունների դեմ վերջացած ե, այս թվում նաև յերիտասարդության մեջ: Մի կոմյերիտուհի Մոռկվայի մարդից նամակ և դրել, վորանեղ ասում ե.

«Ինչո՞ւ պետք ե ծրագրում դրել, վոր Համեկօթեմ համբերատար կերպով պարզաբանում ե յերիտասարդությանը սնութիւնապաշտության ու կրոնական նախապաշտությունների վնասը: Զե՞ վոր յերիտասարդության մեջ վաղուց արդեն չկան համատացյալ մարդիկ»:

Այսպես մտածող մարդիկ իրավացի չեն: Ընկերներ, նայեցեք ձեր շուրջը, ներս մտեք Հանրակացարանները, ավելի լավ դիտեցեք յերիտասարդության կյանքը: Դուք կտեսնեք, վոր թե՛քադաքում և թե՛ դյուրում դնում կա յերիտասարդության մի, թեև աննշան, մաս, վորը մինչեւ վերջը չի ազատվել կրոնական թմրիբից: Մենք պետք ե Համբերատար պարզաբանման աշխատանք կատարենք, վորպեսզի լրիվ չափով հաղթահարենք կրոնական նախապաշտությունները:

Մեր ծրագրի ակզրնական նախադում դրված եր կոմյերիտմիությունը վճռագիրս, անողոք կերպով պայքարում ե կրոնական նախապաշտությունների դեմ:

Ընկեր. Մտալինը նշեց. ինչո՞ւ գրել «վճռագիր», «անողոք կերպով»: Այս չե բանը: Համբերատար կերպով պետք ե պարզաբանել յերիտասարդությանը կրոնական նախապաշտությունների վնասը, յերիտասարդության մեջ վարել մատերիալիստական աշխարհայացքի՝ միակ գիտական աշխարհայացքի՝ պրոպագանդ:

Արդեն՝ այժմ կազմվում են նոր, կոմունիստական բարոյականության հիմքերը, կենցաղի մեջ են մտնում համակեցության սոցիալիստական կանոնները:

17—18 տարի սրանից առաջ ծնված ԽՍՀՄ յերիտասարդությունը դաշտափար չունի կապիտալիզմի գայլի որենքների սարսափելի ռեժի մասին, վորոնք ստրկացնում են աշխատավոր մարդկանց, զախշախում կյանքի կովի համար անբավարար պատրաստված բոլոր թույլերին:

Կապիտալիզմն էր գիշատիչ շահերի համար աշխատավորների մեջ դաստիարակում եր սարսափի ու ստրկական հնազանդման զգացմունք գենի իր որենքները, գենի մասնավոր սեփականության իրավունքը:

Սոցիալիզմի պայմաններում ապրող, կապիտալիստական անցյակի սարսափիներից աղատված մեր սերնդի համար չի խանդարում գաղափար ունենալ բուրժուական համարակալության բարքերի մասին:

Այս բարքերի սքանչելի բնութադիրը տվել ե ոռւս մեծադրույն հեղափոխական-մտածողներից մեկը՝ քննադատ Դոբրովյուրովն իր «Խավար թագավորություն» հոդվածում: Նա գրել ե.

«Հանդիմանության ու քոթակի յերկյուղի տակ, ստրկորեն դաստիարակված, —անդաւըրում յնըլյուղ ունենալով մնալու առանց մի կտոր հացի, ստրկաբար ապրող, —նրանք իրենց բոլոր ուժերը լարում են ձեռք բերելու ստրկական գլխավոր առաքինություններից մեկը՝ անխիղճ խորամանկությունը: Յեզի ինչի՞ց խղճահարվեն, ի՞նչ ճշմարտություն, ի՞նչ իրավունքներ հարցեն նրանք: Զե՞ս վոր խնությունն իշխում ե նրանց վրա, ճնշում ու սովանում ե նրանց միանդամային անիրավացի, անիմաստ, անխիղճ կերպով: Այսպիսի տիրակալության տակ դաստիարակված մարդկանց մեջ չեն կարող դարդանալ բարոյական պարտքի գիտակցությունը և ազնը վության ու իրավումքի իսկական սկզբունքները: Ահա թե ինչու ամենախայտառակ սրիկայությունը նրանց թվում ե գովելի հերոսություն, ամենաալպիր խարեյությունը՝ ճարպիկ բան: Նրանք կարող են ձեզ խարել, կողոստել, դանակով հարձակվել ձեզ վրա, և այս բոլորի դեպքում անկեղծորեն

ուրախ ու սիրալիր մնալ ձեզ հետ, պահպանել անվրդով
բարեսրտություն ու շատ իսկական առաքինի հատկություն-
ներ։ Նրանց բնավորության մեջ ամենեւին չարություն չկա,
չկա նաև ուխտաղբժություն։ բայց նրանց հարկավոր ե մի
կերպ դուրս լողալ, դուրս պրծնել նեխված ճահճից, վորի
մեջ նրանց ընկղմել են ուժեղ խևերը։ նրանք գիտեն, վոր
թարմ ողի մեջ, վոր այնպես ազատորեն շնչում են այդ
խևերը, կարելի յե դուրս պրծնել խարեյության և փողի
միջոցով, և ահա նրանք սկսում են խորամանկություն անել,
շողոքորթել, խարել, սկսում են և՛ մանրից, և՛ մեծ գումա-
րով, բայց մշտապես ծածուվ և թափով, իրենց գրպանը
գնել ուրիշի բարիքը։ Նրանց ի՞նչ փույթ, վոր նա ուրիշի յե։
Չե վոր հենց իրենցից խել են այն ամենը, ի՞նչ նրանք ու-
նեցել են, իրենց կամքը և իրենց միտքը, —ել ի՞նչպե՞ս նրանք
դատեն այն մասին, թե ի՞նչն ե ազնիվ և ի՞նչը անաղնիվ·
ի՞նչպե՞ս չուղել խարել մյուսին իր անձնական շահի համար։

Բուրժուազիան մշակել ե իր որենքը՝ «Մարդը մարդուն՝
դայլ»։

Բալդակի նշանավոր յերկերից մեկի՝ «Հայր Գորիոյի» հերոս
Վորաբենը բուրժուազիան այս որենքն արտահայտել ե բավական
ցայտում կերպով։ Նա առում ե.

«Ճամամարդկանց և լիանանց վրա նայեցեք միայն իրքն
փոստի ձիերի, վորոնց գուք դեն եք շպրտում, վոր սատկեն
ամեն մի փողոցում, և դուք կհասնեք ցանկության գա-
գաթը»։

Այս ե կապիտալիզմի իսկական բարոյականությունը։ Վոր-
քան ել բուրժուազիան խնամքով այս թաղցնի «սեր դերձա-
վորը» նյութի վերաբերյալ զանազան բարեպաշտ խոսակցություն-
ներով և այլն, —այս բանը թաղցնել չի կարելի։

Մենք ստեղծում ենք մեր բարոյականությունը, սոցիալիս-
տական հասարակության բարոյականությունը։ Սոցիալիստական
հասարակության հիմնական որենքը շարադրել ե ընկեր Ստալինը
հետեւալ նշանավոր խոսքերով։

«...աշխարհի բոլոր թանգարժեք կապիտալիներից ամե-

Նաթանդարժեքն ու ամենավճռողական կապիտալը մարդիկ են, կադրերը»:

Հոգատարությունը մարդու վերաբերյալ, ուշադրությունը դեպի մարդը դրված են կոմունիստական կուսակցության և խորհրդային կառավարության աշխատանքի կենտրոնում։ Սա նոր, սոցիալիստական հասարակության բարոյականության եյությունն ե։ Ահա թե ինչու մօր առաջարկած ծրագրի նախագիծը սովորեցնում ե յերիտասարդությանը դաստիարակելու իրեն դեպի աշխատավոր մարդիկը ուշադիր վերաբերմունք ցույց տալու վոզով։

Բայց գոյություն ունի՞ արդյոք կոմունիստական բարոյականություն։ Հաճախ բանն այնպես են պատկերացնում, վոր մենք մեր բարոյականությունը չունենք, և շատ հաճախ բուրժուազիան մեղ մեղադրում ե այն բանի համար, վոր մենք, կոմունիստներս, բացասում ենք ամեն մի բարոյականություն։ Բայց սա միանդամայն սխալ ե։ Մենք բացասում ենք միայն կեղծ շահադրծողական բարոյականությունը։ Մենք ունենք մեր, կոմունիստական բարոյականությունը։

Ի՞նչ ե կոմունիստական բարոյականությունը։ Սրա վերաբերյալ կա լենինի հետևյալ, միանդամայն պարզ ցուցումը։

«...մեր բարոյականությունն ամբողջովովին յենթակա յեպուլետարիստի դասակարողային պայքարի շահերին։ Մեր բարոյականությունը յելակետ ունի պըրուլետարիստի դասակարողային պայքարի շահերը...»

Եել մենք մեր կոմունիստական բարոյականությունը յենթարկում ենք այս խնդրին։ Մենք ասում ենք, բարոյականությունն այն ե, ինչ ծառայում ե հին շահադրծողական հասարակության խորտակման և բոլոր աշխատավորներին կոմունիստների նոր հասարակություն ստեղծող պըրուլետարիստի շուրջը համախմբելուն...»

Կոմունիստական բարոյականության հիմքում դրված ե պայքարը կոմունիզմի ամբացման ու ավարտման համար» (Լենին, XXX 4., եջ 410, 411, 413)։

Վորոշ ընկերներ կոմունիստական բարոյականությունը պատկերացնում են իրեւ զանազան կանոնների հայքածու, համարյա-

թե մի հրահանդ, վոր պետք եւ նախատեսի մեր յերիտասարդության ամբողջ վարքը։ Սա ճիշտ չե, սխալ ե։

Առևասարակ հարկավոր ե նկատել, վոր չի կարելի նոր, կոմունիստական մարդու դեմքի ուրվագծմանը մոտենալ յելնելով ինչ-վոր ստանդարտ, վերացական նորմաներից։ Մեզ մոտ շատ խոսակցություն ե յեղել նոր մարդու տիպի ու բնավորության մասին, ընդվրում դանվում են մարդիկ, վորոնք գեղարվեստական դրականության մեջ ել ձգուում են նոր մարդուն պատկերել իրրե փայտե վոտների վրա կանդնած ինչ-վոր անձի, վորն ապրում ե համարյա թե հատուկ մշակված հրահանդներով, վորի մոտ ամեն ինչ կատարվում ե պղանով։ Ահավասիկ ստացվում ե այն, վոր բոլոր «կոմունիստական առաքինություններն» առկա յեն և այնուամենայնիվ դուրս ե զալիս վոչ թե կենդանի մարդ, այլ ինչ-վոր «մարդանման բան»։

Ինկեր Ստալինը բարձիցս նախազգուշացրել ե մեզ բուրժուուկան դաշտավարախոսների փորձերից՝ սոցիալիզմը կերպարաննելու իրքեւ ինչ-վոր զորանոց, վորտեղ բոլոր մարդիկ ամբողջովին միատեսակ են մտածում, միատեսակ կոստյում են հաղնում, միմնույն ճաշակն ունեն և այլն։ Բնդհակառակը, սոցիալիզմ՝ նշանակում ե մարդկանց անհատականության մեծագույն ծաղկում, վորտեղ ամեն մեզ կարդիանց դառնալու կոմունիստական հասարակության արժանի մարդիկ։ Կոմյերիտմիությունը դաստիարակում ե սաւալինյան բնավորությամբ մարդիկ։ Յերբ խոսում ես մեր յերիտասարդության հետ և հարցնում ես, թե նա ամենից ավելի ինչ հատկություններ կուղեր ունենալ, յերիտասարդ սերնդի մեր յամադույն ներկայացուցիչներից շատերը պատասխանում են։ «Մենք ուզում ենք ունենալ ստալինյան բնավորություն»։

Ի՞նչ ե ստալինյան բնավորությունը։ Յես կարծում եմ, վոր ամենից ավելի լավ ե որան պատասխանել հենց ընկեր Ստալինի խոսքերով՝ առված ի պատասխան իր ծննդյան 50-ամյակի առթիվ կուսակցության, բանվոր դասակարգի և բոլոր աշխատա-

Վորների վողույների։ Ահա այս նշանավոր խոսքերը, վորոնց մեջ վառ կերպով արտօնայոված ե ստալինյան բնավորությունը։

«Կարող եք չուարակուաել, ընկերնե՛ր, վոր յես պատրաստ
եմ առաջիկայում ել նվիրել բանվոր դասակարգի դործին,
պրոլետարական հեղափոխության և համաշխարհային կոմու-
նիզմի գործին իմ բոլոր ուժերը, իմ բոլոր ընդունակություն-
ները և, յեթե կարիք լինի, իմ ամբողջ արյունը՝ կաթիլ
առ կաթիլ»:

Անսահման նվիրվածությունը քանվոր դասակարգի գործին, յերկաթյա համառությունն ու անմիտուն կայունությունը պայքարում—բնավորության այս ստալինյան գծերն փղեալ են, վոր վոգեշչում են մեր յերիտասարդությանը։ Ենդ կոմյերիտմիության մեր ծրագրում խոսվում ե ստալինյան բնավորությամբ յերիտասարդ հեղափոխականների սերունդ դաստիարակելու մասին, այսինքն մարդկանց, վրանց համար նպատակի պարզությունը, համառությունը նպատակին հասնելու մեջ և բնավորության կայունությունը, վորը խորտակում ե բոլոր և ամեն տեսակ խոչընդուները, հիմնական գծերն են։

Բուրժուազիան մենք մեղադրում ե այն բանի համար, վեր
մենք բարոյականություն չունենք: Կոմյերիտմիության ծրագրում
մենք ասում ենք, վոր մենք ստեղծում ենք մեր, կոմունիստական
բարոյականությունը: Լենինյան կոմյերիտմիությունը կդառնովի
կոմունիստական բարոյականության համար, կոմունիստական
համարակություն կառուցելու համար մարտնչողների առաջին
շարքերում:

Հեղափոխության պաշտպանութեանը ՅԵԿ ԽՈՐՃՐԴԱՅԻՆ
ՀԱՅԵՐՆԱԽՈՐՃՐՈՒԹԵՅԱՆ ԴԱՍՏԱՐԱԿՈՒՄԸ

«Գայնուրինել ափիսմական հայրենիքը» լոգումնդը մշտապես ուղեցցել մենք Արարթիկցանմ մարդկութափական կուսակցությունների, և նրանց այլ բանաձառնություններին՝ Դազմակերպությունների գործունեամբ թշնամությունը ունեալ առաջար մարդու» ։

Այս վայրութեանի դիմումը կատարված է 1914-1918 թվականներին Բ. Շ. Խմբերիալիստական պատճենագիր և բացահայտման դիմումը՝ կատարված է 1918 թվականի պատճենագիր քայլմամբ, ուստի ժողովը կատարել է այս պատճենագիրը:

Բայց այնպիսի խոսքեր, ինչպիսին են հայրենիք, ծննդավայր, բուրժուազիայի բերնին հնչում են իրրև ծաղը ժողովրդի վրա, վորովհետև սրանք նույնպես կեղծ են հնչում նրա բերնին, ինչպես և աղատության, հավասարության և յեղայրության լոգունդները:

Անըի Բարբյումն իր «Ստալին» գրքում միանգամայն իրավացիորեն դրում ե.

«Հայրենիքի պաշտպանությունը սբբազան ե: Կան մեծ խոսքեր, վոր կապիտալիզմի խոհանոցը մատուցում ե ամեն տեսակ սոսումով: Բայց այս չի նշանակում, թե մենք չենք կարող նրանց վերապարձնել իրենց խավական իմաստը: Հայրենիքի սրաշտպանությունն ատելի յե այնտեղ, վորտեղ այն նշանակում ե կողովուաներ, զավթումներ, «յես տեր եմ, դու՝ ստրուկ», վորտեղ այն նշանակում ե քայքայում և ինքնասպանություններ, պետական ադրեսիայի առաջին փուլը: Բայց այն կյանքից ել կարեռ ե այնտեղ, վորտեղ այն նշանակում ե պըոդընեսի ժուլ, ազատագրում ստրկությունից, խիստ անվաստահություն գիշատիչ պետություններին, վորոնք միայն պատրիակ են վորոնում, միայն մի միջոց՝ հնարելու պատըրվածը, վորտեղի ճգմենն կենդանի սոցիալիզմը»:

Սերը գետի հայրենիքն ողատագործում են բուրժուազիայի կառավարող շրջանները աշխատվորներին անզուսազ կերպով շահագործելու, խմակերիալիստական նոր պատերազմներ կազմակերպելու համար:

Իմակերիալիստական պատերազմի ստրիներին բոլշևիկների կուսակցությունը կողմնակից եր, վոր Ռուսաստանը պարովի այս պատերազմում: Բոլշևիկների կուսակցությունը կողմնակից եր, վոր հայրենական բուրժուազիան պարտվի այս պատերազմում, վորտեղազի իմակերիալիստական պատերազմից անցնել քաղաքացիական պատերազմի:

Բոլշևիկների կուսակցությունը քիչ մեղադրանքներ չկրեց դամեսպան այսպես կոչված սոցիալիստական կուսակցությունների կողմից, վորոնք պատերազմի առաջին խել որից դավաճանեցին բանվոր դասակարգի գործին, կանգնեցին իրենց բուրժուազիայի պաշտպանության դիրքում, բայց բոլշևիկներին մեղադրում եին իրեւ թե հայրենիքին դավաճանելու մեջ և այլն: Բոլշևիկների

կուսակցությունը լենինի գլխավորությամբ միակ կուսակցությունն եր, վոր հավատարիմ եր պրոլետարական ինսերնացիոնալզմին, միակ կուսակցությունը, վոր բանվորներին ու դյուղացիներին պարզաբանում եր կապիտալիստական հայրենիքի պաշտպանության լողունդի ամրողջ կեղծիքը, հայրենիք, վորտեղ ամեն ինչ պատկանում ե մի խումբ կապիտալիստների ու կալվածատերերի, միակ կուսակցությունը, վոր ազգարարեց իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի վերածելու լողունդը:

Սկսած այն ժամանակից, յերբ 1917 թ. հոկտեմբերին իշխանությունն անցավ պրոլետարիատի ձեռքը, բոլշևիկների կուսակցությունը բացահայտորեն ազդարարեց սոցիալիստական հայրենիքի պաշտպանության լողունդը: Այս լողունդը բանվորների ու գյուղացիների համար դարձավ յերկաթյա որենք ինտերվենտների, սպիտակ-դվլարդիական գեներալների դեմ սպայքարելու բոլոր տարիներին:

Բոլշևիկների կուսակցությունը, լենինն ու Ստալինը դիմում ելին ժողովրդին՝ կոչ անելով պաշտպանել սոցիալիստական հայրենիքը:

1918 թ. փետրվարի 21-ին, այն մոմենտին, յերբ գերմանացիք Բրեստ-Լիտովսկի դաշնադիրն ստորագրելու ժամանակ Տրոցկու դավաճանական վարմունքի հետևանքով սկսեցին իրենց չեշտակի հարձակումը, լենինը դիմեց աշխատավոր մասսաներին հետևյալ խոսքերով. «Սոցիալիստական հայրենիքը վտանգի մեջ է: Կեցցե սոցիալիստական հայրենիքը»: Իբրև մարտակոչ են հնչում լենինի այս նշանավոր խոսքերը: Լենինյան այս կոչը մեկից ավելի անդամ ե հնչել յերբ Խորհրդային հանրապետության աշխատավորների կողմից իրենց սոցիալիստական հայրենիքը հերոսաբար պաշտպանելու աղղանշան: Այս լողունդը մշտապես ամենամարտական լողունդն ե յեղել նաև խորհրդային յերիտասարդության, լենինյան կոմյերիտմիության համար: Լենինյան կոմյերիտմիության ամրողջ պատմությունն անխղելիորեն կապված է իրենց սոցիալիստական հայրենիքի պաշտպանության համար աշխատավորների մղած պայքարի հետ: Մարտական կարմիր դրոշի շքանշանը, վորով պարզեատրված ե կոմյերիտմիությունը, արժանավոր պարզե ե քաղաքացիական պատերազմի տարիներին կոմյերիտականների ցուցաբերած հերոսության համար:

Առողջապահին յերիտասարդությունը, ինչպես և ամբողջ ժողովուրդը պլուստարական Մեծ Հեղափոխության հետևանքով ձեռք բերեց իր սոցիալիստական հայրենիքը:

«Անցյալում մենք չունեինք և չեյինք ել կարող ունենալ հայրենիք, —ասել ե ընկեր Ստալինը:—Սակայն այժմ, յերբ մենք տապալել ենք կապիտալիզմը, իսկ իշխանությունը մեղ մոտ բանվորական ե, —մենք հարենիք ունենք և մենք կապաշտպանենք նրա անկախությունը» (Ստալին, «Ծննդեավարների խնդիրների մասին», «Լենինիզմի հարցերը», ոռուս. եջ 445):

Ահա թե ինչու մեր ծրագիրն ամբողջ լայնությամբ զնում և խորհրդային յերիտասարդության մեջ հայրենասիրության զգացմունքը դաստիարակելու հարցը:

Առօրդային հայրենասիրության եյությունն ե. անստիճան սերը դեպի հայրենիքը, դեպի մեր մեծ յերկրում ապրող ժողովուրդները, նրան քշնամիների ամեն մի հարձակումից պաշտպանելու և նրա ռազմական, տնտեսական ու կուլտուրական հզորությունն ամբացնելու պատրաստակամությունը:

Ինչո՞ւ մենք մեր յերկրի հայրենասերներն ենք: Մենք մեր յերկրի հայրենասերներն ենք այն պատճառով, վոր սա միակ յերկերն ե, վորսեղ սոցիալիզմը հաղթել ե, վորտեղ վոչչացված և մարդու շահագործումը մարդու ձեռքով, վորտեղ գործնականում իրականացված են Մարքսի, Ենգելսի, Լենինի մեծ դադարակարները. վորտեղ մարմնավորված են պրոլետարների ու աշխատավոր մարդկության բոլոր լավագույն մտադրությունները, վոր դարեր շարունակ պայքար ե մզում իր ազատագրության համար: Այս յերկրի բանվոր դասակարգն ստեղծել և այնպիսի հզոր և մեծ կուսակցություն, վորդիսին Համամիութենական կոմունիստական (բոլեկիների) կուսակցությունն ե, վորն իրականացրել և յերկրի այս վերափոխությունը: Մեր ժողովուրդն ամբողջ աշխարհին տվել ե պրոլետարիատի ու աշխատավոր մարդկության այնպիսի առաջնորդներ, վորափիսին եր մեծ լենինը և վորափիսին հանդիսանում ե ընկեր Ստալինը: (Ծափահարություններ):

Մենք մեր հայրենիքի պատրիոտներն ենք, քանի վոր նա ժողովուրդների մեծ բարեկամության նմուշն ե: Առօրդային պատրիոտիզմը վոչ մի ընդհանուր բան չունի բուրժուալիստն նացիո-

նալիքմի հետ։ Խորհրդային պատրիոտիզմն ի մի յեւ համախմբում
Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության
մեջ ընակվող 180 ազգություն։ Յեթե կապիտալիստական յերկիր-
ներում այսպես կոչված «սեր դեպի հայրենիքը» լոգունգը անջա-
տում ե զանազան ժողովուրդների, նրանց ճակատ-ճակատի խիե-
լով հանուն իմպերիալիստների շահերի, ապա մեղ մոտ, ընդհա-
կառակը, իր սոցիալիստական հայրենիքի պաշտպանության և
սիրո լոգունգը համարմբում ու միավորում ե Խորհրդային Միու-
թյան բոլոր ժողովուրդներին։

Մենք մեր յերկրի հայրենասերներն ենք, վորովհետեւ նա-
համայն միջազգային պրոլետարիատի հենարանն ե կապիտալիստ-
ների լծի դեմ պայքարելիս։

Մեր յերկրի մեծ հայրենասեր ընկեր Ստալինը բաղմից ս-
սովորեցրել ե մեղ սոցիալիստական հայրենիքի ամրացման
մեր պայքարի ամեն մի քայլը շաղկապել միջազգային պրոլետա-
րական հեղափոխության ամբողջ գործի հետ։ Հենց նրան են
պատկանում հետեւյալ նշանավոր խոսքերը։

«Մենք պետք ե առաջ դնանք այնպես, վոր ամբողջ աշ-
խարհի բանվոր դասակարգը, նայելով մեղ, կարողանա ասել.
ահա նա, իմ առաջավոր ջոկատը, ահա նա, իմ հարվածային
բրիդադը, ահա նա, իմ բանվորական իշխանությունը, ահա
նա, իմ հայրենիքը, —նրանք իրենց գործը՝ մեր գործը լավ
են անում, պաշտպանենք նրանց կապիտալիստների դեմ և
բորբքենք համաշխարհային հեղափոխության գործը» (Ստա-
լին, «Տնտեսավարների խնդիրների մասին», «Լենինիզմի հար-
ցերը», ռուս. էջ 446)։

Մեր սոցիալիստական հայրենիքի պաշտպանությունը, սերը
դեպի հայրենիքը կիովին համապատասխանում ե մեր ինտեր-
նացիոնալ պարտականություններին։ Լենինը գետևս 1918 թ.
դրում եր։

«Հենց միջազգային սոցիալիզմի հետ Փկապերն ամբաց-
նելու» շահերի տեսակենուց պարտադիր ե պաշտպանել սոցիա-
լիստական հայրենիքը» (Լենին, XXII հ., ռուս. էջ 510)։

Մեր յերկիրը համայն աշխարհի կեղեքվածների և շահագործ-
վող ժողովուրդների փարուն, հույսը։ Մեր սոցիալիստական
հայրենիքի ամբացումը մեր ինտերնացիոնալ պարտականություննե-

Ե: Այս և մեր պարտականությունը մէջազդային պլուլետարիատի Հանդեպ:

Ահա թե ինչու մեր ծրագիրն այնքան մեծ ուշադրություն և նվիրում պաշտպանությանը, Խորհրդային Միության դինված ուժերի ամրացմանը: Մրագիրը, ինչպես դուք գիտեք, ամրող լայնությամբ կոնկրետ խնդիրներ և զնում կոմյերիտմիության սաղմական աշխատանքի ասպարեզում, խնդիրներ, վորոնք վերջին հաշվով հանդում են այն բանին, վոր կոմյերիտմիությունը մեր յերիտասարդությունից պետք և դաստիարակի Բանվորագյուղացիական կարմիր Բանակի համար խիզախ մարտիկներ:

Հիմնականում որանք են, ընկերներ, կոմյերիտմիության կենտրոնի անունից ձեզ առաջարկվող Համեկօթեմ ծրագրի նախադիր դրույթները:

ՄՐԱԳԻՐԸ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԲՈԼԵՎԵԿԻԿՅԱՆ ԶԵՐՆԱՐԿ Ե

Ընդունելով ծրագիրը, կոմյերիտականները պետք ե խմանան, թե ինչպես և մեր բոլցեկիյան կուսակցությունը, ինչպես են Լենինն ու Ստալինը վերաբերվում ծրագրին առհասարակ: Հարկավոր և նկատի ունենալ, վոր բոլցեկիները ծրագրին վերաբերվում են միանդամայն այլ կերպ, քան Ո ինտերնացիոնալի ոպորտունիտական կուսակցությունները, վորոնք իրենց ոպորտունիտական եյտությունը թաղցնում են ճարպկորեն կազմված ծրագրերով:

Հեղափոխական պայքարի պատմությունը քիչ փաստեր չի խմացնել այսպես կոչված սոցիալիստական կուսակցությունների կողմից աշխատավոր մասսաներին ամենալավիրը կերպով խարելու վերաբերյալ, կուսակցությունները, վորոնք այս խարեյությունը թաղցրել են «մարքսիտական» Փրազներով դարձարված ծրագրերով:

Վերցնենք թեկուղ Ո ինտերնացիոնալի քաղաքական կուսակցությունների գործունեյությունը: Մի՞ թե նա չի ներկայացնում մի ամսպիկ, խորապես ոպորտունիտական վերաբերմունք դեպի ծրագիրը սոսկ իրաւ մի միջոցի՝ դատարկ, դեմագոգիկ խոստումներով ու լողունակներով մասսաներին իր կողմը գրավելու համար:

Մարքսն ու ենթելու, վորոնք քիչ ուժ չեն գործադրել ոպոր-

տունիստների դեմ պայքարելու համար, բացառիկ ուժով մեր-կացրել են ծրագրային հարցերին ցույց տրվող վերաբերմունքի այս ոպորտունիստական եյությունը։ Ոպորտունիստների կարծիքով, հեղնաբար դրում եյին նրանք.

«Ծրագրից հարկավոր չե երաժարվել. միայն նրա իրականացումը պետք ե ենտաձգվի անորոշ ժամանակով։ Այն ընդունում են, բայց, իսկապես, վոչ թե իրենց համար, վոչ թե նրա համար, վոր հետևեն նրան իրենց կյանքի ընթացքում, այլ նրա համար միայն, վոր այն կտակեն զավակներին ու թոռներին։ Իսկ առայժմ «բոլոր ուժերը և ամբողջ եներգիան» գործադրում են ամեն մի դատարկ բանի և կապիտալիստական հասարակակարգի խղճուկ կարկատման վրա, վորպեսովի թվա, թե իբր այնուամենայնիվ մի բան ձեռնարկվում ե, և վորպեսովի միևնույն ժամանակ չվախեցնեն բուրժուազիային» (Մարքսը և Նեգելը—Ա. Բերելին, Վ. Լիբրկնեխտին, Վ. Բրակկեյին և ուրիշն., «Մարքսի և Նեգելսի արխիվ», I (VI) հ., եջ 152):

Մարքսի և Նեգելսի խոսքերը չափազանց հրատապ են։ Նրանք այսոր ել հնչում են այնպիսի սրությամբ, ինչու հեղափոխական շարժման զարգացման արջալուակին։

Ոպորտունիստները յերբեք հոգ չեն տարել և չեն տանում ծրագրի թեորիական տոկունության վերաբերյալ, վորովհետև նրանք, ընկեր Ստալինի արտահայտությամբ, մատուցում են

«...ամբողջական հեղափոխական թեորիայի վոխարեն հակասական թեորիական դրույթներ ու այնպիսի թեորիաների բեկորներ, վորոնք կտրվել են մասսաների կենդանի հեղափոխական պայքարից և դարձել խախուս դողմաներ» (Ստալին, «Հենքինիզմի հարցերը», ռուս. եջ 8):

Ոպորտունիստները ձգտում են իրենց հակահեղափոխական եյությունը թագցնել փարթամ ֆրազերով, բարձրագուշ լողունդներով։ Նրանց ձեռքում ծրագիրն աշխատավոր մասսաների խարելության գործիք ե, վորովհետև իրականում նրանք չեն ել մատածում այն իրոք կենսագործելու, նրա կատարման մասին։

Իսկ ի՞նչ ե ծրագիրը հեղափոխական ըմբոնումով և վո՞րն

և բոլշևիկների վերաբերմունքը դեպի սլրուետարական հեղափոխական պայքարի ծրագրի մշակումը:

Բոլշևիկյան կուսակցության հիմնադիր Անդրեյ Անդրեյ 1903 թ. գրած իր «Դյուլական չքավորությանը» բոռշյուրում պարզաբանում եր դյուլացիներին, թե ինչ ե ուղում սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը և ինչի համար են սոցիալ-դեմոկրատներն ուրվադժում իրենց ծրագիրը: Նա գրում եր:

«Վորագեսդի ամբողջ ժողովուրդն իմանա, թե ինչ են սոցիալ-դեմոկրատները և ինչ են ուղում նրանք, սոցիալ-դեմոկրատները կազմել են իրենց ծրագիրը: Մրագիր նշանակում ե այն ամենի կարճ, պարզ ու հստակ հայտարարումը, ինչի ձգում ե կուսակցությունը և ինչի համար նա պայքարում է» (Անդրեյ, V հ., էջ 290):

Ահա թե ինչ ե ծրագիրը: Այն ծրագիրը, վոր մենք առաջարկում ենք ներկա համագումարին, այն ամենի հստակ, պարզ հայտարարումն ե, ինչի համար պայքարում ե Լենինյան կոմյերիտմիությունը, ինչ նա պահանջում է իր աշխատանքի ընթացքում կոմյերիտականներից, վորագեսդի վոչ միայն ԽՍՀՄ բոլոր ժողովուրդները, այլև ամբողջ աշխարհի աշխատավորները, ամենից առաջ աշխատավոր յերիտասարդությունը, իմանան, թե ինչ նպատակներ ենք դնում մենք մեր առաջ, ինչ միջոցներով մենք պետք ե դաստիարակենք Միության հասունացող սերնդին կոմունիզմի վորով, վորագեսդի Լենինյան կոմյերիտամիության դրոշի տակ ընթացող ամրող յերիտասարդության համար պարզ լինի, թե նա այդ դրոշի տակ ինչ պայքար պետք ե կը և ինչպիսին պետք ե լինի Համելիթեմ շարքերն ընդունվող ամեն վոք:

Հայտնի յե, վոր բուրժուական կուսակցությունները և նրանց յերիտասարդական կազմակերպություններն իրենց ծրագիրը սովորաբար բաժանում են մի քանի մասի. մի մասը պետք ե համապատասխանի թեորիական պահանջներին. —սա, այսպես ասած՝ թեորիական ծրագիրն ե. մյուտ մասը պետք ե համապատասխանի պահանջին պահանջներին, —սա, այսպես ասած՝ մասսաների մեջ աղիտացիա անելու ծրագիրն ե:

Ուրիշ բան և մեր կուսակցությունը: Նա յերբեք չի ունեցել, չի ունենում և չի ունենա յերկու ծրագիր, նրա լոգունդները յերբեք չեն տարբերվում կուսակցության իսկական մտադրու-

թյուններից։ Մեր կուսակցությունը տվել եւ տալիս ե միայն այնպիսի լողունգներ, վորոնք համապատասխանում են իրականությանը։

Ընկեր Ստալինն այս մասին խոսել ե բավականաչափ պարզ։ Պատասխանելով իրեն տրված հարցին, թե քրանվորա-դյուլա-դացիական կառավարությունը փաստական, թե իրըև ագիտացիոն լողունդ ե», նա ասել ե.

«Այսպիսի հարցադրման դեպքում դուրս ե գալիս, վոր մեր կուսակցությունը կարող ե տալ ներքուստ կեղծ լողունդներ, վորոնք իրականում ոնանկ են, վորոնց չի հավատում կուսակցությունը ինքը, բայց վորոնց այնուամենայնիվ կուսակցությունը գործի յե դնում մասսաներին խարելու համար։ Այսպես կարող են վարվել եսերները, մենչեւիները, բուրժուական դեմոկրատները, քանի վոր խոսքի ու գործի առարբերությունը և մասսաների խարելությունն այս մահացող կուսակցությունների հիմնական գործիքներից մեկն ե։ Բայց մեր կուսակցությունը յերբեք և վոչ մի պայմանում չի կարող այսպես զնել հարցը, վորովհետև նա մարքսիստական կուսակցություն ե, լենինյան կուսակցություն, վերընթաց կուսակցություն, վորն իր ուժը քաղում ե այն քանից, վոր նրա խոսքն ու գործը չեն տարբերվում միմյանցից, նա չի խարում մասսաներին, նա մասսաներին ասում ե միայն ճշմարտությունը և իր քաղաքականությունը կառուցում և վոչ թե դեմադովիայի, այլ դասակարգագոյին ուժերի գիտական վերլուծության վրա» (Ստալին, Բանվորա-դյուլացիական կառավարության հարցի շուրջը, «Լենինիդի հարցերը», 9-րդ հրատ. եջ 238)։

Մեր կուսակցությունը յերբեք չի խարում մասսաներին և մասսաներին ասում ե միարյն ճշմարտությունը։ Նա իր քաղաքականությունը կառուցում ե վոչ թե դեմադովիայի, այլ դասակարգային ուժերի գիտական վերլուծության վրա։ Դուք դիտեք, վոր մեր կոմունիստական կուսակցության ծրագրում չկա մի կետ, վորը նա ինչպես հարկն ե չիրավանացներ։

Հենց այս սկզբունքներն եւ դրված են մեր ծրագրի հիմքում։ Մեր ծրագիրը հիմնված է Մարքսի-Ենդելսի-Լենինի-Ստալինի

ուսմունքի վրա: Նրա տեսական մասից ել բղխում են միության դործնական խնդիրները. այն բոլորը, ինչ գրված ե նրանում, հիմնապրված ե դասակարգային պայքարի փորձով, և նրա ամեն մի կետը վոչ միայն կարող ե իրականացվել, այլև անպայման կիրականացվի:

Մրագրի նախազծի քննարկման պրոցեսում համագումարի նախորյակին մի շարք առաջարկներ արվեցին: Շատ կոմյերիտականներ առաջարկեցին մի շարք կոնկրետ, դուրծնական հարցեր, առաջարկելով դրանք մտցնել ծրագրի մեջ: Նրանք բոլորը չե, վոր արժանի յեն ծրագրի մեջ մտցվելու, թեև նրանց մեծամասնությունը դործնական արժեք ունի:

Այստեղ մենք պետք ե առաջնորդվենք Լենինի հետևյալ ցուցումով ծրագրիրը կազմելու առթիվ.

«Մրագիրը հո հրահանդ չե. ծրագիրը պետք ե ընդդրկի ամբողջ շարժումը, իսկ իրականում, իհարկե, հարկ ե լինում առաջին պլանի վրա մղելու շարժման մերթ մեկ կողմը, մերթ՝ մյուս» (Լենին, II հ., եջ 527):

Մրագիրը, ճշգրիտ և պարզ շարադրելով, թե ինչ նոլատակներ և հետապնդում մեր մազմակերպությունը, նշելով նրա պայքարի ուղին, չի կարող նման լինել հրահանդի, վորի մեջ ամբողջ պայքարը կարծես կարգավորված ե և առաջուց նախատեսված: Այս ժամանակ ծրագիրը չեր լինի պարզ ու նպատակասուց վաստակիր և յերիտասարդությունը չեր կարող տեսնել նրա հիմնական մտքերը:


Հենց այս որատնառով ե, վոր ձեր ուշադրությամբ առաջարկվող ծրագիրը չի շոշափում մի ամբողջ շարք՝ դուրծնական տեսակետից թերեւս շատ մեծ ու լուրջ՝ հարցեր, այլ նա, ինչպես պահանջում եր Լենինը, վերցնում ե շարժումը ամբողջությամբ և նրա հիմնական խնդիրները:

Ահա թե ինչու կոմյերիտմիության կենտրոնը չի տալրակրսում, վոր իր առաջարկած Լենինյան կոմյերիտմիության ծրագիրը համագումարը կընդունի միահամուռ կերպով: Մենք համոզված ենք, վոր վոմյերիտմիությունը կապահովի նրա լիալիտար կենապրծումը:


Մեր ծբագիրը կոմյերիտական ցեղի բացահայտորեն պարզած
դրոշն եւ, ԽՍՀՄ աշխատավորության ստալինյան յերիտասարդ
սերնդի դրոշը, մի սերունդ, վորին դատակարակում ե բոլշևիկների
մեր փառապանծ կոմունիստական կուսակցությունը մեծ Ստալինի
դպիսավորությամբ։ (Բուռն, յերկարասև ծափահարություններ)։

ԸՆԿ. ՎԵՐՋԿՈՎԴԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ
ՀԱՄԼԿՅԵՄ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

גַּתְּרָהָרֶת אֲלֹעָמָרְתָּהָרֶת סִמְמָהָרֶת
בְּרָכָהָרֶת בְּפָנָהָרֶת בְּשָׁעָהָרֶת



Պ. Ա. Վերշենիկ



Ընկերներ : ՀամԼԿՑԵՄ նոր կանոնադրության նախադիմը , վորը կենտրոնական կոմիտեից անունից առաջարկվում ե ներկա համագումարին , բավականաչափ տարրերվում ե միության IX համագումարի կողմից գործոխած և լրացրած նախկին կանոնադրությունից : Յեղ սա միանդամայն հասկանալի յե , վորովհետև գործոխում է իրադրությունը , վորոխվել են պայմանները , վորոնց մեջ աշխատառում ե կոմյերիտմիությունը : ՀամԼԿՑԵՄ առջև ծառացել են նոր , ել ավելի իբրևոր ու ել ավելի բարդ խնդիրներ , քան առաջ : Սրա հետեանքով կոմյերիտմիության նախկին կանոնադրությունը հնացել ե , կորցրել ե իր նշանակությունը : ՀամԼԿՑԵՄ-ում կյանքն ընթանում ե այս հնացած կանոնադրության կողքով : ՀամԼԿՑԵՄ գերածել ե իր հին կանոնադրությունից :

Իսկապես , ընկերներ , բնուչ եր պահանջում հին կանոնադրությունը կոմյերիտական կազմակերպություններից , կոմյերիտականներից : Գլխավորապես՝ մասնակցել ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցմանը , յերկորի խնդրումտրացման պայքարին : Գյուղի կոմյերիտականներից կանոնադրությունը պահանջում եր լինել գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ակտիվ մասնակիցներ , ամեն կերպ ողնել կուտակցությանը կուտակությունն իրեք դասակարգ վերացնելու խնդրի լուծման մեջ՝ համատարած կոլեկտիվացման հիման վրա : 1931 թվի սկզբին , յերբ տեղի ունեցավ միության IX համագումարը , այս բանը ճիշտ եր , անհրաժեշտ , հրատապ : Իսկ այժմ—սա բոլորին հայտնի յեմեր յերկրում արդեն ստեղծված ե հզոր արդյունաբերություն՝ հազեցած առաջնակարգ տեխնիկայով , գյուղում վերջնականապես հաղթանակել ե կորանտեսային հասարակակարգը , կուլակությունը վորպես դասակարգ ջախջախալած , վերացված ե , յերկրի ժողովրդական տնտեսությունը գարձել ե սոցիալիստական :

ՀամԼԿՑԵՄ IX համագումարից միքանի որ հետո, 1931 թ- փետրվարի 4-ին, ընկեր Ստալինը, հանդես դալով սոցիալիս- տական արդյունաբերության աշխատողների կոնֆերենցիայում՝ տառաց.

«Առաջավոր յերկիրներից մենք հետ ենք մնացել 50—100 տարով։ Մենք պետք եւ այս տարածությունը կտրենք—անց- նենք 10 տարում։ Կամ մենք այս բանը կանենք, կամ մեզ կճղմեն» (Ստալին, Տնտեսվարների խնդիրների մասին, «Հե- նինիզմի հարցերը», հայ. եջ 554)։

Յեվ ահա, օ տարի անց, այսոր մենք կարող ենք առանց հպարտանալու ասել, վոր այժմ մեղ չեն ճգմի, վորովհետև մեր յերկիրն այնքան եւ աճել ու ամրացել, վոր մենք ջախջախիչ հա- կահարված կարող ենք տալ թշնամու՝ մեղ վրա հարձակվելու ամեն մի փորձին։

Կարելի՞ յե, արդյոք, այժմ, նոր պայմաններում, նախկին պահանջներն առաջաղքել կոմյերի հիմականին։ Իհարկե, վոչ։ Նոր կանոնադրությունն՝ ի տարբերություն նախկինի, կոմյերի հիմական կաղմակերպություններից, կոմյերի տականներից պահանջում ե ձեռք բերել գիտելիքներ, գիտություն, կուլտուրա, համառ կեր- պով սովորել, հաստատապես և սիստեմատիկ ուսումնասիրել մարքսիզմ-լենինիզմը։ Կոմյերի տամիությունն այժմ կոչված ե լի- նելու համակողմանի ուսուցման կաղմակերպություն, ամբողջ խորհրդային յերիտասարդության կոմունիստական դաստիարա- կության կաղմակերպություն։

Բոլենիկյան կուսակցության փորձը սովորեցնում է կոմյե- րի տամիությանը փոփոխելու իր աշխատանքի կաղմակերպական ձևերը, փոփոխելու իր կաղմակերպական քաղաքականությունն աշխատանքի նոր պայմանների համեմատ։ Վերցրեք, որինակ, կոմյերի տամիության մեջ ընդունելու հարցը։ Նախկին կանոնա- դրության մեջ ասված ե.

«ՀամԼԿՑԵՄ անդամ ընդունվում են՝ բանվոր, բատրակ, կոլտնտեսական, չքավոր ու միջակ յերիտասարդությունն ա- ռանց թեկնածուական ստաժի և յերաշխավորությունների։»

Առանց թեկնածուական ստաժի ու յերաշխավորությունների կոմյերիտմիության անդամ եյին ընդունվում նմանապես պլրուետարական, բատրակային և չքավորական ընտանիքից յելածները—մասնագետներ, աշակերտաներ, գյուղական ուսուցիչներ և դյուղատնօտեններ։ Ծառայողներն ու ինտելիգենտները կոմյերիտմիության մեջ ընդունվում եյին մելուկեսամյա թեկնածուական ստաժով։ Սոցիալական այս կամ այն խմբին պատկանելը համարյաթե վճռական հատկանիշ եր կոմյերիտմիության մեջ ընդունելիս։ Այն ժամանակ սա անհրաժեշտ եր։ Ի միջի այլոց, սրանով եր գլխավորապես վճռովում կոմյերիտմիության պլրուետարական զեկավարության հարցը։ Իսկ այժմ, սա բոլորին հայտնի յէ, այսպիսի մոտեցումն արդեն անպետք է։ Համեկթե՛Մ կենտկոմը շատ վաղուց և այս վերաքննել ու վերացրել։ Չո չեր կարելի ձեւական նկատառումներով առաջնորդվել այն բանով, ինչ հնացած ե, դպրձեկ և անընդունելի, նշանակում ե՝ նաև վնասակար։

Մենք կոմյերիտմիության մեջ ընդունում եյին.ք 14—23 տարեկան հասակի յերիտասարդությանը։ Ինքը կյանքն ուղղեց մեղ։ Այժմ հակառակ նախորդին կանոնադրության սահմանափակումների, կոմյերիտմիության մեջ յերիտասարդության 30%-ը 23 տարեկանից բարձր է։ Կոմյերիտմիությունը բարիս ուղղակի խմանառով դարձել և մեծահասակ։ Բնական ե, վոր նախորդին հասակային շրջանակները նեղ են դարձել, քանի վոր նրանք սահմանափակում եյին հասավավոր յերիտասարդության բավականաչափ խավերի մուտքը կոմյերիտմիության մեջ։

Նախորդին կանոնադրությունը սխալ եր մեկնաբանում պիոներական կազմակերպության գերը, հաստատելով հետևյալը։ «յուրաքանչյուր կոմյերիտական ողնում և պիոներներին մասնակցելու սոցիալիստական շինարարությանը»։ Իհարկե, կանոնադրության այս գրույթը հակասում եր յերեխաների կոմունիստական դաստիարակության, գիտելիքների հիմունքներին տիրապետելու, յերեխաների հանդիսաւը կազմակերպելու և այլ խնդիրներին։ Յերեխաների դատավարակության խնդիրների վերաբերմամբ սխալ հայցը ժամանակին բնորոշ եր կոմյերիտական և պիոներական աշխատողների վորոշ մասի համար։

Կարելի յեր հիշատակել կանոնադրության նաև այլ հնացած, ժամանակն անցրած և նույնիսկ անհաջող ձեւակերպումներ։ Ահա

թե ինչի հետևանք ե ՀամԼԿՅԵՄ նոր կանոնադրության հարցադրումը ներկա համագումարում:

Կոմյերիստմիությունն իր պարտմության ընթացքում, իր աճման ու զարգացման դուդընթաց, նրա առջև կուսակցության դրածինդիրների լավագույն կատարման համար իր կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ եր մտցնում՝ հաշվի առնելով փոփոխվող պարմանները: Սակայն այս համագումարում քննարկվող ՀամԼԿՅԵՄ կանոնադրությունը հոկայական դեպք և կոմյերիստմիության կյանքում: Համագումարի քննարկմանն և ներկայացված մի կանոնադրություն, վորի հիմնական դրույթները տվել ե անձամբ ընկեր Ստալինը: (Մաֆահարություններ):

Յես չեմ խոսելու ՀամԼԿՅԵՄ նոր կանոնադրության բովանդակության հետ կապված բոլոր հարցերի մասին: Կանք կառնեմ միայն մի քանի հիմնական հարցերի վրա:

I. ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԵՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կանոնադրության նախագծում ասված ե, վոր կոմյերիստմիությունը հանդիսանում ե խորհրդային առաջավոր յերիտասարդության մասսայական անկուսակցական կազմակերպությունը, վոր կոմյերիստմիությունը հարում ե ՀամԿ(բ)Կ-ին, հանդիսանում ե նրա ռեզերվն ու ողնականը: Կոմյերիստմիությունը կոչված ե ողնելու կուսակցությանը՝ յերիտասարդությանը կոմունիստական վողով դաստիարակելու դործում: Կոմյերիստմիության եյության քննորոշումը, վոր ձևակերպված ե կանոնադրության նախագծում, տվել ե անձամբ ընկեր Ստալինը: (Մաֆահարություններ):

Կանոնադրության նախագծի սկզբնական տեքստում մենք, ՀամԼԿՅԵՄ կենտկոմը, առաջարկում ենինք դրել այսպես. «ՀամԼԿՅԵՄ Հանդիսանում ե Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության ռեզերվն ու հավատարիմ ողնականը: Բոլշևիկյան կուսակցության դեկավարությամբ ՀամԼԿՅԵՄ յերիտասարդությանը դաստիարակում ե կոմունիզմի վողով, նրան համախմբում ե ՀամԿ(բ)Կ և խորհրդային իշխանության շուրջը: ՀամԼԿՅԵՄ մասսայական, իր եյությամբ պրոլետարական, կազմակերպություն ե, վորն իր շարքերում միավորում ե առաջավոր, դասակարգայնորեն գիտակից, քաղաքականապես դրագետ յերիտասարդության լայն խավերին»:

Ինչպես տեսնում եք, ընկեր Ստալինը լուրջ կերպով ուղղել և Համլեկթեմ կանոնադրության նախադիմ այս հիմնական դրույթը : Այս ուղղումները, ինչպես իր հիմնալի ճառում միանդամայն հիշտ նշեց Ա. Ա. Անդրեյնվը, ուղղումներ են մեր անցյալ, ինչպես և ներկայիս աշխատանքում : Ընկեր Ստալինի դիտողությունները կանոնադրության և ծրագրի նախադիմ առթիվ վոչ մի ունակում չի կարելի անջատել այն ցուցումներից, վոր տվել և ընկեր Ստալինը 1935 թվի սկզբին Լենինյան կոմյերիտմիությանը՝ յերիտասարդության կոմունիստական դաստիարակության խնդրի վերաբերյալ :

Իր ժամանակին ընկեր Ստալինի ցուցումով մենք արմատապես փոփոխեցինք կոմյերիտմիության կոմիտեների կառուցվածքը, վորոնք մեխանիկորեն ընդորինակում եյին կուսակցական կոմիտեների կառուցվածքը : Սա բավականաշատի թեթևացնում և յերիտասարդության դաստիարակության խնդիրների լուծումը : Համլեկթեմ դաստիարակչական աշխատանքն առաջ և գնացել :

Սակայն մի քանի կոմյերիտական կոմիտեներ մինչև այժմ գեն ելի լրիվ չափով չեն անցել յերիտասարդության դաստիարակումն հարցերին, մինչև այժմ նրանց ուշադրությունը գրավում են զանազան խորապես տնտեսական հարցեր : Մինչև այժմ միքանի կոմյերիտական կոմիտեներ շարունակում են ընդորինակել կուսակցական կազմակերպությունների աշխատանքի մեթոդները : Սա բացառովում և կոմյերիտմիության բնույթն ու եյությունը չըմբռնելուց :

Ընկեր Ստալինի այն ցուցումը, թե կոմյերիտմիությունն անկուսակցական կազմակերպություն և, պարտավորեցնում և մեղ շատ բան վերաքննել ու փոփոխել կոմյերիտմիության աշխատանքի պրակտիկայում : Բավական ե ասել, վոր հաճախ կոմյերիտական կազմակերպությունները մտնողներին առաջադրում են համարյա նույն որահանջները, ինչ ներկայացվում են կուսակցության մեջ մտնողին : Որինակ, Լենինյան կոմյերիտմիության շարքերը մտնել ցանկացողից յերբեմն որահանջում են իմանալ և լրիվ չափով համաձայն լինել Համկ(բ)ի ծրագրին ու կանոնադրությանը, կարծես թե փուտակցության անդամի և կոմյերիտականի միջև վոչ մի տարբերություն չկա, բացի տարիքից : Իհարկե, այս որահանջը սխալ ե, նա համասում ե կոմյերիտմիության եյությանն, իբրև անկուսակցական կազմակերպու

թյան, վոր կոչված և յերիտասարդությանը դաստիարակելու կոմունիզմի վողով:

Կանոնադրության սկզբնական նախագծում մենք գրել եյինք, թե «վորեւ շեղում Համկ(բ)կ և ՀամկացեՄ ծրագրից անհամառեղելի յե կոմյերիտմիության մեջ գտնվելու հետ»: Ընկեր Ստալինը պարզաբանեց, վոր կոմյերիտմիության մեջ գտնվելու հետ անհամառեղելության նշումով հարկավոր և սահմանափակվել միայն այն դեպքում, յերբ կոմյերիտականը շեղիլի ՀամկացեՄ ծրագրից:

Այսպիսով, հասկանալի և ճիշտ կլինի կոմյերիտմիության մեջ մտնողներին պահանջ առաջադրել խմանալու և համաձայն լինելու ՀամկացեՄ ծրագրին:

Կանոնադրության սկզբնական նախագծում մենք կոմյերիտմիության թեկնածուից պահանջում եյինք նույնպես, վոր նա թեկնածուական ստածն անցնելու շրջանում անդայման ծանոթանակուսակցության ծրագրի և կանոնադրության հետ: Ընկեր Ստալինն այս կետը ջնջեց:

Նախադի սկզբնական տեքստի հենց այժմ իմ մեջբերած դրույթների սխալը նորից այն ե, վոր կոմյերիտմիության՝ անկուսակցական կազմակերպության անդամներին առաջադրվում եյին նույնպիսի պահանջներ, ինչ և կուսակցության անդամներին: Իհարկե, մեծագույն մոլորությունը կլիներ այս ամբողջ ասածներից յնդրակացնել, վոր մենք չպետք և դաստիարակենք կոմյերիտականներին, ամբողջ յերիտասարդությանը կուսակցության ծրագրին ընդունելու վողով, կուսակցության վորոշումները հարգելու վոգով: Մեր սրբազն պարտքն ե՝ յերիտասարդությանը կազմակերպել պայքարելու կուսակցության ծրագրը, նրա վորոշումները, նրա լողումները կատարելու, այսինքն կուսակցության դիմումն իրականացնելու համար:

Այսպիսով, չե կարելի թեկուղ և կուսակցությանը հարող, թեկուղ և իր վողով կոմունիստական հանդիսացող անկուսակցական կազմակերպության կանոնադրությունը, վորպիսին կոմյերիտմիությունն ե, նույնացնել Համկ(բ)կ կանոնադրության հետ: Դեռևս անհրաժեշտ ե աշխատել մեր ակտիլիլի մեջ, վորպեսզի նա մինչև վերջ դիստակցի կոմյերիտմիության եյությունն ու բնույթը:

Նայեցեք, թե վորքան ավելորդ անհամբերություն են ցուցաբերում կոմյերի իշտական կաղմակերպությունները, և առանձնապես Նրանց շտափկոտ դեկավարներն այն դեպքերում, յերբ կոմյերի տականը վորոնե դանցանք ե կատարում: Յերբեմն բավական ե ամենաչնչին առիթ, վորպեսդի կոմյերի իշտականին վտարեն միության շարքերից կամ նրան նշալակեն լուրջ տույժով: Բնորոշ ե, վոր այս ծայրահեղ անհամբերողությունը դեպի կոմյերի տամիության անդամների ամենաչնչին դանցանքները անդրադարձել են նաև նոր կանոնադրության նախադիմի առթիվ մտցված առաջարկենքրում և ուղղումներում: Մի խիստ ընկեր առաջարկում ե կանոնադրության մեջ գրել.

«Վորոնե պատճառով կուսակցությունից վտարված անձեր չպետք ե մնան Լենինյան կոմյերի տամիության շարքերում»:

Մի ուրիշը կրկնում ե նրա ասածը.

«Կոմյերի իշտականը, յեթե կուսակցության անդամ ե, յերբ նրան վտարում են կուսակցությունից, չի կարող մնալ Համ-ԼենՍՄ շարքերում»:

Այս մարդիկ մեխանիկորեն հավասարության նշան են դնում կուսակցության անդամի և կոմյերի տամիության անդամի միջև: Նրանց առաջարկների միջով անցնում ե այն հսկայական տարրերության չլմբունումը, վոր կա կառավարող կուսակցության անդամի և անկուսակցական դաստիարակչական կաղմակերպության անդամի միջև:

Նախահամագումարյան քննարկման ժամանակ պարզվեց, վոր ակտիվիստների վորոշ, ճիշտ ե, փոքրիկ մասը, մի ինչ-լոր սկզբունքորեն նոր բան եր տեսնում կանոնադրության նախադարձում՝ կոմյերի տամիության եյության բնորոշման մեջ, մի բան, վորն սկզբունքորեն տարրեր ե կոմյերի տամիության վերաբերյալ մեր նախկին պատկերացումից: Սրա հետ վոչ մի կերպ չի կարելի համաձայնել:

Կոմյերի տամիության եյության այն բնորոշումը, վոր տրված ե կանոնադրության մեջ, միանդամայն համապատասխանում ե այն բանին, ինչ առաջ ասում ելին Լենինն ու Ստալինը յերիտասարդության մասին: Լենինն ու Ստալինը մշտապես ընդգծում ելին կոմյերի տամիության անկուսակցական դաստիարակչական գնույթը: Սրանում, ընկերներ, հեշտությամբ կարելի յե համոդ-

վել, ուշադրությամբ կարդալով Լենինի և Ստալինի առածները կոմյերիտմիության մասին:

Միայն մեր կուսակցության թշնամիները, առանձնապես տրոցկիստներն եյին բազմիցս փորձում չողոքորթել յերիտասարդությանը, պնդելով, վոր կոմյերիտմիությունը համարյա թև «յերիտասարդական կուսակցություն ե»:

«Զախիկիները» (ինչպես հայտնի յե, նրանցից միքանիսը մի ժամանակ առնչություն ունեցին մեր միության ղեկավարության հետ) ուղղակի հայտարարում եյին, թե կոմյերիտմիությունն անկուսակցական կազմակերպություն չէ: Բավական ե հիշեցնել Խորհրդային մեծ հանրադիտարանում տալագրված և ժամանակին քննադատված «Համեկիթե՛Մ» վոչանհայտ հոգվածը: Այս վիճասակար հայացքներն, իհարկե, կարողացել են վորոշ չափով թափանցել նաև այս ժամանակվա միության ղեկավար փաստաթրդթերի մեջ: Այս վայտեսարանների գաղտնի, իսկ յերբենի եւ բացահայտ նպատակն ե յեղել Լենինյան կոմյերիտմիությունը հակադրել բոլշևիկյան կուսակցությանը:

Սակայն այս փորձերից վոչինչ դուրս չեկալ, վորովհետեւ Լենինյան կոմյերիտմիությունը յեղել ե և մնում ե մինչև մերջ հավատարիմ ու նվիրված իր բոլշևիկյան կուսակցությանը: (Ծափակարությաններ):

Յեզ այժմ գտնվել են, ճիշտ ե, հատումենու, ակտովի խստներ; վորոնք սկզբունքորեն սիսալ են համարում կոմյերիտմիության անկուսակցական բնույթի վերաբերյալ պնդումը: Դժվար չէ կռահել, վոր նրանց տեսակետով կոմյերիտմիությունը մի յուրատեսակ «յերիտասարդ կուսակցություն ե»:

Այս ընկերների տեսակետը վոչ մի ընդհանուր բան չունի: Կոմյերիտմիության դերի ու նրա խնդիրների վերաբերյալ Լենինի և Ստալինի ուսմունքի հետ:

Վորպեսզի կոմյերիտմիությունը կարողանա հաջողությունը կատարել ամբողջ խորհրդային յերիտասարդության կոմունիտատկան դատարակության խնդիրը, նա ոլելոք և լինի յերիտասարդության լայն, մասսայական անկուսակցական կազմակերպությունը, վորն աշխատում է կուսակցության անմիջական ղեկավարությամբ:

Այստեղից պարզ ե, վոր կոմյերիտմիության, իրեւ «յերի-

տասարդ կուսակցությանը վերաբերյալ պատկերացումը արմատապես հակասում է լենինիզմին, արժատավես հակասում է միության հիմնական կոչմանը՝ ողնել կուսակցությանը կոմունիստական դաստիարակություն տալու յերիտասարդությանն ու յերեխաներին։ Յեվ նա, ով կոմյերիտմիության մեջ տեսնում է ինչ-որ «յերիտասարդ կուսակցություն», անխուսափելիորեն կանդի կոմյերիտմիությունը կուսակցությանը հակադրելուն։

Կոմյերիտմիությունը հասուլ տեղ և գրավում պրոլետարիատի գիշտաստարայի սիստեմում։

Բնակեք Ստալինը, բնորոշելով կոմյերիտմիության եյությունն ու խնդիրները, ասել եւ, վոր յերիտասարդական միությունը—

«...դա բանվորական և գյուղացիական յերիտասարդության մասսայական կազմակերպությունն եւ, վոչ-կուսակցական, բայց կուսակցությանը հարող կազմակերպություն։ Նրա խնդիրն եւ ողնել կուսակցությանը յերիտասարդ սերունդը սոցիալիզմի վոզպի դաստիարակելու դործում։ Նայ յերիտասարդ ոեղերմներ և տալիս պրոլետարիատի մնացած բոլոր մասսայական կազմակերպություններին՝ կառավարման բոլոր ճյուղերի համար» (Ստալին, «Լենինիզմի հարցեր», հայ. էջ 150)։

Դժբախտաբար, վորոշականի խորամուխ չեն լինում այս կլասիկ ձևակերպման մեջ, վորը պատասխանում է նրանց համար մութ շատ հարցերի։ Իսկ չե՞ վոր Հենց այս ձևակերպումից և բղխում, վոր կոմյերիտմիությունը կուսակցության ողնականն եւ և նրա ոեղերմը։ Յեվ հենց այստեղից եւ բղխում, վոր կոմյերիտմիությունը համակրում է կուսակցության ծրագրին և պայքարում է նրա լողունդների ու խնդիրների իրավանայման համար։ Կոմյերիտմիության՝ վորպես մասսայական անկուսակցական կան կրողմամկերպության ուժն ու արժեքը հենց այն ե, վոր նա հարում է Համեկ(ը)կ-ին, նրա զեկավարությամբ աշխատում է յերիտասարդության կոմունիտական դաստիարակության վրա։

II. ՀԱՄԼԿՅԵՄ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վո՞րն ե կոմունիստական դաստիարակությունը։ Այս հարցին սպառիչ պատասխան ե տրված՝ Լենինի և Ստալինի ուսմունքի մեջ։ Լենինն ասել ե.

«Կոմունիստ կարելի յե դառնալ միայն այն ժամանակ, յերբ քո հիշողությունը հարստացնես այն բոլոր հարստություններն իմանալով, վոր մշակել ե մարդկությունը» (Լենինին, Ճառ ՌԿՅԵՄ Համառուսաստանյան III համագումարում, XXV հ., էջ 388)։

Այս դեպքում, իհարկե, հարկավոր ե նկատի ունենալ, ասում ար Լենինը, վոր

«Սխալ կլիներ այնպես կարծել, վոր բավական ե յուրացնել կոմունիստական յողունդները, կոմունիստական դիտության յեղակացությունները, չյուրացնելով դիտելիքների այն գումարը, վորոնց հետևանքն ե հանդիսանում ինքը կոմունիզմը» (Լենինին, Ճառ ՌԿՅԵՄ Համառուսաստանյան III համագումարում, XXV հ., էջ 386—387)։

Յեկ այնուհետեւ։

«Առանց աշխատանքի, առանց պայքարի կոմունիզմի դրքային իմացությունը կոմունիստական բրոցուրներից ու յերերից՝ ուղղակի վոչինչ չարժե, քանի վոր այն կշարունակեր նախակին խօսումը թեորիայի ու պրակտիկայի միջև, այն հին խղումը, վոր կազմում եր բուրժուական հին հասարակության ամենանողկալի հատկանիշը» (Լենինին, Ճառ ՌԿՅԵՄ Համառուսաստանյան III համագումարում, XXV հ., էջ 385—386)։

Յելնելով այդ դրույթներից, կանոնադրությունը շարադրում է ՀամԼԿՅԵՄ անդամների պարտականությունները։ Հենց այս պատճառով և առաջին պլանի վրա մղվում կոմյերիտմիության անդամի պարտականությունը՝ տիրապետելու մարքսիստական-լենինյան ուսմունքին, նրա հիմնական գաղափարներին, տիրապետելու դիտելիքներին, կուլտուրային, գիտությանը, տեխնիկակային։ Բայց առ, իհարկե, բոլորը չե։ ՀամԼԿՅԵՄ անդամները

պարտավոր մն բոլոր ուժերով ամբացնել խորհրդային հասարակակարգը, խորհրդային արդյունաբերությունն ու տրանսպորտը, կոլտնաեսություններն ու խորհտնաեսությունները, պայքար մղել ժողովրդի թշնամիների դեմ:

Կոմյերիտամիության անդամը աշխատանքին սոցիալիստականուն վերաբերվելու որինակ պիտի ցույց տա, արթուն պաշտպանի սոցիալիստական սեփականությունը, որինակելի լինի կենցաղում, պայքարի խուլեղանության դեմ, կնոջը վոչընկերաբար վերաբերվելու դեմ, որինակելի վարդունք ցույց տա ընտանիքին, յերեխաններին, համբերատար կերպով պարզաբանի յերիտասարդությանը սնահաւալատության ու կրօնական նախապաշտումնքների վնասը:

Համեկանական անդամները պետք եւ ակտիվորեն մասնակցեն կոմյերիտական կառավակերպությունների աշխատանքին, հաճախեն ժողովներին, քաղաքարապմունքներին, արագ ու ճշգրիտ կատարեն կաղմակերպության առաջադրությունները: Կոմյերիտականը սոցմրցության ակտիվ մասնակիցն եւ: Կոմյերիտական արտադրական աշխատաղները պետք եւ տիրապետեն աշխատանքի ստախանովյան մեթոդներին:

Վորոշ ընկերներ միճարկում եյին կանոնադրության մեջ շարադրված պարտապիրությունները: Կանգ կառնեմ ընկ. Բորիսովի յելոյիթի վրա «Կոմսոմոլյան Ռազմական Ազգային առաջնորդությունների վերաբերյալ էլեմենտ և այս հարցը: Ընկ. Բորիսովն իր հոգվածում Համեկանականությամբ վերլուծել եւ այս հարցը: Ընկ. Բորիսովն իր հոգվածում Համեկանականությամբ վերլուծել եւ այս հարցը: Կանգ կառնեմ ընկ. Բորիսովի յելոյիթի վրա «Կոմյերիտամիությունների պարտապիրությունների վերաբերյալ էլեմենտը համարդելով կուսակցության անդամների պարագայությունների վերաբերյալ կուսակցության կանոնադրության կանոնադրության էլեմենտ և առաջադրվում, քան կուսակցության անդամներ: Այսպիսի մեխանիկական, —շատ, թե քիչ, —համեմատությունն ինքնին արդեն սխալ եւ: Ընկ. Բորիսովի արած յեղակացություններն ըստ երաւթյան ել սխալ են:

Կուսակցության կանոնադրությունն, որինակ, պարտավորեցնում եւ կուսակցության անդամին հետեւ կուսակցական ամենախիստ կարգապահության և ակտիվորեն մասնակցել կուսակցության քաղաքական կյանքին: Նման վոչ մի բան չկա. Կոմյերիտամիությունների վանոնադրության նախադեռում եւ, բնական եւ, չի եւ

կարող լինել։ Յեւ կամ Համեկը (բ)Կ կանոնադրության մեջ ասված է, վոր կոմունիստը իբրև Խորհրդային պետության մեջ կառավարող կուսակցության անդամ, պարտավոր և հանդիսանալ աշխատանքային և պետական կարգապահություն պահպանողի որինակ։ Այսպիսի պահանջ չի ներկայացնում կանոնադրությունը Համեկի օթեՄ անդամին և, իհարկե, չի կարող ներկայացնել։ Հետեւաբար, ուղղակի անհեթեթություն և խոսել այն մասին, վոր կոմյերիստականն «ավելի շատ պարտավորություններ» ունի։

Սակայն կոմյերիստմիության անդամի պարտականություններին վերաբերող կետի առթիվ ընկ. Բորիսովի և միքանի ուրիշ ընկերների արած միքանի դիտողությունների հետ պետք և համաձայնել։

Այսպես, որինակ, ըստ յերմութին, հարկավոր և ճշգրտել կանոնադրության նաև այն մասը, վորտեղ խոսվում և, թե յուրաքանչյուր կոմյերիստական պարտավոր և «աշխատել ատախանովաբար»։ Զե՞՞ վոր վոչ բոլոր կոմյերիստականներն են, վոր իրենց աշխատանքի բնույթով կարող են լինել ստախանովական։ Իսկ բացի սրանից, չի կարելի ստիպել կոմյերիստականին պարտազիր կարդով ստախանովական լինելու։ Սա բյուրոկրատականորեն և հնչում։ Վորոչ ուղղումներ հարկավոր և մտցնել, բայց ընկ. Բորիսովի հիմնարկան առաջարկի հետ չի կարելի համաձայնել։ Նա առաջարկում է Համեկի օթեՄ անդամի պարտականությունները շարադրել այսպես։

«Համեկի օթեՄ անդամը պարտասվոր և»

ա) կատարել բոլշևիկների կուսակցության և կոմյերիստմիության վորոշումները և ակտիվ մասնակցել յերկրի քաղաքական կյանքին։

բ) ակտիվ մասնակցել կոմյերիստական կազմակերպության աշխատանքին, ճշտապահութեան հաճախել կոմյերիստական ժողովները։ արագ և ճշգրիտ կատարել կազմակերպության առաջադրությունները, ամեն մի ակտած գործ հասցնելով մինչև վերջ։

Ահա այն բոլորը, ինչ առաջարկվում և ասել Համեկի օթեՄ անդամի պարտականությունների մասին։

Այս առաջարկն, իմ կարծիքով, անընդունելի յէ: Այս չի ընդդրկում ՀամԼԿՅԵՄ անդամի կոնկրետ պարտականությունների ամբողջ շրջանը, հակառակ և այն բանին, վոր կոմյերիսամիությունը հանդիսանում և առաջալոր, քաղաքականապես գրագետ յերիտասարդությանը համախմբող կազմակերպություն: Կոմյերիտականն իրըն խորհրդային առաջալոր, յերիտասարդ պարտավոր և սխտումատիկարար բարձրացնել իր գաղափարական տեսական մակարդակը, տիբապետնել զիտելիքներին, կուլտուրային, գիտությանը, տեխնիկային, ուսումնասիրեն ոսղմական գործը և այլն:

Կանոնադրության նախադիմը կոմյերիտականի վրա զնում և այլ և ուրիշ պարտականություններ հոգուտ կոմյերիտմիության միավորած յերիտասարդության քաղաքական և կուլտուրական անման, հոգուտ կոմյերիտմիության ել ավելի մեծ ազդեցության արտամիութենական յերիտասարդության լայն խավերի վրա:

Ահա թե ինչու մենք չենք կարող ընդունել նշված հոգվածի հիմնաւան առաջարկը և կոմյերիտմիության անդամի պարտականությունները առհմանափակել նրանով, ինչ շարադրված և այնաղ:

III. ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նոր կանոնադրության նախադիմը սկզբունքորեն նոր ձևով և զնում կոմյերիտմիության մեջ ընդունելու հարցը: Մեղ մոտ առաջ կոմյերիտմիության մեջ ընդունելիս յերիտասարդությունը բաժանում ելինք սոցիալական խմբերի:

Նոր կանոնադրության նախադծով կոմյերիտմիության անդամ ընդունվում և առաջալոր, ստուգված, խորհրդային իշխանությանը նվիրված յերիտասարդությունը բանվորների, գյուղացիների և ծառայողների միջից: Խակ այն դեպքում, յերբ ընդունվողը դեռ բավականաչափ պատրաստ չե ՀամԼԿՅԵՄ անդամ ընդունվելու համար, կազմակերպությունը նրան ընդունում և իր շարքերն իբրև թեկնածու 6 ամիս ժամանակով:

Կոմյերիտմիության մեջ ընդունելու վերաբերյալ այս նոր հարցադրումը նմանապես տվել և ընկեր Ստալինը: Կանոնադրության սկզբնական նախադում մենք այլ կերպ ելինք նայում կոմյերիտմիության մեջ ընդունելու հարցին, կոմյերիտմիության

Մեջ ընդունելիս առաջապոր, խորհրդային իշխանությանն ու կուսակցությանը նվիրված առանց բացառության ամրողջ յերետասարդության համար սահմանելով պարտադիր թեկնածուական ստաժ։ Այսուհետև թեկնածու ընդունվողներին մենք բաժանում ենինք յերկու խմբի մեկի համար սահմանվում եր Յամսյա թեկնածուական ստաժ, մյուսի համար՝ մի տարվա։

Մեր առաջարկների սխալն ակներեւ եւ: Մենք, փոխանակ թեթևացնելու, գեվարացնում եյինք խորհրդային առաջավոր յերետասարդության մուտքը կոմյերիտմիության մեջ՝ բոլոր մտնողների համար սահմանելով պարտադիր թեկնածուական ստաժ։ Մենք չեյինք հաշվի առել նաև վորակական տեղաշարժերը ծառայող և սովորող յերիտասարդության մեջ, նրա հոսանքը դեպի կոմյերիտմիություն կարգավորելով ավելի յերկար թեկնածուական ստաժ մտցնելով։ Ընկեր Ստալինը պարզաբանեց մեզ, վոր քանի վոր մենք նախատեսում ենք կոմյերիտմիության մեջ ընդունել առաջավոր յերիտասարդությանը, ապա հարկ չկա նրա համար թեկնածուական պարտադիր ստաժ սահմանելու։

Եերկրի տնտեսության մեջ, եկոնոմիկայում, սոցիալ-ըստակարգային կառուցվածքի մեջ, հետևարար նաև մարդկանց գիտակցության մեջ տեղի յեն ունեցել շատ լուրջ միովիտակություններ։ Մեր խորհրդային յերիտասարդությունը մի կողմ չի կանգնել և չի կանգնած յերկրի սոցիալիտական վերակառուցման ամբողջ պայքարից։ Ընդհակառակի, նա կուսակցության ղեկավարությամբ ակտիվ մասնակցել և մասնակցում և սոցիալիստական անդամակարդ հասարակության կառուցման պայքարին։ Այս պայքարի, աշխատանքի և ուսուցման ընթացքում յերիտասարդությունը դաստիարակվում և կոփվում եւ։ Ընդվորում դաստիարակության այս դպրոցը բանվոր և կոլտնտեսական յերիտասարդության հետ միասին անցնում են թե՛ յերիտասարդ ծառայողները, թե՛ սովորող յերիտասարդները, թե՛ յերիտասարդինտելիքներն են։

Բոլորին հայոնի յեւ, վոր բանվոր յերիտասարդությունը առնում ե բուռն կերպով, ժամ առ ժամ, քաղաքականապես և կուլտուրապես տիրապետում ե նոր, աճող տեխնիկային։ Նրա միջից դուրս են յեկել հազարավոր ճարտարագետներ, վարպետ-ստախանովականներ։ Կերպարանափոխվում ե նաև մեր կոլտնտեսական յերիտասարդությունը, վորն իր մասսայով խորապես ըմբռու-

նում և պրոլետարական պետության շահերը, վորն աճում ու զարդանում և նոր, կոլտնտեսային հասարակակարգ ստեղծելու սլաքարում:

Իսկ նայեցեք ծառայող յերկտասարդությանն ու առանձնապետարքականությանը ինտելիգենցիային: Վորքա՞ն նրա մեջ սքանչելի, խորհրդային իշխանությանը նվիրված յերկտասարդ ճարտարագետներ կան, ողաչուներ, գյուղատնտեսներ, ռասուցիչներ, բժիշկներ, հաշվառահներ, դերասաններ, յերաժշտագետներ: Ճիշտ այդպես ել սովորող յերկտասարդության մեջ, վոր ծնվել և խորհրդային իշխանության ժամանակ, սովորում ե խորհրդային դպրոցում, քիչ նշանավոր պատանիներ ու աղջիկներ չկան, վորոնք իրոք առաջավոր մարդիկ են և արժանի կոմյերիտմիության շարքերում գտնվելու:

Այնինչ շատ կոմիտեներ, փոխանակ ավելի մոտ ներգրավելու յերկտասարդ ինտելիգենցիային կոմյերիտմիության աշխատանքին, զեկավարությանը, լայնորեն ներգրավելու նրան իր շարքերը, այս յերկտասարդությանը թողնում են իր բախտին: Իսկ ինչ ասել ծառայող յերկտասարդության մասին: Կոմյերիտմիության շատ աշխատողներ ամենուրեք արհամարհական վերաբերմունք են ցույց տալիս նրան, հաճախ անտեսում են նրան և յերեմն խոչընդոտ հանդիսանում նրան կոմյերիտմիության մեջ մտնելու: Սա հետեանք և այն բանը չըմբռնելու, թե վորքան փոփոխվել են շրջակա պայմանները, վորքան փոփոխվել և ինքը ծառայող յերկտասարդությունը: Յերկտասարդ ծառայողները խորհրդային յերկտասարդության մի մասն են: Նրանք մնացած ամբողջ աշխատավոր յերկտասարդության հետ միասին պետք է վայելն կոմյերիտական զեկավարության ուշադրությունն ու հոգատարությունը:

Ահա թե ինչու բոլոր հիմքերը կան կոմյերիտմիության մեջ ընդունելիս վերացնելու նախկին բաժանումը սոցիալական խմբերի: Ահա թե ինչու կոմյերիտմիությունը պետք է ամեն կերպ թեթեվացնի բանվորների, գյուղացիների և ծառայողների միջից յելած ամբողջ առաջավոր, խորհրդային իշխանությանը նվիրված յերկտասարդության մուտքն իր շարքերը:

Կանոնադրության նախադիմքը քննելու ընթացքում հրապարակ յեկավ կոմյերիտմիության մեջ ընդունելու այս նոր հարցադրման չըմբռնում: Ահավասիկ, որինակ, խորհրդային Հացահատիկային

առնտեսության ինստիտուտից մի կոմյերիտական ասում ե. «Զի կարելի լայնորեն բացել մեր միության դռները: Մենք մեծ զգունություն պետք ե ցուցաբերենք և յերիտասարդությանն ընդունենք այնպես, ինչպես այս մասին ասված է հին կանոնադրության մեջ՝ հաշվի առնելով սոցիալական դրությունը»:

Եեվ կամ ահա կոմյերիտմիության Դռնեցի մարդի Վորոշիլովգրադի քաղկոմի քարտուղար ընկ. Գորբատովի առաջարկը. Նա ասում ե. «Բատիս հարկավոր ե բոլորին ընդունել Յամսյա թեկնածուական ստաժով, վորովհետև յեթե մենք ընդունենք այնպես, ինչպես ասված ե կանոնադրության նախադում, կստացվի, վոր կոլտնտեսականներն ու շատ բանվորներ կընդունվեն իրեւ թեկնածու, իսկ լավագույն պատրաստված սովորող յերիտասարդուներն ու ծառայողներն՝ իսկական անդամներ, —այս հանդամանքը կաղմակերպության մեջ կնվազեցնի բանվորական միջնախավը»:

Մի կոմյերիտական առաջարկում ե «Պյուղացի յերիտասարդության համար թեկնածուական ստաժ չսահմանել, վորովհետև նա իր մեծամասնությամբ զարդացման ընդհանուր մակարդակով ավելի ցածր ե կանգնած, քան բանվոր յերիտասարդության զարգացման մակարդակն ե»:

Այս բոլոր առաջարկներում, չնայած նրանց ձևակերպումը տարբեր ե, կա մի ընդհանուր բան, դա նոր պայմանների չըմբռնումն ե, յերիտասարդության, այս թվում նաև ծառայող և սովորող յերիտասարդության միջի վորակական նոր տեղաշարժերի թերահաշվառումը: Դեռ ավելին՝ այս առաջարկներում յերևում ե յերկյուղ այս յերիտասարդությունից:

Ինարկե, հնարավոր են այնպիսի դեպքեր, յերբ առանձին բանվորներ և կոլտնտեսականներ կընդունվեն թեկնածու, իսկ ծառայողներն ու սովորող յերիտասարդներն՝ անդամ, վորչափով վոր խոսքը վերաբերում ե կոմյերիտմիության մեջ իրեւ անդամ առաջավոր, ստուգված յերիտասարդությանն ընդունելուն, առանց հաշվի առնելու սոցիալական տարբերությունը: Բայց որանից վախենալու պատճառ չկա, քանի վոր մեր յերիտասարդությունն այլ ե դարձել:

Հիմնավորված չե նմանապես այն պնդումը, թե իրը այժմ կոլտնտեսական յերիտասարդության դժով աճումը կարող ե դանդաղել: Այս սիսալ ե: Ամեներև ե, վոր այս ընկերները չեն ճանաչում ներկայիս դյուղացի յերիտասարդությանը: Նրա մեջ շատերը

կան, վոր արժանի յեն կոմյերիտմիության շարքերն ընդունվելու: Նայեցեք, թե վորքան քիչ և ընդորկել կոմյերիտմիությունը տրամակտորիտաներին ու կոմբայնավարներին, վորոնց մեջ յերիտասրդությունը ճնշող մեծամասնություն ե կազմում: Կոմյերիտմիության սկզբնական կազմակերպությունները նմանապես շատ փոքրաթիվ են կոլտնտեսություններում: Ընտրովի ավալներով, դյուդի 565 սկզբնական կազմակերպությունից 14% ունեն մինչեւ 5 անդամ, 38%-6-10 անդամ, 22%-11-15 անդամ, 12%-16-20 անդամ և միայն 6,5%-20 անդամից ավելի: 149 հազ. կուտնահանության մեջ ամեննեին չկան կոմյերիտմիության սկզբնական կազմակերպություններ: Անմտություն ե յենթադրել, թե այս կոլտնտեսություններում չկա առաջավոր, ստուգված և խորհրդային իշխանությանը նվիրված յերիտասարդություն, վորի հաշվին կոմյերիտմիությունը կարողանար աճել:

Բնկեր Ստալինն ընդգծեց գյուղում կոմյերիտմիության առումն ուժեղացնելու անհրաժեշտությունը առաջավոր, ստուգված, խորհրդային իշխանությանը նվիրված յերիտասարդության հաջողին: Նա մեր ուշադրությունը հրավիրեց այն բանի վրա, վոր գյուղում շատ արժանավոր յերիտասարդություն ե բաղկացում կոմյերիտմիության դռները և վոր նրան հարկավոր և ընդունել մեր շարքերը:

Իշարկե, յերբ մենք խոսում ենք առաջավոր յերիտասարդությանը կոմյերիտմիության մեջ ընդունելու մասին, մենք չենք կարող ընդունվողին պահանջ առաջարդել, վոր նա յոթնամյակից պակաս կրթություն չունենա, ինչպես առաջարկում ենին միքանի չափից դուրս ջանադիր ընկերներ: Անընդունելի յե նմանապես այն առաջարկը, վոր թեկնածու ընդունվի այն յերիտասարդությունը, վորն արդեն լավ դիտե կոմյերիտմիության ծրագիրն ու կանոնադրությունը:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ ե վճռականապես մերժել այն առաջարկը, վոր թեկնածու պետք ե ընդունել բոլոր ցանկացողներին: Ի՞նչպես հասկանալ կանոնադրության՝ թեկնածուական ստաժ սահմանելու վերաբերյալ կետը: Թեկնածու յե ընդունվում նույնպես ստուգված, խորհրդային իշխանությանը նվիրված յերիտասարդությունը, բայց վորը զեռևս բավականաչափ պատրաստված չի միության անդամ ընդունվելու համար:

Կանոնադրությունը պարզապես ասում է, վոր թեկնածուա-

կան ստածը սահմանվում ե նրա համար, վորպեսզի կոմյե-
շիտմիության մեջ մտնել ցանկացողը պատրաստվի դրան, ծանո-
թանա ՀամԼԿՅԵՄ ծրագրին և կանոնադրությանը և վերացնի իբ-
քաղաքական անդրադիտությունը:

Իհարկե, առաջավոր և նվիրված յերիտասարդության ավելի-
լայն ընդունելությունը կոմյերիտմիության մեջ բնալ չի նշա-
նակում հախուռն մոտեցում ունենալ դեպի ընդունելության
խնդիրը, անխտիր ընդունել բոլորին, ՀամԼԿՅԵՄ ընդունվել ցան-
կացող ամեն մեկին: Փորձը ցույց ե տալիս, վոր այնաեղ, վոր-
աեղ այսպիսի սխալ ե թույլ տրվել, մենք շատ աննպաստ հե-
տևանքներ ենք ստացել: Իվերջո, յերբեմն կոմյերիտմիության
մեջ ընկել են պատահական և նույնիսկ թշնամական տարբեր,
ամեն տեսակ ժուլիկներ ու աֆերիստներ:

Ընկերներ, հարկավոր ե վերացնել այն դրությունը, յերբ
շրջկոմների ու քաղկոմների բյուրոները փոխանակ հաստատելու
յուրաքանչյուր մտնողի, «կույտառվ» են հաստատում ընդունող
հանձնաժողովների առաջարկները: Հարկավոր ե վերացնել կոմ-
յերիտմիության մեջ ընդունելության կանոնադրական կանոնների
բոլոր խախտումները:

ՀամԼԿՅԵՄ կենտրոնական կոմիտեն առաջարկ ե մտցնում
Համագումար կոմյերիտմիության մեջ ընդունելու 15-ից մինչև
26 տարեկան յերիտասարդությանը: Ինչո՞ւ, ընկերներ, սկսած 15
տարեկանից: Զե՞ վոր առաջ կոմյերիտմիության մեջ կարող եր-
մտնել նաև 14 տարեկան անչափահասը: Սա դարձյալ կապված
ե դրության փոփոխության հետ: Առաջ արտադրության մեջ և
ֆարմագումարի դպրոցներն եյին մտնում մշտապես 14 տարեկան
յերիտասարդները: Մենք, իհարկե, այն ժամանակ չեյինք կարող
արտադրության մեջ կամ ֆարմագումարում գտնվող այս յերիտա-
սարդությանը չամախմբել լենինյան կոմյերիտմիության շար-
քերում: Այժմ այդ ժամանակն անցել ե: Յերիտասարդությունը
ֆարմագումարի դպրոցներն ե ընդունվում միայն սկսած 15 տարե-
կան հասակից: Արտադրության մեջ 14 տարեկան յերիտասարդ-
ներ համարյա թե չկան: Սրա հետ միասին աճել և ամրացել ե-
պիսներական կազմակերպությունը, վորը լիովին կարող ե բա-
վարարել մինչև 15 տարեկան յերեխաների ու անչափահասների
դրահանջները:

Ինչո՞ւ, մինչև 26 տարեկանը: Վորովհետեւ կուսակցության

մեջ, ինչպես այս բղխում և Համկ(բ)կ կենտկոմի դելտեմբերյան պլանումի վարոշումներից, պետք ե ընդունվեն իրոք առաջավոր, քաղաքականապես հասուն, արժանավոր, մեր Խորհրդային յերկրի լավագույն մարդիկ: Հարկավոր ե, վոր 23 տարեկանից բարձր յերիտասարդությունը հնարավորություն ունենա գտնվելու կոմյերիամիության մեջ, ոգտվելով բոլոր իրավունքներից, ունենալով կոմունիստական յերիտասարդության միության անդամների բոլոր պարտականությունները: Կոմյերիամիությունը լիակատար չափով կարող ե բավարարել այս յերիտասարդության պահանջները: Պատահական չե, վոր կոմյերիամիության շարքերում այժմ 30%-ից ավելին 23 տարեկանից բարձր հասակ ունի: Չնայած հին կանոնադրությամբ այս յերիտասարդության իրավունքների ձևական սահմանափակումներին, նա ցանկացավ շարունակել աշխատանքը միության շարքերում: Յեկ մենք չենք կարող սրա հետ հաշվի չնստել:

Կանոնադրության նախադիմը քննելիս մի քանի ընկերներ ավելի առաջ գնացին. նրանք առաջարկում ելին կոմյերիամիության մեջ ընդունել՝ նույնիսկ 28—30 տարեկաններին: Այս առաջարկիները պետք ե համարել չմտածված: Համաձայնվեցեք, վոր մի վորեւ հասակային սահման պետք ե լինի յերիտասարդական միության մեջ մտնելու համար: Մենք չենք կարող լինել մի կազմակերպություն; վորն իր շարքերում միավորում ե թե՛ տասնը-հինգ տարեկաններին և թե՛ յերեսուն տարեկաններին, վորոնց հասակային սահմանները խորապես տարբեր են:

IV. ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այսպիսով, խորհրդային առաջավոր յերիտասարդության բոլոր միջնախավերին ավելի լայն կերպով Համլկօթե՛Մ շարքերն ընդունելու հեռանկարներ են բացվում: Այս հանդամանքն ամբողջ համառությամբ պահանջում է վերացնել կազմակերպական աշխատանքի հետ մնալը: Համկ(բ)կ կենտկոմի քարտուղար ընկ. Ա. Ա. Անդրեյեվն իր յելույթում միանգամայն իրավացիորեն խիստ քննադատության յենթարկեց կոմյերիամիության ամբողջ կազմակերպական աշխատանքի թերությունները: Բնկ. Անդրեյեվի յե-

լույթը շատ բան և սովորեցնում մեղ, և մենք նրանից յեղբակացություն պիտի անենք մինչև վերջ։ Մեր կազմակերպական աշխատանքի թուլությունը, իսկ յերբեմն ել անդորությունը կարելի յէ հայտնաբերել ամեն քայլափոխում։

Ահա, որինակ, կոմյերիտականների ու յերիտասարդության քաղաքական կրթությունը։ Մեր կազմակերպական աշխատանքի թուլության հետևանքով հաճախ քաղդապրոցներն ու խմբակները համալրելիս թույլատրվել են խափանումներ և խեղաթյուրումներ։ Պրոպագանդիստների մեջ յեղել են թուլով շատ չպատրաստված մարդիկ։ Պրոպագանդիստներին բազմաթիվ կազմակերպություններում ցույց են տալիս միանդամեայն անպետք զեկավարություն։

Յեզ կամ վերցրեք տեխնիկական կրթության հարցը։ Խոնչպես են լուծել այդ մի քանի մարզկոմներ ու յերկրկոմներ։ Որենակ, կուրսի մարզկոմը, քննարկելով ընկ. Կոսարեկվի հեռազերը ստախանովականների տեխնիկական կրթությունը կազմակերպելու մասին, վորոշեց. «Պարտավորեցնել մարզի կոմյերիտմիության բոլոր սկզբնական կազմակերպություններին անհապաղ ձեռնարկելու կենտրոնական կոմիտեյի այս դիրեկտիվի կատարմանը»։ Յեզ ուրիշ վորչին էնկերուները նեղություն չեն կրել մտածելու, թե իսկ ո՞վ ե ծրագրի մշակելու, ո՞վ և ողնելու տնտեսավարներին դատընթացներ կազմակերպելու։ Նրանք մոռացել են նաև մի ամբողջ շարք ուրիշ հարցեր, առանց վորոնց անկարելի յէ ուսման իսկական կազմակերպումը։

Յեզ կամ վերցրեք ոտար լեզուներ ուսումնասիրելու հարցը։ Մինչեւ այն ժամանակ, քանի դեռ ընկ. Կոսարեկվը կոմյերիտմիության կենտրոնական կոմիտեյի անունից հասողուկ նամակով չեր դիմել ոտար լեզուներ իմացողներին, շատ և շատ կազմակերպություններ գանգատվում եյին, թե դասատուների կաղըեր չկան։ Սրանով արդարացվում եյին կոմյերիտականների ու յերիտասարդության կողմից ոտար լեզուներ ուսումնասիրելու դործի բոլոր թերությունները։ Յես պիտք ե ասեմ, վոր միության վորոշ կազմակերպություններում կազմակերպական աշխատանքի թուլությունը հանգել ե շատ վողբախ հետևանքների։ Համեկաթե՛Մ կենտրոնական կոմիտեն այս առնչությամբ մեկից ավելի անդամ առիթ ե ունեցել ուղղելու մարզկոմներին և յերկրկոմներին։ Հաճախ պարզվում եր, վոր այս կամ այն կոմիտեյի զեկավարները վատ-

չեն ըմբոնում իրենց խնդիրները, ճիշտ են շարադրում դրանք, բայց նրանց դործերը վատ դրության մեջ են: Մոտիկ անցյալում այսպէս եր իվանովյան մարդում: Այստեղ կազմակերպական անդորրությունն ամենից առաջ արտահայտվել ե կադրերի անշնորհք ընտրությամբ: Շրջումների քարտուղարներն այնքան անփույթ են ընտրված, վոր նրանք կես տարուց ավելի չեն աշխատել ըբր-ջանում:

Իր ժամանակին ամբողջ Միության մեջ անց են կացվել բանվոր և կոլտնտեսական յերիտասարդության շրջանային կոնֆերենցիաներ: Դրանք վատ չեն անցկացվել նաև իվանովյան մարդում: Բայց չենց վոր բանը հասել ե այս կոնֆերենցիաների վորոշումների կատարմանը, մարդկոմը կրկին ցուցաբերել ե իր կազմակերպական անկարողությունը: Հենց այս և սպատճառը, վոր այս կոնֆերենցիաներում կոմյերիտականների, յերիտասարդության կողմից մտցրած հարյուր հաղարավոր գործնական առաջարկությունները մնացել են չկատարված:

Եել կամ ահա Հյուսիսային յերկրի կոմյերիտմիության նախկին զեկալարությունը: Նրա կազմակերպական աշխատանքի թուլյությունը հասել եր այն աստիճանի, վոր Համլկօթել կենտկոմի կարեւորագույն վարչումների կատարումը բառացի կերպով խափանվել ե: Կենտկոմը կարևորագույն վորոշում ե ընդունում կոմյերիտական ժողովների մասին, իսկ Հյուսիսային յերկրկոմի զեկալարությունը չի կատարում այն: Ստուգման ժամանակ պարզվում ե, վոր ժողովներն առաջվա նման վատ են անցնում: Կենտկոմը պահանջում և ամրացնել կոմյերիտական կադրերը, իսկ Հյուսիսային յերկրկոմն առաջվա նման կատարյալ ինքնահու և թույլ տալիս կադրերի ընտրության գործում:

Կազմակերպական նույն անողնամկանությունը կարելի յեր նկատել նաև կոմյերիտմիության ակտիվիտերն այն ժողովներն անցկացնելիս, վորոնք նիմիլած եյին հաշվեառուվերը ընտրական կամպանիային: Շատ կազմակերպություններում, այս թվում նաև Մոսկվայում, միքանի շրջանների ակտիվիտերն անցել են միանդամայն անբայլարար, ընդվորում նրանց անպատճառապահությունն զգացվում եր նույնիսկ մանրութիւն մեջ:

Բայց, ընկերներ, կազմակերպական աշխատանքի թուլությունն իր մասին զգալ ե տալիս առանձնապես կոմյերիտական անտիթության մեջ: Կոմյերիտական փաստաթղթերի հանձնման

և պահպանման գործում մի ամբողջ շարք կազմակերպություններում կամայականություն և տիրում: Կոմյերիտմիության անդամների հաշվառումը կատարվում և քառային կերպով:

Կոմյերիտական գրաստաթղթերի հաշվառումն ու պահպանումը յերեմն վատահում են առաջին պատահած մարդուն:

Այս խայտառակությունները կարելի յե բացատրել միայն պատշաճ աչալլության բացակայությամբ, շատ ղեկավար աշխատղների վոչքուղեկելիյան վերաբերմունքով դեպի կոմյերիտական տնտեսությունը, այս կարևորագույն գործը տեխնիկական ապարատին վերավտահելով, վորը հաճախ աղտոտված եր թշնամական և պատահական տարրերով:

Բայտ յերեւութին մենք հարկ կզգանք կատարելու կոմյերիտական գրաստաթղթերի ստուգում: Կոմյերիտական գրաստաթղթերի, իսկ հետո տոմսերի ստուգումը կողնեն արմատապես փոփոխելու դրությունը և վերջ դնելու այս խայտառակություններին:

Սա չի նշանակում, իհարկե, վոր սպասելով ստուգման, կոմյերիտական տնտեսությունը պետք և թողնվի լքված դրության մեջ: Հարկավոր և անհապաղ մի շարք միջոցներ ձևոք առնել և դեռ ստուգումից շատ առաջ կարդ մտցնել կոմյերիտական տնտեսության մեջ:

Բայց սրա համար հարկավոր և բարձրացնել հեղափոխական զգոնությունը, վերջ տալ ամեն մի բարեհողության:

Պատասխանատու աշխատողները պետք և անմիջականորեն իրենք զբաղվեն կոմյերիտմիության մեջ ընդունելու գործով, փաստաթղթեր տալով և հաշվառման գործը դնելով: Այս հանգամանքը կողնի կոմյերիտների, շրջկոմների, մարզկոմների քարտուղարներին ամելի լավ ճանաչելու իրենց կազմակերպության անդամներին, ամելի հաջող գաստիարակելու նրանց կոմունիտական վողով, այսինքն լինելու իսկական կոմյերիտական ղեկավարները:

Կազմակերպական աշխատանքի թուլության հետևանքով մինչև վերջին ժամանակներս միության մեջ նկատվում եր մեծ հռատնություն:

Այս հոսունությունն, իհարկե, չի կարելի բացատրել միության հասակային առանձնահատկություններով միայն և այլն: Ճշմարիտ և, վոր կոմյերիտմիությունից յերիտասարդության նշանակելի մասը հեռացել և պետք և հեռանա իրրե մեծահա-

ռակ: Սա յերիտասարդական կաղմակերպության բնական հոսությունն եւ: Բայց խոսքը սրա մասին չե: 1930—1933 թվերի այլաշները վկայում են, վոր Քեջ յերիտասարդություն չի հեռացել Համեմատականից յերիտասարդություն, վոր յեղել և 23 ռեբեկանից ցածր:

Նրանց մի մասն, իհարկե, մտել եւ 20—22 տարեկան հասակում և Համեմատականից կարող եր հեռանալ հասակային նկատություններով: Բայց բոլորի համար ակներեւ ե, վոր անցած տարին ընդունվածներից քչերը չեն հեռացել կոմյերիտմիությունից 23 տարեկան չդառած: Հակառակ դեպքում մեզ մոտ միության մեջ մեծահասակների այնպիսի մեծ տոկոս չեր լինի, ինչպես այժմ: Գլխավորն այն ե, վոր մեր կաղմակերպություններն, իրենց մեջ հավաքելով յերիտասարդության հակառական մասնան, կազմակերպական լուրջ աշխատանք չեն ծավալել նրան ամրացնելու միության մեջ:

Համեմատականի մեռք առած միջոցները զգալի չպահե կրծառեցին կոմյերիտմիության հոսություննը:

Վերջին յերկու տարիների արդյունքները ցույց են տալիս, վոր մոտ սկսվել ե կոմյերիտմիության մեջ ընդունվողների Քեջ շատ նորմալ ամրացում:

Բայց և այնպես հարկավոր եւ խոստովանել, վոր կոմյերիտմիության մեջ նոր ընդունվողների ամրացման աշխատանքը մեզ մոտ դեռևս վաս ե դրված: Շատ հաճախ կոմյերիտմիության մեջ ընդունվածի մասին հաջորդ որը մոռանում ե, նրան թողնելով իր բախտին:

Վերը մեջրերված փաստերը բավական պերճախոս կերպով պլայայում են ամենալուրջ կաղմակերպական հարցերին անհող վերաբերմունք ցույց տալու հետևանքների մասին: Յեթե մենք չենք ցանկանում կրկնել այս տիպուր փորձը, յեթե մենք ուզում ենք կանդնել կոմունիտական դաստիարակության վիթխարի խնդիրների մակարդակի վրա, մենք պետք ե ձգենք՝ ամրացնենք մեր ամրող կաղմակերպական աշխատանքը, վերացնենք դոյություն ունեցող տնայնաղործությունը, ձեռք բերենք իրազապահություն, ձշուազահություն և մարտական դործնականություն: Արա համար կան բոլոր որյիշելիք սրայմանները:

Համադումարը լիովին հավանություն տվեց կոմյերիտմիության կենտրոնական կոմիտեյի հաշմետու զեկուցմանը: Ընկ-

Կոսարենիլի զեկուցման ուժն ու արժեքը այն ե, վոր նրա մեջ խո-
րապես ճշմարիտ կերպով և քաղաքական մեծ թափով են վորոշլած
յերիտասարդության կոմունիստական դաստիարակության խնդիր-
ները, այն, վոր նրա մեջ հստակ են ձեակերպված այն մեծ պա-
հանջները, վոր առաջադրվում են կոմյերիտմիության ամեն մի
դեկավար աշխատողի՝ փոփոխված պայմանների առնչությամբ:
կանդ կառնեմ վերջնին վրա: Կոմյերիտմիության դեկավար
աշխատողը պետք եւ հասկանա, վոր յերկրում դրությունն ար-
մատապես փոխվել ե: Այժմ արդեն չի կարելի աշխատել այն
մեթոդներով, վորոնք պիտանի եյին անցյալում, յերբ կոմյերիտ-
միությունը գլխավորապես զբաղվում եր տնտեսական շինարա-
րության հարցերով: Ուրիշ բան ե մորիլիդացիայի յանթարկել
կոմյերիտականներին ու յերիտասարդությանը կատարելու արդ-
ֆինուլանը և միանդամայն ուրիշ բան՝ կազմակերպել յերիտա-
սարդության ու յերեխանների կոմունիստական դաստիարակու-
թյունը, աշխատել դպրոցում այնպիսի մարդկանց մեջ, վորոնք
տիրապետում են դիտությանը, տեխնիկային, արվեստին:

Բնական ե, ընկերներ, վոր Համեկօնեմ առարատն այժմ ամ-
բողջովին յենթարկված պիտի լինի յերիտասարդության դաս-
տիարակման խնդիրներին: Սա՝ յերիտասարդությանը մոտիկ,
նրա պահանջների ու կարիքների վերաբերմամբ դրայում՝ դաս-
տիարակման առարատ ե: Ի՞արկե, մեր կոմյերիտական առարատը
լիովին չի համարլատասխանում այս պահանջներին: Հենց սրա-
նով ե բացատրվում, վոր հաշվետու-վերընտրական կամուանիայի
ժամանակ կոմյերիտական զեկավարության վորոշ մասը փոփոխ-
վեց: Իրենք կոմյերիտականներն այլելի բայ սկսեցին հասկանալ
հարածուն պահանջները կոմյերիտական զեկավարության հան-
դեպ: Նրանք զեկավար որդանների մեջ առաջ են քաշում առա-
ջավոր մարդիկ խորհրդային յերիտասարդության միջից, նիկո-
ված, կուլտուրական, գրադեմ, շքանշանակիր, ստախանովական
մարդկանց:

Այսպիսի մարդիկ զեկավարության անցան հաշվետու-վերընտ-
րական կամուանիայի հետևանքով: Բայց նոր ընտրվածների մեջ
շատ կան կազմակերպորեն անիործ մարդիկ, վորոնք առանց ու-
ժադիր և դրայում վերաբերմունքի արժանանալու՝ չեն կարող
դուխ բերել յերիտասարդության և յերեխանների դաստիարակ-
ման հակայտկան աշխատանքը: Ահա թե ինչու, ընկերներ, կոմ-

յերիտմիության մարդային և յերկրային կոմիտեները սլարտավոր են, ժամանակ չկորցնելով, կաղմակերպել նոր ակտիվի սիստեմատիկ ուսուցում, ճիշտ, բոլցնիկորեն դեկավարել նրանց։ Այս դեպքում հարկավոր ե ճիշել, վոր կոմյերիտական դեկավարությունից ամենից առաջ պահանջվում ե խմանալ դրությունը աեղերում, սիստեմատիկ ողնություն ցույց տալ չըջկոմներին ու սկզբնական կաղմակերպություններին, սովորեցնել ու ամրացնել կադրերը, հսկել նրանց անման վրա և համբերատար կերպով շտկել այս կամ այն աշխատողի, այս կամ այն կաղմակերպության թերությունները։

Հարկավոր ե վերացնել թեթևամիտ մոտեցումը գեղի կադրերի ընտրությունը, վորի հետևանքով դեկավարության մեջ են թափանցում աֆերիտաններ, թշնամիներ։ Խարկովի մարդում կուսամշական փաստաթղթերի ստուգման ժամանակ կուսակցությունից վտարվեցին Համլէկօնս 5 չըջկոմի քարտուղար, Կուրսկի մարդում կուսակցությունից վտարված են և չըջկոմի քարտուղար, Արևմտյան մարդում՝ 3 չըջկոմի քարտուղար, Բելոռուսիայում՝ 5 չըջկոմի քարտուղար և այլն։ Սրանք տաղնակալի փաստեր են։

Միության բացասական յերեւյթներից մեկը դեկավար կադրերի հսկունությունն ե։ Այդ հսկունությունը մասսայական ընույթ ընդունեց առանձնապես 1933 թ.։ Սա աշխատողների սխալ ընտրության հետևանք է։ Դեկավարները մարդկանց չեն ուսումնամիտում աշխատանքի մեջ, վարչարարություն են թույլ տալիս ակտիվի վերաբերմամբ։ Վերջին ժամանակներս ստեղծված են ավելի կարուն կաղրեր։ Համլէկօնս կենտկոմն անհատապես հաստատում եր չըջկոմների քարտուղարներին։ Բայց, չնայած սրան, հոգանությունը գեռմես զդալ ե տալիս իր մասին։

Բայց բանը միայն սրանում չե։ Առանձին աշխատողների ժամանակակից յե ասել, վոր նրանք այլելի շատ վարչարարներ են, քան դաստիարակողներ։ Նրանց աշխատանքում ամենուրեք ողնության փոխարեն դերակցում ե գոռոցը, նկատողությունը, թերությունները համբերատար կերպով շտկելու փոխարեն հեռացում աշխատանքից։ յուրաքանչյուր կոմյերիտականի հետ աշխատելու փոխարեն—դեկավարություն առհասարակ և այլն։ Սրանումն ե կոմյերիտական ավարատի, կոմյերիտական դեկավարության աշխատանքի, հիմնական թերություններից մեկը։

Ահա Համլէկօնս կենտկոմի կենտրոնական հանձնաժողովի

ավյաները 1935 թվին կոմյերիտմիության մեջ ընդունելու և փսարելու վերաբերյալ՝ տեղական կազմակերպությունների վտարած 782 հոգուց կենտրոնական հանձնաժողովը քննելով վերականգնեց 324 հոգու, նրանց վտարումը համարելով սխալ. այս դեպքում կենտրոնական հանձնաժողովը հարկավոր գտավ տույժնշանակել միայն 263 հոգու, իսկ մնացածները, կնշանակի, վերականգնված են նույնիսկ առանց վորուե տույժ նշանակելու։ Բնուրուշ ե, վոր այս վտարվածների թվում կային 59 կոմյերիտկազմակերպիչ և շրջկոմի աշխատող։ Կենտրոնական հանձնաժողովը նրանցից 50-ին վերականգնել ե կոմյերիտմիության անդամ։

Միութենական կարգապահության այսպես կոչված խախտման համար 138 վտարվածներից հանձնաժողովը վերականգնել ե 111 հոգու։

Կան կոմյերիտմիության ի բացակայու վտարման բազմաթիվ փառառեր։

Այս բոլորը վկայում ե կոմյերիտմիության անդամների վերաբերմամբ կոմյերիտմիության կոմիտեների կոպիտ վարչարարության առկայության մասին, կազմակերպության անդամների դաստիարակման համբերատար, համառ աշխատանքը դուռցով փոխարինելու մասին։ Հաճախ կոմյերիտմիության ղեկավար աշխատողը զնում ե տեղական կազմակերպություն՝ առաջուց նպատակ ունենալով թերություններ գտնել այնանեղ, ապա իր կոմիտեյին զեկուցել այս թերությունների մասին, հետո, ինչպես ասում են՝ «Ճիդ տար», «Հարվածելք» նրան, ով թույլ ե տվել այս թերությունները։ Յեվ առողջության փոխարեն, հրահանդման փոխարեն։

Ընկերներ, մենք պետք ե վորքան կարելի յե արագ և շուտ մերջ տանք այս բանին։ Կոմյերիտմիության յուրաքանչյուր ղեկավար աշխատող պետք ե ըմբռնի, վոր մարդկոմի, յերկրկոմի, քառկոմի, շրջկոմի առաջատարը դոյցություն ունի կոմյերիտմիության մկրտնական կազմակերպությունների ղեկավարման համար, յերիտասարդության կոմունիստական դատավարակության համար։

Ամենամողոք պատերազմ պետք ե հայտարարի վարչարարությանը։ Առանց այս ամենալուրջ արատը հաղթահարելու չե կարելի հանել այն բանին, վոր համոզման մեթոդը հիմնականը դառնա կոմյերիտմիության ղեկավար որդանների աշխատանքում։ Գործի մանրամասներն իրանալը, իսկական կազը յերիտասարդութ-

թյան հետ, ամենուրիյա հոգատարությունը նրա մասին, ներմիռութեական դեմոկրատիայի ու ինքնաքննադատության լայն ծավալումը—ահա թե ինչը պետք ե բնորոշի կոմյերիտական կոմիտեների աշխատանքը և յուրաքանչյուր ակտիվիստի վարքագիծը:

Յերիտասարդության դաստիարակումն, իւարկե, շատ դժվարին ե բարդ դրուժ ե: Նա կոմյերիտական ակտիվից պահանջում է քաղաքական բարձր զրադիտություն, մեծ կուլտուրա: Դժվար ե, տակնք, դեկավարել կոմյերիտականների ու յերիտասարդության քաղաքական կրթությունը, յերբ ակտիվիստն ինքը դեռ չի համել քաղաքական գիտելիքների ու կուլտուրայի վորոշակի մակարդակի: Դժվար ե յերիտասարդությանը ճաշակ ներարկել դեպի գեղարվեստական գրականության ընթերցումը, յեթե ինքդ շատ մակերեսային ծանոթություն ունես այդ գրականության հետ: Կամ թե չե, դիցուք, կարելի՞ յե ինչպես հարկն ե դաստիարակել և սովորեցնել բուհական և գալրոցական յերիտասարդությանը, յեթե ինքդ վոչ մի գաղափար չունես բուհերի ու դպրոցների խնդիրների, սովորող յերիտասարդության պահանջների մասին:

Բնական ե, վոր այժմ այլեւս միայն կազմակերպական ընտելությունները և նույնիսկ կատը մասսանների հետ բավական չեւ-կոմյերիտական ակտիվից պահանջվում ե ավելի լայն կուլտուրական և քաղաքական մտահորիզոն: Յեթե առաջ ակտիվիյի կիսադրագիտությունը, անկուլտուրականությունն արդենակում ելին մեր աշխատանքը, առաջ այժմ, յերբ կոմյերիտամիության առջև հիմնական խնդիր և դրված՝ դաստիարակել յերիտասարդությանը, այս հանդամանքը դառնում ե բացարձակապես անհանդուրժելի: Մանավանդ վոր այժմ կոմյերիտամիությունը կոչված ե դաստիարակելու նաև 23 տարեկանից բարձր յերիտասարդությանը: Հեկավարից, անշուշտ, կապահանջվեն ավելի շատ գիտելիքներ, կազմակերպական փորձ, ավելի լայն կասոլ յերիտասարդության բոլոր խավերի հետ:

Կոմյերիտական ակտիվիստը բարձր և պատվավոր կոչում ե: Կոմյերիտական ակտիվիստն որինակ պետք ե հանդիսանա յերիտասարդության համար: Միության կազմակերպական աշխատանքի թերությունների շտետում առաջին հերթին կախված ե ակտիվից: Ակտիվիստը պետք ե լինի կոմյերիտականի կանոնադրական պարտականությունների կատարման որինակ, իր վրա աշխատելու

սրինակ ցույց տա , կարգապահության , կաղմակերպվածության որինակ ցույց տա , իր աշխատանքում անձնութաշության որդինակ ցույց տա :

Վ. ԳԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Կոմյերիտմիության կաղմակերպական կառուցվածքի դեկապար սկզբունքը դեմոկրատական կենտրոնացումն է : Սա նոր կանոնադրության կենտրոնական հարցերից մեկն է :

Դեմոկրատական կենտրոնացման առաջին կարևորագույն տարրը Փկոմյերիտմիության բոլոր դեկապար որդանների ընտրականությունն եւ վերսկից մինչև ներքեւ : Սա հնարավորությունն եւ տալիս կոմյերիտական մասսաներին կաղմակերպության դեկապարությունը վատահել կոմյերիտմիության լավագույն մարդկանց իրենց ընտրությամբ : Սա լիակատար իրավունք եւ տալիս կոմյերիտմիության ամեն մի կաղմակերպության , ամեն մի անդամի պահանջելու փոփոխել անպետք դեկապարությունը : Դեմոկրատական կենտրոնացումը միության դեկապար ակտիվին դաստիարակում եւ կաղմակերպության անդամներին բոլշևիկյան վերաբերմունք ցույց տալու վողով :

Դեմոկրատական կենտրոնացման յերկրորդ կարևորագույն տարրը «կոմյերիտական որդանների սկարեբական հաշվետվությունն եւ իրենց կոմյերիտական կաղմակերպությունների հանդեպ» : Այս հանդամանքը մասսաների վերահսկողության , քննադատության տակ եղնում բոլոր դեկապար որդանների աշխատանքը , հնարավորությունն եւ տալիս կաղմակերպության անդամներին շահելու իրենց դեկապարության թերությունները : Կաղմակերպության անդամներն իրավունք ունեն ուղած ժամանակ հաշվետվություն պահանջելու իրենց դեկապարությունից և դնարատելու այն : Դեկապար որդանների անդամներին այս հանդամանքը նույնպես դաստիարակում եւ իրենց ընտրուղ կոմյերիտականների հանդեպ հաշվետու լինելու բոլշևիկյան լմբունման վողով :

Դեմոկրատական կենտրոնացման յերրորդ կարևորագույն տարրը «կոմյերիտական խստիվ կարդաղահությունն եւ փոքրամասնության յենթարկվելը մեծամասնության» : Սա կարևորագույն պայմանն եւ թափթիվածության դեմ պայքարելու համար : Սա սովորեցնում եւ կաղմակերպվածություն , կոմյերիտականին

գաստիարակում և կոլեկտիվի կարծիքը հարգելու և կաղմակերպության կամքին յենթարկվելու վոզով : Սա ողնում և պայքարելու մանրուրժուական շինությունների դեմ :

Դեմոկրատական կենտրոնացման չորրորդ կարևորագույն տարրը էկոմյերիտական բարձրագույն որդանների վորոշումների անվերատահօրեն պարտադիր լինելն և ստորին որդանների և կոմյերիտմիության բոլոր անդամների համար : Սա ապահովում և ժիանական կենտրոնացված զեկավարությունը միության մեջ վերևելու մինչև ներքեւ : Միությունն աշխատում և պայքարում երրև միասնական միաձույլ կաղմակերպություն, և վոչ թե իրրև ցրված խմբակներ ու խմբեր :

Այս բոլոր տարրերը կաղմում են կոմյերիտմիության դեմոկրատական կենտրոնացման սկզբունքն ունեցող կաղմակերպական կառուցվածքի հիմքը : Դեմոկրատական կենտրոնացման դաշտավարն անհրաժեշտ է հատկապես համառությամբ և մանրամասն պարզաբանել կոմյերիտականներին : Նախահամագումարյան հաշվետվությունական կամպանիայի որինակով մենք ակներեւ կերպով տեսանք դեմոկրատական կենտրոնացման ամբողջ ուժն ունշանակությունը :

Կոմյերիտական աշխատանքի պրակտիկայում ներմիութենական դեմոկրատիայի խախտման դեռ շատ դեպքեր կան :

Ո՞ւր են տանում միութենական դեմոկրատիայի խախտումները : Նրանք տանում են դեպի կոմյերիտականների նախաձեռնության, ինքնազործունեյության նվազումը, նրանք կասեցնում են ինքնաքննադատության ծավալումը, այլասերում են ակտիվը, թույլ են տալիս նրան բյուրոկրատանալու, մասսաներից կտըրվելու :

Հարկավոր ե լավ յուրացնել ներմիութենական դեմոկրատիայի հատուկ նշանակությունը կոմյերիտականների դաստիարակության համար : Կոմյերիտմիությունը պետք ե դառնա ել ավելի դեմոկրատական կաղմակերպություն : Կոմյերիտականի անբաժանելի իրավունքն ե աղատորեն քննարկել կաղմակերպության կյանքի բոլոր հարցերը ներմիութենական դեմոկրատիայի և բոլցեկոյան ինքնաքննադատության հիման վրա՝ անկախ անձնավորությունից :

Միանդամայն հասկանուիլ յե, վոր հարցերի այս ազատ քննադարկման նպատակը պետք ե լինի կաղմակերպության անդամնե-

բին ե'լ ավելի շատ համախմբել կուտակցության և խորհրդային էշխանության չուրջը։ Ազատ քննարկումը շարունակվում է միայն մինչև վորոշումների ընդունումը։ Սրանից հետո ուժի մեջ ե մտնում յերկաթյա կարգապահությունը, վոր պարտավորեցնում և անվերապահորեն կատարել ընդունված վորոշումը։ Կանոնադրությունն իրավունք ե տալիս տույժի միջոցներ կիրառել վոչ միայն ՀամԼԿՑԵՄ անդամների, այլև ղեկավար որդանների ընտրովի անդամների նկատմամբ՝ ներառյալ կոմյերիտմիության կենտրոնական կոմիտեյի անդամները։

VI. ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վերջում յես ուղում եմ համագումարի ուշագրությունը Հրավիրել կոմյերիտմիության սկզբնական կազմակերպությունների աշխատանքի հարցերի վրա։ Սկզբնական կազմակերպությունը Լենինյան կոմյերիտմիության հիմքն ե։ Սկզբնական կազմակերպությունն ե առաջին հերթին յերիտասարդության լայն մասսաներին կապում Լենինյան կոմյերիտմիության հետ։ Լենինյան կոմյերիտմիության սկզբնական կազմակերպությունն աշխատանք ե կատարում յերիտասարդության մեջ։ Տվյալ գործարանի, Փարբիկայի, կոլտնտեսության, դպրոցի յերիտասարդությունը սկզբնական կազմակերպության աշխատանքով ե հաճախ դատում ամբողջ Լենինյան կոմյերիտմիության աշխատանքի մասին։ Ահա թե ինչու մեղ համար շատ կարևոր ե, վոր ամեն մի սկզբնական կազմակերպություն լավ աշխատի։

Տվյալ մոմենտին սկզբնական՝ կազմակերպությունների, ինչպես և ամբողջ Լենինյան կոմյերիտմիության առջև նոր խնդիրներ են ծառացել։ Ըսկեր Ստալինի ցուցումների համապատասխան առաջին պլանի վրա յե մղվում գաղափարական քաղաքական գաղաքական դաստիարակչական աշխատանքը։

Այժմ մենք ունենք 201,704 սկզբնական կազմակերպություն, մինչդեռ 19 համագումարի շրջանում դրանց թիվն ընդամենը 84,394 եր։ Կոմյերիտմիության սկզբնական կազմակերպությունները վերջերս սկսել են բարվականաչափ լավ աշխատել։ Սրանում քիչ գեր չեն խաղացել նաև ՀամԼԿՑԵՄ կենտրոմի հայտնի վորոշումները կոմյերիտմիության Փարբիկարանային կոմի-

ների, կոմյերիտական ժողովների, քաղաքական կրթության, կին յերիտասարդության մեջ աշխատելու վերաբերյալ:

Բայց նրանք դեռևս այնպես չեն աշխատում, ինչպես պետք: Իսկապես ասած՝ կոմյերիտամիության սկզբնական կազմակերպությունները պետք ե ապրեն շատ հարուստ, շատ բովանդակալից, բազմակողմանի, դունավեղ կյանք: Զե՞ վոր մեր յերիտասարդությունը ապրում ե հետաքրքրական, բազմակողմանի կյանքով:

Դժբախտաբար, շատ սկզբնական կազմակերպությունների կյանքը դժուույն է, չոր, տաղտկալի: Ի՞նչը կարող ե լինել ավելի դրավիչ ու հետաքրքրական, քան մեր խորհրդային յերիտասարդության հետ աշխատելը: Բայց մի քանի վայդեկավարները յերեմն մեղաղքում են կոմյերիտականներին. իրեն թե նրանք վասեն, անկարգապահ են, համարյա թե պասսիվ են: Այս բոլորն, իհարկե, դատարկ բան և: Սա զրաբարտություն ե կոմյերիտականների հասցեյին: Կոմյերիտականների միջն կան թե՛ անկարգապահ, թե՛ վոչ առանձնապես ակտիվ յերիտասարդներ, բայց սրանք յեղակի յեն և սրանց հետ լավ աշխատելու դեմքում սրանք կկերպարանափոխվեն: Պատճառութիւն ե. մի շարք կոմիտների վասարականներ, սխալ մոտեցումը դեպի յերիտասարդությունը:

Խրախուսեցնեք առաջադիմներին, բայց չափից զուրս մի՛ դովեք լավ աշակերտներին, մի՛ փչացրեք յերեխաններին, հիշեցնեք, վոր լավագույն խրախուսամբ զովասահագիրն եւ, վոր արվում և փոխադրման ու ավարտման քննություններին։

Մինչև այժմ մենք խսուում ենք իրենց իսկ աշակերտների ինքնազգործունեցության ու նախաձեռնության մասին զիսելիքների համար պայջարելիս։ Այժմ թույլ տվեք մի անդամ եւ խոսել ուսուցիչների մասին։

Եերբ Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկին դրում էր իր նամակը Պենզայի աշակերտներին, քննադատելով նրանց անդրադիտության համար, նա իր նամակն իրավացիորեն վերջացրել և այսպես։

«Դուք վաստ եք սովորում, յերեխաններ։ Եերեւ ձեզ վասել սովորեցնում են։ Ամոթ եւ ձեր դուրսցի ուսուերեն լեղիվ դասաստուններին։ Ինչպես են նրանք թույլ տալիս, վոր հ-ըդ դասարանի աշակերտներն այսպես անդրադատ ուրեն։»

Այս խոռվերը բացառիկ կերպով իրավացի յեն։ Ուսուցիչն և պատասխանատու իր աշակերտների առաջարկիմության համար,

և վոչ թե վորմե մեկ ուրիշը։ Ուսուցիչն և պատասխանատու իր դասարանում մնացող աշակերտներ լինելու համար, և վոչ թե վորմե մեկ ուրիշը։

Կարծես թե սա այրբենական ճշմարտություն եւ Բայց մինչեւ ամենավերջին ժամանակներս բազմաթիվ դպրոցներում հաստատվել եւ ավելի քան տարորինակ մի կարգ, յերբ վոչ թե ուսուցիչը, այլ դերազանցիկ աշակերտն եր իրադրություն այսպես կոչված ռոպեուքսիրը, պատասխանատու յեր հետ մնացող աշակերտների համար։ Վորոշ ուսուցիչներ ջանում են իրենց դասարանում ունենալ 10—15 դերազանցիկ, իսկ հետ մնացողներին հաճախ մոռանում են։

Բայց հենց հետ մնացողներին ձգելն եւ այժմ գլխավորը՝ Բոլորը չե, վոր վատ են սովորում։ Կան լավ առաջադեմ աշակերտներ, և նրանք ավելի ու ավելի յեն շատանում։ Բավական եւ հետ մնացողներին ձգել, հասցնել առաջադեմների մակարդակին, և առաջադիմության գործը հաջողությամբ առաջ կդնա։ Ահա թե ինչու առաջին պլանի վրա պետք եւ մղել ուսուցչի պատասխանատությունը հետ մնացողներին ողնելու համար։

Հետ մնացողներին կարելի յեւ ժամանակավորապես աղասիել ամեն մի բեռնավորումից, վերջին ամիսներին բեռնավորումներից աղասիել ուսման մեջ հետ մնացող 10-րդ և 7-րդ դասարանն ավարտողներին հաջողություն ձեռք բերելու համար։

Բայց սա դեռևս բնակի ամրողը չե, յերբ մենք խոսում ենք ուսուցչի դերի մասին։ Ժամանակն եւ լրջորեն զրադվելու իրենց իսկ ուսուցիչների ուսուցումով։

Համեկ(թ)կ կենտրոնական կոմիտեյի և ԽՍՀՄ-ի ժողկոմիսոր-էի վորոշումը ուսուցիչների աշխատավարձը բարձրացնելու և նրանց անհատական կոչումների վերաբերյալ սրա համար ստեղծել եւ բոլոր պայմանները։

Ի՞նչ ենք պահանջում մենք կուստողկոմատից և կողյերիստական կազմակերպություններից։ Ակսենք դասատուների հեռակակրթությունից։ Սա դեռևս կամավոր եւ ընդդրկում եւ ուսուցման յանթակա ուսուցիչների ընդամենը միայն 60 %-ը, իսկ մենք պահանջում ենք, վոր այսպիսի ուսուցիչների համար հեռակա կրթությունը պարտադիր լինի։ Բայց ուսուցչին հեռակա դասներ ուղարկելու քիչ ե։ Տերիտարիալ հեռակայող ուսուցչին ամրացրեք փորձված մանկավարժի։ Հաստատեցեք պարտադիր անձնական և վոչ թե հեռակա առաջադիմության ստուգում։ Հաս-

ստուեցեք ուսուցիչների պարտադիր և վոչ թե կամավոր ստուգումներ — և նրանց վորակի բարձրացման դործը առաջ կզնա : Այստեղ միտինգով չի կարելի ոճիքն ազատել : Այս առաջին հերթին պետք է վերաբերի Սվերդլովի, Խվանովի և Արևմտյան մարզի բնի, Գորկու և Կրասնյարսկի շերկերներին, վորակով հեռակա ուսուցումը վաստ վիճակի մեջ և :

Կոսարեվ : Այդ վերաբերում և նաև ՀամեկօԵՄ կենտրոնին :

Մուսկին : Ճիշտ և : Ճարկավոր և ուսուցիչներին հավաքել դասընթացների վոչ թե բոլոր Հարցերի վերաբերյալ, ինչպես արվում է, այլ առանձին առարկաների, և հրահանդավորել նրանց :

Այսպիսի ուսուցիչներին առաջին հերթին ուղարկեցնեք յերեկոյան մանկական համակարգությունները ու մանկավարժական բուհերը առանց դպրոցի աշխատանքից կտրելու — ոտ նրանց դրադիտությունն ու ժանկավարժական կուլտուրան բարձրացնելու ամենասուել ուղին է : Իսկ ինքնիան կոմյերամբությունը ողետք և իր լավագույն տղաներին ու աղջկներին ուղարկի մանկական համիլումիկումների ու մանկավարժական բուհերի առաջիկա ընդունելուրյանը, ավելի լավ դեկավարի կոմիերիտմուրյան աշխատանիքը մանկավարժական ուսումնական հիմնարկներում :

Ահա թե ինչ ողիսի անենք մենք այժմ :

Խոսքը վերաբերում և յերիտասարդ ուսուցիչների մի նշանակելի մասին : Իսկ նա, ով ուզում և աշխատել յերիտասարդ ուսուցիչների հետ, նա ամենից առաջ պետք և ոգնի նրանց լրիվ մանկավարժական կրթուրյուն ստանալու :

Մենք պետք և այսպիսի յերիտասարդ ուսուցիչներին քննաբափենք ամեն տեսակ դրասենեկային աշխատանիքից, ամեն տեսակ ավելորդ բեռից :

Վերցնենք կոմյերիտաւուհի Ռոնդինա Յելենային : Նա Մոսկվայի մարզի Ռամենսկի շրջանի Բիկովո գյուղի ԿիՄ-ի անվան գլուխոցում պատմություն և ավանդում, ունենալով հինգ թեսնավորում : Մեղկոմի նախադաշտ, գյուղիտորհրդի փոխնախադաշտ, պրոլադանդիստ, պատի լրագրի հրատարակության պատասխանատու, և հենց նրան ել սովորաբար հանձնարարվում և զեկուցումներ կարդալ կոմյերիտական ժողովներում : Կարող և արդյոք այսպիսի ուսուցիչն ինքը սովորել :

Կոսարեվ : Այդ դեռ ի՞նչ և վոր, յերբ իրբև կանոն ունեն 25-ական բեռնավորում : Իսկ դա ինչ և — դատարկ բան և :

Մուսկին: Ընկերներ, կոմյերիտմիությունը պետք է ավելի շատ հոգ տանի ուսուցիչների նյութական-կուլտուրական կարիքների մասին:

Վերցնենք գյուղական յերիտասարդ ուսուցչին — նա քաղաքային կենսարոնից կտրված է, հաճախ չի գալիս շրջան, գրքերը հազվագեղ են հասնում իրեն: Յեթե գյուղում շրջիկ կինո կա, այն ժամանակ նա կարող է նկարներ նայել: Լինում են ուսուցիչներին աշխատավարձը ժամանակին չտալու դեմքեր: Յեկ ել ո՞վ պետք է հոգ տանի, յեթե վոչ մենք, վորակեսդի աշխատավարձը ժամանակին տրվի ուսուցիչներին, ողնի նրանց լավ դրբեր ձեռիլու, ողնի ըրջանային կենսարոն գնալու, նոր կինոնկարներ տեսնելու, իսկ յեթե թատրոն կա՝ նոր պիես: Այս բոլոր հարցերը մենք պետք ե ամենամոտ ժամանակներս լուծենք գյուղում թե՛ առողային մարդերում և թե՛ հանրապետություններում, վորոնց մենք թույլ ենք ողնում և վորտեղ այս հարցը դրված ե առանձին սրությամբ:

Կոմյերիտմիության՝ դպրոցի աշխատանքի վերաբերյալ վորոշման նախագծում ասված է, վոր առանձին ուշադրություն պետք ե հատկացնել մայրենի լեզվի ուսումնասիրությանը, գրադեմ դրելու և խոսելու համար պայքարելուն:

Հարկավոր է, վոր դպրոցի ցածր դասարաններում, սկսած առաջին դասարանից, մանավարժները խստորեն հետեւն ճիշտ պրելուն և արտասահմանելուն:

Հարկավոր է, վոր յերեխանները կարդան կլասիկներին, խոռոքի այնպիսի վարպետների, ինչպես են Պուշկինը, Տուրգենևը, անդիր սովորեն բանաստեղծություններ, դեղարվեստական արձակեց հատվածներ, սովորեն խոսել պարզ ու գեղեցիկ:

Ժամանակին ե վերակառուցելու աշակերտների դրավոր աշխատանքների սիստեմը: Մինչև այժմ ուսուցչի ուղղումներով դրավոր աշխատանքները բազմաթիվ դպրոցներում՝ աշակերտներին տրվում են միայն մի որ նայելու համար, իսկ հետո վերադրձում են ուսուցչին: Մեթոդիստներն ասում են, թե ոա անհրաժեշտ է, վորպեսդի ուսուցիչը կարողանա ուսումնասիրել աշակերտի սխալները: Բայց այդ դեմքում աչքաթող ե արվում ամենազլիսավորը — վոր աշակերտները սովորեն իրենց սխալների հիման վրա: Ժամանակը չե՞ արդյոք փոխելու այս ավելի քան տարորինակ կարգը:

Հարկավոր է այնպես անել, վոր լեզվի դասատումներն ամեն

դաստիանում չփոխվեն, այլ միևնույն դաստիան, առանց դիմա-
դրկության, վարի իր դաստիանը տարեցտարի և պատախա-
նատու լինի նրա համար :

Վերջապես, վոչ միայն մայրենի լեզվի ուսուցիչը, այլև թե՛
դպրոցի բաղը ուսուցիչները, թե՛ պիոներական ջոկատների ղե-
կավարները պետք և խփեն մի կետի՝ հետեւն դրագետ դրելուն
և ճիշտ արտասանելուն։ Այսպես մայրենի լեզվի դաստիան
աշխատանքի և ֆեկտը դրոյի կհավասարվի։

Անհրաժեշտ է ճիշտ կազմակերպել աշակերտների ինքնու-
րույն աշխատանքը։ Դաստիանում կատարվող դասը հիմնական
ձևն եւ բայց լավ դասի ոգուածը դրոյի կարող և հավասարվել,
յեթի այն չսամբացվի ինքնուրույն աշխատանքով։

Իսկ ի՞նչ դոյտիյուն ունի մեզ մտու:

Շատ ուսուցիչներ միմյանց հետ չեն համաձայնեցնում տնա-
յին ստացաղրությունները, և աշակերտները յերեմն որական
Ե-ց դաս են ստանում։

Ցըվելով, խելացի կերպով մի բան չարած՝ աշակերտները
ձեռք են զարկում մյուսին։ Ահա այն բանի արմատը, վորտեղից
անում և վորոշ աշակերտների մակերևոսայնությունը։

Ել այսուղ յե՛րը դրականություն կարդաս ինչպես հարկն եւ :
Միայն թե կարողանառ հապճեալ անդիր սերտել այն, ինչ առված
և դասաղրօթի տրված բաժնում։ Յեւլ մի դարմանաք, յեթե առա-
ջարջրություններով ծանրաբեռնված աշակերտը դրականությունից
քննվելիս ձեզ պատասխանի անդիր սովորած հետեւյալ խորիմաստ
Փրազով։ «Ժարովի յերկերը դրված են չափածո ի տարբերու-
թյուն Գորկու, Նելիկովի պատմվածքներից և ուրիշ յերկերից,
վոր գրված են պրոզայով»։

Այս իմաստուն հայտնությունը մի բառացի ցիտատ եւ Գո-
լուքովի և Միրսկու դրականության դասաղրքերից, Հրատարակ-
ված 1935թ.։

Հնարավորություն տվեք աշակերտներին ավելի շատ և վեր-
լուծությամբ ինքնուրույն կերպով կարդալու, ավելի խորն ու-
սումնասիրելու իրենց առարկան։ Մի՛ թույլ տվեք նման մակերե-
սայնություն։ Նրան սովորեցրեք նիշտ զուգակցելու հանգիստը
ուսման հետ, վորովհետեւ առանց հանդստի ուսումը լավ առաջ-
դնալ չի կարող։

Հասարակական պայքար մղեք արտաղրելու, հուշելու դեմ,

բացատրեցեք աշակերտներին, վոր յեթե այդ նրանց փրկի մի որ, առաջ կվառասի շատ ու շատ տարիներ :

Այնպես արեք, վոր Փիզիկայի խմբակի աշխատանքը գրավիչ ձևով խորացնի դպրոցում ստացած Փիզիկական գիտելիքները, վոր մաթեմատիկոսների խմբակի աշխատանքը գրավիչ ձևով խորացնի մաթեմատիկական գիտելիքները և այլն և այլն :

Վերջին դիտողությունն այս բնագավառում դպրոցական գրադարանների մասին ե : Ժողովրդական լուսավորության որդանների մի մեծ մեղքն և հանդիսանում այն, վոր այսպիսի գրադարանները քիչ են, իսկ դյուլում դրանք համարյա թե չկան : Յեթե փողը ծախսվի խելացի կերպով, կարելի կլինի այդ գրադարաններն ստեղծել, և դրանք մենք պարտավոր ենք ստեղծել :

Մյուս դժբախտությունն այս գրադարանների սխալ կազմակերպումն ե : Վերցնենք դպրոցական ինչ դրադարան կուղեք : Այնտեղ դուք կդատնեք հազարավոր անուն գրքեր : Իսկ պետքական գըրքերն այստեղ 1—2-ական որինակ են : Նրանք միշտ ձեռքի յեն, և աշակերտներն ստիպված են կարդալու վոչ թե բուն գիրքը, այլ դասագրքում համառոտ գնահատական նրա մասին, այն արդեն աօվածի նման, վորտեղ պարզաբանվում ե, վոր «Ժարովի յերկերը գրված են չափածո ի տարրերություն Գորկու, Նեվերովի պատմվածքներից և ուրիշ յերկերից, վորոնք գրված են պրողայով» :

Զի՞ կարելի արդյոք այնպես անել, վոր ամենից արժեքավոր գրքերից լինեն այնքան, վոր բավականացնի աշակերտների մի ամբողջ խմբի, յեթե վոչ ամբողջ դասարանի միաժամանակ կարգալու համար : Մենք կարծում ենք, վոր այս վոչ միայն հնարավոր ե, այլև անհրաժեշտ ե : Այլ կերպ արտադպրոցական ընթերցումը չես կազմակերպի ինչպես հարկն ե :

IV. ՆՈՐ ՁԵՎՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԴԱՍՏԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԲԱՐՁՐ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԵջ

Անցնում եմ բարձր դասարանների աշակերտների հետ աշխատելու հարցերին :

Խորհրդային դպրոցի խոչորակույն հաջողություններից մեկը տասնամյա ուսուցմանն անցնելն ե : 7-րդ դասարանի վրա

աճեց 8-րդը, 8-րդի վրա՝ 9-րդը, 9-րդի վրա՝ 10-րդը, և, վեր-
ջապես, անցած տարի յերկիրը տոնեց խորհրդային առանձին յակ-
ների առաջին ավարտումը:

Այս հանդամանքը նոր, չափազանց նազառառալոր հոդ ստեղ-
ծեց ՀամելկօթեՄ աշխատանքի համար դպրոցում: Սակայն բար-
մաթիվ ընկերներ չնկատնեցին այս նորը խորհրդային դպրոցում
կամ պատշաճ նշանակություն չտվին նրան:

Հայտնի յեւ, վոր մեզանում բոլոր աշակերտներին սովորաբար
անվանում են յերեխաներ: Առհասարակ ասուն՝ այս ճիշտ եւ
Բայց համաձայնեցիք, վոր յերեխա ել կա, յերեխա ել:

Դպրոցում կան առաջին գասարանի աշակերտներ: Նրանք
ընդամենը միայն 8 տարեկան են, և նրանք ուրախությամբ պատ-
րասու են քունին ու կատու խաղալու կամ ցատկապարան թըռո-
չելու: Նրանց անվանում են յերեխաներ: Բայց այս նույն դըռ-
քոցում՝ տասերորդ դասարաններում սովորում են 18 տարեկան
պատանիներ և աղջիկներ: Այսպիսի պատանին արդեն թալ ձայն
ունի, նրա բեղերը գալիս են, նա այլևս չի նւզում խաղալ զմուկն
ու կատու կամ ցատկապարան թուչել:

Բայց վորքան ել այս տարօրինակ եւ, այսպիսի տանութ տա-
րեկան, արդեն ածելի գործածող պատանիներին նույնպես յերե-
խաներ են համարում և փորձում են նրանց հետ աշխատել, իրեւ
յերեխաների:

Մի՞րե պարզ չե, վոր յերեւ հոգ չտանինք բարձր դասարան-
ներում սովորող յերիտասարդության հետ քաղաքական-կուլտու-
րական աշխատանք կատարելու մասին, նա կմնա յերկու արոռի
միջև: յերեխաների ու մեծահասակների միջև:

Պիոներներն ունեն ջոկատի հավաք, վորտեղ նրանք դանա-
զան դրույցներ են լսում: Բայց քաղաքական դաստիարակության
ի՞նչ ձևեր ենք ստեղծել մենք դպրոցական պատանեկության հա-
մար: Պիոներները դասից հետո դնում են պիոներական ակումբ
ու պարատ: Իսկ բարձր դասարանների աշակերտներին մանկական
ակումբում արդեն ձանձրալի յեւ, իսկ մեծերի ակումբ նրանց դեռևս
չեն թողնում:

Մի՞թե պարզ չե, վոր դրազետ ու կուլտուրական այս յերե-
խասարդությունն ունի իր բարձր պահանջները. և մենք պար-
տավոր ենք դրանք բավարարելու ինչպես հարկն եւ:

Իսկ մինչդեռ հենց այս յերիտասարդությունն եւ կազմում,
յեթե կարելի յեւ այսպես արտահայտվել՝ խորհրդային դպրոցի

ծաղկելը, հանդիսանում և դպրոցի մարկան, վոր ցուցադրում և նրա աշխատանքի կամ հաջողությունները, կամ թուլությունը:

Համեմատավոր և առանձին ուժգնությամբ աշխատել յերիտասարդության այս մասի հետ:

Մենք պետք են վնասականապես վերակառուցենք նրա հետ կատարվող քաղաքական և կուլտուրական աշխատանքի ձևերն ու մերոդները նրա անան պահանջների համապատասխան:

Իսկ ի՞նչ և նշանակում այս գործնականում: Բարձր՝ 9-րդ և 10-րդ գասարանների աշակերտների քաղաքական կրթության կարևորագույն խնդիրը պիտի լինի առհասարակ պատմության, առանձնապես ԽՍՀՄ-ի պատմության և Համամիութենական կոմունիտատական (բոլշևիկների) կուռակցության պատմության հիմնական մօմենտների ուսումնասիրությունը (ինչպես ուսման ժամանակամիջոցները, այնպես ել խմբակներում): Նրանք խմբակներում պետք և ուսումնասիրեն Մարքսի-Ենդելսի-Լենինի-Խտալինի հիմնական գաղափարները: Աշակերտներին ծանոթացրեք ԽՍՀՄ-ի և արտասահմանի քաղաքական կյանքի կարևորագույն իրադարձությունների հետ, հասկանալի կերպով պատասխաննեցեք տարակուսելի հարցերին:

Հետեւեցնք, վորպեսզի այս աշակերտները լրագրեր և ժուռանալներ կարդան: Մեզ հայանի յե, վոր նրանց մեջ կան այնպիսիները, վորոնք նույնիսկ լրագրեր չեն կարդում: Գումարեցնք կոմյերիտական աշակերտների շրջանային ժողովներ և նրանց աեղեկացրեք յմրկը և արտասահմանի քաղաքական կյանքին:

Նոր ձևով են ծառանում մովորող յերիտասարդության մեջ կուլտուրական աշխատանքը կաղմակերպելու խնդիրները:

Քիչ գումակիներ չկան, վորոնք ճարպիկորեն կարողանում են խոսել կուլտուրայի մասին: Բայց ի՞նչ և կուլտուրան նրանց պատկերացումով:

Մարդկային կուլտուրայի ամենաբարձր նվաճումը, վորի մասին նրանք խոսում են սրտի նվազումով՝ պատեֆոնն և «ուտյունվյան» պլաստինկաների հաղաքածուով: Մենք թույլ չենք տա նրանց իրենց աղքատամտությունը ձևացնելու իրեկ մեր խորհրդակային յերիտասարդության կուլտուրական պահանջներ: Մենք մարդկության համաշխարհային կուլտուրայի ժառանգործներն ենք:

Խորիրդային սովորող յերիտասարդությանը հարկավոր են վոչ քե խղմուկ փշրանքներ, այլ կուլտուրայի այն բոլոր գան-

մերը, վոր կուտակել և մարդկությունը, վոր բեղմնավորվել ու մաքրվել են պրոլետարական հեղափոխության տասնուր-տարի-ների կողմից:

Հարիկավոր և այնպես անել, վոր սովորող յերիտառարդությունը կարդա, քննի, վիճի, վերլուծի համաշխարհային և հայրենական գեղարվեստական գրականության լավագույն յերկերը, ճանաչի գրանք, կարողման զնահատել խոռքի մեծագույն արվեստագործների ստեղծած մեծ պատկերները:

Հարկավոր և այնպես անել, վոր նա դասախոսություններ լսի գիտության, տեխնիկայի, նկարչության նորագույն հաջողությունների մասին, ընդարձակի իր մտահորիզոնը, դաստիարակի կենդանի ու հետախույզ միտք:

Հարկավոր և այնպես անել, վոր նրանք դիտեն ու ճանաչեն պատկերասրահները, քանդակործությունը, ճարտարագիտական համարածական համարածականները, տեսականները, բավարարացները, լսեն լավագույն համերգները և մշակեն խորհրդային լավ ճաշակ, արվեստի խոկական սանդակագործությունները տարրերն ֆորմալիստական այլանդակությունից և դռնիկի խալուուրայից:

Հարկավոր և այնպես անել, վոր նրանք զարգացնեն իրենց սեփական ստեղծագործական ուժերը գրական, յերաժշտական, դրամատիկական և այլ խմբակներում և կաղմակերպեն իրենց գեղարվեստական ինքնաղործունեյությունը:

Սովորող յերիտառարդությանը հարկավոր և սպասարկել թատրոնների ու ակումբների ընդհանուր ցանցով:

Մի գիտողություն ոլարերի մասին: Ակներեւ և սովորող յերիտառարդության հրապուրվելը բուրժուուական ֆոքստրուներով և ուսմբրայով: Այս հրապուրումը մենք առողջ համարել չենք կարող: Այսպիսի պարերն, իշարկե, արգելել չի կարելի—այս կհանգեր հակառակ հետեւանքների: Բայց մենք համոզված ենք, վոր մեր սովորող յերիտառարդության գաղափարականության աճումը, աղջային, ժողովրդական և կլասիկ պարի լայն արմատացումը դպրոցից դուրս կմղի բուրժուական ֆոքստրուտին:

Նոր ձեռվ պետք և կաղմակերպվի նաև պաշտպանական ֆիդկուլուրային աշխատանքը: Վերջինս կառուցելով, նմանապես պետք և հաշվի առնել սովորող յերիտառարդության հասակը: Բարձր դասարանների պատանիների ու աղջիկների մեջ արդեն

ձևավորվում և նրանց անհատականությունը, առնականությունը, ցանկություն եւ առաջանում իրեն ցույց տալու մրցություններին։ Միայն աղաս շարժումներն այլևս չեն բավարարում նրանց։ Նրանց համար հարկավոր եւ ստեղծել վոլեյբոլիստների, Փուտբոլիստների, Հրամանադիրների, լողավորների, թեթև ատլետների, հրամանադիրների և ուրիշ մշտական սպորտական խմբեր։ Պարապմունքներից աղաս ժամանակ, արձակուրդներին, հանգստի որերին հարկավոր եւ կազմակերպել մրցություններ, սպորտային և հրամային խորերի պարապմունքներ, ամառը, դպրոցական արձակուրդներին կազմակերպել Պաջը-Ամիսաքիմի ճամբարներ։

Սպորտային սրարապմունքների համար ընդհանուր սպորտային ակումբներում ստեղծել սովորակ յերիտասարդության սեկցիաներ։

Ժամանակն է լրջորեն գրադվելու բարձր դասարանների աշակերտներին ոգնելով՝ պրոֆեսիա ընտրելու գործում։

Այս ուղղությամբ շատ դպրոցներում կոպիտ սիալներ են անում։

Մեզ յոտ շատերը կան, վորոնք սիրում են ամենիտա անցկացնել յերեխանների մեջ, թե ով ի՞նչ եւ ուղղում լինել։ Ենվ յերեխանները դրում են. ուղղում եմ լինել ինժեններ, ողաչու, դրող, բժիշկ, գյուտարար, Խորհրդային Միության հերոս։ Այս անկետան կազմակերպողները հիացած են—ահա, տեսեք, մեր յերեխաններն ուղղում են լինել վոչ պակաս, քան Խորհրդային Միության հերոս։

Այս բոլորը լավ ե, ընկերներ։ Բայց, դժբախտաբար, դուք շատ անկետաններում հազվագեալ կլինի, վոր կարդաք, թե ցանկություն ունեն գործարան գնալու և դառնալու ուղղակի վորակյալ բանվոր։ Ինչո՞ւ։ Վորովհետեւ մենք սխալ ենք դաստիարակում աշակերտների այս մասին։ Հարկավոր եւ պարզաբանել նրանց, վոր խորիքային բանվորի աշխատանքը աշխատանք եւ աշխատանքի աշխատանք է։ Հարկավոր եւ հանդիպումներ կազմակերպել վոչ միայն գրողների ու նկարիչների հետ, ինչպես արվում ե մեզ մոտ, այլ ամենից ավելի վորակյալ ստախանովական բանվորների հետ, վորպեսզի բարձր դասարանների աշակերտներին ցույց տանք, թե նրանք ինչ կարող են դառնալ արտադրության մեջ։

Մենք շարադրեցինք աշակերտների ուսումն ու դաստիարակությունը կազմակերպելու մի շարք խնդիրներ։

Բայց ի՞նչ ե պետք, վորովեսդի ճիշտ կազմակերպենք աշա-
կերանների պայքարը գիտելիքների համար, վորովեսդի ճիշտ դաս-
տիարակենք նրանց:

Սրա համար հարկավոր ե դպրոցներում սուեդել Լենինյան
կոմյերիտմիության ամուր, մարտունակ կազմակերպություն-
ներ՝ ընդունակ դառնալու դպրոցական յերիտասարդության խ-
կական դեկալարները:

Քաղաքականապես տուավել կայուն լավադռյան կազմակերպիչ-
ներին Հարկավոր և առաջ քաշել իրեմ այդ կազմակերպություն-
ների քարտուղարներ, սովորեցնել նրանց աշխատելու, հրահան-
դավորել, ողնել նրանց:

Ժամանակն ե վերացնելու մերքանի կազմակերպությունների
սխալ վորձները արենատականորեն կասեցնելու առաջավոր սովո-
րող յերիտասարդության ընդունելությունը կոմյերիտմիության
մեջ, պատրիտիկ բանելով աճման կարդավորումը:

Անորմալ բան ե, յերբ գոլրոցում սովորողների բազմամի-
լուն մասսայի մեջ մենք ունենք միայն յերկու հարյուր հազար
կամյերիտական:

Ներկայիս սովորող յերիտասարդությունը — դա մեր խորհրդ-
դային յերիտասարդությունն ե՝ բանվորների, կոլտնտեսականնե-
րի, խորհանուննային ծառայողների, խորհրդային աշխատավոր
ինսելիցիենցիայի մոից ու արյունից:

Ենք վորոշ ընկերներ անզգուշաբար, կոպիտ, մեխանիկորեն
կարգավորում են նրան ձգուումները զետի քաղաքական ակտիվու-
թյուն, ստացվում են ամենաբացասական հետեւանքներ: Վերցրեք
դարձյալ կազանը: ՀամեկիթեՄ-ի կազանի Ստալինյան ռայկոմը
մերժել է ՀամեկիթեՄ-ի մեջ ընդունելու... կուսակցության մար-
դային կոմիտեյի բյուրոյի անդամ և լուսավորության ժողովը
դական կոմիտար ընկ. Բաշկերովայի աղջկան, վորովհետեւ նա,
այս աղջկելը, տեղեկանք չի ներկայացրել ռայկոմ... ծնողների
սոցիալական ծաղման մասին:

Կամ թե չե վերցրեք այն բանը, թե ինչ ե լինում, յերբ
ՀամեկիթեՄ ռայկոմն առանց պատճառի մերժում ե աշակերտին
ՀամեկիթեՄ մեջ ընդունել: Ահալասիկ Սոկոլնիկիի ռայունը: 36-րդ
դպրոցի 10-րդ դասարանի մի աշակերտ ուղում ե մտնել Համ-
եկիթեՄ շարքերը: Ռայկոմը նրան մերժում է: Մարդը, վիրավոր-
ված այս մերժումից, ստեղծում ե ընդհատակյա գրական ժուռ-

Նաև : Այս դրական ժուռնալը խորապես անկումային է : Ահա մի փոքրիկ հատված այն բանաստեղծություններից , վոր տղաները դրել են այս մերժման ազդեցության տակ :

Կ. Ռավերժեթիվ (մերժված)

ԱՆՀՈՒՍՈՒԹՅԱՆ ՄՈԽԵՏ

Մթնեց ամեն ինչ , չունչու ել սառեց ,
Զարդված անուրջը կրծում ե սիրոս ,
Տապակվում հոգիս մարմանդ կրակից ,
Ել հետ չի դալու խնդում իմ սիրոս :

Զեռքից դուրս յեկավ վաղեմի ուժու ,
Քայլում եմ անմիտ , կարծես թե քնած ,
Տեսնում եմ կարծես , թե բախտը պատին
Դրեց — «Մի վախճան — այդ ե գերեզման» ...

Ի՞նչ է կյանքն այժմ , անմիտ , անձուտում ,
Առջեղ չկա լույս , հաղթանակի խնդում ;
Յերբ արդեն անդարձ քեզ ասված ե — «վո՞չ» :
Ել ինչո՞ւ ասլրել զղջումի մուժում :
Յես այժմ մենակ եմ ինքս ինձ հետ ,
Պետք չեմ վոչ մեկին , մերժված , հալածված :

Յերբ ահա թե ինչպիսի անկումային մոտիվներով ե համակված դպրոցական ամրող ժուռնալը : Սա սխալ մոտեցում ե դիմումի տվյալու յերիտասարդությունը :

Այժմ , յերբ այս յերիտասարդին ընդունել են Համլիթեսշարքերը , ժուռնալն ել միանդամայն ուրիշ բանի մասին ե սկսել դրել :

Հարկավոր ե դպրոցի կոմյերիտական սկզբանակերպուրյան մեջ սունդեմ մարտական , յետուն կյանք և նրանց յեռամդն ամենից առաջ ուղղել դեպի պայքարը համուն գիտելիք-մերի :

Մի դիտողություն Համլիթեսիր հատկումի կոմյերիտական կաղմակերպիչների մասին : Հասկացնեմ կենտկոմն ընկեր Ստալինի նախաձեռնությամբ կոմյերիտական կաղմակերպիչների ինստի-

տուտ մացը կայ Միության և խոշորագույն քաղաքում։ Անտարակույս, կոմյերիտական կազմակերպիչների ինստիտուտի հիմումն արդարացրեց իրեն։ Նրանցից աճել են լավ կոմյերիտական կաղմակերպիչներ։ Սակայն չոտ կոմյերիտական կազմակերպիչների աշխատանքը մեզ չի բավարարում։ Նրանք պարտավոր եյին ավելի շատ քան անելու, քան արել են։

Վորոնչը են այդ կոմյերիտական կազմակերպիչների գլխավոր թերությունները։ Զափաղանց չուտ են նրանք կորցրել նոր մարդկանց թարմությունը, ակտել են սերտաճնել և հաշտվել գողրոցի թերությունների հետ, փոխանակ վճռական պայքար մղելու նրանց դեմ։

Սարսափելի չե, յեթե առաջին շրջանում վեճի բռնիւն կոմյերիտական կազմակերպիչն ու դպրոցի գիրեկտորը, միայն թե սա կատարվի հոգուտ գործի, միայն թե բոլոր մեղքերի փոխադարձ ամրնիստիա և ներում տեղի չունենա։ Յերբ կոմյերիտական կազմակերպիչը դործի առթիվ վիճում և գիրեկտորի հետ, իսկ գիրեկտորը՝ կոմյերիտական կազմակերպչի սա հոգուտ դպրոցի յե, վորովհետեւ կոմյերիտական կազմակերպիչը ջանալու յե ամելի լավ աշխատել, վորապեսդի նա գիրեկտորից քննադատվելու առիթ չունենա, իսկ գիրեկտորն անհստափելիորեն սահպված պիտի լինի պատասխաննելու ճիշտ այդպես։

Կոմյերիտական կազմակերպիչները վատ են հետևում, վորպեսզի ջոկվարներ լինենց դպրոցում, վատ են հրահանդում ջոկվարներին, չեն ոգնում նրանց։ Շատ սիրով են դառնում «Հատուկ կարևոր հանձնարարությունների գործակալ», զնում են փող ստանալու, մանկավարժները ձեռքից բռնած՝ նրանց մոտ են բերում չարաճճներին հայրական ներշնչումներ անելու համար։ Ուրիշ խոսքով՝ նրանցից միշտամիսը կամաց-կամաց դառնում են սովորական աղմինիստրատորներ։ Ընթացիկ հարցերը մաշում են նրանց։

Համարումարն իրավունք ունի կենտկոմի կոմյերիտական կազմակերպիչներից սպասելու, վոր նրանք ամենակարճ ժամանակմիջոցում ասպահովեն իրենց դպրոցների ուսումնական-դաստիարակչական աշխատանքի որինակելի դրվածքը։ Իսկ Համկանչութեանտկոմի սովորող յերիտասարդության բաժնին ժամանակն է վերջապես կոմյերիտական կազմակերպիչներին զեկավարելու ինչպես հարթին ե։

Կոսարենվ։ Մեղանից, այստեղ դանվողներիցս կպահանջվի,

վոր մենք զբաղվենք կոմյերիտական կաղմակերպիչներով և ստիպենք կոմյերիտական կաղմակերպիչներին փոխելու իրենց աշխատանքը : Հարկավոր ե զեկալարել կոմյերիտական կաղմակերպիչներին : Քանի դեռ մենք չենք զբաղվի կոմյերիտական կաղմակերպիչներով, նրանք միայն կմնան թղթի վրա : (Մափահարություններ) :

V. ՊԻՌՆԵՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Անցնում եմ պիոներական կաղմակերպության աշխատանքին : Հինգ տարի յե անջատում Համկանական Համագումարը !X-ից : Այս տարինեղի ընթացքում Լենինի անվան պիոներական կաղմակերպությունը բավականաչափ աճել և և ամրացել, իր շարքերում աճեցնելով միլիոնավոր պատանի լենինյաններ, Լենինի-Ստալինի մեծ գործի անձնուրաց շարունակողներ :

Կարելի յե մեջ բերել այս հայտարարությունը համառապող միքանի փաստեր :

IX համագումարի ժամանակ պիոներական կաղմակերպությունները գտնվում եյին դպրոցից դուրս՝ գործարաններին, ֆաբրիկաներին և կոլտնտեսություններին կից, դպրոցում ունենալով իրենց Փորպատճերը : Բնական ե, վոր այս հանգամանքը չեր դյուրացնում, այլ դժվարացնում եր յերեխաների ուսուցման ու դաստիարակության մեջ պիոներական կաղմակերպության դերի բարձրացման խնդիրը : Ընկ . Սեպերյանովայի զեկուցումը և Համկանական Համագումարի վորոշումները սխալ կերպով պահանջում եյին, վոր պիոներների ջոկատը գտնվի վոչ թե դպրոցին կից, այլ գործարանին :

Սկսած 1931 թվից պիոներական կաղմակերպության աշխատանքի հիմնական բազան դարձավ դպրոցը :

Պիոներների աշխատանքի փոխադրումը դպրոց և համագլուցական պիոներական կաղմակերպությունների ստեղծումը բնակչերին հանդիսանում մի հասարակ կաղմակերպչական-տեխնիկական միջոցառում : Նրանք յերեխաների ակտիվությունը շուրջին դեպի դպրոցի գլխավոր խնդրի լուծումը, այն ե՝ դեպի պահանջարության հիմնամեթերին տիրապետելու համար :

XI պլենումից հետո լուսական կության կենտրոն ամրացրեց պիոներական ջոկատների կաղմը :

Այլելի կուլտուրական, քաղաքականապես ավելի հասուն կոմ-
յերիտականները յեկան դմոլի պիոններական ջոկատների զեկավա-
րությունը:

Այս տարիների ընթացքում բավականաշտի աճեց յերեխանե-
րի ակտիվությունը: Այս մասին ամենից ավելի ցայտում կերպով
վկայում եւ պիոններական ջոկատների թիվի աճումը:

Վիճակադրական հաշվառվությունների ամյաներով պիոններ-
ների թիվը 3.447.325 հոգուց հասել և 6.839.030 հոգու:

Մասնելով պիոնների շարքերը, Խորհրդային Միության յե-
րեխաները ցուցադրեցին իրենց մանկական ջերմ սերը դեսպի իրենց
մայր-կուռակցությունը և դեռի յերեխաների լսավագույն բարե-
կամ ընկեր Ստալինը:

Հաղովի թե յերկրում դանովի այնպիսի մի անկյուն, վորտեղ
պատանի պիոններները չցուցարենին իրենց իրեւ կուռակցության
ու կոմյերիտության յառանգում ու գործունյա ողնականներ:
Նրանք ջանում են ավելի լազ սովորել:

Սովորելով զարգոցում, նրանք միենաւյն ժամանակ ողնում են
վերացնելու անզրակիսությունը բնակչության միջից:

Վոչ միայն մեր յերկրում, այլև արտասահմանում են ճանա-
չում խորհրդային պիոններներին, առանձնապես ճանաչում են պա-
տանի ավիտողելիստներին: Առա միքանի առը ի յեւ, ինչ նրանք
ավիումողելիների թոփչքի համաշխարհային ունկորդներ են սահ-
մանէլ և մասաշիր չեն վարել մեկին պիջելու:

Մանկական ինքնուրությունների յան ովմութիւնանները, նկա-
րիչների մըցանակաբաշխությունները, արվեստների ֆեստիվալ-
ները և վերջապես, կօմյերիտության X համապատասխան տըր-
ված պիոններական նվերների ցուցահանդեսն ի հայտ բերեցին
տասնյակ հաղարապէոր ընդունակ տեխնիկներ, նկարիչներ, դյու-
դատնեսության փորձավետներ:

Մոտ 2 միլիոն պիոններ իրենց ամառային արձակուրդը անց են
կացրել ճամբարներում:

Նրանք հնարում են տեխնիկական մողելներ, սովորում են
հրաձնային գործը, զբաղվում են Փիզիկուլտուրայով, աղաճորեն
նոր դրդեր են կարդում, պիոնները ու կինոնկարներ են դիտում,
պատի լրագրեր ու ժուռնալներ են հրատարակում, յերդեր են յեր-
գում, խաղեր ու զվարճություններ են սարքում:

Յերկիրը նրանց տեսալ կոլտնտեսային դաշտերում հասկեր
ու բամբակ հավաքելիս և վնասատուններին վոչնչացնելիս, փորձ-

Նական հողամասերում նոր թանդարժեք կուլտուրաներ աճեցնելիս, բերքը պաշտպանելիս : Յեկ Խորհրդային Միության բոլոր ժողովուրդներն իրենց յերեխաների համար հպարտանալով են արտասանում փառքով պասակլած Պավլիկ Մորոզովի անունը, Մետյա Գորդիենկոյի, Մամլուքաթ Նախանդովայի, Նիշան Կազիբրովայի, Նավախան Ամակուլոյի և մյոււների անունը, վորոնց կը ծը քի վրա արժանապես փայլում են Խորհրդային Միության կառավարությունից ստացած շքանշանները :

Իսկ այս բոլորը միասին առած նշանակում են, վոր պիոներները գառնում են Հսկայական ուժ, վորը միացնում, կազմակերպում ու ողնում են կոմունիստորեն դաստիարակելու խորհրդային յերեխաների աճող սերունդը :

Այս, կուսակցության ղեկավարությունը քիչ հաջողություններ չի ապահովել լինինյան-առաջնյան թոռնիկների համար : Այս բոլորը նվաճված են և կարող են գրանցվել մեր ակտիվում :

Բայց ով վոր առաջին հաջողությունները սխալմամբ ընդունում են իրեւ վերջնական հաղթանակ, ով չի տեսնում պիոներների կոմյերիտական ղեկավարության չափազանց լուրջ թերությունները և չինուունիկական հիացմունքով շաղակրատում են համատարած հաջողությունների ու հաղթանակների մասին, նաև հանցանք և գործում կուսակցության և կոմյերիտմիության հանդեպ, քանի վոր նա քննցնում և զդունությունը, թուլացնում են այս թերությունները շտկելու կամքը, չի սպառազինում, այլ զինաթափում և կոմյերիտմիությունը :

Իսկ թերություններ կան պիոներների մեջ կատարվող աշխատանքում, նրանք քիչ չեն և մեղ համար դարձել են միանդամայն անհանդուրժելի :

Վորքան կենտկոմն ամելի յեր խորանում պիոներական կազմակերպության աշխատանքի եյության մեջ, այնքան նրա մեջ ամելի պարզ ելին դրսեւրվում շատ բերածո, դանաղան պլրութեկտյորների կողմէոց մտաշածին, իրենց բնությամբ յերեխաների կոմունիստական դաստիարակության գործի համար խորթ բաներ :

Մենք մշտապես պետք են խրախուսենք թարմ, ստեղծածար, ողտառկար նախաձեռնությունը :

Բայց Համլեթն այնքան ամելի անողոքաբար պետք են հալածի այն մարդկանց սաոր ու վնասակար այլանդակությունները, վորոնք խարնյությամբ դրանք ներկայացնում եյին իրենց իրենց իսկ յերեխաների իսկական նախաձեռնություն :

Այս այլամողակություններից գլուխ հանելու մեջ մեզ առանձ-նապես ողնուց Արքասանդր, Վասիլյավիչ Կոսարեևը ողիոններների բաժնի խորհրդի վերջին նիստում :

Ինչպես մեկի ձեռքի շարժումով բաղմաթիվ քաղաքներում ու շրջաններում առաջացան «ողակի անային հավաքներ» : Յեվ մեղ-նից վոչ մեկը չնկատեց, թե ինչպես առանց վորուեցիկավարու-թյան թողնված այս հավաքները բազմաթիվ դեպքերում վերած-վեցին ողլորական, մեշչանական յերեկոների մեշչանական «մի-դալոչկա», «լուր» խաղերով, Փոքստրուններով և մի դավաթ շատ կասկածելի թեյով :

Կարգակերպական կարգի այս սխալը, վոր ողակին զրկեց կոմյերիամիության դեկավարությունից, հանդում եր ողակի հա-վաքի զաղափարային բովանդակության ներքինացման, թեմիաց-նում եր մանր-բռութուական աղղեցությունների թափանցումը պիտոններական միջամայրը :

Կամ, որինակ, հրապարակ ևն դալիս տխմար խաղեր : Հյու-սխային կողկասում մինչև կենակոմի միջամտությունն անց ելին կացվում «քվեարկություն» բացահայտ հակահեղափոխական խա-ղեր, վոր արմատացրել ելին վորոշ մասսայական աշխատաղներ : Մասսայական աշխատողը հարցնում ե . «Ո՞վ ե կոմունիզմի կող-մը, ո՞վ ե ֆաշիզմի կողմը» : Յեթե աշակերտը շնորհվեց և ձեռք բարձրացրեց «ֆաշիզմի կողմը», ապա նա ֆանաւը տարովել ե : Այս խաղն, անշուշտ, թշնամական խաղ ե մեղ համար :

Ահավասիկ «Հնդկամյակի կատարման համար» խաղերից մեկի լրիվ տեքստը Պողոսմնիկովի «Նոր մասսայական խաղեր» ժողո-վածվի 1930 թ. Հրատարակությունից :

«Խաղի որինակելի ընթացքը, «Ընկերներ, պայմանավորվենք - միր յես խոսեմ այն մասին, վորի համար դուք ել և մնացած բոլորն ել հարկավոր, անհրաժեշտ եք համարում պայքարել, վորի համար հարկավոր ե բոլորի ամենաակտիվ մասնակցությունը, դուք շրջանաձև գնում եք ձախ, ձեռքներդ բարձրացրած . իսկ յեթե յես սխալվեմ, ասեմ վոչ այն, ինչ հարկավոր եր, ասենք թե՝ խարեմ, կամ, վոր ավելի վատ ե, զանազան «ուկլոնիստական ծոռուներ» անեմ, դուք պետք ե կանգ առնեք և յերեսներդ դարձնեք ինձնից, ով վոր սա յամանակին չանի, նա հետադայում շրջանով պետք ե առաջանա հետ կրնկելով : Այսպես, գնա՞նք :

«Հնդկամյակը կատարենք և տարում» :

Մասնակիցներ : «Կատարենք» :

«Մրա համար բարձրացնենք աշխատանքի արտադրողականությունը» :

Մասնակիցներ : «Բարձրացնենք» :

«Բոլորս համերաշխորեն անցնենք աշխատանքի հարվածային առնեմպերի» :

Մասնակիցներ : «Անցնենք» :

«Բարձրացնենք պարագուրդների քանակը» :

Մասնակիցներ : «Բարձրացնենք» :

«Դուք... դուք սխալվեցիք, հետ դարձեք, հետ կրնկեք» :

«Ընկերներ, մեր գործարանի հնդամյակով հարկավոր և կռառցել... (վերցնել համապատասխան նյութեր և վաղորոք մշակել) (?!) : Մեր ցեխու որա համար ընթացիկ տարում պետք և առ...» — «Կտանք» — «... յերկու անգամ՝ ավելի պակաս քան անցյալ տարի» — «Դուք սխալվեցիք» և այլն :

Սա Հո գոեհկարանություն և ծայրահեղ դեպքում :

Կամ «ղիվանադետներ» խաղը : «Խաղացողները բաժանվում են յերկու խմբի՝ զանազան պետությունների ղիվանադետների:

Հանդիպումի վորոշ ձևականություններից հետո ակսվում են դիվանագիտական բանակցությունները : «Զեր սահմանապահները կրակել-վիրավորել են մեր շան պոչը», առում և մի յերկրի դեսպանը : Դիվանագիտական սուրհանդակի վարտիքն են համել : Տարվում ե այն կողմը, վորը շուտ կծիծաղի : Վորքան ավելի սրամորեն են անցնում բանակցությունները, այնքան խաղը հետաքրքրական է լինում» :

Այս բոլոր գոեհկարանություններին կոմենտարիաներն ավելուրդ են : Յեկ այս գոեհկարանությունը ձևացվում է իրեւ մանկական կուլտուրական խաղեր :

Կոսարել : Պիոներական ջոկատի աշխատանքը բոլխում եր այն գեկուցումից, վորը տրվեց գեռմա կոմյերիտմիության IX համագումարում : Զեկուցման մեջ պարզ ասվում եր, վոր յերեխաները մասնակցություն պիտի ցույց տան արդիքինալլանների կատարմանը, հնդամյակի յերրորդ տարվա կատարմանը գործարաններում, Փարբիկաներում, կոլտնտեսություններում : Հենց այս պլանն ել տրվում է յերեխաններին ջոկատներում և ողակներում : IX համագումարի վորոշման մեջ այսպիսի տեղեր շատ կան :

Ս. Անդրեյեվ : Ո՞ւմ զեկուցումն եր :

Կոսարել : Դա կոմյերիտմիության կենտկոմի զեկուցումն

եր, և, յեթե հիշողությունո ինձ չի դավաճանում, այս ժամանակում, որու ժամանակ զուք աշխատում ելիք կոմյերիտմիության կենակումում։ (Մափահարություններ)։ Պետք և հանել «զրադիլեց» արդֆինալլանով։ Ախալ զրույթը։ Զբաղվել պետք և ուսումով, այս մասին հաճախ մտանում են։ Ահա, ընկեր։ Մուսկին, յեկ ա'յս մասին խոսիր։ (Մափահարություններ)։

Մուսկին։ Խսկապես առած՝ յս համարձակություն չունեցաւ հարձակվելու կոմյերիտմիության IX համադումարի վրոշումների վրա։

Կոսարիվ։ Մի՛ վախենա, հարձակվի՛ր։

Մուսկին։ Եւս այդ կարգացի ընկեր Սելիբրյանովայի դեկուցման մեջ, ինչպես և բանաձեռում, և այն բոլորը, ինչ առված եր այս-սեղ, համագումարը վակելուց միքանի ամիս հետո շուռ յեկալ։ Ի՞նչ եր պահանջում IX համագումարի բանաձեռ։

Յերեխաներին զպրոցից տանել զործարան, Փարբիլու և ձգտել, վոր յերեխաները ձեռնարկումյան մեջ կատարեն արդ-Փինալլանը — ահա այս եր զլիալոր զրույթը։ Ենիվ յերկրորդ՝ յերեխաներին տալ ժողկումատների պետական տուաջաղբությունները — Հողժողկոմատի առաջադրությունները, ուստիչումքի հա-վաքման առաջադրությունները և այլն։ Բայց ահա Դնելլրոպետ-րովսկի մարզում արդեն այժմ զպրոցականների սպայմանադրեր-են կազմել և ուղարկում են Ազով—Սևծովյան յերկրամաս։ Այս պայմանագրում գկոնկրետ առաջադրություններ» կան—150-ական հեկտար մաքրել զետանասկյուններից և այլն։

Ինձ թվում ե, վոր այնտեղ մինչեւ այժմ ել ընկերները չեն հասկացել, թե ինչ և տեղի ունեցել Համեկօնը IX համագու-մարից հետո։ Այսուեղից վնասակար հիմարություններ շատ են առաջացել, վորովհետեւ չեն զրադիլել նրանով, ինչ պետք է։ Յե-րեխաների զաստիարակությամբ չեն զրադիլել, իսկ այդ ժամա-նակամիջոցում ամեն տեսակ պրոֆեկտորներ արմատացրել են այս բոլոր խեղկատակությունները։

Ահա հանդես ե զալիս «քաղտողանը»։ Բատ հասակի շարվում ե մի ամբողջ ջոկատ կամ զասարան, և զեկալարը (ջոկալարը կամ մանկավարժը) հինդ բուզեյի ընթացքում ժիր շաղակրատում ե զա-նաղան քաղաքական իրադարձությունների մասին։ Յեկ ահա պը-ժեկտյորներն ուղում ելին այս «քաղտողանով» փոխարինել յե-րեխաների քաղաքական լուսավորության լուրջ, խսկական, Աբք-

միտ աշխատանքը՝ նրանց ըմբռնտղությանը մատչելի ձևով, այն աշխատանքը, վոր պահանջում եր Համեկ(բ)կ կենտկոմի վորոշումը:

Ահա սկիզներական ջոկատում կաղմակերպվում են «համադրումարներ»: «Համագների աշխատացման» նսղատակով միքանի, թող ներկի մեղ ասել, «Հնարագնետներ» սարքում են «կադրմակերպված ծիծաղի բովեներ»: Ահա հրատարակ և դալիս «ճամբարը բակում»: Ահա լույս աշխարհ և դալիս հռչակավոր «կուտղագրաբ»: Վորոշ դերհեղափոխական մարդկանց թվացել ե, թե ընդմիջումներին մանկական անբռնաղբօսիկ ուրախությունը, խաղերը և զվարճությունները վոչ այլ ինչ են, բայց յեթե անիծյալ անցյալի մնացորդ: Յեկ հավիշտակված նրանք ձեռնարկում են ընդմիջումներին մտցնելու խիստ կաղմակերպված սկզբունք՝ կիրառելով «քաղաքացան», «քաղթանոտ» և կայուն դիսակետչերային կարգավորման յենթարկելով յերեխանների ծիծաղն ու ուրախությունը:

Մի առիթով կամ առանց վորմեւ առիթի սկսում են պիտներներին տանել «ռաւպորտ տալու» բաղմատեսակ խորհրդակցություններին ու ալլենումներին, սկսած վոչնչով իրեն չցուցաբերած «յերեխանների բարեկամների» ընկերության պլենումից և վերջացրած «կարմիր խաչի ու կիսալուսնի» ընկերության խորհրդակցություններով:

Թե ինչի յե հանդել այս ռաւպորտումանիան, այս բանն ըմբռունելու համար բավական և մտասուղիել միայն մի փաստի մեջ, վոր պատմել և մանկական դրող բարտոն:

Նրան հրավիրել են մի պիտներուհու անվանակոչության տոնին: Դե, ինչպես են սովորաբար սարքվում անվանակոչության տոնները: Անվանակոչությունն նստում ե տոնական հազորութուի, հյուրերը չնորհավորում են նրան ուրախալի անցքի առթիվ, նվերներ են տալիս, հյուրասիրվում են և ուրախանում: (Ընտանեկան անվանակոչությունների կատարման վորոշ «փորձ» այնուամենայիվ կա, թեև զեռմս մեր մեթոդիստները բավականաշափու չեն ուսումնասիրել և ընդհանրացրել զանազան մեթոդական կարինետներում):

Ինչպես և անցել այս անվանակոչությունը:

Եերբ հյուրերը նստում են սեղանի շուրջը, վեր և կենում որդ կերպուհին և ռաւպորտ տալիս.

«Եხս, անվանակոչուհիս՝ 4-րդ դասարանի աշակերտուհի, 5-րդ

Չոկասաի Յըրդ ողակի պիտոներուհի, անցած անվանակոչությունների որվանից բարձրացրել եմ իմ առաջադիմությունը և հիմնական գիտակալիններից ունեմ «Հերազանց» և «Ղավ» թվանշաններ։ Բոլոր հյուրերին հրավիրում եմ հետևելու իմ որինակին։

Իսկ շուրջը, պատուին կախված են անվանակոչուհու սոցպայժանագրերն ու հյուրերի պարտավորությունները։

Ընկեր Բարտոնն հետանալիս հարցնում է ողակավարին։ «Խնչը յեք դուք այսպես բյուրոկրատացնում ձեր ուրախությունը։

Ողակավարը պատասխանում է՝ «Ղավ, յես այդ հաշվի կառնեմ հետագա աշխատանքի ընթացքում...»։

Նայեցնք, թե ինչպես մանկական լիզում աղտոտաված է զանագան կադրոննիւրյուրոկրատական բառերով։ Թերեւս նույնիսկ մեծահասակների համար գժվար ե նրանց հետ մըցել։ Իսկ սրանում մեղավոր ենք մնենք ինքներս՝ զեկավարները։ Յերեխանները, փոխանակ բոլորին հասկանալի «սովորել» բառի, ասում են՝ «Ժշակել»։ Ասում են «Ցեղեխող», վոր նշանակում է «Յերեխանների գեղարվեստական դաստիարակության կենտրոնական տուն»։ Ասում են «ՃԴՏՍ», փոխանակ՝ «Մանկական կենտրոնական տեխնիկական կայան»։ Ասում են «ՅուԱԱ», փոխանակ ասելու «Պատանի ավիլոկառուցող»։ Ասում են «Գոսենստյուդ», փոխանակ ասելու «Պատանի տուն»։ Ասում են «Դկր»։ Փոխանակ ասելու «Կոլտանտեսական յերեխանների տուն»։ Ասում են «Պիկոր»։ Փոխանակ ասելու «Պիոներական թղթակից»։ Ասում են «ՅԲԱՊա ՈՎՏԵ», փոխանակ ասելու «Պրոլետարական տուրիմիւ և եքսկուրսիայի ընկերության կենտրոնական բաղա» և այլն և այլն։

Գետը լողալու դնացած յերեխաններին հարցրեք, թե «Ռնչեյիք անում», և նրանցից կդտնվեն այնպիսինները, վորոնք կպատասխաննեն։ Ճմենք լողային մասսայական ձեռնարկումներ եյինք անցկացնեմ։ կերառելով ջրի Փակտորը։

Հարցրեք վորոշիլովյան հրածիդներին, թե «Ո՞վ եք դուք», և նրանք ձեղ կպատասխաննեն։ «Մենք ՅուԴՈՒ» յենք, վորը պետք է նշանակի, վոր նրանք ՊԱԶԼ Ալիաքիմի պատանի բարեկամներն են։

Ընկերներ, ցալալի յե, յերբ դու միայն 12 տարեկան ես, մինչդեռ արդեն պետք ե շաղակրատես, վոր դու թե՛ «ՅուԱԱ»

* Վերօնիշյալ բոլոր կբնատաւմները բերված են ռուսերեն և չեն թարգմանված։

նու, թե՛ «ՅուշԱ», թե՛ «ԳԱՌ», թե՛ «ԲԳՏԸՆ», թե՛ «ՊՎԽՈ», թե՛ «Պիկոր», թե՛ «ՅուԴՈ», վոր դու գնում ես «ՃԵՂԵԽՈՂ», «Գոսցեն-այուղ», «ՃԴՏՍ» և «ԴԿՐ»-ի առաջին ակտիվիտեն ես:

* * *

Ո՞վ ե մեղավոր այս բոլորի մեջ: Համենան դեպս վոչ յերե-խաները: Զի հազորվի յերեխաների ուղեղներն աղոստող այս ամ-բողջ գուեհարամուրյունը ձևացնել իբրև իբրնց իսկ յերեխաների իսկական նախաձեռնություն:

Վո՞չ, մեր խորհրդային յերեխաներն այստեղ մեղք չունեն: Միայն անվերահսկողությունը և պրոֆեկտորների նեխած ներո-դամուրյունը դեպի այս բոլոր այլանդակուրյունները հնարավո-րուրյուն են տվել նրանց լայնորեն տարածվելու, իսկ շատ ջոկ-վարների՝ յարացնելու այս բոլորն իբրև նորագույն նվաճումներ պիոններական աշխատանքի ձևերի ու մերոդների մեջ: Անողոքա-րար պետք ե սրբել, դեմ շպրտել այս նեխածքը և ջոկվարներին ու պիոններներին պաշտպանել նրանցից:

Հարցրեք ջոկատում այս բոլոր կասկածելի նորամուծություն-ները իրադործող վորես ջոկվարի, թե «ինչո՞ւ դու «Փաշիստներ և կարմիրներ» խաղացիր: Ի՞նչ խելքիդ փչեց սարքելու «կաղմա-կերպված ծիծառի բռպեց»:

Այս հարցին նա ձեզ չի պատասխանի: Նա ինքը չգիտե, թե ինչու յե այդ արել:

Վո՞րտեղից ե գալիս այս: Պիոններական ջոկվարների մի մասի գաղափարական ցածր մակարդակից, չիմաստավորված աշխատան-քից, գաղափարական նպատակասլացության բացակայությունից: Կոմյերիտական կոմիտեները, պիոններների բաժինները քիչ են աշ-խատում ջոկվարների դաստիարակության վրա: Ենք մեր պարտա-կանությունն ե հանդիսանում այնպես աշխատել նրանց հետ, վոր նրանց գաղափարական մակարդակի բարձրացումը թույլ տա նրանց հրաժարվելու ինքնահօսից և դառնալու դեպի իմաստավոր-ված, խորապես գաղափարային և նպատակասլաց աշխատանք: Խորհրդային յերեխաների մեջ գաստիարակելու իսկական կոմու-նիստական պիոններական հատկություններ:

Պիոններների մեջ մինչև այժմ կային այսպես կոչված «որենք-ներ ու սովորություններ»: Ընկեր Ստալինը մեղ նշեց, վոր այդ «որենքներն ու սովորությունները» մտացածին ու անպետք բան են: Ի՞նչ ասել ե որենքներ: Որենքներ հրատարակում ե պետու-

թյունը: Նրանք պարտադիր են, և նրանց խախտողը պատճվում
եւ Բայց ի՞նչ ընդհանուր բան ունեն այս որենքները պիտուկական
կազմակերպության աշխատանքի հետ: Որենքներ չեն պետք պիո-
ներական կազմակերպությանը, այլ վարքի կանոններ, վոր պետք
եւ կատարեն պիոներները:

— Այս չեն պատճեանուն: Չեն պատճեանուն և ի՞նչ
ՊԻՌԵՐԵՐԵՐ ԻՐԵԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏԵՐՆ ԵՆ ԴՐԵ ԱՄԲԱՇՄԱ ԺՇ: ՊԱՅՃԱԿԱ
ԴՐԱՄԱՆՈՒԾՈՒՅՆ: ԽԵ ԽԵ ԱՄԲԱՇՄԱՆ ԱՄԲԱՇՄԱՆ ԱՄԲԱՇՄԱՆ ԱՄԲԱՇՄԱՆ:

Պիտուկական կազմակերպության կարմորագույն թերություն-
ներից մեկն այն ե, վոր պիտուկական ջոկատների աշխատանքը
բավականաչափ չի կառուցված իրենց իսկ՝ յերեխաների ինքնա-
գործուներության վրա և այդ ինքնագործուներությունը թույլ
կերպով և ուղղված դեպի առաջադիմության համար պայքարելը,
դեպի յուրաքանչյուր առանձին պիոների գաստիարակումը:

Ի՞նչ և նշանակում այս: Ի՞նչո՞ւ յե ընդէլժվում հենց այս թե-
րությունը:

Այս հարցին պատճախանելու համար դիմենք կոնկրետ պիտու-
կական ջոկատների աշխատանքին:

Մեր յերեխաներն ընտհանուր առամբ հիսնալի յերեխաներ
են: Բայց մի՞թե յերեխաների մեջ չկան այնպիսիները, վորոնք
իրենց չեն պահում պիոների պես: Իհարկե, ընկերներ, կան այդ-
պիսիները:

Ահավասիկ յես պատանի պիոներ եմ, և զրույցներից դիտեմ,
վոր պետք ե լավ սովորել, և ինքու մեր հավաքություներում ճառեր
եմ ասել այս թեմայով: Բայց յես ինքս վատ եմ սովորում, չեմ
ձգտում, ինչպես հարկն ե, կատարելու ուսման առաջադրություն-
ները և դասերի ժամանակ արտագրում եմ ընկերներից: Ինչանա-
կի՝ յես վարկում եմ վոչ պիոներաբար:

Ահավասիկ յես պատանի պիոներ եմ, և քիչ չեմ լսել, վոր
հարկավոր ե աչքի լույսի պես պաշտպանել հասարակական սեփա-
կանությունը: Բայց ահա դասարանում մի կովարար իմ աչքի ա-
ռաջ փորփիեց նստարանը, վորպեսզի հավերժացնի իր անունը—
«Այստեղ նստել են Վանյան և Զոյան»: Իսկ յես, պիոներս, վոչ
մի նշանակություն չեմ տալիս սրան և սառնասրտորեն անցնում
եմ կողքով: Նշանակում ե՝ յես վարվեցի վոչ պիոներաբար:

Ահավասիկ յես պատանի պիոներ եմ, յես բոլոր կամավոր ըն-
կերությունների պատանի բարեկամ եմ և առաջին ակտիվիստը ջո-
կառում: Բայց տանը յես յերբեք չեմ ողնում մորս, ինքս ինձ հա-

մար կոճակ չեմ ուզում կարել և անընդհատ հրամայում եմ—մամա, տուր, մամա, բեր, մամա, արա', գե արակ շարժվի՛ր: Կնշանակի՛ յես վարվում եմ վոչ պիտներաբար:

Ահա հիվանդացավ իմ դպրոցական ընկերը: Նա այնպիսի հիվանդություն ունի, վոր կարելի յե նրան այցելել, խրախուսել, նորություններ պատմել ջոկատից ու դպրոցից: Բայց յես առաջին քակտիվիստներ եմ ջոկատում, յես շուտ պետք ե զնամ ծեղեիսող կամ ՈՊՏԵ-յի ծերազան, և արդեն ամեննեփն ժամանակ չեմ դրսում այցելելու ընկերոջս: Դուրս ե դալիս, վոր յես վարվեցի վոչ պիտներաբար:

Լինո՞ւմ են արդյոք այսպիսի և նման դեպքեր մանկական միջամայրում: Վորքան ել դրանք քիչ-լինեն, բայց այսպիսի դեպքեր լինում են, և սրանք անհանդուրելի յեն:

Արդյոք մի՞շտ ե, վոր պիտներներն իրենք են արձագանդում իրենց առանձին ընկերների սխալ, վոչ պիտներական վարմունքն ու վարքի փաստերին:

Վո՞չ, միշտ չե: Յեթե դրությունը հենց այսպես ե առաջալոր ջոկատներում, ապա վատ աշխատող ջոկատներում քիչ դեպքեր չեն լինում, յերբ ինքը ջոկատը անցնում ե նման փաստերի կողքով, և դրանով իսկ չի զբաղվում իր գլխավոր խնդրով՝ դաստիարակությամբ:

Ասենք, թե իվանովը քիչ ե ազդում Գետրովի վրա, և ընդհակառակը:

Ինչո՞ւ յե տեղի ունենում այս:

Այս տեղի յե ունենում այն պատճառով, վոր ջոկվարները հաճախ փոխարինում են հենց յերեխաններին և փոխանակ նրանց հմտորեն ու դյուրազգաց կերպով մոտեցնելու դեպի իրենց կյանքի հարցերի ինքնուրույն լուծումը, ամեն ինչ անում են նրանց փոխարեն:

Մշտապես վոչ թե պիտներները, այլ ջոկվարներն են նրանց փոխարեն լուծում պիտներական ջոկատի կյանքի ամենակենսական հարցերը:

Վո՞ր պիտներին և ինչի՞ մեջ պետք ե շոկել, ո՞ւմը խրախուսել իրրե խսկական պիտների, վորը լիովին արժանի յե իր բարձր կոչման:

Ո՞ւմն: ընդունել պիտներների շաբաթը: Ինուայ ում յուն:

Ի՞նչ պետք ե անի ողակը:

Ի՞նչ պետք ե անեն խմբակներն ու սիրողների խմբերը:

Ի՞նչ անել հավաքում :

Ի՞նչ խաղ խաղալ :

Ի՞նչ համաշոկատային միջոցառում ձեռնարկել :

Այս բոլորը հաճախ վճռում են վոչ թե պիտի բներն իրենք, այլ ջոկվարները նրանց փոխարեն :

Դիմենք փաստերին : Ահա մի իրական պատկեր, թե ինչպես Մոսկվայի Ֆրունզեյի ուսյոնի 6-րդ դալրոցում ջոկվարը անց ե կացրել 4-րդ դաստիարանի պիտի բակալավր ջոկատի 2-րդ ողակի հավաքույթը :

Ողակը դասից հետո հավաքվեց դաստիարան : Ջոկվարը սկզբում հարցրեց յերեխաններին, թե ո՞վ և ի՞նչ նմեր ե պատրաստում կոմ-յերիստիության X համալումարին : Այնուհետև տեղի ունեցավ այսպիսի խոսակցություն :

Զոկվար : Դե, յերեխաններ, յեկեք աշխատանքի պլան կազմենք . պլանի մեջ մտցրեք այն բոլորը, ինչ ձեզ հետաքրքրում ե : Հիմա յետ ձեզ կրտսեմ ձեւը (^(*)), վորով դուք կկազմեք աշխատանքի պլանը : (Ողակավարից վերցնում ե տեսրակ, գրաւմ ե ձեւը և ինքը կազ-մում պլանը) : Հաջորդ ողակային հավաքույթը կլինի ամսի 8-ին :

(Պիոներներն առաջարկ են մտցնում կարդալ վերջացնել Ու-ելսի «Անտեսանելի մարդը» գիրքը) :

Զոկվար : Լավ, յեթե զերքը ճարեք (յես իմն արդեն հանձնել եմ), առա կկարդանք : Ուզո՞ւմ եք յերգ սովորել :

Պիոներներ : Ուզում ենք :

Զոկվար : Դո՞ւ, Շերանով, յերգը կբերես, և դուք կսովորեք : Անցնենք առաջ : Ողակի հետեւյալ հավաքը փետրվարի 14-ին :

(Պիոներներն առաջարկ են մտցնում ալբոմ սարքել) :

Զոկվար : Իսկ դուք ուզո՞ւմ եք իմանալ Խորհրդային Միու-թյան մարշալների, կարմիր բանակի առաջնորդների կենսագրու-թյունը :

Պիոներներ : Հանձնարարեք Շամինային, վոր դրի ընկեր Վո-րոշիլովի կենսագրությունը :

Զոկվար : Ձե, Շամինան պատի լրագիր պիտի գրի : Սմիրնովը կանի : Ձեր հաջորդ հավաքույթը կլինի 20-ին : Այդ հավաքույթում յես ձեզ առաջարկում եմ կատարել հետեւյալը . կանչել մի պիո-ների . թող նա պատմի, թե ինչպես ե սովորում և ինչպես ե ժա-մանակն անցկացնում : Ուզո՞ւմ եք այս մասին իմանալ :

Պիոներներ : Ուզում ենք :

Զոկվար : Գրենք «լսել մի պիտի բների աշխատանքի մասին» : Իսկ

ողիտի խաղա՞ք : Խաղերը հանձնարարենք անցկացնել Դանիլովին :
Դանիլով : Յես չեմ ուղում :
Զոկվար : Չե, դու այդ կանես :
Դանիլով : Մեկ ե, չեմ անի :
Զոկվար : Դու պատասխանատու կլինես : Հիմա, ձեր հաջորդ
հաշմաքութը 26-ին ե : Ի՞նչ եք ուղում անել այնտեղ :
Պիոներներ : Յեկեք խաղանք, թե չե մենք սկի չենք խաղում :
Զոկվար : Դուք 14-ին կխաղաք, իսկ 26-ին դնացեք վորես
տեղ :

Պիոներներ : Յեկեք գնանք սահարան :
Զոկվար : Չե՛, սահարան կդնաք 8-ին :
Սրանով ավարտված ե ողակի պլան կաղմելը «իրենց իսկ յե-
րեխանների շահերի ու պահանջների հիման վրա» :
Դժվար չե նկատել, թե ինչպես, ցանկանալով ոգնել յերեխա-
ներին, ջոկվարն իսկապես փոխարինել ե նրանց, ճնշելով նրանց
նախաձեռնությունը :

Ինչի՞ յե հանգում այս :

Վորոշ ջոկվարներ իրենք են գործում բոլորի փոխարեն, իսկ
ջոկատի խորհրդի նախագահը համեստարար նստած ե մի կողմ :

Վորոշ ջոկվարներ իրենք են ամեն ինչ պլանավորում, իսկ ո-
ղակավարը միայն դիտում ե, վորոշինետև նրան հնարավորություն
չեն տալիս սովորելու, ինքնուրույն աշխատելու :

Վորոշ ջոկվարներ իրենք են ամեն ինչ ասում, իսկ պիոներ-
ները միայն լսում են :

Յեվ վորքա՞ն խղճուկ են այսպիսի ջոկվարների գանգատները,
թե ամեն ինչ ինքն ե «ստիպված» անել, վոր իր ջոկատի պիոներ-
ները «քիչ են ակտիվ», վոր ողակներն իրենք վոչինչ չեն կարող
անել և այլն և այլն :

Ել ինչ խոսել այսպիսի ջոկատում նախաձեռնություն, ինքնա-
գործունեյություն, բնավորության կայունություն դաստիարակե-
լու մասին, յերբ ամեն ինչ յերեխաններին մատուցվում ե պատրա-
տի, ծամած ձևով :

Այսպես չպետք ե աշխատեն պիոներական մարտական ջոկատ-
ները, վորոնք ոգնում են դարրոցին մարդիկ պատրաստելու ինքնու-
րույն քաղաքական ու աշխատանքային կյանքի համար, պայքարի
համար :

Մեր պիոները պասսիվ լսող և կառարող չե : Նա պետք ե լինի
իբրև յեռանդուն, ներգործոն, ինքնուրույն, նախաձեռնող, վորը

կարողանում և բոլոր պայմաններում, ամեն մի դրության մեջ ճիշտ ըմբռնել և վարվել ինչպես իսկական պիտուքը:

Պիտուքը իյուր չե իր կազմակերպության մեջ, այլ տեր:

Պիտոներական կազմակերպությունը—դա կազմակերպություն չե յերեխաների համար, այլ իրենց իսկ յերեխաների մարտական կազմակերպությունն ե, փորս աշխատում և կուսակցության և կոմյերի խամբության գեկավարությամբ:

Մենք պարտավոր ենք, և մենք վոչ միայն առաջավոր ջոկատներում, այլև ամեն մի ջոկատում այնպիսի պայմաններ կստեղծենք, վորապեսզի պիտոներներն իրենք լուծեն ջոկատի կյանքի հարցերը, վորապեսզի պիտոներներն իրենք առանց հապաղելու արձագանքն իրենց ընկերների վարմութիւն ջոկատում, դպրոցում, փողոցում, ընտանիքում, մնացածների համար փորպես որինակ ցույց տան նրանց, ով վարվում է իրրև իսկական պիտոներ:

Հատկապես սրանումն և պիտոներական կազմակերպության գաստիարակչական աշխատանքը արմատապես բարելավելու կարևորագույն պայմաններից մենքը:

Վոմանք կամեն, թե սա ինչ բան է—իրենք պիտոներները, հայ իրենք պիտոներները: Իսկ ո՞ւր մնաց կոմյերիտմիության գեկավար գերը:

Կամ թե չե կասեն. ահա, հիմա յես ամեն ինչ հասկացա: Յերեխաներին կթողնեմ իրենք իրենց, և թող անեն, ինչ վոր խելքներին կփչի:

Մենք նրանց պատասխանում ենք, վոր յեթե նրանք այսպես են հասկացել իրենց իսկ յերեխաների ինքնաղործունեյությունը, ինքնավարությունն ու նախաձեռնությունն առաջին պլանի վրա քաշելու նշանակությունը, ապա նրանք խորապես մոլորված են:

Յեթե նրանք կարծում են, թե այդ գեղղքում մեծահասակների գեկավար գերը, կոմյերիտմիության գերը քողարկվում ե, վոր յերեխաների ինքնաղործունեյությունն ու նրանց գեկավարությունը հակասում են միմյանց, ապա նրանք ծայրահեղ գեղղքում խորապես անիրավացի յեն:

Նման հակասությունը միայն թվացող հակասություն ե:

Վորքան ավելի շատ ինքնաղործունեյություն, ինքնավարությունն ու նախաձեռնությունն են ցուցաբերում պիտոներները, այնքան ավելի շատ, ավելի պատասխանատու և լուրջ ե դառնում պիտոներական ջոկատի, կոմյերիտական գեկավարի գերը:

Խոսքը բնապէտ այս մասին չեն, վոր նվազեցնենք ղեկավարի դերը ջոկատում, վոր ամեն ինչ թողնենք ինքնահոսի: Խոսքը վերաբերում է ուրիշ բանին՝ նրան, վոր փոխենք ջոկատի ղեկավարի՝ իր ղեկավարած ջոկատի կյանքին միջամտելու մեթոդները:

Եերբ ջոկատը կամ ողակը կազմում են իրենց գործողությունների պլանը, մի՛ ջուապիր առաջարկելու արդեն պատրաստին, այլ ողնիր յերեխաներին իրենց նշելու այդ, ողնիր, վոր հասկանան, թե իրենց առաջարկներում ինչն ե լավ և ինչը՝ վատ:

Ինքու ամեն ինչ մի՛ անիր յերեխաների փոխարեն, բայց ժամանակին նկատիր, թե ինչ խոչընդուների յեն նրանք հանդիպել, ինչի առջև են փակուղու հանդիպել, —դու ավելի մեծահասակ ես, ավելի փորձլած, ավելի բանիմաց—ողնիր նրանց, պատասխանիր նրանց տարակուսելի հարցերին:

Մի՛ շտապիր քո խոսքն ասելու նորեկին ջոկատի մեջ ընդունելիս, առանձին պիտոներների վարժումները քննարկելիս—կարողացիր ծավալել իրենց իսկ յերեխաների ակտիվությունը և զգուշ, կամաց կամաց նրանց մոտեցըրու իրենց կյանքի հարցերի ինքնուրույն, բայց ճիշտ լուծման մեջ ընտանիք մասնակին այս պատճենին անդամ

Պատանի ավիոշինարարի փոխարեն թռչող մողել մի՛ պատրաստիր, այլ պատմիր նրան, թե վորտեղից գտնի գծագրերը, պետքական գիրքը, և թող նա ինքը մողել պատրաստի սկզբից մինչև վերջ:

Պիտոներական ջոկատը դայակ չեն, խնամակալ չեն, ովերահսկիչ տիկինն չեն, այլ պիտոներների բանիմաց ու կարեկից ավագ ընկերը, խորհրդականն ու ոգնականը նրանց բոլոր ճեռարկումներում:

Պիտոներական ջոկատը յուրաքանչյուր անհատ պիտոների բարձր դադախարական, կուլտուրական ու զգայուն դաստիարակն եւ:

Աշխարհում քիչ իմաստուններ չեն, վորոնք դեմ չեն վիճելու մանկական կոմունիստական շարժման հարցերի շուրջը, պատրաստ են բաժանելու այն փուլերի, իսկ յուրաքանչյուր փուլի դրսի, նրան զարդարելու համար, դնելու իր սեփական անձնավորությունը:

Անլիճելի յե, վոր անորոշ հարցեր կան, և դրանք քիչ չեն: Բայց այս «իմաստունները» չեն նկատում, վոր յերեխանե-

րի հետ աշխատելու կենդանի փորձով լավագույն, մտածող կոմ-
յերիտկաղմակերպիչներն ու ջոկվարներն արդեն ընդհուպ մոտե-
նուած են ամենադլավոր, ամենահիմնական խնդրի լուծմանը :

Ընդպամենը մի ամիս սրանից առաջ Համլեթն կենտկոմում
յերեխաների հետ աշխատելու իրենց մեթոդի մասին պատմելով,
հաշիվ Եյին տալիս Ոկտյաբրսկի ուայոնի 30-րդ դպրոցի ջոկվար
ընկ. Սիմոնավան, Ոկտյաբրսկի ուայոնի 25-րդ դպրոցի ջոկվար
ընկ. Ֆոմինը, Թրելիսիկ 40-րդ դպրոցի ջոկվար ընկ. Զոփի-
կյանը, Բառումանի ուայոնի 18-րդ դպրոցի ջոկվար ընկ. Արրա-
մովան և ուրիշները:

Ենդ պատահական չե, վոր Համլեթն կենտկոմն առանձին
ուշադրությամբ լսեց նրանց պատմածները, վորովհետեւ սրանք
բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում իրենց սկզբուն-
քային ու գործնական կարևորությամբ:

Ի՞նչ են արել այս ջոկվարները:

Նրանք նկատել են չափագանց հասարակ բաներ,

վոր պիոններներին և հոկտեմբերիկներին չի կարելի մոտենալ
իրեւ միանդամայն միատեսակ, միմյանց նման տղաների ու աղ-
ջիկների միապաղաղ մասսայի.

Վոր զանազան յերեխաներ ունեն իրենց անհատական առանձ-
նահատկությունները, իրենց հատուկ թերությունները, շեղում-
ներ կան սովորական վարմունքից, վոր հարկավոր և ժամանա-
կին նկատել, ուսումնասիրել նրանց պատճառները և դրանք վե-
րացնել.

Վոր զանազան յերեխաներ ունեն իրենց, միմյանցից տարբեր
ընդունակությունները, վորոնք հարկավոր և հմտորեն զարդացնել.

Վոր 1-ին դասարանի հոկտեմբերիկի զարդացման մակար-
դակը և պահանջները նման չեն 4-րդ դասարանի պիոնների զար-
դացման մակարդակին ու պահանջներին, իսկ նա, իր հերթին,
այնպիսին չե, ինչպես 7-8-րդ դասարանի պիոնները, և, հետեւ-
բար, նրանց մոտեցման մեթոդները տարբեր պիտի լինեն.

Վոր բարձր դասարաններում, վորտեղ արդեն ձևավորվում
և յուրաքանչյուր անչափահասի անհատականությունը, տղանե-
րի ու աղջիկների պահանջներում կա վոչ միայն այն, վոր ընդ-
հանուր և նրանց համար, այլև այն, վոր նրանց տարբերում և,
և, յեթե սա աչքաթող անենք, այս պահանջները կմնան չբայլա-
րարված :

Ենդ նրանք վոչ միայն նկատել ու ըմբռնել են այս, այլև

սկսել են ճիշտ դործել, հրաժարվել են սխալ, ընդհանուր մոտեցումից դեպի յերեխաները և անցել աշխատելու յուրաքանչյուր անհատ պիոների ու հոկտեմբերիկի հետ:

Վորոշ ընկերներ կասեն, թե ահա իսկապես գյուտ արիք: Մենք սա հո վաղուց դիտենք:

Բայց ի՞նչ ողուտ այն բանից, վոր այնպես, դործի ընթացքում, վորոշ ընկերներ շաղակրատել են, թե անհրաժեշտ ե աշխատել յուրաքանչյուր անհատ պիոների հետ:

Մեղ մտու քիչ չկան մարդիկ, վորոնք կարողանում են շաղակրատել յերեխաներին անհատական մոտեցում ցույց տալու անհրաժեշտության մասին: Իսկ այնպիսի մարդիկ, վորոնք կարողանան աշխատել յուրաքանչյուրի հետ առանձին, մենք շատ ու շատ քիչ ունենք:

Ընդհանուր մոտեցումը յերեխաներին, նրանց անհատական առանձնահատկությունները չիմանալը դարձել են այնպիսի տարածված չարիք, վոր հասունացել ե նրանից շուտով ազատվելու ուրիշ անհրաժեշտությունը:

Շատ ջոկվարներ «մասսայական աշխատանք» են կատարում յերեխաների հետ: Մենք մասսայական աշխատանքին դեմ չենք: Բայց միթե պարզ չե բոլորին, վոր յերեխայի հաջող դաստիարակության համար հարկավոր ե վոչ այնքան մասսայական աշխատանք, վորքան անհատական:

Քանի՞-քանի՞ կոպիտ, յերեխաներին այլանդակող սխալներ են առում «դաստիարակները», վորոնք արհամարհում են առանձին յերեխաների առանձնահատկությունները:

Վերցրեք, որինակ, մանկաբանների աշխատանքը Մոսկվայի, Լենինգրադի և Ռեկրախնայի շատ դպրոցներում:

Մանկաբանը մի հոգի յե դպրոցում, յերեխաների հետ նասակավ ե հանդիպում, բայց ուղղելու համար նրա մոտ բերում են բոլոր յերեխաներին, և նա, առաջին անգամ տեսնելով յերեխային, գնչուհու նման դուշակում ե, թե ով ե նա:

Այսպիսի աշխատանքի հետևանքով ի՞նչ բնորոշումներ ասես սովորական չեն դարձել մանկաբանների մոտ: «Իզնատյեվ Սերգեյը հետամնաց ե 71%-ով», «Պետրովա Զինան հետամնաց ե 78%»-ով: (Սա կատարվում ե № 1 դպրոցում, այստեղ՝ Մոսկվայի մոտ, Կոլոմնայում): Ինչո՞ւ 71%-ով: Ինչո՞ւ: Իսկ մտավոր հետամնացությունը բաժանում են «թեթև», «միջին» հետամնացության և «իդիոտության» կամ «դերիլության»: Ապա կան

«կոտղմալուծիչներ», «չարանենդներ», «դեֆեկտավորներ», «զըժ-ժար դաստիարակելիներ» և, «վերջապես, «անուղղելիներ»:

Պիտակ են փակցնում յերեխային և արգեն այս պիտակով ուղարկում դեֆեկտավորների դպրոցը: Այսուղ շատ սիալներ են անում, վորոնք այլանդակում են յերեխաներին: Անուղղելի յերեխաներ չկամ, կան անուղղելի կամ, ավելի նիշտ, դժվար դաստիարակելի մեծահասակ մարդիկ, վորոնք չեն ուզում աև, բըրուածան աշխատանք կատարել յերեխաների հետ: Բայց նրանց պետք է հաստատ ձեռքով ուղղություն տալ և դնել ուղիղ նաևապարհի վրա:

Հարկադիր ե, վորոգեազի ջոկվարներն ու մանկավարժները սովորեն աշխատել բավագույն ջոկվարներից ու մանկավարժներից: Զապրուժյում, Բելենկի դյուղում կար մի պիոներ Խոմենիկո աղդամունուզ: Նա չարություն եր անում, վիրավորում եր մանկավարժներին, և նրան համարում եցին «անուղղելի»: Բայց յերբ նոր ջոկվարն ու գալրոցի դիրեկտորը, տեսնելով, վոր այս յերեխան յեռանդուն յերեխա յե, վոր նրա յեռանդը յելք չի դըսում, նրան դարձրին դասարանի պայգ, —նա որինակելի կարգ ու կարգապահություն մոցըց դասարանի մեջ: Նրան պատասխանատու դարձրին այն նույն կարդի համար, վորի դեմ նա իր թերաճության պատճառով վրդովվում եր, և դործը հաջող դնաց:

Կարդացեք Սիմոնովայի գիրքը, և դուք կտեսնեք, թե ինչպես են աշխատում լավ ջոկվարներն առանձին պիոներների հետ:

Աշավառիկ Ոկտյաբրսկի ույանի 25-րդ դպրոցի ջոկվար ընկ. Ֆոմինի պատմածն իր աշխատանքի մասին:

«Իդորի հետ առաջին անգամ յես ծանոթացա մաթեմատիկայի դասին: Նրա մազերը գդզված եյին և շատ վաղուց չեյին խուզված: Յերբ դաստուն յերեսը դարձնում եր դեպի գրատախտակը, իգորն ուղղակի նստել չեր կարողանում. Նա առիթ եր վորոնում իր հարեւանի նստարանից դուրս քաշելու պայուսակը կամ կսմթելու ընկերոջը: Ուսուցչանոցում իգորի մասին յես լսեցի ամենաանախորժ գնահատականներ: Իգորին բնորոշում եյին իրեւ կոպիտ, անկարգապահ աշակերտի, իրրև քայլայիչի: Այս ամենը դրավեց իմ ուշադրությունը, և յես վորոշեցի ինչ ել վոր լինի պարզել, թե ինչով և ասլրում ու հետաքրքրվում իգորը, նրան դըավել պիոներական ջոկատի մեջ: Սակայն իմ առաջին վորձը

Հաշողությամբ չսրաակվեց : Մի անգամ դասերից հետո յես փորձ ճեցի խոսել նրա հետ իրեն հրապուրող բաների, տնային զրադառների մասին :

— Առանձնապես վոչնչով չեմ զրադվում : Առաջ ավելամոդել-ներ եյի չինում, — ասաց Իգորը և հեռացավ :

Յետ հասկացա, վոր նրա մոտ դեռևս այնպիսի վատահություն չեմ վայելում, վորպեսզի ինձ կարելի լիներ իրազեկ դարձնել եր դործերին :

Մի անգամ յես ներկա եյի յերրորդ ողակի հավաքույթին, վորտեղ անդամ եր Իգորը : Այս հավաքույթին Իգորը մի տեսակ անվճական, չհավատալով դործի հաջողությանը, հայտարարեց .

— ԱՇ, յեթե քիմիական լաբորատորիա հիմնվեր : Յաջորդ պաշտպանեցի Իգորի առաջարկը : Հաջորդ որը յես արդեն պայմանավորվեցի քիմիայի դասատուի հետ, վոր նա հանձն կառնի զեկավարելու պիտոնի իշխանությանը, ավանդել, յերեխան-ների գիտելիքների պաշարն աննշան եր : Իգորին, ինչպես և ու-րիշ յերեխանների, գրավում եյին գերազանցապես փորձերը : Սա-կայն այդ փորձերը նրան շատ զրավեցին : Այս բանը յես ըմբռնե-ցի այն կայծից, վոր բռնկվեց Իգորի աչքերում քիմիական լա-բորատորիայի մասին առաջին անգամ խոսելիս : Յետ ըմբռնեցի նաև այն, վոր այս հետաքրքրությունը յես պետք ե ոգտագոր-ծեմ : Մոտակա որերն Իգորը նվիրվեց քիմիական խմբակի կազ-մակերպման համար նախահաշվի կազմելուն և ջոկատի լաբորա-տորիայի համար շնոր վորոնելուն :

Հետ մնացողներին դարձնել առաջարեմ, խուլիգաններին՝ կարգապահ, կողիտներին՝ քաղաքավարի, ներփակվածներին՝ մարդամուտ ու կենաւուրախ, հասարակական սեփականության անփույթ վերաբերվողներին՝ նրա առավել ջերմ պաշտպաններ և այլն և այն ահավասիկ պիտներական զոկատի կոմյերիտական զեկավարի, դաստիարակություն զեկավարի ու մանկավարժի պմենա-գատվակոր, ամենաազնիվ խնդիրը :

Յեթե XVII կուսհամազում առվեց, վոր կուսակցու-թյան անդամը պետք ե լինի կուսկազմակերպության աշխատան-քի կենտրոնը, յեթե ՀամեկօթեՄ կենտրոնի XI պլենումն, ընկեր Ստալինի տուցումով, ազդարարեց, վոր յուրաքանչյուր կոմյե-րիտականի դաստիարակություն ե դմանուրը ՀամեկօթեՄ աշ-խատանքում, ապա առավելապես յուրաքանչյուր անհատ պիտնե-

թի հետ աշխատելը իմանականն է, ամենազլխավորը, վողնաշարք պիտմերական կազմակերպության դաստիարակչական գործունեցության մեջ :

Այս բոլորը նշանակում եւ արդյոք, վոր մենք ջոկվարների ու մանկալարժների բանակին կոչ ենք անում միմիայն շուկելու առանձին յերեխաների քերությունները :

Իհարկե, ովոչ :

Աշխատել յուրաքանչյուր պիտոների հետ, այս նշանակում եւ ե'լ ավելի մեծ չափով կարողանալ նկատել և նիշտ զարգացնել յերեխայի դրական հատկությունները, նրա ընդունակությունները :

Խորապես սիստեմում են նրանք, ովքեր այս հանգեցնում են միայն առանձնապես չնորհալի յերեխաների հետ աշխատելուն: Նրանց չափից գուրս գովել, ժամանակից շուստ դարձնել հերոսներ, — յնասակար բան ե:

Ընդունակ յերեխաներին հարկավոր եւ նաև հմտորեն քննադատել, դաստիարակել համեստություն, և վոչ թե փառասիրություն, աշխատասիրություն, և վոչ թե թեթևամատություն :

Իմ մեղ մոտ քիչ մարդիկ չկան, վորոնք յերեխաների վրա ուշադրություն են դարձնում կամ այն ժամանակ, յերբ նրանք մի արտակարդ բան կանեն, կամ այն ժամանակ, յերբ նրանք բացառիկ ընդունակություններ կհայտաբերեն :

Հարկ չկա ապացուցելու յերեխաներին այսպիսի մոտեցում ցույց տալու սխալ լինելը:

Հարկավոր եւ աշխատել ամեն մի պիտոների ու դպրոցականի հետ :

Միքանի դիտողություն հասակի ու սեռի առանձնահատկությունների առթիվ :

Այսեղ ել ինչքան ուղեք դրսեռովկում են զանազան հասակի յերեխաներին սխալ, մեխանիկական մոտեցում ցույց տալու միաստեր :

Հոկտեմբերիկը փայտի վրա ձի նստած վատ չի զգում իրեն խիզախ հեծյալի դերում: Իսկ տասնչորս տարեկանն ուղում եւ կրակել կարողանալ, իմանալ տեղադրությունը, արշավանքի գնալ: Բայց թարսի պես, այս բոլորին հակառակ գտնվում են մարդիկ, վորոնք տասնամյա ճստիկին դուրս են բերում ստարտ արագավագության ռեկորդ սահմանելու կամ նրան ստիպում են քաղաքական ճառեր արտասանել, իսկ տասնվեցամյա պատանուն փորձում են գրավել «մուկն ու կատուն» խաղով: Հոկտեմբերիկին հա-

ժողում են շինել գործող չողեմեքենա, իսկ տասնվեցամյա պատահու ձևոքը դրչահատ ու փայտ են տալիս և հանձնարարում ձի տաշել նրանից:

Ժամանակն ե, վոր մենք սովորենք կատարելությամբ իմանալ յերեխաների հասակի առանձնահատկությունները և մեր աշխատանքը կառուցենք այս առանձնահատկությունների համապատասխան:

Մի լուրջ կազմակերպական խոչընդուռ ել կա, վորը վոչ թե նպաստում, այլ խանգարում ե՝ յերեխաներին ընդհանուր մոտեցում ցույց տալուց անցնելու յուրաքանչյուր պիոների հետ առանձին աշխատելուն:

Խորքը վերաբերում է պիոներական մի ջոկատի մեջ համախմբված պիոներների քանակին:

Հին կանոնադրությունն ասում ե, վոր ջոկատը համախմբում է 50 պիոներ: Խրականում նրանք ուռչում հասնում են 60—70 հոգու: Ել այստեղ ի՞նչպես ուսումնասիրես յուրաքանչյուր յերեխայի առանձնահատկությունները:

Այսպիսի ջոկատների ջոկարները նույնիսկ իրենց պիոներների ազգանունները չդիտեն:

Մի՞թե պարզ չե, վոր կազմակերպական այս ձեւը սուր հակասության մեջ և գտնվում պիոներական կազմակերպության նոր խնդիրների հետ:

Ահա թե ինչու կենտկոմն առաջարկ ե մտցնում փոքրացնել ջոկատը, վորպեսզի նա ընդդրկի 40 հոգուց վոչ ավելի:

Կարծում ենք, վոր համագումարը հավանություն կտա այս առաջարկին:

ՍԻՐՈՂԱԿԱՆ ՇՄՌՇՈՒՄԸ ՊԻՌՆԵՐՆԵՐԻ ՄԵԶ

Ամեն մի կոնկրետ խնդիր, վորի իրականացումը պիոներից պահանջում է հայտաբերել իր ընդունակությունների, համառության մաքսիմումը նպատակին հասնելու մեջ, վորի հաջող լուծումը հասարակական խրախուսանք կառաջացնի, — մշտապես ամենակենդանի արձագանք ե գտել յերեխաների մեջ և կդանի:

Պատահական չե, վոր X համագումարի համար պիոներական նվերներ պատրաստող Խարիսվի պիոներների կոչն այնպիսի ջերմ արձագանք դտավ յերեխաների մեջ:

Պատահական չե, վոր յերեխաներն այնպես ջերմորեն արձագանքին կրծքանշաններ մտցնելուն, վորպիսիք են «Պատրաստ

յեղիք աշխատանքի և պաշտպանության», «Պատրաստ սահմատ-
րական պաշտպանության», պատանի վորոշիլովյան հրաձդիք, պա-
տանի ալիքուկառուցողի կրծքանշանները:

Այս բոլորը դիպան նպատակակետին, պատասխանեցին յե-
րեխանների ամենատկենդանի ձգառումներին:

Գիոներներն ուզում են շատ բան սովորել իրենց ջոկատում:
Յեկ սա մխանդամայն բնական ե, իսկ պետության շահերի համար
չափաղանց կարեոր նշանակություն ունի:

Այսոր դու պատանի ալիքուկառուցող ես, — վաղը դու կմեծա-
նաս և կզառնաս հիանալի ողաջու:

Այսոր դու պատանի ալիքուկանինիկ ես, — վաղը կմինես սու-
խանովյան-ելեկորիկ:

Այսոր դու ՊՍՊ նշանակիր ես, — վաղը կմինես բժիշկ:

Այսոր դու պատանի միջուրինական ես, — վաղը կմինես փորձ-
ված այգեղործ:

Այսոր դու մատղաշ անասունների շեփ ես, — վաղը կմինես
դուստրինիկ:

Ուրիշ խոսքով՝ փոքր հասակում դեռևս չկայումացած սկզբ-
նական հետաքրքրությունը դպրոցից և պիոներական կազմակեր-
պար-յումից դուրս գալու, իմքնուրույն աշխատանքային կյանքի-
մեջ մտնելու մոմենտին կամրանա, ի հայտ կգա և կվերանի սի-
րելի պրոֆեսիայի:

Ահա թե ինչու կոմյերիստիությունը պետք ե առանձին խնամ-
քով զարգացնի այս սիրողական շարժումը պիոներների մեջ:

Յեկ պիոներական ողակը, վոր ավելի հաճախ նիստեր ե դու-
մարում քննարկելով «աշխատանքի պլանը և կարգապահությու-
նը», ավելի շատ կործի, կշիմի, վորովհետեւ այս կրծքանշան-
ների նորմաների համար պատրաստվելն ու քննություն տալը-
պետք ե ծառայեն իրեւ ողակի աշխատանքն ուժեղացնելու մի-
լուրջ միջոց:

Ո՞վ պիոնի կազմակերպի այս ամբողջ աշխատանքը:

Իրենք պիոներական կազմակերպությունները, կոմյերիստիու-
թյան ղեկավարությամբ, դպրոցի ողնությամբ:

Ահա թե ինչու հենց պիոներները պետք ե դառնան զանա-
ղան խմբակների ու սիրողական խմբերի կազմակերպիչները,
նրանց առաջատար ուժը, թե խմբակներն իրենք պետք ե լայնո-
րեմ ընդգրկեն նաև սովորող վոչ-պիոներներին:

Ահա թե ինչու այժմ այլևս անհրաժեշտ չե «պատանի բարե-

կամներից հատուկ սեկտիաներ ունենալ բոլոր կամավոր ընկերություններում, և ՀամԱկածեՄ կենտրոն անհրաժեշտ ե դանում վերացնել դրանք:

Արդյոք սա վորեն իրավունք տալիք և կամավոր ընկերություններին մի կողմէ կանգնելու այս սիրողական շարժումից :

Ել ավելի ուժգնորեն պետք է ամրացնել կամավոր ընկերությունների ապահար, փորոնք կոչված են պահպարկելու յերևաններին:

ԵԼ ավելի լրջորեն ու դործնականորեն պետք եւ նրանք ոգնության հասնեն պիոներական կազմակերպություններին իրենց կաղըրերով, նյութական բազայով, իրենց զիտելիքներով ու փորձով:

ԸՆԿԵՐԾԵՐ : Դաստի ՅՈՒՆԻ ՖՐԱՆ ՄԱՅԸՆԴՐԱԳՈՅՆԻ ԽԵՎԱՅ ՄԱԿԱՐԱ ՀԱՅԻ

ՄԵՆՔ ԹԱԿԱԿՈՒԽԵԼ ԵՆՔ ԱՊԳԻԱԼԻՍՏՈՎԱԿԱՆ ԱՆԴԱՍԱՎԱՐԴ ՀԱՍԱ-
ՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒԺՄԱՆ ՄԻ այնպիսի լրջան, յերբ առաջին դժի-
վրա յեւ մզվում սոցիալական բոլոր միջնախավների յերեխաների
կոմունիստական վերաբաստիարակության և նրանցից կոմունիդ-
մի գործին նվիրված՝ սոցիալիստական նոր անդասավարդ հասա-
րակության գիտակլից աշխատավորներ պատրաստելու խնդիրը :

Ուստի մենք պետք եւ պիտմբների շարժերն ընդունենք բոլոր յերեխաներին : Ժամանակն ե , վոր դադարենք յերեխաներին բաժանելու բանվորների , ծառայողների , ինտելիգենցիայի կամ գույքականական նորությունների :

Այսինչ գտնվում են ընկերներ, վորոնք դեմ չեն չափաղանց խիստ պահանջներ դնելու պիոներական կազմակերպության մեջ մտնողների առաջ։ Յերեխաններին քաղաքական հարցեր են տալիս, պարզելով տասնամյա յերեխանների «քաղաքական համոզմունքները», պահանջում են, վոր յերեխան «կանգնած լինի մարք-սիստական-լենինյան աշխարհայացքի պատփորմի վրա»։

Ել ի՞նչ պիտի անի պիոներական կազմակերպությունը, յեթև նա սկսի ընդունել արդեն պատրաստի, գիտակից ու կազմակերպված յերեխաների։ Այն ժամանակ նա այլևս անելիք չի ունենա։ Տարվում, Հրապուրալում են այս ընկերները, սրանց պետք է ձգել, վորովհետև այսպիսի մոտեցումը պիոներների ընդունելությանը խորապես վնասակար է։ Զի կարելի կուսակցության և

կոմյերիտմիության կանոնադրական պահանջները մեխանիկորեն կերպուել յերեխաների կազմակերպության վերաբերմամբ: Զի կարևոր թույլ տառ տաքղղուս վարչարարներին ոլիոներների շարքերից հեռացնելու այն յերեխաներին, վորոնք կատարել են այս կամ այն գանցանքը, նկատողություններ ու տույժեր գրել: Նրանց դաստիարակել ե պետք, և վոչ թե հեռացնել, դաստիարակել, և վոչ թե նկատողություններ գրել:

Բայց այս չեն նշանակում, թե պիոներների շարքերի մեջ անհիմն կերպով կարելի յե դրանցել ամբողջ դաստիարաններ, վոր կարելի յե պիոներական ճամբար յեկած ամեն մի դպրոցականի վղին փաթաթել պիոներական վղկապը, առանց նրա ցանկությունը հարցնելու: Վոչ, պիոներների շարքերն ընդունելը տեխնիկական դործ չե: Արդյոք յերեխան պիոները ընդունվելուց հետո ավելի լավացավ, քան առաջ եր, նա զգա՞ց իր պիոներական վղկապի արժեքը, նա զգա՞ց, վոր իրեն ընդունում են յերեխաների՝ լենինի անվան կազմակերպության մեջ: Ի՞նչ տարբերություն կա այսպիսի պիոների և վոչ-պիոների միջև: Պարզ չե՞ արդյոք, ընկերներ, վոր այսպես պիոներ ընդունել չի կարելի, վոր այս բանը բոլոր յերեխաների աչքում իջեցնում և պատանի պիոների արժանապատճենը, յերեխաների աչքում պատանի պիոներների կոչումը զրկում ե իր ձգողական ուժից: Յերեխային զնկատ ընդունելու համար հարկավոր ե պատրաստել, իսկ նրան պատանի պիոներների կազմակերպության մեջ ընդունելու և հանդիսավոր խոսուում տալու բան մոմենտը պետք ե դառնա նրա կյանքի մի նշանավոր անցքը:

Բայց պիոներական կազմակերպությունը մատչելի պիտի լինի Խորհրդային յերկրի բոլոր յերեխաներին:

Ենք նորեկին պիոներ ընդունելու յերկրորդ որը չպետք ե մոռանալ նրան, այլ ներդրապվել պիոներական ջոկատի բազմակողմանի դործունեյությամբ, ոգնել նրան դառնալու իսկական պիոներ:

ԶՈԿԱՏԻ ՑԵՎ ՌԴԱԿԻ ՀԱՎԱՔՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համկարեցն կենտկոմը ստուգեց, թե ինչպես են անցկացվում պիոներական ջոկատների հավաքույթները: Ստուգումը նրանց կատարման մեջ հայտաբերեց եյական թերություններ, վորոնք պետք ե ուղղել:

Դիմենք փառատերին:

Ոկտյաբրսկի ռայոնի 22-րդ դպրոցի, պըռհետարսկի ռայոնի 5-րդ դպրոցի, Ենգելս քաղաքի 10-րդ դպրոցի, Շչելկովսկու շրջանի Տրուբինո գյուղի դպրոցի և այլ ջոկատների հավաքույթները քիչ են տարբերվում մեծահասակների ժողովներից։ Հավաքույթները բաժանվում են «պաշտոնական» և գեղարվեստական մասերի։

Յերեմին հավաքույթներում ընտրվում են նախագահություն, գրվում են վորոշումներ ու արձանագրություններ, ջոկվարները, մանկավարժներն ու հրավիրված ընկերները յերկար ճառեր են արտասահնում։

Աա՝ մի ծայրահեղություն։

Այսպես չպետք ելինի պիոներական հավաքույթը։

Բայց կա նաև ուրիշ ծայրահեղություն։

Բազմաթիվ ջոկատներում, ինչպես, որինակ, Ֆրունզեյի ռայոնի 5-րդ, 9-րդ և 37-րդ դպրոցներում պիոներական հավաքույթները վեր են ածվում յուրահասությունների, վորտեղմիենույն պիոներները հանդես են գալիս իրենց համերգային «համարներով», իսկ մնացած պիոներները ներկա յեն լինում իրերև պասսիվ դիտողներ։

Բնական ե, վոր այսպիսի հավաքույթը դուրկ եղածիական նշանակությունից։

Ի՞նչը պետք ել կազմի հավաքույթի բովանդակությունը։

Պիոներների առաջադիմության ստուգումը։

Գոյություն ունեցող վարքի կանոններն առանձին պիոներների կողմից կատարելու ստուգումը։

Պիոներ ընդունելը։

Զրույցներ։

Կրծքանշանների նորմաների հանձնումը։

Ֆիզկուլտուրա։

Գեղարվեստական յերկերի ընթերցում ու քննություն։

Թաղեր։

Ներջոկատային հարցերի քննարկում (խմբագրական կոլեգիակի ընտրություն, խմբակի հաշվետվություն, աշխատանքի պլանի քննում)։

Պատրաստություն ջոկատային յելույթների, դրանքի, եքուրուսիայի։

Հավաքը վերջացնել զրուանքով, լողալով, խաղերով։

Միքանի դիտողություն ողակի աշխատանքի մասին։

Մի շարք ջոկվարներ դանդաստվում են, վոր վորոշ ողակա-
վարներ վաստ են աշխատում: Հավաքվում են ու չդիտեն, թե ինչ
անել, քննում են ռաշխատանքի պլանը» և «կարդապահությունը»:
Ինչո՞ւ յեւ տեղի ունենում ար:

Ամենից առաջ այն որատնառով, վոր այս ողակները սիսալ են
համալրվում: Յերբ մի ողակի մեջ համարված են այլպիսի յերե-
խաներ, վորոնց միջև չկա իսկական, մոտիկ մտերմություն,
վորոնց շահերը չափազանց տարրեր են, —ողակը գառնում և քիչ
աշխատունակ:

Համառ ելեկտրիկները կուպեյին շինել ելեկտրոմուսու կամ
հեռախոս, իսկ ուղղմախաղները սիրողները կուպեյին սովորել Մոր-
գեյի այրութենը և այն և այլն: Բայց սիրած վործի փոխարեն
նրանք պետք եւ քննեն, ասենք, «կուլտողապարին» պատրաստվելու
պլանի:

Իսկ ավելի լավ՝ չե՞ր լինի, յեթե ողակը կազմվեր միմյանց
հետ ավելի համերաշխ յերեխաներից, վորոնց շահերն ամենից
ավելի մոտիկ են և վորոնք մոտիկ են ապրում միմյանց:

Այնուհետև, յեթե ողակը վատ և աշխատում, հավանաբար
այդ նրանից և, վոր նրան չեն ընտրել ողակավար, ում ողեաք
եր: Ողակավար լինելու համար քիչ և միայն ուստան դերազան-
ցիկ լինել: Բացի սրանից, հարկավոր և ավելի ուժեղ բնակվորու-
թյուն ունենալ և կարողանալ անել այն, ինչ չեն կարողանում
անել մնացած պիտներները: Այն ժամանակ ողակավարը կազմա-
կերպիչ ուժ կդառնա ողակում:

Յեթե ողակը վատ և աշխատում, հավանաբար ջոկվարը բա-
վականաչափ աշխատանք չի կատարում ողակավարների հետ,
չի հրաշանդավորում նրանց, չի ողնում նրանց հայտաբերելու սե-
փական նախաձեռնությունը:

Վերջապես, յեթե ողակը վատ և աշխատում, աղա, հավա-
նաբար, նա չի դրազվում նրանով, ինչով պետք է:

Իսկ ինչո՞վ պետք եւ դրազվի ողակը:

Նորեկին պատրաստել պիտներ ընդունվելու համար:

Ստուգել վարքի կանոնների կատարումը:

Պատրաստվել դանաղան սիրողական կրծքանշանների նորմա-
ները հանձնելու:

Գնալ թատրոն, կինո, համերգներ:

Կազմակերպել եքսկուրսիաներ, զրոսանքներ, ձկան վրբս և
այլն:

Կարդալ ու քննել Հետաքրքրական գրքեր, լրագրեր, ժուռ-
նալիներ :

Խաղեր սարքել :

Նոր յերգեր սովորել :

Կատարել վորմեն հասարակական առաջադրություն :

Պատրաստվել ջոկատի հավաքույթին :

Յեկ այլն և այլն :

Միշտ եւ գործ կըտնիիք: Խոկ լուրջ գործը ամենակին ճամփալի
գործ չեւ: Ամբողջ հարցն այն եւ, վոր ողակի (Հենց նա յե պիո-
ներկաղմակերպության «Հիմնական ողակը») աշխատանքը լրջորեն
զեկալարպիի:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻԿԱՆԵՐԻ ՄՍՍԻՆ

Արմատապես պետք եւ փոփոխվի Հոկտեմբերիկներին ցույց
տրիող մոռեցումը :

Ժամանակն եւ դադարելու ցածր դասարանների յերեխաներին
բաժանել հոկտեմբերիկների և վոչ-հոկտեմբերիկների:

Բոլոր փոքրիկ դարրցականները հոկտեմբերիկներ են:

«Հոկտեմբերիկ» անունն ինքը պետք եւ ձգի դաշտոցականին,
կարծես թե նրան ասելու՝ ավելի լավ յեղիր, ավելի լավ սովո-
րիր, խաղա, հանդստացիր, քեզ լավ պահիր — չե՞ վոր դու Հոկ-
տեմբերիկ ես :

Համարվածախան ձեռվ պետք եւ փոփոխվի նրանց Հոկվարնե-
րի դերը :

Միլիոնավոր Հոկտեմբերիկների դաստիարակությունը միայն
կոմյերիտմիության ուժերից վեր եւ:

Մենք պետք եւ նրանց դաստիարակության մեջ ամենից առաջ
լայնորեն ներդրավենք ծնողներին: Դարրցները պարտավոր են աշ-
խատել ծնողների հետ, հաղորդել նրանց անհրաժեշտ մանկավար-
ժական գիտելիքները: Մանկավարժները պետք եւ աշխատեն Հոկ-
տեմբերիկների դաստիարակության վրա:

Խոկ ինչպես պետք եւ աշխատեն Հոկվարները:

Հոկվարներ պետք եւ դատել բարձր դասարանների կոմյերի-
տականներից ու պիտներներից:

Հոկտեմբերիկներն ուղղում են խաղալ — թող նրանց ողնի
Հոկվարը:

Նրանք ուղղում են յերգել—ողնել նրանց որանում:

Նրանք ուղղում են կարդալ—լավ գիրք տալ նրանց:

Նրանք ուզում են մի բան շինել—ոգնել նրանց :

Սովորեցնել նրանց քաղաքայի արություն, մաքրասիրություն, մաքրություն :

Խնամքով պաշտպանել նրանց առողջությունը :

Ահա թե ինչ պիտի անձն հոկվարները :

ԶՈԿՎԱՐԻ ՄԱՍԻՆ

Ենք այսպես, մեզ մոտ կան պիտներների առաջավոր ու հետ մնացող ջոկատներ, ընդուրում վերջիններու դեռ չատ-չատ են:

Մենք բավարարված չենք պիտներական շատ ջոկատների աշխատանքով :

Բայց կոմքերինուական ու պիտներական քիչ դնկալար աշխատառողներ չկան, վորոնք չեն տեսնում պիտներական այս ջոկատների թույլ աշխատանքի արմատական պատճառները :

Նրանք կարծում են, վոր յերեխանների հետ կատարվող աշխատանքի բովանդակության ու մեթոդների մեջ են միայն այն արատները, վորոնք կանխորոշում են այս ջոկատների աշխատանքի թույլ կողմերը:

Խոսք չկա, վոր ակներև են պիտներական շատ կազմակերպությունների աշխատանքի բովանդակության ու մեթոդների առենալուրջ թերությունները: Այս հարցի դրումը Համլկօն Ա համագումարում վկայում եւ, վոր մեր հաստատուն կամքն ե այս գործի մեջ մտցնել արմատական, եյական շտկումներ:

Սակայն այն նորը, վոր մտցվում ե այս հարցի մեջ, պարապժամանակիա յեղակացությունների պառուղ չե: Այդ բալորը հիմնը վկած ե գոյություն ունեցող փորձի, պիտներական առաջավոր կազմակերպությունների կենդանի փորձի ուսումնասիրման և ընդհանրացման վրա:

Ինչո՞ւ մեզ մոտ միաժամանակ գոյություն ունեն առաջավոր ջոկատներ, վորոնք ապրում են հարուստ, գաղափարային, ստեղծարար կյանքով, և թույլ ջոկատներ, վորտեղ ամենահաճախակի հյուրը լինում են անկուլտուրականությունն ու ձանձրույթը:

Թույլ տվեք համեմատության համար հակիրճ նկարագրել յերկու ջոկատների աշխատանքը:

ՎԵՐԱ ՍՄԻՐՆՈՎԱՆ ՑԵՎ ՆՐԱ ԶՈԿՎԱԾ

Վերա Սմիրնովայի ջոկատը համարվում եւ Բառմանի սայանի լավագույն ջոկատներից մեկը: Ջոկատի վրա դրված ե ջոկվարին 340

Դաստիարակչական անխոռնջ աշխատանքի կնիքը. Ընկերական խոր դողմումը, յերեխանների բարձր գիտակցականությունն իրենց պիոներական սրատվի վերաբերմամբ, ողբոներական ողարտականությունների վերաբերմամբ արտահայտվում են ամենուրեք: Զոկատը կազմված է 39 հոդուց (դասարանը՝ 41), նրանցից 9 գերազանցիկ են: Դասարանը դպրոցում համարվում է լավագույնը զարգացման մակարդակով, առաջադիմությամբ և ներքին մեծ կարգապահությամբ: Համարյա բոլոր պիոններները վորոշիլովյան պատանի հրաժիգներ են, իսկ կլավա Զայցեվան ռայոնի լավագույն սնայութերն են: Ռայոնի չմուշկային մրցություններում հաղթանակած 2 պիոններ դաստված են քաղաքային մրցության համար:

Առաջին ողակի ողակալվար Դուսյա Ցուկերմանն սքանչելի շախմատիստ և և նույնպես բռնում է ռայոնի առաջին տեղերից մեկը:

Առաջին ողակը Խ համարդումարի առթիվ շինում և մետրոյի հետաքրքրական շարժական մողել: Զոկատի և ողակների հավաքույթներում քննալի են. մի շարք հետաքրքրական դրվեր:

Անցած տարի ջոկատը ռադիոկայանի կոմյերիստիության կոմիտեի ողնությամբ մեկնելով յենթաշեֆ կոլտնտեսություն, այն տեղ կազմակերպել ե պիոններական ջոկատ և ամբողջ տարին կապ պահպանել նրա հետ, ողնելով ակտիվիյն (կոլտնտեսական յերեխաններն արձակուրդի ժամանակ հյուրասիրվեցին դպրոցում): Զոկատի խորհրդի նախագահն անձամբ կապված է կոլտնտեսային յերեխանների ջոկատի նախագահի հետ: Զոկատում մեծ դիսկուսիա տեղի տնօցավ մտերմության և ընկերության մասին: Զոկատը առավելապես ողակներով հաճախ գնում է կինո (վերջերս միատեղ դիտել են «Ընկերուհիներ», «Զուլբարս» նկարները), յեղել ե թանգարաններում (պոլիտեխնիկ թանգարան, Տրետյակովյան պատկերասրահ, Տուլսոյի թանգարան, 1905 թ. հեղափոխության թանգարան), թատրոնում («Յեվգենի Ոնեգին», «Պիկովյայ դամա», «Սերյոժա Ստրելցով», «Չապայևվ»), համերգներում:

Սա ջոկատի կատարածի մի փոքրիկ մասն է:

Ահա և մյուս ջոկատը:

«Նեսկուչնի ավանում ջոկատը քայլայիլ է: 1934 թ. հունվարին մեզ մոտ կազմակերպվեց պիոններական ջոկատ: Ակզյում մեզ մոտ ջոկվար եր Պրոսվետով իդնատը: Մենք ամբողջ ժամանակ գնում ենք Պրոսվետովի մոտ, վորպեսզի նա մեզ հետ պա-

բասկի, և խնդրում ելինք նրան։ Բայց նա մեղ վրա ուշադրություն չեր դարձնում։ Անցավ վորոշ ժամանակ։ Պրոտվետովվը մեղնից հեռացավ։ Մենք սպասում ելինք, բայց ջոկվարը չկար, հետո վորոշ ժամանակ անց նշանակեցին ուրիշ ջոկվար՝ Զախարով Տիմոֆեյին։ Տիմոֆեյն ել մեղ հետ չաշխատեց, այլ դնաց ինչվոր տեղ։ Դարձյալ մի ուրիշ ջոկվար նշանակեցին՝ Կոմղարյով Դանիլին։ Դանիլը վերոշ ժամանակ պարագեց մեղ հետ դարձնանը և դնաց քաղաք վաստակի հետեւց։ Մենք, ոլիսներներս, միքանի անդամ գնացինք կոմյերիտկաղմակերողչի մոտ, վորակեսզի մեղ ջոկվար տան, բայց մեղ վրա վոչ մի տեղ ուշադրություն չեն դարձնում, մեր ջոկատն ել քայլայլեց, վորակեսն մենք ջոկվար չունենք։

Մենք ուշում ենք հավաքույթներում պարագել, բերքը պաշտպանել, խաղեր խաղալ և այլն։ Բայց մեղ վոչ վոչ չի կազմակերպում։

ՊԻՌԱԵՐՆԵՐ՝ ՍԵՆՉՈՒԳՈՎ ՍԵՐԳԵՅ
ՑԵՎ ԱՖՈՎՁԵՎ ՑԱԿՈՎ

Նեսկուչնի աղան, «Ամբացնենք միությունը» կողմանաւություն — Վորոնեժի մարզի Բորբովմակի շրջանի Նիկորեցկի դյուզիասրհուրդ»։

Դժվար չեն նկատել այստեղ, թե բանն ինչումն է։

Այսինքն ջոկատում անփոփոխ աշխատում և միենույն ջոկվարը, առաջատլոր կուլտուրա և բոլշևիկյան կազմակերպվածություն ունեցող կոմյերիտական, բարձր դաղափարական, աշխատանքը, Փիղկուլտուրա սիրող, մանկավարժության հիմունքներն իմացող մի մարդ, վորը մշտագեն հիշում և անձնական որինակի մեծագույն ուժը յերեխաների դաստիարակության, նրանց բնակուրության, սովորությունների ու հակումների կազմավորման համար։ Ջոկատի ամեն մի միջոցառումին նա պատրաստվում և առանձնապես, ձգտելով նրա մեջ մտցնել նոր, թարմ ու կուլտուրական բովանդակություն։ Նա թշնամի յեւ շարլոնին, կազյոնչինային, Փորմալիզմին։

Մեկ-յերկու ամսվա ընթացքում հերթով յերկրորդ ջոկատի դլուխ են կանգնել մարդիկ, վորոնց համար թանգ չի յեղել նրանց հանձնարարված դործը, վորոնք սրան վերաբերվել են հանցավոր թեթևամտությամբ, վորոնք իրենց քաղաքական ու կուլտուրա-

կան մակարդակով ցածը են կանգնած յեղել իրենց ղեկավարած պիտոններներից :

Ահա թե ինչումն եւ ամբողջ գործը, ընկերներ :

Ինչպես ջոկվարն եւ, այնպես ել ջոկատն եւ :

Յեթե ուղում ես պիտոններական ջոկատի աշխատանքը դարձնել հարուստ ու դուռազնեղ՝ նրա գլուխ դիր հարկավոր հատկություններով ոժտված կոմյերիտական ջոկվար :

Ինքեր կոսարելին իրավացիորեն ասաց ուկրաինական ջոկվարների՝ կենտկոմ յեկած պատղամավորությանը .

Յեթե դու, ջոկվարդ անդրագետ ևս՝ չզարմանաս, յեթե պիտոններին ել սկսեն «փայլել» անկուլառուրականությամբ :

Յեթե ծխախոտը բերնիւլ յերեխաններին սովորեցնես չծխել՝ չզարմանաս, յեթե դպրոցում հանդես դա ծխողների ակումբ :

Յեթե ինքդ յերեխաններին զարմացնես լուսմակեն-պրոլետարական ժարգոնով՝ «պամատ» («զիստիել»), «շոպար» («դրուժվացնել»)՝ չզարմանաս, յեթե այսպիսի նեխած ժարգոնով սկսեն խոսել նաև յերեխանները :

Յեթե խարես յերեխաններին, չկատարես քո խոստումները՝ չես նկատի, թե ինչպես ինքդ կդառնաս ստի անտաշտոն կաղմակեր-պիէ :

Յեթե ինքդ քեզ պահես վոչ-մաքուր, կեղտոտ՝ ապարդյուն են քո ջանքերը յերեխաններին մաքրության հրամիրելու :

Յեկ այլն և այլն :

Բոլորին հայտնի յե, վոր ՀամեկօթեՄ կենտկոմը ձեզ հետ միասին հոկայական աշխատանք ե կատարել ջոկվարների կազմն ընտրելու և ամրացնելու դործում։ Այստեղ նստածներից վոմանց կենտկոմից բաժին հասել ե ջոկվարների ընտրությանն անուշա-դիր վերաբերվելու համար :

Բայց միայն անհուսալի, կյանքից կտրված դրասենյակայինը կարող ե մտածել, վոր այս վերանայումով ավարտված ե ջոկ-վարների ընտրության ամբողջ գործը և այժմ կարելի յե դափնի-ների վրա հանդէլ :

Վերանայումով վոչ թե ավարտված, այլ միայն սկսված ե այս վիթխարի աշխատանքը :

Հետաքրքրվել եք դուք արդյոք, թե ինչ ե տեղի ունեցել վերանայումն ավարտելու յերկրորդ որը :

Պիտոններական շատ ջոկատներում ջոկվարներ արդեն չկան, և

պատահական չե, վոր այս ջոկատների պիտոններներն իրենց ջոկատներին անվանել են «անտեսանելի մարդ»:

Համագումարն այլևս չի կարող համդուրժել այնպիսի դրություն, յերբ ջոկատների մի մասը նորից ու նորից մնում ե առանց ջոկատների, իսկ ջոկատներից դեռ շատերն իրենց քաղաքան ու կուլտուրական զարգացման մակարդակով չեն համապատասխանում տարրական պահանջներին:

Իսկ չե՞ վոր մենք պետք ե կատարենք դեռ տասնյակ հազարավոր ջոկատների լնաբության աշխատանք, քանի վոր մի ջոկատում համախմբված պիտոններների քանակի պակասումը բավական կմեծացնի ջոկատների թիվը:

Արդյոք բոլոր ընկերները պարզ հաշիվ տալի՛ս են իրենց, թէ ինչ ե նշանակում այս:

Ինչպե՞ս կարող են նրանք այսպես անօղատասխանատու կերպով պահել իրենց:

Մենք իրենց իսկ կոմյերիտականների մեջ չենք ստեղծել ջոկատը լինելու, այս դժվարին ու պատվալոր աշխատանքին զնալու գործումը:

Ի՞նչ պարզեց ջոկատների վերանայումը:

Մենք կոմյերիտականներին աշխատանքին յենք ուղարկում իրեւ ջոկատը, իսկ նրանցից շատերն այս աշխատանքին չեն ուղում գնալ:

Ի՞նչ պետք ե անենք մենք:

Մենք պետք ե ստեղծենք այնպիսի դրություն, վոր կոմյերիտականներն իրենք գործում ազտես դառնալ ջոկատը, իսկ մենք վոչ բռնը թույլ տանք այս աշխատանքին:

Իսկ որա համար հարկավոր ե ջոկատի արժանապատճությունը հասցնել այնպիսի բարձրության կոմյերիտականների աչքում, վորպիսի բարձրության վրա մեզ մոտ պետք ե լինի խորհրդային յերեխանների դաստիարակը:

Ժամանակին ե դադարեցնելու ջոկատներին վատարանելը: Հարկավոր ե նրանց պաշտպանել վորոշ տաքդլուխ վարչարանների գոռոցից: Հարկավոր ե նրանց, այս վարչարաններին հասկացնել, վոր մի շարք ջոկատների թերությունները լուրջ քննադատելու և վարչական գոռոցի միջն վոչ մի նմանություն չկա, — նրանց միջն անդունդ կա:

Նորերս Մոսկվայի նորինի անվան գործարանի բանվորների ամբողջ կոլեկտիվը տոնեց ջոկատը Սաշա Սալտիկովի անհերթափոխ

աշխատանքի հորելյանը։ Բանվորներն ու բանվորուհիներն ըստ
արժանվույն պարզևատրեցին իրենց յերեխաների սիրելին =
Յեղ սա կատարվեց վոչ թե ծածուկ, այլ հրապարակով, մեծ
հանդիսավոր յերեկոյին։

Իսկ վո՞րն եւ արդյունքը։

Նիմոց կոմյերիխտական յեկան ԼԿՅԵՄ կոմիտե և գիմում ավին,
խնդրելով իրենց ջոկվար հաստատել։

Նրանցից լավագույններին, վորոնք բավարարում են կենտկո-
մի պահանջներին, ույկոմը հաստատեց ջոկվարներ։

Սա կոմյերիխտականների ճիշտ դաստիարակության, ջոկվարին
ճիշտ վերաբերվելու առաջին և ուրախալի արդյունքն եւ։

Այսոր այս կամավորները ֆիչ են, բայց վաղը նրանք կլինեն
հազարներ, յերեւ մենք ձեզ հետ, մեր կոմյերիխտական մամուլը,
այս շարժումը կազմակերպեն։

Այո՛, իրրև ջոկվար աշխատելը դժվար եւ։ Բայց յմ՞րք են
կոմյերիխտականները վախեցել դժվարին խնդիրներից։ Լենինյան
կոմյերիխտմիության ուժը կպատի ամեն մի դժվարին խնդրի։ Ամ-
բողջ հարցը միայն այն եւ, վոր նրան ձեռնարկվի իր կադրերի,
իր փորձի ամբողջ ուժով, վորակեսղի կես ճանապարհին կանդ
չառնենք, այլ գործը հասցնենք մինչեւ վերջ։

Այսուհետեւ հեռանկար պիտի տալ ջոկվարին, առանձնապես
վճարովի ջոկվարին։ Աշխատելով իրրև ջոկվար, նա կարող ե
դառնալ մանկավարժական բուհի հեռակայող, հետո դնալ մանկ-
տեխնիկում կամ ինստիտուտ բարձր թոշակով և դառնալ ման-
կավարժ։

Բայց ջոկվարներ ընտրելը բնավ ամբողջը չեւ։ Նրանց ակտք
եւ սովորեցնել յերեխաններին ղեկավարելու վարպետությանը։

Սրա համար հարկավոր եւ փոփոխել դպրոցների կոմյերիխ-
տկազմակերպիչների և ավագ ջոկվարների աշխատանքի մեթոդները։

Այ մեզնից վորմեն մեկին ուղարկելին ջոկվար ։ Գնում ես
դպրոց, իսկ ավագ ջոկվարը կամ կոմյերիխտկազմակերպիչը, քեզ
հետ չխոսած, չհրահանդած, ասում եւ. գնա, ասենք՝ ն-բու «բ»
դասսարանը — այնտեղ քեզ սպասում եւ քո ջոկատը։

Ներկայանում ես յերեխաններին։ Քեզ շրջապատում եւ յերե-
խանների բազմությունը, աղմկում են, նայում են բոլոր կողմե-
րից, և ով գիտե, թե ինչ պիտի անել նրանց հետ։

Զարժանալի չեւ, վոր միքանի կոմյերիխտականներ յերկրորդ
անդամ չեյին յերմում ջոկատում։

իսկ այսպիսի ավագ ջոկվարը փոխանակ ընտրելու և հրա-
ձանդելու ջոկվարներին, ախ ու վախ և անում, ընկնում և ջոկո-
տից ջոկատ և ողակների հավաքույթները, դառնալով մի յուրա-
ռեսակ «շտագ ողնության» կառք.

— Դե, յերեխաներ, ինչպէ՞ս են գործերը: Դե, յեղեք պատ-
րաստ, մի՛շա ողաբարստ, — և վաղում և առաջ:

Դպրոցի պիտիներկազմակերպության ավագ ջոկվարը և կոմ-
յերիտկազմակերպիչը պետք և դառնան ջոկատների ջոկվարների
առաջին հրանդղիչները: Այս և նրանց գլխավոր խնդիրը: Հենց
սրա համար ել նրանց նշանակել են:

Հարկավոր և վերացնել տնայնագործությունը, վոր կա ջոկ-
վարների ուսուցման մեջ:

Փորձը ցայց և տվիել, վոր ջոկվարների սեմինարները պետք
են, բայց նրանք չատ քիչ բան են տալիս նրանց: Ժամանակն և
Աւկրաինայի, Մոսկվայի, Լենինգրադի որինակով ամենուրեք անց-
նելու ջոկվարների ստացիոնար, մշտապես գործող դպրոցներ հիմ-
նելու բոլոր մարզերում ու խոշոր քաղաքներում: Յեզ ամենա-
գլխավոր՝ արագ ու ոսկերտիվ կերպով պիտներական ջոկատ-
ների առաջավոր ջոկվարների լավագույն փորձը փոխանցել
մյուսներին:

Հարկավոր և ջոկվարներին սովորեցնել յերեկոյան մանկական
նիկումներում, առանց աշխատանքից կտրելու, ստեղծելով հա-
տուկ բաժանմունքներ:

Հարկավոր և քննել այն հարցը, թե չի՞ կարելի արդյոք իրրե-
ջոկվար աշխատանքի վերցնել մանկականիկումներն ավարտան-
կոմ յերիտականներին, համապատասխան չափով ընդարձակելով
մանկականիկումների ընդունելությունը:

Բայց ջոկվարը չի կարող և չպետք և ամեն ինչ իմանա ու
ամեն ինչ անի: Նա ամենազետ չե և չպետք և լինի այդպիսին:
Նա յերեխաների կոմունիտական դաստիարակության կազմակեր-
պիչն է:

Մենք պետք ե ջոկվարներին ողնելու համար ներդրավենք
կուսակցական-կոմյերիտական կազմակերպության լավագույն ու-
ժերը, կարմիր բանակի և խորհրդային ամբողջ առաջավոր ին-
տելիքենցիայի լավագույն ուժերը: Թող նրանք իրենց քաղաքա-
կան թե՛ ընդհանուր կուլտուրան, թե՛ վարպետությունը փոխան-
ցեն խորհրդային յերեխաներին: Նրանց գործունեյությունը շատ

արժեքավոր ու թարմ բան կմտցնի պիոներական ջոկատների աշխատանքի մեջ:

Բայց ջոկվարներն ամենից առաջ սբետք և ամենասերտ համազործակցությունը ստեղծեն դասարանային ղեկավարների ու մանկավարժների հետ:

Չոկվարին մենք ասում ենք՝ տիրապետիր մանկավարժական վարպետությանը, սովորիր ու սովորիր:

Մանկավարժին մենք ասում ենք՝ ուսումնասիրիր պիոներական կարգակերպության աշխատանքը:

Չոկվարիր ու մանկավարժի, վոլխաղարձ՝ ողնությունը կկազմի մի ուժ, վորն ընդունակ երարձը աստիճանի վրա դնելու անող սերնդի կոմունիտարական դաստիարակության դորձը:

Մենք կարող ենք և սբետք և ստեղծենք բարձր գաղափարական, իրենց դորձն իմացող ու սիրող ջոկվարների կայտն կաղըրերի: Մենք պարտապոր ենք այս անել: Եթէ, կոտրելով վորոշյուրոկրատների ու զրասենեկայինների անտարբերությունը, այս խնդիրը մենք կլուծենք ինչ ել վոր մինի:

VI. ՅԵՐԵՒԱՆԵՐԻՆ ՊԱՇՏՈԱՆԵԼ ՀԱԿԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Զի կարելի զեկուցումը վերջացնել, գեթ համառոտ գծերով չնոսուելով ՀամլեթեՄ խնդիրների մասին՝ խորհրդային ժողովը դիմումից իմաստիների կողմից յերեխաների առանձին խմբերի մեջ հակածողվրական իդեոլոգիայի տարրեր պատվաստելու փորձերի դեմ պայքարելու դորձում:

Սա գառակարգային պայքարի վերաբերյալ հերթապահ կետ չե, ինչպես կարծում են վորոշ ընկերները: Իդուր են միքանի ինքնահանդուտացիած մարդկակ կարծում, թե իրենց շուրջն ամեն ինչ խնդաղ ե, անդորր ու հանդիսաւ: Յերեխասարդ հեղափոխականին ամոթ ե այսպիսի բաների մասին շաղակրատելլը: Ով մոտիկ և կանդնած դպրոցին, նա դիտե, թե ինչ համառ են լինում մեր թշնամիները յերեխասարդ սերնդի հոգու համար պայքարելու ժողործ անելիս :

Զեղ բոլորիդ հայտնի յե, թե վորքան լայնորեն բռնկվել եւ դեռ մեր կողմից վերջնականապես չի վերացվել յերեխաների խուլիզանության ալիքը:

Դուք ի՞նչ եք կարծում, սա պատահականությո՞ւն ե:

Վերցրեք թեկուղ «Փլորենցիական շղթան», վոր անցավ Մոսկ-
վայի դպրոցներով։ Պատահարար չե, վոր դպրոցներում հանդես
են գալիս զանազան թշնամական խաղեր, վորոնց մասին յես ար-
դեն խռուցի։ Կամ թե չե վերցրեք արդեն նշանավոր դարձած
Ռոստովի «Նախալինուահիներին», վորոնք դեկավարում եյին
քմանամլոր պարագաներանին խմբերին։

Կամ թե չե վերցրեք այն ազաղակող փաստը, յերբ Տաշքեն-
դում հենց Ռուզմակատանի ԼԿՅԵՄ կենտրոնի քթի տակ խուլիզան-
ների մի խռումը տեսողի միջոցով իր գործունեյության մեջ եր
ներգրավում յերեխոտների առանձին խմբեր։

Միայն կարճատևությունը, տարրական զգոնության բթա-
ցաւմն են հնարավարություն ամիսը այս ամբողջ Համահեղակոխա-
կան ազտեղությանն այսպէս լկտիորեն սանձարձականաբու։

Ինչո՞ւ յե հաջողվում թշնամիներին թափանցել դպրոց։ Վո-
րովհետեւ մեզ մոտ կան մարդիկ, վորոնք շաղակրատում են զգո-
նության մասին, բայց բոլչմիկյան այս հատկությունը չունեն։
Խնչքան կուզեք հրավիրեցեք դասակարգային աշալքաւրյան,
բայց յերեւ դուք ձեր աշխատանքը չսկսեք յերեխաներին շրջապա-
տող կաղրերի ստուգումից, իմանալով նրանց անցյալն ու ներկան,
ստուգելով նրանց խոսքն ու գործը, դուք կլինեք կույր դեկա-
վարմեր, վորոնց քրի տակ բշնամիները կարող են անել ամեն
քան, ինչ վոր ուզեն։

Մեզ մոտ թշնամին ջախչախմած ե, վերջնամկանապես չեն
ջախչախմած նրա խոճուկը մնացորդները։ Իսկ նրանք կարող են
տարականել միայն այնտեղ, վորտեղ մեր դեկավարները թուլա-
մորթ են։ Ահա թե ինչու մենք պետք ե ՀամԼԿՅԵՄ բոլոր կաղ-
մակերպություններին կոչ անենք բարձր հեղափոխական զգոնու-
թյան, վորպեսզի մեր թշնամիների այս ամենալերջին հույսն ել
խորտակվի, ինչպես միշտ։

VII. ՅԵԶՐԱՓԱԿՈՒՄ


Ծնկերներ, յես վերջացնում եմ իմ զեկուցումը։ ՀամԼԿՅԵՄ
X համագումարը հարկադրված ե ընդունելու կոմյերիտմիության
աշխատանքի լուրջ թերությունները դպրոցում։ Այս թերություն-
ները կան վոչ միայն տեղական կազմակերպություններում, այլ
նաև և առաջ ՀամԼԿՅԵՄ կենտրոնի և նրա՝ սովորող յերիտա-
սարդության ու պիոներների բաժինների աշխատանքում։

Թայց մենք կատարելապես վստահ ենք, վոր Լենինյան կոմ-
յերիտմիությունը ստալինարար կաշխատի դպրոցում, վորովհետեւ
այլ կերպ աշխատել չի կարելի:

Այս ճակատամասում մենք վճռական հաղթանակ պետք ե-
մեռք բերենք և մեռք կրերենք, վորովհետեւ մեզ դեկավարում ե-
աշխարհի մեծագույն, հզորագույն՝ բոլշևիկների կուսակցու-
թյունը մեծ Ստալինի գլխավորությամբ:

Այդ նա, ընկեր Ստալինն ե, վոր լուծելով միջազգային քա-
ղաքական կյանքի և ԽՍՀՄ սոցիալիստական շինարարության ա-
մենաբարդ հարցերը, միանույն ժամանակ թափանցում ե դպրո-
ցի գործունեյության ամեն մի, թվում և թե, մանրունքի մեջ,
սկսած ամենագլխավորից — ուսումնական աշխատանքի ծրագրե-
րից ու մեթոդներից — և վերջացրած նրանով, թե ինչպիսին պի-
տի լինեն գրչակոթներն ու գրչածայրերը, վորպեսդի նրանք
թուղթը չպատռեն:

Սովորենք ուրեմն մեր մեծ առաջնորդ ընկեր Ստալինից դե-
կավարմէ ու աշխատել, և աշխատանքը դպրոցում առաջ կդնա
ինչպես հարկն ե: (Բուռն, յերկարատև ծափակարություններ):




ՀԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԸՆԿ. ՇԱՂԲԱԹՅԱՆԻ ՅԵԼՈՒՅԹԸ
ՀԱՄԼԿՅԵՄ Խ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

1938 ԲՎԻ ԱՊՐԻԼԻ 14-ԻՆ



Ա. ՇԱՀՐԱԲԱՆ



Ընկերներ, մենք լսեցինք հաշվետվություն մեր կենտրոնական կոմիտեյի գործունեյության մասին։ Ընկ. Կոսարեվին իր զեկուցման մեջ մեր յերիտասարդության հերոսական աշխատանքի վառողինակների վրա ցույց տվեց կոմյերիտմիության՝ սոցիալիզմի համար մղած պայքարի անցած ետապը։

Ընկեր Կոսարեվը ամբողջ աշխարհին ցույց տվեց, թե ինչպես մեր սքանչելի հայրենիքում՝ ամբողջ աշխարհի պրոլետարների ու ճնշված մարդկության հայրենիքում՝ բերկրալի, ունեութալինյան կյանքի շողերի տակ աճում և ծաղկում և մեր յերջանիկ խորհանությունը։

Կոմյերիտմիությունն իր կենտրոնական կոմիտեյի գլխավորությամբ, կուսակցության ղեկավարությամբ իսկապես վորհակայական աշխատանք և կատարել յերիտասարդությանը սոցիալիտական շինարարության բոլոր ճակատամասերում կազմակերպելու, նրան լինինիզմի վորով, ղեպի բանվոր դասակարգի բոլոր թշնամիներն անհաշտության վորով, ղեպի Լենինի-Մտավինի կուսակցությունն անսահման նվիրվածության վորով դաստիարակելու համար։

Հայաստանի կոմյերիտմիությունը, ինչպես և ամբողջ Անդրկոլիասյան կազմակերպությունը, յեկել ե իր X համագումարը քաղաքականապես աճած, ինչպես յերբեք համախմբված բոլշևիկների կուսակցության և մեր սիրելի առաջնորդ և ուսուցիչ ընկեր Մտավինի շուրջը։

Անդրկոլիկասի բոլշևիկները, իրենց մարտական ղեկավար Լավրենտի Բերիայի գլխավորությամբ, ճիշտ կենսագործելով լինինստալինյան աղդային քաղաքականությունը, Անդրկոլիկասի հանրապետությունները հասցրին չտեսնված տնտեսական ու կուլտուրական ծաղկման։ Անդրկոլիկասն այժմ արժանապես կոչվում է Խորհրդային Միության մարդարիտ։ Անդրկոլիկասի յեղբայրական հանրապետությունների ընտանիքում ծաղկում ե Խորհրդա-

յին Հայրաստանը : Նոր , յերջանիկ կյանքի համար մզվող պայքարում Հայրաստանի կոմյերիստմիությունը և նրա զեկալարած յերիտասարդությունը հսկայական դեր են խաղացել : Նրա շարքերում դաստիարակվել են սոցիալիստական աշխատանքի հարյուրավոր ու հաղարավոր տաղանդավոր կազմակերպիչներ : Հանրապետության ավելի քան յերկու տասնյակ լավագույն յերիտասարդներ պարզեատրվել են Խորհրդային Միության շքանշաններով : Շքանշանակիրներ ՅԵԽրայան Գրիգորի—Արարատի ՄՏԿ տրամակուրիստ , Մարջանյան Գուրզենի—Լենինականի ՄՏԿ կոմբայնավար , Դարրիխյան Կալիխանյի—Արթիկի ՄՏԿ տրակուրիստ , Խաչատրյան Գրիգորի—մեր համալումարի պատվամավոր , Մուստաֆայիլ Այլաղի , Խալիլովով , համաշխարհային ռեկորդումների կիզկուլտուրնիկ Սերդո Համբարձումյանի և մյուսների անունները հայտնի յին վոչ միայն Խորհրդային Հայաստանում , այլ և նրա առհմաններից դուրս շատ հեռուներում :

Մեր պատվամավորության թվում ե գտնվում Հայրաստանի լավագույն մեքենավար Պողոսյան Թորգոմը , վորը որինակ և հանդիսանում Հայրաստանի բոլոր մեքենավարների համար : «ՕՅԱ սերիայի հին շողեքարչի ժամը 23,7 կիլոմետր տեխնիկական նորմայի պայմաններում ընկ . Պողոսյանը Անդրկովիկասյան յերկաթուղու պրոֆելիք դժվարացույն պարագաներում շողեքարչի տեխնիկական արտգությունը հասցըց մինչև 50 կիլոմետր մեկ ժամում :

Հղոր ստախանովյան շարժումը ընդգրկել ե Խորհրդային Միության բոլոր անկյունները : Հայաստանի կոմյերիտական կաղմակերպությունները—Լենինականի դեպոն , Սինթետիկ կառուչուկի շինարարությունը , Քանաքեռողիսը և մյուսները—իրենց X համագումարն են յեկել ընդգրկելով : Համարյա գլխովին բոլոր կոմյերիտականներին ստախանովյան շարժման մեջ : Ստախանովյան շարժումը ծավալվել ե մեղ մոտ նաև դյուլում :

Կուսակցությունը ե կոմյերիտմիությունը մեծ աշխատանք են կատարել կուտնառություններն ամրապնդելու առթիվ : Մեր դյուլական յերթեմնի ծեծկված յերիտասարդությունն այժմ՝ ապրում ե բերլրալի , ունեոր կյանքով :

Ընկ . Կոսարեվին իր գելքուցման մեջ ցույց տվեց , թե ինչպես են աճել ինտելիգենցիայի կադրերը մեր յերկրում , մասնավորապես ազգային հանրապետություններում : Մեղ մոտ Հայրաստանում այդանումն առանձնապես նկատելի յէ : Սինթետիկ կառուչուկի կոմ-

բինատիկ խոշորագույն չինարարության վրա աշխատում են մոտ 100 յերիտասարդ՝ ճարտարապետներ ու տեխնիկներ, կիրովականի քիմիական կոմիտինատում՝ մոտ 40 մարդ: Մեր ինստիտուտները վերջերս պատրաստել են 248 ճարտարապետներ, 597 աղջոնոմներ, 711 բժիշկներ, 615 զոռակներներ, 342 եկոնոմիստներ և այլն: Այս ընկերների մեծ մասը կոմյերիտականներ են: Այս թվերն առանձնապես ցայտում կդառնան, յեթե հաշվի առնենք, որ նախքան Հայաստանի խորհրդայնացումը, դաշնակների ժամանակ և իր նախորդ ամբողջ պատմության ընթացքում հայ ժողովուրդը վոչ մի բարձրագույն դպրոց չի ունեցել:

Ամեն մի տասերորդ կոմյերիտական այժմ մեզ մոտ սովորում և բարձրագույն դպրոցում: Բազմաթիվ կոմյերիտականներ աշխատում են ժողովրդական լուսավորության ճակատում: Ստորին դպրոցների գիրեկտորների մեջ կոմյերիտականները կազմում են 61 %, վոչ-լրիվ միջնակարդ դպրոցների գիրեկտորների մեջ՝ 56,5%, միջնակարդ դպրոցների գիրեկտորների մեջ՝ 40,7%: Բոլոր մանկավարժների կեսից ավելին կոմյերիտականներ են:

Սակայն չնայած կոմյերիտականների այդպիսի մեծ տեսակարար կշռին, ժողովրդական լուսավորության ճակատում, դպրոցում մենք վաստ ենք աշխատում: Հոգացաղությունը ուսուցչի, մանավանդ դյուլական ուսուցչի մասին, դեռ մեր ուշադրության կինտրոնում չի դրված: Վերջերս Հայաստանի կոմյերիտուրության կենտրոնական կոմիտեի կողմից անցկացված յերետասարդ դյուլական ինտելիգենցիայի շրջանային և հանրապետական կոնֆերենցիաները ցույց տվին, թե վորքան վատ ենք մենք կասլված դյուլական կուլտուրական աշխատողների հետ:

Համեմատե՛մ կենտրոնական կոմիտեն բազմիցս մատնացույց եւ արել մեզ գիտության, տեխնիկայի աշխատաղների հետ ավելի սերտ կապ հաստատելու անհրաժեշտությունը: Մեզ մոտ այս ուղղությամբ վորոշ աշխատանք տարվում է: Կիրառվում ե գիտական աշխատողների՝ հասարակագետների, յերկրաբանների, քեմիկոնների, ֆիզիկոնների մեկնում շրջանները յերիտասարդությանը հետաքրքրող թեմաների վերաբերյալ զեկուցումներ, մատչելի դասախոսություններ, զրույցներ անցկացնելու համար: Բայց այդ աշխատանքը ախտեմատիկ բնույթ չի կրում: Դժբախտարար մեր վոչ բոլոր կոմյերիտական ակտիվիտաներն են հասկացել, վոր կուլտուրական, գիտական ուժերին կոմյերիտմիության

աշխատանքին մասնակից դարձնելը կենսական անհրաժեշտություն և : Գիտության, տեխնիկայի, արվեստի և դրականության մարդկի սիրով են գնում կոմյերխոմի իության մոտ և յեթե մինչեւ այժմ նրանք մեզ մոտ քիչ են աշխատում, ապա մեղքը միայն մերն ե :

Կոմյերի իսմիության կազմակերպական աշխատանքի այն քննադատությունը, վոր տվեց ընկ . Կոսարեմիը, վերաբերում և նաև Հայաստանի կազմակերպության : Ընկ . Կոսարեմիը մերկացրեց վարչական գրիպի եալիդեմիայով՝ վարակված կոմյերի իտական աշխատողներին : Այլապէս ինչո՞վ բացատրել, յեթե զոչ այդպիսի եպիդեմիայով, կոմյերի տամիությունից հեռացվածների այդքան մեծ թիվը : Հինգ տարվա ընթացքում միութենական պարտականությունները՝ անդամավճարներ չմուծելու, քաղղաքրոցներ, կոմյերի տական ժողովներ չաճախելու համար և այլն մեր կազմակերպությունից հեռացված են 108 հազար մարդ կամ բոլոր հեռացվածների մեկ քառորդը : Այս թիվը վկայում և անդամավճար գաստիարակչական աշխատանքի մասին մեր կազմակերպության առանձին ողակներում :

Այստեղ շատ եյին խոսում դեկավար կաղըերի մասին : Կոմյերի տական ակտիվիի կաղըերը այս տարիների ընթացքում աճել են : Մենք սկսել ենք ավելի լավ աշխատել մարդկանց հետ, ավելի լավ ընտրել նրանց : Հայաստանում կուսակցական փաստաթղթերի ստուգումն անցած դեկավար կոմյերի տական աշխատանք կատարող՝ կուսակցության 150 անդամից միայն մեկն ե տույժառացել : Սակայն մենք դեռ շատ անդամավճար աշխատանք ենք կատարել մեր ակտիվի բոլորի կամաց կազմակերպությունների մեջ դեկավարների կուտուրական մակարդակն անընդհատ բարձրանա, այլապէս մենք չենք կարողանա կատարել այն հսկայական պահանջները, վոր կուսակցության կողմից մեզ առաջադրվում ե մեր յերիտասարդությունը դաստիարակելու ասպարեզում :

Անցյալ տարի բոլոր հանրապետություններում կազմակերպված կոմյերի տամիության գյուղական շրջկոմների քարտուղարների ամիս ու կեսվա դասընթացներն իրենց միանդամայն արդարացրին : Յես գտնում եմ, վոր Համլկթեմ կենակոմն այդպիսի դասընթացներ պետք ե կազմակերպի ամեն տարի : Յես կարծում եմ, վոր արտահայտած կլինեամ ազգային հանրապետությունների կենակոմների, մարդկոմների և յերկրկոմների բոլոր քարտուղար-

Ների կարծիքը, յեթե ասեմ, վոր կոմյերիտմիության կենտկոմը պետք է մեզ համար կազմակերպի ամիս ու կեսվա և յերկամսյա դասընթացների։ Այդ գասընթացներին բացի մարդկոմների, յերկումների ու ազգային հանրապետությունների կենտկոմների քարտուղարներից պետք է մասնակից դարձվեն բանվոր, գյուղացի, ուսանող յերիտասարդության և այլ բաժինների ղեկավարները։

Այստեղ Մոսկվայից յելույթ ունեցող մի ընկեր ցավ է սիրո խոսում եր այն մասին, թե ինչպես յերբեմն կոմյերիտական աշխատողները իրենց հույսը կտրում են ուսման գնալուց։ Նրանց ուղարկում են սովորելու միայն այն ժամանակ, յերբ աշխատանքից հանում են։ Յես այդ գտնում եմ սխալ։ Կադրերն ամրացնելու ճիշտ գիծ վարելով, մենք պետք են կոմյերիտմիության աճող ակտիվին ուղարկենք սովորելու, այն հաշվով, վոր ուսումն ավարտելուց հետո նրան նորից պարտադիր կարգով վերադարձնեն աշխատանքի կոմյերիտմիության մեջ։

Մի քանի խոսք ուզում եմ ասել յերեխանների մասին։ Կուտակցությունը մեզ սովորեցնում է Հոգալ յերեխանների մասին։ Նրանց համար մենք վորոշ բան արել ենք։ Յերեանում, Թրիլիսիում, Բագվում մոտիվ ժամանակներս կրացվեն պիոններների ու Հոկտեմբերիկիների պոմերը։

Հայաստանի 27 շրջանային կենտրոններում մենք ունենք պիոններների տներ։ Ղամարլուկ շրջանում 43 դյուդից 87-ում կան բավարար չափով կահավորված պիոններական ակումբներ։ Սակայն, յերբ նայում ենք կատարած աշխատանքին մեր առաջ կուսակցության կողմից դրված խնդիրների տեսակետից, տեսնում ենք, վոր կատարված աշխատանքը բավարար չե։

Այստեղ ընկ. Անդրեյեվը պատմում էր Ուկրաինայի կողմից կոլտնտեսական յերեխանների խրճիթներ կազմակերպելու նշանավոր փորձի մասին։ Ուկրաինայի այդ փորձը պետք է փոխ առնենքուր կոմյերիտական կազմակերպությունները։

Ընկեր լենինգրադցիները գանգատվում եյին, վոր կենտկոմի բաժինների կենդանի կապը լենինգրադի կազմակերպության հետ բավարար չե։ Ով ել գանգատվեր, բայց լենինգրադը չպետք է գանգատվեր կենտկոմի ոպերատիվ ղեկավարությունն անբավարար լինելու վրա։ Յեթե Հայաստանի կոմյերիտմիունը գանգատվեր, այդ ճիշտ կլիներ։ Կենտրոնական կոմիտեն հանդիսանում է աշխատանքի ստալինյան վաճիկ և ստալինյան թափի կոմիտե։

Բայց Կենտկոմն ևս, ինչպես ույսեղ ճիշտ կերպով Առանձնչում
ելին, թերություններ անի: Յետ կամենում եմ կանդ առնել մի-
այն մի փառափի վրա, քանի վոր հետեւալ Հռետորը պիտի լինի
ընկ. Զյորնին (Կենտկոմի բանվոր յերիտասարդության բաժնի,
նախկին վարիչը): Յետ խնդրում եմ, վոր նա պատասխանի, թէ
ինչո՞ւ 10 ամիս շարումնակ կոմյերիտմիության Անդրյերկոմի վո-
րոշումը Հայաստանի և Աղբբեջանի յերիտասարդության աշխա-
տանքի պաշտպանության աեսուչների մասին մեռյալ կետից չի
շարժվել և ինչո՞ւ մեղ այդ հարցի առթիվ վոչ դրական և վոչ
ել բացառական պատասխան չի ուղարկել: Կենտկոմի բաժիննե-
րում աշխատող ընկերներ, մենք մեղ շատ ենք հարգում, հար-
զում ենք ձեր դիրեկտիվները, բայց խնդրում ենք, վոր զուք ել
մեղ հարզեք և մեր հարցումներին ժամանակին պատասխանեք:

Ընկերներ, Անդրկովկասի կոմյերիտմիությունը կուտակցա-
կան կազմակերպության և նրա փորձված դեկանար, հավատարիմ
ստալինյան Լավրենտի Բերիայի դեկանարությամբ, մեր Ալեք-
սանդր Վասիլյևիչ Կոսարեվիչ դլխավորած կոմյերիտմիության
կենտկոմի դեկանարությամբ ավելի ևս կբարձրացնի եր շարքերի
դասակարգային աշալընությունը և բոլոր ուժերը մորիլլոցիա-
յի կենթարկի ընկ. Ստալինի ցուցումները և ՀամլիթեՄ Հ հա-
մազումարի վորոշումները լիովին կենսադորձելու համար: (Մա-
ֆահարություններ):

ՀԱՄԼԿՅԵՄ Խ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱԶԵՎԵՐՆ ՈՒ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀամլկՅԵՄ Խ համագումարի բանաձեվը ընկ. Կոսարեվիկ. ՀամլկՅԵՄ Կենտկոմի աշխատանքի վերաբերյալ հաշվետու գեկուցման առքիվ

ԸՆԴՈՒՆՎԱԾ Ե ՄԻԱԶԱՅՆ

Լենինյան Կոսյերիտարիոթյան Համասիութենական նամագումարը ամբողջովին յեզ լիովին նավանություն ե տալիս ՀամլկՅԵՄ Կենտկոմի բաղաբական գծին յեզ գործնական աշխատանքին:

Բանաձեվ ընկ. Զեմոդանովի հաշվետու գեկուցման պարիվ Ցերիտկոմինստերնի Գործկոմի ՀամլկՅԵՄ պատգամավորության աշխատանքի մասին

ԸՆԴՈՒՆՎԱԾ Ե ՄԻԱԶԱՅՆ

ՀամլկՅԵՄ Խ համագումարը՝ լսելով յեզ ֆենության առնելով Ցերիտկոմինստերնի ՀամլկՅԵՄ պատգամավորության հաշվետվությունը, նավանություն ե տալիս Ցերիտկոմինստերնի Գործկոմի ՀամլկՅԵՄ պատգամավորության բաղաբական գծին յեզ գործնական աշխատանքին:

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԼԵՆԻՆՑԱՆ
ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

ՀԱՄԱԿՑԵՄ X ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԿՈՂՄԻՑ
ԲՆԴՈՒՆՎԱԾ Ե ՑԻՖԱՅՆ

ପାତ୍ରମାନଙ୍କ ପାତ୍ରମାନଙ୍କ
ପାତ୍ରମାନଙ୍କ ପାତ୍ରମାନଙ୍କ

ପାତ୍ରମାନଙ୍କ ପାତ୍ରମାନଙ୍କ

ପାତ୍ରମାନଙ୍କ ପାତ୍ରମାନଙ୍କ

1. Թումաստանի պրոլետարիատը 1917 թվականի Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ աշխատավոր գյուղացիության աջակցությամբ, Կոմունիստական (բռլմէիկների) կումակցություն և նրա հիմնադիր Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ տապալեց կապիտալիստների ու կավածատերերի իշխանությունը և հաստատեց իր իշխանությունը — պրոլետարիատի դիկտուրան :

Հեղափոխություններ առաջ ել յեղել են: Նրանք առաջ եյին մզում մարդկությունը, սակայն սովորաբար վերջանում եյին շահագործողների մի խմբակը շահագործողների մի այլ խըժ-բակով փոխարինելով: «Շահագործողները փոխվում եյին, շահագործումը մնում եր» (Ստալին): Փարիզի Կոմունան առաջին հեղափոխությունն եր, վորը նապատակ եր դրել տապալեկ ընդհանրապես շահագործողների տիրապետությունը: Նա պրոլետարիատի հերոսական, սակայն և այնպես, անհաջող փորձն եր՝ հաստատելու իր դիկտուրան: Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը ԽՍՀՄ-ում մյուս բոլոր հեղափոխություններից տարբերվում են նրանով, վոր նա իշխանության դլուխ կանգնեցրեց բանվոր դասակարգին և վոչնչացրեց մարդու ամեն մի շահագործում մարդու կողմից: «Նա իրեն նպատակ ե դնում վո՛չ թե շահագործման մի ձևը շահագործման մի այլ ձևով, շահագործողների մի խումբը շահագործողների մի այլ խմբով փոխարինելը, այլ մարդու կողմից մարդու ամեն մի շահագործում վոչնչացնելը, բոլոր և ամեն տեսակի շահագործողական խմբերը վաշնչացնելը, պրոլետարիատի դիկտուրա հաստատելը, մինչև այժմ գոյուր-յուն ունեցած ննշված բոլոր դասակարգերից ամենանեղակախական դասակարգի իշխանությունը հաստատելը, սոցիալիստական անդաստակարգ նոր հասարակություն կազմակերպելը: Հենց այս պատճառով ել Հոկտեմբերյան հեղափոխության հաղթությունն արմատական բեկում և նշանակում մարդկության պատմության մեջ, արմատական

բեկում՝ համաշխարհային կապիտալիզմի պատմական նակատագրում, արմատական բեկում՝ համաշխարհային պրոլետարիատի ազատազրական շարժման մեջ, արմատական բեկում՝ ամրող աշխարհի շահագործվող մասսաների պայքարի յեղանակների ու կազմակերպման ձևերի մեջ, կենցաղում ու տրադիցիաներում, կուլտուրայի ու գաղափարախոսության մեջ» (Ստալին):

2. Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունն ընդմիջությաց ԽՍՀՄ-ում կապիտալիստական սորոկության ու ճնշման իրավակարգը, այն իրավակարգը, վորը դեռ տիրապետում և ԽՍՀՄ-ի սուհմաններից դուրս, աշխարհի մյուս յերկիրներում:

Կապիտալիզմի պայմաններում կապիտալիստների ու կալվածատերերի տիրապետող դասակարգը կազմող մարդկանց փոքր թիվն իր ճեռքում կննարոնացնում և հասարակության հարստությունները, տիրապետում և Փարբիկաներին, գործարաններին, հողին, յերկաթուղիներին ու աղբանքներին, մինչդեռ աղբանակության հոկայական մեծամասնությունը — պրոլետարներն ու կիսապրոլետարները, — զուրմի և ապրելու միջոցներից և հարկադրված և վաճառելու իր աշխատանքային ուժը, այսինքն՝ վարձով ծառայելու կապիտալիստներին ու կալվածատերերին, հարկադրված և ընդունելու կապիտալիստական շահագործման լուծը և իր աշխատանքով հարստություն ստեղծելու կապիտալիստական ստրկատերերի համար:

Կապիտալիստական հասարակության զարգացմամբ, տեխնիկայի և աշխատանքի արտադրողականության աճմամբ տվելանում են այն հարստությունները, տնտեսական ուժն ու զորությունը, վոր տնտերինում են կապիտալիստներն ու կալվածատերերը և միևնույն ժամանակ այլելանում և աշխատավոր մասսաների և առաջին հերթին բանվորների ու մանր գյուղացիների տնտեսական քայլայումը, աճում են աղքատությունն ու տառապանքները: Բանվորների հոկայական և որսատորե այլելացող մասսաները, վորոնք չեն կարողանում վաճառել իրենց աշխատանքային ուժը, կազմում են գործադուրկների մշտական բանակը, վորը կապիտալիստական հասարակակարգի անխուսակելի ուղղելիքն և հանդիսանում:

Կապիտալիստական հասարակակարգի պայմաններում առանձնապես ծանր և աշխատավոր կանանց ու յերիտասարդության դրությունը: Բուրժուազիան ամեն ինչ արել և աշխատավոր

կնոջը ճորտացնելու, նրա արժանապատվությունն ստորացնելու համար, նշանատացրել և աշխատավոր կնոջը մինչև ստրկուհու գրությունը: Աշխատավոր կնոջը իրավազուրկ դրությունը բուրժուական հասարակության մեջ, նրա նյութական անապահովածությունը տանում և դեպի պոռնկության գարզացումը:

Անտանելի յե աշխատավոր յերիտասարդության դրությունը. գործազրկությունը կիսաքաղց գոյության և դատապարտում նրան. զարգանում և աղքատությունը և շրջմոլիկությունը: Ձեռնարկություններում աշխատող դեռահասակներն ու յերիտասարդությունն անզուսպ կերպով շահագործվում են. նրանց աշխատանքի վարձատրությունը չափաղանց ցածր և, աշխատանքային որը՝ յերկարատև, աշխատանքի պաշտպանության բացակայություն, լիակատար կախումն տիրոջ ու վարպետի քմահաճույքից, զեռահասակների աշխատանք գիշերային հերթափոխություններում և առողջության համար վնասակար ցեխերում. առցիալական հիվանդությունները հյուծում են բանվորական, գյուղացիական ու ծառայող յերիտասարդության Փիզիկական ուժերը և քայլայում են նրա առողջությունը: Պատանիներն ու աղջիկները զուրկ են կրթություն ստանալու հնարավորությունից, ապրում են աշխատանքից վտարվելու, սովոր ու աղքատության յերկյուղի տակ: Յերիտասարդությունն աշխատավորության ամենաիրավազուրկ մասն և կապիտալիստական հասարակության մեջ:

Կապիտալիստական հասարակակարգի զարգացումը, հասարակակարգ, վորտեղ տիրապետում և արտադրության անարիսիան, վորտեղ յուրաքանչյուր կապիտալիստի միակ նախատակն և շահութի հետեւից ընկնել, վորտեղ կապիտալիստն իր շահութն ավելացնելու նպատակով ճգնապահությունով, — այդ հասարակակարգի զարգացումը պարբերաբար ուղղվում է ամենաղաւագանքի աշխատավարձը, վորտեղ, այդ պատճառով աշխատավոր մասսաների սպառումը սահմանափակված է բանվորի կյանքի գոյության համար անհրաժեշտ միջոցների նվազագույնով, — այդ հասարակակարգի զարգացումը պարբերաբար ուղղվում է ամենաղաւագանքի ճգնաժամական մասին: Ապրանքն ավելի յե լինում, քան կարող են գնել: Փակվում են ֆարբիկաներն ու գործարանները, և բանվորները փողոց են նետվում: Կապիտալիստների պահեստները ճայթում են ապրանքի ավելցուկից և ապրանքի մի մասը վոչնչացվում է, վորովհետև չի կարելի վաճառել այն, — մինչեւ միլիոնավոր բնակչությունը դատապարտված է առվամահության, վո-

բավկեամ նա միջոց չունի հաց, զգեստ գնելու, բնակարանի վարձ վճարելու:

Կապիտալիստական հասարակակարգն իր բարձրադաշտյան և վերջին՝ խմբերի ալիքով ստաղիայում հանդում և խմբերի ալիքում առանձին արտությունների միջև մզմուղ հափշտակուում ու կողոսկտում են դադուլիներն ու հետամնաց յերկիրները, ճնշում և ստրկացնում են հետամնաց ու թույլ ազգերին, ստրկացնում են Ասիայի, Աֆրիկայի, Հարավային Ամերիկայի ժողովուրդներին, ողայքար են մղում միմյանց դմմ՝ ավելի շատ ավար հափշտակելու համար: Խմբերի ալիքում ակտությունները մարդկության նետեցին 1914—1918 թվականների կործանիչ և հրեշտավոր պատերազմի մեջ: Ազա նրանք ռազմական արշավ կարմակերպեցին մեր Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության դեմ, վորը վերջացավ ԽՍՀՄ-ի հաղթանակով: Նրանք անընդհատ պատերազմներ են մղել և մղում են Աֆրիկայում (Մարոկկո և Հարեւստան), Մանջուրիայում, Հյուսիսային Չինաստանում: Ամենից ավելի դազադած ֆաշիստական խմբերի ալիքում հանրապետության ըրջանները նոր հարձակում են պատրաստում Խորհրդային Միության վրա: Կազմակերպմի սխմեմի հետ անխղեցիորեն կապված են նաև կողոսկտիչ պատերազմներն ու այդ պատերազմների պահանջած միլիոնները զոհերը, ճիշտ այնպես, ինչպես նրա հետ կապված են տնտեսական հզնաժամները և դաժան գործադրյալությունը:

3. Ռուսաստանի պրոլետարիատը, դաշն կնքած աշխատավոր դյաւլացիության հետ, համայն աշխարհի առաջավոր բանվորների սժանակությամբ, վոչ միայն ընկենց տապալված դասակարգերի դիմադրությունը դաժան մարտերում և դենքը ձեռքին պաշտպանեց իր եղանակությունը, այլև անցյալում հետամնաց, աղքատ և քայլայիմած յերկիրը դարձրեց առաջավոր, հղոր և մեծ սոցիալիստական պետություն:

Եերկրի սոցիալիստական վերակառուցման հետեւանքով, վորն էրականացրին ԽՍՀՄ-ի աշխատավորները, բոլշևիկների կռտակցաւթյան դեկավարությամբ, ԽՍՀՄ-ն դարձավ հղոր ինդուստրիալիզմի կողեկամիվ հողագործության յերկիր, հղոր պաշտպանումական պատություն ունեցող յերկիրը, կատարելապես ինքնուրույն և կապիտալիստական յերկիրների քմահաճույքից անկախ յերկիր:

ԽՍՀՄ-ում վերացված են կապիտալիստների, կալվածատերերի և կուլտակների պարտարայիծ դասակարգերը և դրանով իսկ

ընդմիշտ վերջ և դրված մարդու շահագործմանը մարդու կողմից՝
իրականացվեցին սոցիալիզմի կարմորագույն սկզբանքները՝
«չաշխատողը չի ուտի» և «վարձատրություն ըստ աշխատանքի»։
Աշխատանքն ինքը դարձալ պատվի, արիության, փառքի ու հե-
րոսության դործ։

Ֆարբիկաներն ու գործարանները, դազգյահներն ու մեջենա-
ները — արտադրության բոլոր միջոցներն ու գործիքները պատ-
կանում են վոչ թե կազիտալիստներին, այլ աշխատավարներին,
կաղմելով աշխատավոր ժողովրդի սրբազն, անձեռնմխելի հան-
րային սեփականությունը։ Յերկրի ամբողջ ժողովրդական անտե-
սությունը սոցիալիստական դարձալ։ Նա ամբողջովին առաջ և
տարվում միասնական սոցիալիստական պլանով։ Յերկրի բոլոր
հարստությունների, նրա ժողովրդական ամբողջ յեկամտի բաշ-
խումը կատարվում և հոգուտ աշխատավոր մասսաների շահերի։

Միլիոնավոր աշխատավոր գյուղացիներ կամավոր կերպով
միացել են կուտնաեսություններում և ընդունել են կուտնաեսային
կյանքի ստալինյան կանոնադրությունը։ Վերջնականապես կտրվել
են կազիտալիզմի արմատները գյուղում։ Վոչաշվել և այն վի-
ճը, վորով կտակալիզմը բաժանել եր քաղաքը գյուղից։

Խորհրդային յերկրը տնտեսական ճնշաժամեր չդիտե։ Վե-
րացված և գործազրկությունը — բանվոր դասակարգի այդ
մշտնջենական սպառնալիքն ու չարիքը։ Տարեցարի աճում և աշ-
խատավորների նյութական բարեկեցությունը։ Յուրաքանչյուր
աշխատաղ դիտե, վոր նա սոցիալիստական հասարակության ան-
դամն և և նրա աշխատանքի արտադրողականությունն ավելաց-
նում և Խորհրդային յերկրի հարստությունն ու զորությունը, և
միևնույն ժամանակ ունեող և կուլտուրական կյանք և սուեզծում
նրա համար։

Պրոլետարական սոցիալիստական մեծ հեղափոխությունն ա-
ղամարդեց՝ անցյալում նախկին ռուսական կայսրության կողմից
ճնշված ժողովարդներին։ Խորհրդային Միությունը — ազատ և
իրավահավասար ժողովուրդների յեղայրական միությունն և։
Խորհրդային Միության մեջ չկան ճնշված ու ճնշող ժողովուրդ-
ներ։ Խորհրդային Միության բոլոր ժողովուրդները կողք-կողքի,
ուսումնական պատուական կառուցում են սոցիալիզմ և պայքար են մղում
ընդհանուր թշնամու դեմ, կապիտալիզմի դեմ։

ԽՍՀՄ-ում կինը դարձել և սոցիալիստական հասարակության
ինքնուրույն և իրավահավասար աշխատավարտունք։ Ցամաքարդու և

Ակնո՞ջ իրական հավասարության հիման վրա ստեղծվում ե նոր ընտանիք, վորի ծաղկման մասին հոգում և Խորհրդային պետությունը:

ԽՍՀՄ-ում աշխատավոր մարդը վստահություն ձեռք բերեց իր վաղվա որվա նկատմամբ։ Մարդու նկատմամբ ցուցարելվող հոգաստարությունը դրված ե կոմունիստական կուսակցության և Խորհրդային իշխանության ուշադրության կենտրոնում։ Սոցիալիզմը կենսուրախություն և առույգություն բերեց իր հետ։ Աշխատավոր մարդուն առաջին անդամ վերադարձվեց նրա արժանապատճենությունը, վորը վոտնահարում ելին տիրապետող շահագործողական դասակարգմերը։

Եերիտասարդության աշխատանքի ու կրթության բոլոր արժատական հարցերը, վորոնք յերբեք չեն կարող լուծվել աշխատավոր յերիտասարդության համար կապիտալիստական իրավակարգի պայմաններում, ԽՍՀՄ-ում արդեն լուծված են հոգուտ մերիտասարդության։

Խորհրդային իշխանությունն ազատեց ԽՍՀՄ-ի յերիտասարդությանն աղքատության ու սովոր ծանր լծից և նյութական ամուր ապահովվածություն տալեց նրան։ Խորհրդային իշխանության որենքներով 16 տարեկանից ցածր դեռահասակներն աշխատում են որական չորս ժամ, իսկ 16-ից մինչև 18 տարեկան յերիտասարդները՝ վեց ժամ, լրիվ բանվորական որվա վարձատրությամբ։ Խորհրդային որենքներով արգելված ե առանց պետական որդանների հատուկ թույլտվության կիրառել մինչև 18 տարեկան յերիտասարդների աշխատանքն ստորերկրյա և առողջության համար առանձնապես ծանր աշխատանքներում (վնասակար ու վտանգավոր արտադրություններում, տաք ցեխերում)։ Արգելված ե դեռահասակների արտաժամյա աշխատանքը։ ԽՍՀՄ-ում արտադրության սոցիալիստական բնույթը դեռահասակների աշխատանքը գուգակցում ե նրանց անընդհատ ուսուցման ու դաստիարակության հետ։ Այդ նպատակին են ծառայում ֆաբրիկա-գործարանային աշակերտության դպրոցները (Փաբրդործուսները)։ Յուրաքանչյուր դեռահասակ աշխատանքի մտնելու առաջին որից ստանում ե սահմանված աշխատավաճը։ Քանի ավելացնում ե նա իր գիտելիքները և արտադրական վարժությունը, ավելանում ե նրա աշխատավաճը։

Գետությունը վոչ միայն իր հաշվին սովորեցնում ե դեռահասակներին, այլև խնամքով սպահանում ե նրանց առողջությունը։

Այդ նպատակով արդելված և աշխատանքի ընդունել գեռահասակ-
ներին առանց բժշկի նախնական քննության . ամեն տարի բոլոր
գեռահասակ բանվորները յենթարկվում են բժշկական քննության-
ստեղծվել և հանդստի տների և սանատորիաների լայն ցանց՝ աշ-
խատավոր յերիտասարդության համար : Հատկապես ստեղծված
քուժական հիմնարկները պահպանում են յերիտասարդությանը
սոցիալական հիվանդություններից, վորոնք ժառանգություն են
մնացել կապիտալիստական հասարակակարգից (առերերկուլյոզ,
տրախոմա և այլն) :

Արմատապես փոխվեց դյուղացիական յերիտասարդության
գորությունը : Կուլակության վերացման և կոլտնաեսային կարգե-
ամրացման չնորհիվ չքացավ աղջատությունը դյուղում, դրա հետ
միասին չքացավ դյուղի աշխատավորության անցյալում իրավա-
դուրկ և ճնշված խալը — չքավորությունը : Վոչնչացված և կու-
լակային ճորտությունն ու ստրկությունը, բատրակների — յերե-
խաների ու գեռահասակների անորինակ շահագործումը : Կոլտնտե-
սային կարգը դյուղացիական յերիտասարդության համար պատ-
աշխատանքի, լուսավորության լայն հնարավորություն ստեղծեց
և հաղորդակից և դարձնում նրան քաղաքային կուլտուրային :

Հին բուրժուական դպրոցի փոխարեն ստեղծված և նոր խոր-
հըրդային դպրոց, վորտեղ բոլոր պայմանները կան՝ իսկական
գիտելիքներ ձեռք բերելու գիտության բոլոր բնագավառներում :
Մտցված և ընդհանուր պարտադիր ձրի տարրական ուսում 8-ից
մինչև 12 տարեկան բոլոր յերեխաների համար և հաջողությամբ
իրականացվում և 7-ամյա ուսումը ԽՍՀՄ-ում բնակվող բոլոր
աղդությունների մայրենի լեզվով :

ԽՍՀՄ-ի յերիտասարդությունը հնարավորություն ստացավ
տիրապետելու իր ուղած մասնագիտությանը, հասնելու գիտելիք-
ների ցանկացած մակարդակին, վորովհետև ԽՍՀՄ-ում բոլոր աշ-
խատավորներին լայնորեն մատչելի յէ վոչ միայն տարրական,
այլև միջնակարգ ու բարձրագույն կրթությունը : Յերիտասար-
դության ընտրած յուրաքանչյուր պրոֆեսիա Խորհրդային յերե-
քում հայտարարակես պատվավոր ու հարգելի յէ :

Սոցիալիզմն իրականություն և դարձել Խորհրդային Սոցիա-
լիստական Հանրապետությունների մեծ Միության բազմամիլիոն
ժողովուրդների համար : Մտեղծվեց աշխատավորների սոցիալիս-
տական հասարակություն, պայմաններ են նախապատրաստվում

սոցիալիզմից — կոմունիստական հասարակության առաջին աստիճանից — լիակատար կոմունիզմին անցնելու համար :

4. Բանվոր դասակարգը աշխատավոր գյուղացիության հետ միասին հաղթեց մեր յերկրում կապիտալիստներին, կալվածատերերին, կուլտակներին և սոցիալիզմ կառուցեց միայն այն պատճառով, վոր նա բոլչեկիների կուսակցության զեկալարությամբ ստեղծեց իր ուժեղ ու հզոր իշխանությունը, խորհրդային իշխանությունը, բանվորների և գյուղացիների պեմտությունը:

Խորհրդային իշխանությունն ընկնեց աշխատավորության թշնամիների դժմաղքությունը, ջախջախնեց նրանց բանակները քաղաքացիական պատերազմում, ճնշեց և ճնշում և դասակարգային թշնամիների բոլոր փորձերը՝ թուլացնել սոցիալիստական շենարարության դործը և վնասել աշխատավորներին :

Խորհրդային իշխանությունն ամենազեմովկրատական, ամենաժողովրդական իշխանությունն և հանդիսանում, վորովհետեւ նապետական դործերն անմիջականորեն վարելուն ներդրավում և և պետության կսուալարմանը մասնակից և դարձնում քաղաքի և գյուղի բոլոր աշխատավորներին՝ անկախ սեռից և աղջությունից :

Խորհրդային իշխանություն՝ ամրապնդելով իր յերկրի պաշտպանունակությունը և փառազանձ կարմիր բանակը, աշխատավորների հայրենիքը պաշտպանում և իմպերիալիստական դիշտափիներից :

Խորհրդային իշխանությունը պահպանում և հանրային սոցիստական սեփականությունը և խստիվ հետևում և, վոր կտտարվի Շյուրաքանչյուրից ըստ ընդունակությունների, յուրաքանչյուրին ըստ աշխատանքի՝ սոցիալիստական կանոնը :

Խորհրդային իշխանությունը դաստիարակում և կարդապահություն, հարգանք գենիլ սոցիալիստական որենքներն ու համակեցության կանոնները, բոլոր աշխատավորների մեջ դաստիարակում և աղնիվ վերաբերմունք դեպի աշխատանքը և հասարակական պարտականությունը, առանց վորի չի կարող իրականացվել սոցիալիզմի լիակատար հաղթանակը :

5. Համեկ(ր)կն և Խորհրդային կառավարությունը կարգակերպում են կոմունիստական հասարակակարգ, այնպիսի հասարակակարգ, վորտեղ վոչ միայն չկա արտադրության միջոցների մասնավոր սեփականություն և վոչնչացված են դաստիարական մարդու շահագործումը մարդու կողմից, այլև վորտեղ կանհետան մարդկանց տնտեսական անհավասարության վերջին մնա-

ցորդները, — վորտեղ աշխատանքը գոյության միջոցից դառնալու յև առաջնակարգ կենսական պահանջ, մարդու ստեղծագործ ընդունակությունների բերկրալից դրսեւում, վորտեղ գիտության, տեխնիկայի, աշխատանքի արտադրողականության ծաղկման չնորհիվ հասարակությունը կհասնի այնպիսի առատության, այնպիսի հարստության, վոր սոցիալիստական բաշխման «յուրաքանչյուրից ըստ ընդունակությունների, յուրաքանչյուրին ըստ աշխատանքի» սկզբունքը կփոխարինվի լիակատար կոմունիզմի սկզբունքով, այն և՝ «յուրաքանչյուրից ըստ ընդունակությունների, յուրաքանչյուրին ըստ պահանջմունքների»:

Այդ հասարակության մեջ վերջնականապես կանհետանաժտավոր և ֆիզիկական աշխատանքի հակադրությունը: Գիտությունը և արվեստը կհասնեն չտեսնված ծաղկման: Ամեն տեսակ կապանքներից ու կաշկանդումներից աղատ մարդկային անձնավորությունը լիակատար հնարավորություն կստանա բազմակողմանի կերպով զարգացնելու իր տաղանդներն ու ընդունակությունները: Յուրաքանչյուր մարդ կամավոր կերպով կպահպանի համակեցության բոլոր կանոնները և կոմունիստական բարոյականության բոլոր նորմաները, վերջնականապես կանհետանապես անհրաժեշտությունը:

Համամիտութենական լենինյան կոմունիստական յերիտասարդական միությունը հանդիսանում և Համեկ(բ)Կ-ին հարող մասսայական անկուսակցական մի կազմակերպություն, իր շարքերում միացնում և քաղաքի և գյուղի առաջավոր, քաղաքականապես դրագետ աշխատավոր յերիտասարդության լայն խավերը: ՀամեկօթեՄ-ի խնդիրն և ոգնել կոմունիստական (բոլշևիկների) կուսակցությանը՝ յերիտասարդությանն ու յերեխաններին կոմունիզմի վորդով դաստիարակելու գործում: ՀամեկօթեՄ-ը, համակըրելով Համեկ(բ)Կ-ի ծրագրին, ոգնում և բոլշևիկների կուսակցությանը և Խորհրդային կառավարությանը՝ կատարելու պատճական մեծ խնդիրը — կոմունիստական հասարակության կառուցումը:

ՀամեկօթեՄ-ը հանդիսանում է Համեկ(բ)Կ-ի ոգնականն ու ռեզերվը:

ՀամեկօթեՄ-ն իր ամբողջ աշխատանքում, Համեկ(բ)Կ-ի ղեկավարությամբ, բանվորական, գյուղացիական, ծառայող յերիտասարդությունից և յերիտասարդ ինտելիգենցիայից դաստիարակում և խորհրդային իշխանությանը նվիրված, կրթված մար-

դիմ, խեղախ ու վճռական ժարդիկ, վորոնք չեն վախենում ուր-
կանքներից ու դժվարություններից, ժարդիկ, վորոնք ասում են
բանվոր դասակարգի թշնամիններին, ժարդիկ, վորոնց համար
Հնպատակի պարզորոշությունը, նսպատակին հասնելու դործում
աննկունությունը և բնավորության հաստատակամությունը, վոր
վոշնչացնում ե բոլոր ու ամեն տեսակ խոչընդուները (Ստալին),
Հանդիսանում ե նրանց գլխավոր հատկությունը:

Քաղաքի և գյուղի ամրող աշխատավոր յերիտասարդությա-
նը կոմունիզմի վոգով դաստիարակելու և նրան խորհրդային իշ-
խամության շուրջը կազմակերպելու համար Համամիութենական
Լենինյան կոմունիստական յերիտասարդական միաւթյունը են-
տելյալ խնդիրներն ե դնում իր առջև.

I

ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՄԱՆ ԱՍՊԱՐԵՉՈՒՄ

1. Հետեւելով Լենինի այն ցուցումներին, թե կոմունիստական
աշխարհայացք մշակելը — պրոլետարիատի դիտական-հեղափոխա-
կան թեորիային տիրապետելը — հիմնական պայման է յերիտա-
սարդությանը կոմունիզմի վոգով դաստիարակելու համար, Համ-
Լենին-ը յուրաքանչյուր կոմյերիտականի համար պարտադիր է
համարում քաղաքական կրթություն ստանալը: Այդ նպատակով
ՀամԼենին-ն ստեղծում է դպրոցներ, խմբակներ և իրակա-
նացնում ե այլ ձեռնարկումներ, վորակեսղի յերիտասարդու-
թյունը յուրացնի քաղաքական դրադիտություն, ուսումնա-
սիրի ընդհանրապես պատմության և մանավանդ ԽՍՀՄ-ի
և Համամիութենական կոմունիստական կուսակցության պատմու-
թյան հիմնական մոմենտները, կազմակերպում և Մարքսի-Են-
գելսի-Լենինի-Ստալինի հիմնական դաշտավարների ուսումնասի-
րումը յերիտասարդության կողմից:

2. ՀամԼենին-ն աշխատանք և կատարում բանվորական,
գյուղացիական, ծառայող, ուսանող ամբողջ յերիտասարդու-
թյանը և յերիտասարդ ինտելիգենցիային քաղաքականապես դաս-
տիարակելու համար. ժողովների, զրույցների, դասախոսություն-
ների միջոցով ծանոթացնում ե նրան ընթացիկ քաղաքական անց-
քերին, Խորհրդային կառավարության և Համամիութենական կո-

մունիստական (բոլշևիկների) կուսակցության ձեռնարկումներին . ծանոթացնում և յերիտասարդությանը բանվորների ու դյուզացիների անցյալ կյանքին, նրանց կյանքին՝ կապիտալիստական յերկիրներում, քաղաքացիական պատերազմի պատմությանը ԽՍՀՄ-ում, գաստիարակելով յերիտասարդությանը կապիտալիստների ու կալվածատերերի դեմ բանվոր դասակարգի ու աշխատավոր դյուզացիության մղած հերոսական պայքարի սրբնակներով:

ՀամեկօթեՄ-ը հրատարակում և իր թերթերը, ժուռնալները, քաղաքական ու գեղարվեստական գրականություն, կազմակերպում և յերիտասարդության ակումբներ և աշխատանք և կատարում ընդհանուր բանվորական ու կոլտնտեսային ակումբներում, գրադարաններում և ընթերցարաններում:

3. ՀամեկօթեՄ-ը համբերատար կերպով բացատրում և յերիտասարդությանը սնուտիսապաշտության և կրոնական նախապաշտամունքների վնասը, կազմակերպելով այդ նպատակով հատուկ խմբակներ ու դասախոսություններ հակակրօնական պրովադանդայի ուղղությամբ:

4. ՀամեկօթեՄ-ը դաստիարակչական աշխատանք և կատարում առաջ գոյություն ունեցող ազգային անիրավահավասարության մնացորդների դեմ, շովինիզմի, նացիոնալիզմի ամեն տեսակ գրսնորումների դեմ, ամբողջ յերիտասարդությանը դաստիարակելով պրոլետարական ինտերնացիոնալիզմի վորով:

ՀամեկօթեՄ-ի կազմակերպությունները քաղաքական-դաստիարակչական աշխատանք են կատարում յերիտասարդության մեջ՝ ԽՍՀՄ-ի ժողովուրդների մայրենի լեզվով, համաձայն նրանցից յուրաքանչյուրի պայմաններին ու առանձնահատկություններին:

5. ՀամեկօթեՄ-ը կազմակերպում և զանազան դասընթացներ ու դպրոցներ՝ կոմյերիտմիության աշխատանքի տարրեր բնագավառների համար պրոպագանդիստներ ու կազմակերպիչներ պատրաստելու ու վերապատրաստելու նպատակով:

II

ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵՁՈՒՄ

1. ՀամեկօթեՄ-ն իր ամբողջ աշխատանքում յելնում և այն անհրաժեշտությունից, վոր պետք և ցույրապեսել գիտությամբ, կերտել բոլշևիկ մասնագետների նոր կադրեր գիտության բոլոր

քնագավառներում, սովորել, սովորել, սովորել ամենահամառ
կերպով՝ (Ստալին), ի. վ. Ստալինի այն ցուցումներից, թե ան-
հաժեղություն և բանվոր դաստիարակի կուլտուրական-տեխնիկական
մակարդակիը հասցնել ինժեներա-տեխնիկական աշխատողների մա-
կարդակին:

2. Այլ նպատակով ՀամելկօթեՄ-ի կազմակերպությունները —

ա) ողջում են պետական որդաններին՝ ամրացնելու և զար-
դացնելու խորհրդային դպրոցը, կենսադործելու ընդհանուր պար-
տադիր յոթնամյա, առաջ նաև տասնամյա ուսումը.

բ) պետական և հասարակական որդանների հետ միասին կադ-
մակերպում են յերիտասարդության միջնակարգ ընդհանուր ու
տեխնիկական կրթություն ստանալը՝ առանց արագադրությունից
կորցնելու.

գ) ըստ ամենայնի ողջություն են ցույց աալիս ԽՍՀՄ-ում
բարձրագույն կրթության զարդացման դործին (ինժեներների,
բժիշկների, աղբանոմների, մանկավարժների պատրաստումը և
այլն).

դ) ակտիվ պայքար են մղում յերիտասարդության միջից ան-
դրադիտությունն ու կիսազրադիտությունը լիովին վերացնելու
համար.

ե) կազմակերպում են զանազան տեսակի խմբակներ, դպրոց-
ներ ու դասընթացներ՝ տեխնիկական և հանրակրթական գիտե-
լիքները բարձրացնելու և ուսար լեզուներն ուսումնասիրելու հա-
մար.

զ) պայքար են մղում «ամենադիտության» և գիտության ու-
սումնասիրմանը մակերեսային վերաբերմունք ցույցաբերելու դեմ,
այնպես, վոր յուրաքանչյուր կոմյերիտական անպայման ուսում-
նասիրի վորեւ մասնադիտություն, վորին ողետք և տիրապետի
կառարելապես:

III

ԴՐՈՅՑՈՒՄ ՅԵՎ ՅԵՐԵՒԱՆԵՐԻ ՄԵԶ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՍՊԱՐԵՁՈՒՄ

1. Ունում և ժողովրդական լուսավորության որդաններին և
ուսուցիչներին՝ ամրացնելու դպրոցական կարդասահությունը և
կազմակերպելու դպրոցի ուսումնական ամրող աշխատանքը:

2. Պայքար և մղում հակաժողովրդական աղդեցությունները

գպրոցի մեջ թափանցելու դեմ, պայքար և մղում խուլիսանության ու թակիթիվածության դեմ:

3. Սիստեմատիկաբար ծանոթացնում և աշակերտներին որպես կարևորագույն անցքերի հետ, կազմակերպելով զանազան տեսակի խմբակներ, դասախոսություններ ու զրույցներ:

4. Սովորող յերիտասարդության ամենաբաղմասվիսի պահանջներին բավարարելու համար, ինքնազործունեյության հիման վրա կազմակերպում և Փիդիկական կուլտուրայի, յերաժշտական, դրամատիկական, Փոտո և ռադիո սիրողների, մոռելիստների, պատանի զյուտարարների խմբակներ և այլն:

5. Կազմակերպում և աշակերտների հանդիսան ու խելացի ժամանցը (ինքնազործունեյության յերեկույթներ, կինոների, թատրոնների, թանգարանների այցելում, եքոկուրսիաններ, տուրիստական արշավներ և այլն):

6. Ակտիվ մասնակցում և ուսուցիչների պատրաստմանը, մանկավարժական աշխատանքի ուղարկելով իր լավագույն ստեղերին:

7. Կազմակերպում և դպրոցներում պիոններական ջոկատներ և հոկտեմբերիների խմբակներ:

8. Լավագույն կոմյերիտականների միջից ընտրում և պիոններական ջոկատների ու Փորպատճենների զեկավարներ, ջոկատներին ու Փորպատճեններին կից աշխատող զանազան խմբակների զեկավարներ և անհրաժեշտ ուղղություն և ցույց տալիս նրանց աշխատանքում:

9. Պրոֆմիությունների և ժողովրդական լուսավորության սրգանների հետ միասին ստեղծում և պիոններական ճամբարներ, մանկական ակումբներ, աղալատներ, սպորտային հրամականներ, սանատորիումներ, մանկական տեխնիկական կայաններ և այլն:

10. Յերեխանների համար հրատարակում և գեղարվեստական գիտական-հանրամատչելի տեխնիկական դրականություն և հոգ և տանում, վոր արտադրվեն պիոններական սարքավորում, լավ խաղալիքներ և այլն:

I V

ՖԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՍՊԱՐԵՉՈՒՄ

1. Կազմակերպում և ամբողջ յերիտասարդության ներդրավումը Փիդիկական կուլտուրայի մեջ, ձգտում և, վոր ԽՍՀՄ-ն ամենա սպորտային լավագույն նվաճումներ:

3. Ակտիվ մասնակցում և Փիղիկական կուլտուրայի ողեռական որդանների և հասարակական կազմակերպությունների աշխատանքին, ստեղծելով դանագան տեսակի սպորտային կազմակերպություններ :

4. Ակտիվ մասնակցում և սպորտային կառուցումների շինարարությանը (սպորտային հրապարակներ, ստադիոններ, սպորտային դահլիճներ, ավագաններ, աերոակումբներ և այլն) և ոժանդակում և սպորտային ինվենտարի արտադրությանը :

5. Իր ուժերն և առանձնացնում Փիղիկական կուլտուրայի հրահանդիչների ու կազմակերպիչների կազմություններու համար :

▼

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԱՍՊԱՐԵՉՈՒՄ

1. Հետևելով Համեկ(բ)Կ-ի այն ցուցումներին, թե յերիտասարդության կոմունիստական դաստիարակությունը պետք է կատարվի այնպես, վոր նրա ուսման ու կրթության յուրաքանչյուր քայլը կազմված լինի կոմունիստական հասարակություն ստեղծելու համար մզկող պայքարի հետ, Համեկօթե՛Մ-ն ամբողջ աշխատավոր յերիտասարդությանը մասնակից և դարձնում սոցիալիստական շինարարությանը: Համեկօթե՛Մ-ի կազմակերպությունները յերիտասարդությանը պարզաբանում են սոցիալիստական շինարարության խնդիրները, ծանոթացնում են նրան ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության զարգացման պլանի հետ. մասնակցում են Համեկ(բ)Կ-ի և Խորհրդային կառավարության անցկացրած քաղաքական կամպանիաներին. ըստ անհրաժեշտության մորիկիլուցիսյի յեն յենթարկում իրենց ուժերը սոցիալիստական շինարարության ամենահարվածային նակատամասերի համար. մասնակցում են խորհրդային որդանների առորյա աշխատանքին, ամրացնելով խորհրդաները. ողնում են խորհրդային իշխանությանը՝ պայքար մղելու խորհրդային տնտեսական որդանների աշխատանքում դոյություն ունեցող բյուրոկրատական խեղաթյուրումների դեմ:

2. Համեկօթե՛Մ-ն ողնում և բոլշևիկների կուսակցությանը՝ կազմակերպելու սոցիալիստական մրցությունը, նախաձեռնություն ու ձեռներեցություն ցուցաբերելով այդ գործում: Կոմյե-

ըիտականը պետք և իր հարվածային աշխատանքով որինակ տա և գրանով դրավի ամբողջ յերիտասարդությանը : Համեմատական գումանիստական վերաբերմունք և դաստիարակում դեպի աշխատանքը, բարեխիղճ վերաբերմունք՝ խորհրդային իշխանության հանգեց ունեցած պարտականությունների կատարմանը, աշխատանքային դորժունելություն պահանջնելով կոմյերիտականներից ու կոմյերիտուհիներից՝ յուրաքանչյուրից ըստ ընդունակությունների : Համեմատական համար որինակ և բերում ավագ ընկերների՝ հարվածայինների և հարվածայինուհիների հերթուական աշխատանքի և աշխատանքային սխրադործությունների նմուշները :

Համեմատականը պայքար և մղում ձեռնարկություններում, արանսպորտում, կուտանտեսություններում, խորհունտեսություններում և հիմնարկություններում աշխատանքի արտադրողականության առավելագույն բարձրացման և աշխատանքային կարգավահության ամրացման համար :

8. Համեմատականը աշխատանք և կատարում ամբողջ յերիտասարդությանը դաստիարակելու այնպիսի վոգով, վոր նա պահպանի ու ամրացնի սոցիալիստական սեփականությունը, վորը հանդիսանում և խորհրդային հասարակակարգի հիմքը :

9. Համեմատականը ողնում և Խորհրդային պետությանը՝ ամրացնելու ընտանիքը և հոգ տանելու յերեխանների ու մայրերի համար : Պայքար և մղում կանանց նկատմամբ արտահայտվող կապիտալիզմի մնացորդների դեմ, յերիտասարդության մեջ հարցանքի դդացմունք դաստիարակելով դեպի կինը՝ վորպես սոցիալիստական շինարարության իրավահակասար մասնակիցը :

VI

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՈԱՆՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵՉՈՒՄ

1. Խորհրդային Միության յերիտասարդ սերունդը պարտավոր և պատրաստել իրեն պաշտպանելու իր հայրենիքը բոլոր վտանգներից և թշնամիների կողմից նրա դեմ ուղղված վոտնձը-գություններից : «Մենք պաշտպանողականներ ենք սկսած 1917 թ. նոյեմբերի 7-ից (հոկտեմբերի 25-ից) : Մենք կողմնակից ենք «Հայրենիքի պաշտպանության», սակայն հայրենական այն պատերազմը, դեպի վորմ ըմբանում ենք մենք, մի պատերազմ և կանուն սոցիալիստական հայրենիքի, հանուն սոցիալիզմի, վար-

պես հայրենիք, համուն խորհրդային համբապետության, վարդես սոցիալիզմի համաշխարհային բանակի մի ջոկատ» (Լենին): Անհաճանջ կերպով հետեւելով մեծ Լենինի այդ աշխանդին, Համ ԼԿՅԵՄ-ը յերիտասարդ սերունդը դաստիարակում և խորհրդային հայրենասիրության վողով, անհուն նվիրվածությամբ և անհաճաման սիրով գեղով ԽՍՀՄ-ն՝ իր հայրենիքը: Անձնվիրաբար պաշտպանել սոցիալիստական հայրենիքը, ամրացնել նրա զորությունը, բարդավանական ու փառքը՝ ՀամԼԿՅԵՄ-ի անդամի ամենասրբազն ու կենսական պարտականությունն ե:

ՀամԼԿՅԵՄ-ը յերիտասարդությանը դաստիարակում և այնպիսի վողով, վոր նա պարագատ լինի Խորհրդային կառավարության առաջին խոհ կոչով պայքարի դուրս դաշ սոցիալիստական հայրենիքի թշնամիների գեմ:

2. ՀամԼԿՅԵՄ-ը յերիտասարդության մեջ դաստիարակում և քաջություն ու անհողողություն, արհամարհանք դեմքի վախկուտությունն ու յերկյուղը խորհրդային իշխանության թշնամիների հանդեպ, ամենախիստ կարդաբահության վողի: ՀամԼԿՅԵՄ-ը յերիտասարդությանը դաստիարակում և ատելություն տածելու վորով գեղով դասալքությունը, մատնությունը, դավանանությունը սոցիալիստական հայրենիքին, վորպես ամենածանր ու սառը չարտզործություններ սոցիալիստական պետության շահերի դեմ: ՀամԼԿՅԵՄ-ի անդամները և ամբողջ յերիտասարդությունը պետք ե մերկացնեն և բանվորա-դյուլացիական պետության դատաստանին հանձնեն բոլոր նրանց, ովքեր կը դավաճանեն հայրենիքի շահերին:

3. ՀամԼԿՅԵՄ-ը Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության պաշտպանումակությունն ամրացնելու ուղղությունն իր կատարած ամբողջ աշխատանքում յենում է Համ. Կ(բ)Կ-ի և Խորհրդային կառավարության այն քաղաքականությունից, թե՛ զմենք կողմնակից ենք խաղաղությանը և պաշտպանում ենք խաղաղության դրույթը: Սակայն մենք չենք վախենում սպառնալիքներից և պատրաստ ենք հարվածով պատասխանելու պատերազմի հրձիղների հարվածին» (Ստալին): Ակտիվ կերպով ոժանդակել Խորհրդային պետությանը՝ ամրացնելու և զարգացնելու զինված ուժերը՝ Լենինյան կոմյերիտմիության կարևորագույն պարտականությունն ե: Այդ նպատակով ՀամԼԿՅԵՄ-ը շեֆություն է կատարում բանվորա-դյուլացիական կարմիր բանակի ռազմական ռազմական և ռազմառողական ուժերի նկատմամբ և ապահովում է

բանվորա-դյուտղացիական կարմիր բանակը խորհրդային իշխանությանը նվիրված մարդկանց այնպիսի կադրերով, վորոնց ձեռքը չի դողա և աչքը չի դավաճանի հեղափոխական ժողովրդի թշնամիների գեմ մզլող մարտերում:

Համեմթե՛Մ-ը յերիտասարդության մեջ ռազմական դիտելիքների պրոպագանդա յե մզում, ակտիվ մասնակցում և պաշտպանության հասարակական կազմակերպությունների աշխատանքին և ձղուում և, վոր յուրաքանչյուր կոմյերիտական դեռ բանակի ու նախատորմի շարքերը մտնելուց առաջ տիրապետի դիպուկ հրաձության արվեստին, ուսումնասիրի ռազմական մասնագիտություններից մեկը:

* * *

Համամիութենական կոմունիստական՝ յերիտասարդական միությունը կրում և համայն աշխարհի աշխատավորության ուսուցչի ու առաջնորդի՝ Վ. Ի. Լենինի անունը:

Լենինյան կոմյերիտմիությունը կապիտալիստների, կալվածատերերի, ինտերվենտների դեմ մզված քաղաքացիական պատերազմում իր մատուցած մարտական ծառայությունների համար արժանացել և հեղափոխական բարձրագույն պարբերություն—մարտական կարմիր դրոշի շքանշանի:

Սոցիալիստական հասարակության վասուցման առարկում իր կատարած հարվածային աշխատանքի համար, վորը վառքով պսակեց Սոհոհրդային Միության աշխատավոր յերիտասարդությանը, Լենինյան կոմյերիտմիությունը պարզմատրվեց Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:

Լենինյան կոմյերիտմիությունն իր աշխատանքը կատարելով ԽՍՀՄ-ի աշխատավոր յերիտասարդության մեջ, Համամիութենական կոմունիստական (բոլեկիկների) կուսակցության դեկալարությամբ, հավատարիմ Մարքսի-Ենգելսի-Լենինի-Ստալինի ուսմունքին, պատմով կկատարի սոցիալիստական հայրենիքի հանդեպ ունեցած իր բոլոր պարտականությունները:

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԼԵՆԻՆՑԱՆ
ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՁՆԴՈՒՆՎԱԾ ՀԱՄԱԳԵՐ Խ ՀԱՇՎՈՒՄՄԻ ԿՈՎՈՒՑ
Հ 1986 թ. ապրիլի 21-ին

ՀամԼԿՑԵՄ-ը հանդիսանում ե Յերիտասարդական, կոմունիստական ինտերնացիոնալի ջոկատներից մեկը, ընդունում և նրա ծրագիրն ու կանոնադրությունը, կատարում և նրա վորոշումները և ակտիվ կերպով մասնակցում և նրա աշխատանքին:

ՀամԼԿՑԵՄ-ը հարում ե Համկ(բ)կ-ին, հանդիսանում ե նրա ռեղերին ու ողնականը: Բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ ՀամԼԿՑԵՄ-ը յերիտասարդությանը դաստիարակում ե կոմունիզմի վողով, նրան համախմբում ե խորհրդային իշխանության շուրջը:

ՀամԼԿՑԵՄ-ը մասսայական անկուսակցական կաղմակերպություն ե, վորն իր շարքերում համախմբում ե քաղաքի և գյուղի տուաջակոր, քաղաքականակես դրագետ աշխատավոր յերիտասարդության լայն խավերին: Հետևելով բոլշևիզմի մարտական տրադիցիաներին, կոմյերիտմիությունն ուժեղ ե իր գաղափարական համոզվածությամբ և նվիրվածությամբ՝ լենինի—Ստալինի կուսակցությանը: Վորևէ շեղում ՀամԼԿՑԵՄ-ի ծրագրից՝ անհամատեղելի յե կոմյերիտմիության մեջ մնալու հետ:

ՀամԼԿՑԵՄ-ն իր անդամներից պահանջում ե հաստատակամ և աննկուն պայքար մղել հանուն բոլշևիկների կուսակցության դվասվոր ըծի իրավանացման: ՀամԼԿՑԵՄ-ի անդամները պարտավոր են ամբողջ ուժով ամբացնել խորհրդային հասարակակարգը, ամբացնել խորհրդային արդյունաբերությունն ու տրանսպորտը, կուտնահետառություններն ու խորհուտեսությունները, անհաշտ պայքար մղել դասակարգային թշնամու և ամեն դույնի ուղղութունիստների դեմ, անողոք հակահարված տալ կոմյերիտմիությունը քոլշևիկների կուսակցությանը հակադրելու ամեն տեսակ փորձերին, ամբացնել յեղբայրական ինտերնացիոնալ հարաբերությունները ԽՍՀՄ-ի բոլոր ազգերի աշխատավորների և բոլոր յերկիրների պրոլետարների միջն:

Կոմյերիտականը մեծագույն պատիվ ե համարում իրեն հա-

մար Համեկ(բ) կի-ի անդամ դառնալին ու իր սոմբողջ դործունեյությամբ և ուսմամբ իրեն նախապատճառառում և նրա շարքերը մտնելու համար :

I

ՀԱՄԼԿՅԵՄ-Ի ԱՆԴԱՄՆԵՐԻ ՈՒ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Համլկյեմ-ի անդամ և համարվում կոմյերիսմիության շարքերն ընդունված յուրաքանչյուր վոք՝ 15-ից մինչև 26 տարեկան, վորն ընդունում և միության ծրագիրն ու կանոնադրությունը, աշխատում և նրա կազմակերպություններից մեկում, յենթարկվում և Համլկյեմ-ի բոլոր վորոշումներին և մուծում և անդամավճար :

Մասորություն. — Համլկյեմ-ի 26 տարեկան հասակի հասած անդամները կարող են մնալ կազմակերպության մեջ խորհրդակցական ձայնի իրավունքով, իսկ դեկանար մարմիններում ընտրվելու դեպքում նրանք պահպանում են վճռական ձայնի իրավունքը :

2. Համլկյեմ-ի անդամները պարտավոր են՝

ա) ուսումնասիրել Մարքսի, Ենդելսի, Լենինի, Ստալինի աշխատությունները և մարքսիստական-լենինյան ուսումունքը պարզաբանել յերիտասարդության լայն մասսաներին.

բ) կատարել բոլշևիկների կուսակցության ու կոմյերիսմիության վորոշումները և ակտիվ կերպով մասնակցել յերկրի քաղաքական կյանքին.

դ) աշխատանքի նկատմամբ սոցիալիստական վերաբերմունքի որինակ ցույց տալ, աչալուրջ պահպանել սոցիալիստական սեփականությունը, պայքարել հարբեցողության, խուլիդանության դեմ, կրօնական նախապաշտմունքների մնացորդների դեմ, կնոջ նկատմամբ վոչ-ընկերական վերաբերմունքի դեմ.

դ) տիրապետել գիտելիքներին, կուլտուրային, գիտությանը, տեխնիկային.

ե) ուսումնասիրել ուսմական գործը, անձնազոհ կերպով նվիրված լինել սոցիալիստական մեծ հայրենիքին և պատրաստ լինել տալու նրան իր բոլոր ուժերը, իսկ յեթե անհրաժեշտ լինի-նաև կյանքը.

դ) վճռականորեն պայքարել հեղափոխական որինականության ու կարգի խախտումների վեմ.

է) ակատիլ կերպով մասնակցել կոմյերիտական կազմակերպության աշխատանքին, կանոնավոր հաճախել կոմյերիտական ժողովները, արարորեն ու ճշգրիտ կատարել կազմակերպության առաջարկանքները, սկսած յուրաքանչյուր դործը հասցնելով մինչև վերջ:

Յ. կոմյերիտմիության անդամ ընդունվում և առաջավոր, ստուգված, խորհրդային իշխանությանը նվիրված յնրիտասարպությունը՝ բանվորների, դյուլացիների և ծառայողների միջից:

Այս դեպքում, յերբ կոմյերիտմիության շարքերն ընդունվել ցանկացաղը դեռևս բավարար չափով պատրաստված չե համ. Եկանմարկության մեջ ընդունվում է թեկնածու՝ վեց ամիս ժամանակով: Թեկնածուական ստաժը նրա համար և սահմանվում, վորակեսղի կոմյերիտմիության մեջ ընդունվել ցանկացաղը պատրաստվի այլ բանի համար, ծանոթանա համ. Եկանմարկությունը՝ ծրագրի առաջարկանությունը: Ընդունելությունը կոմյերիտմիության մեջ կատարվում և անհատական կարգով:

ա) Համելիթեմ-ի անդամ կամ թեկնածու ընդունվողները ներկայացնում են մեկ տարվա ստաժ ունեցող կոմյերիտմիության յերկու անդամի, կամ կուսակցության մեկ անդամի յերաշխավորություն:

Յերաշխավորություններն ստուգում և կոմյերիտմիության տեղական կոմիտեն անդայման մինչև ընդունելության հարցի քննարկումը:

Յերաշխավորությունները պատրասխանատու յեն իրենց յերաշխավորյալի համար, անհիմն յերաշխավորության դեպքում յենթարկվելու միութենական առոյժի ընդհուպալ մինչև կոմյերիտմիությունից հեռացվելը:

բ) Կոմյերիտմիության մեջ ընդունելուն պետք և նախորդի այն հիմնական տվյալների նախնական ստուգումը, վորք հաղորդում և իր մասին ընդունվողը, և ընդունելության հարցը քննության և առնում սկզբնական կոմյերիտական կազմակերպության կոմիտեն, վորոշում և սկզբնական կազմակերպության ընդհանուր ժողովը և ուժի մեջ և մտնում կոմյերիտմիության շրջկոմի կամ քաղկոմի բյուրոյի հաստատումից հետո:

ՀամլէկօնսՄ-ի անդամների ու թեկնածուների ստաժը հաշվվում
ե այն որվանից, յերբ համապատասխան կոմյերիտական սկզբնա-
կան կաղմակերպության ընդհանուր ժողովը վորոշում և կայսցրեց
ընդունելության մասին:

գ) թեկնածուից անդամ վորխադրելու ժամանակ կոմյերիտա-
կան կաղմակերպությունները պետք ե ստուգեն, թե ավյալ թեկ-
նածուն սպատրամուս և արդյոք կոմյերիտամիության անդամ ընդուն-
վելու համար: Այն դեպքում, յերբ թեկնածուն իրեն յերեան չի
բերել իրրե լինինյան կոմյերիտամիության անդամի կոչման արձա-
նի, կաղմակերպությունն իրավունք ունի յերկարացնել նրա թեկ-
նածուական ստաժը կամ թե հեռացնել նրան թեկնածությունից:

4. ՀամլէկօնսՄ-ի անդամներն ու թեկնածուները մեկ կաղմա-
կերպությունից մյուսն անցնելիս վերջին կաղմակերպության մեջ
հաշվի ըն առնվում միայն կոմյերիտամիան անդամառողմար և
անձնական քարտը ներկայացնելու դեպքում, վորի մեջ պետք և
նշում լինի հաշվառումից դուրս դալու վերաբերյալ:

5. Կոմյերիտական կաղմակերպությունները պետք ե վերա-
հսկողություն սահմանն իրմյերիտամիության անդամների ու
թեկնածուների կողմից անդամավճարները ժամանակին մուծելու
նկատմամբ, յուրաքանչյուր առանձին դեպքում ոլարդն անդա-
մավճարը ժամանակին չմուծելու պատճառները:

Յերեք ամիս անդամավճար չմուծած կոմյերիտամիության ան-
դամների ու թեկնածուների՝ ՀամլէկօնսՄ-ի շարքերում մնալու
հարցը քննության և դրվում սկզբնական կաղմակերպության ժո-
ղովում:

6. Կոմյերիտական կաղմակերպությունները պետք ե իրենց
շարքերը մաքրեն թշնամական տարրերից, յերկերեսանիներից,
կոմյերիտամիության յերկաթե կարգապահությունը խախտողնե-
րից, բարոյապես քայլայվածներից, մորթապաշտներից, կարյե-
րիստներից:

7. Կոմյերիտամիությունից հեռացնելու հարցը լուծվում և
կոմյերիտամիության այն սկզբնական կաղմակերպության ընդհա-
նուր ժողովի կողմից, վորի անդամը կամ թեկնածուն և հանդի-
սանում ավյալ անձնավորությունը, և հաստատվում և կոմյերիտ-
ամիության շրջկոմի կամ քաղկոմի բյուրոյի կողմից:

8. ՀամլէկօնսՄ-ի անդամության թեկնածուները յենթարկվում
են միության բոլոր վորոշումներին և կատարում են իրենց վրա
դրված բոլոր պարտականությունները:

Թեկնածուները ժողովներին մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով, բայց չեն կարող ընտրել կամ ընտրվել միության դեկալար մարմիններում :

ՀամԼԿՑԵՄ-ի անդամության թեկնածուներն անդամավճար մուծում են ՀամԼԿՑԵՄ-ի անդամներին հստահավատաբ:

11

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ

9. Կոմյերիտմիության կազմակերպական կառուցվածքի ղեկավար սկզբունքն և դեմոկրատական կենտրոնացումը, վորը նշանակում ե՝

ա) կոմյերիտմիության բոլոր ղեկավար մարմինների ընտրականություն՝ վերելից մինչև ներքեւ,

բ) կոմյերիտական մարմինների պարբերական հաշվետվությունների առաջ.

գ) կոմյերիտական խիստ կարգապահություն և փոքրամասնության յենթարկումը մեծամասնությանը.

դ) կոմյերիտական վերատասար մարմինների վորոշումների անվերապահորեն պարտադիր լինելը ստորին մարմինների և կոմյերիտմիության բոլոր անդամների համար :

10. Կոմյերիտմիությունը կառուցվում և դեմոկրատական կենտրոնացման հիմունքների վրա ըստ տերիտորիալ-արտադրական հատկանիշի. տերիտորիալ կազմակերպության կոմիտեն բարձրագույն մարմինն և այդ շրջանի մեջ մտնող բոլոր (տերիտորիալ) կազմակերպությունների համար. արտադրության կամ կառավարման մի ամրող ճյուղի սպասարկող (տրանսպորտ, քաղաքացիական ավիացիա և այլն) կազմակերպությունները բարձրագույն են հանդիսանում տվյալ ճյուղի կոմյերիտմիության բոլոր կազմակերպությունների նկատմամբ :

11. Կոմյերիտմիության կազմակերպման սխեման հետևյալն է.

ա) ԽՍՀՄ-ի տերիտորիա-Համամիութենական համագումար-ՀամԼԿՑԵՄ-ի կենտրոնմ.

բ) մարզեր, յերկրամասեր և հանրապետություններ—մարզային, յերկրային կոնֆերենցիաներ, ազգային հանրապետությունների կոմյերիտմիության համագումարի—մարզկոմիներ, յերկր-

կոմիներ , աղջային հանրապետությունների կոմինիության կենտրոներ .

գ) քաղաքներ , շրջաններ—քաղաքային , շրջանային կոմինիության կենտրոներ—քաղաքային , շրջանային կոմիտեներ .

դ) ձևոնարկություններ , գյուղեր , գյուղական կայաններ , կարմիր—բանակային կոմիտեներ , գյուղական կոմիտեներ—ընդհանուր ժողովներ—կոմինիություններ (գործարանի վոմինը լուսակացներ—կոմինիություններ) :

12. Բարձրագույն ինստանցիայից դեպի ստորինը յենթագրկման և հաշվետվության գարդը հետևյան և Համամիութենական համապատասխար—ՀամլԿՑԵՄ կենտրոն՝ մարզային , յերկրային կոմինիության , աղյային հանրապետությունների կոմինիություններ , համապատասխար—մարզկոմ , յերկրկոմ , աղյային հանրապետության կոմինիություններ—քաղաքային , շրջանային կոմիտեներ :

13. Կոմինիությունների յուրաքանչյուր շրջանային ու վերաբերա կոմիտեն ունի իր կնիքը՝ ՀամլԿՑԵՄ կենտրոնի սահմանած ձևով :

14. Յերիտասարդության դանարան խմբերի մեջ դաստիարական աշխատանքը կաղմակերպելու համար կոմինիության ընկույներում , քաղկոմներում , մարզկոմներում , յերկրկոմներում ու աղյային հանրապետությունների կենտրոններում ստեղծվում են ՀամլԿՑԵՄ-ի կենտրոնի կողմից սահմանած համապատասխան բաժիններ ու սեկտորներ :

ՀամլԿՑԵՄ-ի կենտրոնում ստեղծվում են բաժիններ , սեկտորներ և բաժիններին կից խորհուրդներ՝ ՀամլԿՑԵՄ-ի կենտրոնի հայեցողությամբ :

15. Կոմինիությունների կաղմակերպությունները դպրոցներում ստեղծում են պատանի պիտոնների՝ Վ.Ի. Լենինի անվան մանկական կոմունիստական կաղմակերպություններ , իսկ բնակվարձեկուղներում՝ պիտոններական ֆորստաներ , վորոնք աշխատում են կոմինիություններ անմիջական ղեկավարությամբ :

Մանկական կոմունիստական կաղմակերպությունների աշխատանքը դորձնականորեն ղեկավարելու համար կոմինիություններ :

չրջկոմներում, քաղկամներում, մարդկոմներում, յերկրկոմներում
և ազգային հանրապետությունների կենտկոմներում ստեղծվում
են պիոներական բաժիններ, իսկ կոմյերիտամիության սկզբնական
կազմակերպությունների կոմիտեները պատասխանի պիոներների ջո-
կատներն ու Փորսպատաները ղեկավարելու համար լավագույն,
դրապետ և հեղինակավոր կոմյերիտականներից առանձնացնում
են ղեկավարներ :

Կոմյերիտական կազմակերպությունները ջոկատների ղեկա-
վարներին ողնում են մանկական ու պիոներական դասազան խըմ-
րակների համար ղեկավարներ ընտրելու դործում :

Կոմյերիտական կազմակերպությունները պետք և ամենորյա-
հովատարություն ունենան պիոներական ջոկատների և Փորսպատ-
ների աշխատանքի նկատմամբ, պրոֆմիությունների և ժողովրդա-
կան լուսավորության մարմինների հետ միասին կազմակերպա-
կան-յութեական բազա ապահովելով պիոներական ճամբարների,
ակումբների, սպորտ-հրապարակների, թատրոնների, մանկական
տեխնիկական ու տուրիտական կայանների և այլնի աշխատանքի
համար :

Համկացի կազմական կոմիտեները, կոմյերիտմիության մարդկոմները,
յերկրկոմները և ազգային հանրապետությունների կենտկոմները
հրատարակում են պիոներական թերթեր, ժողովրդական մանուկ-
ների համար անշբաժեշտ դրականություն :

III

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

16. Կոմյերիտմիության բարձրագույն որդանն և Համամիու-
թենական համագումարը :

Հերթական համագումարները հրավիրվում են առնվազն յե-
րեք տարին մեկ անդամ :

Արտակարդ համագումարներ հրավիրվում են Համկացի կենտրոնական կոմիտեյի կողմից՝ իր սեփական նախաձեռնությամբ
կամ կոմյերիտմիության վերջին համագումարում ներկայացված
անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ յերրորդի պահանջով :

Համամիութենական համագումարի հրավիրումը և նրա որա-

կարդը հայտարարվում են վոչ ուշ քան համազումարը Հրապի-
րելուց մեջ և կես ամիս առաջ:

Արտակարգ համադումարները հրավիրվում են յերկու ամսվա
ընթացքում:

Համամիութենական համազումարի ներկայացուցչության
նորման սահմանում և կոմյերիտմիության կենտրոնական կոմի-
տեն:

17. Այս դեպքում, յեթե ՀամլկօթեՄ-ի կենտրոնական կոմի-
տեն 16-րդ կետում մատնանշված ժամկետում արտակարգ համա-
զումար չի հրավիրում, այս կաղմակերպությունները, վորոնք
